



1909
059
10-45





059
P-45

ԹԷՈՂԻԿ

(29)

ԱՄԷՆՈՒՆ ՏԱՐԵՑՈՅՑԸ

ԶԲՕՍԱՆԻ ՈՒ ՊԻՏԱՆԻ

1908

Բ. ՏԱՐԻ



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Վ. ԵՒ Հ. ՏԷՐ-ՆԵՐՍԷՍԵԱՆ



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Տպագր. վ. և Հ. ՏԷՐ-ՆԵՐՍԷՍԵԱՆ

Սուրբան-Համամ

1908

ԲՆՉՕՂ

⑤ Մեծ. Թեոդիկ էժ. խմբագրող, Մեծ. Վ. և Հ. Տեր-Ներսիսյան էժժ. հրատարակող «Ամէնուն ՏԱՐԵՑՈՅՑ»ին: Ճաշակաւոր եւ լաւ գտած էի գործն, երբ ձեռագիրը տեսայ. նաշակաւորագոյն եւ լաւագոյն կը գտնեմ զայն՝ երբ սպագրուածը կը տեսնեմ: Ինչ որ ալ ըսելու ու գրելու ըսելու ու գրելու ուղղութիւնը, կեանք գոն ըլլալու որ լաւագոյն ՏԱՐԵՑՈՅՑը ձեռն է, հասնելի ըլլալու տեսակէտէն. զի Հիւանդանոցին Ընդարձակը՝ գործնական ու գործածական ըլլալու սահմանուած է: Ոչ լեռու: Պատրիարք Կ. Պոլսոյ, Մաղաբխա: ⑤ Անոր բարատուութիւնը ամէնէն սիրուն ժամանակն է երեկոյի ժամերուն: Հ. Յովն. Վրդ. Թարոսեան: ⑤ «Թեոդիկ» տնօրէնը բաւ էր ապահովելու կատարելալ յաջողութիւնն այդ հրատարակութեան, զոր պիտի ուզէի կոչել Տարեցոյցներու Տարեցոյցը: Ամենահոն եւ ամենահամարտաւստան մը, ուսկից ամէն ոք կարող է իր սիրած ծագիկը վերծնելու. ամենալից սեղան մը ուր ամէն նաշակի յարմար խորհիկ մը կը գտնուի. եւ ուր Գեղարուեստին բոլոր հիմնաստիւններն իրենց գոհացումը ստացած են: Կարգացի զայն, — եթէ մի անգամ կարգալի կարելի է ըսել թէ կարգացի: Հ. Վարդան Վրդ. Հացունի: ⑤ Անորմէ ժողովուրդը զայն ունեցածներուն մէջ առաջին տեղը կը գրուէ իր պէտքով օգտակար, նեստրֆրակաւ եւ զբոսեցուցիչ բովանդակութեամբն: Այս՝ նաշակաւոր եւ խնամալ աշխատարարինն «Ամէնուն ՏԱՐԵՑՈՅՑ» ըլլալու ամէն առաւելութեամբ օժտուած է: Հ. Նսայի Վրդ. Տայեցի: ⑤ «Ամէնուն ՏԱՐԵՑՈՅՑ» որուն Ա. տարին յոյս հանեց Թեոդիկ, գերազանցած է ո՛չ թէ միայն 1907 ի տեղ Տարեցոյցներն, այլ մինչեւ ցարդ բոլոր հրատարակուածները (ի Կ. Պոլիս եւ ա՛յլ տեղ յաջողած է Թեոդիկ իր «ՏԱՐԵՑՈՅՑ» ամէնուն ընել՝ որ կարծե՛ք զհրատարակելիքն իսկ այս 1907 ի հրատարակածին պիտի չհասնի: Հ. Ս. Պատրիարք (գրախօսական): ⑤ Ի՛նչ լաւ կ'ըլլար, երբ «Ամէնուն ՏԱՐԵՑՈՅՑ» լ. Հիւանդանոցը Ընդարձակ Օրացոյցն ըլլար: Տիրալ Վրդ. Մարգարեան: ⑤ Ազնիւ Թեոդիկ, Տարեցոյց շատ սիրուն գործ մ'եղեր է, կարելի է ըսել նաեւ հրատարակիչ, նկարներն պէտքովու-թեամբբ, գրական արժեքովն ու ընտիր սպագրութեամբբ: Կը շնորհաւորեմ յաջողութիւնը: Բարբող Թէլեան (Իւրանապետ Ազգ. Պատրիարքարանի): ⑤ Ընտիր հրատարակութիւն մ'է, ամէն հասակի, նաշակի եւ մեկի սահմաններու փառաբանութեան, շանկան, այլազան եւ հանելի պարունակութեամբ: Գեղեցիկ է յղացումը, գործարարութիւնն ալ յաջող՝ որ կը գլէ կը գերազանցէ անտարակոյս իր բոլոր համանման արտարարութիւնները: Մերտայ Դուպարեան: ⑤ Կը փութամ շնորհաւորել «Ամէնուն ՏԱՐԵՑՈՅՑ»ին նեղիմակը՝ իր այս յաջող եւ գեղեցիկ երկարութեան հմր.: 16/29 Գեղս. 1906: Գրիգոր Խան Շամսանեան: ⑤ Ազնիւ բարեկամ, շնորհաւորութիւններս ձեր տարեցոյցին համար. ուրախ եմ որ Հայոցս մէջ առաջինը կ'ըլլաւ Տարեցոյցներու բնութիւնն ըմբռնող, գործնականապէս ցոյց տալով հասարակութեան թէ ի՛նչպէս պէտք է ըլլայ այն: Ձերդ անկեղծ, Մ. Մամուրեան Որդի: ⑤ Պարունակութեան պէտքովու-թեամբբ, սպագրութեան խնամաւորութիւնը, պատկերներուն գեղեցկութիւնը միանալով՝ շատ աւելոր հասար մը կարգուած էին զայն: Թեոդիկի ծրագիրը մեծապէս յաջողած կընայ նկատուիլ եւ լիալոյս եմ որ իր առաջիկայ տար-



Եւան ՏԱՐԵՅՈՅՅԸ նոյն ծրագրին աւելի կատարելագործութիւնը պիտի բլլայ: Յովն. Գազանեան:

Աւիասասիրողի մը համար երբ արժանիք պէտք է նկատենք իր անըր գործին մէջէն ցոլացնելն, այդ արժանիքը լիովին կը կրէ այս ՏԱՐԵՅՈՅՅԸ, Քանի որ հակառակ մասամբ ժողովածոյ մ'ըլլալուն՝ Թեոդիկի շունչը կը սիրէ հոն: Յր. Հազարապետեան:

Յանախ յուսախաբ եղած եւ գրացուցակներէ հասօրի մը ընտրութիւնն ընելէս վերջ՝ զայն քրքրասած միջոցիս: Եւ ապիկա ինչո՞ւ. որովհետեւ երբեմն գիբեր կան որոնք իրենց «Վերնագիր»-ը կ'արժեն միայն: Այս համոզումն անա զոյացուցած րլլալու համար էր, որ սեսակ մը չկամութեամբ ձեռք առի Թեոդիկին «ՏԱՐԵՅՈՅՅԸ»-ը որ «Ամէնուն» րլլալու շահ մը ինքնասիր բայց քիչ մըն ալ յա՛նձ անունը կը կրէ: «ՏԱՐԵՅՈՅՅԸ»-ը սակայն մնաց արիւն, ամբողջ «Ամէնուն»-ը, իմ կանխալայտ յոռետեսութեանս վրայ ծիծաղելով կարծես: Հրահո Տ. Նազարեան:

Աւիասուած նոյս գործ մը, զուարճալիներով, գիտելիներով էն. ընդելլալու: Պարոյր Քէչեան:

Սուզիւ «Ամէնուն ՏԱՐԵՅՈՅՅԸ»-ն է: Քիչ մը ամէն բան կայ այնտեղ, հիշէն ու նորէն: Տեսակ մը շոյս, հեւոս, այլ աւիասուած հանրագիտակ, ուր ամէն դասակարգի ու արիւն մարդիկ բան մը պիտի գտնեն զոնցում տուող իրենց նաեակին ու հետաքրքրութեան: Թեոդիկ որ իսկասիպ գրող մ'է, չձանձրացնելու զաղտիքը գտած է. ա՛նա՛ արժանիք մը ո՛չ այնքան յահալողէպ՝ գրական ստաւարէզին վրայ: Արտաէս Յարութիւնեան (Բ-Վ-Գ-Դ-Ե):

Ճմաւարտապէս «ՏԱՐԵՅՈՅՅԸ»-ի ծրագիրով ու յղացումով հրատարակութիւն մ'է: «Ամէնուն ՏԱՐԵՅՈՅՅԸ»-ին ամէն էջերն առարկայ եղած են ներախիղճ խնամքի մը, եւ կարելի չէ գտնել էջ մը՝ որ սեւցուելու համար լեցուած րլլայ, կամ շանկեկան, նոր, ընթերցելի ծանօթութիւն մը չպարունակէ: Ամէն նիւթ կ'ընդգրկէ ան, եւ իր ամբողջութիւնն ունի բնոյթ սեսակ մը համայնագիտարանի, որուն իրականացումին համար յոբեան համբերութենէն աւելի բան մը պէտք է, անսաման լայնորտարութիւն եւ անխոնջ յարստութիւն: Երժանիքներ՝ որոնց Թեոդիկ բաշարար հեղինակ կը հանդիսանայ իր գիտելիքով ծայրէն միւսը: Խնդրում, ծանրաբեռնում, միօրինակութիւն չէ՛ որ կը սիրէ իր, որպէս զի արդիւններն ընթերցողը. պէտպիսութեան եւ զանազանութեան է որ մասնաւոր ուսուցչութիւն յատկացուած է, շանկեկան ծանօթութիւններու, հետաքրքրական գիտելիքներու եւ տեղեկութիւններու անսաման արբերով մը: Ենով Ամէն (Մ-Բ-Ե):

Արդարութեան պարտք մը կատարելու համար պէտք է յետի թէ «Ամէնուն ՏԱՐԵՅՈՅՅԸ» ամէնէն աւելի իրատունք ունի իր վրայ խօսեցնելու իր նորութիւններով, պատասխանած՝ մեր արդի գրականութեան մէջ իր ինքնուրոյն տեղն ունեցող գրչէ մը: Կարելու տեղ մը կը գրաւեն հոն արտոյն օրերուն հետ առընչութիւն ունեցող ծանօթութիւններ ու խորհրդածաւարներ, որոնց մէջ գործնական օգտակարութիւն ունեցողներ եւ թելադրիչ տեղողներ շահ կան: Իրական համոզումով մըն է որ կը փութամ յայնտեղ թէ «Ամէնուն ՏԱՐԵՅՈՅՅԸ» պէտք է գտնուի ամէն տեղ մէջ, ուր ընթերցման հաւակը կայ: Քիչ չեն այն էջերն որոնք հրահանգիչ եւ զբօսեցուցիչ երեկոյեան ժամանցներ կրնան րլլալ ընտանիքներու մէջ: Մ. Շամսանեան (Ա-Բ-Ե-Զ):

«Ամէնուն ՏԱՐԵՅՈՅՅԸ» զուլի գործոցն է իր նմաններուն մէջ, զոր երբէ կարելի է արտադրել համբերութեամբ եւ աւիասանով: Խնամոս հասար մը՝ ուր հեղինակն ուզած է խացնել բոլոր ազգերու գրականութիւնը եւն.: Չազա (Հ-Գ-Դ-Ե-Զ):

Արտաքին ձեւով հրատարիչ եւ հաւակաւոր գործ մը, իսկ պարունակութեամբ՝ նոյս հաւաքածոյ մը գրական, բարոյական, բանասիրական եւ ուրիշ հանելի եւ զբօսալի նիւթերու: «Ամէ-

Թ Ղ Թ Ա Տ Ե Ց Է Ք ...

«Նայիմի ինչե՛ր գրուած կան»

ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐԵԱՆ

Ձիւնին բուֆին, սառոյցներուն հետ այսօր
ՏԱՐԵՑՈՅՅՐԱ կուգայ մաղթել Տարի Նոր

Ձեզ ամէնուդ, Տիա՛րբ, Տիկնա՛յք փափկասուն,
Օրիորդնե՛ր ծաղկափրփիք կամ հասուն,

Ու քերթերուն մէջ յիւր շրջապատն իսկ

Ձեզ կը բերէ դիւրական դեղ մ'անծանօթ :

Ձայն քղբատէք եթէ առտու իրիկուն,

Խոյս պիտի տայ ձեզմէ ձանձրոյթն, ինչպէս բուն,

Եւ անոր հոյս խորեւուն մէջ՝ ձեզ համար

Պիտի գտնէք չփնաղ գանձեր անհամար :

Ձեր սիրտերուն, ձեր միտքերուն եւ կեանքին

Ի՛նչ շանկեկան առաս սրնունդ քանկագին,

Եւ ի՛նչ նիւթեր որոնք ձեր մութ հակասէն

Կննիւններըն իսկոյն պիտի փարատեն :

Ու Ծիծաղը, Առողջութիւնն ու Ժիր Ձանք,

— Երեք Քոյրեր որոնց ա՛յնքան կը սենչանք, —

Ամբողջ տարին ձերին շուրջը բոլորած՝

Հոգերն հեռու պիտի վանեն անկասկած :

ԱՄԷՆՈՒՆ ՕՐԱՑՈՅՑԸ

Քրիստոսի Նախնիք բուսկան	1908
Հայոց սոմարական	» 4400—4401
Հայոց սովորական	» 1357—1358
Տաճկաց Հիմերթի	» 137—1326
Տաճկաց Էլմասկան	» 137—1324
Ազարիայի փոքր	» 92—293
Հրեից	» 5668—5669

Համառ օսագրութիւններ. — ՏՃ. = Տաճկաց. ՀՃԲ. = Հիմերթի թուական. Ն. Տ. = Նոր տոմար (Եւրոպացեաց). ՀՅ. = Հայոց. Է. ՀՅ. = Կաթողիկէ Հայոց. ՅՆ. = Յունաց. ԷՏ. = Էստոնաց. ՀԲ. = Հրեից. Ս.Ս. = Սուրբեր

1908 ➤ Ա. ՇԱԲԱԹ ◀ 1908

ԵՐԵՒԱՆ. ԴՅ. 1 Յունվար = Քեանուների սանի: Ն. Տ. 14 Յնվր.: ՀՃԲ. 10 Ձիլհիմն.:
 ՀՅ. Մնունդի պահքին Գ. օրը: Կազանի կամ Ամաստի: Է. ՀՅ. Մնունդի Ը. օրը և
 Տօն տնօրէնութեան Բս.ի: ՅՆ. Մնունդի Ը. օրը. Բայր Անուանակոչութիւնն ու
 Ս. Բարսեղ հյրպո: ԷՏ. Ս. Իլարիոս եպսկ.: ՏՃ. Կուրպան պայրամի Ա. օրը:

ԶՈՐԻՇՏԱՆ. ԴԶ. 2 Յունվար = Քեանուների սանի: Ն. Տ. 15 Յնվր.: ՀՃԲ. 11 Ձիլհիմն.:
 ՀՅ. Մնունդի պահքին Գ. օրը: Է. ՀՅ. Պահք: ՅՆ. Ս. Սեղրեսարոս Հոռմի հյրպո:
 ԷՏ. Ս. Պօզոս անասպատական: ՏՃ. Կուրպան պայրամի Բ. օրը:

ՀԻՆԳՇՏԱՆ. ԵՅ. 3 Յունվար = Քեանուների սանի: Ն. Տ. 16 Յնվր.: ՀՃԲ. 12 Ձիլհիմն.:
 ՀՅ. Մնունդի պահքին Ե. օրը: Է. ՀՅ. Ս.Ս. Ինդոս և Դոմնաս. Գղերիկոս քնյ. և
 Երկու բիւր վկաներ. Արքանամ և Խորէն քանաններ. Կոզմս և Դամիանոս անար-
 ծամ բժիշկներ. Ած.ատուր վկայ: ՅՆ. Ս. Մաղաբիա ժարգարէ: ԷՏ. Ս. Մար-
 կեղոս հյրպո: ՏՃ. Կուրպան պայրամի Գ. օրը:

ՈՒՐԱՍԹ. ԵԷ. 4 Յունվար = Քեանուների սանի: Ն. Տ. 17 Յնվր.: ՀՃԲ. 13 Ձիլհիմն.:
 ՀՅ. Մնունդի պահքին Զ. օրը: Է. ՀՅ. Պահք: ՅՆ. Ս. Ժողով առաքեալներու:
 ԷՏ. Ս. Անտոն Արքայ: ՏՃ. Կուրպան պայրամի Դ. օրը:

ՇՍԱՍԹ. ԵԸ. 5 Յունվար = Քեանուների սանի: Ն. Տ. 18 Յնվր.: ՀՃԲ. 14 Ձիլհիմն.:
 ՀՅ. Բս.ի Մնունդին և Ած.այստնութեան ծրագարչը: Կաւակաթիք: Է. ՀՅ. և
 ՅՆ. Յայտնութեան ծրագարչը: ԷՏ. Տօն նոնմէական ամուսին՝ Ս. Պետրոս
 առաքեալի ՀԲ. Տարեզուի տնկոց:

ՅՈՒՇԱՏԵՏՐ

Հասորիս «ԱՄԷՆՈՒՆ ՏԱՐԵՅՈՅՅԸ» խորագիրը կատարելապէս արդարացունելու նպատակով, իրել հասելի րուծիւն, ուզեցինք ամէն ազգերու տներն ու թուականները զաս զաս նշանակել. ոյի տարուան տեւողութիւնը շարաթական դրուծեան վերածելով. միշտ կիրակիէ սկս. սլ մինչեւ շարաթ, ինչպէս կ'երելի հանդիպակաց էջին մէջ: Այդ մէկ եօթնեակի օրացոյցին բնկերացոյցինք սոյն անգիր էջը, դէմ դիմաց, որպէս զի Տարեցոյցս ամէն հասակէ թղթատող անծեր առիթն ունենան օրը օրին հոն նշանակելու իրենց աւօրին կեանքի կարելու նօթերը, Յուշատետրի դրուծեամբ:

1 Յնվր. Գշ. [1—365] կէս օր. 7. 01.....

2 Յնվր. Գշ. [2—364] կէս օր. 7. 00.....

3 Յնվր. Եշ. [3—363] կէս օր. 6. 58.....

4 Յնվր. Ուր. [4—362] կէս օր. 6. 57.....

5 Յնվր. Շր. [5—361] կէս օր. 6. 56.....

1908, ՆԱՀԱՆՁ ՏԱՐԻ

Դարեր առաջ, մազկոխնճ հանգամանք մըն է առած ժամանակին Հաչիւն, ու թուագէտներու միտքը չարչրկած: Նախ «արեւադարձային տարի» մը կար. իրարու յաջորդող երկու գարուններու միջև սահման ժամանակը կը նկատուէր տաճար. այդ տեւողութիւնը փոփոխական ըլլալուն՝ անգործագրելու պատճառով: Յետոյ որոշուեցաւ հաւասար օրերով 12 ամիսէ բաղկացող կէսամադրական տարի մը, ուրկէ եղանակայ անհամաձայնութիւնը գոյացաւ: Յոյներն ալ լուսնին վրայէն կ'որոշէին իրենց տարին, որ 12 լուսնային ամիսներէ կը բաղկանար՝ փոփոխակի 29 և 30 օրով, որով տարին 354 օր կ'ըլլար, 2 տարին հեղ մը 30 օրնոց ամիս մը աւելնալով: Հռոմայեցիք ալ իրենց տամարը քրոնապետներու յանձնած էին, որոնք ըստ կամս կը փոխէին զայն: Բն. է 46 տարի առաջ Հռոմ 445 օրնոց տարի մը ունեցաւ որ կոչուեցաւ «չփոթութեան տարի»: Յուլիոս Կեսար ձեռնարկեց տամարը բարեփոխելու, այդ գործին կոչելով ազեքսանդրացի Սոսիկէն անուն գիտունը: Հաստատուեցաւ նախ՝ թուականի և եղանակի միջև և զուգադիպութիւնը. մին միւսին յարմարցունելով՝ 4 տարին անգամ մը գոյացող 1 օրուան պակասը լըրացունելու համար որոշուեցաւ որ տամարին մէջ «աւելեաց օր» մը գրուի: 3 «հասարակ» տարիներէ վերջ, 366 օրով կազմուած տարին կոչուեցաւ ՆԱՀԱՆՁ, փետրվարի վրայ 1 օրի յաւելումով: 325ի Նիկիոյ ժողովն ալ — ի մէջ այլոց — որոշեց որ 4 տարուան վրայ նահանջ ըլլայ ա՛յն տարին՝ որուն հազարաւորը 4 ով բաժանական է: Եւրոպացիք ինչո՞ւ տարին 13 օր կանուխ կ'սկսին մենէ: Ըսենք պիտի: Սոսիկէն «արեւադարձային տարի»ին տեւողութեան համար ընդունած էր 365 օր $\frac{1}{4}$. արդ ճիշտը 365 օր $\frac{242264}{1000000}$ է. Յուլեան տարին մէկ Դարու մէջ օր $\frac{7736}{1000000}$ աւելի էր, և չորս Դարու մէջ՝ 3 օր $\frac{6944}{1000000}$: 1582ին (1257 տարի կտք՝) Յուլեան սխալը կը հասնէր 10 օրուան: Պէտք էր նորէն յառաջ տանիլ ժամանակը: Գրիգոր Ժ.Վ. պապը Լէյիօ գիտունին խորհուրդով բարեփոխեց թուականներու վրայ 10 օր բարդելով: Եւ որպէս զի 4 Դարն անգամ մը աւելեաց օրերու ներմուծումէն նոր շեղում տեղի չունենար, որոշուեցաւ որ Յուլեան տամարին մէջ եղած «դարական» նահանջ տարիներն ա՛յն ատեն նահանջ ըլլան՝ երբ իրենց հարիւրաւորը 4 ով բաժանական է. որով 1600ը նահանջ եղաւ, 1700, 1800 և 1900՝ սովորական տարիներ, իսկ 2000ը նորէն նահանջ պիտի ըլլայ (Բ. Ե.): Գրիգորեան տամարն որ կատարեալ կրնայ ըսուիլ, պզտիկ անպատեհութենէ մը զերծ չէ, այն է՝ 400 տարուան մէջ 1 օրի յաւելում. ասոր մասին ալ զեռ շատ ատեն կայ խորհելու: Աւելորդ է կրկնել թէ Եւրոպացիք՝ Գրիգորեանին, իսկ մենք Յուլեան տամարին յարած ըլլալնուս համար է որ գոյացած է 10՝ ապա 12, 13 օրերու տարբերութիւնն որ երթալով պիտի աճի:

ԱՌԱՅԻՄ. — Նոր աստիճան, նոր հարկեր, աճի օր մշտն: Բան ինչ պիտի:

ՍԻՊԻԼ ԻՆՔ ԻՐ ՄԷՋ

* Գրականութիւնը հաճոյք մը, պերճանք մը չէ. այլ իրապէս բնկերութեան շունչն է, զայն սպրեցնող միջնորդը, անոր կեանքին հացն ու աղը: Ո՛վ որ գրիչը ձեռք կ'առնէ, քահանայ մըն է որ խաչը ձեռք կ'առնէ:

* Ինչպէս արոյրը ունի ոսկիին ցոլքերը, հասարակութեան դատողութեան հիմն ալ իրերու երանգն ու ցոլքն է, ո՛չ թէ անոնց խորքը:

* Մարդկութիւնը աշխարհի մեծ տղան է, իր ճակատագիրն է քալել, միշտ քալել. այր և կնոջ մէջ խափը չի դնելու բնութիւնը, և կ'ուզէ որ երկուքն ալ քալեն: Կինը ամէն տեղ նոյնն է, միշտ այլերէն աւելի փափկասիրտ, ըզձատանջ, ունենալով յղկուելու, ազնուանալու յատուկ խմոր մը որ քաղաքակրթութեան նրբութեանց մէջ թափուելու ընդունակ կ'ընէ զինքը:

* Խօսքը մարդն է, և խօսակցութեան արուեստին մեծ վարպեաները գիրքերն են: Անոնց մէջ է որ միտքը իր ծաղքը կ'առնէ և հողիին ձգտումները կը մարմնանան. անո՛նք են միայնակ ժամնրու մտերիմները, անո՛նք են որ կը պատասխանեն սրտին ամէնէն դադանի փափսուքներուն, երբ ըզձանքով կամ թախմութեամբ լեցուն հողին խորհրդակցութիւն մը կը փնտռէ այդ լուին պերճախօսութեան աշխարհին մէջ:

* Շատ հիացող մը չեմ մարական սիրոյ և անձնութեան հանդէպ. ամենեւին սարօրինակ չեմ գտնել որ մայր մը անհուն դուրգութեանք ունենայ իր զաւակներուն համար, քանի որ անոնք ի՛սկ կն իր երջանկութեան աղբիւրը և զանոնք սիրելով ու խնամելով, ինքզինքը սիրած և իր երջանկութեան հոգ տարած կ'ըլլայ:

* Մեր կեանքին մէջ ամէնէն աղքատներն են որ աւելի ձգտում ունին արդուզարգի. ամէնէն քիչ լեզու գիտայողներն են որ հայերէն խօսած ատենին օտար բառեր կը գործածեն. ամէնէն քիչ բարեպաշաներն են որ միշտ եկեղեցի կը վազեն. ամէնէն քիչ սիրտ ունեցողներն են որ ամէն մարդ կը սիրեն, ու թեթեւամիտ անձերն են որ ինքզինքնին լուրջ կը հռչակեն:



* Բրօֆ. Վօլպէռի ձեռամբ՝ ուղեղը հանուած դորս մը պահուելով, հինգ տարի ապրած է :

* Մինչև հիմայ բժշկութիւնը կ'անդիտանար փայծաղ (տալաք)ին պաշտօնը : Բրօֆ. Շառռէն և Մուսիւ կը հաստատեն թէ անիկա մարմինն ա'յն աշխատանոցն է՝ ուր կը պատրաստուին մաղձին նիւթերը :

* Տք. Կալլուա և Ֆլուռանս կը յանձնարարեն «կլիսէսին» կիրարկել թարախ կապող վէրքերու, զորս կ'ապանեխէ և աւելի արագ կը բուժէ :

* Տք. Զալանքաս անանկ կը համարի թէ ջրկոտեմը (սու թէրէսի) «նիքօթին»ի լաւագոյն դեղթօտիններէն մէկն է :

* Արդի բժշկութիւնը կը պատուիրէ «սաւաւտուն պողակեր, կէսօրին» շատ չափաւորութեամբ մսակեր, և իրիկունան՝ բուսակեր» ըլլալ :

* Ժ. Պէսթուան և Թօմասէն՝ չորցուած մանկանէղի ծծմբաւ կը գործածեն շատ յաջողութեամբ, իրբև հողի պօրաբարացուցիչ նիւթ՝ մէկ հարիւրակալ (շէքթար) տեղի վրայ 50 քիլոյի հաշիւով : Վարսակի մշակութեան համար այս բանը 1500 քիլօ աւելի տուած է՝ ամէն մէկ հարիւրակալի վրայ :

* Վերջերս սկսած են «այիւմինիօմ» է թուղթ շինել որ անագեակայ թերթին տեղը պիտի բռնէ՝ չօքուա, թէյ ևն. պատատելու հմբ. :

* Բլաուէն ա'էս-լա-շարէլ փայտի սղոցուքէ ալքոլ կը հանէ : Մէկ տակառաշափ սղոցուքը 225 լիտր ալքոլ կուտայ :

* Ըստ երկրաբան-գիտունին՝ Մ. Պուլի, Ֆրանսայի վերջին հրբարխային ժայթքումները 15,000 տարի առաջ պատահած են :

* Քառէ սպացուցած է որ շուներու հիւանդութեանց միքրոպը զատուցանելի (isolable) է ու կը նմանի բերանախոցային ջերմ (fièvre aphteuse)ի մանրէին :

* Պօղոս Նուպար Փաշա չողիով բանող ինքնաշարժ հերկահար կազմած մը շինած է՝ երկու մասէ բաղկացած, (1. քաշող տանող մաս. 2. դետինը ցլող կամ հերկող մաս), որ շատ լաւ արդիւնք տուած է Գասիլիէի մօտ կալուածի մը մէջ :



ՊԷՐՊԷՐԵԱՆ ԻՐ ՍՈՒԳԻՆ ՄԷՋ

Պերպերեան Վարժարանի նախկին ընթացաւարսներէն՝ զուսակմար եւ երգանան Ա. Բաբելեան Տիկ. Չորոսի Պերպերեանի սամուան առիւ «Vers le Passé» անունով վայս մը յորհեա՞ծ էր եւ ձօնա՞ծ վարժանի Տիկնոջ պատեհի յիշատակին: Պատասխանէ հետեւեալն այն յուզիչ նամակին՝ ուր հեղինակն իր սիրն ու մարմնակնը դրած ու խաղաղացած էր, եւ անցանցէսին հետ խրկած՝ սգաւոր ձեռուց ապեհին:

Սիրեցեալ Բարեկեան,

Սազայ ձեր սպեալ երաժշտական անդամնիկ երկը, նուիրուած դժբախտ Տիկնոջս պաշտելի յիշատակին: Կուգամ շնորհաւորել Ձեր նորագայլ խոստմնալից սաղանդն, ու ւրսագին շնորհակալիքս յայտնել Ձեզ տոյն բարեպաշտիկ զգացման համար զոր. ինչպէս կը պատկէր Ձեր զեղեցիկ նամակով, 1. Թաշտանի հետ ունեցած էք Ձեր երկը, *Vers le Passé!*, ձօնելու Տիկնոջս յիշատակին: Կը հաւատամ որ անոր զնահաճի սեղումներ ձեռքին ու քաջալերիչ մի քանի քառերը, — իրեն ու զգայուն ու ճարտար դաշնակահար էր, — Ձեր կոյման մէջ որոշիչ դեր մ'ունեցած ըլլան ու երաժշտական ասպարէզին մէջ Ձեր առաջին քայլերը զօրացուցած: Ասիկայ առանց պակեցեցնելու արժէքը Ձեր ձգնած ա'նքրանի զանքերուն որովք կրցար դիւցազնաբար յաղթել ասպարէզին առաջին դժուարութեանց, կ'աւելցնէ Ձեր ւրսին զերազանց ազնուութեան արժէքն, որով զուր երախտապարս կը մնար բարոյական խրախուսանաց, եւ Ձեր յաջողութեան ու յաղթանակի օրուան մէջ կը յիշէք զայն: Փափկազգածութեան զեղեցիկ օրինակ մը կուտար, որ կը շնչէ: Ձեր մէջ ւրսի վեհութիւնը եւ, իբր այն, Կեղարուեստի մէջ ազնիւ թռիչ մը Ձեզ կը գուշակէ, քանի որ մանաւանդ երաժշտութեան մէջ նուրբ զգացումը ներշնչութեան վեհագոյն Մուսան է անհրաժեշտ:

Ու Ձօնը Տիսդոսէն յառաջ խորհած ըլլար կամ Տիսդոսը Ձօնէն յառաջ, խորին հոգեբանութիւն մը դրած էք այդ կայակցութեան մէջ, Տիկնն Պերպերեանի անոյշ անունին շուրջ դէպ յանցեալն հրախրելով հոգիները: Դէպ յանցեալն... ուր Ան համակ զեղ ու շնորհ էր, ուր Ան կենսալից ու կենսափիւռ հրեշտակ էր թեւածող իր ամուսնոյն ու զաւակաց վերեւ ու շուրջն, ուր դիւթութիւն էր աչքի, ու արքեպիսի երաժշտութիւն էր հոգիի, ու յոյս էր մտնողորսին մէջ ուր կը թրճար, բուրում՝ օղին մէջ ուր կը շարժէր, Սէր ու Գորով: Ու Անուշութիւն էր մշտակցաց մշտածոր մշտահոսան, Դէպ յանցեալն!!! Ինչ աղբիւր հեշտանոյշ յիշատակներու, եւ ինչ աղբիւր դառնահամ արցունքներու, զոր Ձեր երաժշտութիւնը իր դիւթական մասներով կը բանայ հոգեոյս առջեւ: Ձէ', չե'մ քաշուիր այդ արցունքներէն, որոնք միակ միութեամբս են արդէն Միայն շնորհակալ եմ Ձեր քնքրոյշ հոգեոյն որ կը պատասխանէ իմինիս ու կ'երգէ պարը յիշատակներու որոնք միքսս ու սիրս կը ճանին յար դէպ յանցեալն մոլորահետ... պարը երանութեան ոսկեղինիկ օրերուն որ ուրուանման կը դառնայ հեռացած հորիզոններու մէջ, պարը մեռած ուրախութիւններուն, կենանքիս ծառին զեղնած թռամած զօս սերուններուն որոնք իմայ ցուրտ մշտտ աշուն մը սխուր տոյն երկինքին սակ կը պտուսրին ու մահուան պարը կը դառնան հէք զլիսու շուրջը... Գար, պարն այ յարմար է, պա'րն այ խորհրդաւոր:

Թոյլ տուր, ազնուասիրտ ու սաղանդաւոր Բարեկեան, որ անգամ մ'այ կրկնեմ Ձեզ ցաւոտ հոգեոյս շնորհակալիքը Ձեր յարգող ու կարեկից հոգեոյն, ու Ձեր յուսանոյց նակասն համբուրելով ու սաղանդաւոր ձեռքերը սեղմելով, մաղթեմ Ձեզ սաղանդիդ արժանի յաջողութիւն ու ւրսիդ արժանի երջանկութիւն:

Գ. Նոյ. 1903 [ԱՆՏԻՊ]

Դասիարակդ, Ռ. Յ. ՊԷՐՊԷՐԵԱՆ

Սմէնո՛ւն հարցու ,
 Պանդոկս է վարձու .
 Ո՛ր եղանակին
 Վարձես ի հարկին
 Զանի , ճշմարի՛տ
 Կուգայ քու գործիդ :
 Երկու դուռ , տեսէ՛ք ,
 Պատուհան երեք ,
 Մառան երկու հատ ,
 Զեղնայարկ մ'ալ դատ ,
 Ուր , եթէ ուղես ,
 Զոր խոտ կը պահես :
 Զորս կամ հինգ հողին
 Մէջը բընակին ,
 Հանգի՛տա , անգանդա՛տ ,
 Ինձ խնդիր չէ ատ :
 Սա թաղը եթէ
 Շատ հաճելի չէ ,
 Զեռքս՝ սըւիկայ ,
 Ասդին ձայնս ալ կայ .
 Տանտէր չե՞մ մի ես ,
 Կը տանխմ դձեզ
 Տունով ու տեղով
 Հանգիտա , ապահով
 Անանկ տեղ մը որ
 Ըսէք « շա՛տ աղւոր » :
 Ասոր հաւնեցա՞ք .
 Յնձացէ՛ք հիմակ :
 (ՎԱՐՁՈՒ ԿԱՌՔ, ԿԱՌԱՊԱՆ)

Ճիշով մը որ տկանջ ծակի
 Ինքը ծընաւ յանկարծակի .
 Որո՞ւն այսպէս կը լիճակի :
 Գործին փափուկ դուռն կէ՛տը տես ,
 Մեռաւ նորէն՝ ծընելուն պէս ,
 Աշխարհք լացաւ անմիջապէս :
 (ԿԱՅԻԱԿ-ԱՆՁՐԵՒ)

Կարճը քիթիկով ,
 Երկայն թաթիկով ,
 Ան ո՞վ է , ո՞վ
 Որ ներս հըրես՝ կը փրփրի ,
 Եւ արտաքսես՝ շուտ կ'անդորրի :
 ՍՐՃԵՓՈՅ (ձէզվէ)

Ճերմակ նետեցի

Երկին ,

Գե՛ր դեղին ինկաւ

Գետին :
 (ՀԱՌԿԻԹ)

Սուա՛նց սրտանց ըլլալու՝
 Պէտքը տեսաւ հետս լալու ,
 Մինչեւ անգամ խնդալու :
 Երբ խօսեցայ ես սակայն
 Մեղմիկ , ուժգին կամ երկայն ,
 Մընաց քարի՛ պէս անձայն :
 (ՀԱՅԵԼԻ)

Սուաւօտուն՝ չորս ոտքով ,
 Միջօրէին՝ երկուքով ,
 Եւ իրիկուան երեքով .
 — Կրնա՞ս բերել քովէ քով :
 (ԵՐԱԹԱՅ, ԶԱՓԱՀԱՍ և ցուպով
 քալող ԻՆԵՐՈՒԿ մարդը)

ԽԹՈՒՄԸ զոյականն է խթել բային որ կը նշանակէ «մտնալ», այսինքն ուտիքը թեւակոխել, «խթիլ ի կիթեղէն կերակուրս», որպիսին է Ծնունդի կամ Զատիուան նախընթաց օրուան իրիկունը, — ճրագաւոյց, — ուրկէ կը դադրի պահքն ու կ'սկսի ուտիքը: Ճողովըրդական քմածին ստուգարանութեամբ, խթումը մեկնուած է իբր շատ ուտելու օր, կարծելով որ «խթել»ը տառաջըութիւնն ըլլայ ուսմիօրէն «թխել» բային՝ որ կը նշանակէ շիճիտակել, մոզգայիլ: Գիտենք թէ պահքերնին լրիւ բռնող ջերմուանդներ ինչ ազանութեամբ կը խծկեն իրենց ստամոքսը՝ խթման ընթրիքին:

ՆԱԻԱԿԱՏԻՔը կը համապատասխանէ Յուն. «Էնքէնիա» բառին որ նորոգութիւն ըսել է: Բարդ բառ մըն է ասիկա՝ կազմուած նաև և կասիք բառերով և ա յօդակապով: Նաւը Պարսկ. նկիւն է որ կը նշանակէ «Նոր», ինչպէս անգլ. new նիւ: Գալով կասիքին, Հիւնքեարպէյէնական քահանան Յուն. «կատիքիա» բառին հետ համեմատելի կը գտնէ զայն. «կատիքիա» ընակութիւն, հաստատութիւն ըսել է: Նոր ընակութեան մը, կամ հաստատութեան մը և կամ որ և է նոր բանի համար կատարուած պաշտամունքի՝ հանդէսը նաւակաւորքն է արդէն, քանի որ նաւակատիքն եկած նոյնացած է Հայ եկեղեցիի նինգ տաղաւարներու պահոց շարքի օրերուն հետ (Ծնունդ, Զատիկ, Վարդապետ, Աստուածածին և Պաշկերաց), իբր գլխաւոր տօներ՝ քրիստոնէական եկեղեցիներու վերկենդանութեան, նորոգութեան և հաստատութեան: Ժ.Գ. դարու հայ մատենագիրներէն ունինք Գրիգոր Տաթևացին որ 1389 ին յօրինած իր Հարցմանց գիրքին մէջ զարմանալի եղանակով մը կ'որոշէ Պահքին, Ուտիքին ու Նաւակասիքին 3 տարրերութիւններն: Որովհետև — կ'ըսէ — ամբողջ մարդը 3 ուլ շինուած կեցած է, Հոգի, Մարմին, և երկուքին մէջ Ծունը խառնուած: Պահքն առաջինին կը յարմարի, Ուտիքն՝ երկրորդին. իսկ Նաւակատիքը՝ խառնուած շունչին. որով կ'եզրակացունէ թէ այն որ անասունի միւս է՝ ուտիքի և Զատիուան կերակուր է, այն որ խոտեղէն է կամ պտուղ՝ պահքի կերակուր է: Իսկ այն որ երկուքին միջինն է, ինչպէս ձուկ, ձու, կաթ, եւն., նաւակատիքի: Այսպէս թէ այնպէս, նաւակատիք բառը կը նշանակէ տօնահանդէս նոր շէնքի, եկեղեցիի եւն. և կամ տարեգարծի. իսկ ծիսական իմաստով՝ տաղաւար մը կանխող օր, որ կէս-ուտիք կը սեպուի:

Հետեւեալը Հայ Եկեղեցւոյ Ս. Միւռոնի նիւթերուն ցանկն է՝ հետեւողութեամբ Մաշտոցի: 40 օր տաջուրնէ այս նիւթերը կաթողիկոսը պատրաստ ընել կուտայ արծաթ ամանի մը մէջ և ապա կ'օրհնէ, այդչափ ատենի մէջ անդադար քահանաներէ աւետարաններ կարդացուելով վրան: Իւրաքանչիւր նիւթի քանակաչափն՝ էջմփածիսի և այլ մաշտոցներու մէջ յիշուածին հետ նոյն չըլլալուն զանց ըրինք յիշել:

Ձէթ բալասանի (բէլէսէնկ, baume), Հազլ բալասան (բալասան Բերուի, Եէնի տունեա բէլէսէնկի), Դասայ զարկար?, Զանֆու?, Նունուֆար (nénufar, իւլիֆէր չիշ.), Մեխակ (գարէնֆիլ), Ճուսպայ, Քապոսպայ?, Պասպասայ (յունական սամիթ), Սատէճ հնտի, Լաւտան (Laudanum, աֆիօն բուճը), Մինալ?, Հոուժ խունկ, Մկնականջ (Myosotis, մէրճանքէօչը), Կզմուխ (մահլէպ կամ ինտուզ օթու, aunée), Ախթար կամ Վաղմնուուկ (Մէքքէ այրըզը, Jone odorant), Կիպուխ (cypérus, կամ souchet odorant), Մրուանտակ, Ասարոն կամ Նարդոս վայրի և կմ. Սթիբր, (asarum, քէտի օթու), Պապունիճ կմ. Երիցուկ (camomille, բարաթիա), Նարընջածաղիկ, Կասուլի (դափնի, աէֆնէ, laurier) տերև, Փեննայ կամ Նունումայ (anémone, յագայիգի նիւմանիէ), Յամբարուկ (ambrette, ամպեր չիչէի), Կինամոն (cinnamome, թարչին), Կոճապղպեղ (gingembre, գէնճէֆիլ), Մազտաքէ (mastic, մասթիքա, սագրղ), Հայտունկ (encens, քիւննիւք), Անգրիտակ կամ Շուշմիր (չաման վայրի, գագուէ, cardamome), Մարեմայ խունկ կամ Ստաշխ (storax, գարա քիւննիւք), Հալուէ (aloès, էօս աղածը), Ծանդան (սանտալ աղածը, santal), Քրքում (safran, գաֆրան), Կոկոն՝ կարմիր վարդի, Մանուշակ (violette մէնէքէ), Մրտենիի (myrte, մէրսին) տերև, Նարդէս (narcisse, ներկիզ), Ծապուռ (տեսակ չամանի, քիմիօն, cumin), Մուշկ (միսք, musc), Շառնաջ (վայրի նուռ)ի ծաղիկ, Շուշան (lis, զամպազ), Վարդ նամնամ?, Սոնիճ, (nielle, չէօրէք օթու), Զիրխունկ (գուգիրդ? թերևս քիւքիւրա), Վարդեջուր (eau de rose, կիւլ սուշու), Կինի և Ձէթ:

Յոյն և Հայ եկեղեցիներու մեռոննիւթերուն մէջ յայտնի նմանութիւններ կան, ինչ որ անգամ մ'ալ կ'ապացուցանէ իրենց հնադարեան խնամութիւնը (Քոյր—Եկեղեցի)՝ մանաւանդ ծիսական տեսակետով:

Այն բուսեղէնները կամ նիւթերը զորս չի կրցինք ստուգել՝ իրենց անուններուն առջև հարցական նշան մը դրինք, բանասէրներու թողլով անոնց խղճամիտ պրպտումը:

ԶԵՐՄԱՆՈՅԸ

ԱՌ ՕՐ. ՇԱՀԻՆ ՄԱՆԱՍԵԱՆ

Գուրգուրանօք, խանդով, խնդիւ, բարբախմամբ,
Նուրբ ջերմանոցն այն կանգնեցաւ ծառոց մէջ,
Թեթեւ, թրթուուն, թովատեսիկ իրբեւ ամբ,
Եւ թափանցիկ զերդ մնտաքսեայ թուղթի մ'էջ:

Ծխածանին գոյներն իր վրայ միացան.
Եւ դեռ ծաղկունք տարաշխարհիկք՝ այն յարկին
Ներքեւ ի շար չը միացած լուսացան,
Ինք ծաղկեփունջ մ'եզաւ պատրանս... իւր հարկին:

Հարկ հարսնիքին այն աղջըկան, որ մեզո՛ւն
Թըւէր փունջին այն զօջոտիչ վառ ի վառ՝
Թէեւ անբոյր. — այնքան աղուոր պսպրղուն
Էր տիրուհին ջերմանոցին օղապար:

Իւր աչաց տակ — կաթնովկէան զոյգ արեւ, —
Արփույն երկրաց բոյսք ու ծաղկունք հոյլ ի հոյլ
Եկան ապրիլ, գունեղ ժրպիաք յար զիւրեւ,
Տիպարուելով յիւր դիմակին ձեւահոյլ:

Հայրենարազձ ծաղկունք անձկոտ ջերմոցին
Բափոփուէին միայն ի տես աղջըկան.
Եւ ճրմեուն ո՛չ վառարանէն ապրէին,
Այլ ի հրբո՛յ կոյս այն հողւոյն սիրական:

* * *

Փըչեց ցուրտ հով, ու խամբեցան բոյսք համայն.
Եւ ջերմանոցն ահա քակուի՛ դեռ ո՛չ հին...:
Հո՛ղը... մընաց պարապ, դեռ գաղջ ու բուրեան.
Հո՛ն կ'ուզէի թաղուիլ աչքիդ տակ, Շահի՛ն...:

ԵՂԻՍ ՏԷՄԻՐՃԻՊԱՆԵԱՆ

Գասըղիւղ
9 Մայիս 1893 [ԱՆՏԻՊ]

ԱՌ.ԱՄ. — Մերտն իրան իման պատիւը:



09-50702

ԿԻՐԱԿԻ. Բ. 6 Յունվար—Քեանունի սանի: Կ. Տ. 19 Յնվր.: ՀՃԲ. 15 Զիլհիմ.:
 ✕ **ՀՅ.** Գա.ի Ծնունդին եւ Ա.Ճ.այլայնուրեան **ՏՕՆԸ:** Տ օր ուտիր: **Կ.**
ՀՅ. և **ՅՆ.** Բս.ի Յայտնութիւնը: **ԼՏ.** Յիշուար անուան սօնը: ՊԱՐՍԻՅ Շահին
 Թաղադրութիւնը:

ՄԲԿՈՒՇՐ. Է. 7 Յունվար—Քեանունի սանի: Կ. Տ. 20 Յնվր.: ՀՃԲ. 16 Զիլհիմ.:
 ✕ **ՀՅ.** Ծնունդին Բ. օրը: Մեռելոց: **Կ.** **ՀՅ.** Յայտնութեան Բ. օրը: Մեռելոց:
ՅՆ. Ս. Յովհաննէս Կարապետ: **ԼՏ.** Ս. Անաստասիանոս վկայ:

ՄԲԵՒՇՐ. Է. 8 Յունվար—Քեանունի սանի: Կ. Տ. 21 Յնվր.: ՀՃԲ. 17 Զիլհիմ.:
ՀՅ. Ծնունդին Գ. օրը: **Կ.** **ՀՅ.** Յայտնութեան Գ. օրը: **ՅՆ.** Ս. Դոմնա վկայուհի:
ԼՏ. Ս. Ազնէս կոյս: **ՏՃ** Պր.բի Տէլլի (չրնոս): ՇՈՒԷՏԻ Թագաւորին ծնունդը:

ՉՈՐԲՇՐ. Է. 9 Յունվար—Քեանունի սանի: Կ. Տ. 22 Յնվր.: ՀՃԲ. 18 Զիլհիմ.:
ՀՅ. Ծնունդին Գ. օրը: **Կ.** **ՀՅ.** Յայտնութեան Գ. օրը: **ՅՆ.** Ս. Պօղիբոսոս վը.
 կայ: **ԼՏ.** Ս. Ս. Վիչենցիոս և Անաստասիոս վկաներ:

ՀԻՆԳՇՐ. Է. 10 Յունվար—Քեանունի սանի: Կ. Տ. 23 Յնվր.: ՀՃԲ. 19 Զիլհիմ.:
ՀՅ. Ծնունդին Ե. օրը: **Կ.** **ՀՅ.** Յայտնութեան Ե. օրը: **ՅՆ.** Ս. Գրիգորիոս Եպս.
 Նէոկեսարիոյ: **ԼՏ.** Ս. Հոսիմոնորոս կրօնաւոր: ԱՆԳԼԻՅԻ Թագաւորին զանա-
 կալութիւնը:

ՈՒՐԱԹ. Է. 11 Յունվար—Քեանունի սանի: Կ. Տ. 24 Յնվր.: ՀՃԲ. 20 Զիլհիմ.:
ՀՅ. Ծնունդին Զ. օրը: **Կ.** **ՀՅ.** Յայտնութեան Զ. օրը: **ՅՆ.** Ս. Թէոդորոս
 միանձն: **ԼՏ.** Ս. Տիմոթէոս առաքել:

ՇԱԲԱԹ. Է. 12 Յունվար—Քեանունի սանի: Կ. Տ. 25 Յնվր.: ՀՃԲ. 21 Զիլհիմ.:
ՀՅ. Ծնունդին Է. օրը: **Կ.** **ՀՅ.** Յայտնութեան Է. օրը: **ՅՆ.** Ս. Տատիանէ վկա.
 յուհի: **ԼՏ.** Ս. Պօղոս առաքելայի դարձը:

ՅՈՒՇԱՏԵՏՐ

6 Յնվր. Կիր. [6—360] Կէս օր. 6. 55.

7 Յնվր. Բշ. [7—359] Կէս օր. 6. 54.

8 Յնվր. Դշ. [8—358] Կէս օր. 6. 53.

9 Յնվր. Դշ. [9—357] Կէս օր. 6. 52.

10 Յնվր. Եշ. [10—356] Կէս օր. 6. 51.

11 Յնվր. Ուր. [11—355] Կէս օր. 6. 50.

12 Յնվր. Շր. [12—354] Կէս օր. 6. 49.

Դ Պ Ր Ե Վ Ա Ն Ք Ը

ՃԱՇԱԿ, ախորժակ, կոչում, աւելցուցէ՛ք եւս յարմարութիւնս
և կարողութիւնս, աւելի ուսումնական քան թէ վարչական մարդ մը
կը սահմանէին զիս լինել: Ընդհակառակն դաւառականն առաջնոր-
դութեան կոչուեցայ շուտով, և եօթը տարի ազէկ գէշ շարունա-
կեցի: Բարեպատեհ՝ առիթ մը դարձուց զիս իմ ճաշակիս, և Մայր
Աթոռոյ ձեմարանին ուսուցչութեան հրաւիրուեցայ, բայց շատ քիչ
միջոց, միայն 1887-88 դպրոցական տարին կրցայ պաշտօնավարել -
1888, օգոստոս 11, ԵՂ. Կոստանդնուպոլիս վերադարձայ: Ուսում-
նական, կամ աւելի ճիշդ եկեղեցական-ուսումնական փախաքը վեր-
տարձարձուած էր իմ մէջ. և այդ միջոցին ստացած և տուած այցե-
լութիւններուս մէջ խօսակցութեան նիւթը շարունակ այս էր, թէ
ինչո՞ւ ձեմարանի նման հաստատութիւն մը Կոստանդնուպոլսոյ
Պատրիարքութիւնն ալ չունենայ:

Պատրիարքական աթոռը նոր աթոռակալ ունեցաւ այն օրեր Տ.
Խորէն Արքեպիսկոպոս Աշըքեան, վանահայր Արմաշու, պատրիարք
ընտրուեցաւ 1888 սեպտեմբեր 29, ԵՂ. և Կ. Պոլիս հասաւ 17 հոկտ-
եՂ. իսկ հանդիսապէս պաշտօնին ձեռնարկեց հոկտեմբեր 19, ԴՂ. :
Վանքու վանական դպրոց նորընտիր Պատրիարքին նախընթացը կը
կազմէին, եկեղեցոյ և եկեղեցականաց բարեկարգութեան նախան-
ձահանդիր ճանչցուած էր իր անցեալով և իր գրիչով:

Եպիսկոպոսաց ժողով մը գումարեց հոկտեմբեր 27, ԵՂ. և ինչ
ինչ վարչական առաջարկներ մէջ սեղ դրաւ եկեղեցականաց բարե-
կարգութիւնն ապահովելու նպատակով: Իմ տեսութիւններ համա-
ձայն չեղան, բայց աւելի չպնդեցի: Հոկտեմբեր 31, ԲՂ. մասնաւոր
տեսակցութեան դարձայ, և ընդարձակօրէն պարզեցի իմ գաղա-
փարներս, և պնդեցի որ եթէ եկեղեցականները կրթութեամբ և
ուսմամբ չենք պատրաստեր, վարչական կարգապրութիւններ անոնց
ներքինը չեն կազմեր: Պատրիարքն՝ որ եկեղեցական դաստիարա-
կութեան վարիչ և ուսուցիչ եղած էր, կատարելապէս ընդգրկեց
իմ տեսութիւնը, և այդ ուղղութեան գիմնելու համար ինէ գրաւոր
առաջարկ մը ուղեց: Կարեւոր խորհրդակցութիւններով և գործը

հնարաւորութեան սահմանին վերածելով, զբաւոր բան մը պատ-
քաստեցի և մատուցի, նոյեմբեր 25, Ուր. և քիչ օր ետքը նոյեմ-
բեր 30, Գշ. Խաան ժողովն որոշեց եկեղեցականաց համար վարժա-
բանի մը բացումը, և ազգեցիկ ու բարեսէր հինգ անդամներէ Յանձ-
նաժողով մը կազմեց, զիս ալ նախագահ նշանակելով: Անդամակից
էին Արիկ Ունձեան, Տիգրան Եռսուֆեան, Յովհաննէս Էսաեան,
Պատրիկ Կիւլպէնիեան և Գարրիէլ Գարրիէլեան էֆէնտիները: Պաշ-
տօնագիրերը ստացուեցան զեկտեմբեր 10, Շք., առաջին նիստը
գումարուեցաւ զեմտեմբեր 14, Գշ.:

Վարչութեան որոշումը և Յանձնաժողովին առջեւը դրուած նը-
պատակն այն էին, որ ինչպէս Դաւաթիոյ ուխտատեղւոյն արդիւնքով
Կեղորոնական Վարժարան մը բացուած էր, նոյնպէս ալ Գարակէօմ-
բիւկի ուխտատեղւոյն արդիւնքով Եկեղեցական Վարժարան մը բաց-
ուի: Այս նպատակով Սալմաթիօմբուք Գարակէօմբիւկէ գատուելով
Պալաթու թաղին միացաւ, Գարակէօմբիւկի թաղականութիւնը խա-
փանուեցաւ, և ուխտատեղւոյն մատակարարութիւնը յիշեալ Յանձ-
նաժողովին յանձնուեցաւ, քարոզչութիւնն ալ Յանձնաժողովի նա-
խագահին:

Յանձնաժողովին գործունէութիւնն երեք տարրեր կէտերու վրայ
պիտի տարածուէր. Գարակէօմբիւկի ուխտատեղւոյն արդիւնքը կար-
գաւորել ու արգասաւորել. Եկեղեցական Վարժարանի մը յարմար
տեղն որոշել. Եկեղեցական Վարժարանին մատակարարութեան և
ուսմանց ծրագիրը կազմել: Յանձնաժողովն ամենայն փութաջանու-
թեամբ գործին ձեռնարկեց, շարաթական երկու նիստեր գումարե-
լով: Գարակէօմբիւկի գիրքին ուսումնասիրութիւնը, յարմար հե-
տադօտութեանց պոտոյաները և գրութեանց աշխատութիւնները,
բնական էր որ Յանձնաժողովին անդամներէն աւելի նախագահին
վրայ պիտի ծանրանային: Ուխտատեղւոյն ներքին բարեկարգու-
թիւնը, եկեղեցական արարողութեանց կարգաւորութիւնը, անդէպ
միջամտութեանց հեռացումը, ուխտաւորաց համար յատուկ սենեակ-
ներու շինութիւնը, ու վերնատունին բնակութեան տուն լինելէ
զազարումը, հետզհետէ գործադրուեցան, և արդիւնքը զգալի եղաւ:

Գարակէօմբիւկի չորքն եկեղեցական վարժարանի յարմար չը
տեսնուելով, նկատի առնուեցան և զննուեցան Խաքէօյի Շահա-
ղարեան վարժարանը, Զէյթին պուրնուի Ս. Յակոբի վանատունը,
Իւսկիւտաշի հրկիզեալ ձեմարանին տեղը, Գընալըի եկեղեցւոյ կից

դեախնը, և վերջապէս Արմաշի Չարխափանին վանքը, ուր չուեցի 1889 փետրուար 13, Բշ. և դարձայ փետրուար 18, Շբ.: Հաւաքուած տեղեկութիւնք Յանձնաժողովի կողմանէ կշռուեցան, և դրժուարութիւնք ու դիւրութիւնք բազդատուեցան, և մարտ 15, Դշ. նիստին մէջ Արմաշու համար որոշում տրուեցաւ, Գարակէօմրիկի արդիւնքներուն հետ միացման պայմանով: Նոյն միջոցին մատակարարութեան և ուսմանց հիմերն ալ որոշուեցան, և տեղեկագիրը սկսաւ պատրաստուիլ: Գրութիւնք երկու եղան, մին ընդարձակ բացատրութիւններով, սկզբունքներ և առարկութիւններ մէջ տեղ դնելով՝ միտքերը պատրաստելու համար, և միւսը պաշտօնական իրր հիմնագիծ և կանոնագիր գործածուելու համար: Առաջինն Աբե-տէ վրացորոյ մէջ հրատարակուեցաւ, ապրիլ 3, Բշ. օրէ սկսելով, և միւսը Վարչութեան մատուցուեցաւ, և ապրիլ 28, Ուր. նիստին մէջ Խառն ժողովն որոշեց Եկեղեցական Վարժարանին Արմաշու վանքին մէջ բացումը: Կոստանդնուպոլսոյ Պատրիարքութեան հովանաւորութեան և հսկողութեան ներքեւ:

Այդ նպատակով Եկեղեցական Վարժարանի նախապատրաստական Յանձնաժողովին կերպարանը փոխուեցաւ ու եղաւ Եկեղեցական Վարժարանի Խնամակալութիւն, յաւելմամբ երկու եկեղեցական անդամոց, որք եղան Տ. Գարեգին Ս. Եպս. Սրուանձտեան և Տ. Գարեգին Ծ. Վրդ. Թաթարեան: Պատրիարքն եղաւ Նախագահ Խնամակալութեան, իրեն պահելով Արմաշու Վանահայրութեան անունը, և Արմաշն ինքնօրէն վանական միարանութիւն լինելէ զադրեցնելով, և ընտրելի վերատեսչին տալով միայն Փոխ-Վանահօր կոչումը, Կ. Պոլսոյ Պատրիարքութեան և Խնամակալութեան կապուած լինելը ցուցնելու համար:

Այս որոշումներ արուեցան Խառն ժողովոյ Մայիս 17, Դշ. նիստին մէջ, և Խնամակալութեան առաջին գործերէն մին եղաւ զիս Վերատեսուչ անուանել յունիս 7 Դշ. գումարման մէջ, յանձնարարելով միանգամայն որ երթալով գալով Արմաշու տեղական պատրաստութիւնները կարգադրուին, քանի որ վանքին մէկ մասը հրկիզուած էր 1888 սեպտեմբեր 28, Դշ. օր, նախապատրաստական պէտքերը հոշացուին, ուսումնական պայմանները նայուին: Ասոնք հետզհետէ գործադրուեցան Խնամակալութեան նաև դրամական օժանդակութեամբ. և 1889 սեպտեմբեր 9, Շբ. վերատեսչութեան և Փոխ-Վանահայրութեան պաշտօնավարութիւնը ստանձնեցի, և

սեպտեմբեր 18, Բշ. Խաչվերացի երկրորդ օրը պաշտօնապէս Եկեղեցական Վարժարանի բացման հանդիսութիւնը կատարեցինք, նախընծայ աշակերտաց ներկայութեամբ, իսկ ԴՊՐԵՎԱՆՔ անունին նուիրագործու մը կատարուեցաւ 1890 յունուար 10, Դշ. յատուկ պաշտօնական որոշմամբ: Այսչափ ինչ պատմականօրէն Դպրեւանքին սկզբնաւորութեան վրայ:

Ինչ եղաւ Դպրեւանքի բացման տիրապետող գաղափարը: Արեւելք մէջ 1888 ապրիլին հրատարակուած յօդուածները լրագոյն բացատրած են, բայց աւելորդ չլինի համառօտիւ քաղել: Ամէն արհեստի և արուեստի և պաշտօնի մէջ յաջողակութիւնը կ'ստացուի կամ լոկ փորձառութեամբ աւանց ուսման և վարժարանի, կամ ուսմամբ և վարժարանով՝ որուն կը հետեւի փորձառութիւն: Առաջին ոճը հին ժամանակներու յատուկ էր. մինչև և իսկ բժշկութեան և փաստաբանութեան հետամուտներ՝ հիներէն մէկուն քղանցքին կպչելով բժիշկ ու փաստաբան կը դառնային, մինչ այժմ մինչև իսկ պանդոկի սպասաւորներուն և տան սպասուհիներուն համար վարժարաններ բացուած են: Միթէ եկեղեցականութեան կոչումն այդչափ ստորին է, որ լոկ փոքրաւորութեամբ և առանց յատուկ ուսման ձեռք ձգուելիք գործ մը համարուի: Ուրեմն Եկեղեցականութեան յատուկ վարժարանի մը գոյութիւնը անհրաժեշտ է: Այդ անհրաժեշտութիւնն աւանդական և օրինական ալ է. և ի սկզբանէ անտի ամէն մեծ աթոռներ և գլխաւոր վանքեր ժառանգաւորաց վարժարաններ ունեցած են: Այսպէս եղած է Լուսաւորչին օրէն մինչև մեր օրերը: Կոստանդնուպոլսոյ Պատրիարքութիւնը, որ մեծ ու կարեւորագոյն աթոռ է, և Թուրքիոյ Հայոց Կեդրոնական Վարչութեան գլուխն է, չէր կրնար ուրեմն զինքն այդ պարտաւորութենէն զերծ համարիլ:

Եկեղեցական Վարժարանի գոյութիւնն անհակառակ ընդունուած ատեն, սովորական կրկնուած դժուարութիւններն էին. 1. Եկեղեցական Վարժարանը կրնայ կղերամիտ հակամիտութիւն ստեղծել կամ քաջալերել. 2. Եկեղեցական Վարժարանը կուսակրօն եկեղեցականութիւնը զօրացուցած ատեն, ամուսնաւոր եկեղեցականութիւնն ևս քան զևս կը տկարացնէ: Այդ դժուարութիւնները նախատեսուեցան, բայց երբեք չէին կրնար Եկեղեցական վարժարանը խափանելու կամ չբանալու եղրակացութեան տանիլ, այլ պատշաճ կերպերով դժուարութիւնները դարմանելու: Առաջին դժուարու-

ԿԻՐԱԿԻ. ԲՅ. **13** Յունվար—Քեանուների սանիւ Ն. Տ. 26 Յնվր., ՀՃԲ. 22 Զիլհիմ. :
 ❄ **ՀՅ.** Ծնունդի Ը. օրը: **ԳՆ. Ի Ա. Գուաճախուրեան Տօնը:** **Կ. ՀՅ.**
 Յայտնութեան Ը. օրը: **ՅՆ.** Ս. Սղրատոնիկոս վրայ, **ԼՏ.** Ս. Պօղիկարացոս եպիս.
 կոպոս Զմիւռնիոյ:

ՆՐԿՈՒՇՐ. ԲԻ. **14** Յունվար—Քեանուների սանիւ Ն. Տ. 27 Յնվր., ՀՃԲ. 23 Զիլհիմ. :
ՀՅ. Ս. Յովնանէս Կարապետի ծնունդին տօնը, Հարսնիք, **Կ. ՀՅ.** Ս. Յովնանէս
 Կարապետ, **ՅՆ.** Ս. Ս. ձգնաւորք Սիւնայի, **ԼՏ.** Ս. Յովնան Ոսկերեան: Գեր-
 ՄԱՆԻՈՅ Կայսեր ծնունդը:

ՆՐՆՔՇՐ. ԳՅ. **15** Յունվար—Քեանուների սանիւ Ն. Տ. 28 Յնվր., ՀՃԲ. 24 Զիլհիմ. :
ՀՅ. Ս Ս. Պետրոս հայրապետ, Վրաս եպիսկոպոս և Արխեպոստ սարկաւազ, **Կ. ՀՅ.**
 Ս. Ս. Պետրոս հայրապետ և Արխեպոստ սարկաւազ, **ՅՆ.** Ս. Պօղոս Թերայիղեցի:
ԼՏ. Ս. Կիւրեղ Աղեքսանդրիոյ հայրապետ:

ՉՈՐՔՇՐ. ԳԻ. **16** Յունվար—Քեանուների սանիւ Ն. Տ. 29 Յնվր., ՀՃԲ. 25 Զիլհիմ. :
ՀՅ. և **Կ. ՀՅ.** Պահր, **ՅՆ.** Ս. Պետրոս առաքելի շրջաներուն տօնը, **ԼՏ.** Ս.
 Փրանկիսկոս Սալեզացի:

ՀԻՆՎՇՐ. ԴՅ. **17** Յունվար—Քեանուների սանիւ Ն. Տ. 30 Յնվր., ՀՃԲ. 26 Զիլհիմ. :
ՀՅ. և **Կ. ՀՅ.** և **ՅՆ.** Ս. Անտոն ձգնաւոր, **ԼՏ.** Ս. Մարտինէ կոյս **ՏՃ.**
 Զմեռուան Ա. մասին 40 օրերուն վերջը: ՏԱՆԻՄԱՐՔԱՅԻ Թագաւորին զանազա-
 լումիւնը:

ՈՒՐԱՍԹ. ԴԻ. **18** Յունվար—Քեանուների սանիւ Ն. Տ. 31 Յնվր., ՀՃԲ. 27 Զիլհիմ. :
ՀՅ. և **Կ. ՀՅ.** Պահր, **ՅՆ.** Ս Ս. Աթանոս և Կիւրեղ հայրապետներ, **ԼՏ.** Ս.
 Պետրոս Նորասկոս կրօնաւոր, **ՏՃ.** Զմեռուան Բ. մասին 50 օրերուն սկիզբը:

ՇԱՐԱՍԹ. -Յ. **19** Յունվար—Քեանուների սանիւ Ն. Տ. 1 Փետր., ՀՃԲ. 28 Զիլհիմ. :
ՀՅ. և **Կ. ՀՅ.** Ս. Ս. Թէոդոս Թագաւոր և Եփեսոսի եօթը մանուկներ, **ՅՆ.** Ս.
 Մակար ձգնաւոր, **ԼՏ.** Ս. Իզնատիոս հայրապետ:

ՅՈՒՇԱՏԵՏՐ

13 Յնվր. ԿԻր. [13—353] Կէս օր. 6. 48

14 Յնվր. Բշ. [14—352] Կէս օր. 6. 47

15 Յնվր. Գշ. [15—351] Կէս օր. 6. 46

16 Յնվր. Դշ. [16—350] Կէս օր. 6. 45

17 Յնվր. Եշ. [17—349] Կէս օր. 6. 44

18 Յնվր. Ուր. [18—348] Կէս օր. 6. 43

19 Յնվր. Շր. [19—347] Կէս օր. 6. 41

Թեան հանդէպ խորհուեցաւ ուսմանց ծրագիրը բնական, գիտական և ուսողական և իմաստասիրական և գրագիտական ճիւղերով ճշ-
խացնել : Անձուկ և միակողմանի գաղափարներով չանուցանել աշա-
կերանները, կենցաղական և վարչական հմտութիւններ չզլանալ անոնց,
ժողովուրդի և կղերի համերաշխ գործակցութեան նիւնակէտն ամուր
պահել եկեղեցապիտական ուսմանց մէջ, և այլ նմանօրինակ պայ-
մաններ, զորս գործն ինքնին կը թեւադրէր : Իսկ երկրորդ դժուա-
բութեան հանդէպ որոշուեցաւ, ընթացքն երկու շրջաններու բաշ-
խել՝ իւրաքանչիւրն երեքամսայ տեւողութեամբ, և առաջինն այն-
պէս և այնչափ լրացնել որ անկէ լլուղներ կարող լինին արժանա-
ւոր քահանաներ և արգիւնաւոր վարժապետներ լինիլ, իսկ երկրորդ
շրջանը պահել անոնց, որք կուսակրօն և բարձրագոյն կոչման մէջ
առաւելագոյն ուսման և զարգացման պէտքը կը զգան :

Այստեղ թող չըսուի, թէ բարձրագոյն շրջանը ամուսնաւոր եկե-
ղեցականութեան դիմաց փակուած կը լինի, վասն զի երբեք պաշ-
տօնապէս չփակուեցաւ այնպիսիներուն դիմաց որք առանձինն փա-
փակ յայտնեցին . այլ իրօք փակուած մնաց, որովհետեւ բարձրագոյն
զարգացումէ ետք ամուսնաւոր եկեղեցականութեան մտադրու-
թիւնն ինքնին կը դադրէր, և այն աստիճանին հասնողներ չէին
հանդուրժեր եկեղեցականութեան երկրորդական դասակարգին մէջ
մնալ : Միւս կողմէն Գպրել վանքին առաջին շրջանը՝ լիովին կը գո-
հացէր ամուսնաւոր եկեղեցականութենէ փնտուած ուսումը :

Այսօր, եթէ ամուսնաւոր եկեղեցականութեան կամ ինչպէս
կ'ըսենք, քահանայութեան դասակարգը չբարձրանար, ոչ թէ ընտրող-
ներու յանցանքն է, այլ ընտրելիներու դժկամակութիւնը : Լա-
ւագոյն և առաւելագոյն զարգացման տէր եղողներ կը խորշին քա-
հանայութեան ընտրելի ներկայանալէ, վասն զի ազազալի սեղմնալ
նախատեսութիւնը, պաշտօնաւարութեան աշխատալի կողմերը, և
կենցաղական միջոցներու չափաւորութիւնը չեն համապատասխա-
ներ իրենց միտքին և իրենց սիրտին, որչափ ալ առաքինութեամբ
զօրացեալ ըլլան . և առգարէզը կը մնայ անոնց, որք իրենց անբա-
ւականութեան մէջ քահանայութեան պայմաններով կը բաւականա-
նան : Եթէ պատահամբ քահանայութեան մէջ մտած կը գտնենք
ցանցաւ անհատներ, որք առաւելագոյն զարգացման տէր են, փորձով
կը տեսնենք որ յուսախաղի ձև մը ունին, և չեն դտած իրենց ճրգո-
մանց լրացումը, վասն զի ժողովրդական նախապաշարումն ալ չտար
անոնց՝ իրենց արժանեաց համաձայն գնահատումն ու բարձրացումը :

այլ կատչած կը մնայ վեղարի և դաւաղանի ակնապարար երեւոյթիւն : Գպրեվանքը յանձն առած չէ նախապաշարումները բառնալ կամ տիրող սովորութիւնները փոփոխել , այլ ժամանակին պահանջած պէտքը հոգալ , ամուսնաւոր կամ քահանայական եկեղեցականութեան տալ՝ որչափ որ անկէ կը փնտռուի , կուսակրօն կամ վարդապետական եկեղեցականութեան ալ տալ՝ որչափ որ անկէ կը պահանջուի :

Գպրեվանքին պատմութիւնն ընել չէ միտքերնիս . այլ ընդհանուր ակնարկ մը նետել Գպրեվանքին վրայ . բւտտի ծագումն ու զիտումը ցուցնելէ ետք , անցնինք արդիւնքը տեսնել : — Ինչչա՞մբ և ինչպէ՞ս համապատասխանեց Գպրեվանքը զիտուած նպատակին և ակնկալեալ օգուտին : — Տասն և ութ տարիներ բոլորեց ցարդ Գպրեվանքը . ստոնցմէ՛ եօթը իմ , ութը Գուրեան Եղիշէ՛ Եպիսկոպոսի , և երեքը՝ Պիլիճեան Թորգոմ վարդապետի տեսչութեան ներքեւ : Առաջին օրէն մինչև այսօր ընդունուած աշակերտաց թիւը եղած է իրր 200 , որոնցմէ՛ ցարդ չըջանաւարտ եղող և վարդապետական ձեռնադրութիւն ընդունողներ եղած են 28 : Գպրեվանքը 1889ին բացուած լինելով , առաջին անգամ 1895ին առաջին չըջանէն կուսակրօն եկեղեցականութեան մտան Բարզէն , Խոսրով , Զաւէն , Մուշեղ , Սմբատ , Աղան և Մաշթոց : 1896ի երկրորդ չըջանէն եղած են՝ Թաթուլ , Փառէն , Վահրիճ , Թորգոմ , Գնէլ և Մկրտիչ : 1897ի երրորդ չըջանէն՝ միայն Տիրայր : Չորրորդ չըջանէն ոչ ոք : Հինգերորդ չըջանէն՝ 1901ին , Մեսրոպ , Սահակ , Մհերոթան , Երուանդ , Արտաւազդ , Կորիւն , Գեւորդ , Գարեգին , Գրիգորիս և Եղիշէ : Վեցերորդ չըջանէն , 1905ին , Պարզե , Շաւարշ , Շահէ և Պասկ , որ է բովանդակ քսանութը վարդապետներ , և ինը հատ ալ արդէն ձեռնադրեալ սարկաւազներ կան եօթներորդ չըջանէն , որով կուսակրօն եկեղեցականութիւն ընդունածներ կը լինին ընդ ամէնը 37 անձ , որ Գպրեվանք մտած աշակերտներուն թիւին հետ բազդատուելով շատ քիչ է , բայց կ'արդարացնէ Գպրեվանքին ընդունած լայն և անբընձնադատ ընթացքը :

Իսկ ամուսնաւոր եկեղեցականութեան մտած են միայն երեք սաներ . Յարութիւն 'ի Պուքրէշ , Հմայեակ 'ի Մարաշ և Եղնիկ յէտինճիք , իսկ Մկրտիչ վարդապետն ալ քահանայութենէ ետք այրիանալով վեղար առաւ : Քառասուն եկեղեցականներուն զիմաց կը մնան 160 աշխարհական մնացողներ , որոնցմէ՛ 30ը դեռ աշակերտութեան մէջ կը գտնուին . իսկ մնացեալ 130 ներուն կէսն՝ առաջին չըջանը լրացնե-

լով ելլողներ են . և ասոնց մեծագոյն մասը , կամ լաւ եւս գրեթէ ամենքը , ուսուցչութեամբ կ'ըրազին գաւառներու մէջ , որով վար-
դապետութենէ աւելի վարժապետութեան ծառայած կը գտնանք
Դպրեւանքը , իսկ ամուսնաւոր եկեղեցականութեամբ շատ քիչ ,
որովհետեւ նոյն իսկ Դպրեւանքին կէս չըջանն աւարտողներ՝ ամուս-
նաւոր եկեղեցականութիւնն իրենց կացութեան և աստիճանին բա-
ւարար չեն գտներ , և հետեւաբար բնաւ յոյս չեն ներշնչեր՝ թէ կա-
տարեալ չըջան աւարտելէ ետք ամուսնաւոր քահանայութեան
յանձնաւոր պիտի կարենան ըլլալ :

Դպրեւանքի աշակերտներուն ունեցած օգտակարութիւնն ակ-
ներեւ կը յայտնուի այնու , որ գաւառական պաշտօններու յանձնա-
ւոր կամ յարժարաւոր եկեղեցականներ չգտնուելուն պատճառով
անդտօին 1897 տարիէն կեդրոնական Վարչութիւնը պարտաւոր եղաւ
անոնց յանձնել գաւառական պաշտօնները , չնայելով իսկ թէ տա-
կալին նորահասներ են , և եթէ Դպրեւանքիներն չլինէին , գա-
ւառական պաշտօններ ըլլորովին անիմաստ մնայած պիտի ըլլային :
Այսօր ալ (1907 ապրիլ) բազմաթիւ վիճակներու առաջնորդները
կամ տեղապահներն անոնցմէ են , և Խարբերդ , Կարին , Ատանա ,
Շապին , Պիլէճիք , Պայազլու , Ամասիա , Արարկիր , Բլիւ և Մարաշ ,
դպրեւանքիներով կը հովուուին : Իզմիր , Իզմրա և Ատանա օգնական-
ներ կան . Տրապիզոն , Մուշ , Ռոտտսթոյ , Սզերդ , Ճանիկ , Երզնկա ,
Ակն , Գասթամուռի , Պանտրոնա , դպրեւանքի առաջնորդներ ունե-
ցան . Արմաշու Դպրեւանքը , Սոյ դպրանոցը Պատրիարքարանի
կրօնական դիւանը Դպրեւանքիներով կը գառնան , և Մայրաքաղա-
քիս եկեղեցիներէն քանիններուն քարոզիչներն անոնցմէ են , և անոնց-
մէ քարոզիչ մը ունենալու խնդրուածները շարունակ են Պատրիար-
քարանի մէջ : Այս թուարկութիւնը միայն բաւական է հաստատել
թէ 1897 է 1907 տասնամեակին մէջ դպրեւանքիներուն աշխատու-
թեան չափն ալ , դնահատումն ալ գոհունակութեան և գովաբանու-
թեան առարկայ պէտք է լինին :

Գալով անոնց աշխատութեան հանդամանքներուն , այն մեղա-
զրանքներն որ կուտակրօն եկեղեցականաց վրայ սովորաբար կը խօս-
ուին , ինչպէս են գաւառական պաշտօններէ խուսափիլ , անձեղիւր
և շահասէր ուղղութեան հետեւիլ , աստիճանին ստորնութիւն բերող
չաւիղներու մէջ մտորիլ , Աստուծոյ վառք , անոնց վրայ կամ բնաւ
իսկ չխօսուեցան կամ հաղիւ թէ խօսուեցան , և եթէ խօսուեցան ,
չուտով պարզուեցան :

Այսու հանդերձ, երբեք յաւակնութիւն չունեցանք և չունինք Դպրեւանքի սաներուն անսխալական և անմեղանչական բնութիւն ու կարողութիւն փոխանցել, և երբ քրիստոսընտիր տասուերկու առաքեալներէն մէկին և առաքելընտիր եօթը սարկաւագներէն ալ մէկին անկումը կը տեսնանք, զարմանալի պիտի չգտնանք Դպրեւանքացիներէն ալ միոյն կամ միւսին վրայ որ և է անցաւոր կամ յանցաւոր արարք մը :

Ինչ որ աւելի Դպրեւանքցիներուն դէմ գրուեցաւ կամ լսուեցաւ, մասամբ ինքնահաւան մեծամտութեան, և մասամբ ալ լայնամիտ վարդապետութեան զազափարներուն կը պատկանին : Երկու կէտերն ալ աւելի երիտասարդական յաւակնոտութեան քան թէ մոլի ու մոլար ուղղութեան հետեւանք են, որք ածեցուն տարիներու և փորձառու սագնապններու ներքեւ իրենց չափաւորութեան կը վերածուին, և տեսականին մէջ զգացուած առաւելութեան գիտակցութիւնը, գործնականին մէջ տեսնուած նուազութեամբ կը բարեխառնուի շուտով : Բնութեան ընթացքովն իսկ առաջին հասակի խստերախ աշխոյժը վերջին տարիներու խոհուն հանդարտութեան կը փոխուի, և զայդ իւրաքանչիւր անհատ իր անձին փորձովն ալ գիտէ : Դպրեւանքի սաներն ալ պէտք է այժմէն այդ ստուգութեան համոզուին, և եթէ առաւելագոյն ուսման պարժանքը կ'ուզեն արդարացնել, պէտք է առաւելագոյն խոհականութեան արժանիքն ալ կցորդեն : Ասով կ'արդարացնեն իրենց դաստիարակ Հաստատութիւնը, ասով կ'ապահովեն իրենց կոչման արդիւնաւորութիւնը :

Բերա, 16 Ապրիլ 1907



Յ. ԱԼՓԻԱՐ ԻՆՔ ԻՐ ՄԷՁ

* Սիրոյ պարզեւարաշխութեան մէջ՝ է՛ն շատ փնտռուած մրցանակն է համրոյրը, և ամուսնութեան մէջ՝ է՛ն շատ գործածուած բարենիշը :

* Ազլիկներու սիրտը քարետախտակ մըն է որուն վրայ թուանշաններ կը գրեն :

* Տուն փեռայ երթալը գէշ բան ըլլալու չէ, երբ մանուանդ Տիկին զօքանչդ tactը ունեցած է . . . կանուխ կարգուելու :

* Մեր «էսնաֆ» մարդերուն քսակն է թաշկինակը, որ՝ զօղերու ձեռքին մէջ՝ ձայնարգել մըն է :

* Երջանկութիւնը բառ մըն է որ ա՛յնքան նշանակութիւն ունի՝ որքան մարդիկ կան այս կէտր երկրագնդիս վրայ :

* Կնոջ սիրտը — օձին և կրակէն հաքը — ամէնէն վտանգաւոր բանն է երկնից կամարին տակ :

* Հուսարում մը ուր կիտի աղջիկ չիկայ, կը նմանի հացկերոյթի մը՝ ուր գինին մտցուած է :

* Բանաստեղծութիւն մըն է համրոյրը որ գրի չ՛առնուիր. նրուագ մը՝ որ ամէն ցեղերու մէջ կ'երգուի, առանց սակաջն որ և իցէ երաժշտութեան մէջ համաձայն խաղ մը ունենալու :

* Նոր հարս. — ձերմակներու մէջ թախուած աղջիկ որ պակուած պահուն կը յիշէ թէ խօսքը որո՛ւն առած է, կը տեսնէ թէ ձեռքը որո՛ւն կուտայ կոր, և կը փնտռէ թէ սիրտը որո՛ւն պիտի տայ :

* Բարոյականը դրամին կը նմանի : Չունեցողը ունենալ կը ձեւացունէ, և ունեցողը՝ չունենալ :

* Շատ զաւակ ունենալը կանացի անհաւատարմութեան դէմ արգելք մըն է, ըտողներ կան : Խնդիր է գիտնալ թէ անհաւատարմութիւնը — կնիկներուն համար — ծննդաբերութենէն առաջ կ'սկսի թէ հաքը :

* Սէրը տեւական ըլլալու համար փոքրիկ dose ով պէտք է առնուի, առսենիփին պէտ : Չափազանց սէրը ո՛չ միայն տեւական չիկրնար ըլլալ, այլ նոյն խել չ'ապահովեր երկու կողմի երջանկութիւնը :

* Բոլոր ճշմարիտ սէրերը համրոյրով մը կ'սկսին և կը վերջանան . . . Դատաստանական խորհուրդին առջեւ :

ԱՌԱՄ. — Աժան գուրդն է Դուր :



Անտոն Եպ. Անգլիական

1907ին հանգուցեալ Եկարիչ Միաբան Ս. Յուսազէմի:
Գարդայ կենսագրական զիմուրը «Մահագրութեան» բաժինին մէջ. իսկ իր
անսխալ գրութիւնը՝ մեր 1909ի Տարեցոյցով:



ՏԱՐՐՐԻՆԱԿ ՄԻՋԱՏՆԵՐ. — Ֆրանսայի կենդանաբան մը ուսումնասիրած է շատ եղազան ինքնազաշտպանութեան միջոց մը՝ զոր ի դործ կը դնեն ինչ ինչ միջատներ: Եթէ պատենաթեւերու սեռէն «պատուրիկ» մը (timarche) կամ «սակեմադրիկ» մը (chrysomele) բռնել ուղենք, պիտի տեսնանք իր մարմինէն կարմիր փաշազղիչ (corrosif) հեղուկի մը վազելը, որ ստուգիւ թշնամին վանելու սահմանուած է: Այս հեղուկը գեղձի մը սպալիթումը չէ, այլ նոյն իսկ նոյն միջատին արիւնը՝ որ դուրս կ'ելլայ պատեանին ձեղքուածքէն: Նմանօրինակ անձնապաշտպանութեան միջոց մըն ալ սողունի մը վրայ տեսնուած է, «գօգօշամարմին»ը (phyrosome) որ իր աչքերէն արիւն կը ցայտեցունէ՝ երբ զինքը չարչարեն:

ՈՐՈ՞ՆՔ ԿԸ ԼՈՂԱՆ ԵՒ ՈՐՈ՞ՆՔ ՉԵՆ ԼՈՂԱՐ. — Փիղը լաւ լողացող մըն է, և կատուի ընտանիքէն վայրի անասուններ՝ վագր, յովազ, ժակուար եւ այլն չեն վարանիր լիճերէ ու գետերէ անցնելու համար: Ասդին՝ ընտանի փիտիկնիս թաթիկն անգամ ջուրը չուզեր թաթխել, և եթէ ջուրն իյնայ՝ կը խեղդուի:

Ինչ ինչ պղտիկ կենդանիներու սուռքերն այնպէս մը կազմուած են որ ջուրի մէջ եղած ատենին՝ շնչելին շատ դժուար կ'ըլլայ: Ասոնց կարգէն են մկնիկները (սուռի) և ճագարներն որոնք ջրամոյն կ'ըլլան՝ առանց երեսը ողջ ելլալու: Մուկերը (ոս) ընտիր կը լողան:

Ի ծնէ լողալու ընդունակներէն զատ, միւս բոլոր թռչունները կը խուսափին ջուրի մէջ սուզուելէ, մանաւանդ պղտիկները: Նոյն իսկ ջրահաւերու տեսակներ կան որոնք խորն երթալէ ետք դժուարաւ վեր կ'ելլան կամ ընաւ՝ թեւերնին թրջած ըլլալուն համար: Որորը (միւլէթ) ծովասոյզ ըլլալէ և երես ելլալէ վերջ՝ թեւերը կը տարածէ որ չորնան հովէն արեւէն, թռիչ առնելէ առաջ:

Բոլոր սողունները լողացողներ են: Օձերը մեծամասնութեամբ ցամաքի վրայ սողալնուն նման՝ աչքեքան արագ ու դիւրին լիւղ կուտան ջուրին մէջ իրենց մտրակի ձև իրանին. բոժոժաւորներն՝ օրինակի համար՝ շատ աւելի կը լողան հանդարտ ջուրի մէջ, եթէ պաղ չէ: Միացեալ Նահանգներու Ֆլորիտա թերակղզիին լիճերուն մէջ յաճախ տեսնուած են անոնք:

ԿԻՐԱԿԻ. Գ. 20 Յունվար—Քեանուների սանի. Կ. Տ. 2 Փետր., ՀՃԲ. 29 Ձի՛րէմ.:
 ✕ **ՀՅ.** Ա. կիրակի մնունդէն վերջ: **Կ.** **ՀՅ.** Բ. կիրակի ՅոյանուՍենէն վերջ:
ՅՆ.* Ս. Եւթիմիոս ճգնաւոր **ԼՏ.*** Տեառնընդառաջ:

ՅՐԿՈՒՇՐ. Բ. 21 Յունվար—Քեանուների սանի. Կ. Տ. 3 Փետր., ՀՃԲ. 1 Մհրէմ.:
ՀՅ. Ս. Ս. կիրակոս և մայրը՝ Յուզիտոս: և Գորգիոս, Պօղիբատոս ու Գրիգորիս վկա-
 ներ: Հարսնիք: **Կ.** **ՀՅ.** Ս. Ս. կիրակոս և Յուզիտոս: **ՅՆ.** Ս. Կէտիբատոս վկայ:
ԼՏ. Ս. Վլաս եպիսկոպոս **ՏՃ.** Հի՛նրէ՞թի 1326 Թուակսնին Տարեմատը:

ԵՐԵՎՇՐ. Բ. 22 Յունվար—Քեանուների սանի. Կ. Տ. 4 Փետր., ՀՃԲ. 2 Մհրէմ.:
ՀՅ. Ս. Ս. Վահան գողժնացի, Եւզիմէ կոյս, հայրը՝ Փիլիպպոս, մայրը՝ Կողղիս.
 Եղբայրներ՝ Սերգիոս և Ապիտոն, ներքինիներ՝ Յակինթոս և Պրոտոս. **Կ.** **ՀՅ.** Ս.
 Ս. Վահան գողժնացի, Տրիփոն, Գորգիոս, Պօղիբատոս և Գրիգորիս վկաներ: **ՅՆ.**
 Ս. Տիմոթէոս առաքեալ **ԼՏ.** Ս. Անդրէաս եպիսկոպոս Բօքսինի:

ՉՈՐԻՇՐ. Գ. 23 Յունվար—Քեանուների սանի. Կ. Տ. 5 Փետր., ՀՃԲ. 3 Մհրէմ.:
ՀՅ. և **Կ.** **ՀՅ.** Պահր: **ՅՆ.** Ս. Կղեմէս եպիսկոպոս Անկիւբիոյ **ԼՏ.** Ս. Ազաթա
 կոյս վկայուհի:

ՀԻՆԿՇՐ. Գ. 24 Յունվար—Քեանուների սանի: Կ. Տ. 6 Փետր.: ՀՃԲ. 4 Մհրէմ.:
ՀՅ. Ս. Ս. Տրիփոն, Պարամ և Ուտփրիոս ճգնաւորներ: **Կ.** **ՀՅ.** Ս. Ս. Աթանաս
 և Կիւրեղ հայրապետներ: **ՅՆ.** Ս. Քսենիա վկայուհի: **ԼՏ.** Ս. Գործիա կոյս վկա-
 յուհի:

ՈՒՐԱՍԹ. Դ. 25 Յունվար—Քեանուների սանի. Կ. Տ. 7 Փետր.: ՀՃԲ. 5 Մհրէմ.:
ՀՅ. և **Կ.** **ՀՅ.** Պահր: **ՅՆ.** Ս. Գրիգոր ամ. արան **ԼՏ.** Ս. Հոռոմաւրդո կրօնաւոր:

ՇԱՐԱՍԹ. Դ. 26 Յունվար—Քեանուների սանի. Կ. Տ. 8 Փետր., ՀՃԲ. 6 Մհրէմ.:
ՀՅ. Ս. Ս. Աթանաս և Կիւրեղ հայրապետներ: **Կ.** **ՀՅ.** Ս. Ս. Գրիգոր ամ. արան,
 Վլաս եպ. և Ուեսիմոս առաքեալ: **ՅՆ.** Ս. Քսենիոն միայնակեաց **ԼՏ.** Ս.
 Յովհաննէս Մամա կրօնաւոր:

ՅՈՒՇԱՏԵՏՐ

20 Յնվր. Կրբ. [20—346] Կէս օր. 6. 40

21 Յնվր. Բշ. [21—345] Կէս օր. 6. 39

22 Յնվր. Գշ. [22—344] Կէս օր. 6. 37

23 Յնվր. Դշ. [23—343] Կէս օր. 6. 36

24 Յնվր. Եշ. [24—342] Կէս օր. 6. 35

25 Յնվր. Ուր. [25—341] Կէս օր. 6. 33

26 Յնվր. Շր. [26—340] Կէս օր. 6. 32



Յոյն քիմիարարներու (alchimiste) ինչ ինչ գրութեանց ժ. դարու մէջ ձեռագիր ընդօրինակութեան քննութեամբ, ինչպէս նաև Պլինիոսի մէկ քանի հատուածներու հետ բազալտութեամբ՝ Պէտրլօ կրցած է ապացուցանել թէ ֆրանսերէն bronze բառը կ'ածանցի Բրունդուսիոն (այս օրուան Պալինդիլի) քաղաքին անունէն ։

Այս կարծիքը կը հաստատուի Շառլըմաների ժամանակէն՝ լատին բնագիրով մը, ուր նշանակուած է սապէս. — «Պոլինդիլի բազալտութիւն. «կարմիր պղինձ (կիպրացի = [cuivre] մետաղ, պաքքր) 2 մաս, զինկ՝ 1 մաս, անալ՝ 1 մաս», — աւանդական տարազ բազալտութեան՝ զոր 'ի վաղուց ունինք արդէն ։

Ծանօթ է թէ իր պարունակած հարստութիւններով ա՛յնքան հոշակաւոր Կորնթոսի հրդեհին ատեն՝ կիպրացի մետաղէ, ոսկիէ և արծաթէ և պղինձէ արուեստական իրաց ձուլումը կազմած է այնչքեղ պղինձն որ համբաւաւոր եղած է «Կորնթոսի պղինձ» անունով ։

Արդ, եթէ ֆրանսերէն bronze բառը Բրունդուսիոն քաղաքին անունէն է, տարակոյս չիկայ թէ հայերէն պղինձ բառն ալ անկէ է. ուստի իր բո՛ւն նշանակութիւնն է արոյր=Պրակ. բույ (թուճ կամ բիրինձ) ։

Ամիրատօլաթի[*] «Օգուտ բժշկութեան» զիրքին մէկ ձեռագրին մէջ գանուող բառգրքոյկ մը սապէս գրած ունի. «ԱՐՈՒՐ, կայեկ», ուրիշ տեղ մ'ալ՝ «ԱՐՈՒՐ, բրինձ, թուճ». ու դարձեալ՝ «ՇՈՒՍ, դեղին պղինձ» ։ Իսկ զուտ կարմիր պղինձը կամ կիպրացի մետաղը կոչուած է այդ ձեռագիր բառգիրքին մէջ «գորհեմոնեղա, յիստակուած պղինձ», այսինքն յստակուած, զտուած ։

Նոյնպէս, թուրքերէն բիրինձ=պղինձ՝ մի՛ կ'ունոյն քաղաքին՝ Բրունդուսիոնի անունէն է ։

ԻԱԶԻԿ ՈՒՂՈՒՐԻԿԵԱՆ

Իւսկիւսար, 21 Մարտ 1907

[*] Ամիրատօլար. — Ժ. Ն. դարու Հայ բժիշկ Ամասիացի, որ Պոլիս ալ ապրած է։ Հեղինակն է «Բժշկարան» եւ «Անգիսաց Անպէս» անուն երկերուն, ինչպէս եւ «Օգուտ Բժշկութեան» անուն ձեռագիր գործին՝ Արաբեիկէ բարգամաբար։ Նախնեաց ռամբօրէնի պատմութիւնը պատաստող Հ. Ղեւոնդ Յովնանեան, ինչպէս եւ Տոթր. Վանրամ Թորգոմեան իր կենսագրութիւնն ըրած են։

ԱՌԱՄ. — ԳԻՆԵՆ ԴՐՐ ԷԷԻՄՅ ԵՄ, ԷՆԷ ԿՍՊԵՆ ԻՅԷԷ:



* Լեզուն պիտի նստոյ մըն է. եթէ սանձես զայն ու չխտակ քչես՝ քաջ արանց կը հեծնէ վրան. եթէ սանձարձակ ձգես որ ուտասաէ ու խաղայ՝ սատանաներու հեծնելիք կը դառնայ :

* Թշնամանքի և բամբասանքի մէջ տաքնալը՝ սատանայական անկողին է : Բարկութիւնը գէշ շնացողի մը պէս բուռն կիրքով կը շաղաչտի մեզի հետ և սպականիչ խօսքերու ծնունդ կուտայ մեզմով :

* Որպէս զի համարձակ մօտենաս Աստուծոյ, թող մի՛ տար որ զայրոյթը քու ներսք մանայ՝ քեզի միանալու համար, հապա մէկդի զ՛նտէ՛ զայն՝ կատաղած շունի մը պէս :

* Եթէ կ'ուզես բամբասել (Աստուծոյ ազօթած ատենդ), ինքզինքդ բամբասէ. եթէ չարութիւն ընող եղած է քեզի՝ ան մի՛ ըսեր, հապա ինչ որ դուն քեզի բրիր՝ ա՛ն ըսէ :

* « Մեղաւորին բերնին մէջ ազւոր գովեստ չի գտնուիր » . Ծագիկարակ շինելու համար ո՛չ միայն պէտք է որ ծագիկները մաքուր ըլլան, հապա նաև պսակը փնջող ձեռքերը : Անանկ ալ Աստուծոյ ըլլուելիք օրհնէն ընիրու մէջ մինակ երկիւզած խօսքերը չեն բաւեր. առ խօսքերը պատշանեցունող ոգի՛ն ալ պէտք է որ պատկառտ ըլլայ :

* Գարունը հեշտալի է նաւալորներուն համար, և ախորժելի՛ երկրագործներուն համար : Բայց աւելի՛ ախորժելի և հեշտալի է պաշքի ատեն հողեւոր անձերուն գարունը, ճշմարիտ խորհուրդի խաղաղութիւնը :

* Թէ և Ազամ Աստուծոյ պատուէրներն խոտորեցաւ, բայց Ած . բոլոր պատիւներէն չի զրկեց մարդը. պէտքերնուս ծառայող կարիւր անասունները մեզի ի սպաս դրաւ. — Թողուց արջառներն որ արօրը քաշեն, զրասաններն՝ որ մեր տատանքներուն օգնական ըլլան, ոչխարներն՝ որոնցմէ մեր զգեստները հոգանք : Եւ որովհետև Աստուած մարդը պատմելով ըսաւ « Ծակախիղ քրտինքովը հացդ ուտես », առ քրտինքն ու տաժանքն որպէս զի տանելի դառնային՝ շատ մը անասուններ անա մեր աշխատութեան գործակից դրաւ :



ՀՈՂԸ ՄՇԱԿԱԿԱՆ ՏԵՍԱԿԷՏՈՎ : Երկրագործութեան մէջ հողերը երեք դասակարգի կը բաժնուին . կաւային , կրային և աւազային : Կաւային հողերը հոծ և կպչուն կ'ըլլան , շատ ջուր կը ծծեն : Երկրագործութեան համար բայց զգուարութեամբ . նոյնչափ զգուարութեամբ ալ թող կուտան ծծած խոնաութիւններն . յագենալէ ետք ալ ջուր չեն ծծեր , այնպէս որ այնուհետև տեղացած անձրևը գետնին երեսէն կ'երթայ , կամ , — եթէ գետինը տափարակ է , — երեսը կը մնայ : Կաւին ուրիշ մէկ յատկութիւնն ալ այն է որ ջերմութեամբ ծաւալն ընդարձակուելու տեղ՝ կը քաշուի . կը կծկի և մքռաներ (հողի ճեղքուածք) կը կազմուին երեսը , ինքն ալ ուշ փոշիի կը վերածուի : Կաւային հողը կը ճանչցուի՝ քիչ մը բերաննիս առնելով . հոն գտնուող խոնաութեան ծծուելէն՝ իսկոյն լեզունիս կը պորոփի : Կաւային հողերը շատ ուշ կը կորսնցունեն իրենց ծծած խոնաութիւնը՝ հակառակ երեսանց զիւրաւ չորնալնուն :

Կրային հողերն առանց յագենալու առատ ջուր կը ծծեն , որով զիւրաւ կը փոխուին ցիխի՝ զոր անձրևները կը քչեն կը տանին : Ծծուած խոնաութիւնն ալ չուտ կը կորսնցունեն , շատ ու չուտ կը ճեղքատուին ու փոշիի կը վերածուին : Երաշտութեան տոնն խոնաութեանէ զուրկ մնալուն՝ զուտ կրային հողերը անյարմար են մշակութեան . բոյսերը շուտ կը չորնան անոնց մէջ :

Աւազային հողերը շատ թեթեւ , այսինքն հոծութենէ զուրկ կ'ըլլան . զատ զատ հատիկներէ կազմուած ըլլալնուն՝ ջուրը չուտով տակ կ'իջնայ , և եթէ գետնին տակը թափանցական խաւ մը գտնուի՝ ջուրը կը կորսուի կ'երթայ : Ասանկ տեղուանք՝ բոյսերը զուրկ մնալով տամկութենէ , սնունդ չեն կրնար գտնել : Կրային հողերու մէջ հոծութեան բացակայութեան պատճառաւ , առնակեր ու ծաւեր յաճախ չեն կրնար կանգուն մնալ ու կը տասլային : Երկրագործութեան յարմար լաւ դեպիս մը պէտք է որ այս երեք տեսակներէն հաւասար չափով խառնուրդ մ'ըլլայ , որ կը կոչուի «արգուանդ երկիր» (terre franche) : Կ . Պոլիսի նեղուցին երկու կողմի հողերը նախնական դեպիներու կազմութեան կը վերաբերին , այսինքն տեւոնեան (dévonien) են . շատ տեղ՝ ենթագետինը (sous-sol) , այսինքն երեսի հողին յատակը՝ կաւային հերձաքար է (schiste argileux) , հետեւաբար կաւային է հողը և ունի այդ տեսակ հողերու բոլոր յատկութիւններն ու թերութիւնները : Բայց որովհետև գարերու ընթացքին՝ բուսական բուսահող (humus) կազմուած է երեսը՝ տերեւներու և այլ բուսական բեկորներու փտութեամբ , ուստի և երկրագործութեան համար բուսական ազնուացած է : Մաքրիգեղինը և Տէրքոսի յիճին չրջականերունը չորրորդական կազմութեան կը վերաբերին և կրակաւ (marne) կը պարունակեն , ինչ որ երկրագործութեան առկա լի յարմար է :

- Ծերուրիւն. — Կիրքերու հոգեհանգիստը՝ էրիկմարդոց համար :
 Պատառարիւն. — Կանաչի գործադուլ :
 Առաջինութիւն. — Լուսերուն մէջը պառկի . . . :
 Գերեզման. — Վերջին արարուածը Կեանքի թատրոնին :
 Մարմին. — Մշակական յարմար գետին՝ բժիշկներու համար :
 Աղուես. — Իր բնոյթն ինչ ինչ մարդերու կառկելով՝ աշխարհ-
 քէն քաշուող կենդանի մը :
 Ամուրիութիւն. — Սիրոյ մեծ-պահքը՝ հիմայ կրօնքի մեծ-պահ-
 քին պէս պահուած . . . :
 Նշանում. — Խթումը՝ Սիրոյ զատիկին :
 Պատի. — Ամուրիութեան մահերգը՝ զուարթ խաղերով :
 Զատի. — Ամուրիութեան հողակոյտին վրայ բուսնող ծաղիկ մը :
 Մեղրարարիւն. — Ամուսնութիւն - Օրէնային « Ուվէոթիւն » ,
 արագ սեխեշխիսօ ով մը :
 Ապստարգան. — Ամուսնութեան մահերգը « Փօս-նօթ » երով :
 Ագան. — Խեղճ ծարաւի , ձեռքը ջուր ունի , բերան չունի :
 Ագանի մահ. — Վերջնական բաժանում Կեանքէ , և սկիզբ . . .
 ոսկիներու բաժանումին :
 Յոյս. — Սիրտին յաւիտենական սերմնացանը :
 Երագ. — Առանց դերասանի թատերաստղ՝ անկողնի թատերա-
 բեմին , որուն « ձգի վարագոյրն » է Զարթումը :
 Յամառարիւն. — Մածունին սև ըսել և ամուսին ձերմակ :
 Հաւակերպութիւն. — Մածուն ամուսի իրար խառնել և ըսել գորշ :
 Մրանտարիւն. — Միտքին հրախաղութիւնը :
 Մոռացում. — Վաղանցիկ սուգ՝ բոլոր տարփաւորներուն համար :
 Անհաւատարիւն. — Խարդախ անանկութիւնը Հոգին :

ԼԻՐԱԿԻ. -չ. **27** Յունվար—Քեանուների սանի, Ն. Տ. 9 Փետր., ՀՃԲ. 7 Մճրբէմ.:
 ❖ **ՀՅ.** Բ. կիրակի Յնունդէն վերջ: **Կ.** **ՀՅ.** Գ. կիրակի ՅայանուՍենէն վերջ:
ՅՆ.* Ս. Յովհանն Ոսկերեքանի նշխարներուն փոխադրութիւնը, **ԼՏ.** Ս. Կիրեղ
 հայրապետ Աղեքսանդրոյ:

ԵՐԿՈՒՇԲ. -չ. **28** Յունվար—Քեանուների սանի, Ն. Տ. 10 Փետր., ՀՃԲ. 8 Մճրբէմ.:
ՀՅ. Ս. Ս. Եւզինէտ, Մակարիոս, Վաղերիոս, Կանդիտոս և Ակիւղոս վկաներ,
 Հարսնիք, **Կ.** **ՀՅ.** Ս. Ս. Սեղբեստրոս հայրապետ, Կոստանդիանոս Թագաւոր և
 Մարումա եպիսկոպոս **ՅՆ.** Ս. Եփրեմ խուրի, **ԼՏ.** Ս. Սկրլաստիկէ կոյս:

ԵՐԵՎՇԲ. քչ. **29** Յունվար—Քեանուների սանի, Ն. Տ. 11 Փետր., ՀՃԲ. 9 Մճրբէմ.:
ՀՅ. Ս Ս. Անդրէաս զօրավար ու իր բանակը, և Կայինիկոս ու Դիոմեղէս վկա-
 ներ, **Կ.** **ՀՅ.** Եւզինէ կոյս, հայրը՝ Փիլիպոս. մայրը՝ Կղողիս, եղբայրները՝
 Սերգիոս և Ապիտոն, երկու ներքինիներ, և Եւզինէտ, Մակարիոս, Վաղերիոս,
 Կանդիտոս և Ակիւղոս վկաներ: **ՅՆ.** Ս. Իգնատիոս հայրապետ: **ԼՏ.** Մարկի-
 անոս եպիսկոպոս:

ՉՈՐԻՇԲ. քչ. **30** Յունվար—Քեանուների սանի, Ն. Տ. 12 Փետր., ՀՃԲ. 10 Մճրբէմ.:
ՀՅ. և **Կ.** **ՀՅ.** Պատրի. **ՅՆ.** Ս. Ս. Բարսեղ Կեսարացի, Դրիգոր ած.արան և Յովհանն
 Ոսկերեքան հայրապետներ: **ԼՏ.** Ս. Եւլալիէ կոյս վկայուհի: **ՏՃ.** Աշուրէ կիւնիւ:

ՀԻՆԳՇԲ. քչ. **31** Յունվար—Քեանուների սանի, Ն. Տ. 13 Փետր., ՀՃԲ. 11 Մճրբէմ.:
ՀՅ. Ս.Ս. Աղբիանոս ու կիւն՝ Անատոլա. Թէոդորոս և Ելեւթիւրոս վկաներ:
Կ. **ՀՅ.** Ս Ս. Կուսնեկիոս հարիւրապետ, Շմուսն տեսուներդայր, Պօղիկարպոս
 եպիսկոպոս և Իրեն ընկեր վկաներ: **ՅՆ.** Ս Ս. Կիւրոս և Յովհաննէս անար-
 ծածներ: **ԼՏ.** Ս. Պօղիբոսոս վկայ:

ՈՒՐԱԹ. քչ. **1** Փետրվար—Շուպած: Ն. Տ. 14 Փետր., ՀՃԲ. 12 Մուհարբէմ:
ՀՅ. և **Կ.** **ՀՅ.** Պատրի: **ՅՆ.** Ս. Տրիփոն վկայ: **ԼՏ.** Ս. Վաղնախիանոս վկայ:

ՇԱԲԱԹ. քչ. **2** Փետրվար—Շուպած: Ն. Տ. 15 Փետր., ՀՃԲ. 13 Մուհարբէմ:
ՀՅ. Ս. Դրիգոր ած.արան **Կ.** **ՀՅ.** և **ՅՆ.*** Տեսուներդատաջ, **ԼՏ.** Ս Ս. Փաւս-
 տիանոս և Յովիղոս վկաներ:

ՅՈՒՇԱՏԵՏՐ

27 Յնվր. Կիր. [27—339] Կէս օր. 6. 30

28 Յնվր. Ռշ. [28—338] Կէս օր. 6. 29

29 Յնվր. Գշ. [29—337] Կէս օր. 6. 27

30 Յնվր. Դշ. [30—336] Կէս օր. 6. 26

31 Յնվր. Եշ. [31—335] Կէս օր. 6. 24

1 Փետր. Ուր. [32—334] Կէս օր. 6. 23

2 Փետր. Շբ. [33—333] Կէս օր. 6. 21

Այս օրը հազիւ երկու ժամ անցեր էր, բարակ անձերն մը, կաթիլ կաթիլ, արցունքի պէս խոր՝ կ'իջներ մռայլ երկինքէն վար, ուր քանի մը ցանցառ անպէր կը հեւային, կարծես խրատու էտել վազել յոգնած :

Փողոցին մայրերը քրտուէր էին արդէն, հովանոցները բացուէր, բզակները հանգրիմուէր, և անցորդներուն մէկ մասը կ'առնէրու կամ հանրակառնէրու մէջ կը նետուէր շատապա :

Քաղաքի փողոցին անկիւնէն դեռափ կին մը դարձաւ : Հովանոց չուներ, և ժապատէններով ու շորերով բռնամտորում շրջազգեստը, կասարելապէս անյարմար օդին, ժամուն և սալայտասակին ցեխերուն, աղփափ պնաստիւրութեան նման հիգ մը կը մասնէր : Սակայն ինք վէտութեամբ կը քաշէր կամաց կամաց, կարծես չնւարեղով անձերը, զննելով տուներուն քիւները, ջանալով պսոյթի ելլող կնոջ մը երեւոյթը զայ ինքզինքին :

Վերջապէս տան մը հով կանգ առաւ, որուն բաց դրան առջին կողմ մը կը կենար : Մարմարէ սանդուխին աստիճաններէն վեր ելաւ սիգանեմ, և հոն կեցող ծառային հարցուց. — Տիկին Բենեգեանը տ'ունն է :

Մտռան վարձ հայտարարով մը զննեց զայն ոտքէն մինչեւ գլուխը, յետոյ ցրտութեամբ պատասխանեց :

— Կառքը կը սպասէ կոր, Տիկինը դուրս պիտի ելլէ :

— Հոգ չէ, յարեց դեռափ կինը, ձախ յօնքին ծայրը վեր բարձրացնելով, ինչ որ արհամարհանքի նշան մըն էր իր հով. իմաց տուէք իրեն քէ Տիկին Նարինեան զինքը տեսնելու եկեր է :

— Քառքերնիդ, ըսաւ ծառան լիրք յարմարով մը :

Տիկինը հարք չուներ, պահ մը կեցաւ շաքարած, յետոյ .

— Քառքի պէտք չկայ, ըսաւ, ամուսն տուէք, բաւական է :

Քանի մը վայրկեան էտք ծառան հիւրաստանէն ներս կը մտնէր զինքը անցնելով ներքին դռնակամարէ մը, բնորոշ անգլապատէ մը, ծաղկանոց—նրբանոց մը սրահակներով, օրոցներով, նկարներով զարդարում, որոնց պերճանքը յաւակնեց ցուցադրութիւն մը երեւցաւ Տիկին Նարինեանի, քան պէտք մը :

Ինք կուգար Տիկին Զարման Բենեգեանին, իր նախկին դպրոցական բնակարանին, գործ մը խնդրելու իր ամուսնին համար որ վեց ամիսէ ի վեր պարտաւ կը պստէր :

Հինգ տարի, իր ամուսնանալէն էտք, Քուրթիոյ մէկ հետաւոր գաւառը՝ համարակալի պատճով վարած էր Հանրային Պարտոց Վարչութեան մէջ, և սակայն վերջերս տեղւոյն մասնահիւրը ջնջուած ըլլալով, ստիպուէր էին Պոլիս դառնալ, և հոս կը սպասէր նոր պատճովի մը հետամուտ : Բենեգեան ալ պատճովեայ էր նոյն վարչութեան մէջ, բայց շատ բարձր պատճովեայ մը. ուրեմն արտօնակ չէր որ Տիկին Նարինեան իր նախորդ բնակարանին ղիմէր անոր աշակցութիւնը խնդրելու համար :

Սակայն նկատուողութեան առնելով Տիկին Նարինեանի խոխոս նկարագիրը, քառանկի, գրեթէ դժնդակ ձեւանակ մըն էր ասիկա. ինք որ զպրոցին մէջ միշտ իրմէ վար տեսնելու վարձում էր Զարմանը, հիմակ զայն իրմէ վեր դաւանելու հարկին մէջ կը զտնուէր, և այդ մարմարէ արձաններուն, այդ պրիսմակներով վառ



Հ. Լ. Չ. ԱՍՍՏՈՒՐ
Պրագե - Հեղինակ Ամպը



ի վառ ջանակալներուն, մինչեւ ձեռներ բարձրացող հայրենեան, նկարագեցնող հովարդեղներուն մէջեղը՝ իր անձն բան մը կը կարսնցնէր կարծես, քաջութիւնը հետզհետէ կը պակսէր :

Չէր կրնար մտնել թէ ժամանակաւ միտ Չարմանն էր որ իր օլնութեան կը դիմէր դասերուն համար, բայց այդ ոսկեծոց վարագոյրներ, անգլիական ժանտակէ այդ մամրիկ հովիւները տեսնել մը խորհրդաւոր անհրաժեշտ կը յօրինէին իր եւ այդ վարքով սան տրուելուն միջեւ որ կ'ուշանար, որ չէր վազեր իր գիրկը նետուելու առաջուան պէս, ինչպէս յուսացած էր :

Իր արհիւն մէջ բարձրացող վախճանի կը սկսէր ուրիշ երեսոյք մը ստանալ, վախճան աւելի բան մը կ'ըլլար անիկա, արտաքին մը գրեթէ քաջամ, շատ անուրուշտ անտարակոյս, որ սակայն դաստիարակեան կարիք մը կը ստուէր հեն որ ծնած էր, նախապատրաստելով իր միտքը ամէն բան զեւ մեկնելու :

Տիկին Նարինեան յանկարծ զլուխը վեր առաւ, դրան մը վարագոյրին յուշիկ երեւոյթ լսելով, եւ դէմ առ դէմ գտնուեցաւ իր ընկերուհիին հետ, որ քովքնակ սենեակէ մը դուրս կ'ելլէր :

— Բարի՛ եկար, Վարդուկա, զոչեց Տիկին Բենեգեան, ձեռքեր երկարելով, եւ համբուրեցին զիրար :

Բայց ի՞նչ համբոյր. քողին սակէն, շարունակեալ ծայրովը, երեսին փոշին քաշելու վախով տուած խուսափուկ համբոյր մը : Գլխակը զլուխն էր արդէն տան սիկնոջ, ձեռնոցները, հովանոցը, քաղաքականակը ձեռքը, ու բոլոր սիրայիլ բառերը զորս կ'արտասանէր, չէին կրնար ջրուել ցուրտ սպառնալիքներ այդ արդարագրի որ կարծես կ'ըսէր իրեն. « Նայէ՛ որ շատ մեկնիս, կը տեսնես որ դուրս պիտի ելլեմ : »

— Աս ո՞ր էիր, սիրելի Վարդուկա, ինձի նամակ մը չգրեցիր, ի՞նչ բիրտ այտայի ասեմ, երջանի՞ք ես, զառակ ունի՞ս. ես մտնչ մը եւ աղջիկ մը ունիմ : Քուկիներդ բանի՞ հաս եմ, մամչն են թէ աղջիկ :

— Ես երեք մանչ ունիմ :

— Քանի՞ տարու :

— Հինգ, երեք եւ մէկ տարեկան :

— Ե՞րբ Պոլիս եկաք, Բերա՞ էք :

— Վեց ամիսէ ի վեր Պոլիս կը գտնուիմ եւ կը վախճանիմ հոս հաստատուիլ :

— Ո՞ն, շատ ուրախ եմ : Ա՛յ մեր սիւններուն, Քայլ օ թոքներուն պիտի գաս անուրուշտ. բայց նախ պէտք է որ ամուսինդ ներկայացնես մեզի : Կեցի՛ր, ամէն ուրբաք զիբեր ընդունելութիւն ունիմ մեք. ամուսինդ կ'առնես կուգաս : Բայց նիմար կը տեսնեմ կոր երգի. ո՞ր են վարդի պէս այտերդ :

Տիկին Նարինեան այս խօսքերու տարապիտ հանդէպ լուռ կը կենար : Բողոքատրուներ, դատարներ, եղբակցատրուներ արագ արագ իրարու կը յաջորդէին մտքին մէջ :

— Բայց ինչո՞ւ չես նստիր, Վարդուկա. խելքա ո՞ր էր, այնչափ ուրախ եմ երբ տեսնելու որ արքա մը անգամ չտուի երգի :

— Ոչ, դուս դուրս ելլելու պատրաստուած ես, եւ ալ պիտի մեկնիմ. կարելու ժամագրութիւն մը ունիմ :

— Թայեռնոյդ հետ անուրուշտ, ըսաւ Չարման նայումով մը նետելով անոր գլխին վրայ :

ԿԻՐԱՅԱԿՆ. Դ: 3 փետրվար—Շուգրամ: Կ. Տ. 16 փետր.: ՀՀՐ. 14 Մուհարրէմ:
 Ճ. ՀՅ. Գ. Կիրակի Են. ւնդէն վերջ: Առաջաւորաց բարկենդան: Կ. ՀՅ. Առա-
 ջաւորաց բարկենդան: ՅՆ. Ս. Սիմէոն ծերունի, և «Դրիսօ՛տրոն», որ է տաս-
 նըմկ կիրակիներու սկիզբ: ԼՏ. Ս. Յուլիանէ կոյ վրայունի. և Եօժանանն.
 բոլորց կիրակի որ է տար կիրակիներու սկիզբ:

ՄԻՆՈՒՇԲ. -յ: 4 փետրվար—Շուգրամ: Կ. Տ. 17 փետր.: ՀՀՐ. 15 Մուհարրէմ:
 ՀՅ. Կ. ՀՅ. Առաջաւորաց պահքին Ա. օրը: ՅՆ. Ս. Իսիդորու միայնակեաց:
 Ուոյր մէլ շարամ ԼՏ. Ս. Սիբուանն տաւրեպ:

ՄԻՆՔՇԻ. -յ: 5 փետրվար—Շուգրամ: Կ. Տ. 18 փետր.: ՀՀՐ. 16 Մուհարրէմ:
 ՀՅ. և Կ. ՀՅ. Առաջաւորաց պահքին Բ. օրը: ՅՆ. Ս. Ազանա վկայունի: ԼՏ.
 Ս. Փարիանոս հայր սպետ:

ՉՈՐՔՇԻ. Բ: 6 փետրվար—Շուգրամ: Կ. Տ. 19 փետր.: ՀՀՐ. 17 Մուհարրէմ:
 ՀՅ. և Կ. ՀՅ. Առաջաւորաց պահքին Գ. օրը: ՅՆ. Ս. Փարիս հայր սպետ:
 ԼՏ. Ս. Դուկիանոս վկայ:

ՀԻՆՔՇԻ. Բ: 7 փետրվար—Շուգրամ: Կ. Տ. 20 փետրվար: ՀՀՐ. 18 Մուհարրէմ:
 ՀՅ. և Կ. ՀՅ. Առաջաւորաց պահքին Դ. օրը: ՅՆ. Ս. Պարթենիոս եպիսկո-
 պոս ԼՏ. Ս. Ելեւթիւրոս վկայ: ՏՃ. Արեւին տարուծեան օդն իջնելու օրը: Պիւր-
 ծի Հուծ (ձուկ):

ՈՒՐԱՅԱԿՆ. Կ: 8 փետրվար—Շուգրամ: Կ. Տ. 21 փետրվար: ՀՀՐ. 19 Մուհարրէմ:
 ՀՅ. և Կ. ՀՅ. Առաջաւորաց պահքին Ե. օրը: Ս. Յովնան մարգարէին նիւուէ-
 աջիներուն երթալու յիշատակը: ՅՆ. Երկու Ս. Թէոդորոս վկաներ: ԼՏ. Ս.
 Սեւերիանոս եպիսկոպոս:

ՇԱԲԱԿՆ. Կ: 9 փետրվար—Շուգրամ: Կ. Տ. 22 փետրվար: ՀՀՐ. 20 Մուհարրէմ:
 ՀՅ. և Կ. ՀՅ. Ս. Սարգիս զօրավար, որդին՝ Մարտիրոս, և Տասնչորս զինուոր
 վկաներ: ՅՆ. Ս. Նեկեփորոս վկայ: ԼՏ. Ս. Պետրոսի Արտիօբայ ամուսին տօնը:

ՅՈՒՇԱՏԵՏՐ

3 փետր. Կիր. [34—332] կէս օր. 6. 20.....

4 փետր. Բշ. [35—331] կէս օր. 6. 19.....

5 փետր. Գշ. [36—330] կէս օր. 6. 18.....

6 փետր. Դշ. [37—329] կէս օր. 6. 17.....

7 փետր. Եշ. [38—328] կէս օր. 6. 15.....

8 փետր. Ուր. [39—327] կէս օր. 6. 14.....

9 փետր. Շր. [40—326] կէս օր. 6. 13.....

Տիկին Նարինեան շիկնեցաւ, կարծեց թէ իր արզուզարդին անպատշաճութեան ակնարկութիւն կ'ընէ, ու յօնին ծայր վեր առնելով .

— Այ, պատասխանեց, Քոնիայի աւստրիական հիւպատոսին շիկնոջը թէյի պիտի երթամ :

— Բայց դեռ կանուխ է, ազուռս, ժամը երեքին թէյի կ'երթուի : Ես ալ *kukjud* մը ունիմ, բայց դեռ ժամանակ կայ :

— Չեմ ուզեր որ գործէդ մնաս, սիրելիս, արդէն ես ս-լ չեմ կրնար կենալ. հոսկէ անցած միշտոյիս անգամ մը տեսնել ուզեցի զքեզ գործի մը համար, յուսալով որ կրնաս օգտակար ըլլալ ինձի :

— Շատ զոն ըրիր զիս, բտէ նայինք, գործդ ի՞նչ է, երջանիկ պիտի ըլլամ եթէ կարենամ բան մը ընել քեզի :

Եւ Տիկին Նարինեան, միշտ մէկ յօնին ծայր վեր, նառ մը արտասանելու պէս, հասիկ հասիկ, զեղեցիկ նախազատութիւններով բացարեց թէ վեց ամիսէ ի վեր շատ բարձր պատշոններ կ'առաջարկէին իր ամուսնոյն գաւառներու մէջ, բայց ին՛ր բոլորն ալ մերժել կուտար, որովհետեւ կ'ուզեր Պոլիս հաստատուիլ, եւ այդ փափաքին գործադրութիւնը փութացնելու համար եկեր էր իր բարեկամուհւոյն ազդեցութիւնը փորձելու :

Տիկին Բենեդեան առանց ուշադրութիւն ընելու այս առաջարկին գոռոզ ձեւին եւ մեծ մեծ բառերուն, յօժարութեամբ խոստացաւ ամէն ջանք ի գործ դնել յաջողութիւն մը ձեռք բերելու համար :

— Ուրեմն կանխաւ շնորհակալութիւններս եւ մնաս բարով :

— Բայց դեռ կրնայիր նստիլ. ասանկ *kerfker* պէտք չէ որ ընես հին բարեկամուհիիդ :

— Ուրիշ անգամ տեսնուիմք. հաւատա՛ որ ժամանակ չունիմ, հիւպատոսին կիներ ինձի կը սպասէ :

Դիմացէ դիմաց կեցեր էին խոճոր հայիի մը առջեւ . Վարդուկ իրենց դէմքերը եզրէ եզրէ տեսաւ : Ճիշդ կեանքներուն պէս . ին՛ք՝ տղոյն, նիսար, աչքերը մարտ, գրեթէ քարամետու մօտ կին մը դարձեր էր, մինչ իր ընկերուհին առոյց, կայտառ ու վարդագեղ, հազիւ տասն տարեկան կ'երեւար :

Այս հակապայտերը ուժգին հարուած մը եղաւ :

— Մնա՛ս բարով :

— *Օ որ փուտտ*, Վարդուկս, զիս չմոռնա՛ս :

Եւ Տիկին Բենեդեան մինչեւ սանդուխին զլուխը ընկերացաւ իր բարեկամուհւոյն, պատիւ մը զոր ուրիշներու չէր ըներ : Յետոյ հայիիին առջեւ՝ զլսարկը հեզեց, զնդատեղով մը հաստատեց ֆողիկը, փոքրիկ ոսկի ապիւշով մը կոնկեց ձեռնոցները, ու ին՛ն ալ մեկնեցաւ անկեղծօրէն զոն՝ իր հին ընկերուհին տեսնելուն, եւ ուրախ անոր ծառայութիւն մը մատուցանելու առիթ մը ունենալուն :

Բ .

Վարդուկ սանդուխին վրայ հանդիպեցաւ երկու անուշիկ պուպրիկներու, որոնք քալիւններով ու ժանեակներով հագուած՝ վար կ'իջնէին անգլիներէն խօսելով իրենց վարժուհիին հետ, եւ իր խեղճ տղայն աչքին առջին եկան կարկուտած վերարկուներով, ծակոված կօշիկներով, ու առանց կանգ առնելու, արագ արագ իջնելով աստիճաններէն, ին՛քիմքը փողոցին մէջ զտաւ :

Սիրք սեղմուած էր կարծես երկաթէ գօտիով մը, աչերը լեցուած, գուխը յառնուածիոք մտածումներով ծանրաբեռնուած, իբր քէ քար մը ննէր գանկին վրայ:

Անձրելը բարակ բարակ կը սեղար միտ յուսահատեցուցիչ դանդաղութեամբ մը: Գեռափ կիներ պահ մը կանգ առաւ եւ մտածեց քէ ո՛ր պիտի երթար եւ ի՞նչ պիտի ընէր, յետոյ Շիբլի փողոցը մտաւ եւ պատշգամներու սակէն սկսաւ արտնոթ փայլել:

Մտին մէջ կուզային հիմակ, անագին համեմատութիւններով կը ցցուէին պահ մը առաջուան պատահած ամէնէն ջնջին միջադէպները. ծառային կոպտութիւնը, զինքը հիւրատարան սանէլէ առաջ, նրբանցներուն մէջ պատշգամները, գոր պարզապէս սանտիւրանոյն մէկ շտապութիւնը կը նկատէր ցուցումներու համար իրեն սանք պերճանքը, յետոյ սրանին մէջ զինքը երկար ասեն սպասցնելը, զլիարկով ու հովանոցով զինքը ընդունելը, զգեստին նկատմամբ ըրած ակնարկութիւնը, եւ ոտքի վրայ զինքը համբերը:

Պարզապէս զինքը նուաստացնելու եւ քեամամանելու համար յերիւրուած ձեւակերպութիւններէ ինն աստնէ: Եւ սակայն ինչո՞ւ Զարման այդ ընդունելութիւնը ըրէր էր իրեն: Միթէ իր բարձր դիրքը, իր ներքալան նոխարիւնը բաւական չէին գահացում սալու իր սնափառութեան, ինչո՞ւ ուզէր էր իր խեղճ սիրքը վիրաւորել:

Անձրելը կը սկսէր հիմակ աւելի սենդոս քափով մը սեղալ: Տիկին Դարին-Էանի բարակ զգեստին սակէն քջուած ուտերն ի վար ցուրտի զգայութիւն մը, սարսուռ մը կ'իջնէր, ապաստանելու սեղ մը, սիրք մէկուն քանալու անհրաժեշտ պէտք մը կը զգար, ու կը փնտռէր մտքին մէջ եւ շուրջը նեցուկ մը որուն կարենար յենուլ վայրիկ մը՝ չիցնալու համար. բայց ոչ ոք էւ ոչինչ. երկինքը զոց էր, օրջակայ տունները անմանօք, փողոցը ամայի. եւ ստիպուեցաւ անձրելին սակ, կողմնակի փողոցներէն փայլել մինչեւ Ֆերիսիէի ծայրը ուր սենեակ մը վարձած էին:

Երբ տուն հասաւ, զգեստին վրայէն չուրք կը հոսէր, զլիարկը լնցնէր էր. ու սղու մը պէս նստեցաւ լացաւ միտքը բերելով կրած նուաստացումները, գորս կը խոտորցնէր անձրելին սակ կրած ժրգիքական շարշարանք: Յետոյ խուլ ասեղութիւն մը արքնցաւ իր մէջ, վիրաւորուած անձ-սիրութեան ապիկար արմատութիւնը, վրէժ-խնդրութեան փափաք մը քեամամտի մը դէմ գոր չէր կրնար որակել, որովհետեւ մէկ կողմէն դատողութեան ձայնը կը զգացնէր իրեն քէ լուրջ պատճառ մը չունէր Զարմանին դէմ վիրաւորուելու, քանի որ զինքը ընդունէր՝ եւ իր խնդիրքը չէր մերժէր, բայց անոր պերճանքը իր կարօտութեան հանդէպ, անոր զուարթութիւնը իր սրտութեան հանդէպ, անոր պատշգամողական դիրքը իր աղետող դիրքին հանդէպ, անոր առողջ ու պայծառ դէմքը իր վատուած եւ դալկահար կերպարանքին հանդէպ, վերջապէս անոր վայելքներով յոփացած զգար իր զրկանքներով տառապած գաւակներուն հանդէպ կ'ըմբոստացնէին իր անբարտաւան նկարագիրը որ առաջին անգամ ըլլալով խոնարհելու կը զիջանէր, եւ այդ ստիպողական զիջումը յանցանք մը կը նկատէր Զարմանին, իբր քէ ան ըլլար պատճառը իր բոլոր դրժ-քախտութեանց:

Սակայն բոլոր այս արտաբերող սրտութեանց, հոգիին այս մտայն փոքորիկներուն մէջ ակնկալութիւն մը կը նառագայթէր, Զարմանին խոսուումը, որուն կը կառչէր քուտա կիներ եւ կը սպասէր:

Ու սպասեց օր մը, երկու օր, շաբաթ մը, յետոյ շաբաթներ, ամիսներ, ու տեսնելով որ ձայն ձուն չկար, սպասումի օրերը տարիներու պէս երկար չէին հասներ, ու ձմեռը կը յառաջանար, ու սղոցը զգեստները ա՛լ աւելի կը մաւշէին, ու վանառիկներուն հաւիւները հետզհետէ կը բարդուէին եւ լուր մը չէր գար Զարմանէն,

ա՛լ համբերութիւնը հասաւ, կարծեց թէ զինքը ծաղրեր էր, եւ սոս խոսում մը ըբեր էր զինքը գլխէն նետելու համար: Ու կասողեցաւ ինքզինքին դէմ իր գաղտնիք անօր յայնմ ըլլալուն, անուէիլ ասելութիւն մը, վրէժխնդրութեան բուռն կրակ մը սկսաւ զինքը այրել: զլուխը դարձաւ, եւ ւրտի պէտք մը, սփոփանք մը եղաւ իրեն բամբասել Զարմանը, խօսիլ, ամբաստանել, զրպարտել, սոսք իրա ին խառնել, ինչպէս կ'ընեն ւրտի դաստիարակութենէ զուրկ անձեր որոնք մեծ համարում ունին իրենց վրայ եւ կը տեսնեն թէ ուրիշներ իրենցմէ ասելի բախտաւոր եղած են կեանքի մէջ: Ա՛լ ուր որ երթար, ուր որ նստեր էլլեր, միշտ զարմանն էր իր խօսակցութեան նիւթը, անոր անցեալը զոր կ'ազարտէր անիրաւ զրպարտութիւններով, ներկան զոր կը մեկնէր չար հննութիւններով, եւ անարժան բամբասանքներ զնետով անօր բերնին ասօր անօր պատուոյն նկատմամբ:

Ամէն անգամ որ Զարմանին խօսքը բացուէր, ինքզինքնէն կ'ելլէր, կը բորբոքէր, կը փրփրար, դառնութեան ազդիւր մըն էր որ կը յորդէր, կը պոռկար, կը ժայթփէր: Բնաւ չէր հաշուեր ու չէր մտածեր թէ ուր կ'երթային իր անասնձ լեզուին բարբանջանքները, որոնք մտեցին ծովու մը ջուրերուն պէս կը տարածուէին հետզհետէ իրենց շրջանակը մեծցնելով, եւ հասնելով մինչեւ Զարմանին, որ նախ չուզեց հաւատալ, Բանի որ ինք Վարդուկին համար ւրտանց աշխատէր՝ եւ զործը յաջողութեան համարուն մէջ դրեր էր: Յետոյ ապեցցաւ մնաց իրեն վերադարձած չարխօսութիւնները լսելով մահուանը: Մտածեց երթալ բացատրութիւն խնդրել Վարդուկէն, խայտառակել զինքը օրեան հանելով իր սուտերը, բայց իր դիւրեմն եւ արժանապատուութեան գիտակցութիւնը զինքը արգիլեց: Գիտցաւ պաշտպանել իր պատիւը, բայց չկրցաւ իր բարոյական բարձրութիւնը պահել, եւ խնդրեց ամուսինէն որ ա՛լ չզբաղի Նարինեանի գործովը:

Այսպէս, նէր աղմակ ընճանքիք, իր մէկ բառովը, ամբողջ ձմեռը տուայտեցաւ յետին չճարութեան եւ զրկանքներու դատապարտում:

Գ.

Խորումին իրիկունը, Տիկին Բենեդեան վայելչաւոր արդուզարդով մը Ս. Յարութիւն կեղեցիկն զացեր էր, երկու աղուորիկ գաւակներն ալ քալիւններով, ժանտակներով հագուած շուրճակով՝ պահ մը ետք իրենց վարժուհիին հետ կեանք փոխելու ժամկոչները անմիջապէս մասնաւոր արքուններ վազցուցին իրենց, մինչ մեծ բազմութիւն մը ռֆի վրայ կը կենար: Իր մտտերը ուշադրութիւնը գրաւեց անարհիւ մէջ. շատ մը զուլսներ ետեւին դարձան. շատ մը բարեւներ փոխանակուեցան. յետոյ ամենք իրենց սեռապարտութիւնը վերստացան. միայն երկու այլեր, երկու բոցեղէն նետերու պէս սեւեւած մնացին իր վրայ: Վարդուկն էր որ հեռուէն կը դիտէր զինքը ասելութեան բուռն արտայայտութեամբ մը: Տիկին Բենեդեան տեսաւ զայն եւ արհամարհան ձեւով մը զլուխը դարձուց առանց բարեւելու:

Յետոյ կեղեցիկան արարողութիւնները գրաւեցին զինքը: Դ՜ՆՅԵՆՅԵՆ ԳԵՐԵԿԵԿԵԿԵ կը կարդային, այդ երեք հրաւալի մանուկներուն զիրք իր կրկնութիւններովը Սեդրակ, Միսաք, եւ Արեքնազով, որ ամէն անգամ կուգար ընթերցման անուշ եղանակին մէջ հօգը եւ սարսուղազդեցիկ շեշտ մը դնել. հնոցին մէջէն մանուկներուն հրեշտակային աղելուն «Թեմեղէ՛՛ր զՏէր, օրհնեցէ՛ք եւ բարձր արարէ՛ք զմա յալիսեանք» բոլոր ժողովուրդին հոգին հաւատքի անուշ երաժշտութեամբը կ'օժէր, կը վերացնէր, կը բարձրացնէր, ու Տիկին Բենեդեանի ւրտին մէջէն տակաւ կը շնչուէր Վարդուկին ու անօր վատ զրպարտութեանց յիշատակը:

Պատարազ սկսաւ, եւ հայ եկեղեցւոյ այդ հանդիսաւոր Լեւոնեան ժամերգութիւնը ու արուեստին բոլոր բարձրարժիւններէն վեր է, շողերուն, շաներուն, պիսիւսակներուն մէջէն ցոլացող հազարամէկ նրագներուն բոլոր երանգոս թրքումները, բուրվաններուն արձաթի հնչիւնն ու խունկերուն կապոյտ ծածանոս բուրուրներուն շանգրակներուն եւ նարկիզներուն հետ գրկընդխառն, ու շարականները դպիրներուն որոմ երկինքէն բան մը ունին իրենց ձայնին մէջ, այս ամէնը սիրք լեցուցեր էին Ջարմանին, երբ վարագոյրը բացուեցաւ, եւ անմամար լոյսերուն մէջէն «Քրիստոս յարեաւ» աղաղակեցին Քերոբէի զուխներով փոքրիկ սլաքներուն շարակները հագած եւ մամեր բռնած ձեռներնին:

Այս ցնմուրեան աւելիւր ցնմուրեամբ լեցուց դեռաւաթի կնոջ սիրքը: Երջանիկ էր իր բնաւորութեամբը, կեանքովը, վարմովը, բարեմովը. երջանիկ էր Քրիստոսի յարութեան տօնին համար, երջանիկ էր այդ վեճաւում արարողութիւնը տեսնելուն, երջանիկ էր երեսասարդ եւ գեղեցիկ ըլլալուն, երջանիկ էր այդ անուշիկ գուակներուն մայրը ըլլալուն, երջանիկ էր ամուսին մը ունենալուն համար, որուն տրտիւն, խելիքն, մտին կրնար բոս ամենայնի վստահիլ:

Յասկարծ աչքը հանդիպեցաւ նորէն Վարդուկին որ բազմութեան մէջէն նամբայ բանալով կը հեռանար՝ երկու տղոցը ձեռքէն բռնած, եւ առաջին անգամ ըլլալով նեմարեց անոր խելն ու կրակ կերպարանքը, որդմելի զգեստները, տառապեալ աղբաս կնոջ կծկուած դիմագիծերը, յետոյ տխուր գուակները, նիհար գունաքափ, հին ու մին հայտնուցներով, կարկուտ կօշիկներով, եւ բնագրաբար ձեռքը իր գուակներուն զիսուն տարաւ: Այն ասեմ սիրքը վրձնեցաւ, Քրիստոսի գրութեան օժուրը իշաւ իր հոգւոյն մէջ, կայծ մը Սուրբ Հոգիէն, որուն լոյսը եւ ջերմութիւնը իր տրտիւնն ու մտքին քափանցեր եւ արթնցուցեր էր զայն: Չգաց թէ ի՞նչ պէտք էր ըլլար այդ գրկուած հէ՛ք մօր ցարը, գուակեց գրեթէ անոր հոգւոյն բոլոր գաւնութիւնը, եւ բաց զբի մը պէս կարգաց նախանձի, շարութեան շարժառիթները որոնց թեւեւ ինք պատնաւ տուեր էր ակամայ, անգիտակցաբար իր նոխ, երջանիկ կերպարանքովը եւ անփոքր վարձունքովը: Հասկցաւ թէ բուռառիկ յանգանք, նոյն իսկ մեղքը արժանի չէր վերժառութեան, այլ գրութեան, ուստի ներեց անոր շարութիւններուն, եւ ծունցի գալով, զոյուսի արտաբուխ արցունքներ քափեց իր անգութ վարձունքին համար եւ գրութեան ալ արցունքներ այդ հէ՛ք բնանիւթին համար, զոր բուռառութենէ ազատել այտուհետեւ իր նուիրակն պատրքը եւ գերագոյն երջանկութիւնը պիտի ըլլար:

Աւելի գեղեցիկ վրէժ մը, կարելի՞ էր միթէ:

Քերս, 27 Ապրիլ 1907

ԱՇԽԱՐՀԱԲԱՐԸ ԺԹ. ԴԱՐԷՆ ԱՌԱՋ

Յայտնի է որ երբ Մեսայոյ Հայ տառերու գիւտը ըրաւ և Հայերէն տառը թարգմանութիւնները և հեղինակութիւնները երեւան եկան, գրաւոր լեզուի պատուոյն արժանացող Հայ գաւառաբարբառը բոլոր Հայոց մէջ խօսուած միակ բարբառը չէր: Ընդհանուր լեզուներու պատմութիւնը ցոյց կու տայ մեզ թէ անկարելի է որ հազարաւոր մշտն իրարմէ հեռաւորութիւն ունեցող գաւառներու մէջ

ԿԻՐՍԱԿԻ. ԴՅ. **10** Փետրվար—Շուկամ: Կ. Տ. 23 Փետր.: ԼձՐ. 21 Մուհարրէմ
 ✽ **ՀՅ.** Դ. կիրակի Ենուեղէն վերջ: **Կ.** **ՀՅ.** Բ. կիրակի Առաջաւորաց: **ՅՆ.***
 Ս. Դարալանդոս քահանայ: **ԼՏ.** Ս. Պետրոս Տամիանեան՝ վլամսներորդաց կիրակի:

ԵՐԵՆՈՒՇՐ. ԴՅ. **11** Փետրվար—Շուկամ: Կ. Տ. 24 Փետր.: ԼձՐ. 22 Մուհարրէմ
ՀՅ. և **Կ.** **ՀՅ.** Ս.Ս. Ատովեան զօրավարներ: Լարսնիք: **ՅՆ.** Ս. Վլաս եպիս-
 կոպոս: **ԼՏ.** Ս. Մատանիա առաքել:

ԵՐԵՒՇՐ. -Յ. **12** Փետրվար—Շուկամ: Կ. Տ. 25 Փետր.: ԼձՐ. 23 Մուհարրէմ
ՀՅ. Ս.Ս. Սուբիասեան վկաներ և Ոսկեան քահանաներ: **Կ.** **ՀՅ.** Ս.Ս. Սուբի-
 սասեան վկաներ: **ՅՆ.** Ս. Մելիտոս Անտիոքի հայրապետ: **ԼՏ.** Ս. Տարափոս
 եպիսկոպոս:

ԶՈՐՅՇՐ. -Է. **13** Փետրվար—Շուկամ: Կ. Տ. 26 Փետր.: ԼձՐ. 24 Մուհարրէմ
ՀՅ. և **Կ.** **ՀՅ.** Պահք: **ՅՆ.** Ս. Մարտիանոս Խոստովանոց: **ԼՏ.** Ս. Մարգա-
 րիտ Կորտոնացի նշանաւորուհի:

ՀԻՆԳՇՐ. ԲՅ. **14** Փետրվար—Շուկամ: Կ. Տ. 27 Փետր.: ԼձՐ. 25 Մուհարրէմ
 ✽ **ՀՅ.** Տեառներնդառաջ: **Կ.** **ՀՅ.** Ս.Ս. Ոսկեան քահանաներ: **ՅՆ.** Ս.
 Օբսենտիոս վկայ: **ԼՏ.** Ս. Լոնտրինէ կոյս: **ՏՃ.** Արեւին շերմութեան՝ ջուրն իջ-
 նելու օրը:

ՈՒՐՍԱԹ. ԲԷ. **15** Փետրվար—Շուկամ: Կ. Տ. 28 Փետր.: ԼձՐ. 26 Մուհարրէմ
ՀՅ. և **Կ.** **ՀՅ.** Պահք: **ՅՆ.** Ս. Ռեսիմոս առաքել: **ԼՏ.** Ս. Ռոմանոս վկայ:

ՇԱԲԱԹ. ԲՅ. **16** Փետրվար—Շուկամ: Կ. Տ. 29 Փետր.: ԼձՐ. 27 Մուհարրէմ
ՀՅ. և **Կ.** **ՀՅ.** Ս. Սահակ Պարմե հայրապետ: **ՅՆ.*** Ս. Պանիրիլիոս վկայ: Մե-
 սեբց: **ԼՏ.** Ս. Իէանդրոս վկայ:

ՅՈՒՇԱՏԵՏՐ

10 Փետր. Կիր. [41—325] կէս օր. 6. 12

11 Փետր. Բշ. [42—324] կէս օր. 6. 11

12 Փետր. Գշ. [43—323] կէս օր. 6. 09

13 Փետր. Դշ. [44—322] կէս օր. 6. 08

14 Փետր. Եշ. [45—321] կէս օր. 6. 07

15 Փետր. Ուր. [46—320] կէս օր. 6. 06

16 Փետր. Շր. [47—319] կէս օր. 6. 05

մի և նոյն լեզուն խօսուի ժողովրդեան ամէն դասակարգերուն կողմէ։ ասիկ զաս
մեր հին մատենագրութիւնը գրաւոր վկայութիւններ ալ ունի, որոնք կը հաստա-
տեն զանազան գաւառաւարարառւներու գոյութիւնը հոյարեանկ գաւառներու մէջ։
Այդ գաւառաւարարառւները, որոնք ժ. դարուն ասանի չափ էին ըստ Թովման-
նէս Երզնկացիի, հետզհետէ ճիւղաւորուելով, յառաջ բերած են մեր արդի խօս-
ուած բարբառները, որոնցմէ երկուքը, Կ. Պոլսը և Կարապաղի գաւառաւարարառ-
ւները, ժ.ժ. դարու մէջ մշակուեցան գրաւորապէս և կազմեցին արդի գրաւոր հա-
յերէնին երկու ճիւղերը՝ արեւմտեան և արեւելեանս։

Իսկ թէ ի՞նչ եղած են այդ գաւառաւարարառւները ժ.ժ. դարէն առաջ, ասի՜
ինչպիսի մը որ պէտք եղածին պէս ուսումնասիրուած չէ, և որուն խղճամիտ քննու-
թիւնը կը կարօտի գեռ երկարամեայ հետազոտութեանց։ Այս մասին բանասեր-
ներու ուսումնասիրութիւնները տակաւին չեն յանգած որչա՛ եզրակացութեանց, և
հին գաւառաւարարառւներու ոչ քանակը կարելի եղած է ճշդել, ոչ անոնց տար-
բերութիւնները, ոչ ալ այն զանազան փոփոխութիւնները զորս անոնք կրած են
ժամանակին ազդեցութեան տակ։

Չպիտի փորձեմ ուրեմն այդ զանազան գաւառաւարարառւներու բաժանում-
ները ընել և անոնց վրայ ա՛ջատարար խօսիլ այս համառօտ տեսութեան մէջ,
այլ պիտի բաւականանամ ներկայացնելով ամփոփ պատկերը ժ.ժ. դարէն առաջ
աւսմանը վրայ զբառը գլխաւոր մատենագիրներուն, որոնց թողած գործերուն շը-
նորհիւ բանասէրները պիտի կրնան օր մը ուսումնասիրել աւսմանը վրայ զանազան
ճիւղերուն դարէ ի դար կրած փոփոխութիւնները։

Նաո ծանօթ պարագայ մըն է թէ նոյն իսկ Սեդեգարու հեղինակներէն ոմանց
գրուածներուն մէջ կ'երեւան հետքերը աւսման հայերէնին, Ե. դարէն իսկ մեր
լուսազոյն հեղինակներէն ոմանք կը գործածեն աշխարհաբարի յատուկ բառեր,
բարբառութիւններ, անանցումներ ու խօսքի ձևեր։ Է. դարուն Թովմաննէս կայսկո-
պոս, ժ. դարուն Նարեկացի իր Գրգրաւ և Վերջին Երգաւ մէջ, և ժ.ժ. դարուն
Եկեղեցական քրոնիկագիր Մատթէոս վարդապետ, գրաւոր գրելով հանդերձ, գոր-
ծածած են աւսման բառեր ու բացատրութիւններ, և աւսմանը վրայ յատուկ
տարբեր կը պիտակեն իրենց գրուածքները։

Եթէ մէկ կողմ թողունք այս հետքերը, և թ. , ժ. , ժ.ժ. դարերու կարգ մը
վիմաքանդակ արձանագրութեանց մէջ երեւան եկած աւսմանը վրայ յատկաբան-
ները, ինչպէս նաև վենետիկի վանքը գտնուած գրչագիր աւսմանը վրայ ինչպէս մը,
զոր ոմանք ժ. դարու վերջերը կամ ժ.ժ. դարու սկիզբները արարելէն թարգ-
մանուած կը նկատեն, պէտք է ընդունինք թէ նախնեաց աւսմանը վրայ յատկան
հնագոյն երկասիրութիւնն է Միխիթար Հերացիի բժշկապետին Զեբէն-ն-Քիւր-ն-Քիւր-ն-
որ բժշկարան մըն է 1184ին գրուած։

Ժ.ժ. դարուն մէջ ապրող այս գիտուն Հոյր, որուն վրայ Ֆրանսերէն համա-
ռօտ ուսումնասիրութիւն մը ներկայացուց Տարթոր Թորոզեան քանի մը տարի
առաջ Ֆրանսայի բժշկական Ակադեմիային, նշանաւորագոյն գէմըն է մեր աշ-
խարհաբարին պատմութեանը մէջ, իրը հնագոյն արձակ աւսմանը վրայ ծանօթ
հեղինակներու, իրմէ քիչ առաջ իր բարեկամն ու ժամանակակիցը, Ներսէս Շնոր-
հայի, ժողովուրդին խօսած լեզուն գրաւոր կերպով մշակած էր արդէն պատրաս-
տելով ոտանաւոր համարակներու Ատոնց մէջ Ընդհանուր և Նշանաւոր հեղինակը
գործածած է լեզու մը, որ էպպէս աւսմանը վրայ, թէև ունի տողեր ալ որոնք

գրարարախառն են: Հոս գազափար մը տալու համար ժի. դարու աշխարհարարին վրայ, կ'ընդօրինակեմ՝ քանի մը տողերու ներսէս ճնորհալի իր հանելուկներուն մէջ հեռուեալ կերպով կը ներկայացնէ «Կատուն», «Ռեար» և «Աշունք»:

Կ Ա Տ Ո Ւ Ն Ն

Ուրիս արիւն յո՛ւնի գնայ,
Պարան յետեան է արեւ իսո՛ գայ
Բարեւ յո՛ւնի բարձի վերայ:

Ա Շ Ո Ւ Ն Ն Ը

Մանսի գ իսոյ շերտը հրեղեւն
Խըփեց հարայ զգորտն է գետեւն:
«Ուղտն ու «Մըջիւն»ը, «Կաբաւն» ու «Սիրամարզը» և «Ինծորն» ու «Սերկե-

Գ Ե Տ Ը

Օյ գ իսոյ գորտն է իսոյոյ
Իւրեւրէլ տնայր դարայոյ:
«Սերկե-
ւիլը» սրամիտ քառեակներով կը պատկերացուին. իսկ «Նուաւն» է

Անոյ գ իսո՛ւ լըցո՛ւն արիւր:
Կարգը գնո՛ւն է ներս տըսոր:

Ինչպէս այս քանի մը տողերէն ալ երեւան կու գայ. ուսմիօրէնը ժի. դարուն արդէն կազմուած լեզու մըն է, և ներսէս ճնորհալի, հարկուակ հայ նուիրապետութեան բարձրագոյն աստիճանին վրայ գտնուելուն, չարհամարհեր զայն և անով կը գրէ ժողովուրդին ընթերցման յատկացած այս հանելուկները:

Իսկ Մխիթար Հերացիին արձակը աւելի ժողովրդական դրոշմ մը կը կրէ.

(Հեանքն) զիսո՛ւսը շար բող շարտե. կիսո՛ւսը որդի և ողանի ինչոսոր. և
Բաժայ յո՛ւն իսո՛ւսը. և քան զգորտն իւր օրտե իւրեւրտը՝ որ գորտը լինի է գորտն:
Ձիւրեւոնն ինքն ու գորտն ու գորտն. որ անո՛ւսգորտն է գորտն ինքն, զիսո՛ւսը
հոսո՛ւսը, և գորտն ուղտը՝ սիւսն զրու. Եւ զիսո՛ւսը ինչորտն զորտն, քանզի և
Բիսո՛ւսը ինքն զորտն:

Այս արասյայտիչ ու պարզ ոճը աներկբայ շատ գնահատուեցաւ ընթերցողներէն, որոնց համար գրարարը անշուշտ գծուարիմաց դարձած էր, և ժի. դարէն սկսեալ ուսմիօրէնը հեռուէտէ ծաղկեցաւ ծառայեցաւ գրականութեան մէջ: Այն հեղինակները կամ թարգմանիչները որոնք երկրագործութեան, բժշկութեան, օրէնագրութեան և ընդհանրապէս գիտական ու գործնական խնդիրներու վրայ կ'ուզեն խօսիլ և ժողովուրդին մէջ օգտակար ծանօթութիւններ տարածել, ուսմիօրէն կը գրեն, նոյնպէս այդ բարբառին կը դիմեն մեր բանաստեղծները:

Ձերտնոց արիւրեւն ինքն և տըրը, Պերուցի Յոյնի մը, Պանիս Անատոլիոսի Գիւրտն ու իսոյն է, երկրագործութեան վրայ գրուած գործնական մատեն մը, որ ուսմիօրէնի կը վերածուի անծանօթ հայ թարգմանիչի մը կողմէ՝ արարելէն բնագրէն, հաւանօրէն ժի. դարուն: Նոյն գարու մարդ է Սմբատ, որ գրարարէն ուսմիօրէնի կը վերածէ Մխիթար Գօլի «Կարտնոն» գրքը, և ուրիշ օրէնքներու հաւաքածոց մըն ալ հին Քրիստոսէնէ կը թարգմանէ հայերէնի: Նոյնպէս ժի. դարու մարդ է վարդաւ Այգեկցի, — անծանօթ մասցած և նոր ի յայտ եկած դէմք մը մեր մասնագետութեան մէջ, — որուն վրայ երկարօրէն խօսած է Ներսէս Մառ. նշանաւոր ուսուցիչութեան մէջ. Մառ յիշեալին կը վերագրէ Ալեքեանգիւրտն և Ուրտնոց թիւներու մէջ գտնուած առականքէն ոմանց հեղինակութիւնը:

ժի. դարուն ուսմիօրէն գրող ծանօթ արձակագիրներ զբիթէ չկան Սակայն ունինք երեք քերթողներ որոնք այդ դարուն սկիզբը ծաղկեցան, երեքն ալ եկեղե-

ցական, ՅովՏաննէս Երզնկացի, Կոստանդին Երզնկացի, և Խաչատուր Կեչառուեցի, և որոնք թողած են սամկորէն տաղեր, ուր արտայայտուած միամիտ գաղափարներուն մէջ ցրցքնուած են տեղ տեղ գեղեցիկ մտածումներ ալ, ինչպէս Կեչառուեցիի սա տողերը.

Այս ինքնա՛ն է ի շու՛ղ շե՛մն ու՛ ժորդի՛ ի ներս ի նու՛ն.

Մարտն է ի նա՛ս շե՛մն, հոն ի ն գոն ի արհա՛ման.

Մի՛քո՛ս է նա՛սու՛ր ճորդո՛ր՝ որ հոն է ցո՛մտն երե՛մն:

Եւ կամ ՅովՏաննէս Երզնկացիի սա տողը.

Լուսն է ի եզբո՛րս, որդի՛ս է երե՛ն,

Տառայ գրտա՛ն ժո՛ւ Կո՛ւստան՝ Կո՛ւստանն է ին՛ի

Մարտն հո՛ր քո՛ր զսո՛սու՛ն, որ զսո՛սու՛ն նոր՛ն.

Ձերք զսո՛սու՛ն է ժորդո՛ւր՝ որ հոն է սու՛ր.

Հոն է ի պայտո՛ս որ շո՛ւք նա զսո՛սն.

Ձերք զսո՛սն է ի սու՛ն, որ յայդ նա զսո՛սն.

Ձերք ճորդո՛ր Կո՛ւստանն է սու՛ն, որ լայն է ու ցո՛ւնն.

Թո՛ւ սու՛ն որ ի բնէ՛ս զսո՛սու՛ն ի բոր՛ն,

Գո՛ւստանն է ի սու՛ն, որ զսո՛սն է սու՛ն.

Ժե. և ժՁ. դարերը հայ աշուղներու ծաղկած դարերն են և Ռամկորէնը կը դառնայ դիւրաթիւք ու ճիւղն. սովնէն նուրբ գաղափարները կը սկսին արտայայտուել, գրական գեղեցիկ գիւտերով, որոնք հայ բանաստեղծութեան ոսկեդարը կը կազմեն: Այդ դարերուն մէջ որ է որ կը ծաղկին Մկրտիչ Նազաւ, Նախապետ Քուչակ, ՅովՏաննէս Թլկուրանցի, ՅովՏաննէս Ալթամարցի և հաւանորէն Թրիկ: Այդ մեծ անուններուն քով երկրորդական գրողներ ալ կ'երևան և ասոնց ամէնքը կը մշակեն աշխարհարարը, կը գրեն հազարաւոր տողեր, պարսիկ բանաստեղծութեան գոհարներու ծաղիկները կը բերեն հայ գրականութեան մէջ, որ բուրումնաւոր ու փայլուն թուական մը կ'անցընէ, իրօք փառաւոր թուական մը մեր հին մատենագրութեան բանաստեղծութեան զուրկ անջրդի անդամներուն մէջ:

Իոյր այս քերթողները սերը երգած են, և թէ և անոնցմէ երկուքը կաթողիկոս, մէկը եպիսկոպոս, բայց անոնք իրենց աշխարհականութեան տարիներուն մէջ անշուշտ ունեցեր են տաք հրայրներ, սրտի վիշտեր, դառն յուսախաբութիւններ որոնց յիշատակը կը բերեն մեզի սարսուռներով զողոքուն իրենց շատ մը տաղերը: Անոնք ժողովրդական բարբառին գիմած էին բացատրելու համար պարզ լեզուով իրենց գազցումները. որպէս զի ժողովուրդը հասկնայ, գնահատէ ու սիրէ գիրները. անոնք սիրատարի գեղգեղանքներ կը լսեցնէին ժողովրդեան սկանջին, և կ'ուզէին որ գուրգուրանքի արցունքներ խլեն անոր աչքերէն, և իրենց հոգին թափանցէ մինչև ալբերը անոր հոգւոյն, ուր միայն կրնայ սպրիլ ճշմարտ բանաստեղծը: Եւ սորո համար ահա մշակեցին նախնեաց սամկորէնը, որ այսպէս մասամբ բանաստեղծութեան կը պարտի իր գարգայումը:

Այդ դարերուն մէջ աշուղներուն գրուածները ձեռքէ ձեռք կը սուրային, զանոնք պարունակող ձեռագիրները կ'ընդօրինակուէին, կը բազմապատկուէին, հեղինակները մինչև եպիսկոպոսութեան, մինչև կաթողիկոսութեան կը բարձրանային, և անոնցմէ մէկուն՝ Նախապետ Քուչակի գերեզմանը գեռ կը յարգուի Վանայ սարակոնիս գիւղին գերեզմանատան մէջ՝ գիւղին բնակիչներէն նկատուելով իր սուրբի մը գերեզմանը:

Գաղափար մը տալու համար ժե. և ժՁ. դարու բանաստեղծներուն աշխարհարարին վրայ, կը դնեմ հոս երկու տուն Նախապետ Քուչակի մէկ քերթուածէն, զոր հրատարակած է Կոստանեանց.

Մտի՛ն ի՛մ ետե՛ն արե՛ս, զինչ հոգե՛ր սե՛նն է ի նա՛ն.

Հոգե՛ր քո՛յնգո՛յն ի սո՛ւյս, ի սո՛ւյս լարե՛ր սո՛ զսո՛սն է ի նա՛ն.

Աւերքս — պաշտօն Տրեք, ջուր է՛րբեայ ելեբն է իմանել
 Մտի՛ք շաւերան արեւ, շաւն շաւեր, տրեքն է իմանել,
 Ջուր գլխաւին իս գաւ, գեղէն իսրաիւնին իս գաւ.
 Երբեւայ տր յարեք է լայր, յայտ էայ — Գաւն ինքնաւ:
 Գեղեմէն երբեւայ տր եւ Գաւն, է օրաւ ալեւորս իս գաւ,
 Երբեւայ — Երբեւայ գաւնին, գեղեմէն է գաւն չինաւ:

Այս սողորունն մէջ բանաստեղծական բարձր ներշնչումին կարեւոր ստար մը եղած է ներգրաշնակ լեզուն այլ, որ արդէն իսկ պարզ աշխարհարար գարձած է ալ, հոյովմանց ու խոնարհմանց ձեւերով, գողտրիկ բառերով, անզարգ անսթեւեւ լեզու, բայց հրապուրիչ իր այդ պարզութեան իսկ մէջ: Սիրոյ երգ մըն է գարձեալ հետեւեալ քերթուածը, որուն հեղինակն է Գրիգորիս Աղթամարցի.

Ունեբոք է իմօր սրտեւ — ալեւն—	Երբեւայնք է գաւ լայր, իւրեք է մօրաւ.
Ալեւորք է պայծառ սրտեւ — զն—	Սէպտի — արտաւանտ Տրեքտրէ լայրայ.
Թորթութք է իմանլար, ինչո՞ւ պղպղպ զուր,	Լեւուորք է ինքնն գաւ Արայ լայր.
Այս— զ զին գորիք իս — արի իսրաիւր — մօրաւ:	Երբեւայ Գաւն ինչո՞ւ սրտայ ըս—
Գաւն զլուսեայ ելեքն ինքն եւ չիտ—	Որք սր Գաւնին — այն տեղն է պօրտան:
Գաւն զլուսն է բօր— զգաւն լայրայ,	

Կը տեսնէք թէ հինգ հարիւր տարի առաջ ի՛նչ գեղեցիկ կը գրէին աշխարհարարը, մանաւանդ թէ ի՛նչ գեղեցիկ փոխարեութիւններ կը պատկերանային հայ մտքին, Ու քանի մը սող ալ նշանաւոր Ֆրիկէն, «Որդի Թագաւոյ, եզրօրդի Դոգանոյի» ինչպէս կ'ըսէ յիշատակարան մը, որուն վրայ կը պահանջուին սակարական սեղեկութիւններ, և որ սակայն աներկրայ մեր ամէնէն իմաստեղծ բանաստեղծներէն մէկը եղած է.

Կաւնեւ սր ալիւ ինչո՞ւ	Գաւն զերթնին — յալ ի՛նչ մօրաւ,
Որք մեւ մօրք զէր ինքն,	Որք ինչն զինն իս — գաւ.
Գաւն — գաւն — նը՞մն ինչո՞ւ	Գաւն — զերթն նը՞մն ինչո՞ւ
Որք — մեւ մօրք զէր ինքն:	Որք ինչնն է գաւն լայր:

Ժն. և ԺՁ գարուն փայլած այս բանաստեղծներուն քով, որոնց շատ բան կը պարտի աշխարհարարը, և որոնց գործերը տակաւին չուսումնասիրուեցան լեզուի տեսակետով, ուսմիօրէնի արձակագիրները գարձեալ աննշան կը մնան և անուն մը միայն գուրս կը ցցուի անոնց մէջէն՝ նորէն բժշկիկ մը անունը, Ամիրտովլաթ Ամասիացի, Այս հայ գիտունը որ մեռած է 1496ին Կ. Պոլսոյ մէջ, Նիջնակայնի շատակ Ֆաթիհ Սուլթան Մէհմէտի անձնական բժիշկը ըլլալու պատուին արժանացաւ. թողած է ուսմիօրէն գրուած կարգ մը բժշկական գործեր, որոնց գլխաւորներն են Օրքոք քեթիւնն, ուր կը խօսի մարդակազմութեան, բախարանաութեան և դեղատուութեան վրայ, և Անգիտայ անգիտ որ բժշկական բառգիրք մըն է, իր արձակին վրայ գաղափար մը տալու համար կ'օրինակեմ հոս հետեւեալ սողերը, զորս կը քաղեմ իր Օրքոք քեթիւնն գործէն.

«Եւ բժիշկն ալ պիտի սր իմաստուն լինի և գիտուն լինի, և յուլ չլինի և սուտըրուց չլինի, և վարպետի աշակերտ լինի և շատ գրեանք կարդացիր և շատ թաճրուպայի գիտել և ինչօք խրատատու լինել և տամահի չլինել:»

Ժն. և ԺՁ. գարեբունն մէջ Ամիրտովլաթէ զատ ուսմիօրէնով զբաղած ուրիշ ուշագրաւ արձակագիր մը անունը պահած չէ մեզ հայ մատենագրութեան պատմութիւնը, սակայն յայտնի է թէ Ժողովուրդին մէջ ուսմիօրէն գրուածքները մեծ սիրով կը կարդացուէին, այնպէս որ երբ տպագրութեան զիւտէն անմիջա-

ԿԻՐԱԿԻ. Գ. 17 Փետրվար—Շուկաժ: Կ. Տ. 1 Մարտ: ՀձԲ. 28 Մուհարրէմ:
 ✽ **ՀՅ. Ե.** կիրակի Ծնունդէն վերջ: **Կ. ՀՅ. Գ.** կիրակի Առաջաւորաց: **ՅՆ. Ս.**
 Թէոդորոս Տիւռն վկայ: **ԼՏ. Ս.** Եւտրոսիա Յաղուհի: Յիւններորդաց կիրակի:
 Կամ, Բուն Բարկենդան:

ՍՐԿՈՒՇԲ. ԴՅ. 18 Փետրվար—Շուկաժ: Կ. Տ. 2 Մարտ: ՀձԲ. 29 Մուհարրէմ:
ՀՅ. Ս. Ս. Մարկոս եպիսկոպոս, Պիոն քահանայ, Կիւրեղ և Բենիամին սաղա-
 ազներ. Արղլման, Որմզդան ու Սաէն վկաներ: **Կ. ՀՅ.** Պիոն քահանայ, Մար-
 կոս և Արղիսա եպիսկոպոսներ, Կիւրեղ և Բենիամին սարկաւազներ, Որմզդան և
 Սաէն վկաներ: **ՅՆ. Ս.** Լեւոն Հոռոմի հայրապետ: Կառակատիք մէկ շարամ: **ԼՏ.**
 Ս. Սիմալլիկիոս Հոռոմի հայրապետ:

ՅՐԵՔՇԲ. ԴԳ. 19 Փետրվար—Շուկաժ: Կ. Տ. 3 Մարտ: ՀձԲ. 30 Մուհարրէմ:
ՀՅ. և Կ. ՀՅ. Ս. Ս. Ղեւոնդեան քահանաներ, (Յովսէփ կաթողիկոս, Սահակ
 և Թամիկ եպիսկոպոսներ, Ղեւոնդ, Մուշեղ, Արշէն և Սամուէլ քահանաներ, Գա-
 չաշ և Արքանամ տարկաւազներ): **ՅՆ. Ս.** Արքիպպոս առաքեալ: **ԼՏ. Ս.** Գունե-
 կոնդա կայսրուհի: Բարկենդանի վերջին օրը:

ՉՈՐՔՇԲ. ԵՅ. 20 Փետրվար—Շուկաժ: Կ. Տ. 4 Մարտ: ՀձԲ. 1 Սէֆէր:
ՀՅ. և Կ. ՀՅ. Պահր: **ՅՆ. Ս.** Լեւոն Կատանիոյ եպիսկոպոս: **ԼՏ. Մեծ պահ-**
քի Ա. օրը: Մոխրոց օր:

ՀԻՆԳՇԲ. ԵԳ. 21 Փետրվար—Շուկաժ: Կ. Տ. 5 Մարտ: ՀձԲ. 2 Սէֆէր:
 † **ՀՅ. և Կ. ՀՅ. Ս. Ս.** Վարդանեան զօրավարներ, (Վարդան, Խորէն, Արտակ
 Տաճատ, Հմայեակ, Արսէն, Վահան, Ներսէն, Գարեգին) և հազար երեսունըվեց
 վկաներ: Մեռելոց: **ՅՆ. Ս. Ս.** Տիմոթէոս և Եւստամէոս ճգնաւորներ: **ԼՏ. Ս.**
 Թէոփիլոս եպիսկոպոս: **ՏՃ.** Արեւին ջերմութեան՝ հողն իջնելու օրը:

ՈՒՐԱԹ. ԲՅ. 22 Փետրվար—Շուկաժ: Կ. Տ. 6 Մարտ: ՀձԲ. 3 Սէֆէր:
ՀՅ. և Կ. ՀՅ. Պահր: **ՅՆ. Ս. Ս.** Մարտիրոսներ Եւզինեան վանքին: **ԼՏ.**
 Ս. Եւազրիոս ճգնաւոր:

ՇԱՐԱԹ. ԲԳ. 23 Փետրվար—Շուկաժ: Կ. Տ. 7 Մարտ: ՀձԲ. 3 Սէֆէր:
ՀՅ. և Կ. ՀՅ. Ս. Ժողով Կ. Պօլխի, հարիւր յիսուն հայրապետներով: **ՅՆ.**
 Ս. Պօղիկարպոս Զմիւռնիոյ հայրապետ: **ԼՏ. Ս.** Թովմաս Ազուխնացի վարդապետ:

ՅՈՒՇԱՏԵՏՐ

17 Փետր. Կիր. [48—318] կէս օր. 6. 04

18 Փետր. Բշ. [49—317] կէս օր. 6. 03

19 Փետր. Դշ. [50—316] կէս օր. 6. 02

20 Փետր. Դշ. [51—315] կէս օր. 6. 01

21 Փետր. Եշ. [52—314] կէս օր. 6. 00

22 Փետր. Ուր. [53—313] կէս օր. 5. 59

23 Փետր. Շր. [54—312] կէս օր. 5. 57

պէս ետքը 1512ին առաջին հայ գիրքը լըյս տեսաւ Վենետիկի մէջ՝ ուսմկորէն գրուածք մըն էր այն, Աղբարքը, որուն հեղինակը ծանօթ չէ: Չեմ տեսած այդ երկատիրութիւնը, և անոնք որ կարդացեր են զայն, կը գրեն թէ խաւարամիտ մարդու գործ է, նախապաշարմանց կոպանքներով կաշկանդուած գրողի վիժուկ, որ չունի ու է գրական կամ իմաստասիրական արժէք: Սակայն այդ գործը հետաքրքրական է մեզի համար. այնուհետեւ նախնեաց ուսմկորէնով տպուած շատ գիրքեր կան, Աղբարքի, Էֆէօքի, Պէշե-ալու, և իրենց նմանները, բայց անոնց առաջինը եղած է Աղբարքը, և այդ տեսակետով ահա յատուկ տեղի մը և մասնաւոր յիշատակութեան մը արժանի է:

Ճյ. Դարուն մէջ քանի մը բժիշկներ և եկեղեցականներ կը մշակեն ուսմկորէն արձակը և քանի մը եկեղեցական ու աշխարհական գրողներ՝ ոտանաւորը. այդ դարուն է որ կը հրատարակուի նաեւ աշխարհայար տպագրուած գործերուն մէջ հնագոյն կարեւոր վաւերագիրք՝ Յովհաննէս Հօլովի Պարզաբանութիւն + Աղբարքը, Հօլով Կոստանդնուպոլսեցի վարդապետ մըն էր որ Վենետիկի մէջ հրատարակեց իր այդ աշխատասիրութիւնը, պայմանագրական աշխարհարար մը կազմակերպել փորձելով՝ ինչպէս ըրած էր գրութարին համար, զոր ուղեց լատիներէնի լուծին տակ ձգել, 1674ին շուտի մէջ հրատարակած իր Քրիստոսութեմք: Պարզաբանութիւն + Աղբարքը 1685—87ին տպուեցաւ Կոնստանդնուպոլսի որդի Նահապետի ծախար, և այդ Ձուղալեցի վաճառականին պատկերը կ'երեւայ գեռ գրքին ճակատը, ժամանակին Ձուղալեցի Հայոց տարազին վրայ որոշ գաղափար մը բերելով մեզ: Ճյ. դարը վճռական ժամանակամիջոց մը կ'ըլլայ մեր ուսմկորէնի համար Ռամկարի հեղինակները ի յայտ կու գան ամէն կողմ՝ աշխարհական և եկեղեցական, արձան և ոտանաւոր գրողներ, որոնք աշխարհայարով ժողովուրդին հետ ուղղակի հաղորդակցութեան կ'ուզեն մտնել: Իրենց գլուխը կը ներկայանայ մեզ Մխիթար Աբրահմ, որ 1727ին կը հրատարակէ համառօտ Քրիստոսութեմ մը աշխարհարարի համար, թուրքերէնով բացատրուած: Մխիթար, Հայոց ամէնէն մեծ մտքերէն մէկը, չէր կրնար ըմբռնած չըլլալ թէ նոր լեզուն ի՞նչ մեծ դեր պիտի կատարէր մեր մտանշարութեան մէջ և թէ օր մը անով պիտի գրէին բոլոր հայ գրողները. ի՞նչ որ յունագետ էր, անշուշտ գիտէր թէ ի՞նչ. դարուն իսկ Յշնները փորձած էին ժողովրդին խօսած լեզուն, օճեյա՛ն, տարածել դպրոցներուն մէջ:

Արդարեւ Յունաց այս շարժումին գլուխ եղած էր իտալիա սարած Յոյն մը: Նիքոլաս Սօֆիանոս, որ 1534ին իսկ գրած էր նոր յունարէնի Քրիստոսութեմ մը մանաւանդ Վենետիկի մէջ իր գաղափարներուն հետեւող Յոյնը շատ կային: Նաեւ եկեղեցականներ իրենց քարոզները ուսմկորէնով կ'արտասանէին և կը հրատարակէին ինչպէս Մելեդիոս Քիկոս, Աղեքսանդրիոյ Յունաց Պատրիարքը 1586ին, և Կիրիլոս Լուգոսիս, Կ. Պոլսոյ Յունաց կաթողիկոս Պատրիարքը՝ 1617ին Կիստանիոս 1568ին Քրիստոսութեմ մը կը հրատարակէր օճեյա՛նով Այս շարժումին ուժ կու տային Յունաց մէջ կաթողիկոսութիւն տարածել փորձող ժողովութիւնները, ինչպէս նաեւ Լուտերի և Կալվինի սկզբունքներուն ջատագոյնները որոնք նոր յունարէնով գիրքեր տարածեցին ժողովուրդին մէջ և ջանացին օրինորդներուն կրօնական համոզումները խախտել: Ժողովութիւնները 1628 էն 1671 բազմաթիւ կրօնական գիրքեր և դասագիրքեր հրատարակեցին, նոյն իսկ բազմաթիւ տպեցին նոր յունարէնով բողոքականները անոնց օրինակին հետեւեցան, և 1638ին Աւետարանը թարգմանեցին օճեյա՛նի Քիչ ետքը, 1681ին, Վենետիկի Յունաց վար-

ժարանին ուսուցիչներէն մէկը, Աբուֆուս, իր աշակերտներուն համար սամկօրէն ձեռքարկուածքներէն մը կը պատրաստէր, եւ կը պնդէր թէ նոր յունարէնով կարելի է պերճախօս ճառեր խօսիլ, եւ թէ այդ լեզուն կրնայ արտայայտել շատ վայելելու կերպով գիտական ճշմարտութիւններ ալ իր աշակերտը, էլիսա Մինիսդիս, ժողովրդական քարոզիչ մը եղաւ և իր տաղանդով բարձրացուց յոյն սամկօրէնը:

Անշուշտ այս շարժումին եւ այս դաշխարներուն անտեղեակ չէր Միխիթար Աբրայ, եւ թերեւս ինք ալ մտածեց թէ Հայոց մէջ սամկօրէն գիրքեր պէտք է տարածէ ժողովուրդին մտնելալու համար: Թերեւս ատոր համար գրեց աշխարհաբարի սյն ընդարձակ Քերթումներ (1726), որ տակաւին անտիպ կը մնայ իր ձեռագիրներուն մէջ Վենետիկի Միխիթարեանց վանքը, և որուն վրայ Հ. Սարգսեան և Հ. Թորոսեան որոշ գաղափար տուած են արդէն բանասիրական աշխարհին Սակայն կ'երեւայ թէ Միխիթար վաշանեցաւ: Գիտէր անշուշտ թէ յոյն կղերքը սոսկալի պայքար մը մղած էր ժողովրդներուն և բողոքականներուն կողմէն Վերջապէս հրատարակուած գիրքերուն դէմ: գիտէր որ Աւետարանին նոր թարգմանութիւնը գատապարտուած էր եւ անոր ընթերցողները գրեթէ բանագրանքի սպառնալիքին տակ կը գտնուէին. գիտէր որ Յունաց նշանաւոր ուսուցիչները հին լեզուով կը գատախօսէին միշտ և կը մարանչէին նոր լեզուին դէմ, թէ մանաւանդ Ֆէնէրի Յունաց վարժարանին նշանաւոր ուսուցիչները Զիկոմալաս, Մամբրօքորտաթօս եւ Պուլիարիս հին լեզուին շատագով կը հանդիսանային, պնդելով որ յոյն սամկօրէնը չի կրնար ենթարկուիլ միօրինակ ոճի մը և կանոնաւոր քերականութեան մը, քանի որ շատ մը գաւառաբարբառներու կը բաժնուի, եւ խառն է օտար բառերով, և թէ շատ դժուար է այդ գաւառաբարբառներէն մէկը ընտրել եւ բարձրացնել զբանական լեզուի Այս բաները հաւանօրէն գիտէր Միխիթար, և տեսնելով Յունաց մէջ մղուած այս բուռն պայքարը, չհամարձակեցաւ թերեւս մեր մէջ ալ տեղի տալ անոր, ուստի նորէն մէկ կողմ թողուց այն ծրագիրը զոր թերեւս կողմած էր պահ մը աշխարհաբար տարածելու համար, եւ մշակեց զբարբար որուն Քերթումներէն մը պատրաստեց և հրատարակեց 1730 թին, և որով զբաժնէ իր կրօնական գործերը ժվ. դարուն մէջ, աշխարհաբարի տեսակետով, Միխիթարին հետ պէտք է յիշենք նաեւ մեր Յակոբ Նայեան Պատրիարքը, որուն Քերթումներ (1737), եւ Գաւառեան Ծանօցումները (1758) կը պարունակեն ժամանակին խօսուած լեզուն՝ զբարբարի նախագատութիւններով խառնուած, ինքնատիպ հրապարակուած տալով իր ոճին: Իրմէ առաջ գրողներէն յիշենք Աւետիք Պատրիարքը, որուն սամկօրէն գրուած Խնամականութեան ձեռնարկով երուն մէջ, եւ իրմէ ետքը գրողներէն Պաղտատար դպիւր, որ ունի աշխարհաբար արձակով բացատրուած զբարբար Քերթումներէն մը, Գեորգ վարդապետ Մխչյան, որ Եւրոպա սպրած է երկրոր տարիներ և գարձին՝ զրած է վիճարանական կրօնական մատեաններ, Իրիգոր Պատմաճեան Պատրիարքը որուն Խնամականութեան ձեռագիրը պահուած է Սրբազան Սանտիանոս վանքին մէջ, Մանուէլ Սրմաքէշ որ ունի քանի մը կրօնական գրքոյններ, Միքայէլ Չամչեան, որ թողած է աշխարհաբար նամակներ, Հ. Միքայէլ վարդապետ Անանեան, որ գլխաւոր աշխատողը եղաւ 1769ին Վենետիկ հրատարակուած զբարբար աշխարհաբար եւ աշխարհաբար զբարբար բառգիրքներուն, եւ Սարգիս դպիր Յովհաննէսեան, որուն ձեռագիրը Քերթումներ (1773) ժվ. դարուն մէջ Կ. Պոլիս գրուած աշխարհաբար

արձակին վրայ շատ որչազ գողափար մը կուտայ: Ահա քանի մը սող սոյդ ձեռագրէն.

«Մա՛ր Ի՛նչ է. — Մարդուն հոգեվարքութեան սահմանն է որ լեզուն կը կապ-
վի մեղայ չի կրնար բեր, խոստովանելու ժամանակ չի կոյ: ապախարսէք քա-
շելու ատեն չունի. էլէր մեղաւոր է նէ աչքին առջև կ'երեւայ գծոքի կրակը»

Այս Գրեթոնի-միտին գրուած թուականներուն է որ Վենետիկի Մխիթարեան-
ներն ալ կը սկսին կ. Պոլսոյ աշխարհաբարոյ գասագիրքեր պատրաստել. չ. Խա-
չատուր Սիւրմէլեան, որ հեղինակներէն մէկն է նոր Հայկազեան բազմքին, 1788ին
կը հրատարակէ Թոմար-Բեռն մը. քիչ ետքը Չ. Գուկաս Ինճիճեան Ալեքսան-
դրոս-Բեռն մը ի լոյս կ'ընծայէ 1791ին, և սոյսկէս Վենետիկի Մխիթարեանները,
ինչպէս Թրիեստի մէջ գտնուող այն Մխիթարեանները, որոնք յետոյ Վենետիկի
Մխիթարեանց միաբանութիւնը պիտի կազմէին, կը սկսին մշակել նոր հայերէնը,
որ ժի՛. դարու առաջին տարիներէն իսկ նոր զարկ ու նոր թափ կը ստանայ. ինչ
որ Մխիթար շէր համարձակած ընելու, իր յաջողները բրին գոյն, ժամանակի
հոսանքէն մշուած: Ժի՛. դարու առաջին տարիներէն մէջ իրաւունք ունին որ պաւելու նաև
մէջ մէկ փքրիկ անկիւն սոյդ դարուն քանի մը բանաստեղծները՝ Աւետիք Պա-
րիաբը, Գալուստ Կոյժական Պատրիարքը, Պետրոս Դափանցի և Պաղտատար գպիր
Առաջին երեքին վրայ խօսած եմ արդէն ուրիշ առթիւ. Պաղտատար գպիր (1680-
1763) բանաստեղծի ինքնատիպ դէպք մըն է անոնց մէջ: Տաղարաններ հրատարա-
կած է 1723 և 1734ին: Իսկ իր նշանաւորագոյն գրուածն է Սէրոյ և Իբրտանոց
Տաղարանի: որուն ազգագրութեան թուականը յայտնի չէ: Այս Տաղարանի կը
պարունակէ 61 սիրոյ տաղեր, մեծ մասամբ նախնաց առաջինը և ամէնքն ալ
երգելի: Կ'երեւայ թէ սոյդ սիրոյ տաղերը ժի՛. դարու մէջտեղերը կ'երգուէին կ.
Պոլսոյ հոյ ժողովուրդին մէջ, որովհետև Պաղտատար գպիր իր Տաղարանին վեր-
ջը նշանակած է անոնց ամէնուն ալ եղանակները, զլուսի մը տակ որուն վերնա-
գիրն է. «Յանկ և ցուցակ առղերացս թէ ո՞րն ի՛նչ գոյնով է:» Այդ գլուխին
մէջ կը յիշուին կարգ մը թուրքերէն տաղեր, անշուշտ ժամանակին հանրածա-
նօթ, որոնց վրայ խորհուրդ կը արուի երգել Պաղտատար գպիրին հեղինակածներս
Ահա գաղափար մը իր ոճին վրայ.

Գրեթոնն էլ էլ անու զգեցն հնչեցն
Սէրու լուսու երեկ ղեկուցն է յայտն
Ի տե՛ լուսու ելանիւր լուսութն .
Ինչպէ՛ր, է՛ նուզելէ, րեւոյր Իբրտ է՛
Չարիւր, է՛ անու, գեւոյր Իբրտ է՛:

Գրեթէ լինէ՛ր րեւոյր րեւոյր րեւոյր րեւոյր րեւոյր րեւոյր րեւոյր րեւոյր րեւոյր րեւոյր
Ինչպէ՛ր է լուսու էն ալ էն էր րեւոյր րեւոյր րեւոյր րեւոյր րեւոյր րեւոյր րեւոյր րեւոյր րեւոյր րեւոյր
Չէ՛ր րեւոյր էն լոյսու րեւոյր րեւոյր րեւոյր րեւոյր րեւոյր րեւոյր րեւոյր րեւոյր րեւոյր րեւոյր
Ինչպէ՛ր է՛ նուզելէ, րեւոյր րեւոյր րեւոյր րեւոյր րեւոյր րեւոյր րեւոյր րեւոյր րեւոյր րեւոյր

Հոս կանգ կ'առնեմ: Այս շրջաններուն մէջ ապրող բազմաթիւ արձակագիր-
ներուն մէջ տակաւին շատ անուններ կան յիշելիք, շատ դէմքեր որոնք անծանօթ
մնացած են, ապերախտ ժամանակէն մոռցուած, շատ ալ դեղեցիկ հատուածներ
գործ հարկ է դուրս ցոյցանցել բազմաթիւ անարժէքներուն մէջէն: Սակայն սոյդ
գործը այս յօդուածին շրջանակին մէջ չի մտնիր որուն համեստ ձգտումը եղաւ
ամփոփ գաղափար մը տալ ժի՛. դարէն առաջ ծաղկած մեր այն գրողներուն

վրայ, որոնք աշխարհաբարը մշակեցին: Իսոյց թէ ժի. դարէն մինչև ժի. դար եօթը հարիւր տարուան ընդարձակ ժամանակամիջոցին մէջ աամկօրէնը ինչ փուլերէ անցաւ, ինչ կղան իր քերականութեան կրած փոփոխութիւնները, ինչ բաւեր և ոճեր ծագում առին անոր ծոցին մէջ, ինչ փոխանցումներէ անցաւ և ինչ վիճակի մէջ հասաւ ժի. դար, թէ մանաւանդ ինչ զանազան պատճառներ ազդեցին անոր կրած սյշ փոփոխութեանց վրայ, ասոնք ծանր և զժուար խնդիրներ են, որոնց քննութիւնը կը կարօտի երկար ժամանակի և խզճամիտ հետազոտութեանց. այդ հետազոտութեանց շնորհիւ միայն կարելի պիտի ըլլայ զրկ մեր աշխարհաբարին պատմութիւնը, որուն պարզ մէկ ծրագիրը.— այն ալ մինչև ժի. դարու վերջի մասին համար,— հազիւ կրցանք ուրուագծել այս կարճ ուսումնասիրութեան մէջ:

ԻԵՐԱ, 14 Մայիս 1907

ՈՐԿՈՐԵԱՆ ԲԱՌԳԻՐՔ!

ՔԱՆՅՐԱԻԵՆԻՆԵՐՈՒ ԵՒ ԱՆՈՒՇԷՂԷՆԵՐՈՒ ԱՇԽԱՐՀԷՆ

Կտոպ, կամ Մածպան (պտպս, baba). Թելկրասպ, կամ Հերման (Սէլ քամայիֆի). Թերմկրասպ (կիւլլան). Հացկտոպ (էքմէք քամայիֆի). Տափկտոպ (եսար քամայիֆի). Երկտոպ կամ Թերմուշ (պարլալա). Թուգկտոպ (ինժիր պէօրէի, «պարլալա»ին մէկ տեսակը՝ Պուզի տեսքով). Տրիխտակ կամ Երիխտայ (լարանկի, չըրլամա). Երայ (Պրիղոնա). Եարարանայս (բասմա). Պրակունտ (չամիչով կարկանդակ, plum-pudding). Նշածաղ (գուրպպիէ, massepain). Կակղենի (քէյթ), Քաքար (բավանի), Խաւիժ (Պուրքերէնը նոյն). ձմուռ (pain beurré et sucré). Չուսղեղ (ձու-հաց եղ, աամկօրէն ձըվածեղ). Ելպուր (pain perdu). ** Մածղին (մանայլէպի). Հաւալանջ կամ Կրմանոյշ (Պավուք կէօքսի). Կամնայուր (սիւտրան, riz au lait). Սերպպուր (քուճա, crème). Անուշայուր, Քաղցրաման (աշուրէ). Նիկաման (զէրտէ բիլլով). Պալուտակ, կամ Դոնդողանոյշ (բէլթէ, կամ ասիտէ). Փայլանոյշ (էլլասիէ). ** Բալլի հացաման (ֆիշնէ Թիրիթի). Մզմուկ (օլոպպ, մուրապպա Marmelade). Մրզանոյշ, Ձամարակ կամ Վուզ (զօմրսօօ, compote). Մրզաման, կամ Սխորժայուր (=խօշապ, աղաւ՛. խօշաֆ). Բանդակ (բէչէլ, conserve, confiture), Ստոնոյշ, կամ Եարարանիթ (շէբէրլակ, fruit glacé). Պաստեղ (բէտիլ, raisiné). Եարոց կամ Եոպպ (ճէվիզիլ սուճուք). Քաղցրախիւս, կամ Չանգանոյշ (չէվիթէ, մանուն). Ռուրի դիրտ (պուլլամա). Ռուր (բէքմէղ), ** Հրուշակ (նէլլա). Հացհրուշակ (սիւնկէրիէ). Երմուկ-հրուշակ (իրմիկ նէլլասար), Չուհրուշակ (զանարիա). Թելհրուշակ (քէթէն նէլլասար), Չիւնհրուշակ, (ձիւնով և ուրբով, զար նէլլասար). Նուշհրուշակ կամ Գուզհրուշակ (զօզ նէլլասար nougat). Եուշահրուշակ (սուսամ նէլլասար). Թերմհրուշակ (Պուղթէ նէլլա):

ԲԱՌԳԻՐՔԷՍ

ԱՌԱՄ. — ՄՐԳԻՆԻ ԳԵՆ ԵՆԱՐԻ, ՄԻՆԻՄԻՆ ԻՆՆԱՅԻ

ԿԻՐԱԿԻ. Դ՛. 24 Փետրվար—Շուկամ: Ն. Տ. 8 Մարտի ՀձՐ. 5 Սէֆէր:

✱ **ՀՅ. և Կ. ՀՅ.** Ա. կիրակի Բառանորդաց, Բուն Բարկենդանի **ՅՆ.*** Բուն Բարկենդանի Ս. Յովհաննէս Կարապետի զխումն զանուիրը: **ԼՏ.** Բառանորդաց կիրակի Ս. Յովհաննէս Աստուծոյ, կրօնաւոր:

ԵՐԿՈՒՇՐ. -Յ. 25 Փետրվար—Շուկամ: Ն. Տ. 9 Մարտի ՀձՐ. 6 Սէֆէր:

ՀՅ. և Կ. ՀՅ. Մեծ պահքին Ա. օրը. (Բակլա խորան), **ՅՆ.*** Ս. Տարասիոս Կ. Պօլխի հայրապետ, ՍՊրիտիա բանայիրի, **ԼՏ.** Ս. Փրանկիսկէ այրի:

ԵՐԵՒՇՐ. -Է. 26 Փետրվար—Շուկամ: Ն. Տ. 10 Մարտի ՀձՐ. 7 Սէֆէր:

ՀՅ. և Կ. ՀՅ. Մեծ պահքին Բ. օրը: **ՅՆ.** Ս. Պորփիրիոս եպիսկոպոս **ԼՏ.** Ս. Ս. Բառաուուն վկաներ Սերաստիոյ **ՏՃ.** Եօժը ցորեկ և ուժը զիշեր տևող պառաններու ցուրտին սկիզբը: **ՀՐ.** Մովսէսի մահուան համար կամաւոր ծով:

ԶՈՐՔՇՐ. ԲՅ. 27 Փետրվար—Շուկամ: Ն. Տ. 11 Մարտի ՀձՐ. 8 Սէֆէր:

ՀՅ. և Կ. ՀՅ. Մեծ պահքին Գ. օրը: **ՅՆ.** Ս. Պրոկոպիոս Դեկատալիսի վկայ. **ԼՏ.** Ս. Սովրոնիոս եպիսկոպոս:

ՀԻՆԳՇՐ. ԲԷ. 28 Փետրվար—Շուկամ: Ն. Տ. 12 Մարտի ՀձՐ. 9 Սէֆէր:

ՀՅ. և Կ. ՀՅ. Մեծ պահքին Դ. օրը: **ՅՆ.** Ս. Բասիլիոս վարդապետ **ԼՏ.** Ս. Գրիգոր Մեծ՝ Հռոմի հայրապետ:

ՈՒՐԱՍԹ. ԷՅ. 29 Փետրվար—Շուկամ: Ն. Տ. 13 Մարտի ՀձՐ. 10 Սէֆէր:

ՀՅ. և Կ. ՀՅ. Մեծ պահքին Ե. օրը: **ՅՆ.** Ս. Կասիանոս վարդապետ **ԼՏ.** Ս. Եւփրոսինէ միանձնուհի:

ՇԱՐԱԹ. ԷԷ. 1 Մարտ—Մարտ: Ն. Տ. 14 Մարտի ՀձՐ. 11 Սէֆէր:

ՀՅ. և Կ. ՀՅ. և ՅՆ. Ս. Թէոդորոս զօրավար Մեծ պահքին Զ. օրը: **ԼՏ.** Ս. Մամբրտէ Թագուհի **ՏՃ.** Երևոտական 1324 Թուականին Տարեմուտը:

ՅՈՒՇԱՏԵՏՐ

24 Փետր. Կիր. [55—311] կէս օր. 5. 56

25 Փետր. Բշ. [56—310] կէս օր. 5. 55

26 Փետր. Դշ. [57—309] կէս օր. 5. 55

27 Փետր. Դշ. [58—308] կէս օր. 5. 54

28 Փետր. Եշ. [59—307] կէս օր. 5. 53

29 Փետր. Ուր. [60—306] կէս օր. 5. 52

1 Մարտ Շր. [61—305] կէս օր. 5. 49

ՄԱՂԹԱՆՔ ԱՌ Ս. ՀՈԳԻՆ

Անդընդային ջուրերուն վրայ
Թուխս մ'ըլլալով վարագածն՝
Կամ կուրծք մը որ կը զուրգուրայ՝
Բոյն մը դըրիբ յաւերժատեւ
Ու ձընուցիր Վիճէն նախկին
Գունտը երկրի, յարկն երկընքին

Յետոյ իբրև շունչ մը բարի՝
Եղար ազգունն աշխարհներուն,
Պաշտելութեան ու հանճարի
Իղձ ու ցոլքեր ցանած ցըրուն՝
Ընտրեցիր մո'զն ու մարգարէն
Չօրսուրէն ու աբլարէն

Որ մ'ալ գետի մ'հոսանքին քով
Իբր երփներանգ պատկեր լոյսի՝
Ազանակերպ թըրթըռանքով
Տեսիլքն եղար Տէր Յիսուսի,
Վըրկայելով թէ մասնացուն
Քեզմով կ'ելլէր իր Աստուծուն:

Սյուսր ալ սուրբ վերնատան մէջ
Անպրոպներով փոթորկարեր
Իչար նըման բոցի մ'անշէջ՝
Որ լեզուներ կը թօթափէր,
Ու աբլիբ հո'ւր լուծն ու խըման
Արօրադիր քարոզութեան:

Ո'վ նորոգող հոգիներուն,
Անուշահոտ ու սըրբանուէր

Իզմիւր, 27 Ապրիլ 1907

Ծաւալումէդ այդ յորդորուն
Ընդունելով պէս պէս շնորհներ՝
Երկնածաշտակ կ'առնեն յագուրդ
Չեռք ու նակատ՝ գործ ու խորհուրդ:

Բն'ը ոյծ ու լոյծ խորը հոգւոյս
Գուրգուրանքիդ կուրծքն ու թեւեր,
Տո'ւր ինձ պըզտոր աչքերէ դուրս
Կայք մը ոտքի, նայուածք մ'ի վե'րս

Ու իմ վըրայ ալ հանգչեցուր
Ինաստուծեան'ըդ շունչն ու շող,
Որ չը վարէ զիս աղխագուր
Մոլորութեան ոգին յաղթող:

Մօտ հոսանուտ այս իմ մարմնի
Շողացուր վե'ն նըրկարդ ու թոխ,
Լուստիեսուր իբր աղանի,
Որ չը ձայնէ ազուա մ'իբ կոխչ...

Սա խառնախօս իմ շուրթներուն
Դպցուր կիզո'ւմը կայծակիդ
Որ իմանամ թէ ո'ր լեզուն
Հոգւոյդ թարգմանն է նշարխա:

Իսկ օծումէդ ի՞նչ կը պակսէր՝
Թէ պահէիր ինձ շի՞մ մը շնորհ...
Կ'ուզեմ, այո', Հոգւոյդ ի սէր,
Կ'ուզեմ ըլլալ հոգի մը նոր:

Եղիշէ, ԵՊՍ. ԴՈՒՐԵԱՆ



Լ. Լափաշ Ը. Վ. Մեղիկյան

ՔԱՌՈՒՂ ՎԱՆԱՆԴԱՅԻ. Եթիժ, վեճնական Ուխտէն Ծն. 1864 ապրիլ 4, Բերա.
1887 մայիս 19, ամբարձած ի կարգ քահանայութեան, Երբմնի խմբագրապետ
վեճնացի Հարց ռսումնաձերձին, եւ նախկին ուսումնապետ անոնց Բերայի վար-
ժարանին, Մագիստրոս հմմտկն. լեզուագիտութեան եւ հեղինակ «Արդի լեզուագի-
տութիւնը» բանասիրական երկին. 3 հատոր պատկ. Բնագրասմութեան, Ոսկեղառու
հայերէնի դեռ ձեռագիր քառարանին, եւայլն:



ԾՆՈՂՔԻ ԾԻԾԱՂՆԵՐ

Մօրն ու դաւակին միջև: «Եթէ այս ցոփ կեանքդ շարունակես, կ'ըսէր մայրը, թշուառութիւնն օր մը պիտի դայ դուռդ դարնել»: — Ես ալ չե՛մ բանար...

... «Զայց մեր հանապաղորդ՝ տո՛ւր մեզ այսօր»: Տղան հայր մերը կիսկատար կը թողու, և մօրը դառնալով՝ «Քանի մը շարթուանը մէկէն ուղէինք, աւելի լաւ չէ՞ր ըլլար, մայրիկ»:
— Չէ՛, դաւակ, սն ասնն թարմ հաց չէինք ունենար...

Դէպի ծերութիւն մօտենալու ասնն բարեպաշտ դարձած հայրմը ամուսնութենէ կ'ուղէր ետ կեցողնել իր մէկ հատիկ ազջիկը, Ս. Պօղոսի խոսքը կրկնելով. «Լաւ կ'ընէ մարդ՝ եթէ կարգուի, լաւագո՛յն՝ եթէ չի կարգուի»: Ազջիկը պատասխանեց. «Մենք լաւը թող քնելու ըլլանք, լաւագոյնն ալ կրցողը թող ընէ»:

Հօրմէն չեխ մը լսելէն վերջ, փոքրիկն Համբիկ՝ իր մօրը դառնալով. — «Մայրիկ, կարծեմ թէ մեծ սխալ մը գործեցինք՝ հայրիկը ամուսին առնելով...»:

Տղան. — Իրո՞ւ, մայրիկ, աղքատները դրամ չունեցող մարդեր են: — Այո՛, դաւակ:
— Անանկ է նէ ինչո՞ւ տաս-տասը բարա կուտան. ասիկա իրենց չօգտեր նէ...

Յուսահաս հայր. — Գիշերօթիկ դրինք, նորէ՛ն չաշխատիր կոր. մե՛ղք բարաներուն, մարդ ըլլալիք չունի:
Բարեկամը. — Ի՞նչ հողդ կ'ընես կոր այդչափ, քեզի՛ պիտի յաջորդէ:

— Սա մինիսիկ ոսկի ժամացոյցդ ինծի տուր՝ ե՛ս գործածեմ, ի՞նչ կ'ըլլայ, մամա:
— Կը խոստանամ որ օր օր մը ասիկա կուտամ քեզի:
— Այսօր ալ օր մը չէ՞:

— Հայրիկ, հորթը կովին դաւակն է:
— Հրամաներ ես: [— Հայրը ո՛վ է:
— Յուլը: [— Է՞րբ...
— Ե՞րբ... կըր... սն ալ հօրեղբայրն է:

ԿԻՐԱԿԻ. ԴՅ. 2 Մարտ—Մարտ, Ն. Տ. 15 Մարտ, ՀՃԲ. 12 Սէֆէր:
 ❀ **ՀՅ.** և **Կ. ՀՅ.** Բ. կիրակի Գառաանորդաց Մեծ պահքին Է. օրը, **ՅՆ.** Սր-
 Թոտորս եկեղեցիին տօնը, **ԼՏ.** Ս. Մատրնէ կոյս:

ՅՐԵՈՒՇԵՐ. ԴԷ. 3 Մարտ—Մարտ, Ն. Տ. 16 Մարտ, ՀՃԲ. 13 Սէֆէր:
ՀՅ. և **Կ. ՀՅ.** Մեծ պահքին Բ. օրը, **ՅՆ.** Ս. Ս. Եւարոսիոս և Կղոնիկոս վը-
 կաներ, **ԼՏ.** Ս. Կիրակոս վկայ, **ՏՃ.** Պատաներու ցուրտին վերջը, **ՀԲ.** Ես-
 Թերի համար ծով:

ՅՐԵՎՇԵՐ. ԿԶ. 4 Մարտ—Մարտ, Ն. Տ. 17 Մարտ, ՀՃԲ. 14 Սէֆէր:
ՀՅ. և **Կ. ՀՅ.** Մեծ պահքին Թ. օրը, **ՅՆ.** Ս. Երասիմոս եպիսկոպոս, **ԼՏ.** Ս.
 Պատրիկիոս Իսլանտայի եպիսկոպոս, **ՀԲ.** «Փուրիմ», Եսթերի յիշատակին տօնը,
 Շէքէր պայրամի Ա. օրը:

ՉՈՐՔՇԵՐ. ԿԷ. 5 Մարտ—Մարտ, Ն. Տ. 18 Մարտ, ՀՃԲ. 15 Սէֆէր:
ՀՅ. և **Կ. ՀՅ.** Մեծ պահքին Ժ. օրը, **ՅՆ.** Ս. Կոննոս վկայ, **ԼՏ.** Ս. Գարրիէլ
 ճրշտակապետ, **ՀԲ.** Շէքէր պայրամի Բ. օրը:

ՀԻՆԳՇԵՐ. ԿԸ. 6 Մարտ—Մարտ, Ն. Տ. 19 Մարտ, ՀՃԲ. 16 Սէֆէր:
ՀՅ. և **Կ. ՀՅ.** Մեծ պահքին ԺԱ. օրը, **ՅՆ.** Գառաունը երկու վկաներ Ամոր-
 կիոյ, **ԼՏ.** Ս. Յովսէփ Ատոռածածնար:

ՈՒՐԱՍԹ. ԿԹ. 7 Մարտ—Մարտ, Ն. Տ. 20 Մարտ, ՀՃԲ. 17 Սէֆէր:
ՀՅ. և **Կ. ՀՅ.** Մեծ պահքին ԺԲ. օրը, **ՅՆ.** Ս. Յովհաննէս Կարապետի նըշ-
 խարներուն զտնուիրը, **ԼՏ.** Ս. Յովակիմ Ատոռածածնի հայրը, **ՏՃ.** Չմտուան
 Բ. մասին յիսուն օրերուն վերջը:

ՇԱՐԱՍԹ. ԿՁ. 8 Մարտ—Մարտ, Ն. Տ. 21 Մարտ, ՀՃԲ. 18 Սէֆէր:
ՀՅ. և **Կ. ՀՅ.** Մեծ պահքին ԺԳ. օրը, Ս. Ս. Կիրեղ Երուսաղէմի հայրապետ
 և միւս Կիրեղ եպիսկոպոսն ու մայրը՝ Աննա, **ՅՆ.** Ս. Թէոփիլակոս եպիսկո-
 պոս, **ԼՏ.** Ս. Բենեփիկոս արքայ, **ՏՃ.** Պիւրծի Համէլ (խոյ), և Իմիտայը Բէ-
 պիի—(Գարնանամուտ և հասարակած, ջրեկ ու զիշեր հաւասար), ՊԱՐՍԻՅ, Նէվ-
 բուզ—ամանոր կամ նոր օր արքայական:

ՅՈՒՇԱՏԵՏՐ

2 Մարտ Կիր. [62—304] Կէս օր. 5. 48

3 Մարտ Բշ. [63—303] Կէս օր. 5. 47

4 Մարտ Գշ. [64—302] Կէս օր. 5. 46

5 Մարտ Դշ. [65—301] Կէս օր. 5. 45

6 Մարտ Եշ. [66—300] Կէս օր. 5. 44

7 Մարտ Ուր. [67—299] Կէս օր. 5. 43

8 Մարտ Շր. [68—298] Կէս օր. 5. 41

— Ձիկայ կին մը որ ուրիշին զաւակն իր զաւակէն աւելի սիրէ . բայց շատ կան անանկ կիներ՝ որոնք իրենց ամուսինէն աւելի կը սիրեն ուրիշին . . . ամուսինը :

— Եթէ տունէ մը էրիկմարդ մը պակտի՝ կատարուած յուզարկաւորութիւնն իրեն համար եղած է միայն . իսկ եթէ տանտիկինն է մեռնողը՝ թէ՛ իրեն և թէ՛ իր կազմած ընտանիքին յուզարկաւորութիւնն է որ կը կատարուի :

— Գոյնը՝ աչքին , բոյրը՝ ուռնդին , ձայնը՝ լսելիքին , համը՝ քիմքին , կինն ալ սիրտին հետ աղերս ունի :

— Ինչ որ է խորագիրը յօդուածի մը համար , նոյնն է դէմքը կանանց համար : Փայլուն խորագիրներու աակ միթէ ոչնչութիւններ չե՞նք ողջուներ յաճախ :

— Արիասիրտ կինը բարի՛ ալ կ'ըլլայ , քարսիրտ կինը չար կ'ըլլայ . իսկ բարեսիրտ կինը՝ դուցէ պատիւը վտանգելու հաւանակաւորութեամբ ազնիւ կ'ըլլայ :

— Իր բերնով «քեզ շատ կը սիրեմ» ըսող կնկան խօսքին հաւատք մի՛ ընծայեր : Մեծատունը «ես շատ զրամ ունիմ» կ'ըսէ՞ երբեք . և եթէ ըսելու ըլլայ՝ անպատճառ խաղ մը խաղալիք ունի քեզի , և կամ , շատ շատ , չգոյ բանի մը պուտախօսութիւնն է բրածը :

— Կինը ընտանեկան հորիզոնին վրայ կամարացող ծիածան մըն է , — Անդորրութեան խորհրդանիշ՝ որուն 7 գոյներուն անուններն են Սեւ , Խոհեմութիւն , Ազնուութիւն , Զգասութիւն , Բարութիւն , Համակերպութիւն եւ Հաւատարմութիւն : Երանի՛ այն «արեւով անձրեւ»ին որ այդ ծիածանը կը ձեւացունէ մարդկութեան վերեւ :

— Այրերն ամուսնացած ատեննին աղջիկներէն կը պահանջեն՝ ինչ որ դո՛ւն ուրեք ունին իրենք . Դրամ և Կուսութիւն :

— Պատուհանէն անբաժան կինը՝ այգիներու ցանկապատէն երեւցող սրգատունկի պտուղին կը նմանի . է՛ն պարկեշտ անցորդն իսկ պիտի փորձուի ճիւ մը փրցունել անյուշտ . . . եթէ պարագաները նպատաւոր ըլլան :

[Իր ձեռագիր երկասիրութեանը]

ՍԱՐԴԻՍ Ս. ՍԱՔԱԵԱՆ

Եթէ շուն մը կամ հնդկախոզ մը (քօպայի) դնենք զետօյէն վար 92 աստիճան չոր մթնոլորտի մը մէջ, առաջին վայրկեանէն շնչառութիւնը և սիրտին զարկերը կ'երազեն, մարմնին ջերմաստիճանը թեթեւ մը բարձրանալով: Կենդանին տաղնապի նշաններ ցոյց կուտայ: Յետոյ, շնչառութիւնը՝ յաճախակի, արեան շրջանն ալ արտաբլլալով, ջերմաստիճանը բնական վիճակին կը վերադառնայ, անօթութիւնը կ'զգացուի ու կենդանին անյագարար կ'ուտէ կերակուրները՝ զորս փորձէն առաջ կը մերժէր: Բայց իսկոյն ծայրանդամները կը պաղին: Ատնն մը կ'անցնի այս փոփոխութիւնէն և կ'առաջնորդուի, երբ մէկէն մէկ շնչառութիւնն ու զարկերը կը դանդաղին, մարմնին ջերմաստիճանն արագօրէն կ'իջնայ, կենդանին կը կորսնցունէ գիտակցութիւնն ու մահը կը հասնի: Տ քիլոնոց շուն մը 2 ժամ չի տեւած՝ մեռած է:

Այս երևուոյթին պատճառն այն է որ կենդանին՝ ճառագայթումով աճողին տաքութեան մը կորստեամբ, կենդանական ջերմութիւնն արատաւորօղ պաշտօնները—շնչառութիւն, արեան շրջան, մարտոգութիւն,— կը զրգուտին՝ զէնը գոցելու համար: Ճարպն ու զօղիչ նիւստածները կը ծծուին արագօրէն, որպէս զի հարկ եղած այրելի նիւթերը հայթայթեն: Տեսակ մը պայքար որ կ'սկսի ջնջման պատճառին դէմ:

Եթէ կեդրոնական ջերմաստիճանը 8-9 լջած է, սիրտին բարախումը զաղբելով՝ մահը վրայ կը հասնի:

* * * Անուշ ջուրի ձուկերը 0 էն վար 8-15 աստիճան կրնան աղբիլ: Գորտերը՝ 28', պղտիկ անփեաս օձերը (orveti)՝ ապրած 25', սառկած՝ 35', օձատանդրը (scolopendre)՝ ապրած 50', սառկած 90': Խըզուցը մինչև 120' կրնայ դիմանալ, եթէ պատեանին մէջ աղէկ փակուած է:

Թուշուշի հաւկիթներն 2' ին՝ թուխսի կարողութիւննին կը կորսնցունեն. գորտինները՝ 60' էն սուելի: Մրջիւնինները 5' ին կը մեռնին: Շերամբինները մինչև 40' կը դիմանան, եթէ ամուելէն անմիջապէս վերջը պաղեցունեն զանոնք: [Իրտուած է որ այսպէս պաղեցուածները նիւստութիւններու նուա՛ղ արամաղիւր որդեր կուտան]:

Մանրագիտական ջրածին որդերը (infusoires) 60 աստիճան սառի կտորներու մէջ կը չքանան: Միքրոպի, պասիլի, գունտ մանրէի և լօսի մէջ ապրող մանրաձիւներու սերմերը սակայն կ'արհամարհեն է'ն սաստիկ ցուրտերը, նոյն իսկ 200' ի ցուրտի մէջ մնալով: Երջանիկ պաղարիւններ:

Տանտիկին մը որ իր հրաւիրեալներուն սիրուն անակնկալ մը կը փափաքի պատճառել, կրնայ ազանգերի ատեն հրամցունել անոնց պտուղներ որոնց վրայ ԱՐԵՒԷ պիտի գրած ըլլայ իրենց անուններուն սկզբնատառերը :

Այս ստեղծուածային երեցող խօսքը լուսարանելու համար պէտք է գիտութեան զիմուժ ընել նորէն : Յայտնի է թէ ինչ ազգեցութիւն ունի լոյսը՝ գունաւորիչ նիւթերն երեւան բերելու մասին : Արեւադարձային երկիրներու թռչուններ այլապէս փայլուն փետուրներ ունին՝ քան թէ մեր կլիմաներուն օգազնայները : Կէս մթութեան մէջ պահուած բուսեղէններ անփայլ ու անգոյն ծաղիկներ կ'ունենան . ճերմակ ազցաններ ունենալ ուզող պարսիզպանն ալ կը ծածկէ զանոնք, անոնց կուրծքը կը պարտըկէ, որպէս զի արգիլէ կազմութիւնը տերեւականաչին (chlorophylle) :

Արեւի միջոցաւ պտուղներու վրայ տառեր գրուած ունենալու համար գործագրուելիք կերպն ալ շատ տարբեր չէ : Հնար եղածին չափ ընտրել ա՛յնպիսի պտուղներ՝ որ հասունալու ատեն վառ երանգներով օժտուած ըլլան, — ինչպէս խնձորին տեսակները, — և երբ բաւական խոշորցած ըլլան՝ անոնց՝ երեսին փակցունել թուղթէ շինուած զիրեր՝ որոնցմով մեր սիրելիներուն անունները կը կապուին . այսպէս Օ (Օննիկ), Ս (Սէրչօ), Ա (Արտեսակ), Մ (Մատի) և շն : Երբ պտուղները հասունանան, թուղթը վրաներնուն հանել և կարմիր յատակի վրայ ճերմակ զիրով որոշ պիտի երեւան տառերը, փան զի լոյսէ զրկուած կէտերուն վրայ գունաւորիչ նիւթ չէ կազմուած : Ասոր հակադարձն ալ կարելի է գործել և լուսանցոյցի պէս հատուածածեւ հանել (découper ajour) տառերը թուղթի մը վրայ՝ որուն մէջ գրէթէ ամբողջովին փաթթուելու է տանձը կամ խնձորը : Լոյս տեսնող մասերը պիտի կարմրին խնձորին վրայ, պիտի թխանան ասնձին վրայ, ու թուղթը վերցուած ատեն՝ ճերմակ յատակի վրայ գունաւոր սկզբնատառեր պիտի երևին : Խիստ հետաքրքրական արգիւնքներ կարելի է ձեռք բերել նաեւ, պտուղներուն վրայ փոխանակ զիրի՝ փակցունելով մարդու, անասունի և ծաղկանց ստուերածեւութիւններ, թուղթի մէջ կարտուած :

* * *

[1909ին՝ պիտի խօսինք ելեկարական հոսանքի միջոցաւ վարդին կամ անոր թերթերուն վրայ անուն գրելու մասին] :

— ** Աշխարհիս բոլոր քաղաքներուն մէջէն՝ Չիքակոյի «Ուէսթըրն ալընիս»ն է որ 22 մղոն երկայնութիւն ունի: Ահաւասիկ է՛ն երկայն փողոցը՝ տիեզերքիս վրայ:

— ** Աշխարհիս է՛ն հին թերթը—ժամանակագրական կարգով,— առանց այլ և այլի՝ «Քինկ Բաս»ն եղած է, Բէքլինի լրագիրն որ պաշտօնաթերթն էր Չինաստանի և որ ձրի կը բաշխուէր բարձրաստիճան մանտարիններու, իսկ դրամով՝ հասարակ ժողովուրդին: «Քինկ Բաս»ն հանապազօրեայ էր, 18 սանգիմէթր երկայնութեամբ և 10 սնթ. լայնքով 12 կիսաթերթերով ու վարդագոյն չըջագիծերով: Անցնիւր սիւնակ սովորաբար 14 նշանագիր կը պարունակէ:

— ** Աշխարհիս է՛ն շատ ծխողները Հոլանտացիք եղած են: Իրենց երկրին խոնաւութիւնը դրէթէ անհրաժեշտ դարձուցած է ստ, և ծխախոտին շատ չափաւոր գինն ալ՝ զիրբամաշկի: Գաղափար մը տալու համար թէ ի՛նչ աստիճան արմատացած է այդ սովորութիւնն իրենց մէջ, կը բաւէ ըսել որ հոլանտացի նաւավար մը րբ և է հեռաւորութիւն ծխելով կը չափէ: Ասկէց, կ'ըսէ, ան ինչ տեղը չէ՛ թէ սաչափ մղոն է, հազա նա՛ չափ ծխամորձի տեւողութիւն. այսինքն այդքան տեղ նաւարկելու համար 5 կամ 9 ծխամորձ կը քաշուի: Աս երկիրին տղաքն անգամ յարածամ սիկաւ կը ծխեն: — ** Աշխարհիս վրայ Իսլանտա կղզին է միայն որ ուստիկան չունի: — ** Աշխարհիս է՛ն մեծ արձանը — բարձրութեան տեսակէտով — կը գտնուի Թոքիօ. փայտէ շինուած է. երկայնքն է 54 ոտք (մէկ ոտքը մօտաւորապէս 30½ սանգիմէթր է): Այս սուկափիթխար արձանին գլուխն ա՛յնքան լայն է որ՝ մէջը 24 հոգի հանգի՛ստ կրնան սղմիլ: Ճարտնական «Պատերազմի չաստուած»ին՝ Հաշիմանի ՚ի պատիւ կառուցած են դայն: — ** Աշխարհիս է՛ն շատ լուցիկ արտագրող վայրը Շուէսն է. գործածուող լուցիկներուն 3/4 ն այս երկիրն է որ կուտայ: — ** Աշխարհիս է՛ն մեծ հեռադէտը կը գտնուի Հարվարս՝ Միացեալ Նահանգներու մէջ. բայց Անգլիոյ մէջ շինուած է ան՝ հանրածանօթ աստղաբաշխէ մը, Գոմն անուամբ: Այս հեռադէտին բերանը հինգ ոսնաչափէ: — ** Աշխարհիս մէջ եօթը հարիւր իննսունը ս'ւթը տեսակ վարդ կայ: (Երանի դանոնք մէկիկ մէկիկ հօտտողներուն): — ** Աշխարհիս բոլոր եղաւկան վիճակագրութիւններուն հաւաքածոն պատրաստելու համար սակայն՝ պէտք է լեռնակուտակ թուղթ և... Մաթուսողայի տարիք:

ԵՐԻՍԱԿԻ. Գ: 9 Մարտ=Մարթ: Ն. Տ. 22 Մարտ: ՀձԲ. 19 Սէֆէր:
 * ՀԹ. և Կ. ՀԹ. Գ. կիրակի Գառանորդաց, Մեծ պահքին ժԳ. օրը: «Անա-
 ռակ»: ՅՆ.* Ս. Ս. Գառատուն մանուկներ Սերաստիոյ ԼՏ. Ս. Եպսկոպոս
 տոս առարեալ:

ԵՐԿՈՒՇԲ. Դ: 10 Մարտ=Մարթ: Ն. Տ. 23 Մարտ: ՀձԲ. 20 Սէֆէր:
 ՀԹ. և Կ. ՀԹ. Մեծ պահքին ժՆ. օրը: ՅՆ. Ս. Կողրատոս վկայ: ԼՏ. Ս. Կիւ-
 բեղ Երուսաղէմի հայրապետ:

ԵՐԵՅՇԲ. Դ: 11 Մարտ=Մարթ: Ն. Տ. 24 Մարտ: ՀձԲ. 21 Սէֆէր:
 ՀԹ. և Կ. ՀԹ. Մեծ Պահքին ժՁ. օրը: ՅՆ. Ս. Սոփրոնիոս եպիսկոպոս: ԼՏ.
 Ս. Սիմէոն մանուկ վկայ:

ԶՈՒՐՇԲ. Ե: 12 Մարտ=Մարթ: Ն. Տ. 25 Մարտ: ՀձԲ. 22 Սէֆէր:
 ՀԹ. և Կ. ՀԹ. Մեծ պահքին ժԷ. օրը: ՅՆ. Ս. Թէոփանոս վարդապետ: ԼՏ.*
 Աւետում Ս. Աստուածամերի:

ՀԻՆԳՇԲ. Զ: 13 Մարտ=Մարթ: Ն. Տ. 26 Մարտ: ՀձԲ. 23 Սէֆէր:
 ՀԹ. և Կ. ՀԹ. Մեծ պահքին ժԸ. օրը: ՅՆ. Ս. Նիկեփորոս արքեպիսկոպոս:
 ԼՏ. Ս. Լուղզերիոս լուսաւորիչ Սարսոնիոյ:

ՈՒՐԲԱԹ. Է: 14 Մարտ=Մարթ: Ն. Տ. 27 Մարտ: ՀձԲ. 24 Սէֆէր:
 ՀԹ. և Կ. ՀԹ. Մեծ պահքին ժԹ. օրը: ՅՆ. Ս. Բենեդիկտոս արքայ: ԼՏ. Ս.
 Յովհան Դամասկացի վարդապետ:

ՇԱՐԱԹ. Ը: 15 Մարտ=Մարթ: Ն. Տ. 28 Մարտ: ՀձԲ. 25 Սէֆէր:
 ՀԹ. Մեծ պահքին Ի. օրը: Ս. Ս. Յովհաննէս Երուսաղէմի հայրապետ, Յով-
 հաննէս Իմաստաւէր Օձնեցի հայրապետ, Յովհաննէս Որոտնեցի և Գրիգոր Տաթե-
 ւացի վարդապետներ: Կ. ՀԹ. Ս. Յովհաննէս Երուսաղէմի հայրապետ: ՅՆ. Ս.
 Ազապիոս վկայ: ԼՏ. Ս. Գոնտրանոս Թագաւոր: ՀԲ. Ապիպ=զարնանամուտ

ՅՈՒՇԱՏԵՏՐ

9 Մարտ Կիր. [69—297] կէս օր. 5. 40

10 Մարտ Բշ. [70—296] կէս օր. 5. 39

11 Մարտ Դշ. [71—295] կէս օր. 5. 38

12 Մարտ Դշ. [72—294] կէս օր. 5. 37

13 Մարտ Եշ. [73—293] կէս օր. 5. 36

14 Մարտ Ուր. [74—292] կէս օր. 5. 35

15 Մարտ Շր. [75—291] կէս օր. 5. 34

Փ Ո Ւ Ր Ս Ի Շ

Ի՞նչ է սխալումք. — Շաս նեղ ու պզտիկ օրջանակ մը՝ որուն մէջ կը յաւա-
կնիմք ուրիշները մտցունելի:

— *Ի՞նչ է յուսահասութիւնք.* — «Ես» ինձ մտացումք:

— *Անձնասպանութիւնք կապա.* — «Ես» էն հրածառումք:

— *Ի՞նչ է պերճամբք.* — Ինքնամանին մի՛ակ միջոցն՝ իրե՛ն ֆաշելու համար
անմիտներուն նայումսք:

— *Ի՞նչ է ծուրուրիւնք.* — Մարմինի՛ն խմբարութիւնք մինչ բուն Տխմարու-
րիւնն ալ միտքի՛ն ծուրութիւնն է:

— *Ի՞րն է խեղացութիւնք.* — Ունենալ դանդաղ լեզու մը եւ միւր ակամօքներ:

— *Ի՞նչ տարբերութիւն կը տեսնուի Մեղուի մը եւ Կնոջ մը միջեւ.* — Առա-
ջինն իր միտածութեամբը կը մտնանայ, իսկ միւսն անո՛վ կ'անմտնանայ:

— *Ի՞նչ է ժամանակք.* — Բարեկամութեան բարեկամք, եւ Սիրոյ բեճամինչ:

— *Ի՞նչ է բաղձանի մը իրականութիւնք.* — Երջանկութեան պայտանք:

— *Որո՞նք են ճշմարիտ յատուկարուսներք.* — Ազանն՝ իր ոսկիներով, եւ
աղբանն՝ իր սիրտովն ու . . . զուակներով:

ԳՈՂԱՐՆԵՐՈՒ ԼԵԶՈՒՆ

Յուշապակ, օդ, զարդանդ, ապրնջան, մանեակ ու մասնի իրենց ճանաչ-
ներուն վերեւ կը կրեն այն թանկագին քարերն որոնք իրենց գունազոյ գողգո-
ղումներով՝ մշտմայիտ փառքն են պերճանքի աշխարհին, եւ որոնց սիրելի թա-
զըսօցն է թաւիշէ սփիլը, Համասեղութեանց պէս՝ զիշերը միայն կը փայլին
անոնք, ու ցորեկին — երբ յաջողին արեւի ճամանջ մը գողնալ — հազիւ խու-
սափուկ շողք մը կը ցոյայ իրենց ակնակապիճներէն: Ո՞ր կլինն է ան որ չը սիրէ
գոհարները, քարէ այդ ծաղիկներն որ կոչուած են կարծես շէնք ու շնորհք տա-
լու իզական զեղեցկութեան: Գիտէ՞ք թէ ասոնք ալ ծաղիկներուն պէս իրենց
մասնաւոր լեզուն ունէին. թուենք մէկ քանին:

Աղամանդ. — Խորհրդանշան Տարիանքի:
Ակաս. — Երկարակեցութեան:
Ակնվանի. — Վնիտ հոգիի:
Ամերոյս. — Հմտութեան:
Արևաակն. — Կանացի շնորհներու:
Բուս. — Անդորութեան:
Գագաս. — Սուգի:
Դահանակ. — Սպասումի:
Զմրույս. — Յոյսի:
Լուսաբար. — Տխրութեան:

Լուսնաբար. — Միանութեան:
Լրջաբար. — Միտքի պարզութեան:
Կայծ. — Երջանկութեան:
Շափիւղայ. — Եռանդի:
Մարգարիտ. — Արգունի:
Պերոզակ. — Անմտացութեան:
Սար. — Բաղբուրութեան:
Սուսակ. — Ուղղամտութեան:
Տպազուն. — Շեղութեան:

ԱՌՄՅՐ. — Կ—Լ Գ—Ը Թ—Ր Է Գ—Ը:

ՀԵՏԱՔՐՔՐԱՇԱՐԺ ԹԻՍՈՒՄՆԵՐ

* Տաք կլիմայի կենդանիներէն ջայլամը (autruche «տէվէ գուշը») իր հաւկիթները կը զետեղէ կիզիչ արեւին տակ տարածուող աւազուտին մէջ . իսկ եթէ հոն ջերմութիւնն անբաւական ըլլայ սաղմնային կազմակերպութեան , այն ատեն էգ և արու ջայլամները փոխն ի փոխ կը թխսեն հաւկիթներուն վրայ , մինչև որ բարեխառնութիւնը հասնի բաղցացուած աստիճանին : * Փիւնիկը (phénix «անքա») իր կոնաձև կամ բրգաձև բոյնը կը շինէ բուսական այլևայլ նիւթերով , ուր կը թխսէ միամիայն գիշերները . սակայն բոյնին այս մասնաւոր ձեւն անանկ մակերես մը կը ներկայացունէ որ կ'ապահովէ գիշերը ստացուած տաքութեան յարատեւութիւնն՝ առատունէ մինչև իրիկուն : * «Թալէկալ» անուն աւստրալիական թըռչունն իր հաւկիթները կը զետեղէ բուսական և պէսպէս խմորելի նիւթերով շինած իր դէղին մէջ՝ առանց երբևք թխսելու . սակայն խմորումէն յառաջ եկած ջերմութիւնը կը բաւէ իր վառեակներուն կազմութեանը : * Եզիպտացիք մասնաւոր փուռերու միջոցաւ , ուրիշներ՝ հաւկիթներ աղբի մէջ թաղելով կրցած են տեսնել վառեակներու ձուելքը : * Իրենց համբերութեամբ յիշատակելի են նաև մեր հայ խաթուններն ալ , որոնք կրցած են իրենց անութներուն տակ 21 օր շարունակ հաւկիթ պահել և վառեակներ յառաջ բերել : * Այս բոլորէն վերջ , պատմենք թխսումի անլուր և նորօրինակ դրութիւն մը որ խիստ գործնական եղանակ մը ստացած է Փիլիպպիններու Լեւսոն քաղքին «թակալ» կոչուող հնդիկներուն քով : Այդ երկրին մէջ՝ մարդերն են որ կը լրացունեն թխամայրերու պաշտօնը , տեսէք թէ ինչպէս .— Թխսող մարդը թխսումի ամբողջ տեւողութեան միջոցին կը փակուի փեթակի ձեւն ունեցող յարդէ խրճիթի մը մէջ զոր կը զետեղեն խոնաութենէ զերծ , հովերէ պատասպարուած և արեւին ճառագայթներուն ենթակայ տեղ մը : Թխամարդը հաւկիթները հեքացանցի մը մէջ դնելով՝ իր կուրծքին վրայ կը կապէ ու մինչև որ ձուելքի ժամը (21 օր) հասնի՝ երբևք չի բաժնուի խրճիթէն , իր օրական սնունդը ստանալով հիւղակին վրայ բացուած պզտիկ նեղկրճուկ անցքէ մը : Բոլոր այս երեւոյթները բացորոշապէս կը հաստատեն թէ առանց հաւի՝ վառեակներ ծնցունել կարելի է :

Իւսկիւսար 22 մայիս 1907

ՀՐԱՆՏ ՏԱՆՅԻԿԱՆ

ԱՌ-ԱՅՐ. — ԱՆԿԵԼԻՎ ԿՐԻՒՆ՝ ԵՆԵԼԻՎ ԳԵՂՈՎ

** Վոլթէսի օրով՝ թիթեղագործ մը անոր գործերը կարգալով անհուն փափաք մը կ'զգայ հեղինակը տեսնալու։ Անոր բնակարանը հասնելուն՝ ծառան կը դժկամակի զինքը ներս ընդունելու։ Վոլթէս պատուհանն էր, և տեսնելով փնթի հագուստներով ատ մարդուն իրաւցունէ՛ փիլիսոփայիկ երեւոյթը՝ կը հարցունէ իր ս'վ ըլլալը։ Թիթեղագործը վարէն վեր՝ հպարտի շեշտ մը տալով իր ձայնին։

— «Ձեզի պէ՛ս կ'ընեմ, կը պատասխանէ, աշխարհը կը լուսաւորեմ... լապտերներ շինելով»։ Կ'ըսեն թէ «Խեղացի Դաւիթ» ին այս կատակը սիրալիր ընդունելութիւն մը չահեցուց իրեն։

** — Սա մարդը կր'կնապէս գիտուն մը ըլլալու է, — կ'ըսէր Խեղացի Դաւիթ՝ շիւ մարդու մը ընթերցումը դիտած ատեն, — որովհետեւ երկու էջը մէկանց կրնայ կոր կարդալ։

** — Երկու քնիդ այդպէս ո՛ւր կ'երթաք, հարցուց Դաւիթ՝ ճամբան իր էջը քչող աղօրեպանի մը հանդիպելով։

— Երեքնուս համար խոս փնտռելու...։

** Ագարակապան մը կը գանգատէր թէ խուրդներն իր գեղեցիկ մարգագետինը աւերեր էին։ «Սալարկեցէ՛ք, մէյմըն ալ չեն կրնար ընել» խրատ տուաւ Դաւիթ։

** Դաւիթ զակկին հետ՝ գետեզրը կեցած։ — «Հայրիկ, ո՛ւր կ'երթայ աս ջուրը»։ — «Ծով»։ — «Բանի որ գետերը ծով կը թափին, ինչպէս կ'ըլլայ որ ծովը չը յորդիր»։ — Ծովին տակը շատ մը սպունգներ կան՝ որ յորդելիք ջուրը կը ծծեն...։

** — Քոյր մը ունի՞ք դուք, Օրիորդ։

— Այո՛, պարոն Դաւիթ, մէկ հատ։

— Զարմանալի բան. նոյն հարցումը ձեր եղբորն ալ ըրի, ըսաւ թէ երկու հատ ունէր...։

** — Շատոնց է, ըսած է՛ր որ 38 տարու եմ. հիմայ 40ը մտած ըլլալու ես։ [= Դաւիթ. — Ամմենեւ ին։ Երբ մէկ տարին զայ՛ միւսը կ'երթայ... և հաշիւը միւսնոյնը կը մնայ։

** — Ա՛ս ինչ է, կօխկնեռուս մէկը մենծ, մէկը պզտիկ...։

Դաւիթ. — Իրաւ որ չեմ գիտեր, վարն ալ զոյգ մը կայ որ ասոր պէս է... ինտօր կ'ըլլայ։

ԿԻՐՍԱԿԻ. 43. **16** Մարտ—Մարթ, ն. Տ. 29 Մարտ, ՀձԲ. 26 Սէֆէր,
 ✕ **ՀԹ.** և **Կ.** **ՀԹ.** Դ. կիրակի Քառասնորդաց: Մեծ պահքին ԻԱ. օրը «Տնտես»:
ՅՆ. Ս. Սարինոս վկայ: **ԼՏ.** Ս. Ս. Վիկտորինոս և Պաստորիոս վկաներ:

ԵՐԿՈՒՇԲ. 44. **17** Մարտ—Մարթ, ն. Տ. 30 Մարտ, ՀձԲ. 27 Սէֆէր,
ՀԹ. և **Կ.** **ՀԹ.** Մեծ պահքին ԻԲ. օրը: **ՅՆ.** Ս. Ալեքսիս կամաւոր աղբատ:
ԼՏ. Ս. Յովհաննէս Կլիմարոս:

ԵՐԵՔՇԲ. 45. **18** Մարտ—Մարթ, ն. Տ. 31 Մարտ, ՀձԲ. 28 Սէֆէր,
ՀԹ. և **Կ.** **ՀԹ.** Մեծ պահքին ԻԳ. օրը: **ՅՆ.** Ս. Կիւրեղ Երուսաղէմի հայրա-
 պետ: **ԼՏ.** Ս. Բայրինէ վկայուհի:

ՉՈՐՔՇԲ. 46. **19** Մարտ—Մարթ, ն. Տ. 1 Ապրիլ, ՀձԲ. 29 Սէֆէր,
ՀԹ. և **Կ.** **ՀԹ.** Մեծ պահքին ԻԴ. օրը: Միջինք: **ՅՆ.** Ս.Ս. Քրիստանդոս և Դա-
 րեն վկաներ: **ԼՏ.** Մակար արքայ:

ՀԻՆԳՇԲ. 47. **20** Մարտ—Մարթ, ն. Տ. 2 Ապրիլ, ՀձԲ. 1 Բէպիւլ էվվէլ,
ՀԹ. և **Կ.** **ՀԹ.** Մեծ պահքին ԻԵ. օրը: **ՅՆ.** Ս. Ս. ձգնաւորներ Սարայի վան-
 քին: **ԼՏ.** Ս. Փրանկիսկոս Պաւլոպեցի: **ՀԲ.** Նիսանի ամսամուտ. կրօնական տա-
 րեզուլս:

ՈՒՐԲԱԹ. 48. **21** Մարտ—Մարթ, ն. Տ. 3 Ապրիլ, ՀձԲ. 2 Բէպիւլ էվվէլ,
ՀԹ. և **Կ.** **ՀԹ.** Մեծ պահքին ԻԶ. օրը: **ՅՆ.** Ս. Յակոբ վարդապետ: **ԼՏ.** Ս.
 Հոլբարդոս եպիսկոպոս: ԱԶԱՐԻԱՅԻ փոքր Թուականին՝ **293** ի տարեմուարը,
 Հին տամարի համեմատ՝ զարնանամուտ:

ՇԱԲԱԹ. 49. **22** Մարտ—Մարթ, ն. Տ. 4 Ապրիլ, ՀձԲ. 3 Բէպիւլ էվվէլ,
ՀԹ. և **Կ.** **ՀԹ.** Մեծ պահքին ԻԷ. օրը: Ս. Ս. Քառասուն մանուկ վկաներ Սե-
 րաստիոյ: **ՅՆ.** Ս. Բաիլիոս վկայ: **ԼՏ.** Ս. Ամբրոսիոս հայրապետ:

ՅՈՒՇԱՏԵՏՐ

16 Մարտ Կիր. [76—290] Կէս օր. 5. 33

17 Մարտ Բշ. [77—289] Կէս օր. 5. 32

18 Մարտ Գշ. [78—288] Կէս օր. 5. 31

19 Մարտ Դշ. [79—287] Կէս օր. 5. 29

20 Մարտ Եշ. [80—286] Կէս օր. 5. 28

21 Մարտ Ուր. [81—285] Կէս օր. 5. 27


22 Մարտ Շր. [82—284] Կէս օր. 5. 26

Բանին՝ շրջանակալի ստամոսից բացած ախորժակը սրած բլլալու համար, ժիզիմապէս սրճան սնանկներ իրենց կենսական նիւթերուն բացը գոցելու յոյսով՝ հաւերէ առաջ կամ վերջ դիմում կ'ընեն ախորժակը (apéritif) կոչուած բնականներու, որոնք բնականապէս բուսաւոր անճան ալիւններէ եւ զնդեր ու ջիւղ զնցող բոյսերու մզածոներէ (essence) պատասխանած են: Թուրքի գլխաւորները [Գինին, օղին ու զարեչուրը քէ՛ իրենց բաղկացութեամբ, քէ՛ պատասխանութեամբ եւ քէ՛ զործածութեամբ «ախորժակներ» են զաստիակարգին մէջ չեն մտնիր]:

Օշնդրոյի (absinthe) կը բաղկանայ զոպայ (զուժալի, սամիր (բեզել) ի, անիսոնի, բարձուենիկ (օղալ օրը) ի, բոխնի (մէլայի օրը) ի եւ զինճ (փեհի) ի մզածոներէ ու վարնոց ալիւններէ: *Բարկոյի* եւ *Դաւուկոյի* (bitter & amer picon). առաջիններուն վրայ անանիս, յիլիկ (ժրնիկ) եւ մեխակ աւելցունելով: *Օշնդրագինի* (vermouth). միւսներուն պարունակածներէն զոս, մէջը կը զսնուի սերնիկ (փանթրոնիս) եւ վայրի անանիս. փոխանակ ալիւնի՝ ներակ զինիով շինուած է: *Խնճրոյի* (cidre). խնճորի փամուխն խմորուածն պատասխանած է: *Տանձոյի* (poiré). տանձի փամուխն խմորուածն: *Կարսուչոյի* (chartreuse). բուրբիջլան (մէլիտ) ի, զոպայի, բոխնիի, զարեչենիկ (բառչիկ) ի, մեխակի, քրքում (զաճուան) ի եւ բուրակ (մեկրնիկոյի ներքին կեղեւ) ի՝ ալիւններու մէջ քրքոց դրուելէն: *Գիոյի* (gin) եւ *զարոյի* (whisky). Անգլիա եւ Ամերիկա՝ արմատէն ու յիլիկէ շինուած խմորեալ բնականներ:

Գևասոյի (kirsch) կեռասի ու վայրի կեռասի փամուխը՝ 1 ին 4 չափով ալիւններու հետ խառնուած: *Չամանոյի* (kummel). չաման (փնեօն) ի հունճէ պատասխանած զերմ. եւ ուռ. բնական: *Շաբարոյի* (rhum). ճամայիփա՝ ալիւն ու շաբարի փամուխէ շինուած բնական: *Բարկոյի* (curacao). բուրբիջի կեղեւանի, շաբարի եւ օղիի բաղադր.: *Գինոյի* (cognac). Քրն. համանուն փաղաք շինուող, եւ կաղնիփայտէ սակառներու մէջ պահուելով՝ անոնց դեղին գոյնը ստացող բնական: *Անիսոյի* (anisette). անիսոն, շաբարի եւ օղի: *Բարկոյի* (marasquin). սալորէ եւ դեղձէ շինուած սալմացիական բնական:

Այս ախորժակները փոխանակ խաղողէ արտադրուած «ալիւն էրիլիֆ» պարունակելու, առ հասարակ պատասխանած են արմատէ, հակընդդէ, յարդէ, զնճանխնճորէ, բնդեղներէ, զործարանաւոր նիւթերէ [ոսկոր, եղջիր եւլն.] եւ զնոցաններէ ելած ստրիկ եւ շաբար մնասակար եղող գիններէ որ կը կոչուին «մէրիլիֆ», «պիլիլիֆ», «բոօրիլիֆ» եւ «ամիլիֆ»: Օղին, զինին ու զարեչուրը միմիայն իրենց պարունակած խաղողախեալ խաղողի ալիւնին համար է որ վնասաբեր նկատուած են: Վիճակեալ այս ախորժակները քէ՛ իրենց վարնոց ալիւններուն եւ քէ՛ բուսաւոր մզածոներուն պատասխանալ կրկնապէս բնամի են առողջութեան: «Ամենուն Տաւեցոյցը» ընթերցողներուն դիտել կուսանք քէ այս բնականներն որ մը մանաբէր բլլալու պայմանաւ ախորժակներ են: Մի՛ խաբուիք անոնց մեծաւիճի ու իշխաններէն, որոնք ամէն ինչ կը խոստանան բաց ի... առողջութենէ: Ախորժակը կար-



Հասարակական գործիչ

Ծն. 1858 ապրիլ 20 Իսկիւսար, Բարիզի բժշկական վարժարանէն վկայուած 1884 Նոյեմբեր 14: — Դեր-Նախագահ Կայս. Բժշկական Ընկերութեան. անդամ Քաղաքապետութեան Առողջապահական Բարձրագոյն Ժողովի, եւ Բարիզի բժշկա-պատեանական Ընկերութեան Հեղինակ «Ուսումնասիրութիւններ հայ բժշկական մեռագիրներու», «Թրքահայ, հնդկահայ եւն. 45 հին բժիշկներու կենսագրականներ», «Տրմ. Սէրվիլէն», «Դիեցում» զիրքերուն, եւն. եւն. Officier d'Académie պատանշանին արժանացած:

Թ Ո Յ Ն Ե՛ Ր Ե Ն

ծուած այս ըմպելիներուն գործածութեան նաւակահարը 1-2 գաւաքիկով կ'սկսի ու կը յանգի... ալիումալուրեան : Իրենց գէշ ալիումներն ու բուս . բաղադրութիւնը միայն ստանալու չէ՛ որ կը զգուեն, յանախ ուղեղն ու չիլերն ալ, եւ սարին հազարաւոր հոգի յիմարանց կ'առաջնորդեն : Շատ անգամ ալ այդ քոյներն ա՛ն սասիան յառաջ կը սանին բոներուն բորբոսմը, արիւնն ալ զանոնք ա՛յնչափ սկաւ կը սնուցանէ որ՝ կարելի չէ բոխախէ չի բռնուիլ : Նոր վիճակագրութիւն մը կ'ըսէ քէ 170 բոխասաւորներու 130ը պատէնքի նման դպած սեղերնին փնացումով ըմպելիներու բաժանորդներ եղած են : Հապա ախորժաբերներուն յառաջ բերած՝ աղէտնե՛րը, — ոնիր եւ անճանապանութիւն : Եթէ միսիքարական պարագայ մը կայ, անոնց գործածութիւնը մեր մէջ ընդհանրացած չըլլալն է : Անուասիկ ոգելից ըմպելիներէն իւրաքանչիւրին՝ 1 լիտրի մէջ պարունակած ալիումին քանակութեան բաղդասական մէկ ցուցակը :

Գերմ. զարեչուր	40 կրմ .	ձին	516 կրմ .
Անգլ. զարեչուր	74 »	Օղի	534 »
Սիսուր	86 »	Քօնեաք	545 »
Բուառէ	88 »	Ուիսքի	548 »
ձերմակ կմ. կարմիր գինի	87/150 »	Քիւռ	550 »
Փրփրուն գինի (ժամբանիա)	90/190 »	Ռօմ	552 »
Վեւումար	190 »	Պիքու	600 »
Շառքուտոգ	430 »	Ապտէնք	690 »

Ապտէնքն որ 100ին 70էն աւելի ալիում կը պարունակէ եւ որ 16 անգամ աւելի քունաւոր է սովորական գինիէն, եթէ անվարձ երիասարդ մը չորի գաւաքով խմէ ու նորածին մը՝ ապուրի դգալով, երկուսն ալ կը մեռնին :

Մագսաքէ (մասքիւ)ով եւ առանց մագսաքէի (սիւզ) մեր օղիներն ալ վերի ցուցակին համեմատ իբր ալիումաւոր ըմպելիք՝ — վար չեն մնար ապտէնքէն : Զգուշուրիւն, Բաճաբաններ :

Իւսկիւսար 23 Փետր. 1907 ՏԲ . ՊԵՆՈՆ ՊԷՉԱԶԱՆ

ԵՂՆԳՆԱԽՈՑ [Թըրմաք պաքսը . ongle incarné]. —

Անուասիկ շատ ցաւ առթող հիւանդութիւն մը՝ որմէ ապաքինելու համար, պէտք է նախ լայն կօշիկ հագնիլ . յետոյ մեղմիւ քլեք հիւանդ եղունգին ու միսին միջեւ ֆիչիկ մը ծուած (քիֆրիկ, charpie), եւ կամ «բէռֆլուսիւն քը ժէռ» ով քրմուած «իսոօքիլ» բամպակ, — եղունգին՝ միս մխուած մասն առա՛նց մըկրատելու : Եթէ տոյն պատուէրը գործադրէ 8 օր առտու իրիկուն անխափան, առաջին առած կ'ըլլաք միքաբուժական անճան գործողութեան մը : Ուրիշ հեղ ենքալակ չըլլալու համար այս անպատեհութեան, պարտի միշտ ուղիղ գիծով մը կտրել ոտներուդ եղունգները, փոխանակ կամարածէ կորնքարքի՝ ինչպէս սովոր էք ընել ձեռներուդ մատուրներունը :

ԱՌՄԱՄ. — Խօսելու համար լուրջ, հարգելի էք լուրջ :

ԿԻՐԱԿԻ. Բ՛. **23** Մարտ—Մարտ, Ն. Տ. 5 Ապրիլ, ՀձԲ. 4 Բէպիւլ էվվէլ,
 ✱ **ՀՅ.** և **Կ.** **ՀՅ.** Ն. կիրակի Գառանտրդաց, Մեծ պահրին ԻԲ. օրը: «Պատա-
 ւոր»: **ՅՆ.** Նիկոն վկայ: **ԼՏ.** Ս. Վիկենցիոս Ֆէրարեան:

ԵՐԼՈՒՇՐ. Գ՛. **24** Մարտ—Մարտ, Ն. Տ. 6 Ապրիլ, ՀձԲ. 5 Բէպիւլ էվվէլ,
ՀՅ. և **Կ.** **ՀՅ.** Մեծ պահրին ԻԲ. օրը: **ՅՆ.** Ս. Զարարիա մարգարէ: **ԼՏ.**
 Գոետոս Հոռմի հայրապետ:

ԵՐՆՒՅՇՐ. Գ՛. **25** Մարտ—Մարտ, Ն. Տ. 7 Ապրիլ, ՀձԲ. 6 Բէպիւլ էվվէլ,
ՀՅ. Մեծ Պահրին Լ. օրը: **Կ.** **ՀՅ.** և **ՅՆ.*** Ս. Աստուածածնի Աւետուհը: **ԼՏ.**
 Կելեստինոս հայրապետ:

ԶՈՐՒՇՐ. Դ՛. **26** Մարտ—Մարտ, Ն. Տ. 8 Ապրիլ, ՀձԲ. 7 Բէպիւլ էվվէլ,
ՀՅ. և **Կ.** **ՀՅ.** Մեծ պահրին ԼԱ. օրը: **ՅՆ.** Ս. Գարրիէլ Հրեշտակապետ: **ԼՏ**
 Ս. Մարիամ Եգիպոսցի:

ՀԻՆՊՇՐ. Դ՛. **27** Մարտ—Մարտ, Ն. Տ. 9 Ապրիլ, ՀձԲ. 8 Բէպիւլ էվվէլ,
ՀՅ. և **Կ.** **ՀՅ.** Մեծ պահրին ԼԲ. օրը: **ՅՆ.** Ս. Մատրնէ տիկին: **ԼՏ.** Ս.
 Հուզոն եպիսկոպոս: ՊԵԼՇԻԳԱՅԻ Թագաւորին ծնունդը:

ՈՒՐԱԱԹ. Ե՛. **28** Մարտ—Մարտ, Ն. Տ. 10 Ապրիլ, ՀձԲ. 9 Բէպիւլ էվվէլ,
ՀՅ. և **Կ.** **ՀՅ.** Մեծ պահրին ԼԳ. օրը: **ՅՆ.** Ս. Հիւարիոս եպիսկոպոս: **ԼՏ.**
 Ս. Աստուածածնի եօճը խոցերու տօնը:

ՇԱԿԱԹ. Ե՛. **29** Մարտ—Մարտ, Ն. Տ. 11 Ապրիլ, ՀձԲ. 10 Բէպիւլ էվվէլ,
 ✱ **ՀՅ.** և **Կ.** **ՀՅ.** Մեծ պահրին ԼԴ. օրը: Ս. Գրիգոր Լուսաւորչի չարչարանքին
 ու վիրապ մտնելուն յիշատակը: **ՅՆ.** Ս. Մարկոս Արեթուսայ եպիսկոպոս: **ԼՏ.**
 Ս. Լեւոն Մեծ Հոռմի հայրապետ:

ՅՈՒՇԱՏԵՏՐ

23 Մարտ Կիր. [83—283] Կէս օր. 5. 25

24 Մարտ Բշ. [84—282] Կէս օր. 5. 24

25 Մարտ Գշ. [85—281] Կէս օր. 5. 23

26 Մարտ Դշ. [86—280] Կէս օր. 5. 22

27 Մարտ Եշ. [87—279] Կէս օր. 5. 21

28 Մարտ Ուր. [83—278] Կէս օր. 5. 20

29 Մարտ Շր. [89—277] Կէս օր. 5. 18

Տարինք առաջ, էր մեծանուն Ուսուցչապետին Յօրէլեանը սարքելու պատրաստութիւնները կը տեսնուէին, — իբր արժանաւոր մեծարանք էւ արդար հասուցում՝ Կրօնքեան այդ անխնայ վասակաւորին, — զիմեցի իրեն՝ խնդրելով որ գրուածք մը տնօրէնէ նոյն օրը հրատարակելի բացառիկ քիչիս համար: Այն ատեն սոյն հերթուածը յանձնարարեց ինձ: Հաւանիլ անկարելի էր, վասն զի ասիկա յիշուրեան ու ցաւի մեծ շիր մը պիտի կարեցունէր փառքի apotheose ին այդ օրուան մէջ: Մահուրնէն վերջ, անգամ մըն ալ սիրելի կը դառնայ հիմալ այդ հերթուածն՝ որ, հակառակ 30 այսպիսի տարիներու հնուրեան՝ կարծես վերջին օրը վերջին ժամուն գիրի առնուած մտերկ մըն է, մեկանք դեռ չի չորցած՝ ցունց դամբանականն է ու տապանագիրն ողբացեալ Պերպրեանի:

Ի ԶՈՐԻՐ

Ա՛նց, ժամանակ, անցէ՛ք, ամիսք, ամք արագ,
Զեր անուին տակ շուտ ամէն ինչ մաշեցէք,
Ամէն բանի տուէք տեսիլ և երանք .

— Զիս փոփոխել չը կարէք :

Ի զո՛ւր, Գարուն, կ'ելնես հովտաց այցելու,
Ի զո՛ւր ծաղկեայ տաս լեռներուն պատմուճան,
Եւ ծեր բնութիւնն մանկացընէ շունչդ քու .

— Թանձր է սրտին իմ պատան :

Ո՛հ, քեզ նըման օր մը և ե՛ս ժպտեցայ,
Եւ հաւտացի երջանկութեան ցընորքին .
Ժըպիտն ընդհուպ մեռաւ շրթանցս իմ վերայ ,

— Եւ ստուերք զիս պատեցին :

Ընդ վա՛յր իմ շուրջս յիմար աշխարհ կը խնդայ,
Եւ զո՛ւր Հաճոյք զըւարթ ճակտով զիս կոչեն .
Ա՛լ չեմ սպրիբ կեանքին համար . զիս ահա

— Սև ուրուականք կը ձայնեն :

Աչքերուս մէջ ա՛լ արցունք մը ունիմ լոկ,
Քաղցր ու տըխուր յիշատակ մը յիմ սրտին,
Բերնիս վըրայ լոկ անուն մը՝ իրր ազօթք ,

— Եւ ոտքիս տակ մի շիրիմ . . . :

1872

Ռ.Յ. ՊԷՐՊԷՐԵԱՆ

ԱՌԱՄ. — Շահու լին յիշեր քայլն ուղիւ :

* Չար ունակութիւնները քիչ քիչ կ'կազմուին անզգուշու-
թեամբ, և յետոյ դժուար կ'ըլլայ թողուլ կամ բուժել զանոնք :

* Տնտեսական բիրտ իրականութիւնն ամենայն ինչ չէ աշխարհի
վրայ, այսինքն ամէն բանի սկիզբն ու վերջը դրամ չէ, այլ կան
հոգեկան ազդակներ և բարոյական պարտաւորութիւններ ալ : Իր
պատիւը պահել, իրեններուն բարի համբաւին հոգ տանիլ, ձեռքէն
եկած ազէկութիւնն ընել իր նմաններուն, իր կիրքերը զսպել, թըշ-
նամութիւններէ խուսափիլ, և իր շուրջը հաշտ ու բարեկիրթ մըթ-
նոյորտ մը կազմել՝ հաւասարապէս քրիստոնէի ինչպէս և կենցաղա-
պէս մարդու պարտականութիւններ են : * Որքան հոգ կ'տանինք
մեր մարմինին առողջութեան, նոյնքան ալ մեր հոգիին առողջու-
թեան հոգածու ըլլանք, և ամէն ժամանակ սիրենք առողջ գրակա-
նութիւնը : Ան միայն կարող է վերացնել մեր հոգին և մոռցնել մեզ
ամենօրեայ կեանքին խեղճութիւնները : Բարեկամներուն լաւագոյնն
է. որովհետեւ ա'ն կուտայ մեզի ամէնէն հասուն փորձառութեան
իմաստութիւնը : * Չափաւորութիւն յամենայնի, մասնաւորապէս
սեռային սպառումներու մէջ, բոլոր կենսական դրամազուլս մը
պահուած ասպնովուած կ'ըլլայ յառաջացեալ տարիքի համար :

* Ծշմարտապէս գործօն անհատականութիւնները, ամէնէն մեծ
և պատուաւոր ասպարէզներու կորուլի ներկայացոյց յիշները՝ գրակա-
նութեան ջերմեռանդ սիրահարներն եղած են ամէն դարու մէջ :

* Որչափ աւելի կարգամ, այնչափ քիչ փոխաք կ'իզամ գրելու :

* Երբ սկզբունքէ զուրկ անձեր յանկարծ մեծամեծ սկզբունք-
ներու անուամբ խօսին, ասիկա նոյնչափ վատառողջ նշան մը հա-
մարելու ենք որչափ՝ հարբխային յեղյեղուկ ու յարափոփոխ օղերով՝
սաստիկ պաղած մէկը յանկարծ սաստիկ տաքութիւն մը յույնէ :

* Ինչ որ յուեզոյն չէ, պէտք է մխիթարուիլ՝ լաւագոյնն չըլ-
լալուն համար : Մարդկային ընտանեկան տնտեսութեան մէջ շատ
բան ասանկ է :

* Մարդիկ ի բնէ ստախօս չեն, և ստախօս կ'ըլլան ունակու-
թիւններու վշտալի շարքով մը, որ նկարագրի անկման ամբողջ ող-
բերգութիւն մ'է, իր բազմաթիւ արարուածներով :

«Ապարանք մը առանց կնոջ՝ տարի մըն է առանց դարնան, ամառ մը՝ առանց վարդի, աշուն մը՝ առանց խաղողի և ձմեռ մը՝ առանց հանդիսութեանց»: Այսպէ՛ս արձանագրուած էր այն ապարանջանին վրայ՝ զոր մեծահարուստ անձ մը իր սիրականին ընծայեց, և զոր մարդ խրկելով կտ ուզեց վերջէն՝ սրտի նո՛ր հատորի մը նուիրելու համար: Հին տարիու հին ապարանջանը հարեցուց և ա՛յնպէ՛ս յանձնեց պատգամաւորին, ըսելով .

— «Հիմայ կրնաք տանիլ ասիկա իրեն և զուրցել թէ քանի որ իրեն հաճոյ եղաւ կտ ուզել ինչ որ ժամանակին յօժար սիրտով նուիրած էր, մե՛տա՛ղը միայն կրնամ տալ իրեն. ինչու որ վրայի արձանագրութիւնն ա՛յնքան սիրելի է սիրտիս համար և հոն ա՛յնքան խոր քանդակուած որ անհնար էր զայն ուրիշին յանձնել»: Այսօր քանի՛նէր կան որոնք գրուածքն կտ պիտի խրկէին և ձուլածո՞ն պիտի պահել ուղէին . . . :

* * Յօրակիաց հարուստ մը լրբութիւնն ունեցած էր տանը մէջ պահելու — իր գեղանի և ազնուական կնոջը ներկայութեանը — հոմանունի մը՝ որուն յաճախ նուէրներ կր տեղացունէր: Անգամ մը թանկանդին կերպաս մը բերած էր նոյն նպատակաւ. հարազատ կինը կուսնելով՝ ինքզինքին սեպհականեց զայն և շրջազգեստ մը շինել տալով հագաւ, ամուսինին ներկայացաւ: «Շիտակը աղւճ՛ր կերպաս, — պատասխանեց էրիկն անպատկառ, — բայց մեղք որ քեզի՛ չէ վայելեր . . . »: — «Մեր ամուսնութիւնը խորհելով, ուրիշներ ալ նո՛յնը կ'ըսեն կոր ինծի համար . . . » վրայ բերաւ նրբամիտ կինը՝ վշտոտ ձայնով մը:

* * Ու երկու թեթեւսօլիկները դեռ վիճաբանութիւնը շարունակելու վրայ էին՝ սեղանի տակ գտնուած ատեննին «Չուր մը տուէք» ասութեան կերպերուն վրայ. այս խօսքը ի՞նչպէ՛ս ըսուէր որ նոր, վատելուչ ու կենցաղագիտական ըլլար:

— Լաւագոյն կ'ըլլար, յարեց չէզոք ներկայ մը, երբոր սա՛պէս ըսէիք. «Մեզի խմցունելու տարէք . . . »

* * — Եթէ ըսածիս պէս չէ, գլո՛ւխս կուտամ իրաւ որ . . .

— Մի՛ յոգնիր, բարեկամ, կ'ընդունի՛մ ըսածդ, պզտիկ նուէր-նե՛րն են որ բարեկամութիւնը կը պահեն:

Արեւելեան եղանակներուն վրայ գաղափար մը տալու համար՝ մաս մը կը նշանակենք հոս, իւրաքանչիւրին՝ որ ձայնանիշին կամ խաղին վրայ յանդիւն ալ միասին յիշելով: Կրնայ ըլլալ սակայն որ եղանակ մը իրեն առանձնայատուկ ձայնանիշէն սարքերի մը վրայ յանդիւ. օրինակի համար «Եէկեան»ի վրայ գացող եղանակ մը կրնայ նաև «Աշիրան»ի կամ ուրիշի մը վրայ երթալ: Ծեհ կը կոչուի այդ պարագան՝ որ արեւելեան երաժշտութեան մէջ նկատելի է յոյժ, և որ կը պահանջէ կատարեալ հմտութիւն:

✓ **Եէկեան.** « րե »ի վրայ յանգող եղանակներ. — Ֆէրանֆէզա, Շէթ-արապան, Սուլ., Եէկեան կայլն:

~ **Աշիրան.** « մի »ի վրայ յանգողներ. — Բուսէլիք աշիրան, Հիւսէյնի աշիրան, Աճէմ աշիրան, Նիւհիւֆիթ, Շէվզէֆզա, Շէվզը թարապ, շէվզաւէր, սուզիտիլ, կայլն:

~ **Արաք.** « Ֆա »ի վրայ յանգողներ. — Ֆէրանազ, Էվիճ, Էվիճարա, Պէսթէնիկեար, Բահաթիւլէրվա, Տիւքէշնավիրան. Բէվնազնիւմա. կայլն:

~ **Բասթ.** « սօլ »ի վրայ յանգողներ. — Բաստ ճէտիտ, Բաստ մալէ, Բահալի, Նէվրիզ, Սազքեար, Նէվէսէր, Նէհալէնտ, Հիւճազքեար, Սուզինաք, Չալիլ, Մահուր, Գիւրաթիլի հիճազքեար, Բէսէնտիտէ, Թարզընէվիյն, Շէվզըտիլ, Պիւզիւրիկ, Բէնջիւկեան, Սուզիտիլարա, կայլն:

~ **Տէկեան.** « լա »ի վրայ յանգողներ. — Տիւկեան մայէ, Իւչազ, Շէհնազ, Արազպար, Գարճղար, Կէրտանիէ, Կէրտանիէ քիւրտի, Կէրտանիէ բուսէլիք, Բուսէլիք, Նէվա, Նէվա քիւրտի, Նէվա բուսէլիք, Աճէմ, Աճէմ քիւրտի, Աճէմ բուսէլիք, Մահուր բուսէլիք, Հիւսէյնի, Հիւսէյնի քիւրտի, Մուհայեթ, Մուհայեթ սիւնապիւլէ, Մուհայեթ քիւրտի, Մուհայեթ բուսէլիք, Հիճազ, Հիճազ հիւմայուն, Հիճազ բուսէլիք, Պէյաթի արապան, Հիսար, Հիսար բուսէլիք, Սապահի, Սապա զէմզէմէ, Սուլ'. Արազ, Ըալանան, Թահիր, Կիւլիզար, կայլն:

✓ **Սէկեան.** « սի »ի վրայ յանգողներ. — Սէկեանմայէ, Հիւզզամ, Մուստա'ար, Վէճարազպար, կայլն:

~ **Բասէլէ.** « սի սիէզ » կամ « so պիմօլ »ի վրայ յանգողներ. — ✓ **Նէշապուր, Նէշապուրէք, կայլն:**

ԿԻՐԱԿԻ. քչ. **30** Մարտ—Մարտ։ Ն. Տ. 12 Ապրիլ, ՀձԲ. 11 Բէպիւլ էվվէլ, չ
 չ **ՀՅ.** և **Կ. ՀՅ.** Զ. կիրակի Քառասորդաց։ Մեծ պահքին 15. օրը, «Գալուստ»
ՅՆ. Ս. Յովնանէս Կլիմարոս, **ԼՏ.** Արմաւենեաց կիրակի—Մազկազարդ,

ՆՐԵՈՒՇԲ. քչ. **31** Մարտ—Մարտ։ Ն. Տ. 13 Ապրիլ, ՀձԲ. 12 Բէպիւլ էվվէլ,
ՀՅ. և **Կ. ՀՅ.** Մեծ պահքին 1Զ. օրը, **ՅՆ.** Ս. Հիւսրոսոսոս եպիսկոպոս վկայ,
ԼՏ. Ս. Հերմենեզելտոս վկայ, **ՏՃ.** Մէվլուտ,

ՆՐԵՔՇԲ. քչ. **1** Ապրիլ—Նիսան։ Ն. Տ. 14 Ապրիլ, ՀձԲ. 13 Բէպիւլ էվվէլ,
ՀՅ. և **Կ. ՀՅ.** Մեծ պահքին 1Է. օրը, **ՅՆ.** Ս. Մարիամ եզրիպոսցի, **ԼՏ.** Ս.
 Տիրուբախոս վկայ,

ԶՈՐՔՇԲ. քչ. **2** Ապրիլ—Նիսան։ Ն. Տ. 15 Ապրիլ, ՀձԲ. 14 Բէպիւլ էվվէլ,
ՀՅ. և **Կ. ՀՅ.** Մեծ պահքին 1Թ. օրը, **ՅՆ.** Ս. Տիտոս սքանչելազօրծ։ **ԼՏ.** Ս.
 Անաստասիա վկայուհի,

ՀԻՆԳՇԲ. քչ. **3** Ապրիլ—Նիսան։ Ն. Տ. 16 Ապրիլ, ՀձԲ. 15 Բէպիւլ էվվէլ,
ՀՅ. և **Կ. ՀՅ.** Մեծ պահքին 1Բ. օրը, **ՅՆ.** Ս. Ս. Նիկիտոս և Յովսէփ երզն-
 ցողներ, **ԼՏ.** Աւագ Հինգշաբթի, **ՀԲ.** Պասեք—Խամուրսըզ պայրամի Ա. օրը

ՈՒՐԱՍԹ. քչ. **4** Ապրիլ—Նիսան։ Ն. Տ. 17 Ապրիլ, ՀձԲ. 16 Բրպիւլ էվվէլ,
ՀՅ. և **Կ. ՀՅ.** Մեծ պահքին 1Գ. օրը, **ՅՆ.** Ս. Հոսիմոս ճգնաւոր Պաղեստի-
 նացի, **ԼՏ.*** Աւագ Ուրբան։ **ՀԲ.** Պասեքի Բ. օրը,

ՇՆԱՍԹ. քչ. **5** Ապրիլ—Նիսան։ Ն. Տ. 18 Ապրիլ, ՀձԲ. 17 Բէպիւլ էվվէլ,
ՀՅ. և **Կ. ՀՅ.** Ղազարոսի յարուժիւն առնելուն յիշատակը, **ՅՆ.** Ս. Կողովոս
 վկայ՝ իր լնկերներով, **ԼՏ.** Աւագ Շաբաթ։ **ՀԲ.** Պասեքի Գ. օրը

ՅՈՒՇԱՏԵՏՐ

30 Մարտ Կիր. [90—276] կէս օր. 5. 17

31 Մարտ Բ₂. [91—275] կէս օր. 5. 16

1 Ապրիլ Դ₂. [92—274] կէս օր. 5. 15

2 Ապրիլ Դ₂. [93—273] կէս օր. 5. 14

3 Ապրիլ Ե₂. [94—272] կէս օր. 5. 13

4 Ապրիլ Ուր. [95—271] կէս օր. 5. 12

5 Ապրիլ Շբ. [96—270] կէս օր. 5. 10

Ահաւասիկ բառ մը որ թէև շատերու անծանօթ՝ բայց երաժշտութեան պատմութեան մէջ մոզական անուն մըն է : ՍԹՐԱՏԻՎԱՐԻՈՒՍ անունը կը նշանակէ կատարելութիւն՝ ջութակի, ալթօի և թաւջութակի շինութեան մէջ : Սթրատիվարիուս մը ունենալ՝ շքանորքով հարստութեան մը աէր ըլլալ ըսել է ընթացիկ լեզուով : Այս հռչակաւոր անունը կրող որ եւ է նուազարան քիչէն քիչը 10,000 ու մինչև 50,000 ֆրանք կ'արժէ, եթէ սակայն վաւերական է : Իտալիայէն ելած են աշխարհի ամէնէն նշանաւոր արուեստագէտները՝ վին, կիթառ, ջութակ և այս կարգի երաժշտական գործիներ շինող : Անթօնիուս Սթրատիվարիուս ատենց է'ն վարպետը ճանչցուած է ահա : Ծնած է Բուէմօնի մէջ 1644ին ու մեռած 93 տարեկան : Իր արհեստը սորվեցաւ Նիքօլա Ամաթիէն՝ զոր անհունապէս գերազանցեց վերջէն : Այս համբերող արհեստագէտն ու անխնայ խուզարկուն մանաւանդ ծերութեանը շրջանին (1704—1725) արտադրեց զլուս գործօցներ՝ սրոնք ամէն արուեստագէտ հիացուցին և տարիներ գուրգուրանքով գործածուեցան ու պահուեցան : Հասած այն տարիքին, որ ատեն շատ արհեստաւորներու ձեռքերը կը գողան և աչուքնին նուազ յստակ կը տեսնեն, ինք պարպալ չի կրցաւ կենալ : Ջութակ մը շինելու համար՝ անոր գործածած փայտին ընարութիւնը, շրջադիմերուն և լսելիքներուն գծադրութիւնը, կամարներուն կորութիւնը կամ բարձրութիւնը, կոթին գազաթանքանդակները, ջութակի մը փորն ու յատակը եզերող զարդազիծերուն կանոնաւորութիւնը, վերջապէս ազնուութիւնն ու ճոխութիւնը՝ վրան քրուած ջնարակին, և մա'նաւանդ արտաբերուած ձայնին նշականութիւնը, ասոնք ամբողջ գազանիքներն էին իր արհեստին՝ զոր ի'նք գիտցաւ միայն անթերի կիրարկել : Եւ իրաւ ալ, չիկար ձեռակերտ մը՝ աւելի գեղեցիկ, աւելի կատարեալ, աւելի նրբաւարտ — ամէն տեսակէտով — քան իր վարպետի թաթիկներէն ելած նուազարան մը : Ինքը սովորութիւնն ունէր շինած ջութակներուն, «ալթօ»ներուն ու թաւջութակներուն մէջի կողմը փակցունելութուղթէ պիտակ մը՝ անունին ու մականունին սկզբնատաւերովը A. S. բաղհիւսուած : Այս պիտակը կարելի էր տեսնել ջութակին փորին վրայ գտնուած ձախ լսելիքէն որ *f* զիրին ձեւն ունի : Հրապարակի վրայ շատ կան սակայն վարպետին անունովը մկրտուած կեղծեր : Մինչև հիմայ Սթրատիվարիուսի փառքն անմրցակից մնացած է և իր աշակերտներէն սկսեալ մինչև ներկայիս լաւագոյն վընագործը՝ չեն կրցած որ և է կերպով հաւասարիլ իրեն : Իրմէ վերջ եկող բոյոր անուն հանած արուեստագէտներ սքանչացմամբ հաստատած են այս խօսքին ճշմարտութիւնը : Մէկ խօսքով, իր անունը հոմանիշ դարձած է ալ իր ձեռքով կերտուած մեծարժէք ջութակներու :

Պեխին ԾՆՈՒՆԴԸ. — Առնականութեան առաջին և աչտու չնորհր կազմող «Պեխ»ին նորածեւութիւնը Սպանիաէն է որ կուգայ : Երբ Մաւրիտանացիք արշաւեցին թերակղզին , քրիստոնեայ և ոչ-քրիստոնեայ իրար խառնուած՝ չի կրցան մէկզմէկ ճանչնալ : Ան ատեն՝ պէտքը տեսնուեցաւ մասնաւոր նշանի մը , որով կարելի ըլլար երկու ազգութիւն իրարմէ զանազանել . քրիստոնեաները սկսան ածիլել իւրենց դէմքն , այնպէս մը որ պահուէին միայն պերեւեշաները՝ հորիզոնական գիծ մը ձեւացունելով : Այդ մազեղ գիծին հետ ուղղանայեաց մը կը կազմէր ստորին շտրթին ներքեւ ու ձի՛շդ մէջտեղը՝ մօրուքի վտիտ փունջ մը (barbiche) , որուն սամկօրէնն է հիմա «պամթէլի» : Այս ամէնքն , ունչ , րնչացք ևւ մօրուսիտնջ՝ խաչի մը ձեւը կ'առնէին դէմքին վրայ : Պեխն այսպէս Եզրայրութեան նշան մը եղած է իր ծագման օրերուն , և այսօր կորուսած՝ տոնմային սրժէքը :

ԵՐԿՆԱԳՈՅՆ ԴԷՄՔՈՎ : — Հիւսիս . Ամերիկայի Միացեալ Նահանգներէն միոյն՝ Գօննէքթիքի մէջ վերջերս մեռաւ Լօնկ ձէյմս անունով մարդ մը , 67 տարու , որ հանրածանօթ էր «կապուտիկ մարդը» տիպոսով : Բաւական ժամանակ առաջ՝ երբ հլուանդ էր , բժիշկն իրեն որոշ չափով մը «նիթուսթ տ'աւժան» պարունակող դեղահասաներ տուաւ : Լօնկ սովորած էր այդ թոյնին , — ինչպէս կարելի է սովորիլ «մօռֆին»ին , — և բաւական առատ քանակով անկէ սպառած : Այդ չարաչար դործածութեան կարելի է վերագրել աստիճանական փոփոխութիւնն իր մորթին , որ՝ նախապէս ճերմակ՝ ապա վերածուած էր յստակ կապոյտի մը : — Փողոցի ազաք երկիւղած յարգանք մը կը տածէին անոր մասին , կարծելով որ Երկինքէն ինկած էր ան , քանի որ անոր դո՛յնն ունէր իր դէմքը :

ՈՒՂԵՒՈՐ ԱՂԱՒՆԻՆ զոր ջրհեղեղէն ի վեր կը ճանչնանք՝ իր խածած ձիթենիի ոտտովը , սնունդ չառնէր քնաւ՝ երբ ճամբորդէ : Եթէ կարելիք հեաւորութիւնը շատ ըլլայ , կը թռի առանց դուլ ևւ դադար առնելու , նոյնպէս առանց ճաշելու , և կը հասնի վերջապէս նպատակակէտը խոնջ և ողեսպառ : Իրեն սրուած կերը կը մերժէ ու կը գո՛հանայ քիչ մը ջուր խմելով ու պաճիկ ընկելով : Երկու երեք ժամ վերջը կ'սկսի ուտել խիստ չափաւորութեամբ ևւ նորէն անմիջապէս կը ննջէ : Եթէ իր թռիչքը շատ երկարատեւ եղած է , ազաւնին ա՛յս կերպ կը շարունակէ 48 ժամ , անանկու սովորական իր կերպը դառնելէ առաջ :

ՄՏԱԻՈՐԱԿԱՆ ՄԱՐԴՈՑ ԿԵԱՆՔԷՆ

Սմբու, ֆրնս. անխոնջ զիտունն՝ ամէն ատեն աչքը սեւեռած
 կը պահէր աշակերտներէն մէկուն հագուստին կոծակին, իր դասա-
 խօսութիւնը կատարած պահուն: Ս Պուռտալու — ֆրանսացի քաջ
 բեմաբասարը — քիչ մը ջութակ կ'ածէր բեմ կլլալէ առաջ: Ս Տը
 Պուէզէ մարաջախան երբ ճաղար մը տեսնար՝ մարելիք կուգար վրան:
 Ս Լօրա Պայրըն դէշ տեսակէն կը յուզուէր ու կ'ազգուէր, որ և
 է առիթով երբ թուղթ լղուէր զիմացը: Ս Վիքթոր Հիւկո՝ քեր-
 թելու պահուն՝ դուռի մը պարզ ջուր կը պահէր քովին, ակա-
 նակիս ու վճիտ տեսակէն: Ս Ալֆոնս տը Միւսէ քանի մը դա-
 ւաթ ապրէնթ չի նետած՝ չէր կրնար քերթել: Ս Գուէպիլյեօն իր
 ողբերգութիւնները կը շինէր՝ զոյգ մը ազուա զրած սեղանին վրայ:
 Ս Քիւժաս օրէնագէտը յորսայս պառկած կ'աշխատէր: Ս Է-
 ոռամ, հոլանտացի զիտունը՝ տենդէ կը բռնուէր, ձուկ տեսնալուն
 պէս: Ս Էնտէլ գերմանացի երգանանը մինչև որ չը գինովեար չէր
 կրնար բան մը յորինել: Ս Լալանտ աստղարաշխը մամուկ կ'ու-
 տէր: Ս Լալուտարիէ հուշակաւոր քիմիագէտը կազամարի մը մէ-
 ջէն միայն ջուր կը խմէր: Ս Լընօթօը՝ պարտէզի գծագրիչը՝ գէշ
 կըլար փայտի սղոցման ազմուկէն: Ս Գաթէնին տը Մէտիսիս, —
 Հենրիկոս Բ. ի կինը, — չէր կրնար հանդուրժել վարդի բոյրին:
 Ս Մինաստ նկարիչը մինչև որ սենեակը հաւ մը չի պահէր, չէր
 կրնար քնանալ: Ս Գօլպէս Ֆրնս. պետական մարդը և Սէնթ-
 Պէօլ մեծանուն քննադատը մեծ հաճոյք կ'զգային՝ կատուներու
 վազվառուքը զիտելով իրենց աշխատութեան սենեակին մէջ: Ս
 Իսկ մերոնցմէ Յ. Ալիլար (Քոնիզանդէմ) զլանիլը ձախ մատներուն
 մէջ բռնած մանաւանդ կը սիրէ արտադրել իր սիրուն «Ֆանթէզի»
 ները: Ս Յ. Յ. Պարոնեան, մեծանուն երգիծարաննիս, առջի
 զիշերուքնէ բազոսեան տաճարը չի խնկարկած՝ չէր կրնար արտադ-
 րել խայթհամեղ էջեր: Ս Մ. Մնակեան, միակ գերասանապետ-
 նիս, իր սիրական կլկակին կաշեփողը չուրթերուն փակցուցած՝ սո-
 վոր է կիրարկել «սէփիտէօ» ի փափուկ պաշտօնը: — Եւ այլովքն
 հանդերձ.

ՍՌԱՄ. — Մե՛ ճաշիկն օ՛յն ի՛նչ, Գընն Գըն և Գըն:

ԲՈՅՐԵՐՈՒ ԼԵԶՈՒՆ

Հապա՞, բոլորն ալ ծաղիկներուն, թանկազին քարերուն, գրոշմաթուղթին են. պէս իրենց լեզուն ունին Սիրոյ աշխարհին մէջ: Անաւասիկ այդ ցանկն՝ ուր հայերէնները չենք դրած, աւելի հասկանալի բնկու համար մեր թուած անուշահոտութեանց անունները:

- Աճառ = Բարուհ . խորհրդանիշ
- Աճառիկ = Սոնքութեան
- Աճառը = Անդորրութեան
- Առաւել = Վայելչութեան
- Բէլաւիճի = Մարբութեան
- Բոռոտ = Գլխաւոր փոփոխականութ.
- Էլիօթի = Յախա՞ . սիրոյ .
- Էջեւե = Երբութեան
- Էջեւե սիւսե = Անդսնուսի
- Թիլիկեւ = Երազանքի
- Փիւղեւեւ = Մոլեզին սիրոյ
- Փառեւեւ = Խաղախրութեան
- Փառեւեւ = Սիրակամութեան
- Փեռանիւ = Շոշորթութեան
- Փընե = Ետապատուութեան
- Փեռեֆի = Կարեկցութեան
- Փեռեֆի = Անձնախրութեան
- Փրոտ = Երջանկութեան
- Ղալմա = Համբերութեան
- Ղեղը = Համեստութեան
- Ղեւ = Տարիանքի
- Ղեւ պլան = Անտիական շնորհի
- Ղեւ = Անբո՞ութեան
- Ղոտի = Կատարելութեան
- Ղիլան = Բարեկամութեան
- Մալիւ = Մանրութեան
- Մանի = Իմաստութեան
- Մանիւ = Սխալութեան

- Մէլի = Զուարթութեան
- Մէլի = Լուրջ սիրոյ
- Միւլի = Բարեբաւտութեան
- Միւլի տէ պոռ = Արհամարհանքի
- Մշ = Շոշորթութեան
- Շէլեֆի = Սիրոյ
- Պիլի = Ազգեցութեան
- Ռեղեպ = Պարկեղատութեան
- Ռոշ սիւսե = Պչրանքի
- Ռոշ պլան = Յատակամտութեան
- Ռոշ բոռ = Համակրութեան
- Ռոշ բոշ = Գեղեցիկութեան
- Սաֆառ = Զգաստութեան
- Սեֆառ = Խոնձութեան
- Սեֆառ = Պարզութեան
- Սիլի = Աշխուժութեան
- Սիլի = Հուստարութեան
- Վանիլ = Քաղցրութեան
- Վեֆի = Հանդարտութեան
- Վեֆի = Ճարպիկութեան
- Վեֆի = Հրապոյրի
- Քալի = Հպատակութեան
- Քիւսի = Գորովի
- Քոտի = Աննկողութեան
- Օռանի = Վեհանձնութեան
- Օռանի = Պերճանքի
- Ֆոտի = Զգոնութեան

ԿԻՐԱԿԻ. - Գ. **6** Ապրիլ—Նիսան, Ն. Տ. 16 Ապրիլ, ՀձԲ. 18 Բէպիւլ էվվէլ,
 ✽ **ՀԵ. և Կ. ՀԵ. Ծաղկագարդ:** **ՅՆ.** Ողորոմեան կիրակի—Ծաղկագարդ,
ԼՏ. Զատիկ **ՀԲ.** Պատերի Դ. օրը:

ԵՐԿՈՒՇՅ. ԲՅ. **7** Ապրիլ—Նիսան, Ն. Տ. 20 Ապրիլ, ՀձԲ. 19 Բէպիւլ էվվէլ,
 ✽ **ՀԵ. Աւագ Երկուցարբի:** Պահք, Ս. Ատուածածնի Աւետումը, **Կ. ՀԵ.**
 Աւագ Երկուշարթի **ՅՆ.** Ս. Գէորգ Մելիտինայի եպիսկոպոս **ԼՏ.** Ս. Թէո-
 փանոս վկայ, **ՏՃ.** Պիւրծի Սէվր (ցուլ), **ՀԲ.** Պատերի Ե. օրը:

ԵՐԵՎՇՅ. ԲԷ. **8** Ապրիլ—Նիսան, Ն. Տ. 21 Ապրիլ, ՀձԲ. 20 Բէպիւլ էվվէլ,
ՀԵ. և Կ. ՀԵ. Աւագ Երեքարբի: Պահք, Իմաստուն և յիմար տասը կոյ-
 սերուն յիշատակը, **ՅՆ.** Հերովդիանոս առարեայ, **ԼՏ.** Ս. Անեկմոս Կանդուա-
 լիոյ եպիսկոպոս **ՀԲ.** Պատերի Զ. օրը **ՌՌՄԱՆՆԻՈՅ** Թալաւորին ծնունդը:

ԶՈՐԲՇՅ. ԳՅ. **9** Ապրիլ—Նիսան, Ն. Տ. 22 Ապրիլ, ՀձԲ. 21 Բէպիւլ էվվէլ,
ՀԵ. և Կ. ՀԵ. Աւագ Զորեքարբի: **ՅՆ.** Ս. Եփսիկիոս վկայ, **ԼՏ. Ս.**
 Ոպորտունէ վկայուհի: **ՀԲ.** Պատերի Է. օրը:

ՀԻՆԳՇՅ. ԳԷ. **10** Ապրիլ—Նիսան, Ն. Տ. 23 Ապրիլ, ՀձԲ. 22 Բէպիւլ էվվէլ,
 ✽ **ՀԵ. և Կ. ՀԵ. և ՅՆ. Աւագ Հինգարբի:** Պահք, Գրիստոսի Ընձրի-
 քին յիշատակը: Ռտնայուայ, **ԼՏ. Ս.** Գէորգ վկայ, **ՀԲ.** Պատերի Ը. և վերջին օրը:

ՈՐԲԱԹ. ԴՅ. **11** Ապրիլ—Նիսան, Ն. Տ. 24 Ապրիլ, ՀձԲ. 23 Բէպիւլ էվվէլ,
ՀԵ. և Կ. ՀԵ. և ՅՆ. Աւագ Ուրբա: Պահք, Գրիստոսի չարչարանքին,
 խաչելուձեան և Թաղումին յիշատակը, **ԼՏ. Ս.** Փիժէլ:

ՇԱԲԱԹ. ԴԷ. **12** Ապրիլ—Նիսան, Ն. Տ. 25 Ապրիլ, ՀձԲ. 24 Բէպիւլ էվվէլ,
ՀԵ. և Կ. ՀԵ. և ՅՆ. Աւագ Շաբա: Զատիկ ճրագալոյցը կամ Խճում,
ԼՏ. Ս. Մարկոս աւետարանիչ:

ՅՈՒՇԱՏԵՏՐ

6 Ապրիլ Կիր. [97—269] Կէս օր. 5. 09

7 Ապրիլ Բշ. [98—268] Կէս օր. 5. 08

8 Ապրիլ Գշ. [99—267] Կէս օր. 5. 07

9 Ապրիլ Դշ. [100—266] Կէս օր. 5. 06

10 Ապրիլ Եշ. [101—265] Կէս օր. 5. 05

11 Ապրիլ Ուր. [102—264] Կէս օր. 5. 04

12 Ապրիլ Շր. [103—263] Կէս օր. 5. 03

* * * Կալկաթայի մէջ մահուան կը դատապարտուի եղեռնագործ մը : Կախուելուն օրն , անզլ . վաճառատան մը շրջուն գործակատարը շողենաւէն նոր դուրս ելած՝ յաջողած էր մէկտեղ բերելու քաղքին կառավարիչին արտօնագիրը , պահիկ մը տեսնուելու համար դատապարտեալին հետ : Քառորդ ժամու տեսակցութենէ մը ետք՝ իրարմէ բաժնուելու ատեննին՝ լսուեցաւ մահապարտին ձայնն որ կ'ըսէր . « Ձի մոռնա՛ք ժառանգորդներուս ձեր վճարելիք 10,000 տակին » . — « Կ'երդնո՛ւմ Աձ աշունչին վրայ » աւելցուց անզլիացին : Կառավրնատ տարուելէ վերջ , չի մերժուեցաւ իրեն՝ անդամ մը խօսելու իրաւունքը , մեռնելէ առաջ :

« Դուք որ , — ըսաւ հանդիսաւոր ու զօրեղ ձայնով մը՝ ներկայ խուռներամ ամբոխին դարձած , — դ՛ուք որ այս պահուս մտիկ կ'ընէք ինձի , զիտցէք որ աշխարհիս է՛ն ընտիր շքեղան է Ռ-էլէ՛ք՝ Սըն , Քէնոթ & Գ՛. Լանոն » : Յետոյ , անտարբեր , գլուխն անցուց հանգոյցին մէջ : Ռէքլամի այս անլուր և տարօրինապէս եզակիան եղանակն ամերիկացիներուն քո՛վն ալ չիկար ապահովարար . . . :

* * * « Բէնթէսօթ » ն ամերիկեան շատ դիմացկուն կերպաս մըն է — հորթու մորթի տեսքով — որ կը գործածուի ամբողջերու , սեղանի ևն . իրր ծածկոց : Տեսէք թէ Եանքիներն ի՛նչ կերպ ատոր ուէքլամը տուած են թերթերու : « Ա՛յնքան ճիշդ , ա՛յնքան հարազատ նմանութիւն որ նոյն իսկ հորթի մը հողին եթէ նորէն աշխարհք դար , դա՛րձեալ չը պիտի կրնար զանազանել « Բէնթէսօթ » ն իրեն մորթին հետ . . . »

* * * « Պարոն . — Փոխանակ « պաշտելի Օննիկս » ի , ստիպուած եմ « այսուհետև ա՛յսպէս անուանել զձեզ , աւա՛ղ , դադրած ըլլալով « կոշուելէ ձեր նշանածը . . . : Պատճառները , հաւատացէք , իմին « կամքէս բոլորովին անկախ են , քանի որ ծնողացս անդարձ որո՞ « շումն է ասիկա : Չձեզ լուսարանելու համար , պարտք կ'ըզամ « յայտարարելու մէկ բառով թէ ծնողքս չեն օխորժած ձեզմէ . հա՞ « կակրանք որ ծագում առեր է ձեր արտաքին կերպարանքէն : Հա՞ « գած հագուստնիդ շատ անհաշակ և վայելչութեան հակառակ դտեր « են : Գո՛նէ , ըսին , « էրմէնեան » է՛ն զնէր ձեռք մը զգեստ և այնպէս « երևնար մտղի , գուցէ դուռ բացած չըլլար այսպիսի անպատե՞ « հութեան մը : Ընդունեցէք , Պարոն , այս տխուր առթիւ , իմ ան՞ « կեղծ վիշտս :

Ձեր երբևնի խօսեցեալը



Հեթանոսություն

**1907ի հանգուցեալ Յովհաննէս Թաւաննեան, Գորգի ձանօր
վանառական եւ Մեկեմաս**

Կարդալ կենսագրական զիծերը «Մահագրութեան» բաժինին մէջ

Առաջին տիեզերական Սուրբ Ժողովը գումարուած է Բիւթա-
նիոյ Նիկիա քաղաքին մէջ 325 թուականին՝ 318 հայրապետներու
ժողովումով, ուր մերժուեցաւ Արիոսական ուրացութիւնն ընդդէմ
Քրիստոսի Աստուածութեան. հոն էր որ խմբազրուեցաւ «Հանգա-
նակ Հաւատոյն» և սահմանուեցան ինչ ինչ եկեղեցական կանոններ :
Երրորդ տիեզերական Ս. Ժողովը գումարուած է Կ. Պօլիսի մէջ
381 ին՝ 150 հայրապետներու ժողովումով, ուր հերքուեցաւ Մակե-
դոնեան հոգեմարտութիւնն ընդդէմ Հոգւոյն Սրբոյ :

Երրորդ տիեզերական Ս. Ժողովը գումարուած է Ասիոյ Եփե-
սոս քաղաքին մէջ՝ 431ին, 200 եպիսկոպոսներու ժողովումով, ուր
մերժուեցաւ Նեստորեան մոլորութիւնն՝ ընդդէմ անձնաւորութեան
և որդիութեան Յիսուսի Քրիստոսի :

Հայ Եկեղեցին ընդունեց այս ժողովներէն «Հանգանակ Հա-
ւատոյն» և ինչ ինչ կանոններ՝ Արիստակէսի, Մեծն Ներսէսի և
Թարգմանչաց աշակերտներուն ձեռքով. նաև, «Հանգանակ»ն ըն-
դունելէն ետք՝ Գրիգոր Լուսաւորչի ձեռքով աւելցուց իր համառօտ
ու պարզ Հանգանակը. — «Իսկ մեք (հայերս) փառաւորեսցուք որ յա-
ռաջ քան զյաւիտեանս, երկիրպագանելով սրբոյ Երրորդութեանն
և միոյ Աստուածութեանն, Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, են.» :

Նիկիոյ Ժողովին, զատկական տօնախմբութեան ժամանակն ալ
փոխուած էր երկար վիճարանութիւններէ ետք. բայց մեր Եկեղեցին
զարձեալ ընթացաւ նոյն նախնի աւանդութեան վրայ :

Այս երրեակ տիեզերական ժողովներէն զատ, գումարուած են
նաև ուրիշ ժողովներ ալ թէ Արեւելքի և թէ Արեւմուտքի մէջ,
որոնցմէ շատեր թէև օրինակէն անունը կը կրեն, բայց կէ'ս-տիե-
զերական իսկ չեն սեպուիր, ինչու որ ուզղակի յունական և Հռո-
մէական եկեղեցիներուն կը պատկանին : Այդ ժողովներէն նշանաւոր
է 451ին գումարուող Քաղկեդոնի ժողովն որ ո՛չ մէկ տեսակէտով
կրնայ չահազրգուել զմեզ. վասն զի հոն քրիստոնէական երկիւղա-
ծութիւնը չէ՛ր որ գօտեպնդուած էր հաւատքի պաշտպանութեան
համար :

Շ Տղայութիւնը՝ Թշուառութեան քովը, իմ աչքիս՝ դերեզմանի մը վրայ նետուած ծաղիկի մը կը նմանի, եւ ասկէ աւելի ախուր բան մը չեմ երեւակայիր :

Շ Բարոյական չունեցողին համար սկզբունքներն այն բանն են, ինչ որ են նաւահանգիստները՝ աշխարհագրութիւն չլիտցող նաւապետի մը համար : Անոնցմէ անգամ մը բաժնուելէ ետքը, Աստուած միայն զիտէ անոր ս'ըր երթալիքը :

Շ Անմահութիւնը մահացումներուն է՛ն ահաւորն է :

Շ Մարդիկ իրենց կենդանութեանը չեն ճանչցուիր ու գնահատուիր անոնցմէ որոնց քովն ու մօտը ապրած են շարունակ : Գերեզմանին անջրպետը պէտք է, որպէս զի մեր ակնարկը կարող ըլլայ ճշգիւ տեսնելու գիծերը այն դէմքերուն որոնք անոր միւսեզերքը անցած են հիմայ : Անոնց վերադարձին անկարելիութեանը համոզուածը պէտք է մեզի, որպէս զի կուրցած աշունիս բացուին ճշմարտութեան ու զիջանինք խոստովանելու անոնց առաւելութիւնները :

Շ Ոչ ոք ամենազոյզն արժէք մը կուտայ այն սիրտերուն, որոնք յօժարափոյթ ու լուռ հաւատարմութեամբ իրեն կ'սպասեն. ու հարկ է որ այդ սիրտերը խորտակուին, որպէս զի կորուստին մեծութիւնը կարելի ըլլայ զգալ եւ չափել :

Շ Իժիշկ մը որ հիւանդը խտրելով՝ իր այցելագիւններուն արգիւնաւոր շարունակութիւնը կը պահպանէ, փաստարան մը որ անիրաւ գատի մը պաշտպան կանգնելով իր հմտութիւնը կը ծախէ քանի մը ոսկիի փոխարէն, երիտասարդ մը որ ազջկան մը դրամօժիտին համար կը կարգուի միայն, հրապարակագիր մը որ իր խիղճն ու գրիչը կը վաճառէ որոշեալ շարաթականի մը համար, ինքնամատոյց կնոջմէն չեն տարբերիր եւ իրենց ստացած զբամը կապէնք մըն է :

Շ Գիտէք որ կանացի հոգեբանութիւնը իմ մեծագոյն զուարճալիքս է : Անձանօթ, անմատչելի բեւեան է ան որ Հիւսիսէն ա՛լ աւելի յամառութեամբ կը պահէ իր թագուն հրաշալիքները :

Շ Օրերը կուգան կ'անցնին, ամէն մէկը բերելով մեզի իր բաժինը ուամիկ ու հասարակ դէպքերու, որոնցմով կեանքը կը ձեւանայ. կաթիլ մը արցունքով եւ քիչ մը ծիծաղով՝ մարդկութիւնը ամէն շարթու գլուխ իր հաշուեյարդարութիւնը կը կատարէ, զոր քրոնիկագիրը՝ անանկացած խաղամուլի հետաքրքրութեամբ կ'արձանագրէ աշխարհիս չորս կողմը :

Դրախաղին մէջ չունէր երբ խիպը «մերկ»ին,
 Ինչպէս անարատ հրեշտակ մ'էր կլին... :

Աչքերն երազկոտ՝ կրնո՞ջ մը, ուր կան
 Յուզում ու ժրպիտ. չե՞ն սիրոյ ուռկան... :

Ո՛ր կինը չուզեր... իր սիրտը բանալ,
 Նո՛յն իսկ խոստանաս մի ջնջին բան ալ... :

Սիրել ու սիրուիլ ազատ, անարգել՝
 Ըզձացող զոյգերն ինչո՞ւ անարգել... :

Չգացումէ զուրկ, լսկ միտի կուտակ
 Կիներուն ինչպէս շատ հեղ սիրտ կուտաք... :

Հանդիպող մարդուն սէր ու սիրտ ծախող
 Ազջրկան չըլլար վախճանը՝ ձախող... :

Շատ կլիներ հաճոյք չե՞ն ըզգար միթէ
 Ծածկարար իրենց արուած կամիթէ... :

Կիները աղւոր, սակայն անստակ,
 Փորձաքարեր չե՞ն արդեօք երկնառաք... :

Հրեշտակ թէ իրաւ ստատանայ մ'է կլին,
 Ո՞վ կրնայ վճուել ասիկայ մեկին... :

Չունին կուտ կամ զեղ, պէտք է որ, ըստ իս,
 Ազջիկ, տունիկըդ համբերես նստիս... :

Շատ վեր հազրիճուած ոտքերն կանանց է՞ր
 Իրտելու հողի տըւող կան անձեր... :

Կա՞յ մարդ մը տխմար, անճաշակ՝ որ մի
 Կին ընտրէ՝ կուրծքով ճի՛շդ նըման որմի,
 (Եթէ կայ, ասոր Աստուած ողորմի...) :

Սիրաս ալպոմ մ'է սիրոյ, ուր Ա՛ն ալ
 Էջ մ'ունենալը կրնա՞յ ուրանալ... :

ԿԻՐԱՆԻ. -չ. 13 Ապրիլ—Նիսան, Ն. Տ. 26 Ապրիլ, ՀձԲ. 25 Բէպիւլ էվվէլ,
 ✠ ՀՅ. և Կ. ՀՅ. Քրիստոսի Յարութեան Զատիկը, Մինչև Համբարձում
 ուտիք: ՅՆ. Զատիկ, Մինչև Նոր Կիրակի՝ ուտիք: ԼՏ. Նոր Կիրակի—Կրկնա-
 զատիկ:

ԵՐԵՎԱՆ. -վ. 14 Ապրիլ—Նիսան, Ն. Տ. 27 Ապրիլ, ՀձԲ. 26 Բէպիւլ էվվէլ,
 ✠ ՀՅ. և Կ. ՀՅ. Զատիկին Բ. օրը, Մեռելոց, Անկաստեղ, ՅՆ. Ս. Ս. Արիս-
 տարքոս և Տրոփիմոս առաքեալներ, ԼՏ. Ս. Անժիմոս Էպիսկոպոս, ՏՃ. Զայլը
 ֆուրձուհաւը: ՀԲ. Յեսուի մահուան համար ծով:

ԵՐԵՎԱՆ. Բչ. 15 Ապրիլ—Նիսան, Ն. Տ. 28 Ապրիլ, ՀձԲ. 27 Բէպիւլ էվվէլ,
 ✠ ՀՅ. և Կ. ՀՅ. Զատիկին Գ. օրը, ՅՆ. Ս. Կրեակենտիոս վկայ, ԼՏ. Ս. Պօ-
 ղոս խաչեան կրօնաւոր:

ԶՈՐԻՇԱ. Բվ. 16 Ապրիլ—Նիսան, Ն. Տ. 29 Ապրիլ, ՀձԲ. 28 Բէպիւլ էվվէլ,
 ՀՅ. և Կ. ՀՅ. Զատիկին Գ. օրը, ՅՆ. Ս. Ս. Ազապի և Երինէ վկայուհիներ,
 ԼՏ. Հորերտոս արքայ:

ՀԻՆԳՇԱ. Բչ. 17 Ապրիլ—Նիսան, Ն. Տ. 30 Ապրիլ, ՀձԲ. 29 Բէպիւլ էվվէլ,
 ՀՅ. և Կ. ՀՅ. Զատիկին Ե. օրը, Արտերու տօն, ՅՆ. Ս. Սիմէոն պարսիկ,
 ԼՏ. Ս. Կատարինէ Սինեացի կոյս:

ՈՒՐԱՎԱ. Բվ. 18 Ապրիլ—Նիսան, Ն. Տ. 1 Մայիս, ՀձԲ. 1 Բէպիւլ Խիւրը,
 ՀՅ. և Կ. ՀՅ. Զատիկին Զ. օրը, ՅՆ.* Պալլըրը Այսազմային տօնը, ԼՏ. Փի-
 լիպոս և Յակոբ առաքեալներ:

ՇԱԲԱԹ. Բչ. 19 Ապրիլ—Նիսան, Ն. Տ. 2 Մայիս, ՀձԲ. 2 Բէպիւլ Խիւրը,
 ՀՅ. և Կ. ՀՅ. Զատիկին Է. օրը, Ս. Յ. վնանէս Մկրտիչին զխառուելուն յիշա-
 տակը, ՅՆ. Ս. Պարնոտիոս մեծ վկայ, ԼՏ. Ս. ԱՅանաս Աղեքսանդրոյ հայ-
 րապետ:

ՅՈՒՇԱՏԵՏՐ

13 Ապրիլ ԿԻՐ. [104—262] Կէս օր. 5. 02

14 Ապրիլ ԲՉ. [105—261] Կէս օր. 5. 01

15 Ապրիլ ԳՉ. [106—260] Կէս օր. 5. 01

16 Ապրիլ ԴՉ. [107—259] Կէս օր. 5. 00

17 Ապրիլ ԵՉ. [108—258] Կէս օր. 4. 59

18 Ապրիլ ՈՐ. [109—257] Կէս օր. 4. 58

19 Ապրիլ ՇՐ. [110—256] Կէս օր. 4 57

ՀԱՇՈՒԱԿԱՆ ՀԱՆՃԱՐ

ՏԱՐԻՔ ԳՈՒՇԱԿԵԼ

Դրել կուսաբ ձննդեան օրն ու ամիսը ա՛յն անձին որուն արիքը պիտի գրե-
նաք: Ենթադրենք որ անիկա ծնած է դեկտեմբեր 18ին: Դեկտեմբեր (décembre)

	Դեկտ.	դգ. օրք
==10րդ ամիսն բլլալով արւոյն, Ենթական սապէս պիտի գրէ . . .	10	18
Կրկնէ՝ կ'ըսէք իւրաքանչիւր թիւն ինկիրմով.	2	2
	20	36

Պատասխանը՝ ֆովովի, մէկ թիւ նկատելով (2036), կ'ըսէք որ 5
 զումարէ վրան 5
2041

Յետոյ, 50 ով բազմապատկէ՝ կ'ըսէք, 50
102050

Արտադրեալին վրայ զումարել կուսաբ իր արիքը, զոր օրինակ՝ 25.
25
102075

Յետոյ արւոյն օրերուն թիւը հանել կուսաբ 365

Քն այս վերջին թիւը կը պահանջէք իրմէ 101710

Դուրս հիմայ առանձին 101710

Վրան կ'առեցունքէ 115ը որ բաճալի թիւերնիդ է միշտ 115

Ու կ'ունենաք երկուք երկուք զատելով 10,18,25

10,18,25. այսինքն 10րդ. ամսուն (դեկտեմբերին) 18րդ. օրը ձնէ է անիկա, եւ
 արիքն ալ 25 է:

Ինչպէս որ ցոյց կուտայ ներկայ պատկերը, 40 հաս դրամածէ ոսկորիկներ
 (jeton) ունինք, զորս իբրտու վրայ դիզած՝ 8 խումբի բաճներ ենք: Այս
 ուրք կոչներն առանց ցուելու, վեց ոսկորիկ վերցունելու է, այնպէս մը որ
 16 ոսկորիկ ունենանք քառակուսիին ամէն մէկ կողմին վրայ. նաեւ, մի-
 անոյն թիւով ոսկորիկ՝ իւրաքանչիւր տրամանկիւնի ծայրը:

Անաւասիկ մէկի տեղ՝ երկու լածում.—

9 1 6	8 1 7
1 1 1	1 1 1
6 1 9	7 1 8

ԿԵԱՆՔԻ ՀԱՆԳՐՈՒԱՆՆԵՐ

Ամէնքնիդ ալ կ'ուզէք անուշտ զիտնալ թէ ձեր կեանքի ո՞ր թուականին կարե-
 տոր դէպքեր պիտի պատահին, կամ, պատահած են իրօք: Հետեւեալ հաշիւն քրէք:
 Ենթադրենք որ ծնած էք 1879ին. կը գրէք սապէս 1879

1
8
7
9

որ զումարուելով կ'ըլլայ 1904: Այս 1904ը ձեր կեանքին
 կարեւոր մէկ թուականը կը կազմէ անկասկած: Կրնաք շարունակել նոյն կերպով՝
 1904+(1+9+04)=1918, Բ դէպք: 1918+(1+9+1+8)=1937
 Գ. դէպք: 1937+(1+9+3+7)=1957 Գ. դէպք: Ու, շարունակաբար:
 Գուշակութիւնը մի՛շտ նիշտ կ'ըլլայ, եթէ ձննդեան թուականքնիդ սխալ չէ:

ԱՌՄՏ. — ԳԵՂԵՆ — ԳԵՂԵՆ — ԳԵՂԵՆ — ԳԵՂԵՆ — ԳԵՂԵՆ

ԱՐՑՈՒՆՔԻՆ ՔԵՐԹՈՒԱԾԸ

Այտերն ի վար, այտերն ի վար ուր յաւէտ
Կը տոչորի հեաքը վերջին համարոյրին,
Իջի՛ր, արցունք, զօրութեանդ մէջ երկնաւէտ,
Թող սէրերու յեախն բոցերը մարին:

Պգուանքներու ծովուն վրայ ալէվէտ,
Մեռած, թօշնած խոստումներուն վրայ ցրտին՝
Իջի՛ր, արցունք, զօրութեանդ մէջ կենսաւէտ,
Իջի՛ր սասած երազներուն վրայ սրտին:

Համարոյրներու թերթերուն վրայ ցիրուցան,
Անոնց վրայ որ «կը սիրենք քեզ» ըսին,
Անոնց վրայ որ ժպտեցան ու անցան:

Ու խեղճ Սրտին մօտիւրներուն վրայ տրտում,
Փլատակներուն վրայ Տենչին ու Յոյսին՝

Իջի՛ր, արցունք, գորովանքովդ անդադրում:

7 Մարտ 1907

Ռ. ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ

* Զգայուն և գթած բնոյթի մը նշանն է արցունքը, ինչպէս և յատկանիշը՝ տկարութեան, վատութեան ու նենգի:

(Իմաստաւէրը)

* Երբ ազգուինք, մեր հողին կը խռովի, մեր սիրտը կը յուզուի, ձայներնիս չեղար, և ահա արցունքն է որ կը հոսի:

(Հոգեբանը)

* Քամահրեցէ՛ք զայն վէս անձն որ կ'ամէնայ իր արտօսը հեղու է:

(Վշտահարը)

* Ազգորին աչքերուն մէջ արտասուքին չիթը՝ պլիւմպոսայ աղամանդն է ոսկի յուշապակին վրայ դամուած:

(Բանասիրէղծը)

* Արցունքը տեսակ մը քրտինք է ջղային տկարութեամբ տառապողներու յատուկ: Երանի՛ անոնց որ Յիծաղ-թաշկմտակն ունին՝ զայն չարցունելու համար:

(Ես)

ՀՐԱՏԻԿ.—Ձուրի գաւաթ մը կրակին բռնեցէք, մինչեւ որ աղէկ մը չորնայ և դրէք զայն սեղանի մը վրայ: Յետոյ բոլորովին չոր ափսէ մը առնելով գաւաթին վրայ ա՛յնպէս մը զետեղեցէք որ հաւասարակչութիւնը չի կորսնցունէ: Այս գործողութիւնը աւարտելէ վերջ, պէտք է առնէք պզտիկ թերթ մը թուղթ՝ զոր կրակին վրայ տաքցունելով արագ արագ շփելու էք, մինչեւ որ կլեկտրականանայ, ու զետեղեցէք փսէին վրայ: Այսպէս, առա՛նց որ և է ծախքի կլեկտրական մեքենայ մը կազմած պիտի ըլլաք. ու մատերնիդ եթէ փսէին մօտեցունէք, կայծ մը պիտի ցատկէ: Կայծն ա՛յնպիսի աւելի սաստիկ պիտի ըլլայ — և հետզհետէ յառաջ բերել ուղուամ հրատիկներն ա՛յնքան աւելի երկայն, — որչափ աւելի որ ապակի գաւաթն ու փսէն չոր ըլլան: Սենեակն եթէ մութ ընէք, հրատիկները սաստիկ պսպղուն պիտի երևին:

* * *

ԶԵՌՒՒՅ ԶԻ ԴՊՅՈՒՑԱՆ՝ ԳԱԽԱԹ ՊԱՐՊԵԼ.— Առնել 2 ապակի գաւաթ, հող չէ թէ ի՛նչ ձև ունենան, բաւ է որ բերանին նոյնաձև և հաւասար ըլլան: Զանոնք ջուրով լի դոյլի մը մէջ մխրճել, ու երբ երկուքն ալ դարայիր լեցունին՝ դոյլին մէջ զանոնք բերնի բերելով՝ դժուարի մէկը մուսին վրայ հեծցունել, դոյլէն դուրս հանել՝ խնամով մէկը մուսին վրայ փակած բռնելով և ապա լայնաշուրթն փսէի մը մէջ զետեղել: Յորչափ երկու գաւաթներուն ձեռք չի դպցուի, անոնց պարունակած ջուրէն կաթի՛լ մը դուրս չի վաթեր: — Խնդիր է հիմայ առանց յեռ+ դպցունելու ամբողջովին պարզել զայն հոսանքն՝ որ բերանն ի վար կեցած է մուսին վրայ: Ասոր համար կիսով չափ ծխախոտով լեցուած մուխքաշ (չըպուք) մը առնել ու վառել: Յետոյ անոր վառարանը (լիւլէ) թաշկինակով մը պատելով վրան փչել մուխքաշին ծայրն 2 գաւաթներուն բաժանման զիծին բոլորքը պարտցունելով, կարելի եղածին չափ մօտէն, առանց դպցունելու: — Վառարանին վրայ այդպէս փչուելուն շնորհիւ, մուխքաշէն դուրս արձակուած ծուխը՝ 2 գաւաթներուն շրթանցը մէջտեղ եղած դոյզն ձերպերէն ներս պիտի թափանցէ, վրայի գաւաթին մէջ պիտի բարձրանայ և ժողլըլի անոր վերիդին. ծուխն իսկոյն ճնշում մը ի գարծ պիտի դնէ, որով վրայի գաւաթին ջուրը վտարիկ կաշակներով դուրս պիտի ծորի նոյն այն ձերպերէն որոնք անցը տուած են ծխախոտի մուխին, ու պիտի իջնէ փսէին մէջ: Եթէ վրայի գաւաթը շատ մեծ չըլլայ, պարպուիլը աւելի կարճ միջոցի մը մէջ տեղի կ'ունենայ:

ԱՌԱՆՎ.— ԲԵՐՆԸ ԲՅ՝ ԳԷԸ ԲՅ՝

Այսպէս կը կոչուի Ս. Սարգիսի տօնին նախորդ շաբթուան պահքն որ բուն հայ. ծագում եւ բնոյթ ունի, ու տոնմային աւանդութեան համեմատ՝ առաջին պահքն է Լուսաւորիչէն հաստատուած: Զննոր Գլակ կը գրէ այս մասին. «Այս առաջին պահքը գրուեցաւ Ս. Գրիգորի օրով... զոր Առաջաւորք կը կոչենք»: Առաջաւորք կը նշանակէ «առաջող աւուրք», այսինքն կանխող օրեր, կամ, տօնի մը յառաջընթաց ժամանակը:

Շնորհալի օրով կարեւոր հանգամանք մը ստացաւ այս պահքը: Յոյներ ժամանակին ստայօղ առասպելներով այս պահքը կը վերագրէին ու կը պատշաճեցունէին Ս. Սարգիսի տօնին, ծագրելով մեր Եկեղեցին որ իբր թէ կախարդ Սարգիսի մը տօնին այդքան կարեւորութիւն տալով, 5 օրուան պահք եւ ծով հաստատած էր: Այսպէս խորհելու եւ ըսելու իրաւճանք ալ ունէին, վասն զի մերիններն ալ — ինչպէս այսօր իսկ տակաւին ռամիկներու մէջ սովորական է, — «Ս. Սարգիսի պահք» ըսելու սովորութիւնն ունէին: Շնորհալի՛ Մանուէլի գրած թուղթին մէջ կը պատմէր իսկական նշանակութիւնն ու շարժառիթն այդ տօնին, ցրելով թիւր կարծիքները: Կը գրէր թէ Առաջաւորք կ'ըսենք՝ *.) որովհետեւ քառասորդական պահքէն առաջ է եւ անոր կը կարապետէ. ք.) որովհետեւ Լուսաւորիչ առաջին անգամ հաստատած է զայն, ի յիշատակ նորադարձ ժողովուրդին 5 օրուան անսուաղ պահքին, [և թէ այդ պատճառով ալ ծովաջան ճղնութեամբ կ'անցնին այդ 5 օրերը], որուն կըցուեցաւ նաեւ Եփեսոսացիներու ապաշխարութիւնն՝ Ասորական ու Եգիպտ. եկեղեցիներուն պէս: Շնորհալի պատշաճ պատասխան մըն ալ տուած է Ս. Սարգիսի տօնին համար, յիշելով թէ նոյն ամսուան օրը Սարգիս մարտիրոսացած է (Յունվար 30), ու տոմարական հաստատ այդ կարգադրութեան համեմատ՝ պատահարար մեր «Առաջաւորք»ը կը կարապետէ այդ տօնին, և թէ «Առաջաւորք»ն աւելի մեծ է քան Սարգիս և անոր տօնը:

* *

Ըստ Պատաւաշունչի, Ս. Սարգիսը սիրահարներու պաշտպան սուրբն ըլլալով, ամուրիներէ շատեր — մանչ, աղջիկ, — պահք կը բռնեն ու նոյն իսկ ծով ալ կը պահեն առաջաւորաց շաբթուն, իրենց ամուսնութիւնը փութացունելու փուճ ալնկալութեամբ:

(Բառփոխութիւն)

ԿԻՐԱՆԻ. ԴԷ. **20** Ապրիլ—Նիսան։ Ն. Տ. 3 Մայիս։ ՀձԲ. 3 Բէպիւլ ախըր։
 ✽ **ՀՅ.** և **Կ.** **ՀՅ.** Զատիկն Բ. օրը։ Նոր Կիրակի = Կրկնագատիկ. **ՅՆ.** Ս.
 Թովմաս առաքեալ։ **ԼՏ.** Ս. Խաչին զանուիլը։

ՆՐԿՈՒՇՐ. -Յ. **21** Ապրիլ—Նիսան։ Ն. Տ. 4 Մայիս։ ՀձԲ. 4 Բէպիւլ ախըր։
ՀՅ. և **Կ.** **ՀՅ.** Յինանց Թ. օրը։ **ՅՆ.** Ս. Գենարիոս եպիսկոպոս։ **ԼՏ.** Ս. Մո-
 նիկէ՝ Օգոստինոսի մայրը։

ՆՐԵՔՇՐ. -Կ. **22** Ապրիլ—Նիսան։ Ն. Տ. 5 Մայիս։ ՀձԲ. 5 Բէպիւլ ախըր։
ՀՅ. և **Կ.** **ՀՅ.** Յինանց Ժ. օրը։ **ՅՆ.** Ս. Թէոդորոս Սիկիացի. **ԼՏ.** Ս. Պիոս
 Ե. Հոսիի հայրապետ։

ԶՈՐՔՇՐ. ԲՅ. **23** Ապրիլ—Նիսան։ Ն. Տ. 6 Մայիս։ ՀձԲ. 6 Բէպիւլ ախըր։
ՀՅ. և **Կ.** **ՀՅ.** Յինանց ԺԱ. օրը։ **ՅՆ.** Ս. Գէորգ մեծ վկայ. **ԼՏ.** Ս. Յով-
 հաննէս աւետարանիչի չարչարանքին յիշատակը։ **ՏՃ.** Խըտրէլէզ։

ՀԻՆԳՇՐ. ԲԷ. **24** Ապրիլ—Նիսան։ Ն. Տ. 7 Մայիս։ ՀձԲ. 7 Բէպիւլ ախըր։
ՀՅ. և **Կ.** **ՀՅ.** Յինանց ԺԲ. օրը։ **ՅՆ.** Ս. Եղիսարեան՝ Յովհաննէս Մկրտիչի
 մայրը։ **ԼՏ.** Ս. Ստանիսլասոս եպիսկոպոս։

ՈՒՐԱՍԹ. ԲՅ. **25** Ապրիլ—Նիսան։ Ն. Տ. 8 Մայիս։ ՀձԲ. 8 Բէպիւլ ախըր։
ՀՅ. և **Կ.** **ՀՅ.** Յինանց ԺԳ. օրը։ **ՅՆ.** Ս. Մարկոս աւետարանիչ. **ԼՏ.** Ս.
 Տեսիղերիոս եպիսկոպոս։

ՇԱԲԱԹ. ԳԷ. **26** Ապրիլ—Նիսան։ Ն. Տ. 9 Մայիս։ ՀձԲ. 9 Բէպիւլ ախըր։
ՀՅ. և **Կ.** **ՀՅ.** Յինանց ԺԴ. օրը։ **ՅՆ.** Ս. Բասիլիոս Ամասիոյ եպիսկոպոս։
ԼՏ. Ս. Գրիգոր առուածարան։

20 Ապրիլ Կիր. [111—255] Կէս օր. 4. 56

21 Ապրիլ Բշ. [112—254] Կէս օր. 4. 55

22 Ապրիլ Գշ. [113—253] Կէս օր. 4. 54

23 Ապրիլ Դշ. [114—252] Կէս օր. 4. 53

24 Ապրիլ Եշ. [115—251] Կէս օր. 4. 52

25 Ապրիլ Ուր. [116—250] Կէս օր. 4. 51

26 Ապրիլ Շր. [117—249] Կէս օր. 4. 50

Երբեմն ամպոս երկինք մը՝ չ՛ուս կը սլարգուի,
 Ու լեզակի լիճ մը կ'ըլլայ՝
 Հոգւոյս չլացիկ ծովուն դիմաց:
 Եւ իրարու կը ժպտին
 Լիճն այն լեզակ ու ծովն հոգւոյս,
 Քոյր ծաղիկներ աներկրային՝
 Զոր մերթ հովի հոսանք մը կոյս՝
 Անդսպելի ինչպէս ալիք գորովի՝
 Կը խոնարհէ իրարու դէմ:

Ու լիճին վրայ կասոյտի

Կը բողբոջի յանկարծ կղզեակ մը բուստէ,

Ու կղզեակին վրայ երփներփուն

Ամպիկ մըն ալ կը ցայտէ,

Անրջածին ամէն գոյնով կը ծպտի,

Ծաղիկ կ'ըլլայ, թռչուն կ'ըլլայ, նայուածք ու ժպտիւս:

Ու շիկնոտ Իդձս ալ, — թիթեռնիկ բոցաթեւ, —

Կը թռչըտի ծաղկաստանին մէջ սրաիդ:

Ու գունազեղ ամպին ետեւ

Բուստ կղզեակին վրայ ծրփուն

Զքնաղակա՛ն, կ'երեւնաս դուն:

Ու տեսլական ձեւեր կ'առնէ դէմքը համբուն.

Մազերդ անթօշ նարկիս կ'ըլլան,

Ճակատը՝ ձիւն կատարներուն

Զոր վարդագնեց արփն իրիկուան.

Եւ աչքերը կ'ըլլան զոյգ մը ծառուղիներ՝

Ուր կը ճըչէ թռչնակն արձակ ու ճռուողուն

Իմ խայտանքիս. ու շուրթերդ ալ՝

Ոսկեզօծ եզրը բաժակին

Ուր կը հակին

Վարդ ու հարսնուկ, կակաչ, նարդոս, գարնածաղիկ,
 նունուֆար . . . :

* Բնութեան մէկ աննչան և անզոր ծաղիկը լինչ հզոր է անոնց համար՝ որոնք անձերնին կրթած են բնութիւնը ուսանելու համար: Այդ ծաղիկը ուսուցիչ մ'է որ իր գոյութեան ու կեանքին օրէնքը կը սորվեցընէ անո՛ր որ յօժար է դիտելու, խորհելու և ուսանելու:

* Երեւակայեցէք Երկինքը, այդ անհուն միջոցը ուր անհամար վիթխարի մարմիններ կը շարժին, և ո՛չ իսկ ամենավոքը շշունչ մը կը լսուի: Ի՛նչ յաւիտենական լուսիւն, և ո՛չ ապաքէն ներգաշնակութեան հոյակապը կը գտնուի հոն: Որպիսի՛ վսեմ երաժշտութիւն երբեք կրնայ հաւասարիլ Երկնից այդ միլիոնաւոր գունդերուն շարժմանց ներգաշնակութեանը: Երգեր չեն լսուիլ հոն. բայց երբեք երգ մը չերգուեցաւ որ ձայներու փառաւոր միութեամբ անխառն յուզէր սրտերը՝ որքան կը յուզեն այս միասնական, կաշնաւոր և բազմադիմի շարժումները:

* Թէև այս անհուն միջոցը (Երկինքը) յաւերժական ցուրափ, լուսիւն և խաւարի վայրն է, սակայն այդ լուին և մահատիւղ սահմանաց մէջէն լոյս և ջերմութիւն իրենց ճառագայթները կ'արձակեն աշխարհէ աշխարհ: Առանց այդ մշտնջենաւոր դիշերուան, հնար չէր ո՛չ պայծառ օր ունենալ և ո՛չ իսկ օրը և անոր անհուն գեղեցկութիւնները վայելող էակներ:

* Մարդիկ կը տենչան թանձրացեալ բանի մը, մարմին առած գործի մը, ու առանց անոր՝ շատ մը խօսքեր շաղակրատութիւն և ճամարտակութիւն կը թուին իրենց: Մօտքը շատ կարեւոր է, պերճախօս ձայնը աննման ոյժ մըն է մարդկութեան մէջ. բայց վերջապէս պերճախօսութեան բոլոր որոտումներէն ետքը՝ մարդիկ քիչ մը անձրևի գոնէ կ'սպասեն:

* Եղելութիւններն երբեք գիտութիւն չեն, բայց միջոց են դիտութեան: Պէտք է մեկնել զանոնք, բայց այդ մեկնութիւնը պէտք է որ համաձայնի ամէն տեսակ փորձութեան հետ, և ա՛ս է ճշմարտութեան փորձաքարը զոր ի ձեռին ունինք: Եթէ չընդունինք զայս, ընդունած կ'ըլլանք թէ՛ բներեւոյթներն իրարու հետ անհրաժեշտ յարաբերութիւն չունին:

ԲԱՐԵՇՐԶՈՒԱԾ ԱՆԷԾՔՆԵՐ

- Ծա'կծա'կ ծակծրկիս... երբ երուսաղէմ «հաճի» բանին թուիդ ։
- Աստուծմէ' գտնաս... 10,000 ոսկի ։
- Գեանին տա'կը անցնիս... Դալաթիայէն Բերա երթալու հմր. ։
- Ա'չքդ կուրնայ... ծերութեանդ մէջ, ճիշտ մահուանդ օրը ։
- Դուռ դուռ մուրա'ս... կղնդ.ին գիշերը՝ յանուն «Աղ.քախնամ.»ի ։
- Բիթէդ բերնէ'դ գայ... սաստիկ հարբութիդ ատեն ։
- Սեւե'ր հագնիս... կանչըցած լաթերդ ներկի տուած ըլլալով ։
- Ձեռուրնե'րդ քաշուի... ձմեռը, կրակին մօտէն, չ'էրելու հմր. ։
- Չարի'կ չարի'կ գաս... երկկոյթի մը խօջ պարբերուն գիրկը ։
- Կերածդ խմա'ծդ փրօխես... սխալմամբ թունաւորուելէ վերջ ։
- Չը համնի'ս... փափաքած նաւամատոյցդ չի հանդիպող Շիրքէթի շողենաւին ։
- Ճըւի'կ ճըւի'կ գաս... անուշ անուշ դեղգեղող սոխակի մը դիմաց ։
- Չարնուի'ս... երկաթուղիի առաջին պարգեւով ։
- Աւուր հացի կարօտ ըլլաս... պարկերով պարէն մառանդ լեցունելէ ետք ։
- Անմաս անհաղո'րդ ելլաս... չար դիպուածներու մէջէն ։
- Անկրթճակներո'ւ գաս... անակնկալ երջանկութիւն մը սղջունելով ։
- Ո'տքդ բռնուի... քիչ մը ատեն անշարժ մնալէն թմրելով ։
- Ծովերն ի վա'ր երթաս... եթէ սուղակ ես ։
- Ճաթի'կ ճաթի'կ գաս... կուշտ ու կուռ խնդալէն ։
- Լեռնե'րը մնաս... ամառը լորամարգիի որսորդութեանդ ։
- Երթալդ ըլլայ, գալդ չըլլա'յ... ամուսնական կեանքէդ ։
- Առնուիս բռնուի'ս... ճշմարիտ Սիրոյ ցանցին մէջ ։
- Պօյը'դ չըջի... քնատութեանդ, կակուղիկ անկողիններու վրայ ։
- Կերած կաթդ «հառա'մ» ըլլայ... եթէ կարած է ։
- Ուճո'ւտդ վերնայ... նոր խաներու «ասանտէօս»ներովը ։
- Չի վայլես չի վայլեցունե'ս... քեզի համար փափաքածները թշնամիներուդ ։
- Չի'քը յորդիս... օղապարիկով ճամբորդելու միջոցիդ ։
- Լեղո'ւդ բռնուի... սիրահարիդ չրթունքին մէջ ։

ԱՌԱԾ. — Ո-ր է-յ 4-5, 4-6 7-ը է-յ ։

— Տոքթոր, ի՞նչպէս է հիւանդնիս :

— Եթէ քրտընի, առաջ Աստուած կ'աղէկնայ :

— Չըսէ՞ք որ փաստաբանի մը յանձնենք զինքը :

* * — Կը մարի՛մ կոր, քիչ մը ջուր . . .

— Կը մարի կոր եղեր և դեռ կայներ ջուր կ'ուզէ. լուցիկի մը չխառ՞ք իրեն . . . :

* * Ս. Գիրքի մէջ սա խօսքը կայ ըսուած. «Մեռեալները չը պիտի երդնն ձեր գովեստները» : Ասիկա գրողն ապահովաբար բժիշկ-ները միայն խորհած էր :

* * Բժիշկը սեւամաղձութեամբ տառապող հիւանդի մը փոխան դեղի՞ յանձնարարեց յաճախակի երթալ ներկայ գտնուիլ հտպիտի խաղերու : «Ասիկա լաւագոյն միջոցն է, ըսաւ, գէշութիւննիդ անցունելու համար» : «Եթէ չերթա՞մ, հարցուց հիւանդը» . «Կը մեռ-նիք» . — «Ափսո՛ս, յարեց հիւանդն, երթալո՞ց եմ եղեր ուրեմն, որովհետեւ արհեստս հապիտ է իմին . . .» :

* * Բժիշկը. — Լեզուդ դուրս հանէ նայիմ : [Հի-անդը. — Նա՛ . . .

Բժիշկը. — Չէ, չէ, ամբողջ դուրս հանէ . . .

Հի-անդը. — Ինտո՞ր հանեմ, տոքթոր, ծայրը ինծի փակած է :

* * — Գաւաթ մը ջո՛ւր, կը կմկմայ իր մօտը գտնուող տոք-թորին՝ մահամբձ հիւանդն, որ ստակալի խմանութեանը զո՞ կ'եր-թար այսպէս :

Բժիշկը + Բժիշուդ. — Շիշ մը օղի աղէկ չե՞ս ուզեր կոր . . .

Մահ-Պըշը. — Մարդ մեռնելու պահուն պէտք է հաշտուի իր թշնամիներուն հետ :

* * Ամուսինի մը կը հարցունեն՝ իր հիւանդ կնոջ ինչպէս ըլլալը :

— «Չայն ազատելու վախը կայ . . .» կը պատասխանէ :

* * — Մենք գեղացիքս ունեւոր չենք ըլլար. իս աղէկցունենա նէ՛ աղւորիկ նապաստակ մը պիտի խրկեմ քու տունդ :

Ու տոքթորը զայն աղէկցուցեր էր, բայց նուէրը կ'ուշանար : Անցեալ օր ճամբան զէմն ելաւ գեղացին. «Ո՞ւր է ըսաւ, նապաս-տակս չեկաւ տակաւին» :

— «Չեկա՞ւ մի, վա՛յ անպիտան. երէ՛կ էր որ տունդ խրկեցի զինքը. ձեղի գալու տեղ՝ կ'երեւայ թէ գաշար փախեր է չարածձին . . .»

ԿԻՐՍ.ԿԻ. ԴՅ. 27 Ապրիլ—Նիսանն Ն. Տ. 10 Մայիս ՀձՐ. 10 Բէպիւլ ախըր:
 ✽ ՀՅ. և Կ. ՀՅ. Յինանց ԺԵ. օրը՝ Աշխարհամատրան տօնը—Կանանչ կիրակի:
ՅՆ. Ս. Շնաւոն տեառնեղբայր: **ԼՏ.** Ս. Յովսէփի պաշտպանուժեան տօնը:

ԵՐԼՈՒՇՐ. ԴԿ. 28 Ապրիլ—Նիսանն Ն. Տ. 11 Մայիս ՀձՐ. 11 Բէպիւլ ախըր:
 ՀՅ. և Կ. ՀՅ. Յինանց ԺԶ. օրը՝ **ՅՆ.** Ս. Ս. Ինը վկաներ Կիզեկոնի: **ԼՏ.** Ս.
 Մամերոս Վեննայի եպիսկոպոս: **ՀՐ.** Հեղիի մատուան, և տապանակին զե-
 րուժեան համար ծով:

ԵՐԵՔՇՐ. ԴԶ. 29 Ապրիլ—Նիսանն Ն. Տ. 12 Մայիս ՀձՐ. 12 Բէպիւլ ախըր:
 ՀՅ. և Կ. ՀՅ. Յինանց ԺԷ. օրը՝ **ՅՆ.** Ս. Ս. Յասոն և Սոսիպատրոս առաք-
 եալներ: **ԼՏ.** Ս. Պախուժիս ճգնաւոր:

ԶՈՐՔՇՐ. ԴԷ. 30 Ապրիլ—Նիսանն Ն. Տ. 13 Մայիս ՀձՐ. 13 Բէպիւլ ախըր:
 ՀՅ. և Կ. ՀՅ. Յինանց ԺԸ. օրը՝ **ՅՆ.** Ս. Յակոբոս Հերեղեան առաքեալ, **ԼՏ.**
 Ս. Ոնեսիմոս առաքեալ, ՊԱՐՍԻՅ Շահին ծնունդը:

ՀԻՆՔՇՐ. ԴԸ. 1 Մայիս—Մայրու Ն. Տ. 14 Մայիս ՀձՐ. 14 Բէպիւլ ախըր:
 ՀՅ. և Կ. ՀՅ. Յինանց ԺԹ. օրը՝ **ՅՆ.** Ս. Երեմիա մարգարէ: **ԼՏ.** Ս. Վոնի-
 փակիս վկայ:

ՈՒՐԱՍԹ. ԴԹ. 2 Մայիս—Մայրու Ն. Տ. 15 Մայիս ՀձՐ. 15 Բէպիւլ ախըր:
 ՀՅ. և Կ. ՀՅ. Յինանց Ի. օրը՝ **ՅՆ.** Ս. ԱՅանաս հայրապետի նշխարներուն
 զտնուիրը: **ԼՏ.** Ս. Իսիդորոս վկայ: **ՀՐ.** Երկրորդ Խամուսը:

ՇԱՐԱՍԹ. Կ. 3 Մայիս—Մայրու Ն. Տ. 16 Մայիս ՀձՐ. 16 Բէպիւլ ախըր:
 ՀՅ. և Կ. ՀՅ. Յինանց ԻԱ. օրը՝ **ՅՆ.** Ս. Ս. Տիմօթէոս և Մարաս վկաներ:
ԼՏ. Ս. Հոնորիոս եպիսկոպոս:

ՅՈՒՇԱՏԵՏՐ

27 Ապրիլ Կիր. [118—248] կէս օր. 4. 49

28 Ապրիլ Բշ. [119—247] կէս օր. 4. 48

29 Ապրիլ Գշ. [120—246] կէս օր. 4. 47

30 Ապրիլ Դշ. [121—245] կէս օր. 4. 46

1 Մայիս Եշ. [122—244] կէս օր. 4. 45

2 Մայիս Ուր. [123—243] կէս օր. 4. 44

3 Մայիս Շր. [124—242] կէս օր. 4. 43

ԹԵՐՊՍԻՔՈՐԵԱՆ ԺԱՄԱՆՑՆԵՐ

[TERPSICHOE = ՊԱՐԻ ՄՈՒՍԱՅ]

ՅՐԱՆՍՈՒԿԱՆ ՊԱՐԵՐ. — Գօնթռնանս (ղիմսպար), Ժալուզի (հակապար), Մընիւէ (մանրապար), Պոանլը (ճօճապար), Պոլանժէն (հացեփապար), Բաս-բիէ (ոսնանցիկ), Սիսօն [Տիկին չը Մէնթընօնէ հնարուած սիսօնեան կարաւ մը], Զէֆիո (օրրապար), Թոնիօնի (եռապար), Գոուանթ (լամբապար), Ռիկօսօն (աշխուժապար, Ռիկօ անուն անձէ մը հնարուած), Շաս (որսորդապար), Պալէ (թասերապար, սպալէթ), Գասրիլ (խմբապար), Լանսիէ (նիզակապար), Գօզէթ (պլբապար), Բասը-գաթնը (քառաքայլ կարաւ), Գօթիյեօն (վերջապար), Գանգան (արլորուկ, ցասկոնկ), Շաիւ (շաղակբար), Կալօթ (զավոնապար), Զառին (շնորհալի կարաւ «մազուրբար» նմանող զշխոյապար), եւ այլն:

ԻՏԱԼ. — Բալան (սիգապար), Թառանթէլ, Նարօլիթէն, Սիսիլիէն, Յօուան, Թոնէվիգան, Յոլուլ, Սալթաուէլ (ոսոսապարեր):

ՍՊԱՆ. — Պօլէոօ, Գաչուչա, Ֆանսանկօ, Ժօլէօ, Ժօթա, Թանկօ, Կալէ-կաս, Սէկէսիլ, Զարաթէասօ, Զօոօնկօ (եռանդուն ու կրքոս կարաւներ՝ որոնցմէ շատերը յիշատակ են նախին Մաւրիսանացիներէ, եւ որոնք կը պարուին սովորաբար 3 չափի վրայ, կիթառով, բամբիռով, դափով ու ծափով):

ԲՈՒՆ. — Մազուրբա (վերկերուկ), Բօլբա (վէսվէտուկ), Ռէսօվա, Գոարօ-վիպ (աշխուժապար):

ԳԵՐՄ. — Ալման (Գերմանապար), Վալս (շրջապար), Պէոլին [1894ին հր-նարուած «ասիս» — Տղամարդն իր պարընկերուհին կ'առաջնորդէ երբեմն ձեռքէն, երբեմն մէջքէն բռնելով]:

ԱՒՍՏՐԻԱԿԱՆ. — Վալս (շրջապար):

ՀՈՒՆԳՐ. — Հօնկուուզ (հունգարապար), Զառաս (թնդապար):

ԱՆԳԼԻՒԿԱՆ. — Ժիկ (jig, արապար):

ՍԿՈՎՏԻԱԿԱՆ. — Սքօթիշ (ծածանք, «սօթիզ»):

ՊԵՂԺ. — Օսթանէզ (Օսթանս քաղաքը հնարուած կարաւ մը՝ վէսվէտուկի և շրջապարի խառնուրդ):

ԱՄԵՐԻԿ. — Պօսթըն, Վաշինկթըն-Բօսթ (համանուն քաղաքաց անուններէն),

ՀՈՒԱՆՏԱԿԱՆ. — Վալար, Մաթրլօթ (նաւազապար):

ՀՆԻԿԱԿԱՆ. — Պայասէն, Թանթար (ձավայի եւ Սէլլանի պար):

ԱՓՐԻԿԵԱՆ. — Շիքա:

ԱՄԵՐԻԿ. ՎԱՅՐԵՆԻՆԵՐՈՒ. — Սգալթ. հրապար եւ մահապար (սեսակ մը մաքապրեան պար):

ՅՈՒՆ. — Բիռիք (ղինապար), Իօնիէն (լոնիական պար), Գանսիօթ, Սիրթօ (Թաշկինականի ճօճամար), Խօուա (թեւապար, գեղապարուծիւն, ճօճապար):

ՌՈՒՍԱԿԱՆ. — Գանայիգա, Խազախ, Իւրէն, Գասթաշօք:

ՀԻՆ ԵՐՐԱՅԱԿԱՆ. — Ռագօս (ծածանուս մենապար), Բիզուզ (թեւապար), Գիոզուռ (մենապար, ձեռքի վրայ՝ թանկագին աւարկայի մը ընկերակցու-թեամբ):

[Արեւելեան պարերու վրայ անչտա ուսումնասիրուծիւն մը գալ տարի]:

ԱՌԱՄ. — Մ-րրէ՛ Դ-րր-վ. Էրի-+է Ա-ր-+է-վ.

ԱՏԷԼԻՆԱ ԲԱԹԹԻ. — «Գիշեր ցորեկ՝ սենեակիս պատուհանները բաց կը ձգեմ, որպէս զի օդը միշտ թարմ ըլլայ: Գաջողջուս թիւնս այս բանին կը վերագրեմ ես»:



Գերասանուհի

ՄԱՌՈՒՆՆՈՒՄԱՐԳ

Պարզալ իր կենսագրութիւնն, իզմիրեանցէ պատկառ Ս. Թիւթիւնեանի կողմէ գրուած, Տարեցոյցիս էջերում:

10 ժամ կը քնանամ»: Ինչպէս որ կ'ուզեն՝ այնպէս թող պառկին, այնպէս թող սպրին. Խնդիրը շարժութեան իրայե. — Եւ մէթոսիկ վարս ժութիւնն՝ ինչպէս որ գիտենք՝ մեծ սկզբունքն է Կեանքի:

* * **ՏԻԿԻՆ ՍԻՐԱՆՈՅՇ.** — «Խիստ բարեկամ եմ տաքի. լաւ հագուելի, տաք տեղ բնակելի, ներկայացումէ վերջ տաք բաներ ուտել՝ սկզբունքներս են: Յարեկուան ճաշէն վերջ անպատճառ կը ննջեմ, և տարօրինակէս կը գրգռուիմ՝ եթէ քունս խանգարեն: Գիւղական կեանքը չատ կը սիրեմ: Թատերական ցեղէնս վերջ պէտք է ճամբորդեմ: Ուղեւորութեան մէջ է որ կը գտնեմ պարտասուն անձի կազդոյրը»:

ՍԱՌԱ ՊԷՌՆԱՐ. — «Կեանքի մէջ իմ ճամբաս՝ Բաթթիինին հետ բոլորովին հակոտնեայ է: Բաց օդ կը խնդրէ ան, մինչ ևս կ'ապրիմ բոլորովին գոց: Թատրոն գոց կառքով կ'երթամ. խանդավառութիւնը կ'առուգէ և բեմական խոնջէնքը կը հրճուեցունէ զիս: Կէս գիշերն 3 ժամ անցած կը պառկիմ, 6 ժամ կը ննջեմ, 12 ժամ թատրոնը կը մնամ առանց օդի և արեւու լոյսի»:

ԺԱՆ ՀԱՏԻՆԿ. — «Ամենամեծ հաճոյքս է մնալ Նէոյեթի վիլլաս և կամ ճամբորդել»:

ԻՎԷԹ ԿԻԼՊԷՌ. — «Լողանքը միայն կը ճանչնամ ես, իբրև լաւագոյն միջոց՝ առողջ և գորաւոր սպորելու: Թատրոնէն դարձիս՝ անկողին կը մտնամ, առանց սոփէ ընկու, և

ՕԴԻ ԳՈՒՇԱԿՈՒՄ

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ



Լուսաւորներու քաղաքը (halo) մեծ դեր կը կատարեն օդի գուշակումներու համար. այս գեղեցիկ բներեւոյթները նկատուած են իրրեւ ազդարարներ՝ փոթորկայոյց օդի: Բակն երկու տեսակ է, բուն բակը և պակը (corona)՝ որոնք տեսնուած են թէ՛ լուսինին և թէ՛ արեւին շուրջ: Արեւին համար՝ պէտք է որ սեւցուած ասպակի կտոր մը միշտ գործածելի գտնուի այդ գեղեցիկ բաները գիտելու աստին: — Պսակը պղտիկ բոլորակ մըն է, շատ անգամ բազկացեալ՝ իրարու կցուած 2—3 համակեղորոն բոլորակներէ. իր տրամաշափը 16 աստիճանը չանցնիր և փոփոխական է, մինչ բակինը՝ 46 կամ 92. այս չափերն երբեք չեն փոխուիր: Մէկը միւսէն զանազանելու համար, այս նշանակելի տարբերութիւնը բաւ և շատ է ինքնին: Գոյներով ալ կարելի է տարբերել դիրենք, վասն զի կը պատահի որ զարդարուած ըլլան ծիածանին բոլոր երանգներովը: Ծիածանին մէջ՝ կարմիրն աղեղին զուրսի կողմն է և մտը՝ ներսի կողմը. այսպէ՛ս է գոյներու շարակարգութիւնը պսակին մէջ: Բակին համար այս կարգը շրջուած է, այսինքն մտը գուրսիդին, իսկ կարմիրը՝ ներսիդին: Բակերը կ'արձակեն նաեւ յաւելուածական բոլորակներ որոնք աւելի՛ գեղեցկացած կ'ըլլան արեւանմանութիւններով կամ լուսնանմանութիւններով՝ երեւցող այն կէտերուն վրայ ուր բոլորակները դիրքար կը կտրեն: Բեւեռային կողմերն է որ ամէնէն աւելի բազմաման բակեր տեսնուած են:

* * * Ենթադրենք որ պսակներէն մին ատտիճանաբար պղտիկնայ: Ի՞նչ էր պատճառը: Պատասխանը ինքնին կը գտնուի, երբ նկատի առնենք միջոցորտին մէջ խոնաւութեան մասնիկներուն ազդեցութիւնը՝ լոյսի ճառագայթներուն վրայ: Այդ մասնիկները մանր պրիսմակներու տեսքն ունին և լոյսն այնպէս մը կը բեկրեկեն որ Բակեր ու Պսակներ յառաջ կուգան: Արդ, այդ ջուրէ պրիսմակները մեծութեամբ միշտ կը փոխուին, ուրիշ յառաջ կուգան բոլորակներուն տրամագիծերուն մեծութիւնն ու փոքրութիւնը: Այսպէս, երբ պսակ մը աստիճանաբար պղտիկնայ՝ օղագուշակ մը երբեք չի սխալիր երբ անչրէ՛ն անտարբէ՛ր: Իսկ երբ տրամագիծը խոշորնայ, պիտի հասկցուի որ չոգիի կաթիլները պղտիկցեր են ու ցրուելու հակամէտ, որով՝ անչրէ՛ն շողաւորէր, և օղագուշակը կրնայ վստահաբար նախատեսել աղւոր վազորդայն մը:



ԱՌԱՅ. — ԾԷՐԵՅ՞Ր, ԶԵՅ՞Ր:

ՇՈՒՆ ՈՒ ԿԱՏՈՒ

[Ա Ռ Ա Կ]

Ծախուած մէկ շուն
Կտարեց չղթան, վերադարձաւ տիրոջը տուն :
Մըտածեցէք ի՞նչ խեղճ վիճակ .
Իր ցոյց տըւած անկեղծ սիրոյն
Իբր արիաւոր ու մրցանակ
Մեծով փետով խրկըւեցաւ նոր տիրոջ տուն :
Կատու մը ծեր
Տեսնելով թէ իր հին ընկեր
Ի՞նչ դարմանքի մէջ էր ընկեր՝
«Ո՛վ դուն անմիտ ,
Կ'ըսէ , ս'ըքան կը մեղքընամ ես քու խելքիդ .
Ի՞նչ , կը կարծես
Թէ մեր սիրոյն կը պահեն մեզ :
Թարգմ. Մ. Նուպարեան

ՅԼՈՐԻԱՆ

Իմացած ըլլալով որ իզմիրցի հայ գրագէտը պատրաստած ունի Յլորիանի բոլոր առակներուն թարգմանութիւնը, դիմեցինք իրեն որ շնորհէ մեր Տարեցոյցին համար քանի մը հատ իբր նմոյշ մեծ առակախօսին գրուած քներէն , քանի որ Յլորիան ալ Լաֆօնթէնէն ա՛նմիջապէս վերջ՝ նշանաւոր եղած է իր յղացումներուն ու նիւթերուն ճարտար բանահիւսութեամբը : Նուպարեան ամենայն աղանդութեամբ փութաց մեր խնդիրքը կատարել , ընտրանքով քաղելով անոնցմէ զոյգ մը զոր հաճութեամբ զետեղած ենք այս էջերում : Մասնաւորապէս կը յանձնարարենք մեր ընթերցողներուն կարդալ «Պիլոտին ու մեղուն» խորագիրով առակն որ քնքուշ ոճի եւ զեղեցիկ թարգմանութեան օրինակ կրնայ ծառայել : Փափաքելի էր որ համակրելի թարգմանիչին այս դործն ալ «Առակք Լաֆօնթէնի» ի բախտին արժանանար՝ տպագրուելով , որմէ դպրոցականն ու ընթերցասէրը հաւասարապէս պիտի օգտուէին անշուշտ : Եւ չենք յուսար որ հրատարակիչ մը վարանէր ձեռնամուխ ըլլալու այդ երկին , համաձայնելէ ետք թարգմանիչին հետ՝ որուն համար կ'ըսեն թէ դժուարահաճ ալ չէ՛ :

ԱՒԱՄԱՆԻ (էլմաս, ճեվնէր, Diamant). կ'առնակէ պսպղուն ու բազմեանց ջղիւր. կանանչ, դեղին, կապոյտ, վարդագոյն տեսակները կան. ճերմակները աւելի սուղ են, իսկ սեւերը — խիստ հազուադիւս — անզին են: Իր բանուածքին համեմատ՝ Աղտանգը 2 անուն ստացած է, Շողակն է Վարդակն:

ՇՈՂԱԿՆ կամ **ԳՈՂԱՐ** (բրաւանթի=brillant). իր ձեւերուն համեմատ՝ կը կոչուի կլոր՝ որ է՛ն յարզին է, կէս-սանձածէ (բինցա), ձուածէ, քառակուսի (քառավանգ) եւ տափակ (լաֆա=plaque)՝ այսինքն սակը վրան ցած: Երեսակները (Ճատքա) 32 են վրայի կողմը, 24՝ սակը. քառակուսին 8 երեսակ ունի, անկիւններն ալ զարնուած (ծայրաւ, tronqué): Կայ նաեւ կիսաեռոյակը (մէցո, demi brillant) որ 8 վրան եւ 6 սակը՝ անկանոն երեսակներ ունի. իսկ բոլորակ-սանձածէը (քէռո=poire) շողակնին յարզինէրէն է: Շողակնին մանր կորեկի չափ է եւ կը կոչուի շուկայիկ բառով « ինկիլքէռա »՝ խիստ յայտը բանուածով ու փայլով: Երեսակներու լաւագոյն բանուածքը « Սնկիան իւի » յորջորջումն ունի:

ՎԱՐԳԱԿՆ (Ռօզա=rose). սակը տափակ, վրայի մասը դուրս ցցուած՝ որ կը կոչուի պսակ (couronne), 6 երեսակներով որոնք շրջապատուած են պզտիկ երեսակներու բոլով մը, մեծուրեանք համեմատ՝ 24, 18, 12, 6: Ճանակը (սակի դիմ) սակիով զոցուած է: **ԿՈՂԱԿՆ** անուամբ (քապառա, monture): Մեծ տարերուն սակը սնդկանագ (tain)՝ բաղադրութիւն մը կը զտնուի որուն վրայի երեսին՝ երեսակներ կոխուած են քարին երեսակներուն քիւովը « չափմա » անուամբ (monture à facette), որ փայլը սաստկացունելու դերն ունի: Իսկ փոքրերը զամուած ասեմ՝ սակը արծաթաքերը (Ճոյա=feuille d'argent) կը դնեն նոյն նպատակաւ: Ամենափոքը—զնգասեղի մը գլխէն աւելի մանր — կը կոչուի « սայի քաւր »՝ զոր կը գործածեն զիրի եւ տերեւի ծայրերու, 6 կամ 12 երեսակներով: Վարդակնը կ'ըլլայ կլոր, կէս-սանձածէ, ձուածէ (պէլզս) եւ եռանկիւն: — Շողակնին եւ Վարդակնին քերութիւնները. — 1. Ճանկէն (սինկէլի, moucheté), մէջը սեւ բիծերով. 2. գէղ (պալքալը, gerçuré)՝ շեղ զարնուած երակներով. 3. պաղպաղուն (Ճըսգալը, bulle). սառնապատ (պուզլը, glacé)՝ որուն տեսքը խաղողի « մառ »ը կը յիշեցունէ:

ԱԿՆՎԱՆԻ կամ **ՎԱՆԱԿՆ** (նէճէճ, cristal de roche). իր նիւթն ազամաճղէն կակուղ է, բայց անոր գոյնը, տեսն ու քափանցկութիւնն ունի, առանց անոր ջալարձակ շողիքն՝ երբ երեսակները բանուին:

ՉՄՐՈՒՅՏ (արք՝. զիւմիւրիւս. աղաւ՝. զիւմիւրիւս=Emeraude). Գեղեցիկ կանանչ գոյնով մը՝ որուն լաւագոյնը կը կոչուի « Էորսէկ պաւի ». շողակնին բոլոր ձեւերն ունի, բայց սովորաբար քառակուսի կը տեսուի: Իր քափանցկութեանք մէջ, քիչ կամ շատ ունի աղտոտութիւն մը: Կ'ըլլայ 1. զլիսոն (սամա, cabochon). 2. երեսակաւոր (Ճատքա քաւր): Թերութիւնն է բժաւոր (պաննէլի, jardiné) ուրիւնը, այսինքն միջամասին՝ ծաղկոտ տեսք մը ունենալը:

ԾՈՎԱԿՆ (գիւմրիքի պահրի, aigue marine). Ծովագոյն կանանչ զմրուխ մ'է եւ ամբողջին պէս բարձրաճանցակ (camée) կը սառուի, կամ խորաճանցակ (entaille): Լազուլ (լաֆիլէր, lapis-lazuli): Բէրլէզուլ (=*béryl*, պէզաֆի). կապոյտ զմրուխ մ'է նման «ծովակն»ի: Շաֆիր-լա (=*saphir*, կոփ եագոյս). Երկնագոյն է եւ զնահասուած. Սիպրիոյ, Սէյլանի կամ Ափսի երկրի ծնունդ: «Շաֆիր-ղայ» բառը կուգայ Երբ". Ռոբէր բառէն որ կը նշանակէ ամենագեղեցիկ բան: Կոյ (գրմբըր եագոյս, Rubis). փայլուն կարմիր, արեւելիք արտադրութիւն. զրմբուխսին պէս կ'ըլլայ գլխօն կամ երեսակաւոր: Կոբլէն (լեալ, Balais). կայծին բաց վարդագոյնը: Ունի-ք կամ չի-ք (ըսքինէլ=*spinnelle*). կայծին սփոյն կարմիրը: Տոպազ-օրիէնտալ (topaze orientale կամ chrysolithe. սարը եագոյս). Ոսկեգոյն դեղին, քափանցիկ. եւ կորինդոնէ, այսինն «ալիւմինիումի օքսի» յէ կազմուած է: Լորինդոնը (=*corindon*) է՛ն կարծր մարմինն է ազամանդէն ետք]: Իր սարին սեւակը կը կոչուի յոբ-ք Տոպազ-օրիէնտալ (=*topaze brulée*=քօպան) որ մուք դեղին կ'ըլլայ եւ կը հանուի Պրագիլիայէ: Յիպինթ (=*hyacinthe*, սամանցօի, կամ եագոյսի պէնէճի). կարմիրի զարնող դեղնագոյն կամ մանիւակագոյն: Ճիւր-ի յիպինթ (ազ եագոյս). Շափիրղային ներկորակը: [Յակինթ, զմրուխ ու Շափիրղայ, այս Յին ալ «հինն իճի»ն կ'ըլլայ, այսինն բանուածքը հնդկական, որ է՛ Բօլի երեսակները Շափիր]: Պերլ-ք (=*պարսկ*. բիրուզէ կամ ժիրուզէ. Turquoise). Անթափանց կապոյտ. Պարսկաստանի եւ Եգիպտոսի արտադրութիւն. յարցին է Պարսկաստանինը. չարակնութեան համար բարեբար նկատուած է պարսկաստանցէն: Արե-ք (այնի շէմա, opale). ծիրանի գօսիի պէս երփներփեան: Մոյլ կամ Ագատ (=*agate*, այնի հուր). Արեւակինն նուազ փայլունը: Լուն-ք (= *Pierre de lune*) ազգ ակաֆի: Յասպ-ք (=*jaspe*, եէճիմ). ազգ ակաֆի: Սոբոլ-ք (հագիզ, cornaline). յունակի գոյն. ազգ ակաֆի: Օլիւն-ք (զէպէրնէս կամ զէյրունի, olivine կամ péridot). դեղնա-րակ կանանչ: Սուսակ (սէյլան, grenat), մուք կարմիր, կարկեհանէն կակուղ, որուն աւելի մուք գոյնը կը կոչուի Սպարտիտ (=*spessartine*, ֆիքրի). Սուրիա, Թիրոյ, Պոնտիա եւ Հունգարիա կը հայրաքթեն գայն: Մեթիստ (=*améthyste*, նէպէլլէզուլմ). գեղեցիկ ման: Շափագոյն: Աւենտուրին (=*aventurine*) քուլս դեղին ու պակզուն: Գիւն-ք (լէսի կէօզի, ceil-de-chat). ազգ կարկեղոնի: Յոյ-ք (=*jade*) վարձը կանանչառակ ֆար մը: Ոբսիդիան (=*obsidiane*). յոկուելու ֆազ ընդունակ՝ հրաքիային ֆար մը: Լուչիտ (րուշիան, marcassite): Գիւն-ք (=*malachite*, եղի-ք (=*sardoine*).— վրան ծառակերպ երակ ունեցողը կը կոչուի «Մէֆէ ագիզի» agate arborée: Կոբլէ-ք (գան քաւը, hématite). քաղկացոյթիւնն է «բէնօֆիս քր ժէն». կարմիր, նաեւ սեւով ու կանաչով խառն կարմիր. — ասով է որ կը շինուի կնիքի համար մասնի, երբեմն ալ դէմք բանելով վրան: Ենի-ք (սիւլլէմանի սլալլամի կամ օնիս=*onyx*), սեւորակ կարմիր՝ սակը, վրան ալ՝ ներմակ քերք մը. ազգ ակաֆի: Եւայն:

[Ոսկերչներու Շափային մէջ ընթացիկ՝ արհեստագիտական քորք բառերուն եւ ֆաւորաք լիզնանիս նեղումը կատարուած՝ ոսկերչի Միքիչ Անէմանի օժանգակութեամբ]:

ԿԻՐԱՍ.ԿԻ. Գ. 4 Մայիս=Մայրու ն. Տ. 17 Մայիս ՀձԲ. 17 Բէպիւլ ախըր
 ✨ ԷԹ. և Կ. ԷԹ. Զորորդ կիրակի, Յինանց ԻԲ. օրը, Կարմիր կիրակի: **ՅՆ.**
 Ս. Պեղարիտս վկայ: **ԼՏ.** Ս. Պատկաղէս Պայլօն կրօնաւոր: ՍՊԱՆԻՈՅ Թագաւորին
 ծնունդն ու զանակալումիւնը:

ԵՐԿՈՒՇԲ. Դ. 5 Մայիս=Մայրու ն. Տ. 18 Մայիս ՀձԲ. 18 Բէպիւլ ախըր
 ԷԹ. և Կ. ԷԹ. Յինանց ԻԴ. օրը: **ՅՆ.** Ս. Երինէ վկայուհի: **ԼՏ.** Ս. Վենան-
 տիտս վկայ:

ԵՐԵՔՇԲ. Դ. 6 Մայիս=Մայրու ն. Տ. 19 Մայիս ՀձԲ. 19 Բէպիւլ ախըր
 ԷԹ. և Կ. ԷԹ. Յինանց ԻԴ. օրը: **ՅՆ.** Ս. Յոր երանելի: **ԼՏ.** Ս. Իվան եպիս-
 կոպոս: ԷԲ. Լաղրաւմէր: ՌՈՒՄԻՈՅ Կայսեր ծնունդը:

ԶՈՐՔՇԲ. Ե. 7 Մայիս=Մայրու ն. Տ. 20 Մայիս ՀձԲ. 20 Բէպիւլ ախըր
 ԷԹ. և Կ. ԷԹ. Յինանց ԻԵ. օրը: **ՅՆ.** Ս. Ակակիտս վկայ և Կիսապենտեկոստէ:
ԼՏ. Ս. Բեննարդինոս կրօնաւոր:

ՀԻՆԳՇԲ. Զ. 8 Մայիս=Մայրու ն. Տ. 21 Մայիս ՀձԲ. 21 Բէպիւլ ախըր
 ԷԹ. և Կ. ԷԹ. Յինանց ԻԶ. օրը: **ՅՆ.** Ս. Յովհաննէս աւետարանիչ: **ԼՏ.** Ս.
 Փելիքս կրօնաւոր: **ՏՃ.** Պիւրնի ձէվզա (երկաւոր):

ՈՒՐԱՍ.Թ. Է. 9 Մայիս=Մայրու ն. Տ. 22 Մայիս ՀձԲ. 22 Բէպիւլ ախըր
 ԷԹ. և Կ. ԷԹ. Յինանց ԻԷ. օրը: **ՅՆ.** Ս. Եսայի մարգարէ: **ԼՏ.** Ս. Յուլի-
 անէ վկայուհի:

ՇԱՐԱՍ.Թ. Ը. 10 Մայիս=Մայրու ն. Տ. 23 Մայիս ՀձԲ. 23 Բէպիւլ ախըր
 ԷԹ. և Կ. ԷԹ. Յինանց ԻԸ. օրը: **ՅՆ.** Ս. Շմաւոն նախանձայրոյ: **ԼՏ.** Ս. Դի-
 դիերոս Լինզոնիոյ եպիսկոպոս: ՌՈՒՄԱՆԻՈՅ Թագաւորին զանակալումիւնը:

ՅՈՒՇԱՏԵՏՐ

4 Մայիս Կիր. [125—241] կէս օր. 4. 42

5 Մայիս Բշ. [126—240] կէս օր. 4. 41

6 Մայիս Գշ. [127—239] կէս օր. 4. 40

7 Մայիս Դշ. [128—238] կէս օր. 4. 40

8 Մայիս Եշ. [129—237] կէս օր. 4. 39

9 Մայիս Ուր. [130—236] կէս օր. 4. 38

10 Մայիս Շր. [131—235] կէս օր. 4. 37

* Մուկի մը բոցնը՝ կատուի մը ականջին մէջ չըլլար: * Մեղուին խայթոցովն՝ եզ քշել չըլլար: * Զորին՝ ծոցուոր տեսնել չըլլար: * Կարիճին մերատովը՝ կերպաս կտրել չըլլար: * Լուին՝ մաղուրքա սորվեցունել չըլլար: * Թուլքերան մը կզպելու համար բալլինք չըլլար: * Կրիայի տաշտին մէջ լուացք ընել չըլլար: * Ագուալին միտովը կերակուր եփել չըլլար: * Կեռասնիին վրայ ստեպղինի պատուաստ չըլլար: * Սարգի ոստայնէն բեհեզ չըլլար: * Վարունցով՝ հոգու մատազ չըլլար: * Օձի հաւկիթով՝ ձուազեզ չըլլար, * Պիծակին փեթակը՝ ուտուելիք մեկը չըլլար: * Ճանճին ծիրտովը բուսահողի պարտում չըլլար: * Ժօռատ բերնով՝ պերճաձայն առողանութիւն չըլլար: * Ակնոցն աչազուրկին օգտակար չըլլար: * Գեղեցիկ քարոզիչ ունեցող ժամուն վերնատունը թափուր չըլլար: * Հոգեառ հրեշտակին լօջ չըլլար: * Հարբուխէն ուունգերը սրինգ ածազ անձի մը՝ բոյր հաւնեցունել չըլլար: * Գոմէշին կաշիէն՝ ձեռնոց չըլլար: * Ագուալի փետուրներով՝ կանացի հովահար չըլլար: * Մագին՝ անսուազ գայլին կաղազը խաղաճ մակաղել չըլլար: * Օձի մը պէս մարդ կ'ըլլայ, բայց մարդու պէս օձ չըլլար: * Ծախար՝ ծանր, ցոյցը՝ մեծ, ծառան՝ առատ անձանց ծոցը լեցուն չըլլար: * Գործը գիտցող, քանքարի տէր ու քիչով գոհ քաղքեցիին գրպանը ծակ չըլլար: * Զարքաչ և աչալուրջ ըլլալ չի՛ բաւեր, չաջողածը ջոջ չըլլար: Եւ վերջապէս... — Թէնողիկի Տարեցոյցին չի հաւնող կ'ըլլա՞յ մի... չըլլա՞ր...:

24 Ապր. 1907

ՍԱՐԳԻՍ Ս. ՍԱՔԱՅԱՆ

ՆԻՍ ՈՒ ՀԱՆԳԻՍ

Թիկնաթուրի մը մէջ թաղուած մի՛ մնաք, երբ ինքզինքնիդ միտքով յոգնած զգաք կամ երբ ջշայն էք, (քաղաքավար բառը՝ էէշ ընտուորութեան): Անմիջապէս ելէք և կէս ժամու պտոյտ մը կատարեցէք անպատճառ: Եթէ դիւրութիւն չունիք դուրս ելլելու, բացէք պատուհանիդ, — անձրիւ ըլլայ թէ արիւ, — և քառորդ ժամ մը շունչ առէք. յետոյ կարճ հանգիստէ մը վերջ կրնաք շարունակել աշխատութիւննիդ, ձեր նախկին ընտանի զուարթութիւնը վերստացած: Զարմանալի է որ սրբան չարակամութիւններ ու վիշտեր կ'անհետին, երբ արիւնը կանոնաւոր շրջան մը կը կատարէ: Ուրիշ ազդեցիկ միջոց մըն ալ կայ, այն է վեր վար ազէկ մը սպնդել կոնակը դազջ ջուրով, որուն մէջ կաթեցունելու է քանի մը շիթ «ամօնիաք»:

ԱՌԱՄ. — Անու բնութիւն, ինչուան ծերութիւն:

ԿՄԱՆՁՐԵԻԷ ԿՈՐ, ԱՐՏՏՆՈ՛ՒՆՁ

Արտն՝ունձ, ինչ պիտի ընես հիմայ, կ'անձրեւէ կոր ահա. թող պիտի տաս որ հնձած ցորենդ, դարիդ կամ վարսակդ տեղատարափէն թրջելէ վերջ փաթն խոնաւութենէ: Մեղքը չէ՞ քեզի, քիչ մը քիչ յողնեցար տատեցար, քիչ մը քիչ քրտինք թափեցիր դուն աւոնց համար:

Ահա՛ քեզի կարճ և գործնական միջոց մը, ամառուան պատահական թօնընկէցներէն որպէս զի ուրիշ անգամ չի փճանաս: Երբ մէկ կողմէն դաշտդ մանգաղես, միւս կողմէն արագ արագ որայ կապել տուր և ձեւացո՛ւր որաներու դէզ մը հետեւեալ կերպով:

Ողաճաճեւ չորս որայ դի՛ր գետինն, այնպէս մը որ հասկերը ներսի կողմ նային ու քիթ քիթի իրար գոցեն: Այդ առաջին չորս խուրձերուն միջոցներուն մէջ դի՛ր չորս ևւս, միշտ հասկերուն դին դէզ ի ներս, և սկսէ՛ նոյն ձեւով բարձրացունել շեղջը՝ սակիներուն վրայ ութնական բարդելով, մինչև որ գումարը հասնի 24ի, այսինքն երեք կարգ, ու պիտի ունենաս կոնաճեւ զանգուած մը՝ որուն կատարը պէտք է հանգչեցունես խոշոր ու բլորչի կապուած որայ մը որ սակի խուրձերուն ամբողջութիւնը ծածկէ, պարփակէ և անոնց հասկերը կատարելապէս պաշտպանէ: Եւ որովհետև 25 կապոցով զաշտիդ պարունակութիւնը չաւարտիր, այս եղանակով շինէ՛ նաև ուրիշ դէզեր ալ, քով քովի: Եթէ անձրեւն առնէ — նոյն իսկ տեւական ըլլալու տեսակէն, — փոյթդ թող չըլլայ. ջուրը պիտի սահէ զանգուածներէն վար և շատ վարի յարկինները՝ հողին դպչածները պիտի թրջէ: Կանանչկէկ հնձուած ցորենն երբ այսպէս կուտակուի, հիանալի կերպով կը հասունանայ, ու 2-3 շաբաթ վերջ դէզն երբոր քակես, մէջն սակեզոյնի փոխուած պիտի տեսնաս: Այսպէս պաշտպանուած որաները կարելի է սայլով փոխադրել սաստիկ անձրեւէ մը քանի մը ժամ վերջ, առանց ամենաթեթեւ անպատեհութեան մը:

Արտն՝ունձ, մի՛ դժկամակիր աշխատաւորներուդ կէս օրական մը աւելի տալու՝ ցորենի կամ դարիի ցոյց արուած այս դէզերն ունեւնալու համար: Անձրեւը վրայ հասնելուն է որ պիտի փութաս շնորհաւորել ինքզինքդ և... այս մէթոտը քեզի սորվեցունողը:

Ուշի ուշով անգամ մըն ալ կարդա այս էջը:

ՃԵՐՄԱԿ ՏՕՆԸ

(ԶՄԵՌՈՒԱՆ ՔԵՐՔՈՒԱԾ)

Քրնաթաթախ մակոտ առտուն ճրմեռուն
Կը սարսրոյ ձորձերու մէջ ձիւնեղէն :
Ձինջ է երկինքն , — ամայութեանց օթեւան ,
Ու կը բզխի սյգն՝ ստուերէն երախին :

Թարմ արեւին ոսկի ժպիտը անհուն
Կ'օծէ ծալքերը ձիւնեղէն շուրջառին :
Զանակներու կայծեր՝ հեռուի դաշտերուն
Մարգարտապատ կողին վըրայ կը վառին :

Լեռնանըկար հորիզոնը փառաւոր ,
Սէգ չղթայում՝ աղամանդեայ բուրգերու ,
Ճերմակ հրդեհ մը կը վառէ անսովոր ,
Տարախարհիկ շքեղութեամբ մը հուժկու :

Շափուղաներ կը քանդակուին ձիւնին մէջ .
Անճառելի խրտրղտում մ'է ամէն բան .
Բիւր ցոլքերու մի խօլապար ելեւէջ
Կը խաղխրդէ ձիւնին սնդուսն անսահման :

Մեծվայելուչ է ամէն իր , ամէն ինչ ,
Կըրօնական խորհուրդով մը սրբանուէր .
Ու ճրմեռուն տօնն սպիտակ ու շինիչ՝
Կը թելադրէ ինձ դարնաւէտ անուրջներ :

Ամենայն ինչ խաղաղութիւն է համակ .
Մեծ հաշտութեան մ'օծումն ունի ամէն բան :
Եւ համաափիւռ մաքուր սարսուռն սպիտակ՝
Կը համակէ հոգւոյս ալքերն իմ խոզան :

Աստուածային ոսկերչութիւնն է վըսեմ ,
Որուն հանդէպ կը ծնրադրեմ հոգեղմայլ ,
Եւ հոն միասիկ հեշտութիւններն ես կ'ըմպեմ
Հըրաշաղեղ ճերմակ տօնին մաքրափայլ :

Մայիս, 8 ֆեւր. 1907

ԱՐՏԱՇԷՍ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

ԱՌԱՄ. — Ա. — չ է գեղեցիկ, շուրջ է գեղեցիկ

ժամուն բակը :

Տեքտեր. — Տեսա՛յ, օրհնած, դուն շատ ջերմուանդութեամբ աղօթեցիր. Աստուած խնդիրքդ կատարէ պիտի :

Մարդուկը. — Ինսո՞ր չաղօթէի, շատոնց է պարսպ կը պարտիս կոր, աասնոց մը չիկայ զրոյանս :

— Ի՞նչ գործ կ'ընես : — [Մեռելաթաղ եմ...]

Տեքտեր՝ մեկուսի. — Մենք քենէ շատ սրտանց կ'աղօթենք քոր այդ մասին :

* * Էգիի մը դուռ, պտուղներու սուտա եղանակին, պարտիզպանն իր քուֆային մէջ կեռաս լեցուցած՝ ծախու դրեր էր : Մութացիկ մը կ'անցնի և պողպատաձառնին մէկ մտադրազ վիճակէն օգտուելով՝ ճանկ մը կը նետէ կողովին պարունակութեանը : Մարդը կ'սթափի և «Ի՞նչ կ'ընես կոր» մը կը ձայնէ բարկացած :

Մութացիկն անսարքեր. — Ուզեցի ծառին վրայ դնել հովէն թափած սա կեռասները... :

* * Աղքատիկ սրտակ մը :

Բանաւան. — Կի՞նն ամենուրեք պարտի հետեւիլ իր ամուսինին :

— Եթէ կարելի է, Տէր հայր, կ'ընդմիջէ զոքանջը, փոխէի՞ք այդ յորդորնիդ. մե՛ղք է ազլիանս, լրագրիլի ցրուի՛չ է փեսաս... :

* * Մութացիկ մը սովորութիւն ունէր անբնակ տան մը սեռին վրայ նստիլ ամէն օր : Տունը շատ հին ըլլալուն՝ օր մը զայն փլցունել հարկ տեսնուեցաւ : Մութացիկն ամուսին կտոր մը առնելով, դուռին վրայ փութաց հետեւեալը գրել. «Անկար աղքատը պատիւ ունի ծանուցանել իր յարգոյ յաճախորդներուն թէ՛ անձ օրէն սկսեալ... զիմացի կողմը փոխադրուած է» :

* * Լուսայտիտի մը խանութին առջեւ կայնած՝ չունեւոր մարդ մը սխրանքով կը դիտէր ապակեղարանին պարունակութիւնը, բերնին ջուրերը վաղելով : — [«Ի՞նչ կայներ ևս հող, ճամբա՛դ դնա՞» ձայնեցին ներսէն :

— Ի՞նչու կը նեղանաք կոր, ուզեցի գիտնալ թէ ի՞նչ կը ծախէք :

— Էշու գլուխներ... :

— Կ'երեւայ թէ յաջող գործառնութեան մը վրայ էք, քանի որ խանութնիդ երկու հատ մրայն մնացեր են... :

ԿԻՐԱԿԻ. ԳՅ. **11** Մայիս—Մայրու ն. Տ. 24 Մայիս ՀձՐ. 24 Բէպիւլ ախըր
 ✕ **ՀԹ.** և **Կ.** **ՀԹ.** Հինգերորդ կիրակի. Յինանց ԻԹ. օրը: **Ս.** Խաչին երեւումը:
ՅՆ. Ս. Մօքիոս վկայ: **ԼՏ.** Ս. Վիչենցիոս Լեօնացի:

ՍՐԵՈՒՇԲ. ԳԷ. **12** Մայիս—Մայրու ն. Տ. 25 Մայիս ՀձՐ. 25 Բէպիւլ ախըր:
ՀԹ. և **Կ.** **ՀԹ.** Յինանց Լ. օրը: **ՅՆ.** Ս. Եպիփան Կիպրոսի եպիսկոպոս: **ԼՏ.**
 Ս. Ուրբանոս Նաոււի հայրապետ:

ՍՐԵՒՇԲ. ԴՅ. **13** Մայիս—Մայրու ն. Տ. 26 Մայիս ՀձՐ. 26 Բէպիւլ ախըր:
ՀԹ. և **Կ.** **ՀԹ.** Յինանց ԼԱ. օրը: **ՅՆ.** Ս. Կղեքերիա վկայուհի: **ԼՏ.** Ս. Փի-
 լիպոս Ներեան:

ՉՈՐԻՇԲ. ԴԷ. **14** Մայիս—Մայրու ն. Տ. 27 Մայիս ՀձՐ. 27 Բէպիւլ ախըր:
ՀԹ. և **Կ.** **ՀԹ.** Յինանց ԼԲ. օրը: **ՅՆ.** Ս. Իսիդորոս Բիտոցի վկայ: **ԼՏ.** Ս.
 Հիլդերերդոս: ՌՈՒՍԻՈՅ Կայսեր Սագաղրումիւնը:

ՀԻՆԳՇԲ. -Յ. **15** Մայիս—Մայրու ն. Տ. 28 Մայիս ՀձՐ. 28 Բէպիւլ ախըր:
ՀԹ. և **Կ.** **ՀԹ.** Յինանց ԼԳ. օրը: **ՅՆ.** Ս. Պախումիոս Մեծն: **ԼՏ.*** Բրիս-
 տոսի Համբարձումը:

ՈՒՐԱՍԹ. -Է. **16** Մայիս—Մայրու ն. Տ. 29 Մայիս ՀձՐ. 29 Բէպիւլ ախըր:
ՀԹ. և **Կ.** **ՀԹ.** Յինանց ԼԴ. օրը: **ՅՆ.** Ս. Նիկողոս Կ. Պօլիսի հայրապետ:
ԼՏ. Ս. Մաքսիմիոս եպիսկոպոս:

ՇԱՐԱԹ. ԲՅ. **17.** Մայիս—Մայրու ն. Տ. 30 Մայիս ՀձՐ. 30 Բէպիւլ ախըր:
ՀԹ. և **Կ.** **ՀԹ.** Յինանց ԼԵ. օրը: **ՅՆ.** Ս. Ս. Անդրոնիկոս և Յունիոս առաք-
 եալներ: **ԼՏ.** Ս. Փերդինանդոս Սագաւոր:

ՅՈՒՇԱՏԵՏՐ

11 Մայիս Կիր. [132—234] Կէս օր. 4. 36

12 Մայիս Բշ. [133—233] Կէս օր. 4. 35

13 Մայիս Գշ. [134—232] Կէս օր. 4. 34

14 Մայիս Դշ. [135—231] Կէս օր. 4. 33

15 Մայիս Եշ. [136—230] Կէս օր. 4. 33

16 Մայիս Ուր. [137—229] Կէս օր. 4. 32

17 Մայիս Շր. [138—228] Կէս օր. 4. 31

* Կնոջ մէջ կէշը փնտաւու է լոկ, և ոչ թէ սէր: Վարպետ Քլորանսցիէ մը արուեստագիտորէն քանդակուած բաժակ մըն է Կիւնը՝ զոր պէտք է սիրել աչքով միայն և ոչ թէ շրթունքով. վասն զի... մէջը բան չիկայ: * Կինն որթատունկի կը նմանի. կը յննու և կը զինովցունէ: * Եթէ կարելի ըլլար ծախու առնել կիներն ա՛յն զինով որ կ'արժեն իրապէս, ու վերջէն ալ հարկ ըլլար ծախել զանոնք ա՛յն զինով զոր ինքզինքնուն կուտան իրենք, Օ՛հ, զբամ գնելիք տեղ չը պիտի գտնար մարդ: * Աւելի լաւ է գեղեցիկ կնոջ մը հետեւիլ, քան թէ բժշկական դարձանու մի մը: * Կիները սիրոյ քերթուածը զբամ են, էրիմարդիկ մեկնարանած են զայն՝... առանց բան մը հասկընալու: * Իգական սեւին ինքզինքը կուտայ զբամի համար, միւս չը՝ սիրոյ համար, վերջին չը... ոչինչի համար: Այս վերջիններն ամէնէն զիւրամատոյցներն են: * Կինն երեք խորշ պահաս ունի զանկին մէջ, և նեարդ մը աւելի՛ սիրտին մէջ: * Խարտեաչ մը իր աչքերուն համար առնելու է, իսկ թուխ մը՝ իր հաճոյքին համար: * Կինն արուեստագիտորէն կազմուած սիրուն զիրք մըն է, որուն մէջը սակայն չստ բան չի կոյ կարգացուելիք: * Երբեք չի դադրիր կին մը շահագրգռուելէ ա՛յն կինով, որուն ազջիկնութեան՝ իր ամուսինը կարգուիլ ուղած էր անոր հետ: * Կիները կեանքի անջրպետները կը լեցունեն՝ փայտի այն տաշեղներուն պէս որոնք կը դրուին յա՛նճապակիի մնտուկներու մէջ: Ի՛նքնին ոչինչ կ'արժէ տաշեղը, բայց առանց անոր՝ ամէն բան կը խորտակուի: * Կը տատանի, կը տատամօի. մէկ բառով՝ կի՛ն է ան: * Կինը դուտորն է չարիքներու, և հեղինակուհին մոլութեանց: Խորամանկութիւնն անոր ճակատէն դուրս ելած է, սուսն՝ անոր բերնէն, ու փրտախան՝ անոր կողերէն: Իրենցմէ է՛ն մաքուրն անգամ և ուր մը կը թողու մարմինին մէջ, և վէրք մը՝ սիրտին վրայ: * Կեանքը՝ կանանց համար՝ եղածը կամ բլլալիքն է, և ոչ թէ «կըլլայ կոր»ը: Կիները չեն ապրիր, այլ կ'անցնին կեանքին մէջէն: * Կուղէ՞ք որ կին մը վերջին ծայր պարկեշտ ըլլայ, ազեղոցէ՞ք զինքը: * Աւելի զիւրին է կնոջ մը համար՝ լքել իր սիրականը, քան թէ իր հայելին:

ԱՌԱՄ. — Ինչ որ Պիտի չի սորվեցաւ, Պիտրս չի՛ սորվեր:

Տ Ի Ե Ջ Ե Ր Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ԱՐԵՒԷՆ ԱՆՀՈՒՆԱՊԷՍ ՀՄԿԱՆԵՐ

Մէկ միլիոն անգամ աւելի մեծ է Արեւն Երկիրէս: Իսկ եթէ Արեւը 10,000 անգամ աւելի մեծցունենք, այն ասան միայն կը հասնինք Արջագի (arcturus)ի, Կանոպէ (canopus)ի, Անտարէս (antares)ի, Պեթա (béta)ի և Յուշկապարիկ (centaure)ի պէս հսկայ արեւներու: Հաշոււած է որ ինքնաշարժ կառք մը եթէ ժամը 100 մղոն արագութեամբ ճամբորդէ, 8000 տարի պէտք պիտի ըլլար իրեն, որպէս զի անգամ մը շրջանն ընէր Պեթային և Յուշկապարիկին, ու ա՛յլ աւելի՛ Արջագիին ու Կանոպէին համար:

ԵՐԿՐԻՍ ՇՈՒՔԸ

Այո՛, Երկիրս ալ շուք ունի, բայց շատ քիչեր կը տեսնան զայն, քացի լուսնի խաւարման սրտազաններէ: Ուշադրութիւն բրած էք ամառն, անամպ դեղեցիկ իրիկուններն, արեւը մարը մասնելէն քիչ առաջ, որ վարդագոյն կամ տարագոյն աղեղ մը կը ձեւանայ՝ արեւուն հանդիպակաց հորիզոնին վրայ, տակը՝ կապտորակ-գորշ մասով մը: Արեւն ո՛րքան սուղի դէպի ներս, այդ աղեղն ալ կ'սկսէ վեր բարձրանալ. — Ա՛տ է ա՛նա Երկրիս շուքը:

ԹԷ՛ ԱՆՈՒՇ ԵՒ ԹԷ՛ ԱՂԻ ԶՈՒՐՈՎ ԼԻՃՆՐ

Ուուսիոյ լաբոնական եզերքին մօտ գտնուող Քիլտին կղզիին մէջ լիճ մը կայ որուն ջուրը թէ՛ անուշ է և թէ՛ աղի: Կղզին բրածոյական ժայռ մըն է ծովով բաժնուած՝ կրանիթէ ցամաքէն, որուն վրայ կը գտնուի այդ լիճը. հողին տակէն՝ ծովին հետ հազորդակցութիւն մը ըլլալու է, քանի որ ծովին մակընթացութիւնները լիճին վրայ ալ կը նշմարուին: Մակերեսին ջուրն անուշ է, առուակներէ և անձրևներէ գոյացած, որով՝ անուշ ջուրի ձուկեր ալ կան մէջը. մինչդեռ յատակն աղի է ու բնակավայր՝ ծովի բնակիչներու: Թիպէթի մէջ գտնուած Բանկոնք լիճն ալ այս կրկնակ բնոյթն ունի. նոյնպէս՝ Կասպից ծովը, մինչև որոշ տարածութեան մը վրայ:

ԿԻՆ ԿԻՆ ԿԻՆ...

Կեղծաւորութեան քիչ մը անհարկին՝
Գողկէ՛ ին է յար Կին :
Տեսքըն ու կեանքըն ունի յասմիկին՝
Դեռանաս մի կին :
Առաջ ալ այսպէս քուրջին ու ներկին
Միշտ պէտք ունէ՞ր կին :
Սիրահարներու պապուկ բանակին՝
Սի՞րտ մի բանայ կին :
Ի՞նչ կ'արժէ իր քով գեղը ծաղիկին ,
Երբ ծիծաղի կին :
Սկըսելէն վերջ — թէեւ ա՛լ ուժգին , —
Բայց սիրէ՞ ո՛ւշ ՝ կին :
Է՞ր հոգի կուտայ այնչափ պըսակին՝
Էակը սա Կին :
Ջինջ ոսկիներու յաճախ կուտակին՝
Սի՛րտը կուտայ կին :
Տալ մեր ուսն ի՛նչպէս բեռն իր կունակին
Հեշտիւ կրնայ կին :
Կապէ՛ , — նայելու առա՛նց որակին , —
Սիրոյ որայ՝ կին :
Ջանացէ՛ք առնել , ըսած է... Պուշկին !
Մէյմէկ ապուշ կին :
Ուրիշի՛ն , քան թէ սէրովն էրիկին՝
Յաճախ էրի կին :
Է՞ր գրաւել բոլորն իր շրջանակին
Այրերն ջանայ կին :

21 Ապրիլ 1907

ԼՍ—ՍԷ

Աշխարհիս է՛ն վիթխարի ժամացոյցը կը գտնուի Թաուն Հօլ (Ֆիլատէլֆիա) : Պահացոյցը (cadran) 10 մէթր արամաչափ ունի . գիշերներն կը կտրականութեամբ կը լուսաւորուի , քաղքին ամէն կողմէն տեսնուելով : Վայրկեան ցնցունող ասեղը 4 մէթր է , ժամ ցուցունող ասեղը՝ 2½ մէթր : Ժամացոյցը կը կշռէ 25 թօնօ , և ամէն օր կը լարուի՝ իր աշտարակին ներքնայարկը հաստատուած շոգեշարք մեքենայի մը միջոցաւ :

ԱՌԱՄ. — Ձեռք գնդակի ղ ռե՛նտի , Ին ին արձակ ղ ղ Կոնտիլ Կոնտիլ

ԹՐՋԱԾ ԹԱԻԻՇ մը իր ճկունութիւնը կորսնցունելով փաս կը կտրի . զայն ողորկելու համար՝ հակառակ կողմէն կը թրջին և արդու կի մը վրայ կը բռնեն : Ջուրին շոգին թելերուն մէջէն կ'անցնի և զանոնք իրարմէ կը զատէ :

ԽԱՐԴԱ՞Խ ԹԷ ԱՆԽԱՐԴԱՆ. — Ճերմակ ծծուն թուղթի կտորի մը վրայ ձեռ փորձելիք գինիէն չիթ մը կաթեցուցէք և դրէք զայն «ամանիաք» պարունակող չիչի մը բերնին : Եթէ գինին անխարդախ է, կանանչ արատ մը կը դոյանայ սպիտակածիր . իսկ եթէ գինին արտեստական կերպով գունաւորուած է՝ մէջի շրջանակը վարդագոյն կամ մանիչակագոյն կ'ըլլայ :

ՊԱՅԾԱՌ ԼՈՅՍ. — Կազով վառուող լամպարներէն յառաջ եկած գէշ հոտը կարելի է վանել և անոր աւելի՛ գեղեցիկ ու փայլուն պայծառութիւն մը տալ, քարիւղի ընդունարանին մէջ մէկ երկու գունա նաֆթալին ձգելով : Այս միջոցով եթէ չի յաջողելու ըլլաք, պէտք է անմիջապէս պատրոյզը փոխել : Քարիւղին մէջ «քառապիւռ անիտոսովէն»ի լուծուան է որ պատրոյզներուն շուտ մը ազատտելուն պատճառ կ'ըլլայ :

ՆԵՐԿՈՒԱԾ ԴՈՒՌՆԵՐ գործածուածով կ'աղտոտին ձեռքի անմաքրութիւններէ . զանոնք սրբելու և ազտը հանելու համար գործածուող օճառի ջուրը ներկն ալ մասամբ միասին կը հանէ . ուստի պէտք է ասուեակ (Ֆանէլա)ի կտոր մը թաթիսել խայճղանաճարպի մէջ (paraffine) և շիւել մատի նշաններուն տեղումքն, որոնք իսկոյն կ'անհետին, տակի ներկն անեղծ պահելով . յետոյ առք ջուրը թաթիսուած լաթով մը վրայէն սրբել :

ՃԱՐՊԻ ՀՈՏ. — Որպէս զի ոչխարի ճարպին մէջէն գէշ հոտն անհետի, կը բաւէ ճարպը հալեցունելու ատեննիդ՝ մէջը նետել քանի մը կտորի վերածուած սոխ մը, կամ շերտ մը հացի փոր՝ մինչև որ հոն խորովի ու կարմրի աղէկ մը :

Ի՞ՆՉ ՏԵՍԱԿ ՎՐՁԻՆ. — Չզետտ խոզանակելու համար պէտք է գործածել մի՛ միայն սէզ (այրքք օթը, chiendent)է չինուած վրձիններն որոնք քսուած ատեննին իրե՛նք կը մաշին լոկ, մինչդեռ ձար (զըլ, crin)է չինուած վրձին մը հազուապէս է որ կ'ուտէ, կը մաշեցունէ : Որպէս զի սէզէ վրձիննիդ ուշ հիննայ, պէտք է զայն ատեն ատեն մխրճել յստակ ջուրի մէջ՝ որ վրձինին մազերուն ճկունութիւն մը կուտայ և կտարելէ կ'արգելու անոր ճեղքերը :

Ժամացոյցը հորիզոնական դիրքով անահիկ մը բռնելու է որ փոքր սլաքն արեւին նայի: 12ին վրայ եղող—կամ, այնպէս նկատուած — ուրիշ սլաքը մը հետ այդ պղտիկ սլաքին կազմելիք անկիւնն երկուքի բաժնող զիծը (bissectrice, երկատիշ) հարաւի ուղղութիւնը պիտի ցուցունէ, վասն զի արեւը կէս օրին (Ը. Ե. 12) միջօրէականի վրայ կը հասնի: Բայց երբ, օրինակի համար, ժամը Յին վրայ գայ, սլաքին ծայրը հորիզոնին ա՛յն կէտին պիտի նայի՝ ուր արեւը ժամը 6ին կը հասնէր: Ասոր պատճառն այն է որ Արեւն երկրիս շարժ իր առերեւոյթ ընթացքը կատարելով, բարձրածիր մը պիտի գծէ ո՛չ թէ 12, հապա 24 ժամուան մէջ: Ուստի եթէ (Ը. Ե.) ժամը 3 ըլլալով, ձեռուքիս բռնած ժամացոյցինս ա՛յնչափ մը միայն դարձունենք որ փոքր սլաքին ծայրը՝ Յրդ. ժամը ցոյց տայ երկինքի պահացոյցին վրայ (cadran du ciel), — այսինքն երկինքի մէջ արեւին եղած կէտին ուղղութեանը վրայ եթէ գտնուի, — ժամացոյցին վրայ 12ը նշանակող ուրիշ սլաք մը երկինքին ա՛յն կէտին դարձած պիտի ըլլար՝ ուր արեւն արդէն ժամը 9ին, կամ, միջօրէէն 3 ժամ առաջ նստած պիտի ըլլար՝ և հետեւաբար, այդ երկու սլաքներուն կազմած անկիւնին երկատիշը հարաւին պիտի նայէր: Եոյնպէս, եթէ ձեռուքնուս ժամացոյցին պղտիկ սլաքը կէս օրէն 4 ժամ ետք արեւին դարձունենք, 12ին վրայ եղող սլաք մը երկինքի ա՛յն կէտը պիտի մասնանշէր՝ ուր արեւը կէս օրէն 4 ժամ առաջ (կամ որ նոյն է՝ առտուան Տրդ ժամուն) արդէն ժամանած պիտի ըլլար: Այսպէս ա՛ն՝ յետ միջօրէի կողմնապիւտ ընելու S'orienter) դէպքերուն մէջ: Իսկ կէս օրէն առաջ ալ նոյն է գործելոցն կերպը, շրջժամը մը միայն: Սեպտեմբ թէ ժամը 11 է (միշտ Ը. Ե.): Երբ սլաքիկ սլաքն արեւին ուղղենք, 12ը ցուցունող ուրիշ սլաքի մը ծայրն երկինքի ա՛յն կէտին պիտի նայի՝ ուր արեւը պիտի հասնէր կէս օրէն վերջ՝ ժամը 1ին, մինչ ժամացոյցին վրայ 11ին և 12ին միջոցը 1 ժամ է միայն: Այսպէս ուրեմն, երկու սլաքներուն կազմած անկիւնին երկատիշը պիտի տայ հարաւի ուղղութիւնը:

ՄԱՆՈՅ. — Ուղղեցեւ 2 հաւասար մասերու բաժնելիք անկիւնն առնուան Գր ժամն փնչի երկուան Գր ժամն եղած միջոցին մէջ բաժնեցապիւտ է, (որով էւ 180 աստիճանէն միտ փոք է), վաս չիկայ որ երկուքի հարաւի տղ առնի: Առնուան Գր ժամն առաջ էւ իրկուան Գր ժամն ետք որ էւ է սխալում զիծ մնալու համար բաւ է յիշել որ առնուան մտք առնի զորած ասին՝ հարուստ իր աջ կողմը կ'ուրեմնայ ու կ'ս օրէն ետք—մի էւ նայն պարագաներուն մէջ—արեւը դէպ ի ձախ կը գտնուի:

Մարդ իր ընտկած տեղը պէտք չունի որոշելու երկինքի չորս ծագերն՝ որոնք արդէն ծանօթ են իրեն: Բայց խնդիրը կը փոխուի երբ մարդ ճամբորդելու ըլլայ և գտնուի մասնաւանդ անտառի մը մէջ, վրան կողմնացոյց մը առանց ունենալու: Կողմնացոյցին զերբ զբարանի պարզ ժամացոյց մը պիտի կատարէ ա՛ն

Ո՛րքան ատենէ ի վեր, սիրելի՛ս,
 Քեզի ձայնեակ մը գոնէ չեմ ուղղած,
 Կամ վիլանէլ մը որուն միշտ հաւնիս,
 Փափուկ հիւսուածքով ու խորաթափանց:

Ինձմէ նամակի կ'սողասես հարկաւ .
 Ի՞նչ գրեմ արդեօք որ շա՛տ նոր ըլլայ .
 Բայց չէ՛, սպասէ՛, աղէ՛կ միտքս ինկաւ,
 Քեզի պատմութիւն մը ընեմ հիմայ:

Անցեալ օր ա՛յլ մը գացի՛ր էի ես,
 Ընտանիքի մը զոր դուն չես ձանձնար,
 Հարցում մը յանկարծ չինեցի միտքէս՝
 Հոն ներկաներուն ուղղելու համար:

«Փունջ կրնայ չլինուիլ ճառագայթներէն . . .»
 Հարցում մը միսթիք, բանաստեղծական,
 Որ քերթողներուն կը վայլէ նորէն .—
 Ո՛չ ոք պատասխան կրցաւ տալ սակայն:

Գըրաւ բռնեցի որ կրնայ ըլլալ,
 Ու թղթապանակս շուտ մը հանելով
 Յոյց արւի խուրձ մը մագերու ծալ ծալ,
 Մէջտեղէն կապուած նուրբ ժապաւէնով:

Ամէնքն ալ գրեթէ այսպէս զարմացան,
 Տեսնելով ձեռքս փունջը ոսկեմած
 — Մագերդ՝ որոնց արեւն իր դեղձան
 Ճառագայթներուն խարտեաչն է տուած:

Գիշերն անցեր է. լամբարս իր մաքուր
 Վարդագեղ լոյսը կ'արեւէ չորս դիւս .
 Մի՛ մոռնար խոստումդ. իմ երա՛զս եկուր,
 Ու . . . գիշեր բարի, պաշտելի՛ս, հողիս:

Բերա, 3 Ապրիլ 1907

ՄԵՐՈՒԺԱՆ ՊԱՐՍԱՄԵԱՆ

ԱՌԱՅ. — Բնական համբան՝ գնէ, անի համբան՝ գնէ:

ԿԻՐԱԿԻ. ք. 18 Մայիս—Մայրու ն. Տ. 31 Մայիս ՀձԲ. 1 ձէմագիւ էվվէլ
 ✕ ՀՅ. և Կ. ՀՅ. Վեցերորդ կիրակի Յինանց ԼԶ. օրը ԵՆ. Ս. Ս. Պետրոս
 վկայ իր ընկերներով ԼՏ. Ս. Պետրոնիլլա՝ Պետրոս առաքեալի դուստրը:

ՅՐԵՈՒՇԲ. ք. 19 Մայիս—Մայրու ն. Տ. 1 Յունիս ՀձԲ. 2 ձէմագիւ էվվէլ
 ՀՅ. և Կ. ՀՅ. Յինանց ԼԷ. օրը ԵՆ. Ս. Պատրիկիոս մեծ վկայ ԼՏ. Ս. Փոր-
 դունադոս վկայ:

ՅՐԵՒՇԵՐ. ք. 20 Մայիս—Մայրու ն. Տ. 2 Յունիս ՀձԲ. 3 ձէմագիւ էվվէլ
 ՀՅ. և Կ. ՀՅ. Յինանց ԼԸ. օրը ԵՆ. Ս. Թալլէոս վկայ ԼՏ. Ս. Եւզինէաս
 վկայ:

ՉՈՐԻՇԵՐ. ք. 21 Մայիս—Մայրու ն. Տ. 3 Յունիս ՀձԲ. 4 ձէմագիւ էվվէլ
 ՀՅ. և Կ. ՀՅ. Յինանց ԼԹ. օրը ԵՆ. * Ս. Ս. Կոստանդիանոս Թագաւոր և
 մայրը՝ Հեղինէ: ԼՏ. Ս. Կլոդիլտէ Թագուհի ՏԱՆԻՄԱՐԳԱՅԻ Թագաւորին ժը-
 նունդը:

ՀԻՆՊԵՐ. ք. 22 Մայիս—Մայրու ն. Տ. 4 Յունիս ՀձԲ. 5 ձէմագիւ էվվէլ
 ✕ ՀՅ. և Կ. ՀՅ. և ԵՆ. Քրիստոսի Համբարձումը: Վիճակ Յինանց
 Խ. օրը ԼՏ. Ս. Էմմա իշխանուհի:

ՈՒՐԱՍԹ. ք. 23 Մայիս—Մայրու ն. Տ. 5 Յունիս ՀձԲ. 6 ձէմագիւ էվվէլ
 ՀՅ. և Կ. ՀՅ. Յինանց ԽԱ. օրը Պահր: ԵՆ. Ս. Միքայէլ Սիւննաղայ և
 պիսկոպոս ԼՏ. Ս. Վաղերիա վկայուհի ՀԲ. Սաւօմ = Պենտեկոստէ կամ
 Կիւլ Պայրամի Ա. օրը:

ՇԱՐԱԹ. ք. 24 Մայիս—Մայրու ն. Տ. 6 Յունիս ՀձԲ. 7 ձէմագիւ էվվէլ
 ՀՅ. և Կ. ՀՅ. Յինանց ԽԲ. օրը Երաստեղ ԵՆ. Ս. Սիմէոն լեւոնկեաց:
 ԼՏ. Ս. Նորբերոս եպիսկոպոս: ՀԲ. Կիւլ Պայրամի Բ. օրը: ՅՈՒՆԱՍՏԱՆԻ
 Թագաւորին զահակալուծիւնը:

ՅՈՒՇԱՏԵՏՐ

18 Մայիս Կիր. [139—227] կէս օր. 4. 30

19 Մայիս Բշ. [140—226] կէս օր. 4. 29

20 Մայիս Գշ. [141—225] կէս օր. 4. 28

21 Մայիս Դշ. [142—224] կէս օր. 4. 27

22 Մայիս Եշ. [143—223] կէս օր. 4. 27

23 Մայիս Ուր. [144—222] կէս օր. 4. 26

24 Մայիս Շր. [145—221] կէս օր. 4. 26

— Շատ կանուխ կը կարգէք կոր զաւակնիդ, սպասելու էիք որ խելքը գլուխը զար քիչ մը:

== Ապուշ չեմ այդքան: Խելքը գլուխը զալէն վերջը կը կարծէք որ ամուսնանար...:

* * * Պարոն Ն. ճաշկերոյթի մը հրաւիրուած է ու ճիշդ քովն ինկած՝ խոշոր գէր տիկնոջ մը որ արատուոց կերպով «տէքօլթէ» հագուած է: Պ. Ն. ձանձրացած, ո՛չ հաւէն կ'ուտէ և ոչ ալ փափանէն:

Տակտիւնիս. — Արդեօք չէի՞ք սիրեր ճերմակ միս:

== Ինչպէս չէ, Տիկին, բայց ո՛չ այսքան առատ քանակութեամբ:

* * * Հեռագիրով պզտիկ տեսակցութիւն մը երկու ամուսնացածներու միջև:

« 20 ոսկի խրկէ ինծի, շրջագրեատ գնեմ պիտի: ՄԱԹԻԼՏ

« Յ. Գ. — Մոռցայ քեզի խրկել իմ բոլոր գորովս: ՆՈՅՆ»

— « Բեզի կ'ուզարկեմ իմ բոլոր գորովս: ԱճՈՒՄԷՆԷ ԷՏՈՒԱՌ

« Յ. Գ. — Մոռցայ քեզի ըսել թէ 20 ոսկի քեզի խրկելս անկարելի էր: ՆՈՅՆ»

* * * Արքայութեան դուռը կը ներկայանայ բարի մարդու մը հողին: Մուրը Պետրոս — լաւ դռնապան՝ — ապրած կեանքը պատմել կուտայ անոր:

— Ամուսնացած էի, (կ'սկսի), կնիկս իս...

== Կը բաւէ՞, կը յարէ Ս. Պետրոս, նե՛րս մտիք, աշխարհի վրայ դուն ըրե՛ր ևս եզեր քու քաւարանդ:

— Այդ պարագային, (կը ձայնէ դրանը շուրջ սլքաբերկացող նորեկ մը), ևս աւելի՛ առաջ մտնելու եմ, որովհետև ևս երկու հեղ կարգուած եմ:

== Կորսուէ՛. Եղեմը դժբախտներո՛ւն համար է միայն, չէ՛ թէ տխմարներուն:

* * * Ինքնահաւանը կը շարունակէր տակաւին. «Իմ գիտցածներուս քառօրդը սորվէիր՝ հերիք էր»: Իմաստուն խօսակիրը, համբերութեանը պահետիւն ալ սպասած՝ պատասխանեց.

— Քու գիտցած բաներուդ և իմ մոռցած բաներուս չափերը հաւասար են իրարու...

* * * Թեկտը. — Իմին ձայնս անտանկ բարձր կ'ելլայ որ երգելէս քառօրդ ժամ վերջն իսկ կը լսեն զիս...

Պատիթօնը. — Ատոր խօսքը չըլլար. իմինս՝ երգելէս քառօրդ ժամ առաջ կը լսուի...

Ս. ՊՕՂԻԿԱՐՊՈՍ

Զմիւռնիոյ Եկեղեցւոյն այս եպիսկոպոսը ծագկած է Բ. Գարու Ա. կիսուն, եւ 86 տարեկան՝ վկայուած, 155 (?) թուականին: Իր վկայութեան պարագաներն ականատեսներու ձեռքով գրուած՝ կ'աւանդէ մեղի Եւսերթու Ենիզ. պատմութեանը մէջ (Գ. 15): Գիշեր մը երազին մէջ տեսաւ թէ գլխուն բարձերը բռնկած էին. մեկնուեցաւ որ հրակիրութեամբ պիտի վերջանար իր կեանքն, ինչպէս որ եղաւ: Սուրբին ածիւնն ամփոփելով՝ թաղեցին «ուր արժանն էր», այսինքն հաւանաբար մէջ կամ մօտիկ այն սրբավայրին՝ ուր կէս դարէ աւելի քարոզած էր սն: Այժմ իսկ յայտնի է իր գերեզմանն՝ որ առաջին օրէն ուխտաւորութեան վայր մը դարձաւ, ինչպէս ժամանակակցարար, նոյն մեծարանքին արժանացած էին Ս. Յովհաննու (Աւետ.) եւ Ս. Փիլիպպոսի գերեզմանք, առաջինն Եփեսոսի, եւ երկրորդը՝ Հերապոլիսի մէջ (Բամպուք Գալէ):

Պողիկարպոսի գերեզմանը կը գտնուի Պազոս լեռան հիւսիս-արեւմտեան կողմն՝ ո՛չ հեռու հին հռոմէական թատրոնէն՝ որուն ընդհանուր յատակագիծը կը նշմարուի միայն: Սակայն՝ ինչպէս կը պատմէ Pocode՝ տեղական իշխանութիւնն ուխտագնացութեան պատճառաւ պատահած անկարգութիւններուն վերջ տալու համար՝ նոճի ծառերով հովանաւորեց այդ գերեզմանը:

Ուխտաւորութիւնը բոլորովին դադրած չէ սակայն յոյն հասարակութեան բարեպաշտ մէկ մասին համար, իսկ հայերը՝ քանի մը սարիներէ ի վեր՝ կը գոհանան միայն իրենց ուխտը կատարելով Գարաթաշի (Իզմիրի մէկ արուարձանը) Ս. Կարապետ Եկեղեցիին մէջ՝ ուր գրուած է Ս. Պողիկարպոսի պատկերը:

Աւելորդ է ըսել թէ Պողիկարպոս իր յաջորդներն ունեցած է անխափան կարգաւորութեամբ:

Սակայն պէտք է զիտել տալ այս առթիւ թէ Զմիւռնիա չէ ունեցած երբեք Նիկողայոս անունով ո՛ր եւ է եպիսկոպոս կամ հայրապետ, եւ յայտնի չիօթութեամբ էր որ Միւռայի (Սմիւռա) «սքանչելագործ» եպիսկոպոսը Զմիւռնիոյ հայրապետներուն կարգը դատուած է մօր Տնայոյցի կողմէ՝ որուն կը հետեւին Օրացոյցներն ալ:

27 Ապրիլ 1907, Իզմիր

ԵՂԻՏԷ ԵՊԻՍԿ. ԳՈՒՐԵԱՆ

ՏԱՍԸ ՏԻԵԶԵՐԱՀՌԶԱԿ ԱԴԱՄԱՆԴ

1. «Ա--ը» Հ--». — 1905ին զտնուցում հարու-Ափրիկէի՝ Էլանսաձօնքայնի հանքերէն, մկրուելով անուամբն ա՛յն հանիին ուրիշ դուրս հանուե Է: Աւխարհիս Է՛ն հսկայ աղամանդն է. կը կուէ 3032 կեռաս: Երէ ծանօթ բոլոր հոչակաւոր աղամանդները մկրուել կուսին՝ նորէն չնն հաւասարի առ ծանաւեան: Ափրիկէէն Լոնսոն փոխադրուելուն՝ 600,000 ժր. «բոխ» վնարուցում զայն ապահովագրող ընկերութան: Կը պահանի Լոնսոնի հանքային ընկ.եան (Mining Co.), 30 միլիոն ժր. արժէով: **2. «Ռ-է-».** — Ժ՛. դարուն զտնուած է Հնդկաստանէն. բառակուսի է. չի բանուած 410 կր. կը կուէ. յղուելը 2 սարի Բեց ու ծանրութիւնն իցաւ 136 $\frac{1}{2}$ ի: Թովմաս Բիթ 3 $\frac{1}{2}$ միլ.ի ծախսեց զայն Ֆիլիթ Ե՛՝ ղէանի: 1792ին զողջուցում ու զտնուել վերջ՝ նաքուէն Ա.ի երախակայր գարդարեց: Լուվաի մէջ է այսօր, 12 միլ. արժէով: **3. «Ռ-».** — Երբէ չէ բանուած. կ. 318 կր.: Այսօր կը պահանի Մարան կողիին (Պոնետ) «նանսիին» 10 միլ. արժէով: **4. «Հ-».** — Պրազիլիայէն հանուած է՝ 254 $\frac{1}{2}$ կր., բանուելէն վերջ 125 $\frac{1}{2}$ կուեց: Այսօր կը պահանի Հալմէն անուն մեծահարուս գերդասանիին՝ 10 միլ. արժէով: **5. «Պ-».** — Կը կուէ 367 կր. ու կը վերաբերի Բօքթուկալի՝ 10 միլ. արժէով: **6. «Օ-».** — Հնդկաստանէն զրտնուած է, 194 կեռաս: Ժ՛. դարուն՝ Պրանայի սանարին կուտեռէն մկուսն աչքը կը ձեւացուէ: Ֆրես. զօր մը վասն ի վերուս բրու զայն եւ անգլ. սպայի մը ծախսեց 75,000 ժր.ի: Զեռէ ձեռք անցնել Լե՛՛ մինչեւ 3 $\frac{1}{2}$ միլիոնի ծախուցում. այսօր կը պահանի Ռուսիոյ, 7 միլ. արժէով: **7. «Ք-».** — Կը նուանկէ պրակ. «Լուսելէն լեռ»: Ծանօթ աղամանդն էն է՛ն հինն է. մինչեւ 1850, կը պահանէր վեհագետին Լանօրի՝ զոր անգլիացիք գրուելով, բարն ընծայ սարին Վիքթորիայի: Կը կուէ 103 կր. եւ ցայսօր սեպիականութիւնն է Անգլիոյ՝ իբր 6,783,000 ժր. արժէով: **8. «Շ-».** — Պորտու անուն պարսիկ Շահ մը դարէր առաջ Զարին նուիրած է զայն. կը կուէ 95 կեռաս եւ ցայսօր սեպիականութիւնն է Ռուսիոյ, 3 միլիոն ժր. արժէով: **9. «Յ-».** — Աղէկ յղուած չէ ու իր փայլն այլայլող դեղին երանգ մը ունի: Առաջին տէրն Էղա Շառլ ըր Թէմէտէն. Կուստոնի պարտութենէն ետ՛ աղամանդն անյայտ եղաւ. հովի մը զսա զայն, ձեռէ ձեռք անցնել վերջ, այսօր կը վերաբերի Անգլիոյ կեիոն է 139 $\frac{1}{2}$ կր. եւ արժէր՝ 2,900,000 միլ. ժր.: **10. «Ս-».** — Կեիոն է 53 $\frac{1}{2}$ կր., այսօր կը վերաբերի Ռուսիոյ եւ կ'արժէ 2 միլ. ժրան: [Կարդալ այս աղամանդին վրայ գրուած խիստ նեխաբարձ գրուագներ՝ Տարեցոյցիս էջերում]:

Անուասիկ անեղծ բարդագրութիւն մը, անով՝ ոչխարներու եւ այծերու բուրդին վրայ ճիշդ դնելու համար: — Ճրագու (Է՛ւ Է-ը) 1 Բիլօ, խայծղան (Է-Է-ը) $\frac{1}{2}$, ռեշին $\frac{1}{4}$ եւ ներմակ եղ 200 կրամ: Ատոնք իբր խառնելով մաղմաղի վրայ, աւելցուցէ մրամուխ (noir de fumée) $\frac{1}{2}$ Բիլօ: Յետոյ կրակէն վար առնելով շարունակեցէք խառնել, մինչեւ որ պաղի խառնուորը:

ԱՌՍԵ. — Ճ-ն-ն Բ-ն է ու Է-ն-ն Է-ն ըլլալ:

** Աստուած զմեզ անխորձ պահէ, որոնցմէ՞. — Չ. Բ. Բ. (չաքերէ): ** Ի՞նչ է այն զոր կազանդին ամէն մարդ կը յուսայ. — Ն. է. Բ. (նուէր է): ** Դաշտին մէջ ի՞նչ կը քաշեն գինովներ. — Հ. Ռ. (հուս): ** Տէրաէրին փորն ի՞նչ է. — Հ. Բ. (հոր է): ** Ի՞նչ կ'որոնեն զարդասիրիկ օրիորդներ. — Ն. Ո. Դ. (նուվօթէ): ** Ուրախ մարդուն կեանքն ի՞նչ է. — Շ. Շ. Յ. Յ. (հա' հա, հի' հի): ** Ո՞ր նուագն է եռասուտ. — Բ. Մ. Ջ. (քէմէնջէ): ** Չանձրոյթիդ մէջ ի՞նչ կը տեսնաս անկասկած. — Մ. Տ. Ի. (մենութիւն): ** Աղէ՞կ բան է երբ կրկնակի փոնգտանք. — Խ. Բ. (խեր է): ** Գիշեր մը երբ ուշ պտակինք՝ ի՞նչ կ'ըլլանք. — Բ. Շ. Ռ. Ո. Տ. (գէշ՝ առաօտուն): ** Աղջիկներն ի՞նչ կ'երազեն սրտագին. — Յ. Մ. (հիմեն = հարսնիք): ** Միլիոնատէր դառնալու համար ի՞նչ պէտք է. — Լ. (մի լիոն): ** Ո՞ր գիրն է որ ձեր գամփոռ լաւ կը հեզէ. — Ո. Ո. (վօ վօ...): ** Մուկ մը ս՛ւրկէ կը փախչի. — Ծ. Կ. (ծակէն): ** Կասկածոտին միտքն ի՞նչ է. — Ծ. Ծ. Ն. Ը. (ծածանուտ է): ** Յոռեանն ի՞նչ կ'անուանէ կրները. — Օ. Չ. Մ. (օ՛ձ ամէն): ** Ծոյլ աղաք ս՛ւրկէ փախուստ կուտան շատ. — Դ. Ս. Բ. (դասերէ): ** Երբոր ատանկ մեծնան, ի՞նչ կը մնան. — Ծ. Ռ. (ծառայ): ** Հասուկ աղջիկ ունիմ, ի՞նչ ընեմ. — Ծ. Խ. (ծախէ): ** Ամէ՞նքս ալ սիրտ ունինք. — Ո. Չ. Մ. Ը. (ո՛չ ամէնդ): ** Ի՞նչ են քիչ աշխատողներ. — Լ. Չ. Կ. (մի ջակ են): ** Շատ պարաք ընելը բան մըն է. — Լ. Բ. (մե՛ծ հոգ է): ** Ձաւկի մը մահ ի՞նչ բան է. — Ս. Ո. Բ. (սեւ օր է): ** Շատ անօթին ի՞նչ կ'ուտէ համադամի պէս. — Բ. 1. 1. 1. (բէնէր-է+օէ+): ** Յիսուսը տեսնալու համար ծառ շուրջը մարդուն անունն ի՞նչ է. — Չ. Բ. Ո. Ս. (Չաքէս է): ** Տարիքոտ կրներ իրենց դէմքին վրայ ի՞նչ բանէ չեն ակորժիր. — Պ. Խ. Բ. (պխերէ): ** Մամառքներ մեր մազերն ի՞նչ կ'ընեն. — Թ. Դ. Բ. (թօթափեն): ** Մարդիկ ամէն բան դիւրաւ կը մարսեն. — Ը. է. Ծ. Մ. (եթէ ծամեն): ** Աշխատութեան քիչ ընդունակ՝ ո՞ր ձեռքն է. — Չ. չ. (ձախը): ** Մետխային միւս անունն ալ զիտէ՞ք. — Մ. Ա. Ն. Լ. (էմմանուէլ):

ԿԻՐԱԿԻ. ԲՅ. **25** Մայիս=Մայրս և. Տ. 7 Յունիս և ՇՃԲ. 8 ձէմագիւլ էվզէլ և
 ✕ **ՀԵ. և Կ. ՀԵ.** Եսմներորդ կիրակի Յինանց ԽԳ. օրը. Երկրորդ Ծայկազարդ
ՅՆ. Ս. Յովնանէս Մկրտիչի զխոռն զանուիրը և **ԼՏ. *** Պենտեկոստ=Հոգե-
 ցայրուս ։

ԵՐԿՈՒՇՐ. ԲԷ. **26** Մայիս=Մայրս և. Տ. 8 Յունիս և ՇՃԲ. 9 ձէմագիւլ էվզէլ և
ՀԵ. և Կ. ՀԵ. Յինանց ԽԳ. օրը և **ՅՆ. Ս.** Կալպոս սուսբեալ **ԼՏ. Ս.** Մեա-
 րբանոս Կ. Պօլիսի ճայրապետ և ԱԻՍՏՐԻՈՅ Կաշեք ԶագաղրուՍիւնը ։

ԵՐԵՎՇՐ. ԲՅ. **27** Մայիս=Մայրս և. Տ. 9 Յունիս և ՇՃԲ. 10 ձէմագիւլ էվզէլ և
ՀԵ. և Կ. ՀԵ. Յինանց ԽԵ. օրը և **ՅՆ. Ս.** Հելլադիոս վկայ և **ԼՏ. Ս.** Պեղա-
 զիս վկայուեր ։

ԶՈՐԲՇՐ. ԲԷ. **28** Մայիս=Մայրս և. Տ. 10 Յունիս և ՇՃԲ. 11 ձէմագիւլ էվզէլ և
ՀԵ. և Կ. ՀԵ. Յինանց ԽԶ. օրը և Պահք **ՅՆ. Ս.** Եւտիբիոս Մելիտինէի եպիս-
 կոպոս և **ԼՏ. Ս.** Մարգարիտա Սագուերի ։

ՀԻՆԳՇՐ. ԲՅ. **29** Մայիս=Մայրս և. Տ. 11 Յունիս և ՇՃԲ. 12 ձէմագիւլ էվզէլ և
ՀԵ. և Կ. ՀԵ. Յինանց ԽԷ. օրը և Երկնային վիճակ, Ս. Մատանիս սուսբեա-
 լին վիճակով ընտրուեալն յիշատակին համար և **ՅՆ. Ս.** Թէոդոսիա վկայուեր և
ԼՏ. Ս. Բառնարոս սուսբեալ ։

ՈՐԻՐԱԹ. ԲԷ. **30** Մայիս=Մայրս և. Տ. 12 Յունիս և ՇՃԲ. 13 ձէմագիւլ էվզէլ և
ՀԵ. և Կ. ՀԵ. Յինանց ԽԸ. օրը և Պահք **ՅՆ. Ս.** Իսահակ ճզնաւբը **ԼՏ. Ս.**
 Գուխոն սրբայ ։

ՇԱԲԱԹ. ԲՅ. **31** Մայիս=Մայրս և. Տ. 13 Յունիս և ՇՃԲ. 14 ձէմագիւլ էվզէլ և
ՀԵ. և Կ. ՀԵ. Յինանց ԽԹ. օրը և **ՅՆ. Ս.** Հերմէս վկայ և **ԼՏ. Ս.** Անտոն
 Պատուարի կրօնաւոր ։

ՅՈՒՇԱՏԵՏՐ

25 Մայիս Կիր. [146—220] կէս օր. 4. 25

26 Մայիս Բշ. [147—219] կէս օր. 4. 25

27 Մայիս Գշ. [148—218] կէս օր. 4. 24

28 Մայիս Դշ. [149—217] կէս օր. 4. 24

29 Մայիս Եշ. [150—216] կէս օր. 4. 23

30 Մայիս Ուր. [151—215] կէս օր. 4. 23

31 Մայիս Շր. [152—214] կէս օր. 4. 22

Թ Ո Ւ Ր Ք Ա Ռ Ա Ծ Ն Ե Ր

* Իրր բարեկա՛մ նայէ ձիուն , և իրր հակառակո՛ւրդ հեծիր վրան :
* Կրակարանին բոլորքը՝ ձմեռ օրուան դաշտագետինն է : * Կրթեալն
իր կրթութիւնն անկիրթէն ուսաւ : * Վիշտը կը լացունէ , սէրը կը
խօսեցունէ : * Կարդա՛ սակաւ , հասկցի՛ր լաւ , ընթերցումէդ օգ-
տուէ՛ տակաւ : * Հարուստն ինչք կ'ունենայ , աղքատը՝ զաւակ :
* Ձեզի՛ ուտենք խմենք , մեզի՛ խնտանք խաղանք : * Լիրրին
բերանն առանց բալլինքի կը բացուի : * Քանի որ կծծին կայ ,
առաւ-փախաւն ալ անօթի չի մնար : * Բարձր տոկոսին յաճախորդ՝
վճարում չընող պարտականն է : * Օտարին ապաւինիլ , վազուն
ջուրին կոթընիլ , երկուքը մէկ են : * Չըլլար մարդուն վատը , կ'ըլ-
լայ աղքատը : * Հեռո՛ւ անխօս մարդէն և անհոս ջուրէն : * Երկու
ձուռէն՝ մէկ չիտակ կ'ելլայ : * Ապառիկ խմողը երկու հեղ կը գի-
նոյնայ : * Լաւ է աս օրուան հաւը , քան թէ վաղուան հնդկահաւը :
* Գոնջն եթէ դեղ գիտնար , իր գլխուն կը քսէր : * Եղբրքը
տես՝ կտանն առ , մայրիկը տես՝ աղջիկն առ : * Շան աղօթքն եթէ
ընդունելի ըլլար՝ երկինքէն ոսկոր կը տեղար : * Նաւը կորուսողը՝
նաւակը չի փնտռեր : * Աղւորներուն բախար տգեղ կ'ըլլայ :
* Մարտ ամիսն երգիքէն կը նայի , բահ ու բրիչ վառել կուտայ :
* Հիւրն ուզածը չուտեր , գտածը կ'ուտէ : * Տարածամ բացուող
վարդը շուտ կը թօշնի : * Ամէն բանի նմանողը բանի՛ մը չի նը-
մանիր : * Ամէն մարդ իր խելքը ծախու է հաներ , նորէն դարձեր՝
ի՛րն է առեր : * Խեղը տես ցանքին՝ երբ հողը չոր է , հերկին՝ երբ
հզը հորթ է :

Եստիկաբաղ ՊԵՏԻԿԵ

Հ Ս Կ Ա Յ Զ Է Ք Ե Ր

Ամերիկեան տազնապին առթիւ Մ . Բիրբոնթ Մօսկան՝ Միաց-
եաց Նահանգներու Ելմտական նախարար Մ . Գօրթէլլիուի յանձնած
է 25 միլիոն ֆր . ի չէք մը : Բայց աշխարհի մեծագոյն չէքը քաշե-
լու պատիւը կը պատկանի Անգլիոյ Պանքային , որ 275 միլիոն ֆր . ի
արժէք ներկայացունող թուղթի կտոր մը յանձնած է Լոնտոնի ճա-
քոնական դեպոզանին , ասկէ 13 տարի առաջ :

ԱՌԱՄ. — Աբր—իս Բ—ու զի—ն է :



Արթուր Կարապետյան

Ծն. 1873 : Պէրպէրեան վարժարանի ընթացաւարս՝ 1890 : Անդամ Ուսումնական Խորհուրդի, եւ օգնական՝ Պեսական Խորհուրդի : Արդի սնօրէն Պէրպէրեան վարժարանի՝ հիմնադիրին մահովը (1907 ապրիլ 8) : Հեղինակ՝ Հայերէնէ Թուրքերէն ընդարձակ նոր բառգիրքին եւ Օսմ. լեզուի դասագիրքերու շարքի մը :

ԿԱՐԾԻՔՆԵՐ «ՎԱՐԴԱՊԵՏ»Ի ՎՐԱՅ

* * Պրակ. վեր կը նշանակէ վեր: Ինչպէս որ վարդը նկատուած է ծաղկանց դէպոն, նոյնպէս ալ Աստուածաբանութիւնը նըկատուած պիտի ըլլար գիտութեանց դէպոն. հետեւաբար «վարդապետ»ը պէտք է ստուգարանել իրր «վարդի պետ»:

ՀԻԻՊԵՄԱՆ և EWALD

* * «Վարդապետ»ին առաջին վանկը վերջ բառն է, այսինքն «պետ վարժից», վարժապետ, վերակացու այլ և այլ ուսմանց և արհեստներու. քանզի վերջապետ ազաւազուելով ու սղուելով եղած է վերջերս:

ՀԱՅԿ. ԲԱՌԱԳԻՐԻՔ

* * Նոր պրակ. ի մէջ վեր կը նշանակէ աշակերտ, որիկէ «վարդապետ» բառը, գլուխ աշակերտաց, դասատու:

Հ. Ս. ՏԵՐՎԻՇԵԱՆ

* * Այս բառին նախաւանկը համեմատելի է նոր պրակ. վեր բառին հետ՝ որիկէ ֆերդտաստն պրակ. բառը, ժողովուրդի իմաստով: Վարդապետ = ժողովրդապետ:

ՆՈՅՆ

* * Գոթ. «vaurd», զնդ. վեր կմ. լտ. verbum բառերէն՝ որ կը նշանակեն՝ խօսիլ սորվեցունել:

ՆՈՅՆ

* * Վարդան հնդեւրոպական բառ է և կը նշանակէ ուսեալ, որիկէ «վարդապետ»ն, իրր ուսեալներու պետ, ուսումնապետ:

Մ. ԳԱՐԱԳԱՇԵԱՆ

* * Հմմտ. վերջն՝ աւետերէն varsda բառին հետ որ կը նշանակէ աճում. պետ աճման:

ՅԲ. ՄԻԻԼԼԷՐ

* * Վարդապետ = վարդապետ: Աստուածային զրոյ ծաղկանոցը մանող և (զազափարի) զեղեցիկ վարդերը փետող, քաղող:

ԹԻ- 120. ԶԵՆԻՆԵՐ ԱԷԷ. ՄԻՆԻՆԵՐԻՆԷՆՆԷՆ ՎԼԵՆԷՆՆԷ

* * Արբ. վեր կը նշանակէ տէրունական աղօթք, սովորական մաղթանք: Եւ «վարդապետ»՝ ա՛յն անձն է որ կրօն. աղօթքներու պաշտօնէից պետն է:

Յ. ՆԵՐՍԻՍԵԱՆ

* * Վարդապետը զատելով կ'ըլլայ «վ — արդ — ա — պետ», և տարածելով՝ «վար — արդ — ա — պետ». այսինքն պետ զվարս (յ) արդարողաց, կամ (հ) արթողաց, պետն անոնց որոնց վարքը պիտի ուղղուի:

ԵՓՐ. ՓԱՓԱԶԵԱՆ

* * Վարդապետ կամ որ նոյն է՝ վերջերս Զինտալեստայի հերբերք բառն է, իմաստով նոյն:

Մ. Է.

ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԽՕՍՈՒԸՌՏՈՒՔ

— Ի՞նչ, աղէկ չե՞ս կնոջդ հետ :

— Այնչա՛փ կը սիրէի առաջին վեց ամիսներուն որ զինքը դիշա-
տելս կուգար : [— Է հիմա՞յ :

— Կը ցաւիմ ըրած չըլլալուս :

* * Էրէիլը . — Երեք ամսուան մէջ չորրորդ կ'ըլլայ կոր չինել
տուած սա հագուստդ, ինծի՛ ալ մեղք է . մտածէ՛ որ . . .

Կինը՝ Գեօրգիան . — Գուն իս մեռցունես՛ս պիտի . ան ատեն
նայէ՛ որ յուզարկաւորութիւնս հագուստէ մը սրչափ աւելի սուղի
պիտի նստի քեզի :

— Հակառակը չեմ պնդեր . բայց գոնէ այդ ծախսը մէ՛կ ան-
գամ կ'ըլլայ . . .

* * Ք . վախկոտին մէկն է : Իրիկուն մը, մութը նոր կոխելու
վրայ, աւունէն ներս կը նետուի հեւայով և աթոռի մը վրայ կ'իյ-
նայ նուազուն : «Տէ՛ր Աստուած, ի՞նչ եղար, ի՞նչ պատահեցաւ
արդեօք», կը ձայնէ կողակիցը՝ քովը փութալով :

— Ձայնդ կտրէ՛, կնիկ, լեզի՛ս փրթաւ . . . ճամբան խառախոն-
ճողոզ մը տեսայ . . .

— Իրա՞ւ . . . , ի՞նչ ձեռով երեւաց :

— Աղէկ չի կրցի որոշել, բայց կարծեմ թէ էշու մը կերպարանքն
ունէր :

— Էշո՞ւ մի . . . ցնորքի մը գո՛նը եղեր ես . դուն քու շուքէ՛դ
վախցեր ես . . .

* * Ամբակում կնկանը պատկերը հանել կ'երթայ : Մինչ լուսա-
նկարչին աշկերտը — գլուխը սեւ ատուիին մէջ — կը պատրաստուի
քաշել, Ամբակում կը ծռի վարպետին ականջին . «Աշկերտդ քիչ մը
երիտասարդ չէ՞» :

— Տարիքին մի՛ նայիր դուն, արհեստին մէջ շատ յաջող է :

— Չէ՛, առ չէ՛ր բսելիքս : Ինծի ըսած էին որ ձեր գործիքնե-
րուն մէջ հա՛ւաւակ չողփն կը տեսնուին մարդիկ . . .

* * Կինը կուրծքի հիւանդութենէ կը մեռնի, և էրիկը՝ շատ
երիտասարդ՝ այրի կը մնայ : Կրկին կը կարգուի . բայց անգամ մը՝
երբ իր նորապսակ դեռատի կողակիցը թեթեւ մը կը հաղայ . «Մի-
րելիս, կ'ըսէ ամուսինը, կը յուսամ թէ դուք ալ նախորդին ըրած
կատակը չէք կրկներ . . .» :

* * Այր ու կին պատուհանը նստած : Այրը . — Տե՛ս սա ան-
ցորդը . ի՞նչ տղեղ կին . . . [Կինը . — Գոհարեղէններո՛ւն նայէ մէյ մըն
ալ, սա ճիտի մանեակի՛ն . . .

— Լապտեր ի վերայ աւերակաց . . .

ԱՌ-ԱԾ . — Ա՛ն շուք էր ճամբան իւրիւն :

1. ՉԱՐԻ ԿԱՄ ԳՌՈՒԶ ԱՄՊԵՐ (Cirrus) .—Սպիտակ և փոքր կ'ըլլան, նուրբ, թափանցիկ թեւերով, միշտ վեր 500 մէթրէն ։ Ստորին Գոռուզ ամպերն երկրիս երեսէն վեր բարձրացող գոլորշիներէն կը կազմուին, վերին գոռուզ ամպերն ալ՝ երկրիս մակերևոյթին վրայ ծնող շողիներէն . սա տարբերութեամբ որ՝ ծանրաչափական մեծ էջք մը պատահած տեղն՝ օդի վերացող ու կեղրոնածխոյ պրոտոյտ մը յառաջ գալով, իրենց ծագման տեղերէն կը քաշէ իրեն՝ կազմուած շողիներն, որով անոնք նախ հեռուները կը տարուին, վերջն ալ կը վերանան անա՛նկ սահմաններու մէջ՝ ուր — 15՛՛ կամ — 20՛՛ ցուրտ կը տիրէ, և անկէջ ալ ետք այս ու այն կողմ կը քշուին՝ տեղափոխուող ծանրաչափական էջքին կամ օդի վերացման կեղրոնին բոլորտիքէն շա՛տ հեռուները ։ 20,000 մէթր բարձրութեան կրնան հասնիլ ։

2. ՍՓԻՐԻԻ ԿԱՄ ԽՇՏԵԱԿ ԱՄՊԵՐ (Stratus) .—Հորիզոնական շերտերու ձեւով երկայն ու նեղ, յաճախ գունաղարդ . հորիզոնին մօտ կ'երևան տրեւծազին կամ մայրամուտին ։ Ըստ Ս . Ուղտրիկեանի, յաճախ օդի բացութիւն կը ծանուցանեն՝ եթէ ընդարձակ տարածութեան վրայ հորիզոնին զուգահեռական շատ ուղիղ գիծերով եզերուած ըլլան . միջեւ իսկ անձրևի ատեն զոյգացած ասանկ ուղիղ գիծ մը նշան է թէ օդը պիտի բացուի ։ Ուրիշ տեսակ ամպերուն կողմնակի տեսնուածնե՛րն են իրտեակ ամպերը ։

3. ԿՈՒՄԱԿ ԱՄՊԵՐ (Cumulus) .—Զուրապատ լեռներու տեսքով կ'ըլլոր կ'ըլլոր ճերմակ դանգուածներ՝ զոր Եւրոպացիք «բամպակի հակեր» ալ կ'անուանեն ։ Բարձրութիւնին 1000-3000 մէթր է ։ Յառաջ կուգան օդեղէն սիւնէ մը կամ սիւներէ՝ զոր է՛ն շատ ջերմութիւն ձծող երկրիս մասերը դէպ ի վեր կ'արձակեն, ամպն ալ տաքցունելով ։ Եթէ օդը շատ խոնաւ ըլլայ, տամկութիւնն անվրէպ կը խտանայ իրեւ ցօղ և հեղուկ շթաքարերու նմանող կայլակներու կը վերածուի ։ Մօտաւորապէս նով, կամ, քիչ շատ անտոյգ օդի մը գուշակ են ։

4. ԹՈՒԽՊ ԱՄՊԵՐ (Nimbus) .—Յաճ, խոշոր ու մութ կ'ըլլան, ստէպ բլուրները ծածկելով ։ Առ հասարակ կը լուծուին, անձրևի կը վերածուին ։ Որ և է ամպ որ կը թանձրանայ, կը ցածնայ և անձրևելու մօտ է՝ կ'ըլլայ թուխպ ։

Այս չորս գլխաւորներէն զատ կան նաև ՔՍԱԿ ԱՄՊԵՐՆ (անգլ. Pockey cloud) որ հիմայ «ստնակերպ» (Mammutus) ալ կը կոչուին ։ Ասոնք կը կազմուին, — ըստ օդերևութաբան Տիւռան Կուլլիի, — երբ Կուտակ ամպերը յառաջ բերող օդեղէն սիւներուն մէջտեղինները (կամ մէջտեղինն, եթէ մէկ սիւն միայն կայ), դուրսիներուն միջոցաւ ցրտացման դէմ պատասպարուած ըլլալով՝ միւսներէն աւելի վեր բարձրանան, և սուսնիկ կամ սալի ձեւով գլուխ մը կը կազմեն ։

ԿԻՐԱԿԻ. Գ. 1 Յունիս—Հաղիրան Ն.Տ. 14 Յունիս շճԲ. 15 ձէմագիւլ էվվէլ
 ✖ ԷՅ. և Կ. ԷՅ. և ՅՆ. Հոգեգալուստ: Պենտեկոստէ—Կիւլ բանայլըը ԷՅ.
 Եղիական պահքին բարկենդանը: ԷՏ.* Ամենատարր Երրորդութիւն:

ԵՐԼՈՒՇՐ. ԲՅ. 2 Յունիս—Հաղիրան Ն.Տ. 15 Յունիս շճԲ. 16 ձէմագիւլ էվվէլ
 ԷՅ. և Կ. ԷՅ. Հոգեգալուստին Բ. օրը: Պահք: ՅՆ.* Ամենատարր Երրորդու-
 թիւն: Ուտիք մէկ շաբաթ: ԷՏ. Ս. Երմինէ կոյս: ԴեՐՄԱՆԻՈՅ Կայսեր զանա-
 կալութիւնը:

ԵՐԵՐՇՐ. ԲԷ. 3 Յունիս—Հաղիրան Ն.Տ. 16 Յունիս շճԲ. 17 ձէմագիւլ էվվէլ
 ԷՅ. և Կ. ԷՅ. Հոգեգալուստին Գ. օրը: Պահք: ՅՆ. Ս. Դուկիանոս վկայ: ԷՏ.
 Ս. Ս. Կիրոս և Աւրեղիանոս վրաներ:

ԶՈՐՔՇՐ. ԳՅ. 4 Յունիս—Հաղիրան Ն.Տ. 17 Յունիս շճԲ. 18 ձէմագիւլ էվվէլ
 ԷՅ. և Կ. ԷՅ. Հոգեգալուստին Դ. օրը: Պահք: ՅՆ. Ս. Մեարտիանոս Կ. Պօ-
 լիսի հայրապետ: ԷՏ. Ս. Ալիսոս վեննայի եպիսկոպոս:

ՀԻՆՊՇՐ. ԳԷ. 5 Յունիս—Հաղիրան Ն.Տ. 18 Յունիս շճԲ. 19 ձէմագիւլ էվվէլ
 ԷՅ. և Կ. ԷՅ. Հոգեգալուստին Ե. օրը: Պահք: ՅՆ. Ս. Դորոթէոս վկայ: ԷՏ.*
 Ս. Հաղորդութեան խորհուրդին տօնը: Կիւլ բանայլըը:

ՈՒՐՐԱԹ. ԴԷ. 6 Յունիս—Հաղիրան Ն.Տ. 19 Յունիս շճԲ. 20 ձէմագիւլ էվվէլ
 ԷՅ. և Կ. ԷՅ. Հոգեգալուստին Զ. օրը: Պահք: ՅՆ. Ս. Հիւրիոս կրասեր ճըղ-
 նաւը: ԷՏ. Ս. Ս. Սերգիոս և Պրոտոս վկայ եղբայրներ:

ՇԱՐԱԹ. ԴԸ. 7 Յունիս—Հաղիրան Ն.Տ. 20 Յունիս շճԲ. 21 ձէմագիւլ էվվէլ
 ԷՅ. և Կ. ԷՅ. Հոգեգալուստին Է. օրը: ՅՆ. Ս. Թէոդորոս Անկիւբիոյ եպիս-
 կոպոս: ԷՏ. Ս. Սիլվերիոս հայրապետ:

ՅՈՒՇԱՏԵՏՐ

1 Յուճիս Կիր. [153—213] Կէս օր. 4. 22

2 Յուճիս Բշ. [154—212] Կէս օր. 4. 21

3 Յուճիս Գշ. [155—211] Կէս օր. 4. 21

4 Յուճիս Դշ. [156—210] Կէս օր. 4. 20

5 Յուճիս Եշ. [157—209] Կէս օր. 4. 20

6 Յուճիս Ուր. [158—208] Կէս օր. 4. 20

7 Յուճիս Շր. [159—207] Կէս օր. 4. 20

Փոփոխակ կամ Շերիանդիկներու կարգէն բոյս մը, Եղեապակ, (salvia protensis), ճերմակ, կարմիր, կապոյտ ծաղիկներով և թառախառ տերեւներով, (ատա չայը) :

Թութուշահամ բանջարաբոյս մը որ խաւրժիլի պէս է՝ ուսուի, թրթնջուկ (Rumex) :

Մեռնի քաղկ. — Հիանալի մոյգ կապոյտ, հինգ տերեւեան ծաղկապատիով լեռնաբոյս մը, ճախճուտ տեղերու յատուկ, Գարնանական Բող (gentiana verda) :

Բարբէնջա. — Միարկթակ տունկերէն թրատերեւ ծաղկաբոյս մը, Հիրիկ : Երկնակապոյտ շքեղ ծաղիկ մը կը բանայ Մայիս ամսուն : Ծաղկատերեւներէն երեքը դէպ ի վար կան՝ ունին բեղնափոշաւոր թառ լեզուներ, իսկ 3 ծաղկաթերթերն ալ կաղամբի տերեւներուն պէս կը բաժականան ցողունին վրայ : Տերեւները մշտականաչ են :

Ճախճապու. — Զամբիւղաւորներէն Եղերդ բուսածն է. ճարճատուն լեզուածեւ ծաղկապսակն՝ առտուան արեւին առաջ բացուող՝ կապոյտ-երկնագոյն, վարդագոյն ու ճերմակ է :

Սեւեմ Կախ. — Շուշանագգի, մար սարերուն ու պարտէզներուն զարդն ու շուքն է իր փառաւոր տեսքով, կոկոզավիղ հասակով, խոպոպատերեւ գլխուն տակ գինտերու պէս շքեղորէն կախ ծաղիկներով որոնք կարմիր ու դեղին են :

Եւ դեռ որքան բոյսեր, ծաղիկներ, — (Խառողակ, Փշուշակ, Օյնեղայ, Պառուս Մեղր, Խարսի Լեղա, Արջա Բախիկ, Հալար-Հաղիկ, Դրմակ, Քիտակ (Ջրածեռ), Կառու Գորիկ, Եւ այլն, Եւ այլն), — որոնց բուսարանական ու բժշկական մանրամասն նկարագիրն ու չորցուած անմեռ նմոյշները կը մնան մեր աշտատասիրած Բուսաբանին (Herbier) և Վանքապահին մէջ :

ՏԻՒՐ. ԶԻԹՃԵԱՆ

ԱՐՋԱՌԻ ՍԵՌԻՆԴ. — Հողագործներու և դուարաբոյծներու համար վերջերս կենսական հարց մը դարձած էր արջաուի ու ոչխարի անուցումը : Ոմանք չոր խոտը (foin) շատ յարմար կը գտնէին, ուրիշներ նախապատուութիւն կուտային ասպաստին (գապա եօնճա, luzerne) : Երկու կողմն ալ իրաւունք ունի, որովհետեւ եթէ ասպաստն «աչօթ» ի կողմանէ հարուստ է, չոր խոտն ալ աւելի դիւրամարս է և իւրագոյնի (assimilable) : [Իւրագոյնութիւն կամ իւրաչըռում կը կոչուի այն գործողութիւնն որով գործարանաւոր էակներ իրենց գոյացութեան կը փոխեն դուրսէն առած նիւթերնին] : Ուրեմն աւելի լաւ է երկուքն իրար խառնել և այնպէս կերցունել թէ՛ սպանդ տարուող կենդանիներու և թէ՛ գրաստներու :

ԴԵԳԵՐՈՒՄՆԵՐ ՔԱՐԵՐՈՒ ՇՈՒՐՉ

ԿԱՐՃ ՃԱՄԲԱՅ. — Տարեցոյցիս 126 և 127 էջերուն մէջ ուսումնասիրութիւնն մըն էինք ըրած ըստ թմանկազին քարերուն վրայ: Կուզանք դրուագ մըն ալ աւելցունել հոս, որ, կեղծ քարերն իրականներէն զանազանելու համար ամենադիւրին ու փորձուած միջոց մըն է: Արեւելն, Ալթուր և Պէրսոպէն. այս երեք քարերն են միայն որ խարտոց կը բռնեն, միւսները բնաւ: Ուստի, այս երեքէն զուրս՝ երբ որ և է քար մաշի խարտոցին համըոյններէն, տարակոյս չիկայ թէ կեղծ է ան:

ԱՂԱՄԱՆԻԻ ԳՈՅՆ. — Բանի՛ քանի թմանկազին քարեր իրենց բուն գիւնն անհունապետ աւելի պիտի արժէին, եթէ անոնց զոյն արուէր կամ անոնց զոյնն մէջ փոփոխութիւն մը մտցուէր: Ասկէ քանի մը տարի առաջ, Չիքակոյի մէջ Մ. Ֆոքս գտաւ ազամանդ զունաւորելու կերպ մը + ճառագայթներուն շնորհիւ: Ասոնց միջոցաւ այլ և այլ մետաղներու ամենամանր հիւլները ներմուծեց ազամանդին ծակախրքներուն մէջ ու երանգաւորեց զայն: Այս եղանակով ստացուած զունաւորումները չեն այլայլիւր, նոյն իսկ թմանկազին երկարատեւ ազգեցութեան տակ: Գարձեալ, ելեկարական հոսանքին ուղղութիւնը փոխելով, երգումուած ազամանդը կատարելապէս կը կորնչուէ իր առած զոյնը, որովհետեւ մետաղաբան հիւլները զուրս կ'ելլան անոր ծաքախրքներէն:

ԳԵՂԵՅԿԱԳՈՅՆ ՉՄՐՈՒԽՏՆԵՐ. — Այս կանանչ թմանկարաժէք քարերը Գոլոմպոլայէն և Վեննզուելլայէն է որ կուզան ամէնէն շատ: Բնականէն պահուած կ'ըլլան կաւային հերձաքարերու և կրանիթներու մէջէն անցնող երակներու խորը: Աժան տեսակները Գերմանիայէն և Ստորին Եգիպտոսէն կ'ըլլան: 1000 սոկի վճարուած է միայն մէկ կատարեալ զմրուխտի համար:

ՄԱՐԳՐԻՏ ՈՒ ԻՐ ՍԻՐՄԱՆԱՐՆԵՐԸ. — Մէլպորի գրքուհին աշխարհիս է՛ն գեղեցիկ մարգրիտներն ունի: Իրն է Մառի Անթունէթի հաւաքածոն, որուն մէն մի մարգրիտը 1000 սոկերին կ'արժէ: Իրն է նաեւ համառաւոր «Սոլոֆ» մանտակն որ ասեղնք Ռուսոյ կատարինէ ձարուհիին կը պատկանէ: Տիկ. Գլոտ Ռուսնէյս ալ ունի գեղեցիկ մարգրիտներ՝ որ եւրոպայի մէջ շատ արժեքաւոր են: Մարգրիտի լնտիք հաւաքածոյ մըն ալ կը վերաբերի Նոսֆոլք կոմսին: Իսկ Վատիկանի գանձերուն մէջ մարգրիտ մը կոյ որ 40,000 սոկի կ'արժէ:

ՄԵՂԵՍԻԿԱՆ սուզի տակն դարձածուող գո՞նարիզէն մը ճանչացուած է՝ թերեւս իր լուրիք երանդին համար: Ըստ նախնեաց, այս քարը վրան պահող անձը չէր գիտնէր: Բազումի սաճարապետներուն ցնծութիւնը չափ ու սահման չը պիտի ունենար, եթէ ներկայ զարո՛ւն ալ դոյութիւնն ունենար ստանկ բան մը:

ԱՌԱՅ. — ԿՐԻՒՐ ԳԵՐՈՒՄՆԵՐ ԿՐՈՒՄ

ՍԻՐՈՅ ԹԱԽԾԵՐԳ

Յանկայարոյց ու անօճափ
Երագի՛ մը պէս մեղմօրէն՝
Կը մօտենաս հոգոյս նորէն ,
Ո՛վ մոռցուած սիրոյ թախծերգ :

Թրբումմենեղ՝ սգու մը պէս
Մութին մէջը լռիկ կուլամ
Կուն արշիս մէջ ամէն անգամ
Որ հեծկլսաս սիրոյ թախծերգ :

Անբախտ սերը սիրս ըբաւ վերբ .
Անհշանքիս մէջ թեւաբաց՝
Բե՛զ կը փարիմ յափեսակուած :
Հեծկլսա՛ միտս սիրոյ թախծերգ . . . :

ԼԱՑՈՂ ԱԶՔԵՐԴ

Ես կը սիրեմ աչքերդ աղւոր,
Երբոր անոնց մէջ թաքթաբուր
Արցունքներ կան չինջ , սգաւոր .
Ա՛հ , միտս լալով ինձի՛ եղւոր :

Թարթիչներուդ շուրթն սակէն
Փոքր արցունքներ աներեւոյթ
Բիբիդ լո՛յսը կը պրիսմակեն :
Զիս կը թովեն աչքերդ կապոյտ :

Քմահան ու չա՛ր Սէր մը նենգոտ
Սիրքս դարձուց անապատի ,
Ուր միտս կ'այրի արեւն հրոտ
Տառապանքի ու պատրանքի :

Ա՛հ , այս չորցած արշիս վրայ
Ուղղէ՛ րուկին աչքերդ աղւոր ,
Ուր արցունքին ցօղը սարսուայ
Մխիթարիչ ու սգաւոր . . . :

Բերս, 11 Ապրիլ 1907

ՀՐԱՆՏ Տ. ՆԱԶԱՐԵԱՆ

ԱՌԱՅՐ . — Զորքը դարձն է լուր : չէ՛ Բե դարձն է լուր :

ԿԻՐԱՆԻՐ. 23. 9 Յունիս—Հազիրան: Կ.Տ. 21 Յունիս: ՀՃՐ. 22 ձէմագիւլ էվվէլ:
 ✕ **ՀՅ.** Յարութեան Ա. կիրակին: Ս. Եղիս մարտարէին յիշատակը: Առաջին պսակ.
Կ. **ՀՅ.** Ամենասուրբ Երրորդութեան տօնը: **ՅՆ.*** Բոլոր սուրբերուն տօնն ու
 առաքեալներուն բարկենդանը: **ԼՏ.** Ս. Լուչովիկոս Կոնզակոս կրօնաւոր, մա-
 նուկներու պաշտպան:

ԵՐԵՎԱՆ. 24. 9 Յունիս—Հազիրան: Կ.Տ. 22 Յունիս: ՀՃՐ. 23 ձէմագիւլ էվվէլ:
ՀՅ. և **Կ.** **ՀՅ.** Ս. Ս. Հռիփսիմէ և երեսուն երեք կուսաններ: Հարոնիր: **ՅՆ.**
 Ս. Կիրեղ Երուսաղէմի հայրապետ: Առաքեալներու պահք՝ 20 օր: **ԼՏ.** Ս. Պաւ-
 լինոս՝ Նորայի եպիսկոպոս: **ՏՃ.** Պիւրծի Սէրլժան (խեցգետին) և Ֆոսլը Սայֆի—
 (Անտոնամուտ, և արեւադարձ խեցգետնի. ցորեկները կը կարծընան, զիշերները
 կ'երկարին): Նեղոսի ջուրերուն տոստութեան սկիզբը:

ԵՐԵՎԱՆ. 25. 10 Յունիս—Հազիրան: Կ.Տ. 23 Յունիս: ՀՃՐ. 24 ձէմագիւլ էվվէլ:
ՀՅ. և **Կ.** **ՀՅ.** Ս. Ս. Գայիանէ և երկու կուսաններ: **ՅՆ.** Ս. Ս. Աղեքսանդրոս
 և Անտոնինոս վկաներ: **ԼՏ.** Ս. Փելիքս վկայ:

ԶՈՐԲՇՐ. 24. 11 Յունիս—Հազիրան: Կ.Տ. 24 Յունիս: ՀՃՐ. 25 ձէմագիւլ էվվէլ:
ՀՅ. և **Կ.** **ՀՅ.** Պահք: **ՅՆ.** Ս. Ս. Բարձողիմէոս և Բառնարաս առաքեալներ
ԼՏ.* Ս. Յովհաննէս Մկրտչի ծնունդը:

ՀԻՆԳՇՐ. 25. 12 Յունիս—Հազիրան: Կ.Տ. 25 Յունիս: ՀՃՐ. 26 ձէմագիւլ էվվէլ:
ՀՅ. և **Կ.** **ՀՅ.** Ս. Ս. Յովհաննէս Կարապետ և Աթանագինէ եպիսկոպոս: **ՅՆ.**
 Ս. Մնտիրիոս անապատական: **ԼՏ.** Ս. Փերրոնէ կոյս վկայուհի:

ՈՒՐԱՍԹ. 26. 13 Յունիս—Հազիրան: Կ.Տ. 26 Յունիս: ՀՃՐ. 27 ձէմագիւլ էվվէլ:
ՀՅ. և **Կ.** **ՀՅ.** Պահք: **ՅՆ.** Ս. Ակիւլինէ վկայուհի: **ԼՏ.*** Յիսուսի Սիրտին
 տօնը:

ՇԱԲԱԹ. 27. 14 Յունիս—Հազիրան: Կ.Տ. 27 Յունիս: ՀՃՐ. 28 ձէմագիւլ էվվէլ:
 † **ՀՅ.** և **Կ.** **ՀՅ.** Ս. Գրիգոր Լուսաւորչի վիրապէն ելլելուն յիշատակը: **ՅՆ.**
 Ս. Եղիսէ մարգարէ: **ԼՏ.** Ս. Լատիսլաւոս Թագաւոր:

ՅՈՒՇԱՏԵՏՐ

8 Յունիս Կիր. [160—206] կէս օր. 4. 19.....

9 Յունիս Բշ. [161—205] կէս օր. 4. 19.....

10 Յունիս Գշ. [162—204] կէս օր. 4. 19.....

11 Յունիս Դշ. [163—203] կէս օր. 4. 19.....

12 Յունիս Եշ. [164—202] կէս օր. 4. 19.....

13 Յունիս Ուր. [165—201] կէս օր. 4. 19.....

14 Յունիս Շր. [166—200] կէս օր. 4. 19.....

Երածեսութեան վեճ բոցովը վառուած՝ Պերիցիցի պատանի մը Պերժովէնի մեծահոշակ երկեւէն ու համբաւէն շրջամ, անձուն իղձ մը կ'ունենայ Վիլեննա երթալու եւ զայն տեսնելու: Բայց լ'ընչպէս երթար. իր դրամական շահ անձուկ վիճակն անհասարակ կը դարձունէր զայն: Իմաստներ, յուսահատական աղաչանքներ անձատններու, համբու ծախս մը հոգալու համար. բայց ապարդիւն: Աւօր մըն ալ յուսահատած, համբայ կ'իյնայ հետիոտն երթալու մինչեւ Վիլեննա: Աւրդեւորի մտխալն ուսին, մէջը չոր հաց մը միայն, բուսական յառաջանալէ վերջ, կը հանգիլաի մուրացիկ նուազածուններու, սոսնց ոսկի մը կուտայ հոն զտնտող ունկնդիր մը: Պատանին այս առատաձեռնութենէն յոյս մը առած, կը մտենայ օտարականին՝ գիտնալու թէ նուազէն ախորժելուն համար է տուած դրամը. թէ ոչ իբրեւ ողորմութիւն: Օտարականը նուազէն ախորժած բլլալը կը յայտնէ եւ պատանին կրկին հարցման վրայ թէ ի՞նք ո՞վ էր, կը պատասխանէ թէ Անգլիացի մըն է որ յատկապէս Անգլիայէն մեկնած է երթալ Պերժովէնը տեսնելու համար: Այս անօրինակ զուգադիպութիւնը հրեռուանով կը լեցանէ պատանին որ կը փութայ անոր յայտնէլ իրեն նպատակին ալ մի'եւնոյնն բլլալը: Այդ վայրկեանէն Պերիցիցի պատանին ու Անգլիացին բնկերներ են իրարու: Երբ կը հասնին Պերժովէնի բաղաւթը, անոր շահ մտիկ պանդոկ մը կ'իջեւանին, ու կ'որոտեն որ առանձնակի տան իրենց այցելութիւնը: Առաջին անգամ, երբ Անգլիացին կը ներկայանայ Պերժովէնի բնակարանը, ծառան կը հարցունէ թէ ո՞վ կ'ուզէ. «Պերժովէնը տեսնելու եկած եմ» կը յարէ Անգլիացին. «Անկարելի է այդ բանը» կ'ըսէ ծառան. — «Բայց ես Անգլիայէն յատկապէս զինքը տեսնելու նպատակաւ մեկնած ու մինչեւ հոս եկած եմ». — «Տարին երկու հարիւր հոգիէն աւելի կուզան ձեզի պէս զինքը տեսնելու, սակայն եւ ոչ մէկը կ'ընդունուի. ուսի կ'աղաչեմ որ չի պնդէք» կ'ըլլայ ծառային վերջին կտրուկ պատասխանը:

Անգլիացին հարահաս կը դառնայ պանդոկ եւ եղածը կը պատմէ պատանին: Թէեւ կը յուզուի խեղճ պատանին, բայց չի յուսահատիր, ու հետեւեալ օրն առտանց վարանելու ինքն ալ կը ներկայանայ մեծ վարպետին բնակարանը: Միեւնոյն պատասխանը, միեւնոյն մերժումները ծառային կողմէ: Պատանին կ'աղաչէ, կ'ազերտէ, կը պատմէ թէ ի՞նչ զոհողութիւններով եկած էր, հետիոտն, ու չոր հաց մը միայն ունենալով: Յուսահատութենէ՛ պատանին բակին մէջ նստած կ'սկսի դառնապէս լալ: Սպասաւորն այս արօրինակ տեսարանէն ապշած ու յուզուած՝ անկեղծ իղձ մը կ'ունենայ անոր օգտակար բլլալու: Ուսի պատանին գաղտնապահութիւնը խնդրելով, կ'իմացունէ անոր որ Պերժովէն սովորութիւն ունէր հինգ-շաբթի օրերը, կէս օրէն վերջ, դիմացը զտնտած գարեջրատան պարտէզն երթալու եւ հոն լիջ մը մնալու. ուրեմն եթէ կրնար այդ պահուն զինքը տեսնել ու իրեն խօսիլ՝ աղէկ, հակառակ պարագային կրնար նորէն իրեն դիմել որպէս զի ուրիշ միջոց խորհէր: Այս խօսքերէն յուսադրուած, պատանին շնորհակալութեամբ կը մեկնի:

Հետեւեալ օր իր անբաժան Անգլիացիին հետ, կ'երթայ գարեջրատն: Պերժ-

հովէն կուգայ յամբասայլ ու մուայ դէմքով՝ ստուերոս անկիւն մը առանձնանայ: Ասդին վէճը կ'սկսի: Անգլիացիին ռքսէնկօթին մէկ մասը պատանիին ձեռքը կը մնայ: Վայելեանը մը սակայն Ալպիոնի զուտկը Պէթնովէնի մօտ է: Այս վէճը սակայն չէ վերայած Պէթնովէնի ուշադրութեան. եւ մինչ Անգլիացիին անոր մօտ իր պատմութիւնը սկսած է, « Իմ ականջներս չեն լսեր, գրեցէ՛ր բտելիմնիդ քուղքի մը վրայ », կը յարէ Պէթնովէն ու կը նեղանայ:

Պատանին կը գանգատի այս անյաշողութեանը դէմ, ու կը մտադրէ հետեւեալ օրն առանց ընկերոջ բան մը բտելու, առանձնակի ձեռք առնել Պէթնովէնի բնակարանին նամբան:

Դռնապսներ զինքը տեսնելուն, կը կռահէ պատանած անյաշողութիւնը, եւ յանդիմանութիւն լսելը յամն առնելով, վեր կ'ելլէ, վարպետին մօտ բարեխօսելու՝ պատանիին նկատմամբ: Քիչ վերջը զուարթ մը վար կ'իջնէ եւ կ'ըսէ իրեն քէ կարող է Պէթնովէնը տեսնել: Պատանին զգացած ուրախութենէն խելայեղ, արագ արագ վեր կ'ելլէ ու ակնածանօք կը խոնարհի մեծ հաննարին առջեւ:

— Ի՞նչ բանի համար կը փափախելի՞ գիտ տեսնել. կը հարցունէ Պէթնովէն, ու միեւնոյն ժամանակ նեղն կ'ընէ՝ որպէս զի պատասխանը գրէ դէմը գտնուած սեւ տախտակի մը վրայ, բանի որ չէր լսեր:

— Զե՛ր հրաշայի ~~եւ~~ փոքրերը լսելով, զէր անզամ մը զնեզ տեսնելու բարեբախտութիւնն ունենալու համար էր որ հոս եկայ, կը գրէ պատանին:

— Գո՛ւր երամի՞՞ճ է՛ք:

— Պիտի բլլամ:

— Բան մը գրած ունի՞՞ք. | — « Այո՛, ասոնք են գրածներս », ու անոր կը ցուցանէ արքայոմ մը զոր հետք բերած էր:

Պէթնովէն ուշադրութեամբ կը մննէ զայն. ու վերադարձունելով կ'ըսէ. « Եթէ յարատեւ աշխատութեամբ ընթանա՞մ ձեր համբուն մէջ, ապանով պիտի հասնի՞մ ձեր իտէպիին: Միայն խորհուրդ կուտամ ձեզի որ ձեր ուժերուն եւ ձեր յարատեւ աշխատութեան վրայ դնէ՛մ միայն ձեր յոյսը: Ես ալ ժամանակիս քաջալերութեան պէտք ունեցայ. ոչ սք օգնեց ինձի. իմ կամքն'վս միայն կ'ընի յաջողիկ »: Այս խօսքերն ընելով կը խնդրէ պատանիէն, որպէս զի առանձին քողու զինքը:

Աննուն շնորհակալութեամբ եւ երախտալիսութեամբ կը մեկնի պատանին, սիրքը զեղուն՝ անհատ ուրախութեամբ:

... Եւ այս պատանին՝ ապագայի Վակնէ՛րն էր, այն տիեզերահռչակ անձն՝ որուն հաննարին բարձրութեանը վրայ կը նիւնայ երածօտական աշխարհն եւ որ քերտս վնասէր ու չի հասնու՛ր իր այդ բարձրութեան, եթէ իր այցիկն առքիւ, Պէթնովէնի հաննարը չի գրէր զինք իր ասպարէզին ամուր կապուելու, իր յոյսն իր սեպհական ուժին վրայ դնելու եւ չի արտապնդէր զինք՝ իրեն սպասող լուսաւոր ապագային նկատմամբ:



Եւ երբ, բթամատին ու ցուցամատին ցրտասարսուռ կցմամբ, մահուան աղջամուղջին ծոցը փակեց զոյգ վառ աչուկները՝ զորս ինք կեանքի լոյսին էր բացած, մայրը, խելայե՛ղ, ձեռքն երկնցուց առաջին առարկային՝ ջուրի շիշին, և բռնագոյն զօրութեամբ դեւտին զարկաւ զայն: Եւ ջուրին կորստեան ու շիշին բիւրափուր խորտակման վրայէն՝ վեր, երկինք վերցուց թեւերն՝ որոնք կ'ըսէին անբարբառ. «Նո՛ր է այս աղօթքն, Ամենակալին աթոռը դեռ ասոր պէս աղօթք է՛ բարձրացած»: Այս՝ առաջին տունն էր աղօթքին:

Եւ որդեկորոյս մօր բազկատարածութիւնը խոյացաւ Ածամօր պատկերին՝ զոր մանկան սնարին վերեւ կախած էր: Պատառ պատառ բրաւ պատկերն, աղաղակելով աղէկէ՛ղ ձայնով մ'ը. «Մայր Որդւոյն Աստուծոյ, որու սիրտն անկարեկիր կը մնայ մանկան կաղկանձիւնին, մօրը պաղատանքին, ի՛ջի՛ր վաղազբաւ որդեկիս դադաղին ոտքը»: Աղօթքին երկրորդ տունն այս եղաւ:

Եւ ա՛նա մանկան սնարին տակէն դուրս քաշեց երկրպագեալ խաչափայտը, գոչելով. «Մին միւսէն կարճ գոյգ փայտի կտո՛ր, որ տիեզերքն իր լրութեամբ ընդգրկող Սաչի վսեմագոյն ձեռն առած էիր, Փա՛յտ կենաց որ մանկան մը կեանքը չի փրկեցիր, ա՛ն նորէն սկզբնական ձեւդ»: Եւ առ վշտին ամբարիշտը կոտորեց զայն և գեւտին ձգեց, և ձեռքերն երկինք վերցուցած, աչքերն ալ որդեկին անկենդան մարմնոյն յառած արտասուալից՝ ձայնեց. «Ահաւաստիկ ես խա՛չ կենդանի»: Աղօթքին երրորդ տունն ալ այս եղաւ:

Դեռ կը վառի՞ս, կանթե՛ղ, երբ սիրական զաւկիս կենաց արեւը մարեցաւ. կանթե՛ղ զոր պահ մ'առաջ ոռոգեցի խարտեալ իւղով, խարտիչագոյն, խանդավառ աղօթքիս հետ. որդեկիս կեանքին իւղն սպառեցաւ, ու դուն ի՛ւղ կը ծծես տակաւին»: Եւ ոտիցը տակ փշրեց պատկերին առջև մշտավառ կանթեղը: Եւ այս՝ յուսահատ մօր աղօթքին չորրորդ տունն եղաւ:

Եւ բովանդակ անձին բացատրութեամբ մը որ սմէն երեւակայութեանէ գեր ի վեր էակ մը կը կացուցանէր զայն, ձեռքերը երկինք նետեց՝ արեգակը մարելու շարժու ձեւով մը: Կէս գիշեր էր: «Ա՛լ չը պիտի ծագիս...»:

Աղօթքին... և մօր կեանքին վերջին տունն եղաւ տիեզերասաստ այդ հրամայականը:

Առաւօտուն նոյն դադաղին մէջ փակեցին մայրն ու որդեակը:

[ԱՆՏԻՊ]

ԵՂԻԱ ՏԷՄԻՐՃԻՊԱՇԵԱՆ



ձԱՆՃԵՐՈՒ ԼԵՉՈՒՆ. — Մանրաձայնը (microphone) գործիք մըն է որով կարելի է լսել է՛ն տկար ու մեղմ ձայնն իսկ : Ամերիկ. քնադէտ մը այս գործիքին միջոցաւ ժամերով մտիկ բրած է բոլորէնը ճանճերուն, և եզրակացուցած թէ անոնց լեզուն իրենց անվերջ բըզ-զիւնին մէջ չի կայանար՝ որ՝ իրենց թեւերուն արագ շփումին ալ-մուկն է միայն : Անոնք «չափուած ձայներով» իրար կը հասկընան, սուր լսելիք մը ունին, որուն չնորձիւ մեզի համար այլ ևս անլսելի եղող է՛ն կամաց ու բարակ ձայներն անոնց համար գիւրաւ լսելի եղած պիտի ըլլան :

ԺԱՆՆԱԿԻ ՀԱՒԱՔԱՄՈՅ. — Իտալիոյ Մարկրիթ թագուհին հաւաքածոյ մը ունի ժանեակներու՝ զորս նորոյթի պատշաճեցուցած է : Իրե՛ն է որ կը պատկանի աշխարհի է՛ն սուղ թաշկինակն որ հին վեհեակ. ճշմարիտ ժանեակն է՝ անեղձ վիճակի մէջ, և որ շինուած է ժե. դարուն. կ'արժէ 75,000 Ֆրանք : — Անգլուհիներն ալ ետ չեն մնար իրենց նմանօրինակ հաւաքածոներովը : Լէյտի Գրոմըր ահագին քանակութեամբ թանկարժէք ժանեակներու հպարտ տէրն է. ունեցածներուն մէջ կայ անկողնի ծածկոց մը 3 դարու հնութեամբ որ կը ներկայացունէ Եղիսաբեթի մուտքը՝ Քէնիլվորթի դղեակը : Տկ. Պրօք ալ սպան. և հոլանտ. հին ժանեակներու սիրահար մըն է և բուռ բուռ ոսկի ցնծացած է անոնց համար :

ՊԻՍԱԿՆԵՐՈՒ ԼԵՉՈՒՆ. — Երեսի պիսակները (պէնկ) բաղդաւորութեան նշան են, մանաւանդ երբ անոնք երեւան՝ ձախ դին. իսկ աշակողմեանն անձնասիրութիւն կը յայտնէ :

ՕՐԱԹԵՐԹԵՐՈՒՆ ԹԻԻԸ. — Գրէթէ 50,000 օրաթերթ կայ ամբողջ աշխարհի մէջ : Ասոնցմէ կէսն Եւրոպա կը հրատարակուի : Գերմանիա է՛ն շատն ունի, վերջը կուգայ Ֆրանսա, որմէ վերջ՝ Անգլիա : — Առաջին ճարտական թերթը հրատարակուած է 1863ին, 45 տարի առաջ : Այսօր ճարտն 1500է աւելի օրաթերթ ու պարբերական ունի : Թօքիօի «Ճարտն թայմզ»ն անգլիերէն կը հրատարակուի՝ խմբագրուելով սոսկ ճարտնցիներէ :

ԻՆՉՊԷՍ ԿԸ ԽՆԴԱՆ. — Իտալացիներուն խնդուածքը՝ նուազուն, հնչուն ու երաժշտային է. Գերմաններունը՝ զգուշաւոր ու թունտիկ. Ֆրանսացիներունը՝ ներդաշնակ. Անգլիացիներունը՝ զրսպուած, (իսկ խուժանինը՝ քրքջալիր). Սկովաիացիներունը՝ կաթոզին. Իսլանտացիներունը՝ ցնծալից. Մուժիկներունը՝ խժաուր. Յոյներունը՝ թրթռուն ու շէնչող. Չինացիներունը՝ քեքեւուն (կէս-ծիածաղ). Ճարտնցիներունը՝ առանց հնչունութեան, թանձր ու գրէթէ զաւազին :

ԼԱԲԱԼԻՍԵԱՆ ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆ

== Պաղ մարդու մը հետ տեսակցելէն ի՞նչ յառաջ կուգայ...
— Հարբոսի: == Ո՞րն է այն ծաղիկը զոր կիները շատ կը սիրեն...
— Հասակէն ծաղիկը: == Արեւն ինչո՞ւ համար ուշ կ'ելլայ ձմեռը...
— Ա՛յնտն ցորար ե որ կը դժկամովէ կանոնի ելլելու: == Սեղանի տակ
էրբ չեն խօսիր մանաւանդ... — Երբ ճաշողները շո՞ր անոնքի ըլլան:
== Որո՞նք են ամէնէն շատ « ճաշակ »ի տէր... — Պարտաբաժնորները:
== Երբ քար մը ծովը ձգեմ՝ ի՞նչ կ'ըլլայ... — Կը լսե՞ն: == Սեղան
կը բերուի, կը կտրուի, և սակայն չուտուիր. ի՞նչ է... — Խաղի
լուսին: == Կիներուն ամէնքն ալ հաւասարապէս գեղեցիկ. կ'ըլլայ
ասանկ բան... — Այո՛, միտման մեջ: == Վազրի մը գառազեղը
կրնայի՞ք մտնալ... — Անգիւնէր, ելի՛ մեկէս դարս ելած ըլլա՞ր: ==
Ինչո՞ւ համար ինչ ինչ գնումներ կիրակի օր չեն բներ... — Որովնեք
խանութները գոց կ'ըլլան: == Հոգիդ տալէ քիչ մը առաջ ի՞նչ եղած
պիտի ըլլայիր... — Հոգեվար: == Ինչո՞ւ համար անկողին կ'եր-
թան... — Ինչու որ անկողինը մզի՛ չի գար: == Թափօրի ատեն ինչո՞ւ
խաչալէմներ կը տանին... — Վասն չի անսոս չեն կրնար քալել: ==
Ո՞րն է աժանութեան վերի՛ն աստիճանը... — Գնել բան մը և չի
վճարել: == Կատարածութեան յրումն ո՞րն է... — Նախնայիլ էր սորո-
բէն: == Լուսինը կը սիրես թէ արեւը... — Ի՞նչ ընեմ՝ արեւը, լուսնու-
յէն վերջ կ'ելլէ ան. Լուսնի՛նը կը սիրեմ, որ միտմանը կը լսուորէ: == Ի՞նչ
բան աւելի կը նմանի Սատանայի՛ն... — Սարայելը: == Ի՞նչ է այն
բանը զոր շատ թեխե կը գտնանք՝ իր ծանրութեանը հակառակ...
— Քասէ՛ մը ոսկի: == Գինիին տակաւները գազտագողի որոնք կը
պարպեն... — Վրան գոյացած ծակերը: == Երկու եզ ի՞նչ կ'ըլլան մար-
գազեախինին վրայ... — Ա՛յո՛ւ մը կ'ըլլան:

ԱՆՈՒՇՆԵՐՈՒ ԼԵԶՈՒՆ!

Հերարտիք Ֆրանսոսի մը կը հասարակէ լի «Սելի»է և «Արտայմոր»է
անոնքի լեզուներու համար որոնած նախադարձութեան արտաբանութիւններն
մը կը յայտնէ, և զինքը շրջապարօղ իրերու մասին հմարակց արտա-
նեցող: «Հարար»է և «Օրբան»է դարձուցներ պարբարելու սովոր-
ութիւնը նշան մըն է անձնար խնայողութեան: «Սերիլի»է և «Խնայ»է ին-
տանայներ (marmelade) պարբարելու մասնաոր ճաշիկը կը մարմնաշէ
արողը դարձուցնէ և նախարարութեան: — Երբ անոնքի՛ն ալ կ'սկսին
անգարանապահ ըլլալ այսպէս, այլ էսս ինչի՞ վարանէլ:

ԱՌԱՅ. — Ալե՛կ ազի՛կ է. — Ո՞րի՛ն բիտէ. — Մ՛յո՛ւ ըստ:

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ ՎԱՐՊԵՏՆԵՐ

(ԱՅԲՈՒԲԵՆԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ)

ԶՈՒԹԱԿԱԶԱՐ (+Է-Ն-Է)

- * Ազա
- * Աշղը
- * Զաֆիրի
- * Թադէոս (նանւ հեղինակ)
- Ինսան
- Իւսկիւտարըր Անտոն (նանւ ձյնգր.)
- * Հիւտիայը Ապոսիլ Գատիր (ամար.)
- Համբարձում
- * Մէմուհ
- * Պիւլպիւլի Սպիհ
- * Սէլանիբլի Էտհէմ

ԳԱՎԻՆ ԱՆՈՂ (Ո-Տ-Է)

- * Ալի պէյ (նանւ հեղ.) ամար.
- Արսոյ Իպրահիմ (Երտաշեցի)
- * Արշակ (նանւ հեղ.)
- * Աֆէթ (» »)
- Կալիպ պէյ (նանւ հեղ.) ամար.
- * Հաֆըզ ձէմիլ էֆ. (նանւ հեղ.) ամար.
- * Կէվրէտ պէյ (ամար.)
- Պարսալըր Արտաշէս
- Սէլիմ (արք''. ննւագածոր.)

ԲԱԶՄԱՆԱՐ ՏԱՌԻՂ ԱՆՈՂ (Ք-Ն-Ն-Է)

- * Ալի (աչազուրկ)՝ նանւ հեղ.
- Արտաշիս
- * Արիֆ պէյ (նանւ հեղ.) ամար.
- Արշակ (» »)
- * Նոզմի պէյ (աչազուրկ)՝ ամար.
- * Շէմի
- Պրուսալըր Նոսիպ

ԵՐԴԵՅԻԿ (Հ-Ն-Է-Ն-Է)

- Անմէտ պէյ
- * Անմէտ Բատիմ (նանւ հեղ.) ամար.
- * Ատիկ (նանւ հեղ.)
- * Ատիկ գասէ Պոզոս (նանւ հեղ.)
- Իւսկիւտարըր Հիւտամտտին
- * Իւսկիւտարըր Յոսէֆի
- * Իւսկիւտարըր Կէտիմ
- Հաճի Կարապետ
- Հաֆըզ Աշըր (ամար.)

[*] Աստղանիւ կրող անունները վարպետներն են Արեւելեան Երաժշտութեան այս կենդանի խումբին մէջ:

Իւսկիւտար, 16 Մարտ 1907

- * Հաֆըզ Օսման (ամար.)
- * Մէնտէրեան (նանւ հեղ. ձյնգր.)
- * Մուսուլըր Հաֆըզ Օսման
- * Չուլհանեան (նանւ հեղ. ձյնգր.)
- Սասի պէյ (ամար.)
- Սէլանիբլի Անմէտ (նանւ հեղ.)
- Վիշէն
- * Քարսալըր

ՎԻՆ ԱՆՈՂ (Լ-Է-Ն-Ն)

- * Անտոն (նանւ հեղ.)
- Լամպո
- * Խրիսթոս (նանւ հեղ.)
- * Նուրմ պէյ (ամար.)
- Շաիր զատէ Միհրան
- Օզրիկ

ՓԱՆԴԻՌ ԱՆՈՂ (Թ-Տ-Ղ-Ն-Է)

- * Անմէտ պէյ (նամբաւաւուր ձէմիլ պէյ- յի և զրտոյր) ամար.
- * Իւսկիւտարըր Բամիզ բաշտ գասէ Ալի պէյ (նանւ հեղ.) ամար.
- Սասի պէյ (ամար.)

ԶՈՒԹ ԿԱՄ ՇԱՒԵՐԲ ԱՆՈՂ (Ք-Է-Ն-Ն-Վ)

- Ազա պէյ
- * Անասիաս
- Արշակ
- Սոմիրի

ՍՐՈՒԿ ԱՆՈՂ (Ն-Ն-Ֆ-Է-Է)

- Պրուսալըր Գրիգոր (ամար.)

ՏԱՌԻՂ ԱՆՈՂ (Ս-Ն-Ն-Ն-Է)

- Էտհէմ էֆէնտի (ամար.)

ԳԱՆՆԱԿԱԶԱՐ (Բ-Ն-Ն-Ն-Ն)

- Անմէտ Տէտէ (նանւ հեղ.) ամար.

ԲԱԶՄԱՆՈՒՈՒՄ

** ձէմիլ պէյ | Շուսերը, Փանդիւր և Վիճ անողներուն մէջէն հոչակաւորն ու աւաշնակարգն որ երկրորդական բլլալով կ'ամէ նաև Գալիսն ու Գաշնակ |

ԱՐՏ. Ս. ՍԱՔԱՆԱՆ (Ամարթոն)

ԿԻՐԱԿԻ. Դ՛. **15** Յունիս—Հագիրան, Ն.Տ. 28 Յունիս ՀձԲ. 29 ձէմագիւլ էվվէր
 ❖ **ՀԹ.** Բ. կիրակի Հոգեգալուստէն յետոյ: Ս. Էջմիածնի Կամողիկէ եկեղեցոյ
 տօնը: (Բոլոր եկեղեցիները հանդէս կը կատարուի): **Կ. ՀԹ.** Եկեղեցոյ տօն Ս.
 Գրիգոր Լուսաւորիչէն հաստատուած: **ԹՆ.** Ս. Ամուլ մարգարէ: **ԼՏ.** Ս. Իրե-
 նէոս (Երանոս) Ա. հետեւող առաքեալներու:

ՄԻԿՈՒՇԲ. -Յ. **16** Յունիս—Հագիրան, Ն.Տ. 29 Յունիս ՀձԲ. 1 ձէմագիւլ օխըր:
ՀԹ. Ս. Ս. մանուկներ Բեթղեհէմի. Ակակիոս վկայ, Մովկիմաս քահանայ և Կող-
 րատիոս զինաւոր: Հարանիք: **Կ. ՀԹ.** Ս.Ս. մանուկներ Բեթղեհէմի, և Ակակիոս
 վկայ: **ԹՆ.** Ս. Տրիխոն սքանչելագործ եպիսկոպոս: **ԼՏ.** Ս.Ս. Պետրոս և Պօղոս
 առաքեալներ:

ՄԻՆԻՇԵՐ. -Կ. **17** Յունիս—Հագիրան, Ն.Տ. 30 Յունիս ՀձԲ. 2 ձէմագիւլ օխըր:
ՀԹ. և **Կ. ՀԹ.** Ս. Ս. Նունէ և Մանէ կոյսեր: **ԹՆ.** Ս.Ս. Մանուէլ, Իսմայիլ և
 Ընկեր. վկաներ: **ԼՏ.** Ս. Պօղոս առաքեալ:

ՉՈՐԻՇԵՐ. ԲՅ. **18** Յունիս—Հագիրան, Ն. Տ. 1 Յունիս, ՀձԲ. 3 ձէմագիւլ օխըր:
ՀԹ. և **Կ. ՀԹ.** Պահր: **ԹՆ.** Ս. Ղեւոնդիոս վկայ: **ԼՏ.** Ս. Մարտիաղէս եպիս-
 կոպոս:

ՀԻՆԳՇԵՐ. ԲԿ. **19** Յունիս—Հագիրան, Ն. Տ. 2 Յունիս, ՀձԲ. 4 ձէմագիւլ օխըր:
ՀԹ. Ս.Ս. Սահակ և Յովսէփ իշխաններ, և Սարգիս ու Բագոս վկաներ: **Կ. ՀԹ.**
 Ս. Ս. Կոստանդիանոս Թագաւոր և մայրը՝ Հեղինէ: **ԹՆ.** Ս. Յուլիա առաքեալ:
ԼՏ. Ս. Աստուածածնի այցելութիւնը:

ՈՒՐԱՍԹ. ԲԿ. **20** Յունիս—Հագիրան, Ն. Տ. 3 Յունիս, ՀձԲ. 5 ձէմագիւլ օխըր:
ՀԹ. և **Կ. ՀԹ.** Պահր: **ԹՆ.** Ս. Մեծոտիոս եպիսկոպոս Պատարայի: **ԼՏ.** Ս.
 Անատոլիոս Լաւողիկէի եպիսկոպոս:

ՇԱՐԱՔ. ԲԿ. **21** Յունիս—Հագիրան, Ն. Տ. 4 Յունիս, ՀձԲ. 6 ձէմագիւլ օխըր:
ՀԹ. Ս. Ս. Ներսէս մեծ հայրապետ և Խաղ եպիսկոպոս: **Կ. ՀԹ.** Ս. Ս. Սարգիս
 և Բաբոս վկաներ, Մովկիմաս քահանայ և Կողրատիոս զինաւոր: **ԹՆ.** Ս. Յուլի-
 անոս վկայ: **ԼՏ.** Ս. Թէոդորոս հայրապետ: ԱՄԵՐԻԿԱՅԻ Միացեալ Նահանգ-
 ներուն հաստատութիւնը:

ՅՈՒՇԱՏԵՏՐ

15 Յունիս Կիր. [167—199] կէս օր. 4. 19.....

16 Յունիս Բշ. [168—198] կէս օր. 4. 19.....

17 Յունիս Գշ. [169—197] կէս օր. 4. 19.....

18 Յունիս Դշ. [170—196] կէս օր. 4. 19.....

19 Յունիս Եշ. [171—195] կէս օր. 4. 19.....

20 Յունիս Ուր. [172—194] կէս օր. 4. 20.....

21 Յունիս Շր. [173—193] կէս օր. 4. 20.....



Կրօնագիտութեան դասին, աղջկանց դասարանը: «Պէտք է տառապիլ՛ սորվիք, աղջիկներս, առա՛նց գանգատելու, — կըսէր ծերուկ կրօնուսոյցը՝ պերճախօս շեշտով մը: 'Ի մաի ունեցէք միշտ Սուրբ Գրոց խօսքը. «Եթէ ա՛յ երեսնուդ աստակ մը տան, անմիջապէս ձախը դարձուցէք»:

Չարճճի սանտի մը՝ ցած յայնով. — Հապա եթէ աստակի տեղ համբո՛յր մը ըլլայ տուածնին . . . :

* * Պայուսակները լեցուցած՝ վաճառականին պաշտօնեան կը պատրաստուէր մակնիլ Մանչէսթըրէն — այդ մշտամուշ քաղաքէն — դէպի Պոլիս, երբ իր բաղրոնին դառնալով՝ հրաժեշտի ողջոյնը մատոյց և խնդրեց իրմէ իմանալ թէ ուրիշ յանձնարարութիւն մ'ալ արդեօք ունէ՞ր ընելիք: Բաղրոնը, — առեւտրական սչխարճի մէջ այն հաղուսակուա քէքերէն՝ որոնք բամպակէն և տպածոյէն զատ՝ սրամատութեան կտտուէն ալ ունին իրենց մէջ, — պատասխանեց նոյնհետայն. [— «Ուրիշ յանձնարարութիւն, այո՛: Կարօտայիր բարեւնեքս Արեւին . . . »:

* * Որո՞նք էր էլ նային հշտ. — Թռամվային ձիերը, — Գետինէն գիպուածաւ օր մը սակի մը գաննողը. — Խղճահար ամօթապարսը, — Չեւնաղբօ ող բնծայացոն, — Նորչնոր կօշիկներն առաջին անգամ ոտքն անցունողը, — Լիկու զրազած յոթոթները, — Լարախաղայնները, — Մոծրակնուն վրայ պալար հանոչները, — Քամակարեկ ծերունին, — Բոլոր ունչերն ու յոլոր դունչերը:

* * Օրէորդը. — Խակալու սովորութիւն ունի՞ք արդեօք. սէն, ջիղերուս կը դպի այդ բանը: [Նշանա՞շը. — Երբե՛ք սիրելիս:

— Ինչէ՞ն գիտէք: [= Գիշեր մը ամբողջ արթուն մնացի, ապահով ըլլալու համար թէ կը խակամ կոր թէ ոչ . . . :

* * Անձնասէրի մը կարծիքը: «Հո՛գս անգամ չէ, եթէ բարեկամներս մնանին: Արդէն, կարծեմ թէ նոյն իսկ իմ մա՛նս ալ զիս սնատարեք պիտի թողու . . . »:

* * Երբ զանգակատան մը աշտարակին վերև՝ աքյորի մը արձանը նշմարեց սնցորդը, սկաւ տրամաբանել ինքնիրեն. — «Ես ալ կը խորճէի կոր որ ինչո՞ւ աքյորի տեղ հաւ մը դրած չըլլային զանգակատան գագաթը . . . : Պատճառը դատայ վերջապէս: Հաւ մը եթէ դրած ըլլային, անչուշտ պիտի հաւկիթ ամէր, և հաւկիթները մինչև վար հասնելնուն՝ ողջ չը՛ պիտի մնային . . . »:



Մարդու խոչակը (գրքրլաֆ) սուղիւ է՛ն հրաւային է Երաժեսական գործիներէն : Անո՛վ է որ կրնամք նմանցունել ծանօթ ձայներն ամբողջ : Կը զսնուի՛ խոչակի ձեւով՝ շնչակողին վերի դին : Շնչակողը կը բանեցունէ բոֆերս՝ — օղի պահարաններ, — եւ այդ օղին --չ-- --> արսափումն է որ կը գոյացունէ խոչակին մասանց թրբումներն ու ձայնին կազմութիւնը : Կողկողիթ (épiglothe), վանանաձեւ, մանեկաձեւ եւ 2 ձագարաձեւ կռնիկներ (thyroïde, cricoïde, aryénoïde) կը կազմեն խոչակին կմախքը : Չայնական լարերը կարկինի ոսքերու պէս կը բացուին՝ երբ շնչել հարկ է, ու կը մօտեանն՝ ձայներ կազմելու համար : Այս անջատումն ու միացումը կը կատարուին մկաններով՝ որոնցմէ ներաշնչողները պաշտօնն ունին հագագը (glothe) բանալու . իսկ լարերը մօտեցունողները «ձայնահան մկաններն են, որոնք զմեզ կը շահագրգռեն ձայնի տեսակէտով : Զբաղինք ուրեմն է՛ն կարեւորովն՝ որ է «վանանաձագարային» (thyro-aryénoïde) : Առաջ-է՛ն՝ վանանաձեւ կռնիկին ներքաճափ անկիւնին զողում է, իսկ ետէ՛ն՝ ձագարաձեւ կռնիկին մէկ փոքր բարձրաձողակին : Բաճմուած է 3 խւրձերու որ ծածկուած են լարակեպ նիւթով եւ նրբին լորձնաբաղանքով մը : Մկան, նեարդ, լորձնաբաղանք՝ կը կազմեն «ստորին ձայնական լար» . ստոնց վերեւ կան 2 լորձնային ծալքեր որ «վերին ձայնական լար» կը կոչուին եւ կը ձեւացունեն 2 խոռոչներու զմբէրներն՝ որոնք սահմանուած են ընդարձակութիւն շարու արսափարած ձայներուն : Չայնական լարերը ձայնին կուտան հնչունութիւն . եւ այս ձայնն է զոր երգողը պիտի կերպարանէ, զայն անցունելով իր ստորդին (ըմբան, pharynx), Բրափոսերուն ու բերնին մէջ : Ստորդ, Բրափոս, բերան՝ կը կազմեն խոչակին «բապը ս՛տամօծի»ն : — Ռայէս զի ձայն զի գեղեցիկ ու զօրաւոր ըլլայ, փոխանակ ցած ըլլալու՝ զմբէրադ է խորամէջ ըլլալու է Իմքը : Պէտք է մեծ միջոց մը տեսնուի հերձասամներու եզերէն մինչեւ Ստորդին ետեւի երեսը : Քիմքին առագաստը պարտի ըլլալ բաւական երկայն, որպէս զի իր բարձրացումի շարժմանց մէջ՝ պզտիկ լեզուն գործածուի ստորդին ետեւի երեսին վրայ : Երբ առագաստը կարն է, բաց միջոց մը կը մնայ Բրափոսերուն հետ հազորակցող, ու ձայնը ռնգային կը դառնայ : Նշիկները շատ խոռո ըլլալու չեն, թէեւ միշտ անհրաժեշտ չէ աս՝ աղւոր ձայն ունենալու համար : Քրափոսերն ալ պէտք չէ որ ունենան իրենց միջնորմին վրայ կարկառուն մասեր, կռնիկի չափազանցեալ ծալքեր, ինչպէս եւ սողիպող (լիւսաթօթ) : — Երգելու ընդունակութիւնը կարելի է որոշել՝ մարդուս վիզին ձեւէն : Խոչակին յետուս դէպ ի առաջ քիչ զարգացած ըլլալուն, Բէնո-ները կլոր վիզ կ'ունենան : Պ--էն-ներուն վիզին տամաչափը յետուս դէպ ի առաջ աւելի՛ շեշտուած կ'ըլլայ : Պ--ներուն վիզն է՛ն զարգացած վիճակն ունի . ստոնց ազամախնձորը շատ դուրս ցցուած ըլլալով, ձայնական լարերին երկայն կ'ըլլան : Մեծոյն եւ մկանոս կազմ ունի թէ՛նօր . մեծ է կուրծքին վանդակը, եւ անագին՝ բոխային տարողութիւնը : Պառիթօնը միջին տիպար մ'է, իսկ բամբերգուն՝ խոռո ու նիհար : Այս երեքին համար ինչ որ քսինք՝ կը պատշաճնի --թր--նօ, Կոչօ եւ Կոչն--նօ կանանց :

Գիշեր Է. երկինքը կը փայրիլըլի
Անդորր անաչիւն, ու պսակաւերի.
Նըշոյղներն ա՛յնքան, վիներեկն երկնային
Կը ժայթիկ հաւնոյթե, հիացումե կուշան :

Իբրեւ թե բոլորն ալ իմանային
Անցնող հոծիւն մը շախտեկախան՝
Վերե՛ն, հեռուէն, անհուն խորհուրդիկն.
Սարսուղե՛ կարծես թե կը վերսնան,
Իմաստութեան կարծես կ'աղօթեն :

*
*

Աշխարհը շուն Է. սանց մեջ խաւարին՝
Յնախն անագներն անա կը մարին.
Սեւ սանիֆներու սակ մեղաւորներ
Կը քնանան հիմա իրենց քունը հեփ :

Ո՛չ մեկ սուրբ երազ գիրեկի դեպ ի վեր
Մեծ Խաղաղութեան կ'աւաքանայ երթեփ.
Հոն քաղաքն անբողջ սեւ կոյտ մ'է բշուտ
Նիրհող կիրճարու. վերն ամենուրեք՝
Լուռ անբըծութեանց օրհներգ խաւնդալատ :

Իւսկիւսար

ՏԻՐԱՆ ԶՐԱՔԵԱՆ

Ե Ր Զ Ա Ն Ի Կ Ա Ն Կ Ո Ղ Ի Ն

Ժընկվցի գործաւոր մը հնարիչ հանդիսացաւ վերջերս Լոռանշան անդրաշինարի մը՝ ուր պսակող Է՛ն խոնջ անձն իսկ ինկզիմէր փոխադրուած կ'զգայ անարիտ Էլիզեթի մը մեջ: Անկողիկն այնպէ՛ս մը շինուած է որ՝ վրան փոռուող մարմինին անշուքը — քաղուն մեփեկանութեան մը շնորհիւ — իսկոյն զարնէր կուսայ Կոստանի «Պեռնուկո»ը: Այս եղանակը բաւական երկար կը տեւէ, քնանալու օրամադիր չեղողի՛ն անգամ պարգեւեղով . . . Մորփեռուի գիրկը: Անկողիկին սընարիկ կողմը կայ պահացոյց մը. ո՛ր ժամուն որ արբըննալ կ'ուզեփ՝ սլաքը Լոյն ժամուն վրայ կը բերեփ ու կը անջեփ: Որոշեալ ասեկին, անկողիկը կ'սկսի Լոռագեղ Վակների մեկ որոտընդոտ վալար, եւ, երազային օրօրումներու մեջ, աջուք-ձեղք քացած էփ արդեկն :

ԱՌԱՄ. — Տ-ՆԸ ԻՆԷ ԴՆԷ -Լ Ե-ԵԼ, Դ-ԻԴ-ԷԼ ԻՆ ԴԻՆԷ-Դ -ԵԼ:

Ո՛վ որ գրաւ բռնելու մէջ շահիլ կ'ուզէ, թող հետեւեալ խաղն առաջարկէ իր բարեկամներէն մէկուն: Պիտի ըսէք անոր.

— « Բարեկամ, առանց քու վրադ որ և է բռնութիւն բանեցունելու, առանց մինչեւ անգամ քեզի դպչելու, պիտի արգիլեմ քեզի յետ սրտանդ լէր լէրցումելէ, պայմանաւ սակայն որ առնես անպիտի դիրք մը որ անպատեհութիւն մը չունի և շատ արտառոց ալ չէ: Առնելիք այդ դիրքդ ցոյց պիտի տամ հիմայ»: Գրաւը բռնուելէ ետք, դրամը գրպանելու տենչով վառուած փոյնեաննիդ որդի կը կեցումելէ՝ աջ երեսը պարէն փակցուցած, աջ որդը և աջ սրտանդ փակումայն պարէն որդած լլուլով: Այս պայմաններուն մէջ, Բուրբոֆին անշարժացած է անիկա, ու դուք պիտի կրնաք մտադիւր խնդալ՝ յետ սրտանդ լէր առնելու համար իր ընելիք անօգուտ ճիգերուն վրայ: Անհնարին է, բացարձակապէս անհնարին է անոր յաջողիլը: Խաղը հակառակ վերջին ծայր դիւրին և տղայական երեւնալուն, ոչ ոք պիտի կրնար անոր մէջէն պարզերես ելլալ և գրաւը շահիլ: Վերեւ բացատրուած դիրքէն յառաջ եկող այդ յանկարծական անդամալուծութեան պատճառը պարզել շատ դիւրին է: Երբ մեր ձախ սրունքը վեր առնել կ'ուզենք, անպատճառ հարկ է մեզի՝ անոր վրայ հեծած ծանրութեան մէկ մասէն նախ զայն թեթեւցունել, և ասոր համար՝ մեր մարմինն աջ կողմին ծռել, ինչ որ կը տեղափոխէ ծանրութեան կեդրոնը: Այսպէս, ձեր բարեկամն արձակութեան մէջ նեղը ձգած պիտի ըլլաք, այսինքն անանկ դիրքի մը մէջ դրած որ — հակառակ իրեն բոլոր ջանքերուն — անկարելի է անոր՝ մարմինը ծռել աջ դիւրն. հետեւաբար ձախ սրունքին շարժումը չի՛ կրնար տեղի ունենալ, ցորչափ աջ երեսով աջ ակամջը պատին փակչելէն չէ դադրած: Կարծուածէն շատ աւելի ծիծաղառութ ու զրօսուցիչ փորձ մըն է ասիկա, — գիշերային հաւաքոյթներու մէջ մանաւանդ տեղի ունենալիք անմեղ ժամանց՝ երկու սեռէ ներկայացուցիչներու՝ աջ համար, — որ միշտ ընդունելութեան կ'արժանանայ, և որ՝ այդ ցուցուած տեղը, պատին կը փակցունէ բոլոր երիտասարդները, մինչև իսկ մարմնամարզի մէջ է՛ն քաջ եղողները. մինչ դուք ասդիէն կը մարիք խնդալէն . . . :

ԿԻՐԱՆԻՆ. ԴՅ. 22 Յունիս—Հազիրանն Ն.Տ. 5 Յուլիս ՀՃԲ. 7 ձէմագիւլ փաւրը
 ❖ ՀՅ. և Կ. ՀՅ. Գ. կիրակի Հոգեգալուստէն յետոյ Լուսաւորչի պահքին բար-
 կենդանը: **ՅՆ.** Ս. Եւսեբիոս Եպիսկոպոս Սամոսատի: **ԼՏ.** Ս. Զոյէ կոյս

ԵՐԼՈՒՇԲ. ԴԿ. 23 Յունիս—Հազիրանն Ն.Տ. 6 Յուլիս ՀՃԲ. 8 ձէմագիւլ փաւրը
 ՀՅ. Պահք: Ս. Ս. Եպիփան Կիպրոցի, Բարեխա հայրապետ ու իր երեք աշա-
 կերաները: **Կ. ՀՅ.** Պահք: Ս. Ս. Եպիփան Կիպրոցի: **ՅՆ.** Ս. Աղրիպինոս վկայ:
ԼՏ. Ս. Տրանկուիլլինոս:

ԵՐԵՒՇԲ. ԴԶ. 24 Յունիս—Հազիրանն Ն.Տ. 7 Յուլիս ՀՃԲ. 9 ձէմագիւլ փաւրը
 ՀՅ. Պահք: Ս. Ս. Կոստանդիանոս Սագաւոր և մայրը՝ Հեղինէ: **Կ. ՀՅ.*** և **ՅՆ.***
 Ս. Յովնաննէս Կարապետի ծնունդը: **ԼՏ.** Ս. Պրոսպերոս վկայ:

ԶՈՐԵՇԲ. ԴԷ. 25 Յունիս—Հազիրանն Ն.Տ. 8 Յուլիս ՀՃԲ. 10 ձէմագիւլ փաւրը
 ՀՅ. և Կ. ՀՅ. Պահք: **ՅՆ.** Ս. Փերրոնէ վկայուհի: **ԼՏ.** Ս. Եղիաբարեմ Թա-
 գուհի Լուսիտանիոյ:

ՀԻՆԳՇԲ. ԲԶ. 26 Յունիս—Հազիրանն Ն.Տ. 9 Յուլիս ՀՃԲ. 11 ձէմագիւլ փաւրը
 ՀՅ. և Կ. ՀՅ. Պահք: Ս. Ս. Թէոդոտոն Գաղատացի, Թալիլէոս բժիշկի և եօթը
 վկայ կուսաններ: **ՅՆ.** Ս. Դաւիթ Թեսաղոնիկեցի: **ԼՏ.** Ս. Եփրեմ Խուրի:

ՈՒՐԱԹ. ԲԷ. 27 Յունիս—Հազիրանն Ն.Տ. 10 Յուլիս ՀՃԲ. 12 ձէմագիւլ փաւրը
 ՀՅ. և Կ. ՀՅ. Պահք: **ՅՆ.** Ս. Սամիսոն յգնաւոր: **ԼՏ.** Ս. Ս. Գենարիոս և
 Սիդուանոս:

ՇԱԲԱԹ. ԲԸ. 28 Յունիս—Հազիրանն Ն.Տ. 11 Յուլիս ՀՃԲ. 13 ձէմագիւլ փաւրը
 ❖ ՀՅ. և Կ. ՀՅ. Ս. Գրիգոր Լուսաւորչի նշխարներուն զոնուիլը: **ՅՆ.** Ս. Ս.
 Կիւրոս և Յովնաննէս անարժաններու նշխարներուն փոխադրուածիւնը: **ԼՏ.** Ս.
 Պրոս Ա. Հոռմի հայրապետ:

ՅՈՒՇԱՏԵՏՐ

22 Յուճիս Կիր. [174—192] Կէս օր. 4. 20

23 Յուճիս Բշ. [175—191] Կէս օր. 4. 21

24 Յուճիս Գշ. [176—190] Կէս օր. 4. 21

25 Յուճիս Դշ. [177—189] Կէս օր. 4. 21

26 Յուճիս Եշ. [178—188] Կէս օր. 4. 22

27 Յուճիս Ուր. [179—187] Կէս օր. 4. 22

28 Յուճիս Շր. [180—186] Կէս օր. 4. 23

ՃԱԲՈՆԱԿԱՆ ՔԱՅԼԵՐԳ

Handwritten musical score for 'ՃԱԲՈՆԱԿԱՆ ՔԱՅԼԵՐԳ'. It consists of two systems of music. The first system has a treble clef and a 4/4 time signature. The lyrics are: *Ki-me ga yo wa chi-yo ni ya-chi-yo ni Sa-za-re ish-i no*. The second system has a treble clef and a 4/4 time signature. The lyrics are: *i.. wa. no to ra. ri te ho. ke no mu. sa me.. a*. The score includes various musical notations such as notes, rests, and dynamic markings like *ff* and *f*.

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԻ ՄԱՐԴՈՅ ՀԱՍՅԷԻՆ

Երաժշտական գործիչներ — իրենց ունեցած լաւ յատկութիւններով անվթար պահպանուելու համար — անհրաժեշտ պէտքն ունին՝ ընտիր արուեստագէտներէ յաճախակի գործածութեան: — Ըննովա պահուած Բականինիի հռչակաւոր ջութակին փայտը վերջերս փճանալ էր սկսած: Այդ թանկագին գործիքն անեղծ պահելու միջոցներուն վրայ՝ գիտուններու և արուեստագէտ անձերու միջև վիճաբանութիւն մը բացուեցաւ, և սա եղբակացութեան յանգեցան. — Հին վարպետներէ յիշատակ մնացած երաժշտական գործիչներ հանրութեան հիացումին երկար ատեն առարկայ ընելու համար, հարկ է որ անոնք տարին մէկ անգամ հանուին իրենց պահուած տեղերէն և գործածուին երաժշտ. կաճառի յառաջագէժ աշակերտներուն կողմէ:

ՎԱՐԴԵՐՈՒՆ ՏԱՐԻՔԸ

Գիտական խուզարկութիւններ կարող եղած են հաստատել ինչ ինչ թանկագին վարդերու կեանքին տեսողութիւնը: Այսպէս Cremsin Rombler կոչուած վարդին տեսակները կ'ապրին 336 ժամ. Marie Niel 176 ժամ. Madame Demazin 113 ժամ. Bengale 104 ժամ. Gustave Régis 56 ժամ: Souvenir de la Malmaison կոչուած վարդերուն տեսակները 48 ժամ հազիւ կ'ապրին: Բանաստեղծին խօսքը չէ՞ք յիշեր այս առթիւ.

«Վարդ եր, վարդերո՞ւն՝ նման

Ապրեցա՞ւ առտո՞ւ մը միայն»:

ԱՌՍԾ. — ՄԷԻՆ ԼԱ՝ Է, ԵՐԻՄԻՆ ԲՈ՞Ւ, ԵՐԷՆ ԵՂ՝ Է:

** Գրողի մը համար ոչինչ կայ աւելի անուշ ու խողտիչ քան իր առաջին հատորը ունենալ՝ իր աչքին առջեւ: Առաջին հատորը Գրականութեան մէջ այն է, ինչ որ է առաջին համարոյրը Սիրոյ մէջ:

** Ի՛նչ կ'ուզէք եղէք, բարոյականի դրսերեւոյթը յարգեցէք, նախապաշարումին ոսկեզօծումը փայլաշփեցէք: Կեղծիքը՝ ծածկել է. ծածկելը՝ ամչնալ է, և ամօթը՝ բարոյականի առաջին պայմանն է: Սոստովանուած յանցանք մը կ'իսովին ներուած է կ'ըսէին մինչև հիմայ. քօղածածուկ մեղապարտութիւն մը, ախոս, բոլորովին ներուած պիտի ըլլայ ասկէ վերջը: ** Նուազ անհունով է որ առաւել անհունը կարելի կ'ըլլայ չափել: ** Երգիծանքն է՛ն ապահով և համայնաբոյժ նշդրակն է բարքերու վարպետ վիրարոյժի մը ձեռքին մէջ, բարոյական համաճարակներու համար: Ամէնէն քիչ ցաւցընող ու թերեւս ամէնէն աւելի հաճոյք պատճառող եղանակն է անիկա վիրատու մի ու մասհերձութեան մը ատեն: ** Նրբախղճութեան ամէն ծակուծուկ ոսկիով կը ձեփուի: ** Կը խնդակցինք շաչող ծափերով տարւոյն մահուան վրայ, առանց խորհելու մէկ կողմէ որ ան մեր կեանքի օղակներուն խզումն է անընդհատ, թէև միւս կողմէ տարօրէն հակատութեամբ մը մեծագոռ օրօրում մը կը հանենք երբ մեր սիրելիներէն մէկուն դադաղը կը փակենք: ** Աւելի «կնկան պայքար» քան թէ «կեանքի պայքար»: ** Բնապաշտ դպրոցը՝ քրննասէր ու նուազ իրաւազանց՝ հայլին է մարդկութեան: Կը նկատէ, կը զննէ, կ'արձանագրէ զայն ա՛յնպէս որպէս էր, է, և պիտի ըլլայ: Անոր ազտն ու փայլը միանգամայն կը ցոլացընէ իր գծած պատկերներուն մէջը, լոյսի պէս աղւոր ու իրական, կաղապարի պէս ճշգրիտ, և քարի պէս անխօս և անղգած: ** Ծերութիւնը մարդուս աւերակ վիճակն է. անկից վերջը ապրելը՝ իր խի աւերումը դիտելու բնահարկն է: ** Որպէս բնալոյծն երկու և աւելի մարմիններ կը զատէ, կ'անջատէ քիմիական բաղադրութիւններով, այնպէս ալ հոգեբանը խառնակ ներքնաշխարհները կը պարզէ, բարդ գագացումները կը կազմալուծէ, կնճռոտ հոգիները՝ իրենց սկզբնապատճառներուն մէջը կը մերկացընէ և ուղեղային աշխարհին ընթացիկ երեւոյթները կը տարհիւսէ, կը թելանջատէ:

ԽՈՒՆԿԻ ՊԷՍ ԿԱՆԿԱՌ. — Փափկաճաշակներուն մեծագոյն իզձն է որ կանկառը խունկի պէս ճերմակ մնայ եփուելէ յետոյ : Շատ մը տանտիկիներու համար պայմանադրական դարձած է լեմնով ճերմկցունելն, որ, համի սեռակէտով իր անպատեհութիւնն ունի նորէն : Ահաւասիկ ամենազիւրին միջոց մը՝ այս նպատակին հասնելու համար : — Պէտքին համեմատ, ամանի մը մէջ պարզ ջուր կը դնէք, մէջը այլիւր խառնելով՝ ջուրը պղտորելու աստիճան. յետոյ ստրկուած կանկառներն ասոր մէջը կը ձգէք և հին կը թողուք՝ մինչև եփելու ատեննիդ. իսկ երբ հանէք մէջէն՝ պարտիք ջուրէ մը անցունել : Եթէ միտով է կերակուրը, կոտեմը (թէրէ օթը) պէտք չէ որ միասին ըլլայ, այլ կանկառն եփուելէ քիչ առաջ մէջը ձգուելու և մէկ երկու եփ ելլալու է :

ԿԱՆԱՆՁ ԲԱԿԼԱՅ. — Աս ի՞նչ է, խոհարարը կատակի՞ է ելեր. ի՞նչ կը նշանակէ պնակ մը լեցուն թարմ բակլայ՝ հում հում սեղանն բերելը : Չէ, մի՛ զարմանաք, ազնիւ կոչնականներ, բակլային կանանչութիւնը թէև հումի պատրանքը սուս ձեր աչքին, սակայն աղէկ մը խաշած է ան : Ինչպէս գիտէք, կանանչ բակլան ու թարմ լուրիան եփուելէ վերջ գեղնագոյն կը դառնան. խոհարարին ճարտարութիւնը հոն կը կայանայ որ այդ բանջարեղէններուն դմբուխտի գուարթ փայլը մնայ, երբ անոնք ալ եփուած՝ սեղանն բերուին : Որպէս զի հանիք ձեր նպատակին, կը բաւէ որ նետէք մինակն եռացող ջուրին մէջ 2-3 կտոր հրաշէկ պողպատ՝ ստրկուած կանանչ բակլային կամ թարմ լուրիային հետ միասեղ. յետոյ կիսուի վար առէք և ջուրէն հանելով միտի վրայ ձգեցէք : Նոյնը ձէթով եփելու ատեննիդ : Կանկառին պէս, բակլային կոտեմն ալ ուշկէկ ձգելու է :

ՏԱԿԼ ԱՌԱՄԻ ՀՈՏ. — Չը՞ պատահիր որ, — կամքէ անկախ պատճառներով, — երբեմն կերակուր մը այրի ու չուտուելիք դառնայ : Թափելէ առաջ հնարք մը խորհելով՝ անոր մէջ յաջողիլն ամէնէն խեղճը չէ՞ միթէ, որ և է կշտամբանք չը հրաւիրելու համար ձեր վրայ՝ ձեր այդ անճարակութեան հետեւանքով :

Ահաւասիկ հնարքն՝ իր անվրէպ յաջողութեանը հետ. — Սանը դրէ՛ք պող ջուրէ մէջ, մէջէ երա՞ կերակուրն առանց խառնելու : Այրածին հոտը անցնելէ ետք՝ կերակուրը կամացուկ մը ուրիշ աման կը պարպէք. այսպէսով այրածի ո՛չ համ կը մնայ և ո՛չ հոտ : Ապուրի համար մանաւանդ, ասիկա շատ զիւրիւն միջոց մըն է :

Կ. Պոլիս, 9 Փետ. 1907 ԵՐ. Գ. ՄԱԼԽԱՍԵԱՆ

ԱՌԱՄ. — Հոստի խառնուիլն ինչպէս լինի

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

—* Անտառը կը մսծնայ, քաղաքը կ'երգէ. ո՞վ է: — ՍՐԻՆՊ

—* Հին հին քանի՞ կ'ընէ: — ՀԻՆՊ «ԻՆԻ»Ն 100 կ'ընէ, քանի որ մէկ «ինի»ն 20 կ'արժէ:

—* Պատոյս պտոյս կ'երթայ ո՞ւր,
Ուրքեր չունի, կուզայ ժուռ,
Բերան չունի՝ կուլ կուտայ,
Ինքիբ զլիտուն կը փութայ: — ՀԵՂԵՂ

—* Քանի՞ քալէ՝ կ'զղայ կարճութիւն,
Քանի թաղուի՝ կ'առնէ յարութիւն: — ԱՍԵՂ - ԴԵՐՁԱՆ

—* Ո՞վ է այն որ անուշ է մազբէ՛ն աւելի, նուաճող՝ սէրէ՛ն
աւելի, հրաշագործ՝ բոլիկներէ՛ն՝ աւելի, ճնշող՝ լեռէ՛ն աւելի,
բարի՝ ծերէ՛ն աւելի, և զոր կը պաշտենք՝ զիչե՛րն աւելի: — ՔՈՒՆ

—* Երեք երկվեցեակ ծընան այդ որդիք,
Ունեցան ետքէն երկու ազրբրաբք.
Բրնոյթով՝ նրման,
Դէմքով՝ մանրման:
Ոտանաւոր թէ արձակ
Կ'ըսեն արձակ համարձակ:
Ճանչցա՞ր զիրենք,
Եկո՞ւր զբրենք: . . . (Հայերէնի 36 տառերն
Օ.ի և Ֆ.ի յաւելմամբ):

—* Երկու էի: Թեւս կտրեցին՝ ոտքիս փակցուցին, եզայ ուրէ:
Բ (2) Ը (8)

—* Աղջիկ մը կար ժամանակաւ
Որ իր մօր հետ ամուսնացաւ:
(Կրնա՞ք սեպել
Չայս՝ առատել):
Մայրիկն ալ էր սակայն արու,
Հայր մը առանց ունենալու:
— Չարմանալի սյղ ընտանիք.
Ասանկ բան մը դուք կ'ընդունի՞ք: Ա.Դ.Ա.Մ-ԵԻԱ

—* Վազը եզայ, և երէ՛կ պիտի ըլլամ: — ԱՅՍՕՐ

ԿԻՐԱԿԻ. Գ. 29 Յունիս—Հազիրան, Ն.Տ. 12 Յուլիս, ՀՃԲ. 14 ձէմագիւլ Կիւրքի
 ✱ 2Թ. և Կ. 2Թ. Չորրորդ կիրակի Հոգեգալուստէն յետոյ, ԳՆ. Ս.Ս. Պետրոս
 և Պողոս առաքեալներ, 1,Տ. Ս. Գուայրերդոս արքայ:

ԵՐԼՈՒՇԲ. ԴՅ. 30 Յունիս—Հազիրան, Ն.Տ. 13 Յուլիս, ՀՃԲ. 15 ձէմագիւլ Կիւրքի
 2Թ. Ս. Ս. Անտոնինոս, Թէոփիլոս, Անիկոսոս և Փոսինոս վկաներ, Հարսնիք
 Կ. 2Թ. Ս. Ս. Ներսէս հայրապետ և Խաղ եպիսկոպոս, ԳՆ. Ս. Ս. Տաս երկու
 առաքեալներ, 1,Տ. Ս. Անակղետոս Հոռոմի հայրապետ:

ԵՐԵՒՇԲ. ԴԷ. 1 Յուլիս—Թէմմուզ, Ն. Տ. 14 Յուլիս, ՀՃԲ. 16 ձէմագիւլ Կիւրքի
 2Թ. և Կ. 2Թ. Ս. Ս. Դանիէլ մարգարէ և Սեղբար, Միսաբ և Աբեղնազով
 երեք մանուկներ, ԳՆ. Ս. Ս. Կոզմաս և Դովիանոս՝ անարժամ բժիշկներ, 1,Տ.
 Ս. Բոնավենտուրոս կարդինալ, ՖրԱնՍԱՅԻ ՊետուՅեան հաստատութիւնը:

ՉՈՐՔՇԲ. ԵՅ. 2 Յուլիս—Թէմմուզ, Ն. Տ. 15 Յուլիս, ՀՃԲ. 17 ձէմագիւլ Կիւրքի
 2Թ. և Կ. 2Թ. Պահր, ԳՆ. Ս. Աստուածածնի տուփին զանուկը, 1,Տ. Ս.
 Հենրիկոս կայսր:

ՀԻՆԳՇԲ. ԵԷ. 3 Յուլիս—Թէմմուզ, Ն.Տ. 16 Յունիս, ՀՃԲ. 18 ձէմագիւլ Կիւրքի
 † 2Թ. և Կ. 2Թ. Ս.Ս. Սահակ և Մեսրոպ Յարգմանիչներ. (Բոլոր զպրօցներու մէջ
 հանդէս կը կատարուի): ԳՆ. Ս. Յակիմոս վկայ, 1,Տ. Ս. Աստուածածնի հան-
 դերձին տօնը, 2Թ. Երուսաղէմի տուփին համար ծոմ:

ՈՒՐԱԹ. ԲՅ. 4 Յուլիս—Թէմմուզ, Ն. Տ. 17 Յուլիս, ՀՃԲ. 19 ձէմագիւլ Կիւրքի
 2Թ. և Կ. 2Թ. Պահր, ԳՆ. Ս. Անդրէաս Երուսաղէմի եպիսկոպոս, 1,Տ.
 Ս. Ալեքսիոս կամաւոր աղբատ:

ՇԱԲԱԹ. ԲԷ. 5 Յուլիս—Թէմմուզ, Ն.Տ. 18 Յուլիս, ՀՃԲ. 20 ձէմագիւլ Կիւրքի
 2Թ. Ս. Ս. Տրդատ Թագաւոր, Աշխէն տիկին և Խորովիղուխտ կոյս, Կ. 2Թ.
 Ս. Ս. Չաքարիա մարգարէ և Ուտիբիոս զգնաւոր, ԳՆ. Ս. ԱՅանաս և Դամ.
 բէոս վկաներ, 1,Տ. Ս. Թովմաս Ազուխնացի վարդապետ:

ՅՈՒՇԱՏԵՏՐ

29 Յունիս Կիր. [181—185] Կէս օր. 4. 23

30 Յունիս Բշ. [182—184] Կէս օր. 4. 24

1 Յուլիս Գշ. [183—183] Կէս օր. 4. 24

2 Յուլիս Գշ. [184—182] Կէս օր. 4. 25

3 Յուլիս Եշ. [185—181] Կէս օր. 4. 26

4 Յուլիս Ուր. [186—180] Կէս օր. 4. 26

5 Յուլիս Շր. [187—179] Կէս օր. 4. 27

ԱՇԽԱՐՀԻՍ ԷՆ ՅՈՒՐՏ ՔԱՂԱՔԸ. — Դէպ ի Բեւեռ ճամբորդութիւն ունեցողներէ՝ շուտով պիտի ստանայինք ասոր պատասխանը, բայց երբ հարցուէր. «Ո՞րն է աշխարհիս է՛ն ցուրտ վայրը՝ «Բարդուէ Բնակչութիւն», Բեւեռացու նանդէ՛նն անգամ պիտի ստիպուէր մամբտալ: «Վերստեանսք» կը կոչուի այդ վայրն, արջային գօտիէն վեր, Սիպերիոյ հիւսիսային արեւելեան կողմը: Հող, Պարէնհայթի ջերմաչափը զետոյէն 90 աստիճան վար կ'իջնայ յունվարի մէջ, բայց երբեմն 86 աստիճանի կը բարձրանայ զետոյէն վեր՝ շուրջին մէջ, յուլիս ամսուն, իջնալով միանգամայն սառելու աստիճանին՝ ամառուան է՛ն տաք գիշերները: Այս քաղքին բնակիչները 1000 ի չափ կան՝ որոնք աշնան թօնրնկէցներէն կ'ենթարկուին սոսկալի սղողումներու: Վէտխօսեանսքի մէջ գտնուող թէ՛ անասուններն և թէ՛ բոյսերը ճուղած և ազազուն են միշտ, կլիմային բիրտ աղդեցութիւնը կրելով: — Յուրտի տեսակէտով, Վէտխօսեանսքէն ետքը կուգայ «Իսքուցք»ը՝ որ անկէ մեծ քաղաք մըն է, Սիպերիոյ մէջ գարձեալ: — Իսկ «Գլօնտայք», Ալասքա թերակղզիին այդ մասը (հիւսիս՝ Ամերիկա) աշխարհիս ամենացուրտ տեղն է ձմեռ եղանակին, ուր բնակչութիւն ալ հաստատուած է վերջին տարիներս, իր ծոցէն ելլող ոսկիի հանքերուն համար:

ՊԱՏՄԱԿԱՆ ՎԵՐԵԼՔԵՆԵՐ. — Մասիսի վերելքը կատարած են Բրօֆ. Բասօ և Տր Տօւրա՝ 1829ին, երկարան Ապրիլ՝ 1845ին, հրամատար Բօժքօ՝ 1856ին, Պէյքըր, Ֆրէշֆիլտ ու Նէյմս Պրայս անգլիացիները՝ 1876ին, Մառքօֆ՝ 1888ին, ու քիչ յետոյ Օր. Մօզօքէվիչ, որոնց բոլորն ալ կրգած են կատարել հանիլ: Յիշենք նաև Ալէն և ՍաքՄէլէպէն ամերիկացիներն՝ որոնք Ալպեան լեռները մագրցող՝ նկարիչ Ռաֆրի ընկերանալով, Մասիսի վերելքն ըրին 1891ին: Այս լեռն երկուք է, պզտիկն ու մեծը. առաջինին բարձրութիւնն է 3,396 մէթր. իսկ միւսինը՝ 5,156 մէթր, որուն վրայ էր որ կեցաւ Նոյի տապանը ջրհեղեղէն վերջ՝ ըստ Աստուածաշունչի:

ՉԵՌԱԿԵՐՏ ԶՐԱՆՅՔԵՆԵՐ

- Սուէդի ջրանցք. սկսուած 1859 եւ ւաւրսւած 1869.
- Քրօլեքասի եւ Բեքրապուրի ջրանցք. 1877-1890.
- Կոնքոս. 1884-1893.
- Մանչէսթր. ւաւրսւած 1894.
- Քայլէր Վիլնէլմ (Պալիկը հիւսիս՝. ծովուն միացունող). ւաւրսւած 1895.
- Էլպի եւ Թուալի ջրանց (հիւս՝. ծովը Պալիկին միացունող). բացուած 1900ին.
- Ուէլլէն ջրանց. (Քանասայի Էրիէ լիճն Օնթարիոյի միացունող):

ԱՌԱՄ. — Շ-գը -ն-ը-է է, շ-տը -ն-ը-է է, քիչը -ն-ը-է է

Չաւկինն հետ որ մը որսի կ'ելլայ հարուստ մը: Օղբ անտանկի տաք ըլլալուն, չաքէթնին կը հանեն և իրենց ընկերացող խեղկատակ ծառային կուտան.

— Կոնակդ ահա էջցու մը բեռ դրինք, վարպետ:

— Հաշիւնիդ սխալ է, կ'աւելցունէ ծառան. ասիկա երկու էջի բեռ է...

* * Ա. սոստանի. — Հիմակուան տեղս շատ հանգիստ պիտի ըլլայի՝ եթէ տէրս «Փօթօկուաֆ» չըլլար:

Բ. սոստանի. — Ատկէ ինչ կ'ելլայ որ...

— Շունշանորդին ինչ որ բերէ տուն, միս, հաւ, անուշեղէն՝ ամէննո՛ւն ալ պատկերը կը քաշէ կոր զատ զատ, կրնա՛ս նէ վասն ի վերուստ ըրէ...

* * Սոստանի — Հասէ՛ք, տիկին, սեղանատան գորգը կ'էրի կոր...

Տէլիք. — Ապո՛ւշ ես ինչ ես, վրան ջուր չի լեցունե՞ս...

— Ինտո՞ր լեցունեմ, ջուրը խոհանոցն է, «օճախ»ին վրայ խժալէն կրա՛կ է կտրեր...

* * (Աղաւթնաւ.) — Ա՛ս ինչ է, պարզ ջուր ես դրեր ամանիս մէջ: (Կախալաճաւ, ծուլով այն «կիւլիւմ»ին վրայ ուրկէ լեցուցեր էր). — Իրաւ որ մոռցեր ենք մէջը կաթի գնելու...

* * Գատըգիւղ, կիրակի առտու, Մայիս: [—Վարպետ, նաւաճատոյց գնա, նայէ քանի՞ զրշ. կ'ուզեն կոր ֆայթօնի մը համար մինչեւ Ալէմտաղի:


(Ծառան՝ դարձին). — Երեք ոսկի... [— «Չուշ» մը չըսիր... ձիերուն, չըսիր թէ ձիուդ գինը չենք հարցուներ կոր, սոստանիդ կը հարցունենք կոր: — [Իրաւ ինչ գիտէ զավալըն...

* * Բնաւ գիր գրել չը գիտցող ծառայ մը նամակ մը գրել տալու համար դիմնց դրացի ծառայի մը որ գիր գրել գիտցողի համարան ունէր:

— Ոտքս կը ցաւի կոր, չը պիտի կրնամ գրել, պատասխանեց այս վերջինը:

— Խա՛ջ հանէ երեսդ, աղբար, ոտքիդ պէտք չունի՛մ ես, ձեռքի՛դ պէտք ունի՛մ...

— Իրաւ ես, բայց եթէ ըսածդ ընեմ, պէտք պիտի ըլլայ նամակդ խրկելիք տեղն ի՛ս ալ մէկտեղ խրկել՝ կարգալու համար...



Կիր եւրոպական լարուած ժամացոյց մէջ տեղի պարսպ շրջանակին մէջ, այնպէս որ բոլ ժամացոյցիդ 12րդ գայ ա՛յն քաղաքին անուանը վրայ՝ ուր՝ ժամը քանի՛ն ըլլայը կ'ուզես հասկընար Այն ասեն բոլ ժամացոյցիդ ժամ ցուցունող սլաքն — այն է՝ պզտիկ սլաքն — ա՛յն շրջանակին վրայի թիւերէն որո՛ն ուզուածն անոր վրայ որ ինկած է. նոյն թիւը ցոյց կուտայ թէ ուզած քաղաքիդ մէջ ժամը քանի՛ն է :

Փորձենք. — երբ Կ. Պոլսի մէջ եւրպ. ժամը 4 ն է եւ կ'ուզես հասկընար թէ Բարիզ ժամը քանի՛ն է նոյն պահուն. ժամացոյցը գետեղ՝ թուղթիս վրայի շրջանակին մէջ, այնպէս որ բոլ ժամացոյցիդ 12րդ Բարիզի վրայ ինձայ. Պիտի տեսնաս որ բոլ ժամացոյցիդ վրայ 4 ցոյց տուող պզտիկ սլաքը թուղթիս վրայ գծուած ժամացոյցի պահացոյցին (cadran) վրայ պիտի նշանակէ մօտաւորապէս 2. Իրով պիտի հասկընանք թէ Կ. Պոլսի ժամը 4 եղած ասեն՝ Բարիզի մէջ ժամը 2ը 12 վայրկեան անցած կ'ըլլայ. ձի՛րջ է. քանի որ երկայնուծեան աստիճաններու հաշիւով՝ գիտենք թէ Պոլսէն Բարիզ եղած բուն տարբերութիւնը 108 վայրկեան է, միայն.

ԱՌԱՄ. — Կ-Պոլս, Բարիզ, Բարիզ, Բարիզ, Բարիզ, Բարիզ

ԶՈԴԻԱԿՈՍԻ ԼՈՅՍՆ ՈՒ ԱՐԵԻԸ

Արեգակը — ցորեկուան լուսաւորը — մերթ կը շարունակէ մընալ մասամբ գիշերուան լուսաւոր ալ, կամ դէթ ալխարհս գիշերնե՛րն ալ բոլորովին զուրկ չէ անոր լոյսէն: Բայ ի վերջալոյսին և արշալոյսին նշուլներէն, կայ նաև խորհրդաւոր լուսաւորութիւն մը, երկնային ջահաւորութիւններէն է՛ն խորհրդաւորն (որ կ'երևայ ոչը շատ պարզ ու գեղեցիկ եղած ատեն, մարտ, ապրիլ ու մայիս ամիսներուն՝ արևելն մուտքէն ետքը, կամ, հակառակ եղանակին մէջ, այն է աչնան՝ սեպտեմբեր, հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներուն՝ արևազալէն առաջ,) լայնատարր, մեծափառ շող մը որ հորիզոնէն վեր կ'ոնաձև կը բարձրանայ, կամ ոսպնածև ապակիի պէս՝ դէպ ի կենդանակամարը (Չողիակոս), ուստի և կը կոչուի Զորեկոսէ լոյս: Ոսկեգոյն ու ծիրանեգոյն այդ լոյսին պայծառութիւնը շատ տարբեր է Յարդգոգին սպիտակ-կաթնագոյն պող երանգէն: Միևտրորը ջինջ եղած ժամանակ, լոյսին թափանցկութիւնն ա՛յնպէս է որ է՛ն պզտիկ աստղերն անգամ անոր մէջէն կը տեսնուին: Զողիակոսի լոյսն երկրիս հասարակածին մօտ տեղուանքն աւելի պայծառ է քան թէ մեր կողմերն՝ ուր ազօտ ծիրով կ'երբեւի: Լոյսին պագաթէն մինչև արև՝ 40էն 90 աստիճաններուն մէջտեղ է առերևոյթ անկիւնական տարակայութիւնը (distance angulaire), և և անոր առանցքին ուղղահայեաց խարիսխին լայնութիւնն ալ 8 էն 30 աստիճաններուն մէջտեղ է: Ոսպնածևին ուղղութիւնն ընդհանրապէս արեգակնային հասարակածին ուղղութիւնն է: Արգի գիտութիւնը կարող եղած է ապացուցանել թէ Զողիակոսի լոյսն արդարև կը պատէ արևն՝ ա՛նազին ոսպնածև ապակիի մը նմանութեամբ: Այդ միջատասնը (milieu) շատ քիչ խտութիւն ունի, բայց անոր նիւթն անդադար արագալէժ կը դիմէ դէպ ի արեգակ: Այժմու գիտնականներէն ընդունուած վարկածի մը համեմատ, արևելն խաւարմանց միջոցին անոր շուրջ տեսնուած բակին հետ (պսակ, couronne) նո՛յն է զօղիակոսի լոյսը: Արեգակնային նիւթի կոյտին կծկումը, կամ հետզհետէ դէպ ի կեղրոն ժողլընի՛ն է որ պատճառ կ'ընդունուի արևուտ ջերմութեան: Եթէ իրաւ ա՛ս է պատճառը, կը հետեւի թէ արեգակն երթալով կը պզտիկնայ. բայց հաշուբւած է որ այս խոչորութեան նուազումը շատ մը դարերէ ետքը միայն կրնայ զգալի ըլլալ:

ԱՌԱՅՐ. — Զէ Լ-ԻԷ, -Ի-Ի-Ի Է Գ-Ի-Ի-Ի:

ՍԻՐՈՅ ՊԻԾԱԿՆԵՐ



** Մէրը կծու սոխ մըն է: Եթէ պահես զայն սիրտիդ տաքուկ մոխիրներուն տակ, կ'եփի ու կ'անուշնայ: ** Մարդ տարփանքէ մը կը վերադառնայ՝ հրախաղութենէ վերադարձողի մը պէս, — տխուր ու մթամած: ** Մէրը զուգերգ մըն է որ յետոյ յանկերգի կը փոխուի եւ որ յաճախ մինչև մեներգ կը լանգի: ** Երանի՛ «անկուտի» աղքատաց, զի նոցա՛ է արքայութիւն Սիրոյ: ** Մէրը կնոջ մը սիրտին մէջն է, ինչպէս ագամանդն՝ ամուսին մէջ: Հոն պիտի գտնէք կրակ, մահ եւ լոյս: ** Փիլիսոփայ մը Սիրոյ համար կ'ըսէր՝ ինչ որ ըսուած է արդէն ստակի համար. «Շատ լաւ սպասարկու մըն է, բայց գէշ տէր մը»: ** Հովին ալիքներուն եւ ծովափի աւազներուն վրայ կը գրեն սիրահարներն իրենց երգումներն. որովհետև Մէրը կ'անցնի միշտ եւ յաջորդ օրը չը՛ յիշեր ինչ որ նախորդ օրն ըսած էր: ** Մէրը՝ յիսուն տարեկանին՝ յօգացաւ ի պէս է. ո՛չ մէկ բան զայն կը բուժէ: ** Պտուղ մըն է Մէրը՝ զոր պէտք է քաղել, առանց սատար կոտորելու: ** Քիչ մը սիրոյ համար իմ օրերս պիտի տայի. իսկ սէրէն զատ ո՛չ մէկ բանի համար պիտի տայի իմ օրերս: ** Մէրը ծաղիկ մընէ՛ զոր անթառամ պահելու համար պէտք է Արտասուքով ոռոգել շարունակ: ** Իր սիրունիին գովեստը միշտ ասոր անոր ընողը հակառակորդներ ստեղծած կըլլայ ինքզինքին: ** Անիրաւութիւն է կարծելը թէ յանդգնութիւնը Սիրոյ մէջ յաջողելու սատար մըն է: ** Երկու բջիջ ունի Սիրոյ փեթակը, մին՝ մեղր, միւսը՝ լեզի: Մեղրը Գորովն է, լեզին՝ Արցունքը: Սիրահար մեղուն հեղինակն է երկուքին ալ, ըրածին առանց գիտակցութիւնն ունենալու. վասն զի սիրոյ մէջ ամէն ինչ բնազդական է, չէ՛ թէ արամարանական: ** Մէրն ալ — հանքային նիւթի մը պէս — հալելու է որ իր մատաղական կղկղանքը վրան ելլայ, մէջտեղ ելլայ:

ԲՈՅՐ ՈՒ ԳԵՂԵՑԻԿ ՍԵՌ. — Տք. Սամիտն հետաքրքրաշարժ փորձեր կատարած է բոյրերուն՝ կանանց վրայ ըրած ազդեցութեան մասին: Ըստ անխորհրդապահ այդ գիտունին, աս կամ ան բոյրը գեղեցիկ սեռին զգայարաններուն վրայ ո՛չ միայն ֆիզիքական, այլ և բարոյական ներգործութիւն մը կը բանեցունէ: Մուշկը զարկ կուտայ զգայականութեան, վարդէնը՝ զայրոյթի և հպարտութեան, կանիկինը՝ (ըթըր)՝ նկարագրի յանդգնութեան, մանիչակը՝ գթութեան, կնորունը՝ երազանքի, ուսուցչին (cuir de Russie)՝ ցանկասիրութեան, վաշիքն (օրօրօնաքս)՝ լպիրշ հակումներու, շահութան սիրոյ, ևւն . :



ԱՌԱՄ. — Խելութիւնն էր՝ զորոք, անխելութիւնն էր՝ զորոք:

ԿԻՐԱԿԻ. 43. **6** Յուլիս—Թէմնուզ, Ն.Տ. 19 Յուլիս, ՀՃԲ. 21 ձէմագիւլ օխըր:
 ✕ **ՀԵ. Ս.** Աստուածածնի տուփին զանուիլը: **Կ.** **ՀԵ.** Հինգերորդ կիրակի Հոգեգալուստէն վերջ: **ՅՆ. Ս. Ս.** Սիսու Մեծն և Լուկիա վկայուհի: **ԼՏ. Ս.** Վիշնցիոս Պօղոսեան կրօնաւոր:

ՅՐԷՈՒՇԵՐ. 44. **7** Յուլիս—Թէմնուզ, Ն.Տ. 20 Յուլիս, ՀՃԲ. 22 ձէմագիւլ օխըր:
ՀԵ. Ս. Ս. Կալիստրատոս և քառասունը ինը վկաներ, և Դուկիանոս քահանայ:
 Հարսնիք: **Կ.** **ՀԵ. Ս. Ս.** Տրչատ Թագաւոր, Աշխէն արիկին և Խոսրովիդուխա: **ՅՆ. Ս.** Կիրակէ մեծ վկայուհի: **ԼՏ. Ս.** Մարգարիտա կոյս վկայուհի:

ՅՐԵՎՇԵՐ. 45. **8** Յուլիս—Թէմնուզ, Ն.Տ. 21 Յուլիս, ՀՃԲ. 23 ձէմագիւլ օխըր:
ՀԵ. Ս. Զարարիա մարգարէ: **Կ.** **ՀԵ. Ս. Ս.** Աբիատակէն, Վրժանէս, Յուսիկ, Գրիգորիս և Դանիէլ՝ Ս Գրիգոր Լուսաւորչին զաւակներն ու Թոռները: **ՅՆ. Ս.** Պրոկոպիոս վկայ: **ԼՏ. Ս.** Վիկտոր վկայ:

ԶՈՐԲՇԵՐ. 46. **9** Յուլիս—Թէմնուզ, Ն.Տ. 22 Յուլիս, ՀՃԲ. 24 ձէմագիւլ օխըր:
ՀԵ. և Կ. **ՀԵ.** Պահք: **ՅՆ. Ս.** Բագարատ վկայ: **ԼՏ. Ս.** Մարիամ Մազդաւենացի:

ՀԻՆԳՇԵՐ. 47. **10** Յուլիս—Թէմնուզ, Ն.Տ. 23 Յուլիս, ՀՃԲ. 25 ձէմագիւլ օխըր:
ՀԵ. և Կ. **ՀԵ. Ս.** Եղիսէ մարգարէ: **ՅՆ. Ս. Ս.** քառասունը ճինգ վկաներ Նիկոլայօսիս: **ԼՏ. Ս.** Ապղիճնարիոս եպիսկոպոս: **ՏՃ.** Պիւրծի Էսէտ (առիւծ):

ՈՐԲԵՍԹ. 48. **11** Յուլիս—Թէմնուզ, Ն.Տ. 24 Յուլիս, ՀՃԲ. 26 ձէմագիւլ օխըր:
ՀԵ. և Կ. **ՀԵ.** Պահք: **ՅՆ. Ս.** Եւփիմէ կոյս վկայուհի: **ԼՏ. Ս.** Բրիտանիէ կոյս վկայուհի:

ՇԱԲԱԹ. 49. **12** Յուլիս—Թէմնուզ, Ն.Տ. 25 Յուլիս, ՀՃԲ. 27 ձէմագիւլ օխըր:
ՀԵ. Ս. Ս. տասերկու առաքեալներ և Պօղոս ԺԳ. առաքեալ: **Կ.** **ՀԵ. Ս. Ս.** տասերկու առաքեալներ, և Պետրոս ու Պօղոս՝ զլիսաւորները: **ՅՆ. Ս. Ս.** Պրոկոպոս և Հիլարիոս: **ԼՏ. Ս.** Յակոբ Հերեղեան առաքեալ:

ՅՈՒՇԱՏԵՏՐ

6 Յուլիս Կիր. [188—178] կէս օր. 4. 27

7 Յուլիս Բշ. [189—177] կէս օր. 4. 28

8 Յուլիս Գշ. [190—176] կէս օր. 4. 29

9 Յուլիս Դշ. [191—175] կէս օր. 4. 30

10 Յուլիս Եշ. [192—174] կէս օր. 4. 30

11 Յուլիս Ուր. [193—173] կէս օր. 4. 31

12 Յուլիս Շր. [194—172] կէս օր. 4. 32

ՆՈՐԱՅՐ ՈՒ ՆՈՒՊԱՐ

[Այս երկու Գրաստանայ հոյակապ բառգիտեցեալն զուգակիւսն բրած է մեծանուն գրագէտն՝ Նիկա, Մետոյ Նուպարեանի ուղղուած քրաց համակողմ մը՝ որուն մէկ խտացումն է հետագան, մեր հին ու ետ լեզուներուն մասին գեղեցիկ հայեցողութեամբ մընայ:

... Գրաստեղանիս վրայ դրած եմ ձեր բառարանը, Լիզուէի ձախ կողմն՝ որոյ Նորայր կը գրաւէ աջակողմն. լեզուի խնդրոյն մէջ աջակողմնան էր Բիւզանդացին, իսկ դուք՝ ձեռներէց ձախակողմնան: Ես, որ ու ե է խնդրոյ մէջ չեմ որոշեր աջ և ահեակ, զձեզ հաւասարապէս կը յարգեմ երկուքդ ալ: Ո՛չ, հասարակ բառագիրք մը չէ Նորայր. Լիզուէին բառ սորվեցուց, ու հայ լեզուին մէջ բա՛ռ աւելցուց՝ մութէն հանելով կամ մտքէն հանելով: Իսկ դուք Նորայրի՛ն բան սորվեցուցիք, ո՛չ ձառորէն այլ գործնականորէն. ահագին յիշատակարանով մը Նորայրին ուսուցիք թէ՛ աշխարհիկ լեզուն էրնքնին կը բաւէ ֆրանսասո՛ւայ ընդարձակ բառագրքի մը յօրինման: Եթէ փորձ փորձէիք համոզել զիս թէ՛ գրաբարէն գերազանց լեզու մ'է՛ աշխարհաբարն, յանօգուտս պիտի վաստակէիք: Պէտքսու՛թեան գեղեցկագիտական սկզբունքն որ նախագահած է գրաբարին՝ որպէս առհասարակ հին լեզուաց՝ կազմութեան, նոր լեզուներէն կը թերանայ. լատին լեզուին մօտ միօրինակ է ֆրանսերէնն, որպէս միօրինակ է՝ մեր հին գրոց բարբառոյն հետ բաղդատմամբ՝ արդի կենդանի մեր լեզուն, — որ ֆրանսականին ահա կը ձգարի, միօրինակութեան, ուղղագծութեան: Թո՛ղ տուք ինձ որ գուրգուրամ Նորայրի՛ պէսպիսածեւ մեր հին գրոց գերազանց լեզուին ներկայացուցչին վրայ: Սակայն և հուսատի՛ եղէք թէ՛ աւելի յաճախ կը բանամ ձեր բառարանն յորում ա՛յնքան պիտոյադիտակ կուռ կարգաւորութեամբ զմիմեանց դան զհետ նոր մեր լեզուին արդէն հին բառերն. ու նորագլուտ ա՛յնքան բառեր ալ՝ զորս քաղած ի լոյս բերած էք արդի հայ գրականութեան ծոցէն, կամ յօրինած էք դուք իսկ՝ է զի մուրճի հաստոյր հարուածովք և է զի նուրբ ու նուրբ գործնօքն արուեստագիտաց, նախանձախնդիր յաւէտ անխառն սլահելու ոգին մեր սո՛ճմային լեզուին: Բառեր ունիք, բառեր հարձուտ ի թիւ որոնք աչաց պատրանք կ'ընծայեն, որոնք իրերն իրենց թանձրութեամբ թուղթին վրայ կը տարածեն, — ա՛յնքան իրենց ընդհ. յօրինուածոյն մէջ կը ներկայեն մարդակազմական ներդաշնակութիւն, և իրենց արտաքին կերպարանին վրայ ձեւանոյլ արձանագործական: Եւ զձեզ կը ծափողջունեմ իրրեւ ճշմարիտ եղբայրակից մ'ի գեղեցիկ դպրութիւնս:

Ե. ՏԷՄԻՐՃԻՊԱՇԵԱՆ

ԱՌԱՅՐ. — ԼՂԷԼ ԼՊԻ ԳԵՊՅԱԲԻ ԼԵՐԻՇ ԸՆ՝ԸՆ Ե՛:

Ե. ԹՕԼԱՅԵԱՆ ԻՆՔ ԻՐ ՄԷՋ

* Ինչպէս որ զիտութեան մէջ ա՛լ ամէն ինչ ելեկարականութեամբ կ'ըլլայ, նոյնպէս մեր մ:ջ ամէն բան «եռաձայն»ով պիտի երթայ: Միայն թէ պէտք է զգուշանալ որ ներկայ ամուսնութիւններն ալ... «եռաձայն»ով չըլլան. անոնց երջանկութիւնը լո՛կ... «միաձայն»ով ապահովուած է:

* Կիները կ'ուզեն որ բոլոր էրիկմարդիկ իրենց համար անձնասպան ըլլան, կամ Ս. Փրկիչ ապուշանոցն երթան: Դարձեալ, կ'ուզեն որ իրենց առնելիք էրիկն ազուր ըլլայ, հարուստ և երիտասարդ. բայց երբ գտնալու ըլլան էրիկ մը որ ո՛չ հարուստ է, ո՛չ ազուր և ոչ ալ երիտասարդ, նորէն չառնելիք չեն ընել:

* Էրիկ մարդիկ կ'ուզեն որ իրենց կիներ հաւատարիմ ըլլայ իրենց, բայց չեն ուզեր որ ուրիշներուն կիներն ալ նոյնչափ հաւատարիմ մնան իրենց էրկան:

* Ես որ ծաղիկներու հոտը «պրասա պաստըսը»ի հոտէն զանազանելու անկարող զօրաւոր հոտաութիւն մը ունիմ, տասը հազար կնկան մէջ կրնամ ըսել թէ սա հայ վարժուհի՞ մըն է թէ ոչ. — ձիրք մը ուրկէ դժբախտաբար շատ բան չաճած չունիմ դեռ:

* Էրիկներ կան որ Դատաստանական Խորհուրդին կը զիմեն և երկարատեան Պատրիարքարան երթալ գալէ ետք՝ վերջապէս... իրենց կնկանը կը ներեն:

* Կրնա՞ք գտնել ժամանակակից աղջիկ մը որ մինչև կարգուած օրը քանի մը տաննակ անգամներ սիրտ տուած առած չըլլայ, սիրտի շահաւոր առուտուրն ընելով, ուր ոչինչ կը խօսուի, քանի որ սիրտը միշտ կեցած սեղը կը մնայ:

* Թաղականները շարունակ կը արտնջան թէ «առանց վարձատրութիւն մը առնելու՝ հողինիս կ'ելլայ կոր», և թաղական ըլլալու համար... հողի կուտան:

* Այն դեռատի կիներ որ ազուր ըլլալու յաւակնութիւններն ունի և երիտասարդ «բանսիօնէս» մը կ'առնէ տունը, միշտ պիտի խօսուի այս աշխարհիս վրայ. հող չէ թէ անդիլի աշխարհի մէջ շիտակ արքայութիւն երթայ:

* Կիները չեն զիտեր թէ այրերը պակաս մը լրացնելու համար չէ՞ որ կնիկին կը խարեն, այլ... պարզ բերանփոխի մը համար:

Բերնին կողմէն ձերմակ թուղթի վրայ դրուած մասնոցով մը կրնանք քանի մը փորձ կատարել Տեսութեան վրայ՝ մէկ կամ երկու աչքով: Եթէ ձախ աչուրնիս դոցենք և աջը՝ մասնոցին վրայ բերենք վարէն վեր ուղղութեամբ, մասնոցը «ձախին ծռած» կ'եւրուայ մեղի. իսկ եթէ միայն ձախով նոցինք՝ «աջին ծռած»: Արդարեւ իրարմէ քիչ մը տարբեր է իրին սլակերը՝ զոր մեր աջն ու ձախը զատ զատ կուտան մեղի. աջ աչքին տեսութիւնն աւելի մաս կը պարտուէ աջակողմէն, ձախինն ալ՝ ձախակողմէն. որով՝ մասնոցն ալ իր համաչափութիւնը կը կորսնցունէ: Երբ գլուխնիս անշարժ՝ մասնոցին վերեւ, փոխնի փոխ և շուտ շուտ բանանք գոցենք աջ ու ձախ աչուրնիս, մասնոցն ալ «աջ ու ձախ ծռելով պիտի տեղափոխուի ու պարէ»: Ինչէն է այս պատրանքը: Որովհետեւ մենք իրին շարժմանցը կը վերագրենք անոր պատկերին տեղափոխութիւնները: — Այցաքարտի մը մէկ կողմը թուղթին դպցունենք, միւս կողմն ալ՝ քիթերնուս ձոթին. զետեղե՛նք մասնոցն ալ քարզին եզերքէն քանի մը միլիմէթը հետու՝ դէպ ի աջակողմ, ու նայինք աջովնիս. ձախ աչքերնուս ուշադրութիւնը գրաւելու համար՝ քարզին միւս կողմն ալ 2 դրշ. նոց մը զնենք, — միլիմէթրի հեռաւորութիւնը նոյնը պահելով: Այս պարագային, մասնոցը դէպ ի ձախ ա՛յնչափ ծռած կ'երեւայ որ «հի՛մայ պիտի իջնայ» կ'ըսես: — Դարձեալ, եթէ քանի մը բոպէ քարզին երկու դիէն անքթիթ նայինք մասնոցին ու 2 նոցին, «մասնոցը ձախ կողմ կ'անցնի և դրամը կը ծածկէ», կամ, ասոր հակադարձը: Իսկ երբ մասնոցն արծաթ ըլլայ ու 2 նոցն ալ չէ, «երկուքն իրար կը խառնուին ու կը շփոթուին մէկ մէկու հետ»: Ասիկա յառաջ կուգայ մեր երկու աչքերուն տուած զգայութիւնները լծորդելու մեր ունակութենէն: Վերջին փորձ մըն ալ: — Եթէ մասնոցը շեղապէս լուսաւորուած ըլլայ ու եթէ մէկ աչքով դիտենք զայն, որոշ ատենին սա պատրանքը պիտի ունենանք որ «մասնոցին խոռոչն է որ կը տեսնենք»:

[ԵՄԵՅՈՒԹ. — Ձեռեղէ կաւասար հեռաւորութեամբ ճրագ՝ այցաքարդին երկու կողմն ա՛յ. ո՛չ մեկ իովե՛ն քարդը շուք սալու չէ, այս քէ ո՛չ Տրամախոհութիւննիս գործին մեջ մտնելով՝ խիտյն նշմարել պիտի սար մեր պատրանքը]:

«Մէն ալլէմէնի հարֆէն, ֆէզատ սայեէրէնի սպտէն» . իմացած էիք արար . այս իմաստուն ասացուածքը . կը նշանակէ . «Ով որ ինծի գիր մը սորվեցուց, ստուգիւ զիս իր ծառան ըրաւ» : Հապա սրբան աւելի երախտագիտութիւն պարտի սնուցանել իր մէջ ամէն ժողովուրդ՝ անոնց հանդէպ որոնք իր պատկանած լեզուին Այրուբենքը հնարած են : «Գիրերը — կը գրէր Մելք . Եպիսկ . Մուրատեանց — հաստատուն անօթն են՝ մարդուս հոգիին ու լեզուին ճոխութիւններն երկար դարեր կրելու և յաւերժացնելու» : Տեսէք Դուրեան սրբազանն ալ ինչ կոկիկ կը բանածուէ այս մասին . «Մարդուս խորճութենքն՝ որ կենդանի բարբառով կը հազորդուին ուրիշի, յաջորդ սերունդներու ալ աւանդելու և այսպէս անցանելի գաղափարաց կայում տալու համար, անխուսաքելի պայման մ'է քերն՝ որ ժողովրդի մը մատենագրութեան և անոր պատմութեան կեանքն ու մտնդն է» : Հայ նշանագիրերու գիւտը չեղած՝ Ասիացիներ Եգիպտացուց պէս բեւեռագիր կը գործածէին թիւով 22, մինչև Ե . դար : Ի մեզ, զիւանագրութեանց համար գործածուողները Պահլաւացի գիրերն էին, իսկ Եկեղ . գրութեանց համար՝ յոյն և ասորի տառերը : Ոմանք կ'ըսեն թէ Մեսրոպ միայն ճանաւորները գտաւ, ուրիշներ՝ թէ անոր ջանքն եղած է Այրուբենքին կրկնակ գիրերուն համար, — որոնք օտար լեզուի մէջ չիկան և մեր լեզուի հնչման հարստութիւնը կը կազմեն . — ոմանք ալ 14 տառ միայն գտած է կ'ըսեն : Ինչ որ ըսուի, ստոյգ է որ Սահակի ու Մեսրոպի ջանքերուն արդիւնքն է մեր գիրերուն գիւտը : Հայ գպրութիւնն օտար գիրերու գործածումէն զերծ պահելու նպատակով, Մեսրոպ խնդրեց Սահակ կաթողիկոսէն ժողով գումարել . հոն պատմուեցաւ թէ Դանիէլ անուն ասորի եպիսկոպոսին քով կային հայ նշանագիրեր : Զանոնք իրենց հեղեհայտով սորվողներէ տեսնուեցաւ սակայն որ անբաւական էին ատոնք մեր լեզուի հնչման ծառայելու : Ասոր վրայ Մեսրոպ ստիպուեցաւ անձամբ երթալ Դանիէլի (Միջագետ), Պղատտոսի (Եդեսիա) և Հուսիանոսի (Սամուսատ), որոնց տուած խորճութենքը պայծառացուցին Մեսրոպի միտքն, որ, հուսկ ուրեմն յաջողեցաւ ընել զիւան «երկաթագիր» կոչուած հայ տառերուն : Աւանդութիւնն այս մասին խօսքը կ'ընէ տեսիլքի մը՝ զոր ունեցեր է Ս . Մեսրոպ իր յախճատկութեանը մէջ : Սահակ 439ին կնքած է իր արդիւնաւէտ կեանքն ու թաղուած՝ Աշտիշատ, որուն մահուանը վրայ կէս տարի հազիւ բոլորուած՝ վախճանած է Մեսրոպ և Օշական գիւղը թաղուած : Համարյր իրենց չիրիմներուն :

ԿԻՐԱԿԻ. ԲԳ. 13 Յուլիս—Թէմնուզ, Ն.Տ. 26 Յուլիս, ՀՃԲ. 28 ձէմագիւլ արքրս
 ՃԵ. և Կ. ՃԵ. Վեցերորդ կիրակի Հոգեգալուստէն վերջ, Վարդավառի պահ-
 բին բարկենդանը, ՅՆ. Ս. Գարբիէլ հրեշտակապետ, ԼՏ. Ս. Աննա՝ Ս.
 Աստուածածնի մայրը:

ԵՐԼՈՒՇՐ. ԳՅ. 14 Յուլիս—Թէմնուզ, Ն.Տ. 27 Յուլիս, ՀՃԲ. 29 ձէմագիւլ արքրս
 ՃԵ. և Կ. ՃԵ. Վարդավառի պահբին Ա. օրը, ՅՆ. Ս. Ակիւղաս առաքեալ,
 ԼՏ. Ս. Պանդալէոն բժիշկ:

ԵՐԵՒՇՐ. ԳԷ. 15 Յուլիս—Թէմնուզ, Ն.Տ. 28 Յուլիս, ՀՃԲ. 30 ձէմագիւլ արքրս
 ՃԵ. և Կ. ՃԵ. Վարդավառի պահբին Բ. օրը, ՅՆ. Ս. Ս. Կրիկոս և Յուլի-
 անէ կոյս, ԼՏ. Ս. Նազարիոս վկայ:

ԶՈՐՔՇՐ. ԴՅ. 16 Յուլիս—Թէմնուզ, Ն.Տ. 29 Յուլիս, ՀՃԲ. 1 Բէճէպ
 ՃԵ. և Կ. ՃԵ. Վարդավառի պահբին Գ. օրը, ՅՆ. Ս. Ամանազինէ կալս-
 կոպոս, ԼՏ. Ս. Մարթա՝ Ղազարոսի բոյրը, ՏՃ. Իւշ այլար:

ՀԻՆԳՇՐ. ԴԷ. 17 Յուլիս—Թէմնուզ, Ն.Տ. 30 Յուլիս, ՀՃԲ. 2 Բէճէպ
 ՃԵ. և Կ. ՃԵ. Վարդավառի պահբին Գ. օրը, ՅՆ. Ս. Մարիանէ կոյս վկա-
 յունի, ԼՏ. Ս. Գերմանոս կախկոպոս, ՏՃ. Տօմազին օրերու սկիզբը Սամ Եէլի
 ԻՏԱԼԻՈՅ Թագաւորին զանակալութիւնը:

ՈՐՐԱՍԹ. ԵՅ. 18 Յուլիս—Թէմնուզ, Ն.Տ. 31 Յուլիս, ՀՃԲ. 3 Բէճէպ
 ՃԵ. և Կ. ՃԵ. Վարդավառի պահբին Ե. օրը, ՅՆ. Ս. Պանդալէոն բժիշկ
 ԼՏ. Ս. Իզնասիոս Լոյրլա, ՏՃ. Լէլլի Բէղայիպ, Գանտիլ կիճէսի:

ՇԱՐԱԹ. ԵԷ. 19 Յուլիս—Թէմնուզ, Ն.Տ. 1 Օգոստոս, ՀՃԲ. 4 Բէճէպ
 ՃԵ. և Կ. ՃԵ. Տապանակին յիշատակն և հին Եւնոբ Ս. Եկեղեցոյ տօնը
 Նաւակաթիբ, ՅՆ. Ս. Մակրինէ կոյս, ԼՏ. Ս. Պետրոսի շրջաներուն տօնը:

ՅՈՒՇԱՏԵՏՐ

13 Յուլիս Կիր. [195—171] կէս օր. 4. 33

14 Յուլիս Բշ. [196—170] կէս օր. 4. 34

15 Յուլիս Գշ. [197—169] կէս օր. 4. 35

16 Յուլիս Դշ. [198—168] կէս օր. 4. 36

17 Յուլիս Եշ. [199—167] կէս օր. 4. 37

18 Յուլիս Ուր. [200—166] կէս օր. 4. 38

19 Յուլիս Շր. [201—165] կէս օր. 4. 39

ՈՒՍՍՓՈՍ. — Իւրաքանչիւրն այն ոսկորներուն որ թեւին վերի մասն ուսին կը կպցունեն՝ կը կոչուի *աւրակ* (clavicule) : Նիւար անձինք իրենց անբաղնեբուն ետե զոյգ խոռոչներ կ'աւնենան՝ որ ճիշտ աղամախ մը տեսք ունենանուն՝ ֆրանսական լեզուով մկրտուած են *sallière* անուամբ : Մենք «ուսափոս» պիտի կոչենք զանոնք և պիտի խրատենք այն նիւար կիներն (որ «տէքօլթէ» ն սիրելով հանդերձ չեն ուղեր ցոյց տալ իրենց ազամաններն) որ ամէն օր 20 ական անգամ իրենց աջ ու ձախ բազուկներն օդին մէջ շրջանակի պէս դարձունեն : Այս թեւամարդութեամբ քիչ ատենէն պիտի լեցուած տեսնեն անոնք՝ իրենց վիզերուն շուրջ երկկողմանի գոյացած անհաճոյ ուսափոսերը :

ՍԱՆԴՈՒԽ ՈՒ ՎԵՐԵԼՔ. — Սանդուխէ վեր ելլալն ալ իր կերպն ունի . այդ կերպն — ինքնին շատ դիւրին՝ — գորախաարար անդիտացողներ շատ կան որոնք չէնք շնորհք յոգնութիւն կ'զգան և ծնգուրնին կը կարբախ՝ մինչև որ սանդուխի մը գլուխը հասնին : Ընդհանրապէս սանդուխի մը մէկ աստիճանէն միւսն ելլալու համար՝ կը կըռթընինք մէկ ոտքերնուս ներքանին վրայ, ա՛յն պահուն որ մէկալ ոտքերնիս վերի սանդխամատը կը կոխէ : Կատարեալ շարժում մը չէ ասիկա, որովհետև քանի մը դնդերի վրայ՝ միայն բռնել կուտայ մարմիննուս ամբողջ ծանրութիւնը : Այս աշխատանքը բազմաթիւ դնդերներու վրայ հաւասարելու, նաև մարմիննուս ծանրութիւնն ազէ՛կ բաժնելու համար պէտք է բացէ ի բաց ոտքերնիս ամբողջովին կոխենք սանդխամատին վրայ, այսինքն ներքան ու կրուկ միատեղ դնենք, ետքն ալ ծանրաքալ ու համարձակ՝ յաջորդ սանդխամատը բարձրանանք, և այսպէս իրարու ետեւէ : Այս կերպով՝ կարթի ու դիստի դնդերները միատեղ կ'աշխատին մարդնուս՝ զստնջէնք կ'զգայ բազմոսն սանդուխէ մը վերելք ըրած ատեն :

Ծիւղնեթ՝ ՈՒ ԲԵՐՍԱՆ ԻՆՉ ԳԷՋ կը հոտի, երբ մանաւանդ խօսակից գտնուած են կնոջ մը հետ : Այս անպատեհութեան առաջքը կ'աւնուի սա դեղագիրով . — 60 կրմ. թորեալ ջուրի մէջ հալեցունել 12 կրմ. «զլօսիւս ար շօ», մղել, վրան աւելցունել 56՛՛ ալքոլ և 1 տէսիկրմ. մեխակի իւղ : Գաւաթ մը ջուրի մէջ 1 դգալ դնել այս հեղուկէն և անով բերանն ու լինտերը ցօղուել :

ԱՌԱՅ. — Զբոսարանի քարտէսի վրայ դիտելու :

ժողովուրդին կարծիքով՝ Մահոթե՛ի բառը կը մեկնուի սապէս . մահոթե՛ի : Աստուծոք, դեռ շողենաւը չի հնարուած , առագաստանաւուով կը ճամբորդէր Պոլսանայ բարեպաշար դէպ ի Սուրբ Քաղաք՝ իր ուխտն ու կտածը կատարելու համար : Մովով այդ երթուղարձը վտանգ ունենալուն , ուխտաւոր մը «Մինչև որ գացի եկայ՝ մահոթե՛ի» կ'ըսէր : Այս քմածին ստուգարանութեան ուղիղն է սակայն հետեւեալը . — Մահոթե՛ի հնագոյն ձեւն էր մոթե՛ի բառն որ ազաւազումն է մոթոթե՛իին , արար լեզուի մէջ նշանակող «Երուսաղիմացի , կամ , որ ունի վէտս ասեղնածեծս արարեալ» , քանզի մոթոթե՛ի կը նշանակէ «տեղի սուրբ՝ նուիրեալ Աստուծոյ» , որպիսին է Երուսաղէ մը :

Եւ որպէս զի հոնկէ դարձող մը այդ նուիրական քաղքէն յիշատակ մը ունենար իր վրայ անվթար , վէտք գործել կուտար իր բթամատն եւ ցուցամատն իրարու միացունող անկիւնին եւ դաստակներուն վրայ , Գլխազիրի , Յարեաւի կամ Աշխուրթեան պատկերներով , որոնց նայելով յաւէտ արծարծած կ'ըլլար իր սաղիմական յուշերը : Այս պաշտամունքին վկայութիւն կրնայ բերուիլ մանաւանդ Մովսէսի հիացիկ բացագանչութիւնը .

Ի վերայ քողոց իմոց նկարեցից զեւ , Երուսաղէ՛մ :

Ուրկէ կը հետեւի թէ վաղնջուց ատեններէ ի վեր «կտած»ը գոյութիւն ունէր : Ի հետմն ալ , Եզրիպտոսի մէջ , սպիտակամորթիք ինքզինքնին կակու սովորութիւնն ունէին , ինչպէս նաեւ շատ մը վայրենի դեղեր , և զարդիս իսկ՝ Եւրոպացի նաւազներ , կէտկիսումներով , զիծերով կամ զանազան պատիւներով :

«Իւսկիւտարի հաճի» կը կոչէ ժողովուրդն այն շինծու կտածը՝ զոր Երուսաղէմ չի գացող մէկը կը կրէ իր ձեռքին վրայ , Սուրբ Տեղերն այցելելու իր փախաքին անկարելիութիւնն ստով մեղմելով :

Երուսաղէմէ դարձողի մը մահանսիի նշանն երկիւզածօրէն կը համրութն չունեցողներ՝ զայն կրողին օր մը վիճակակից ըլլալու մտօք : (Պատասխանն) :

Գալով կտածի գործողութեան , պարզ ասեղնածեծութիւն մըն է մորթին վրայ , քիչ մը խորունկկեկ , ուր կը թափեն գունաւոր նիւթ մը , տեսակ մը սեւ մեղան՝ որ կը կապուսնայ ծակը կուած մորթին գոցուելուն հետ , և ցվերջ անկղձ կը մնայ :

Մահանսի բառին համառօտագրութիւնն է մ . կամ մահ . , որ անուն մը կը կանխէ ստորագրուելու ատեն , ինչպէս Մ . Նազար , Մհա . Սերովբէ , ևւ այլն :

ԲԱՌԻԻԲԻՄ

Վ Ա Յ Ր Ի Շ Ա Գ Ա Ն Ա Կ

Պարտէզներու մէջ կամ փողոցները՝ թող կուտանք որ ուրուն չուրուն վասնուի վայրի շագանակն ու ծառայէ տղաքը դրօսացունելու միայն : Այս խոտան ու անպիտան համարուած մաշկամիրզը սակայն երբ իր դառնահամութիւնը կորսնցունէ չորնալով՝ օգտակարապէս կրնայ գործածուիլ արջառներու սննդառութեանը : Ոչխարներու և կովերու տրուած օրական ուտեստին մէջ 500 կրամ այս շագանակէն խառնելով՝ տեսնուած է որ անոնց ծանրութիւնն աւելցած է, որչափ որ չէր եղած երբ օրական ուտեստնուն մէջ 1500 կրամ ճակնդեղ խառնած էին : Շագանակներն երբոր չոր են՝ կը փչրուին, և շերտ շերտ կ'ըլլան՝ երբ թարմ են : Կը խառնեն անկէ թեփի, ծեծուած բանջարներու և կանանչ խոտի հետ : Շագանակին սեղմող յատկութիւնը կը ջրուի՝ միւսներուն հակառակ յատկութիւններով : Բաց ի արջառները՝ սրարտացունելու իր առաւելութիւնէն, վայրի շագանակը խիստ օգտակար դեղ մըն է դժուարաշունչ (սուր-դա՛ն, poussif) ձիերու համար : Կենդանի մը որ 500 մէթրէն աւելի չի կրնար երթալ՝ առանց շունչը կտրելու, շատ աւելի հեռաւորութիւններ պիտի կտրէ՝ եթէ աւելցունեն իր օրական ուտելիքին վրայ՝ 100էն մինչև 300 կրամ փոշիացած վայրի շագանակ՝ թեփով խառն :

ԿՆՔԱՄՈՍԻ ԼԵՋՈՒՆ

Ճերմակ կնքամոմը կը ծառայէ հարսանեկան հրաւիրադիրներ կնքելու : Սևը՝ մահադղ : Թուխը (չորքլայի դոյն)՝ ճաշի հրաւիրատոմս : Գորշը՝ ցաւակցական նամակ : Մանիշակագոյնը՝ սիրահարական նամականի :

ՈՒՇ Ի ԿՈՒՐԾՍ !

Տղայ մը 500 բառ միտքը կրնայ պահել . չափահաս մը՝ 2000 . բրօֆէտօր մը՝ 25,000 տունկի անուն . շատ մը հնդիկներ ջուրի՛ պէս կրնան ոգել Ռիկվէտայէն 2000 ոտանաւոր :

ՆՈՐ ՄՐՑԱՆԱԿ

Տարեցոյցիս 184 էջին մէջ խօսեցանք Նոպէլեան նախորդ մրցանակներուն մասին : Նոյնին մրցանակը Քիմիարանութեան համար տրուեցաւ այս օրերուս՝ տարրազէտ Սըր Ուիլեմը Քրուքսի, որ, «ուտփօմ»ի և յարակից տարրերու պարզաբանութեան մէջ մեծ դեր կատարած է :

ԱՌԱՅ. — Մեի շատի զայ լաի գործի չգտնի են եղեր :

Ժամ-Պատիւս Վիլեոմ Բարիզի է՛ն վարպետ Ֆլազործն էր: Իր-
մէն վարպետ՝ Միլանի մէջ Թառիզոն կար: Օր մը Թառիզոի մահն
խմանալով, Վիլեոմ Միլան վազեց և բախտն ունեցաւ ոչինչ գինով
մը անոր աշխատանոցին ամբողջ գոյքերը գնելու ժառանգորդներէն՝
որոնք ո՛չ մէկ կարեւորութիւն ընծայեցին պատերէն ու ձեզունէն
կախ հին գործիներուն, ջութակի գլուխներուն, կոնակներուն, փո-
րերուն՝ որոնք վերջէն ա՛նագին գումարներ շահեցուցին Վիլեոմի:
Բականինի այս մարդո՛ւն էր ա՛նա որ այցելեց օր մը՝ իր ջութակին
նորոգութեանը համար: Վիլեոմ, երջանիկ՝ իր քոյի ունենալուն այդ
նշանաւոր գործիքը՝ զայն օրինակելու գաղափարը յղացաւ և յաճո-
ղեցաւ, շնորհիւ Թառիզոի գանձարանին: Որոշեալ օրն, երբ Բա-
կանինի եկաւ ջութակը ստանալ՝ Ֆլազործը կեզըր ներկայեց անոր.
վարպետը փորձեց, գո՛նուակութիւնը յայտնեց և կը պատրաստուէր
մեկնիլ, երբ Վիլեոմ խոստովանեցաւ թէ տարած այդ ջութակը
պարզ ընդօրինակութիւնն էր իրենին: Բականինի աղչանքով մնաց,
խկոյն ուղեց գնել զայն, բայց Վիլեոմ շնորհալի ձեւով մը իրեն
նուիրեց զայն, յայտարարելով թէ արդէն ինքզինքը չափէն աւելի
վճարուած կը նկատէր՝ իրեն պէս ջութակահանարէ մը գովեստ ու
գնահատում լսելուն համար: Բականինի այդ ընդօրինակուած ջու-
թակը նուիրեց իր Սիլօսի անուն աշակերտին: Հիանալի ձայն մը
ունէր ջութակն՝ որ սաշտելի գործիքը գարձաւ Սիլօսիի, գոր-
ծածուելով բարձր նուագանդէաներու ատեն: Կը պատման թէ ատ
մի՛ և նոյն ջութակն իր կեանքը փրկեց: Ամերիկայի չեմ գիտեր ո՛ր
մասէն կառքով անցած միջոցին՝ Սիլօսի յարձակում կրեց վայրե-
նիներէ որոնք զինքը փո՛յթ պիտի փողոտէին: Անձին կորուսան ան-
խուսափելի տեսած պահուն էր որ լուսաւոր գաղափար մը յղացաւ.
ջութակը ձեռք առաւ և սկսաւ անա՛նկ անուշ և ազնոր նուագել
որ՝ զինքը քիչ մը առաջ մեռցունել մտադրող խումբը խոնարհե-
ցաւ անոր առջեւ, գերագոյն էակի մը հանդէպ երկրպագութիւն
ընողի հիախանդ գեանամածութեամբ: Սիլօսի յետոյ կրցաւ շա-
քունակել իր ճամբան՝ անփոյթ անպտանդ: Այս պատմական ջու-
թակը գացած է միանալ ձէնտլայի թանգարանին մէջ Բականինիի
ջութակին: Բայց մինչ Բականինիի ջութակը կը կրէ իր ներք-
նամասին մէջ «Կուառնէտիուս տէլ ձէդի 1681—1745») արձանա-
գրութիւնը, Սիլօսիինը կը կրէ «Ժամ-Պատիւս Վիլեոմ 1758-1875»)՝
որ այ՛նքան պատուարեր է փրանսացիներուն համար:

**** Ճշգուծիւնը՝ բարեկիրթ մարդոց պարտքը, և գործի մարդոց օրէնքն է: **** Չորս սխն ունի Դժոխքը. — Առաջինն է Ծուլութիւն, երկրորդը՝ Ստուծիւն, երրորդը՝ Չարութիւն, իսկ վերջինը՝ Բագոսեան հեղուկը: ****** Էրիկմարդուն համար՝ կեանքի առեղծուածը կը կայանայ բաւականաչափ ուսելիք գտնելուն մէջ, իսկ կնիկ մարդուն համար՝ լաւ հագուելուն մէջ: ****** Ինչ մեծ սխալնիս՝ ինքզինքնիս անսխալ կարծելնիս է: ****** Ապրէ՛ քու կեանքդ այնպէս՝ ինչպէս որ ուղիղ և ազէկ կը կարծես զայն: Բայց մի՛ աճապարհ դատապարտելու զանո՛նք որոնք կը մտածեն ու կ'ապրին քեզմէ՛ տարբեր կերպով: ****** Մեծ միտքերը յաճախ իրարու կը հանդիպին... հիւանդանոցին մէջ: ****** Խօսողը կ'ըսէ բոլոր զիացածը, թեթեւամբան՝ ինչ որ ընաւ չը գիտեր, երիտասարդներն՝ ինչ որ կ'ընեն, ձերերն՝ ինչ որ ըրած են, ու տխմարներն՝ ինչ որ ընել կ'ուզեն: ****** Ամուսնութիւն, — վերջ կարգ մը հաճոյքներու և սկիզբ՝ ուրիշ կարգ մը հաճոյից, կ'ըսեն ոմանք: Վերջ կարգ մը նեղութեանց և սկիզբ՝ ուրիշ կարգ մը նեղութեանց, կ'ըսեն ուրիշներ: ****** Չարմանալի՛ առուտուր. — կը ծախսենք առողջութիւննիս՝ հարբատութիւն ստանալու համար: ****** Լաւագոյն «Ինթէլիգիտ»ն ա՛յն ատեն կատարուած է, ուր «Ինթէլիգիտ վէ» հեղոյն ապուշ մը եղած է, և ընողը՝ սրամիտ մը: ****** Երախտագիտութիւնը կը բուրու մտաւէտէ տէ մեծ հոգիները, բայց կը թթուի պղտրկներուն մէջ: ****** Աշխատութիւնն այն հանճարն է որ աշխարհիս ազեղութիւնը գեղեցկութեան կը փոխէ, և մեծ անէմքը կը վերածէ մեծ օրհնութեան: ****** Պիտի վարանէինք տալու առաջին ապտակն, եթէ վտանգ ըլլայինք որ պէտք է ընդունիլ երկրորդը: ****** Բարեպաշտն Աստուծոյ կը նուիրէ ինքզինքն, հրը սատանան այլ եւս զինքը չուզեր: ****** Մարդկային կեանքին առաջին մասը կ'անցնի՛ երկրորդը փափաքելով. իսկ երկրորդ մասը կ'անցնի՛ առաջինն ամոստալով:

ԲՈՅՍ ԲԱՐՈՒՅԻ

Ուայթ կղզին, ճաշարան մը: [Յաճախորդը. — Կառսո՛ն, անկարելի է խմել այս ապուրը: [Կառսոնը. — Շատ լաւ, պարոն, (պրահալը կը տանի և ուրիշ մը առած կուգայ): [Յաճախորդը, (երկու վայրկեանի սպասումէ վերջ). — Կառսո՛ն, անկարելի է խմել այս ապուրը: [Կառսոնը (զայրացած, բայց միշտ քաղաքավար). — Շատ լաւ, պարոն. (առջևէն պնակը վերցունելով՝ ուրիշ պնակով ապուր կը բերէ): [Յաճախորդը, (զուսպ զայրոյթով մը). — Կառսո՛ն, իրա՛ւ որ չեմ կրնար խմել այս ապուրը: [Կառսոնը, (կատաղած). — Բաթմարոն պիտի կանչեմ: [Բաթմարոնը, (մէկ պահեկէն). — Պարոնը կրնա՞յ ինձի բակ թէ ի՞նչ պատճառաւ չուզեր խմել այս ապուրը: Յաճախորդը. Դեղալ չունիմ...:

ԱՌԱՄ. — Կ-դ-դ-դ-ն ի-յ գ-լէէ, դ-դ-դ-ն ի-յ ր-լէէ:

Այսինքն կեղծ աղամանդն իրականէն զանազանելու համար անդլիացի մասնագէտ մը հետազայ փորձերը ցոյց տուած է, որոնց մէմերոնք ալ կրնան օգտուիլ անշուշտ:

1. Զուրբ: Մէկ հատ կեղծ, մէկ հատ իրական աղամանդ առէք և զանոնք զատ զատ ջուրով երկու դաւաթի մէջ ձգեցէք: Կեղծը ջուրին հետ խառնուելու պէս պիտի երեւայ, և գրէթէ աննշմարելի պիտի դառնայ, մինչ իրականն որոշակի պիտի նշմարուի, ձերմակ մը փայլիլելով հեղուկին մէջէն: — Հանեցէք հիմայ և չորցուցէք, ու խրաքանչիւրին տափակ կողմին վրայ ջուրի մէյմէկ շիթ կաթեցուցէք. ջուրն իր գնդաձևութիւնը պիտի պահէ իրականին վրայ, և կարելի է զայն սառին անդին տանիլ գնդասեղի ծայրով, մինչ պիտի տարածուի կեղծին վրայի կաթիլը:

2. Խուրբացոյց: Երբ մանրադէտով մը նայինք, կեղծին երեսակները միօրինակ և կանոնաւոր պիտի տեսնանք, մինչ միւսինները՝ անհամաչափ: Պատճառն այն է որ աղամանդ բանողն աղանիւր տալած ատեն՝ անոր երեսակներուն զուգաչափութիւնը կը դահէ ծանրութեանն, այսինքն կը նախընտրէ թեթեւ անկանոնութիւնները ձգել հատուածակողմերուն վրայ, քան թէ քարին արժէքը նուազեցունել՝ կշիռը պակսեցունելով. մինչ կեղծին արժէքը քիչ ըլլալուն՝ բանողն ուղածին պէս կը կանոնաւորէ երեսակները: — Նոյնպէս, եթէ ճշմարիտ աղամանդին վրայ խոշորացոյց մը բռնենք, սակօքը դրուած թուղթի մը վրայ պզտիկ յտակ կէտ մը կ'երեւայ. կեղծին նոյնը ընկնուս՝ պիտի տեսնենք շատ մը կէտեր, կամ, մէկ հատ մը՝ ծամաւորկած, արդիւնք՝ անհաւասար բեկրեկումներու:

3. Ապակի: Մի՛ միայն ճշմարիտ աղամանդը կրնայ ապակին դծել, կտրել ու կտորել: 4. Խուրբացոյց: Կեղծը խարտոց կը բռնէ, այսինքն կը մաշի անկէ, մինչ իրականն երբեք:

5. Փլորաջրածնաթէն (acide fluorhydrique)ով: Այս թթուին մէջ կեղծը ձգելնուս՝ պիտի հալի, իսկ ճշմարիտն անեղծ պիտի մնայ:

6. Գոյնէրդ: Առէք Կերպասի կտոր մը՝ վրան ձերմակ ու կարմիր կէտկիտուած. քարը վրան բռնեցէք, եթէ կեղծ է՝ գոյնները մէջէն ազուր մը կ'երեւան, մինչ ո՛չ մէկ գոյնի տարրերութիւն նըշմարելի կ'ըլլայ՝ եթէ ճշմարիտ աղամանդ մը բռնենք վրան:

7. Եփում: Իրականը փայտի կամ մետաղի մը վրայ եթէ չըփենք, ելեկարականանալով կ'սկսի փոփոքափայլիլ մութին մէջ, նոյնը չենք կրնար բոլ կեղծին համար:

8. Բուր: Փորձուելիք քարը բորակի խառով մը ծածկեցէք, յետոյ ալքոլի բոցին բռնելով՝ աղէկ մը տաքցունելէ վերջ նետեցէք գաւաթ մը ջուրի մէջ. եթէ կեղծ է, կտոր կտոր պիտի ըլլայ, իսկ եթէ իրական՝ բա՛ն մը չը պիտի ըլլայ:

ԿԻՐԱԿԻ. ԲՅ. **20** Յուլիս—Թէմնուզ, Ն. Տ. 2 Օգոստոս, ՀձՐ. 5 Բէճէպ:
 ✻ **ՀԹ.** և **Կ. ՀԹ.** Վարդավառ: Բրիտտոսի Այլակերպումեան տօնը: **ԹՆ.**
 Ս. Եղիս մարգարէ: **ԼՏ.** Ս. Ալփոնսոս Լիզուարեան եպիսկոպոս:

ՆՐԱՈՒՇԹ. ԲԷ. **21** Յուլիս—Թէմնուզ, Ն. Տ. 3 Օգոստոս, ՀձՐ. 6 Բէճէպ:
 ✻ **ՀԹ.** և **Կ. ՀԹ.** Վարդավառի Բ. օրը: Մեռելոց: **ԹՆ.** Ս. Սիմէոն նգնաւոր:
ԼՏ. Ս. Ստեփանոսի նշխարներուն գանուիրը: ՆՈՐՎԵԿԻՈՅ Թագաւորին ծնունդը:

ՆՐՆՐՇԹ. ԲՅ. **22** Յուլիս—Թէմնուզ, Ն. Տ. 4 Օգոստոս, ՀձՐ. 7 Բէճէպ:
ՀԹ. և **Կ. ՀԹ.** Վարդավառի Գ. օրը: **ԹՆ.** Ս. Մարիամ Մաղղաղենացի: **ԼՏ.**
 Ս. Դովինիկոս կրօնաւոր:

ՉՈՐՔՇԹ. ԲԷ. **23** Յուլիս—Թէմնուզ, Ն. Տ. 5 Օգոստոս, ՀձՐ. 8 Բէճէպ:
ՀԹ. և **Կ. ՀԹ.** Պահր: **ԹՆ.** Ս. Եզեկիէլ մարգարէ: **ԼՏ** Ս. Աստուածածնի
 Զիւնի տօնն, որ է Հոռոի Միրիթլիտոսի նաւակատէրը:

ՀԻՆԳՇԹ. ԲՅ. **24** Յուլիս—Թէմնուզ, Ն. Տ. 6 Օգոստոս, ՀձՐ. 9 Բէճէպ:
ՀԹ. և **Կ. ՀԹ.** Ս. Եսայի մարգարէ: **ԹՆ.** Ս. Բրիտանիէ վկայուհի: **ԼՏ.** Բրիտ-
 տոսի Այլակերպումեան տօնը: **ՏՃ.** Տօմագին օրերու վերջը: **ՀՐ.** Դարա Պայ-
 րամ, (Երուսաղէմի զերումեան և աւերումըն համար ծով):

ՈՒՐԱԹ. ԲԷ. **25** Յուլիս—Թէմնուզ, Ն. Տ. 7 Օգոստոս, ՀձՐ. 10 Բէճէպ:
ՀԹ. և **Կ. ՀԹ.** Պահր: **ԹՆ.** Ս. Աննա՝ Ս. Աստուածածնի մայրը: **ԼՏ.** Ս. Գա-
 յետանոս կրօնաւոր:

ՇԱԹԱԹ. ԲՅ. **26** Յուլիս—Թէմնուզ, Ն. Տ. 8 Օգոստոս, ՀձՐ. 11 Բէճէպ:
 † **ՀԹ.** և **Կ. ՀԹ.** Ս. Ս. Թարէոս առաքեալ և Սանդուխտ կոյս: **ԹՆ.** Ս. Պա-
 րագէէ կոյս: **ԼՏ.** Ս. Ս. Կիրակոս և ընկեր վկաներ:

ՅՈՒՇԱՏԵՏՐ

20 Յուլիս Կիր. [202—164] Կէս օր. 4. 40

21 Յուլիս Բշ. [203—163] Կէս օր. 4. 41

22 Յուլիս Դշ. [204—162] Կէս օր. 4. 42

23 Յուլիս Դշ. [205—161] Կէս օր. 4. 43

24 Յուլիս Եշ. [206—160] Կէս օր. 4. 44

25 Յուլիս Ուր. [207—159] Կէս օր. 4. 46

26 Յուլիս Շր. [208—158] Կէս օր. 4. 47

ՏՈԿՈՍԻ ՆՈՐ ՄԷԹՈՏ

Սեղանաւորներն՝ իրենց փոխ տուած ստակին, կամ, վաճառականներն՝ իրենց վճարօրն անցած պահանջքին համար կ'առնեն 100ին սա՛չափ շահ մը որ կը կոչուի «տոկոս», շահ որ աւելտրական հրապարակին կենսական ջիւղերէն մին է, երբ Օրէնքին տրամադրած սահմանին մէջ ըլլայ, այսինքն երբ չըլլայ բարձր ու կործանարար:

Տոկոսի հաշիւներն որպէս զի դիւրաւ և կարելի եղածին չափ արագ լուծուին՝ հաշուազէտներ գտած են զանազան եղանակներ, — ինչպէս տարագ, ամէն սակի համար հաստատուն բաժանարար, — զորս օգտակար կերպով կը կիրարկեն վաշխի գործառնութիւն ունեցողները: Այդ տեսակ հաշիւներ լուծելու համար՝ — բոլոր զրտնուածներէն դուրս, — ահաւասիկ աւելի՛ դիւրմբունելի եղանակ մը զոր կարելի է միշտ միտք պահել և ամէն տոկոսի հաշիւներու կիրարկել: Այս թող ըլլայ մեր համեստ բաժինն «Ամէնուն Տարեցոյցը» ի բաղմազանութեանը մէջ:

Պէտք է որո՞ւմք ինչո՞վ Բաղմազանութիւն և արդարեւ շորէն Բաղմազանութիւն 25 ս՛վ: Վերջին արտադրեալը պիտի ներկայացունէ 100ին 9 սակով տոկոսի մը քանակութիւնը:

Բացայայտ է որ 100ին 9էն 500 դրշ.ին մէկ տարուան տոկոսը 45 դրշ. է և վեց ամսուանը՝ 22½: Այս պարզ խնդիրը փորձենք հիմայ մեր յանձնարարած եղանակովը:

$$500 \times 180 \text{ օր (վեց ամիս)} = 90,000 \times 25 = 22,50000$$

ԾԱՆՈԹ. — Միշտ ձախէն սկսելով 5 թիւ պէտք է աջ ստորակէտը տանիլ ու մնացեալ թիւերն առնել. ինչպէս 22,50000, այսինքն 22½: Ճիշդ այս եղանակով կրնանք լուծել աւելի բարդ խնդիրներ, ինչպէս 7397 սակին 97 օրուան տոկոսը՝ հարիւրին 9էն. $7397 \times 97 = 717509 \times 25 = 179,37$:

Հարիւրին 9 սակով արդիւնքը գտնելէ վերջ, դիւրին է համեմատութեամբ գտնել նաև միւս սակերը, 5—6—7—8 ևն.

Խմբագրասպետներ

1907 Ապրիլ 18.

«ՅԻՒՐԱԿԵՆ» ԱՌԵՒՏՐ. ՀԱՆՐԷՍԻՆ

Աչքերը զօրացունելու համար զլիսաւոր միջոց մըն է դադ Վորով լուալ զանոնք՝ օրը քանի մը անգամ:

ՄԺԵՂԻ ԿՈՏՈՐԱԾ. — Ո՞վ չը յիշեր այն տարօրինակ նուագահանդէսը զոր ամառները կը սարքեն մեղները՝ գիշերանց՝ մեր նընջախուցին մէջ, կամ ցորեկին՝ աշխատութեան սենեակինս՝ ջութակահարութեան սմեղուկ ազմուկ մը խրկելով մեր ականջներուն և իրենց նրբիրան կազմը թառեցունելով մեր վերնամորթին վրայ. և ահա բարակ խայթ մըն է կ'սկսին՝ ի խնդիր արիւնի: Իրենց ձիգերես այցելութիւնը մերժելու համար ամբողջ սենեակինս փակ պահելն և մահակալնուս վերև սրակապան կախելը հեղձուցիչ և անհանդուրժելի կը դառնան, մանաւանդ տաք օդին: — Ծատ պարզ միջոց մը կայ՝ իրենց սերունդը ջնջելու համար: Լամբարը կը զետեղէք սենեակին ձիգ մէջտեղը, վրան անփայլ ապակեգունաս մը (կլօպ) անցունելով. այս վերջինին վրայ կը քսէք մածուցիկ նիւթ մը, օրինակի համար մեղրի կամ ստղի խաւ մը: ՄԺԵՂՆԵՐՈՒ Հարածձի բանակը դէպ ի լոյս պիտի գրոհէ, ապակեգունասին շուրջ պիտի սլքտըկայ ու վերջապէս պիտի դայ վրան փակչիլ և հոն մահանալ: — Այս դրութեամբ կրնանք ազատիլ նաև գիշերային թիթեռնիկներէ, ճանձիկներէ և ուրիշ թևաւորներէ: Կպշուն նիւթն արդէն շատ քիչ կը վնասէ լոյսին փայլունութեան:

ՋԱՂԱՑՔԻՆ ԳԻԻՏԸ. — Հին օրացոյցներու վերջին էջը կը հանգիւյնք գիւտի թուականներու ցուցակի մը՝ որ ջրաւոց անունը չի պարունակեր: Խօսինք ատոր վրայ: — Քրիստոսէ առաջ, հին ժամանակներն, առաջին աղօրիններն եզան ձեռնաղացները (moulin à bras): Եզիպտոսի, Պաղեստինի ու մինչև անգամ Յունաստանի մէջ այս աշխատութիւններն ազգկանց կատարել կուտային: Յրանաայի մէջ, Գլօպիտի որդւոյն ժամանակ, Սրբուհին Ռատէկօնտ՝ մեծ պահին ուտելիք ամբողջ ցորենն իր ձեռքով կ'աղար: — Ջրաղացներու գիւտն ալ Պոնտոսի արքային՝ Եւպատորի կը վերագրուի 123—63 թուին (Ն. Ք.): Սա ստոյգ է որ ջրաղացքն անոր օրով գոյութիւն ունէր, ինչպէս յիշուած է Անտիպատրոս Թեսաղոնիկեցիին մէկ գողարիկ ոտանաւորին մէջ: Իսկ Հռովմայեցիք կատարելագործեցին զայն: Ըսել է՝ Ջրաղացքը 22 դարու հնութիւնն ունի:

ԱՅՍՕՐ-ԴԱՍ (*)

« Այսօր դասը հրեշտակաց ուրախանան ընդ ճգնութիւն սրբոն Ստեփանոսի Կաթողիկոսին Քանգի գոչէ եկեղեցի քո Քրիստոս զյաղժանակ մարտ հեղման արեան
« տրա ի վերայ մեծի անուան յոյ, Տէր, Բագուս համարձակութիւն է տրա առաքի
« Աստուծոյ 'ի ձեռն հեղման աւեր արեան իւրոյ: Քանգի յօտարութեամբ մատնեաց
« զանձն իւր չարաչար և դառն տանջանաց վան մեծի անուան Տեառն: Քանգի սր-
« համարնելով անարեաց զանցաւոր զկեանս աշխարհիս և փոխացեաց յախտնական
« կենացն և միշտ և հանապազ ուրախանայ ընդ Տեառն իւրոյ յանպառ յուրախութիւն-
« սըն . . . Եւ յորժամ շարժին երկինք և երկիր 'ի յանէ փառաց քանին Տեառն Աս-
« տուծոյ, յայնժամ նստեցուցանէ ընդ աջմէ իւրմէ զօրհրկիս անուան իւրոյ ի լուսեղէն
« խօ, անն զուգաւորելով »:

Ահա բնագիրն Այսօր-Պատի, ուրկէ կրնանք մակարերել թէ առջ
մի՛ միայն Ս. Ստեփանոսի համար խմբագրուած է, բայց հայ Եկե-
ղեցին ուրիշ մէկ քանի սուրբերու համար ալ որոշած է երգել և
այս առթիւ տարւոյն մէջ 9 անգամ Այսօր-Պատի կ'ըստի, ինչպէս՝
Գրիգոր Լուսաւորչի 3 տօներուն, 4 աւագ տօներուն, 1 Սան-
դուխտ կոյսին, 1 Ս. Ս. Թաղէոս և Բարթողիմէոս առաքեալ-
ներուն: Իսկ Յովնանէս Կարապետի Ծննդեան տօնին ալ թէեւ
ոմանք կ'երգեն «Այսօր դաս», սակայն տօնացոյցին մէջ նշա-
նակուած չէ: Մեր համայնքն առաջուց ի վեր տաք վերաբերում
մը ունեցած է հանդէպ «Այսօր-Պատի»ի, որուն երգուած օրերը մեծ
բազմութեամբ արք և կանայք լապտեր ի ձեռին կը դիմեն եկեղեցի-
արչալոյսէն շատ առաջ, աղօթելու և մանաւանդ ունկնդրելու հա-
մար դպիրներէն եղանակուած տոյն հոգեցունց և դաշնալուր տաղ-
երգութիւնը՝ զոր խմբագրած են անշուշտ մեր թարգմանիչ վար-
դապետներն. ըստ այնմ թէ, երբ ապաշխարող և իր չարութենէն
դարձող մեղաւորի համար հրեշտակներ երկինքի մէջ կ'ուրախանան
(Լուկոս ԺԵ. 7), հապա ս'ըլափ շատ պիտի հրճուին՝ եթէ Ս. Ստե-
փանոսի նման անձնուրաց սուրբեր Քրիստոսի սիրուն վկայուին,
որոնց օրինակին հետեւելով շատ մարդիկ ալ կ'ընդունին քրիստոնէ-
ական հաւատքը, լեցունելու համար զտեղի անկեղծ հրեշտակաց,
ինչպէս կ'երգէ Շարականը:

ԳՐ. ՊԱՍՏԱՆԱՆ
(Կրօնուսոյց)

Իւսկիւսար, 14 Ապրիլ 1907

(*) Նախավկայ եւ նախաստեղծագ Ստեփանոսի եւ մամ սուրբերու տօնախմբութիւնները
Շահակոյ եկեղեց. բառ, որ սղուած ու գոյականցած է՝ այդ օրերուն երգող շարականին
սկիզբի «Այսօր Պատ» հրեշտակաց հասուածէն, ինչպէս Աստուծոյ բար պայսմ աւուրտէն:
ԲԱՌԳԻՐԲԷՍ

ԱՌԱՅ. — Հարգելի հիշելի և սիրելի:

ՄԵՂՐԻ ԱՐՏԱԳՐՈՒԹԻՒՆ. — Գերմանիա եւրոպական երկիրներու շարքին մէջ առաջին տեղը կը գրաւէ մեղրի արտադրութեան մասին՝ իր 1,910,000 մեղուափեթակներով, որոնք 20,000 թօնօ մեղր կը հայթայթեն: Յետոյ կուգայ Սպանիան իր 1,690,000 փեթակներով և 19,000 թօնօ մեղրով: Ասկէ վերջը կուգայ Աւստրիա-Հունգարիա իր 1,550,000 փեթակներով և 18,000 թօնօ մեղրով: Եւրոպական միւս երկիրներն ասոնցմէ շատ ետ մնացած են: Ֆրանսա կ'արտադրէ 10,000 թօնօ, Հոլանտա 2,500, Պելճիքա 2,000, Յունաստան 1,400, իսկ Ռուսիա և Տանիմարքա 900 ական թօնօ: Այս վիճակագրութիւններուն մէջ, կլիմայական պայմաններու ազդեցութիւնը դիտելի պարագայ մըն է, մանաւանդ եթէ բազմատեսնք Ռուսիան՝ Յունաստանի հետ: Այս վերջինը մի միայն 30,000 փեթակ ունի ու կ'արտադրէ 1,400 թօնօ մեղր, մինչ առաջինն իր 110,000 փեթակներով՝ 900 թօնօ միայն:

ՀԱԻԿԻԹԻՆ ԹԱՐՄՈՒԹԵԱՆԵԼ մասին ապահով ըլլալու համար՝ առաջին միջոցն է հետեւեալը: Ձեր լեզուին զբոսցոցէք անոր ծայրերէն մին. եթէ թարմ է՝ գովութեան հաճելի զգայնութիւն մը պիտի ունենաք, մինչ ընդհակառակն եթէ թարմ չէ՝ գաղջութիւն մը պիտի զգաք: Ասկէ զատ, թարմ հաւկիթին ծայրերը (քիթն ու յատակն) աւելի թափանցիկ են քան թէ մէջտեղը: Թարմ չեղող հաւկիթին կճեպն ապակեփայլ, թափանցիկ ու կակուզ կ'ըլլայ՝ շօշափած ասեմնիս, մինչդեռ թարմինը կարծես թէ կրի խաւով մը ծածկուած է: Խիստ թարմ հաւկիթի մը կճեպն եռացած ջուրէն դուրս ելլալուն պէս կը չորնայ վայրկեանական կերպով:

ԱՔԱՑԻ ՀԱՐՈՒԱԾ. — Առէք չուան մը ու մէկ ճոթը կապեցէք ձիուն քիթին վրայէն անցնող լկամին, իսկ մէկալ ճոթը՝ ճախան (paturon) ին, փոկի մը վրայ հաստատուած օղակներու մէջէն անցունելով: [Ճախանը՝ ձիուն ամբակին և ոտնակոճին (թօբուք) մէջտեղի ներս քաշուած մասն է]: Կենդանին կից տալ ս'ըզելուն պէս ուժգին հարուած մը կ'ընդունի քիթին վրայ, ու երբ քանի մը փորձ ընելէ վերջ, միեւնոյն արդիւնքը յառաջ գայ անփոփոխ կերպով, կ'ստիպուի հրաժարիլ իր այդ յոռի սովորութենէն:

ՔԻՄՔԻ ՀԱՄԵՐ. — Եթէ մրտենի-յատմիկ (Ֆուլի պահար) ծաղիկին տերեւը ծամէք, վարունքի համ պիտի առնէք: 2. Եթէ եփուած սուրճի դաւաթնուղ մէջ քանի մը կաթիլ քօնեաք դնէք՝ քաքաօ խմածի չափ կ'ըլլաք: 3. Եթէ ուռզէք կարմիր ձկնկիթը ձէթով ու լեմոնի ջուրով և պատառաքաղով ա՛յնչափ շատ ճգմէք որ խիւսը ձերմըկի ու ձկնկիթին հաւկիթներն ազէկ մը հարին՝ խաշած ուղեղի աղցան ճաշակելու պատրանքը կ'ունենաք:

ԿԻՐԱԿԻ. -վ. **27** Յուլիս—Թէմնուզ. Ն. Տ. 9 Օգոստոս շձՐ. 12 Բէճէպ:
 ✽ **ՀՅ.** և **Կ. ՀՅ.** Բ. Կիրակի Վարդավառէն վերջ: **ՅՆ.** Ս. Պանդպէտն բժշկի
ԼՏ. Ս. Ռոմանոս վկայ ԱՆԳԻՈՅ Թագաւորին Թագադրութիւնը:

ԵՐԼՈՒՇՐ. քչ. **28** Յուլիս—Թէմնուզ. Ն. Տ. 10 Օգոստոս շձՐ. 13 Բէճէպ:
ՀՅ. և **Կ. ՀՅ.** Ս. Ս. Կիպրիանոս եպիսկոպոս և բառասունը հինգ վկաներ, և
 Յուսիանէ, Եւսիմէ ու Գրիստիէ կոյսեր: **ՅՆ.** Ս. Ս. Պրոխորոն, Նիկանովր,
 Տիմոն և Պարմենաս տարկաւացներ: **ԼՏ.** Ս. Լաւրենտիոս տարկաւաց վկայ:

ԵՐԵՒՇՐ. քի. **29** Յուլիս—Թէմնուզ. Ն. Տ. 11 Օգոստոս շձՐ. 14 Բէճէպ:
ՀՅ. Ս. Ս. Աթանոսինէ եպիսկոպոս, տասն աշակերտներ և հինգ վկաներ: **Կ. ՀՅ.**
 Ս. Ս. Աղամ, Արէլ, Ութ, Ենովս, Ենովր, Նոյ, Մելքիսեղեկ, Արրահամ, Իսա-
 հակ, Յակովր, Յովսէփ, Մովսէս, Ահարոն, Եղիազար, Յեսու, Սամուէլ, և ուրիշ
 նախահայրեր: **ՅՆ.** Ս. Ս. Կալինիկոս և Թէոդոտոս վկաներ: **ԼՏ.** Ս. Փիլոմենէ
 կոյս վկայուհի:

ԶՈՐԲՇՐ. քչ. **30** Յուլիս—Թէմնուզ. Ն. Տ. 12 Օգոստոս շձՐ. 15 Բէճէպ:
ՀՅ. և **Կ. ՀՅ.** Պահր: **ՅՆ.** Ս. Շիղա աւարեալ: **ԼՏ.** Ս. Կլարա Ասիզացի
 արքայուհի:

ՀԻՆԳՇՐ. քի. **31** Յուլիս—Թէմնուզ. Ն. Տ. 13 Օգոստոս շձՐ. 16 Բէճէպ:
ՀՅ. Ս. Ս. Աղամ, Արէլ, Սեթ, Ենովս, Ենովր, Նոյ, Մելքիսեղեկ, Արրահամ,
 Իսահակ, Յակովր, Յովսէփ, Մովսէս, Ահարոն, Եղիազար, Յեսու, Սամուէլ, Սամի-
 սոն, Յեփթայէ, Բարակ Գեղէոն և ուրիշ նախահայրեր: **Կ. ՀՅ.** Ս Սահակ և
 Յովսէփ վկաներ: **ՅՆ.** Ս. Աստուածածնի բարկենդանը: **ԼՏ.** Ս. Հոսղեզոնտոս
 Ֆրանսայի Թագուհի:

ՈՒՐԱԿՐ. քչ. **1** Օգոստոս—Աղոսթոս Ն. Տ. 14 Օգոստոս շձՐ. 17 Բէճէպ:
ՀՅ. և **Կ. ՀՅ.** Պահր: **ՅՆ.** Ս. Աստուածածնի պահրին սկիզբը: **ԼՏ.** Ս. Եւ-
 սերիոս եպիսկոպոս:

ՇԱՐԱԿՐ. քի. **2** Օգոստոս—Աղոսթոս Ն. Տ. 15 Օգոստոս շձՐ. 18 Բէճէպ:
ՀՅ. Ս. Ս. Արիտակէս, Վրժանէս, Յուսիկ, Գրիգորիս և Դանիէլ Ս. Գրիգոր
 Լուսաւորչի զաւակներն ու թոռները: **Կ. ՀՅ.** Ս. Ս. Ովսէէ, Անովս, Միքիա,
 Յովէլ, Արդիաս, Նաւուս, Ամրակուս, Յովնան, Սոփոնիա, Անզէոս, Զաբարիա և
 Մաղաքիա մարգարէներ: **ՅՆ.** Ս. Ստեփանոսի նշխարներուն գոնուիլը: **ԼՏ.** Ս. Ս.
 Աստուածածնի վերափոխումը:

ՅՈՒՇԱՏԵՏՐ

27 Յուլիս Կիր. [209—157] կէս օր. 4. 48.....

28 Յուլիս Բշ. [210—156] կէս օր. 4. 50.....

29 Յուլիս Գշ. [211—155] կէս օր. 4. 51.....

30 Յուլիս Դշ. [212—154] կէս օր. 4. 52.....

31 Յուլիս Եշ. [213—153] կէս օր. 4. 53.....

1 Օգոստ. Ուր. [214—152] կէս օր. 4. 55.....

2 Օգոստ. Շր. [215—151] կէս օր. 4. 56.....

Ա. ԴԱՄԱՆԴԻ ՄԸ ՈՂԻՍԱԿԱՆԸ

Տարեցոյցիս 146 էջին մէջ խօսեցանք աշխարհի տասը հոչակաւոր աղամանդներուն վրայ, որոնցմէ — կշիռի և արժէքի կարգով — ետքինը կուգար «Սանսի» կոչուածը: Պատմանք հոս՝ ներկայիս մէջ երկու միլիոն ֆրանք արժողութիւն ունեցող այդ քարին սկիզբէն ի վեր գլխուն եկածները:

* * * Սննէ աղամանդը «Ռէժան»ին և «Օռլօֆ»ին պէս ընդիկ հնդկաստանցի է: Ծառ լը Թէմէոէո որ պատուական ականց շատ սիրահար էր՝ ծախու առաւ դայն ու իր վրայ կրեց, երբ Նանսիի ճակատամարտը կը մղուէր: Հոն էր որ ինք ինկաւ, ու զուգեցրիացի զինուոր մը շորթելով անոր վրայէն թանկագին քարը՝ կրօնաւորի մը ծախսեց 20 սուի (իրը 5 զրշ.): Անհուն էր կրօնաւորին զգացած հրճուանքն, երբ իտալացի վաճառական մը դայն մէկ սկուզ(իրը 20 զրշ.)ի գնեց իրմէ: Տասնը հինգ զրուշ շահեր էր երանելին, աչի՞նչ կ'ուզէր: Աղամանդն այսպէս ձեռքէ ձեռք անցնելով հասաւ Բօրթոկալի վեհապետին՝ որ 100,000 ֆրանքի վաճառեց Հանրի Գ.ի ելեւմտից տեսուչն եղող Հաուլէ տը Սանսի անուն ազնուակաւնին: Աղամանդին տէր ըլլալ բազմաց Հանրի Գ., ուստի դայն իրեն խրկելու համար լուր ըրաւ Սանսիի՝ որ ան ատեն Զուրցերիա կը գտնուէր: Սանսի իր վստահելի մէկ ծառան ճամբայ հանեց՝ թանկագին քարն անոր յանձնելով: Ծառան ժիւռա լեռան անտառէն անցած պահուն գողերու յարձակում մը կրեց. առիւծի պէս կռուեցաւ թէ և, բայց անոնք տասը հոգի ըլլալով՝ ընկճեցին զինքը. յետոյ փողտոնցին, կողոպտեցին ու վախան: Ի՞նչ, ատանկ մեծարժէք աւանդի մը յափշտակումին ատեն՝ իր քաջարի ու մտացի ծառան թոյլ և անշրջահայեաց վարուած ըլլաւ: Սանսի այս բանին հաս խելք չի կրցաւ պառկեցունել: Երկար խորհելէ ետք, յոյս մը կայծկելլտաց գտնկին մէջ և խկոյն դիազննութեան ենթարկեց յօշոտուած ծառան: Ու մեծ եղաւ ամէնուն զարմանքն, երբ տարաբախտ մարդուն իրանը կտրատուած միջոցին՝ անոր ստամոքսին մէջ պահուրտած գտան հրաշալի քարը: Աւագակներուն դիմաց իր անխուսափելի մահը կանխատեսելով՝ հաւատարիմ ծառան խերով սեպեր էր քան թէ անոնց յանձնել նուիրական աւանդը . . . :

ՍՈՒՐԲ կոչուած են հին դարերու մէջ ասորոյ այն հազուադիւտ անձերն՝ որոնք նուիրուած էին սոսկ աստուածային պաշտամանց, և իրենց մաքրենի բարքովն ու առաքինի ընթացքովը զանազանուած՝ հասարակ մահկանացուներէ։ Իրենք միշտ դէպ ի կատարելութիւն ձգտեցան և անցուցած կենցաղնին կէտ առ կէտ համաձայն մնաց Աստուծոյ պատուիրաններուն։ Պատիւի այս շնաշխարհիկ տիտղոսը ստացան մանաւանդ անոնք որ յանուն քրիստոնէական սկզբունքներու՝ խոշտանգոււմ կրեցին և իրենց կեանքը վկայութեամբ կնքեցին, դառնալով յաւէտ սիրելի ծառաները Տիրոջ։ Ամէն Եկեղեցի ճանչցաւ զիրենք իբրև խնկելի անձնաւորութիւններ և անոնց յիշատակութիւնը մշտատե պահեց։ Մեծ է ժողովուրդին հաւատքն այս սուրբերուն նկատմամբ, որոնց բարեխօսութեանը կ'ապաւինի իսկոյն՝ որ և է խնդիրը կամ ազաջանք լսելի ընել տալու համար Աստուծոյ։ Հարիւրաւորներու մէջէն՝ — որոնց կեանքը կ'ամփոփէ «Վարք Սրբոց»ը, — բարեպաշտ Ռամիկը կը ճանչնայ, կը պաշտէ և գերադաս կը համարէ զանոնք մանաւանդ՝ որոնց մէյմէկ ուրոյն կարողութիւն յատկացուցած է, և որոնց պահքը բռնելով՝ վստահ կ'ըլլայ թէ իր ակնկալութիւնները պիտի պսակուին ընդ հուպ։ Յիշենք մէկ քանին՝ իրենց առանձնայատուկ կարողութիւններովը։

Ս. Յօնք. զառի պահապան։ Ս. Գեորգ. նեղը մնացողներու և յղիներու։ Ս. Լոստոսորէ. թշուառներու։ Ս. Մէնա. կորուստ մը գանող սուրբը ճանչցուած։ Ս. Նիկողոս. ծովով ճամբորդողներու պաշտպան։ Ս. Սարգիս. նշանուողներու և սիրահարներու։ Ս. Սրեֆօն. դպրաց դասուն։ Ս. Կոյ Մարէամ. երկունքի մէջ գանուողներու, եւայլն։

Այս սուրբերուն տօնախմբութեանցը շարթըններուն, բաց ի պահքէ և նոյն իսկ ծումապահութենէ, սովորութիւն է ժամ վազել և մտադրուած սուրբին պատկերին առաջքը յատուկ մոմ վառելով աղօթել. պարտականութիւնն զոր կարելի է ուրիշ առթիւ ալ կատարել, զոր օրինակ անկողինի ծառայողի մը բժշկուելէն անմիջապէս ետքը։ «Հաւատք քո կեցուցին զքեզ»։

ԲԱՌԳԻՐԲԷՍ

Ինչո՞ւ ձախ ձեռքերնիս մեր աջին հաւասար չի զարդանայ : Այս հարցով զբազող բժիշկներ հաստատած են որ զոյգ ձեռքին՝ մի՛ևեւոյն գործին հաւասարապէս աշխատելէն յառաջ կուգան շատ գոհացուցիչ արդիւնքներ ընդհանուր առողջութեան տեսակէտով : Միշտ աջ ձեռքով կատարուող մեքենական շատ մը աշխատանքներ ձախո՞վ ալ կրնային կատարուիլ, որով աշխատանքն երկու ձեռքերու վրայ համաչափ բաժնուելովը՝ նախ ֆիզիքապէս կազդուրիչ կը դառնար, յետոյ քանակութեան տեսակէտով ալ՝ առատ : Այս բանին վարժութիւն ունեցող մը պէտք չը պիտի զգար հանգիստի համար կանգ առնելու, ինչու որ ձեռքին մէկը յողնելուն պէս՝ միւսը պիտի գործածէր : Գերմանիոյ մեքենագիտութեան զբոսորդներուն մէջ պարտաւորիչ դարձած են հիմայ ձախ ձեռքի աշխատութիւններն, աշակերտը հոն կը սորվի սղոցել, տաշել ու կռել փոխն ի փոխ աջ ու ձախ ձեռքով : Արուեստագէտներու համար ալ երկու ձեռքի գործածութիւնն անսովոր կատարելութիւն մը չէ : Մէնցէլ և Բլիմշ գերման նշանաւոր նկարիչները կրնան յիշատակուիլ, իրրև տիպար՝ երկձեռնի յաշողակութեան, ասոնք իրենց աջոյն ու ձախովն անխտիր ցոյց տուած են վրձինին հրաշալիքը կտաւին վրայ : Ճարտնչիք իրենց տղոց կանուխէն կը սորվեցունեն երկու ձեռքով գրել ու գծել, այս մէթոսին է որ շատեր կը վերագրեն ճարտնական արուեստին ինչ ինչ կէտերու մէջ ունեցած գերակայութիւնը : Զոյգ ձեռքով հաւասարապէս գրելու, գծելու ելն, արուեստը պէտք է մշակուի և սորվուի ամէնքէն : Աջ ձեռքին պզտիկ արկած մը պատահելուն՝ մարդ անկարող կ'ըլլայ աշխատիլ, հասցա եթէ ձախին վարժութիւնն ալ ունենա՞ր : Թեթև փորձերը հրաշալիքներ պիտի արտադրեն, ձեր ձախով այր բնն զխմ գրեցէ՛ք ամիսի մը չափ, որը սանկ 4—5 անգամ, ձեր ստացած յաջողութեանը վրայ իրաւոր դո՛ւք ալ պիտի սքանչանաք՝ սկզբնական փորձերու ճանկալող զբաւարժութենէն անցնելով սահուն գեղագրութեան մը : Տեսած էք անշուշտ անձեր՝ որոնք իրենց ձախ ձեռքո՞վը միայն կը գրեն, կը բանին, կը ճաշեն կամ ցուպերնին կը բռնեն : Միայն իրենց ձախը գործածողները խոտելի են արդարև, և արժանի՛ իրենց «ձախիկ» կոչումին, — այս բառին երկու իմաստոյն ալ :

ՀԱՒԱՏՔԻ ՅՈՒՔԵՐ

* Եթէ մանանեիւի հատիկի՛ մը չտի մարդ հաւատք ունենար, պիտի կրնար հրամայել լեռներուն որ ծով նետուն, և անոնք պիտի հնազանդէին:

ՅԻՍՈՒՍ

* Այն օրն՝ ուր սիրող խոյանայ դէպ ի Սաեղծողը, դէպ ի լոյսը, հաւատքը փորագրուած պիտի զգաս սիրտիդ վրայ՝ բոցեղէն տառերով:

ՍՐԲԱԶԱՆ ՄԱՏԵԱՆ

* Ծջմարիտ հաւատքն աղբիւրն է քրիստոնէական կեանքի: Զայն պահելով է որ կը յաղթէ մարդ սատանաներուն, ու կ'ընդունի արգարութեան պսակը:

ՏԻՄՈԹէՆՈՍ (Բ. ԹՈՒՂԹ)

* Հաւատքը մեր ակնկալութեանց նեցուկն է, և ապացուցումը՝ չի տեսնուած բաներու:

Ս. ՊՕՂՈՍ

* Հաւատքն այն վստահութիւնն ու դաւանանքն է թէ կրօնքի մը կողմէ ներկայացուած եղբութիւններն ու պատուէրները ճշմարիտ են և կուգան Աստուծմէ:

ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԻՒՆ

* Հաւատքն Աստուծոյ գիտակցութիւնն է:

ԲԱՍԲԱԼ

* Հաւատքը հօգին լուսաւորող ջանն է:

Բ. Ա.

* Այն հաւատքն որ չ'ազգեր, անկեղծ հաւատք մըն է միթէ:

ՌԱՍԻՆ

* Եթէ Աստուած գործքերէ դատէ հաւատքն, ինքզինքնուս վրայ համարում ունենալիս երեւան պիտի դար, չէ՛ թէ բարերար ըլլալ նիս:

Ժ. Ժ. ՌՈՒՍՍՕ

* Հաւատքը յարգանքն է անիմանալի բաներու մասին, շնորհիւ այն վստահութեան՝ զոր մարդ կ'ունենայ ատ անիմանալի բաները սորվեցունողներուն վրայ:

ՎՕԼԹէՌ

* Մինչև որ հաւատքը չի նուաճէ բանականութիւնը, մեր կեանքը պիտի անցունենք հաւատալով ու չի հաւատալով:

Ս. ԵՓՐԵՄ

* Կրօնքն անհրաժեշտ է մարդուս երջանկութեան. և բանականութեան յոխորտանքը չէ՛ որ զայն կը հիմնէ, կը համբաւէ և կը պահէ անվթար, հապա հաւատքը:

ՇՆԻՑ

* Մարդս երբեք ամբողջովին դժբախտ չը պիտի ըլլար, եթէ հաւատք ունենար:

ՊՈՒԱՍԹ

ՀԱՅԵԼԻՆ ՈՒ ԿԻՆԵՐԸ

Իրաւցունէ՛ եզական վիճակագրութիւն մը յաջողեր է ընել գերմանացի մը, թէ կիներն իրենց 6 տարեկանէն մինչև 60 տարեկան հասակն՝ ո՞րչափ ատեն կ'անցունեն հայելիին առջև: — Ահա ափիկ թիւեր որոնք շատ բան կը խօսին կանացի գեղեցկասիրութեան և արդուզարդին վրայօք: — Վեցէն 10 տարու ազջընակ մը հայիին առջև կը մնայ օրը — միջին հաշիւով — 7 վայրկեան, 10էն 15 տարու պարմանուհին՝ մէկ քառորդ, 15էն 20 տարու մանկամարդուհին՝ 22 վայրկեան, 25էն 30 տարու կին մը՝ օրը կէս ժամ, 30էն 35՝ կը մնայ 24 վայրկեան, 35էն 40՝ 18 վայրկեան, 40էն 50՝ 12 վայրկեան, վերջապէս 50էն 60՝ վեց վայրկեանի չափ: — Համադումար կ'ունենանք հետեւեալ պատկառելի թուանշաններն որոնք ցոյց կուտան կնոջ մը կեանքին՝ մի'միայն հայիին առաջքն անցուցած ամբողջական տեւողութիւնն, այն է 349,575 վայրկեան, կամ, 5,826 ժամ, և կամ, 243 օրէն աւելի: Ո՛ւր էր թէ հայելիները լեզու ունենային և յայտնէին կնոջական կենցաղէն դեռ ուրիշ շատ մը ճշմարտապէս բարացուցիկ դրուագներ ալ:

ԲՈՅՐԵՐ ՈՒ ՃԱՇԱԿՆԵՐ

Ամէն կին իր նախասիրած բոլոր կ'ունենայ, նոր և արտասովոր բոյրերու համար վճարուած զբամներն ահագին են: Անգլիոյ թագուհիին սիրած բոյրն է «քէօռ տը ժանէթ»ն՝ որուն քառորդ լիտրը 6 սթէռլին կ'արժէ: Զարուհին ամէն հոտերէ աւելի նախապատուութիւն կուտայ «Բառմա վիօլէթ»ին՝ ուրկէ մասնաւոր պատրաստութիւն մը կ'ըլլայ իրեն համար: Գերմանիոյ կայսրուհին կը նախընտրէ «Նիու մաուն հէյ»ը միւս բոլոր հոտերէն, («Նիու մաուն հէյ» անգլ. կը նշանակէ նոր հնձուած խոտ), մինչ Հոլանտայի Վիլհէլմին թագուհիին սիրածը հին օրէնքի՝ բայց ընտիր զովացուցիչ քրոնիական ջուրն է: Սակայն բուրումնաւէտութեանց այնքան սէր չի տալը և կամ անոնց գործածութիւնը չափաւորելը լաւագոյն բանն է ո՛չ թէ ըստ իս, այլ ըստ բժշկութեան: Հոտաւէտ ցփիներու սաստիկ սիրահար մը ամէն բանէ առաջ շուտով կը բթացունէ իր հոտոտելիքին զգայնութիւնը:

ԱՌԱՅՐ. — Ա՛յն Դէլ անչիւ ե, Կոն՝ արեւ:

ԿԻՐԱԿԻ. -չ. **3** Օգոստոս—Աղոսթոս Ն. Տ. 16 Օգոստոս ՆձՐ. 19 Բէճէպ:
 ✱ **ՀՅ.** և **Կ. ՀՅ.** Գ. կիրակի վարդապետէն յետոյ, **ՅՆ.** Ս.Ս. Իսահակ և Տաղմա-
 տիոս խոստովանողներ, **ԼՏ.** Ս. Սուրբոս խոստովանող, ժանտացաւի դէմ պաշտպան:

ԵՐԼՈՒՇԵՐ. -չ. **4** Օգոստոս—Աղոսթոս Ն. Տ. 17 Օգոստոս ՆձՐ. 20 Բէճէպ:
ՀՅ. Ս. Ս. Մակարայեցիներ որոնք են Եղիազար քահանայ և Շամունէ այրի և իր
 եօթը զաւակները: **Հարսնիք:** **Կ. ՀՅ.** Ս. Ս. Աթանազիոնէ եպիսկոպոս տասն
 աշակերաներով և հինգ ընկերներով. Անտոնինոս, Թէոփիլոս, Անիկոստ և Փո-
 տինոս վկաներ: **ՅՆ.** Ս. Ս. Եօթը մանուկ վկաներ Եփեսոսի: **ԼՏ.** Ս. Մամաս
 վկայ:

ԵՐԼՈՒՇԵՐ. Բչ. **5** Օգոստոս—Աղոսթոս Ն. Տ. 18 Օգոստոս ՆձՐ. 21 Բէճէպ:
ՀՅ. Ս. Ս. Ովսէէ, Անովս, Միքիա, Յովէլ, Արդիաս, Յովիան, Նաւուս, Ամբա-
 կում, Սոփոնիա, Անգէոս, Զարարիա և Մաղաքիա՝ տասերկու փոքր մարգարէներ:
Կ. ՀՅ. Ս. Ս. Մակարայեցիներ որոնք են Եղիազար քահանայ և Շամունէ այրի և
 իր եօթը զաւակները: **ՅՆ.** Ս. Եւսիգնիոս վկայ: **ԼՏ.** Ս. Հեղինէ դշխոյ՝ Կոս-
 տանդիանոսի մայրը: ԱԽՍՐԻՈՅ Կայսեր ծնունդը:

ԶՈՐԻՇԵՐ. Բչ. **6** Օգոստոս—Աղոսթոս Ն. Տ. 19 Օգոստոս ՆձՐ. 23 Բէճէպ:
ՀՅ. և **Կ. ՀՅ.** Պահք: **ՅՆ.** Բրիտտոսի Այլակերպութիւնը: **ԼՏ.** Ս. Դոնատոս
 եպիսկոպոս: ՏՈՄ. Նաւասարդի առաջին օր կամ ամանոր: Հայոց բուն շարժա-
 կան Թուականին ՏՆԱ.—4401 տարեմուտը:

ՀԻՆԳՇԵՐ. Բչ. **7** Օգոստոս—Աղոսթոս Ն. Տ. 20 Օգոստոս ՆձՐ. 23 Բէճէպ:
ՀՅ. Ս. Ս. Սոփիա և իր երեք աղջիկները՝ Պիատիա, Ելպիա և Ազապի: **Կ. ՀՅ.**
 Ս. Ս. Սոփիա և իր երեք աղջիկները՝ Պիատիա, Ելպիա և Ազապի. Բրիտտափոք
 վկայ, և Կայինիկէ և Ակիւլինէ՝ վկայուհիներ: **ՅՆ.** Ս. Դոմեթիոս վկայ: **ԼՏ.**
 Ս. Յովակիմ Աստուածածնի հայրը:

ՈՒՐԲԱԹ. Գչ. **8** Օգոստոս—Աղոսթոս Ն. Տ. 21 Օգոստոս ՆձՐ. 24 Բէճէպ:
ՀՅ. և **Կ. ՀՅ.** Պահք: **ՅՆ.** Ս. Եմելյաննոս Կիլիկոնի եպիսկոպոս: **ԼՏ.** Ս.
 Բեռնարդոս արքայ:

ՇԱՐԱՔ. Դչ. **9** Օգոստոս—Աղոսթոս Ն. Տ. 22 Օգոստոս ՆձՐ. 25 Բէճէպ:
ՀՅ. և **Կ. ՀՅ.** Ս. Ժողով Եփեսոսի, երկու հարիւր հայրապետներով: **ՅՆ.** Ս.
 Մատամիա առաքել: **ԼՏ.** Ս. Տիմոթէոս և ընկեր վկաներ:

ՅՈՒՇԱՏԵՏՐ

3 Օգոստ. Կիր. [216—150] կէս օր. 4. 58

4 Օգոստ. Բշ. [217—149] կէս օր. 4. 59

5 Օգոստ. Գշ. [218—148] կէս օր. 5. 01

6 Օգոստ. Դշ. [219—147] կէս օր. 5. 02

7 Օգոստ. Եշ. [220—146] կէս օր. 5. 03

8 Օգոստ. Ուր. [221—145] կէս օր. 5. 05

9 Օգոստ. Շր. [222—144] կէս օր. 5. 06

Այն նշանաւոր երգահաններուն մէջ՝ որոնք ֆրնս. հանճարը պանծացուցին ու կրցան տիեզերական դարձունել անունին, Պէռլիօզ ստուգիւ իր ուրոյն տեղն ունի Սակայն և այնպէս շատ մը արուեստագէտներու պէս, իր փառքին պատկն ալ մահէն ետքն էր որ բոլորուեցաւ իր նակտին շուրջ, որովհետև ժամանակակիցները նուա՛զ հասկըցան անոր գործերը՝ զորս յաճախ սուլումներով ողջունեցին, — Ընամ է ասկէ 105 տարի առաջ Գոթ-Սէն-Անտուէի մէջ Բժիշկ էր հայրն, որուն ասպարէզին թէև ինք սահմանուած՝ բայց տղայ հասակէն սկսած էր յօրինել սիրուն «բուսան»ներ ու «Սէքս-Քիւօս»ներ, Զանոնք հրատարակելու համար տպագրիչներու դիմեց՝ որոնցմէ մերժում տեսաւ միշտ 18 տարու՝ Բարիզ եկաւ իրր բժշկ. ուսանող, սակայն որոշումը փոխելով Երաժշտանոց մտաւ, Դպրուծեան ու Գեղարուեստի ոսկեղայն էր. կը փայլէին Հիւփօ, Լամառթին, Միւսէ, Պալգար, Տըլարուուս Վէպէո ու Պէճհովէն իրենց կարգին կ'երեւէին բարիզցիներուն Անզլ. դերասանախումբ մը Ա. անգամն ըլլալով Շէյքսպիրի գործերը կը ներկայացունէր. խումբին մէջէն՝ Ժիւլիէթի և Օֆէլիայի դերերը կատարող Միս Սմիթըն բանաստեղծական անա՛նկ դէմք մը և ձայնի անա՛նկ ցնցող շեշտ մը ունէր որ յանկուցին Պէռլիօզը, Եօմնամնայ սիրոյ չարչարանքէ մը վերջ՝ զեղանի դերասանուծին և պատանի երգահանն իրենց կեանքը կը միացունէին իրարու, Պէռլիօզ հետզհետէ արտադրեց «Սէնֆօնի ֆանթասթիք»ը, «Հաուլտ ան Իմպի»ն, «Ռէքիէմ»ը (մահաղօթք), «Սէնֆօնի ֆիւնէպոլը Ե Քոնֆալ Պ» ու «Պէնվէնուժօ Չէլլինի Պ» որ սուլուեցաւ Օրէոյի մէջ, Բականինի եղած անիրաւուծեանց դէմ բողոքելու համար 20 հազար ֆրանք նուիրեց անոր, և զայն յաջորդ հոչակեց Պէժ օմվէնի. նոյնը չէր ուշացած Լի՛տս ալ ընելու, Ասոնք չի կրցան փրկել Պէռլիօզը. հակառակ փայլուն սկզբնաւորութեան՝ հոմբան սկսաւ մժագնիլ, Եւ, անաւ՛ր տարօրինակութիւն, այն գործն որ պատճառ եղած էր իր դժբախտ կացութեան՝ կոշուած էր հոչակ տալ ապագային՝ իր անուան Յետոյ ներկայացուց «Տամասիօն տը Ֆօսթ»ը. ո՛չ որ դիտց. Այսպէս Պէռլիօզ ընկճուեցաւ և անշքացաւ ամէն կերպով, ուրիշ կ'սկսի այն դառնութիւնն՝ որով ազդուած են իր երկերը, 8 տարի չիջաւ հրատարակ. յետոյ նորէն երեւաց «Յս.ի մանկութիւնը» ով, «Թոուայէն»ով ու «Պէամթիս և Պէնէտիք»ով, Քիչ մընալ ապրեցաւ տխուր ու ցաւատանջ, և մեռաւ 69ին, — Ասկէ 5 տարի առաջ Կոլնօպլի մէջ երբ իր արձանը կանգնեցին, հակառակ եղանակն ամառ ըլլալուն՝ բացման օրն անուշի մրրիկ մը փրժաւ. ամէն որ հոսկրցաւ որ օդին բնահանողը խորհրդանիշն էր Պէռլիօզի նակատագրին, 90ական թուականին՝ ամառ կիրակի մը Դուրեանի Թ-բ-ը ներկայացուած օրը նո՛յն օդն ըրաւ զրէթէ. ու Պէրպիւրեանի յուղարկաւորութեան օրը՝ նո՛յն կատարի օրը նորէն, Անբախտներու նակատագիրը յետ մահու ալ կը տևէ կարծես:

ԱՆՄՐՅԵԼԻ ՀՈՏԱՌՈՒԹԻՒՆ. — Շանաճուկին հոտառութիւնն անհունապէս կը գերազանցէ շունինը: Անիկա երեք փարսախ (3 ժամուան տեղ) հեռուէն՝ ծովուն մէջ կ'զգայ գիակի մը գոյուժիւնն ու կ'երթայ ուտել զայն:

Եթէ ժ. Գ. դարուն անգլիացիի մը հարցուէր թէ իրենց ազգային ծաղիկն ի՞նչ էր, «Կենիստայ» (genêt, գաթըր չիչէի) պիտի պատասխանէր: Հէնրի Զ. ի ժամանակն էր որ Անգլիոյ ազգային ծաղիկը վարդն եղաւ: Իռլանտացիներուն «առուոյտ» (trèfle, եօնճա)ին պատմութիւնը շատ սիրուն է: Ս. Բաթրիք Թարայի մէջ քարոզ տուած ատեն՝ կը ջանար բացատրել Երրորդութեան խորհուրդը, և ժողովուրդն անկարող կ'երեւէր հասկընալու «Երրեակ անձինք 'ի մի» ի մեծ վարդապետութիւնը: Քարոզիչին նայուածքը վայրկեան մը ինկաւ առուոյտի մը վրայ որ լուսամուտէն ներս կախուած էր. քաղեց զայն և ունկնդիրներուն ցոյց տալով. «Չէ՞ք տեսներ, ըսաւ, ի՞նչպէս այս պարզ, վայրի ծաղիկին երեք տերեւները միացած են մէկ ցողունի վրայ»: Ժողովուրդին խելքը դիւրաւ պատկեցուց այդ օրինակն, ու նոյն օրուրնէ առուոյտն Իռլանտայի ազգային ծաղիկը մնաց: — Սկովտիացիներուն պաշտած ծաղիկն ալ «եկքան»ն է (chardon, տէ՛վէ տիքէնի). այս պաշտումին ծագումը հետաքրքրական է մանաւանդ պատմական տեսակէտով: Մալքոմ Ա. ի ատեն, Դանիացիք գլխերանց եկան Ապէստոնիայոյ հզերքը՝ Սթէլնսի մեծ ամրոցը պաշարելու համար: Կէս գիշերուն, բոկոսն վեր սողոսկեցան, որպէս զի բերդապահները չիմանային: Առաջին ջոկասն իջաւ փոս ուր ջուր չիկար և խորը գտնուած եկքաններու մացառուաքը ծակ ծակ ըրաւ անոնց ոտքերը. ցաւէն պոռացին ամէնքն ալ, պահապաններն ալ մուկէն արթննցան և ատրնկէցներ արձակելով ցիրուցան ըրին թըշնամին: — Ֆրանսա իրեն տոհմանշան (blason) ունի «Շուշանք»ը (fleurs-de-lis). — Ուրիշ երկիրներ թէև ծաղիկն իրր ազգային խորհրդանիշ ընդունած են, բայց իրենց տոհմանշանին մէջ ծաղիկ չունի գոյութիւն: — Գանատայի ազգային խորհրդանիշն է «դղքիի տերեւ»ը (maple leaf, սէնտէպան աղածը ետփրաղը) որուն հիանալի բոսոր գոյնն՝ աշնան՝ մղոններով տեղ կը բոցավառէ անտառաց մէջ: — Միացեալ Նահանգներունն ալ «ամրենի»ն է golden rod, կամ Solidago) որուն դեղին հասկերը կը բուսնին ամէն մացառուաքի մէջ: «Ոսկեծաղիկ»ն ալ (chrysanthème) ճարտի ազգային ծաղիկը ճանչցուած է: — Մպանիոյ ժողովուրդը շատ կը սիրէ «նուռի ծաղիկ»ն, որով օրիորդներ իրենց ամխազոյն մազերը կը զարդարեն: — Զուրիցերիացիներն էն դժուար քաղուող ծաղիկն, «անխառամ»ը (edelweiss). իսկ Յունաստան նախկին ժամանակներէ ի վեր յարած է «նարդէս» (narcisse գէրէն)ին, զոր մեր Եկեղեցի'ն ալ ընդունած է՝ 'ի շարս ամբուլի, ակնանի, կակաչի, վարդի, եղբուանիի և շահպրակի:

Ինչ աշխատատեղ միջատներ են սա մամուկները. պարագային համամատ՝ որը քանի մը անգամ իրենց ոտայնը կը հիւսնն, սուստազներէ, ճիւղերէ կախուելով ու մարմնամարզի շուտիկ փորձեր կատարելով, և վերջապէս իրենց տորգին մէջ կկզամ՝ սպասելով ճանճերու հաճելի այցելութեանը...: Իրենց ստուրները տեսքով վտիտ ըլլալուն՝ ժողովուրդը փոխարեքարար ոճ մը կերտած ունի երկայն ու նուրբ մարդկային մատուրներու մասին. «Մամուկ-մամուկ մատուրներ»։ Նաև, ժողովրդական լեզուի մէջ «մամուկ» բառը կը կիրարկուի աշխատութիւնը սիրող աղջկանց, բանուկ-տատուկ անձերու, ծառէ պատէ վեր շուրջը ճապուկ ու դիւրամեք աղոց։ Իսկ այն որ չարաչար աշխատելէ նիհարցած ըլլայ, «մամուկ դարձեր է» բանաձեւը կ'ըսուի իրեն։ Կը պատմուի թէ կեսուր մը իր ծոյլ հարսին՝ աշխատանքը սիրելի ընծայելու դիտումով, ոտայնանկող սարդ մը ցոյց կուտայ. հարսն անտարբեր՝ «հայրս մայրս բանել տասելէն ասանկ մամուկ եղան» ըսելով սոսկալ կը ձեւացունէ։ «Մամուկէն վախցող հարսը» հեղնական ոճն այս զրոյցէն ծագում առած է ահա։

ՐԱՌԻԻՐԻԲԷՍ

Մամուկը սակայն հակառակ իր ժողովրդական համբաւին՝ անպիտան միջատ մըն է ու մինչև ցարդ ծառայութիւն մը մատուցած չունի մեզ. իր շինած ոտայնը՝ զոր պատուելով ձեռքի ելն. կարբուածքի վրայ կը դնեն՝ արեան հոտուր դաղբեցուելու համար, խիտ վտանգաւոր է, վասն զի ոտայնին վրայ նստած փոշիներէն գոյացող միքրոպները կրնան նոյն իսկ մահառիթ դառնալ։ — Կ'երեւի թէ անոր ինչ ինչ տեսակները կրնան գործածուիլ մետաքս արտադրելու համար։ Արեւադարձի մամուկները տեղականներէն շատ աւելի խոշոր կ'ըլլան և գիմաղկուն թիւեր կ'արտադրեն։ Հնդկաստանի մէջ, Պ. Սթիլպէրս 1899ին կրցաւ վիրաբուժութեան յատկացուող հիւսուածք մը պատրաստել անոնցմէ։ Այս տեսակ տարաշխարհիկ սարդերու թիւերով կարելի է ստանալ ճարտարարուեստական արդիւնքներ այ։ Մատակասքար մամուկ մը կայ՝ զոր տեղացիները «Հալապ» կը կոչեն. անոր մէկ թիւը կրնայ 3 կրամ ծանրութիւն մը վերցունել առանց փրթելու։ Ռէօմիւս բնագէտը ժամանակին գիտութեանց ակադէմիային ներկայացուցած է զոյգ մը ձեռնոց՝ ատոր մետաքսովը հիւսուած։ Շատ տարի չընէր, Հայր Գամպուէ այս «Հալապ»ին վրայ փորձեր կատարելով, հաստատեց որ 100—150 մէթր թել կրնայ տալ ան 1 ժամուան մէջ։ Մետաքսն առնելու համար, գիպահով կը կեցունեն զինք — իբր սնունդ ճանճ տալով, — մինչ կարժառ մը իրմէ կը հանէ թիւերն՝ որոնց 8 հատը մէկ կը դնեն, հիւսքի յատուկ թելը կազմելու համար։

ԱՆԱՍՈՒՆԻ ԶԱՅՆ

Ուրիշ ամէն կենդանիներէն՝ ձին է որ է՛ն երաժշտական ձայնն ունի. իր խորինջիւնին մէջ կայ «կորճային ձայնարան» մը (gamme chromatique), առանց «կիսոյր» մը (demi-ton) վերցուելու: Էջն ալ, — ո՛րքան դարմանալի թուի աս, — երաժշտական ձայն մը ունի. զուարու պահուն կատարեալ «ութածայն»ներ (octave) կ'ընէ: Մեծանուն երգահան՝ Հայտըն դրականապէս ընդօրինակած է զայն իր 76րդ. գրքին մէջ: Շան հաշիւներ բնական ձայն մը չէ. ձայն մըն է զոր ստացած է տարիներու ընտանութեանը շրջանին. կը պնդեն թէ ատանկ ալ չը պիտի մնայ, և պզտիկ վերաբուժական գործողութեան մը շնորհիւ՝ շունը պիտի կարենայ խօսիլ: Բայց բոլոր կենդանիներէն՝ կապիկն է որ կ'արտադրէ երգ մը, բազդատելի՝ մարդկային երգին հետ: Ատիկա շիտակը նուա՛զ փայտայիջ հաստատում մըն է:

ՄԱՏՈՒՆԵՐ ՈՐՈՆՔ Կ'ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒՆ!

Բատէռէփսքի հոշակաւոր դաշնակահարը 800 սթէռլինէն աւելի կը վճարէ տարին՝ իրր ապահովագին: Եթէ մատուըներուն կամ թեւին փորճանք մը պատահի և անկարող ըլլայ դաշնակահարութեամբը շահիլ տարեկան եկամուտը, 10,000 սթէռլին պիտի ընդունի ապահովագրողներէն: Եւրոպա, մեծ երաժիշտներ նմանօրինակ ապահովագրութիւն կ'ընեն ներկայիս մէջ: Բիւպէլիք ք 300 կը վճարէ տարին, միայն իր աջ ձեռքին համար՝ որուն վնասուելովն եթէ արգիլուի յարգելէ յանձնառութիւն մը, ք 2000ի փոխարինութիւն մը պիտի ընդունի: Ատէլինա Բաթթի մէկ զիշերուան համար 25 ոսկի կը վճարէր, և եթէ ցրտառութեան կամ զիպուածի մը հետեւանքով չի կարենար զիշեր մը երգել՝ 10,000 կ'ընդունէր: Իր ձայնն ալ շատ մեծ գումարի մը փոխարէն ապահովագրուած է, ընդդէմ հաւանականութեան՝ որ մը զայն բոլորովին կորսնցունելուն: Ժողէֆ Հոֆմանի մատուըները մէկիկ մէկիկ ապահովագրուած են. վերջերս հեծելանիւէ մը իր անկումը 1000է աւելի ոսկիի նստաւ ապահովագրողներուն:

ԳԼԽԱՐԿԻՆ ՊԱՏՄԱԿԱՆԸ

Զուիցերիայիները չինեցին Գլխարկն առաջին անգամ, որ Բարիզ ներմուծուեցաւ 1404 թուականին, և Անգլիա՝ 1510ին:

ԿԻՐՍԿԻ. Դ՛. **10** Օգոստոս—Աղոսնոս Կ. Տ. 23 Օգոստոս: ՀձՐ. 26 Բէճէպ:
 ✕ **ՀՅ.** և **Կ. ՀՅ.** Դ. կիրակի Վարդավառէն յետոյ: Ս. Աստուածածնի պահքին
 բարկենդանը: **ՅՆ.** Ս. Լաւրենտիոս սարկաւազ վկայ: **ԼՏ.** Ս. Փիլիպպոս Պէ-
 նիցցի կրօնաւոր: **ՏՃ.** Պիւրծի Սիւմպիւլէ (կոյս):

ԵՐԵՈՒՇԵՐ. -Յ. **11** Օգոստոս—Աղոսնոս Կ. Տ. 24 Օգոստոս: ՀձՐ. 27 Բէճէպ:
ՀՅ. և **Կ. ՀՅ.** Աստուածածնի պահքին Ա. օրը: **ՅՆ.** Ս. Եփրոս սարկաւազ
 , վկայ: **ԼՏ.** Ս. Բարձողիմէոս առաքեալ: **ՏՃ.** Միրան կիճէսի ՅԱՅՍՄ. Նաւասարդ
 ամիս Հայոց անշարժ թուականին (Ռ-ՅԵՐ=1358) տարեմուտը:

ԵՐԵՒՇԵՐ. -Է. **12** Օգոստոս—Աղոսնոս Կ. Տ. 25 Օգոստոս: ՀձՐ. 28 Բէճէպ:
ՀՅ. և **Կ. ՀՅ.** Աստուածածնի պահքին Բ. օրը: **ՅՆ.** Ս. Ս. Փոտինոս և Անիկ-
 տոս վկաներ: **ԼՏ.** Ս. Լուդովիկոս Ֆրանսայի թագաւոր:

ԶՈՐՔՇԵՐ. Բ՛. **13** Օգոստոս—Աղոսնոս Կ. Տ. 26 Օգոստոս: ՀձՐ. 29 Բէճէպ:
ՀՅ. և **Կ. ՀՅ.** Աստուածածնի պահքին Գ. օրը: **ՅՆ.** Ս. Մաքսիմոս խոստո-
 վանող: **ԼՏ.** Ս. Զեփիլոխոս Հռոմի հայրապետ:

ՀԻՆԳՇԵՐ. Բ՛. **14** Օգոստոս—Աղոսնոս Կ. Տ. 27 Օգոստոս: ՀձՐ. 30 Բէճէպ:
ՀՅ. և **Կ. ՀՅ.** Աստուածածնի պահքին Դ. օրը: **ՅՆ.** Ս. Միքիա մարգարէ:
ԼՏ. Ս. Կեսարիոս Արեւատայ եպիսկոպոս:

ՈՐՐԱՍԹ. Է՛. **15** Օգոստոս—Աղոսնոս Կ. Տ. 28 Օգոստոս: ՀձՐ. 1 Շապան:
ՀՅ. և **Կ. ՀՅ.** Աստուածածնի պահքին Ե. օրը: **ՅՆ.*** Ս. Աստուածածնի վե-
 րափոխումը: **ԼՏ.** Ս. Օգոստինոս Հիպոզոնայի եպիսկոպոս:

ՇԱՐԱԹ. Է՛. **16** Օգոստոս—Աղոսնոս Կ. Տ. 29 Օգոստոս: ՀձՐ. 2 Շապան:
ՀՅ. և **Կ. ՀՅ.** Ս. Էջմիածնի Շողակամի տօնը, Ս. Գրիգոր Լուսաւորչի
 տեսիլքին համեմատ: Նաւակատիր: **ՅՆ.** Ս. Դիոմեղէս վկայ: **ԼՏ.** Ս. Յովհան-
 նէս Մկրտչի գլխատումը:

ՅՈՒՇԱՏԵՏՐ

10 Օգոստ. ԿԻՐ. [223—143] Կէս օր. 5. 08.....

11 Օգոստ. ԲՂ. [224—142] Կէս օր. 5. 10.....

12 Օգոստ. ԳՂ. [225—141] Կէս օր. 5. 11.....

13 Օգոստ. ԴՂ. [226—140] Կէս օր. 5. 12.....

14 Օգոստ. ԵՂ. [227—139] Կէս օր. 5. 14.....

15 Օգոստ. ՈւՐ. [228—138] Կէս օր. 5. 16.....

16 Օգոստ. ՇՐ. [229—137] Կէս օր. 5. 17.....

Հասարակ փողատապը, — կամ ուրիշ բառով — փողակատապը (պոծչիթ) ընդհանրապէս կ'սկսի շնչառական ճամբաներու զբրգրուութեամբ մը, հարբուխով: Շուտով պէտք է ստանել զայն, և թող չի տալ որ բորբոքումը մինչև շնչափողերն իջնէ: Խոնաւ օդի՝ զգուշութեան համար քիթ-բերան ցօղակը շատ աղէկ է: Քիթի ներարկու գործիքով մը պէտք է գործածել հականեխակական լուծումներ, ինչպէս ասիտ պօռիք, ֆէնիք, գօլթառ սարօնինէ, լեմոնի քամուք. ևլն.: Երբ ներարկու չունինք, այդ լուծաջուրերն — որոնք պարտին միշտ տաք ըլլալ, — ափի մէջ առնելով՝ ուժով վեր քաշելու է: Հարբուխը նոր սկսած ատեն, երբ մարդ կ'սկսի փնջափայլու ու քիթէն ջուրի պէս հեղուկ մը կը վազէ, կարելի է դադարեցունել զայն՝ քիթափոսերուն մէջ խորապէս թխելով հետեւեալ փոշիէն. — Սալօլ 1 կրմ., Ասիտ սալիսիլիք 0,20, Թանէն 0,10, փոշիացեալ Ասիտ պօռիք 4: Ժամը մէկ անգամ միայն լուծուն պտղունց մը առնել. ապա թէ ոչ՝ պինչերուն եզերքի մորթը կը զբգռուի: Քիթէ վեր քաշելիք փոշի մըն է նաև «մանթօլ պօռիքէն», որ ժողովրդ. բառով «ճերմակ էնֆիէ» կը կոչուի: Եթէ հարբուխի առաջին նշանները տե՛սնուելուն պէս՝ ասոնք կիրարկուին, մէկ օրէն առաջը կարելի է առնել. իսկ եթէ ուշ առնուած ըլլան, կամ, եթէ հարբուխիդ սաստիկ տեսակէն է, գէշութիւնը կը տաքածուի քիթին ետեւի մասանց և ունգային ստորդին մէջ (pharynx nazal). այն ատեն վրայ կուգայ անճանգատութիւնը, կտարտուք, ջերմ, ևլն. և նեխահոտութիւնը կ'սկսի: Առ այս, հարկ է կրկին ու կրկին ցօղակիլ, քիթէ վեր քաշելով կամ ներարկելով ասիտ պօռիքի 40 աստիճան տաքցած ջուր, որուն մէջ քանի մը կաթիլ կ'աւելցունէք «թէնթիւռ տէօքայիթթիւս» կամ «թէնթիւռ տը պէնժուէն»: Փորձել նաև ասիտ ֆէնիքի ջրաշոգիլի ներաշնչութիւնն (ինչպէս սիօն): Վերջապէս, եթէ ստորդին ետեւի կողմին վրայ ազդել պէտք է, լաւ կ'ըլլայ ասիտ պօռիքի տաք ջուրով խաղալը (կառկառա): Ընդհ. վիճակն ալ պէտք չէ զանց ընել: Ներսէն «անթիքիւնի» (50 հրրդկրմ.) և «սիւլֆատ քինին» (10 հր.) նշխարք՝ օրը 2—3 հատ: Յետոյ քրտընցունող բաներ, եռացած բուսաջուրեր, քարի ըմպելիներ (ուօմ, տաք ջուր, շաքար, լեմոն ևլն.): Կրակօղին (grog) և թերմոնը (տաք գինի) պատու կ'սկսան դեղեր չեն. արհան շրջանը կը շուտցունեն և գէպի մորթը մղելով՝ կը քրտընցունեն: Միշտ օգտակար է բանի տեղ չի դնելիք չընել նոր սկսող հարբուխ մը: Հարբուխ մը որ կը թթննի վրադ՝ կրնայ կուրծքի վտանգաւոր հիւանդութեան դուռ բանալ, և ա՛նա ասանկո՛վ է որ մարդ գէշ փողացաւերէ կը բռնուի, որոնք յաճախ քրոնիկ կը դառնան:

ԱՌ-ԱՅՐ. — Աղէ! Դեղէ! Գ-Յ Ե Լեղէ!

“ՉԷ՝ ԱՍՏ, ԱՅԼ ՅԱՐԵԱ՛Ի,”

Յախտնական լուռ Գեթսեմանի՛ ,
Պատմէ՛ , պատմէ՛ ինձ վէպ Գերեզմանի ,
Դէպք աստուածային , հրա՛շք աննրման .
Հրեշտակն երգեց . — «Չէ աստ , այլ յարեաւ» :

Գիշեր մեծ , վրսեմ , վայրկեան ահաւոր ,
Ընէ՛ ինձ , ո՛ւր է երկնի թագաւոր .
Կանգնեցի խորան իմ պաշտելութեան ,
Երբ վիհն աւետեց . — «Չէ աստ , այլ յարեաւ» :

Սուրբ Երուսաղէմ՛ , Քաղա՛քըդ հսկայ ,
Խօսէ՛ ինձ , ո՛ւր է արքայից Արքայ ,
Նա՛ որ աղօթեց լուսնակ զիշերին .
Դարեր ձայնեցին . — «Չէ աստ , այլ յարեաւ» :

Դո՛ւ , Գողգոթադ լերկ , գագաթ ապերախտ ,
Բայց պատրաստեցիր ազգերու լաւ բախտ .
Ապառաժներէդ սոսկաց Բարսբբա ,
Երբ Սիոն ոգեց . — «Չէ աստ , այլ յարեաւ» :

Արչալոյսն այն օր չէր սովորական ,
Խաչէն առած էր գոյն մը յաղթական ,
Ո՛չ ճգնաժամի բոսորը սակայն ,
Զի Զորը խնդաց . — «Չէ աստ , այլ յարեաւ» :

Այդ արչալոյսին՝ հրճուանք կար երկինք ,
Յիսուս ա՛լ վերն էր , համակ փառք , երգ՝ ինք .
Սուրբեր կ'երգէին . — «Եկար մեզ բարեաւ» .
Տիեզերք գոչեց . — «Չէ աստ , այլ յարեաւ» :

Վարդ արչալոյսներ , Զատկի օրերուն ,
Մարգուս փրկութեան կը բերէք գարուն ,
Գարո՛ւն , տօն ծաղկման կեանքի յարութեան .
Ինչո՞ւ չը կրկնենք . — «Չէ աստ , այլ յարեաւ» :

ԱՐԵՒԻՆ ՇՈՒՐՋԸ

ԱՐԵՒԸ ԳՆԵԼ Կ'ԱՐԺԷ

Ամերիկացի ճարտարագետ մը տունը կառուցանելու յատկազրի մը պատրաստած է, որուն համեմատ կարելի պիտի ըլլայ շինուած բնակարանի մը՝ իր հիմերուն վրայ պահանջուած կողմը դառնայն, այնպէս մը որ գլխաւոր սենակներուն պատուհանները միշտ դէմ առ դէմ ըլլան արեւին: Բնական է որ խօսքով չեն շինուիր ասանկ սովորականէ դուրս տունը: Միայն սա անպատեհութիւնը կայ որ, երբ տունին էրիկմարդը իրիկուան տուն հասնի, անոր ամբողջ շրջանն ընել պիտի ստիպուի, հասկընալու համար թէ գլխաւոր դռան սր դին դարձեր է: — Սենեակ մը ուր օրուան մէկ մասն արեւ չի մտներ՝ անբնակելի է ըստ Առողջաբանութեան: Հազարաւորներ կան սակայն որ դժբախտարար արեւադուրկ խոցերու մէջ կը բնակին: Զանալու է կարելի եղածին չափ խոյս տալ անարեւ տուներէ:

Արեւին լոյսը շատ ոչինչ բան մը կ'երեւայ շատերու, սակայն Գիտութիւնը ցոյց կուտայ որ անիկա ուրախութիւն ասթող իր զգացական արժէքէն զատ՝ հրաշալի ազդակներէն մէկն է վատաբողջ սերմեր ջնջելու համար: Օրինակով խօսինք: Թիֆօին բակեղները (պասիլ) պարզ ջուրի մէջ կրնան ապրիլ 15 օր, ամլացած (սթէռիլիզէ) ջուրի մէջ ամիս մը, հողին մէջ 67 օր, մինչ սառուցումն ու չորութիւնը յաղթականօրէն կը նուաճեն զիրենք: Իսկ շեշտակի վրան ինկող արեւը կ'սպաննէ զիրենք 4—8 ժամուան մէջ:

Այսպէս, արեւալոյսը կը կասեցունէ հիւանդութեանց ձգտումները: Ահա թէ ինչո՞ւ «արեւը կ'արժէ գնել» ըսինք, եթէ կարելի ըլլար նոյն խի միշտ գրամ վճարելով ստանալ զայն:

ՋԵՐՄԱՆՈՑՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

Պէտք չէ թափանցիկ թողուլ ջերմանոցի մը ապակիները: Արեւը ներս անցնելով՝ կը խամբէ տեւեւ ու ծագիկ: Լոյսին սաստկութիւնը մեղմելու համար ապակիներու կը քսեն ճերմակ նիւթ մը՝ թեթեւօրէն կապուակել, որուն բազադրութիւնն է հետեւեալը. — Ջորի մէջ հալեցունել «սլան ակրաներ» և վրան աւելցունել փոշիացած «վէռ անկէ»: Ուրիշ ամանի մը մէջ ալ ստինձ հալեցունել. երբ հալի՝ կրակին վրայէն վար առնել և մէջը լեցունել միւս հեղուկ խմորը. յետոյ խողանակով մը տարածել զայն ապակիներուն վրայ, ամբողջ ամսա մը կրնայ տեւել այս խաւը:

Հողի հետ աշխատանք ունեցողներն օձիք կը թօթվին «ադ-
ուա» կոչուող այն ճիգերես սեւափետուր թուչուններուն համար՝
որոնք անխնայ կը մլասեն ցանքերուն, և կարծես երկրագործին
յոյսերուն մահե՛րգը կ'ողեն շարունակ՝ իրենց անչնորհ գեղգեղան-
քովը: Լաֆօն/թէնի՝ մեծ առակախօսին պատմածին չափ իրենք ան-
խելք չեն սակայն. շատ արթուն և զգուշաւոր են, խոսափելով
միշտ իրենց համար լարուած ամէն թակարդէ՝ յուսահատեցունող
ճարպիկութեամբ մը: Զիրենք հրազէնով որսա՛լն ալ դժուար է,
վասն զի հարուածին տեսքէն հեռու կը փախչին միշտ:

Անաւարիկ շատ պարզ և զրօսուցիչ միջոց մը՝ ագուաներ ողջ
ողջ որսալու համար. — Թուղթէ կղջերիկներ պատրաստել բաւա-
կան թիւով, ճիշդ այն կերպով որ նպատավաճառը կը չինէ ձագա-
քաձև՝ մէջը քանի մը տանողի ալիւր կամ շաքար դնելու համար:
Այդ կղջերիկներուն ներսի երեսներուն ոսաղ (էօքսէ, glu) քսել և
խորն ալ ձգել թարմութիւնն անցած մէյմէկ կտոր մլս. յետոյ կղ-
ջերիկները տանիլ ցրուել դաշտին մէջ ու երթալ պահուրախ ծա-
ւի մը ետև. աեսէք ի՛նչ կը պատահի:

Միտին հոտէն հրապուրուած, ագուաները չը պիտի ուշանան
երկինքներէն վար իջնալու և իրենցմէ է՛ն յանդուգնն անգամ պի-
տի խօթէ գլուխն կղջերիկէ մը ներս, կտուցովը շորթելու համար
մէջի հոտած միտի կտորը:

Ան ատեն թուղթէ պարկը գլխուն կը փակի, և հակառակ թըւ-
չունին բրած ճիգերուն՝ չը բաժնուիր անկէ: Ագուաը կը ջանայ
թոխ առնել, բայց քանի մը թեւաշախուժէ ետք՝ ամօթապարտ
գետին կ'իջնայ: — Կրնանք ան ատեն մօտենալ իրեն և . . . բանը
բուսցունել:

* * Ուրիշ փորձ: — Յանքի սահմանուած ամէն մէկ հէքթո-
լիտր ցորեն թաթխեցէք հետեւեալ լուծաջուրին մէջ. 200 կրմ.
հանքածուխի խայձղան (goudron de houille), 200 կրմ. քարիւղ և
3 լիտր տաք ջուր: Վարսակի համար, խայձղանի և քարիւղի քա-
նակը կրկնելու է: Շատ մը հէքթարներու վրայ եղած փորձերը
լաւագոյն արդիւնքներ տուած են, միասակար ազդեցութիւն մը
առա՛նց յառաջ բերելու անոնց ծլուսին վրայ: Եւ ագուաներ այդ
համով ուտելիքէն դանձմ՝ վտահ հղէք թէ պիտի կորսուին եր-
թան, այլուր կատարելու իրենց աւերիչ շահատակութիւնը:

ՍԱՐԷՆ ՁՈՐԷՆ

ՈՐԹԻՆ ԱՐՅՈՒՆՔԸ. — Ինչպէս դիտէք, Մարտի սկիզբները կը յօտեն որթատունկն ու անոր ոստերուն կտրուածքէն արցունքի պէս կաթիլ կաթիլ հիւթը (sève) կ'սկսի արտասորիլ: Պղտիկ չիշի մը մէջ առէք այդ ոստերէն մին, դերձանով մը կապեցէք և թողէ՛ք որ մէջը լինան հոտող շիթերը՝ զոր վերջէն կրնաք դործածել՝ աչքի բոլոր ցաւերու և բորբոքումներու առաջին առնելու համար, օրը քանի մը կայլակ: Ժողովրդական այս դարմանն — որուն ցոյց տուած բարերար արդիւնքին առջև թերեւս ակնարոյժնե՛րն ալ մատ խածնէին, — իր օգուտը կ'ընծիւ է անպատճառ ցաւոտ աչքերու:

ՄԱՆԻՇԱԿԸ ԴԵՂ. — Այս ծաղիկն՝ որ մանչերուն լամբակին և աղջիկներուն չփակին վրայ ա՛յնքան նազանքով կ'երթայ թառիլ, իր դրական բանաստեղծութի՛ւնն ալ ունի եզեր: Ինքը կը պարունակէ բուսայոյզ մը (mucilage) որ ամօքիչ է: Գոցուած կուրծքեր բանալու և մազաս քակելու համար կը բաւէ իբր դեղ առնել ճանկա՛կն՝ անոր չորցուած ծաղիկները թրջոց դնելով. 1000 կրմ. եռացեալ ջուրի մէջ 5 կրմ. ծաղիկ կը բաւէ. այս քանակէն աւելի դրուելով ստացուած բուսաջուրը — չի մոռնանք ըսել, — լուծողական ու նո՛յն իսկ փսխեցուցիչ կը դառնայ:

ՊԱՌԿՈՒԿ ԿԱՐԴԱԼԸ սաստիկ կը վնասէ աչքերուն:

ԲԵՐՆԻ ՄԱՔՐՈՒԹԵԱՆ համար լաւագոյն միջոցն է աղջուրով լուացքն, իբրև հակամեխական:

ՅՈՒՆԱՍ ԵՎ ՅՈՒՆԱՍԸ ճաշելը՝ ստամոքսը կը խանգարէ:

ԳԻՇԵՐՆԵՐԸ հոտաւէտ ծաղիկ կամ տունկ ընա՛ւ մի պահէք ննջաննեակնուդ մէջ, եթէ կ'ուզէք որ ենթակայ չըլլաք սիրտ-խառնըւուքի, անգարի, գլխու պտոյտի և ցաւի: Ասոնք մէկզի, շէ՛նք շնորհք կը թունաւորուի, շնչահեղձ կ'ըլլայ մարդ, վասն զի բոյսեր ու ծաղիկներ գիշերներն ամխական թթու կ'արտաշնչեն: Այս թունաւորումը կը նմանի ա՛յն թունաւորումին որ յառաջ կուգայ աղէկ չի բանող վառարանէ մը, կամ, պատրոյզն անկատար կերպով վար առնուած լամբարէ մը: Պէտք է ուրեմն ծաղիկներն ջուր ու ծաղկանօթ իրիկուրները դուրս հանել ննջախուցիւրէ և պատուհանները բաւական մը բաց թողուլ՝ օդը նորոգելու համար:

ԱՌԱՄ. — Ծայլն քոր՝ քոր, քոր քոր քոր քոր քոր:

Բնութեան վերազարթումն է Գարնանամուտը զոր ամէն տարի Ջատկին հետ կ'ողջունենք: Երկինք ու երկիր իրենց պայծառութիւնն, ու մթնոլորտն իր ազդորութիւնը՝ Յարութիւնը խորհրդանշող «կարմիր հաւկիթ» էն կ'ակնկալեն կարծես. այս տեսակէտով, կարգարանայ ժողովուրդին համոզումը թէ «կարմիր հաւկիթին կեղեւը գետին ինչալու է որ օդերը տաքնան»:

Կարմիր հաւկիթն իր ուրախ տեսքով՝ միակ դարդն է զատկական սեզաններու, և առարկան՝ տղոց ցնծութեանց: Տէրաէրնեբու սնօրնէքի այցելութեանց ատեն, հայ տուներու մէջ սովորութիւն է խնկամանէն զատ՝ պնակով կարմիր հաւկիթ ալ դնել, որպէս զի օրհնուի մեր սնունդին այդ կարեւոր նիւթը: Հաւկիթին ընծայուած այս յարգանքն ու պաշտամունքը ճիշդ Յարութեան տօնէն սկսելուն, կրնանք խորհիլ թէ ատ ատենին, այսինքն զարնանամուտին է որ ամ կ'ելլան բոլոր հաւեղէնները. պարազայ որ բազդատելի է հասունցած խաղողին՝ ճիշդ Աստուածածնի տօնին օրհնուելուն հետ: Հաւկիթ չի ներկուիր այն տուներուն մէջ ուր մօտաւոր մահ մը պատահած է, ի նշան սուգի:

Ինչո՞ւ կարմիր կը ներկենք հաւկիթը: Արիական ցեղերու յատուկ շատ հին սովորութիւն մըն էր ասիկա. Պարսկներն ալ իրենց տարեգլխուն՝ Նէվրուզի տօնին առթիւ զիրար շնորհաւորելու համար նախշուն ձուեր կուտային մէկմէկու: Մեր ժ.Գ. դարու մասնագիրներէն Գրիգոր Տաթևացի քարոզագիրք մը ունի «Չմբան հատոր» անուամբ, որուն մէջ բսած է. «Այդ ներկը կը նշանակէ թէ բոլոր աշխարհս գնուեցաւ Քրիստոսի արեամբ»: Այս բացատրութենէն կը հետեւի թէ կարմիր ներկը խորհրդանշանն է Քրիստոսի արեան: Հաւկիթը հին կրօնքներու մէջ, — մանաւանդ հնդկականին, — աշխարհիս ստեղծագործութեան մասին ծառայող օրինակ մը սեպուած է: Հնդիկ րմբունումով, Տիեզերքն երեք մասէ կը բազկանար, 1. Երկիրը (հողը), 2. Մթնոլորտը, 3. Երկինքը: Այս հիման վրայ, մանրամասն ուսումնասիրութիւն մը զբաժնուի Տաթևացին զոր կ'արժէ կարդալ և որուն եզրակացութիւնն է. «Աշխարհս կլոր է, հաւկիթն՝ այդ կլորութեան ամբողջութիւնը կը խորհրդանշանէ, ու Քրիստոսի Աւետարանն ալ տարածուած է այդ բոլորշիւթեան ամէն կողմերը: Ժողովրդական լեզուի մէջ սիրուն հանելուկներ կան՝ Հաւկիթին վրայ շինուած. ահա մէկ քանին.

«Բերնէս ինչո՞ւ կ'որեցաս»,
Ձորն ինչո՞ւ չէ հուլցաս»:

«Ահո՞ւ մը ունի՞ր դո՞ւս շա՞նի,
Մէջը արժո՞ւն՝ վրան ունի՞»:

ԲԱՌԳԻՐԲԷՍ

ԿԻՐՍԿԻ. ԴՅ. 17 Օգոստոս—Աղոսմոս Կ. Տ. 30 Օգոստոս ՀձԲ. 3 Շապան
 ✖ **ՀՅ. և Կ. ՀՅ. Ս. Ասուածածնի վերափոխումը:** **ՅՆ. Ս. Միւ-**
 ոսն եպիսկոպոս Կրէտէի: **ԼՏ. Ս. Ռոզա կոյս:**

ԵՐԿՈՒՇԵՐ. ԴԷ. 18 Օգոստոս—Աղոսմոս Կ. Տ. 31 Օգոստոս ՀձԲ. 4 Շապան
 ✖ **ՀՅ. և Կ. ՀՅ. Վերափոխումին Բ. օրը:** Մեռելոց: **ՅՆ. Ս. Ս. Փլորոս և**
 Լարոս վկաներ: **ԼՏ. Հոսյաննդոս արբայ:** ՀՈՒԱՆՏԱՅԻ Թագուհին ծնունդը:

ԵՐԵՅՇԵՐ. -Յ. 19 Օգոստոս—Աղոսմոս Կ. Տ. 1 Սեպտեմբեր: ՀձԲ. 5 Շապան
ՀՅ. և Կ. ՀՅ. Վերափոխումին Գ. օրը: **ՅՆ.* Ս. Անդրէաս վկայ իր ընկերնե-**
 րով: **ԼՏ. Ս. Եգիգիոս անաոր:**
 Օգոստիսառ Ղազի Սուլբան ԱՊՏԻԻԼ ՀԱՄԻՏ Բ. ԽԱՆԻ, ԹՈՒՐԲԻՈՅ Կայսեր
 Գանակալութեան Տարեդարնը:

ԶՈՐԷՇԵՐ. -Է. 20 Օգոստոս—Աղոսմոս Կ. Տ. 2 Սեպտեմբեր: ՀձԲ. 6 Շապան
ՀՅ. և Կ. ՀՅ. Վերափոխումին Դ. օրը: Պանք: **ՅՆ. Ս. Սամուէլ մարգարէ:**
ԼՏ. Ս. Ստեփանոս Հունգարիոյ Սագաոր:

ՀԻՆԳՇԵՐ. ԲՅ. 21 Օգոստոս—Աղոսմոս Կ. Տ. 3 Սեպտեմբեր: ՀձԲ. 7 Շապան
ՀՅ. և Կ. ՀՅ. Վերափոխումին Ե. օրը: **ՅՆ. Ս. Թաղէոս առաքեալ:** **ԼՏ. Ս.**
 Հիւպատիոս վկայ:

ՈՒՐԱՍԹ. ԲԷ. 22 Օգոստոս—Աղոսմոս Կ. Տ. 4 Սեպտեմբեր: ՀձԲ. 8 Շապան
ՀՅ. և Կ. ՀՅ. Վերափոխումին Զ. օրը: **ՅՆ. Ս. Ազածոնիկոս վկայ իր ընկեր-**
 ներով: **ԼՏ. Ս. Ռոզալիս կոյս:**

ՇԱՐԱԹ. ԳՅ. 23 Օգոստոս—Աղոսմոս Կ. Տ. 5 Սեպտեմբեր: ՀձԲ. 9 Շապան
ՀՅ. և Կ. ՀՅ. Վերափոխումին Է. օրը: **ՅՆ. Վերափոխումին Թ. օրը:** Ս.
 Լուսոս վկայ: **ԼՏ. Ս. Լաւրենտիոս Յուստինեան:**

17 Օգոստ. Կիր. [230—136] կէս օր. 5. 19.....

18 Օգոստ. Բշ. [231—135] կէս օր. 5. 21.....

19 Օգոստ. Գշ. [232—134] կէս օր. 5. 22.....

20 Օգոստ. Դշ. [233—133] կէս օր. 5. 24.....

21 Օգոստ. Եշ. [234—132] կէս օր. 5. 25.....

22 Օգոստ. Ուր. [235—131] կէս օր. 5. 27.....

23 Օգոստ. Շր. [236—130] կէս օր. 5. 29.....

ԳՐԻԳՈՐ ԽԱՆ ՇԱՄՏԱՆՃԵԱՆ

“ L'amitié d'un grand homme est le bienfait des dieux, ”

Կիսիճանքի եւ անձկութեան երկար ու տազնապախի շարաթներ սահեցան անցան այն դժնդակ օրէն ի վեր որ յարգանքի ու վշտակցութեան մեծ ու փառաւոր արտայայտութեան մը մէջ, իր անկենդան մարմինը հանդիսաւոր եւ եղբարական մուտքը բրաւ հօղէ վերջին հանգստարանը : Եթէ մարդկային իղձերը զօրութիւնը ունեցած ըլլային մահուան անագորոյն հարուածները կեցնելու, ապահովարար Գրիգոր Խան իսպէս արժանի պիտի նկատուէր այդ զօրութենէն նպատաւորուելու եւ պիտի փրկուէր կենքի վերջաւորութեան անողջ ու վաղաժամ վճիռէն, այնքան յաղթ ու լիսեմ՝ էր մարմնով եւ հոգով, այնքան ճշմարիտ եւ անկեղծ բարեկամ՝ ամէնուն եւ այնքան մանաւանդ սիրուած, յարգուած ամէնէն, որքան փառաւորուած՝ հրաշովէպերու գեղափարթամ ու ժպտաշուքմն հակային պէս :

Եւ իրօք, Գրիգոր Խան, իր վրայ ունէր վեհ եւ իսեւալ բան մը՝ որուն գոյութեան պատճառը պարզ մահանացուի մը տրուած է՛ր գուշակել : Տակաւին իր վերջին սիրուն մէջ, անիկա կը թուէր իր անկրելի ուսերուն եւ պայծառ գէմ՝ քին վրայ կրել այն առողջ եւ հուժկու մարդու լուսապակը որ իր հանգարտ ու միանգամայն հզօր անհատականութեան աղերսը եղաւ հանգէպ մարդոց համակրութեան, գնահատանքին եւ անոնց յարաբերական գերմտիք կապերուն :

Որովհետեւ Շամոտանճեան Խան բարեկամ ծնաւ մարդկութեան եւ մեռաւ բարեկամ ամէնուն, հոս է իր մեծութիւնը, անով է իր մեծութիւնը. ոչ ոք պատճառաւ, չ'էի կրնար ուրիշ որ եւ է նշանաբանի մը ապաստանիլ որքան անոր որ կ'երեւնայ զրութեան ճակատք եւ որով հօրեայ դարերու իմաստաւէրը կը վճռէ ու կը հաստատէ թէ «մեծ մարդու մը բարեկամութիւնը շնորհ մըն է աստուածային» :

Ինք, բարեկամութիւնը յարգելէ ու սիրելէ զատ, անով հեղհեղեղ մեծ գիրքի մը եւ արդար համբաւի մը տիրանալէ ետքը, եղաւ նաև աստուածավախ ու ջերմեռանդ հայ, ասանկով ապացոյց մը տալու գուցէ թէ իրօք ինքն ալ կը հաւատայ այն բարեքին զօր Արարիչը շնորհած է, մարդոց հետ բարեկամ մնալու, զանոնք սիրելու եւ փոխադարձաբար անոնցմէ սիրուելու պէտքը ներշնչելով իրեն : Ապաքէն, քիչեր կը կարծեմ որ ըլլան Գրիգոր Խանի չափ բարի, դիտակցօրէն բարի, սիրտէն մինչև գլուխը բարի, Այս բարութիւնը ամէնուն հասկըցնելու ջանքին մէջն էր իր կատարեալ գոհունակութիւնը, իր պարծանքը : Կուղեր որ ծանշան զինքը իրը հեղ եւ խոնարհ մարդ. իրը վաճառական չ'էր պարծենար, իրը խելացի ու մեծասմուտ անձ չ'էր նկատեր, ո՛չ ալ հուշակեր ինքզինքը, ասոնք իրեն համար կը թուէին ըլլալ պարզ յատկութիւններ, աշխատութիւնով, գրամով վասակուած, բայց բարութիւնը անկարին օգնելու, յոնցաւորին ներելու, չբաւորին նպաստելու, տխրածին ոգորմելու, եւ անմիտին վրայ զթալու բարութիւնը կ'ենթադրէր որ ըլլայ, եւ իրաւամբ, այն հոգեկան պատուազգածութիւնը, բարձրութիւնը որ ժառանգական է, աստուածային է :

Եւ առանց չափազանցութեան Գրիգոր Խան, իր ճնողքէն ժառանգած է ինչ որ տարիներ ետքը, հաստատ հիմք կազմեցին իր ընտանեկան քաղցրաշունչ յար-



Զատեմ

1907ի հանգուցեալ Գրիգոր Խան Շամսանճեան, առաջնակարգ վաճառական եւ
մեկննաս. Պարսից Դեսպանատան Բ. Թարգման եւ առեւ.թ. խորհրդական Անդամ
առողջապահական Բարձր ժողովի:

կին, Բարեհամբաւ, աղնուտարտ ու գեղազմայլ կնոջ մը ընկերակցութեանը մէջ, իր կեանքը փայլուն շաբ մը եղաւ միտքի, հոգիի և սիրտի նորանոր և երկարասան զուարճութիւններու, խրախճանքներու: Երջանկութիւնը, կամչոտ յաւերժահարս, որ խոյս կուտայ յատերէն, սիրեց մնալ այս ներդաշնակ ամպիրն մտերմութեանը մէջ, հոյաշէն հայր'լիններուն վրայ ցոլացնելով իր գրախառնելի փպիտները: Խորունկ եւ անկեղծ սիրոյ պարտեղին մէջ այս ընտանեկան ծառք կ'սկսէր պտղաւորել յաջորդարար մանչ զաւա'նիւր պարգեւելով իրենց, ամէնքը չորս հատ սյսօր, որոնք ապագայ չորս սակի սիւնները ըլլալու ամէն առաւելութիւնները կը ներկայացնեն իրենց հօր հաստատած մեծահամբաւ վաճառատան: Գրիգոր Խան ճշմարտ պարզութիւնը և անդորրութիւնը կը սիրէր յաւետ իր ընակարանին մէջ, ամէն բան գեղեցիկ կը բազմար, առանց ցուցամոլութեան սակսոյն, առանց աղմուկի. պերճանքը, ճոխութիւնը կը վնասէր իր գեղարուեստական կողմերովը միտոյն: Կեանքի զանազան իրագործութիւններէ վերջ որոնց հետեւանքով ա'լ ընտելացած կ'զգար աշխարհիկ կենցաղի կարգ մը օրէնքներուն ու ձեւակերպութեանց հետ, իր տանը դուռները լայնօրէն բացաւ հայ թէ օտարազգի Բերկանակ երկեսա այն ընտրուած անհատներուն՝ որոնք հաճելի ժամանցներով և զուարճութեան մարտչ գաշտ մը գտած ըլլալնէն ջերմապէս գոհ, արտօրանքով կը փութային իրենց զաղափարներուն, սրամտութեան եւ ունեցած բարեմասնութեանց նրբութիւնները պարզելու, իրենց ճաշակները եւ երազները արժեցնելու, արբնալով միանգամայն երաժշտութեամբ, շանքանեայով, միտքի զբօսանքներով և մեծարանքներով: Գրիգոր Խան, ուրախ, սիրտին խորերէն ուրախ, այնքան գեղեցիկ ու ներդաշնակ հանդիսաւորութեան մը մէջ, բարութեան ու հեզութեան գէմքով մը կը ժպտէր ու կը խօսէր, հրճուելով որ այդքան բարեկամներ եկեր ու իր շուրջը կը զուարճանան: Տակաւին յիշատակը կ'ապրի մէջս այն վերջին փայլուն պարերեկոյթին զոր տուաւ Միսք փողոցի իր հօ յակապ բնակարանին ընդարձակ սրահներուն մէջ: Ամէն ինչ իր գերազնիւ ու փայլուն սահմանին մէջ կը գործադրուէր, նուազը կը խոյսար, կը կոյտուէր, ամէն կողմ լեցնելով իր մանչուն և երագացնոր ձայնը, մինչդեռ պարող զոյգերը, խարշափող քղանցքներու և ամէն քայլափոխի արձակուած ծիչերու և բառերու համերգը կը յօրինէին, զմոյլանքի և արբնութեան արտայայտութեան մը մէջ: Յայտնութիւնքէն վերջ, վերի մեծ սրահէ ելեր էինը կրկին ու ծաղկամարտը պիտի սկսէր: Մէկ պահուն, երբ արդէն գետինը վերածուեր էր վարդի թերթիկներու թաւշանման գորգի մը, նշմարեցի Խանը որ սրահին մէկ անկիւնը կեցած անշարժ բոյց ժպտուն ու հրճուազին կը դիտէր ներկաներուն անօրինակ խանդը, եռուղեւը, առանց մասնակցելու կանացի ձեռքերէ իր վրայ նետուած, սփռուած ծաղիկներու հրաւերին, կամ չի կրնալով փոխարինել զանոնք, թերեւս այն մտածումով թէ կ'ինքը ծաղիկով անգամ պէտք չէ հարուածել: Իր մէջ արմատացած խոհականութիւն մը, վերապահում մը կար որ իր մեծ նկարագրին մէկ մասը կազմեց մշտապէս. խեղճ Գրիգոր Խան, եթէ գիտնար թէ այդ օրէն երկու տարի ետքը, իր գագազն ալ պիտի պճնուէր, ողորուէր ու զարդարուէր սոյլ ծաղիկներով: Ինքը, զգոյշ և շրջահայեաց մարդու բարեմասնութիւնը ունէր առաւելապէս: Ընկերութիւնը, ընտանեկան այս կարգի աշխարհիկ բոլոր հաճոյքները սիրելով իսկ, օր մը չի հանդուրժեց բարոյապէս վարկաբեկ եւ հասարակ մարդոց մտերմութեանը, Պէտքը չէր զգար ատանկներու և իր

անկեղծ, ուղիղ մարդ չէ՛ր փնտաւեր զանոնք իր շուրջը : Երբ իր միջավայրին մարդիկ, մեծ մասամբ խաղարանին մը վերածած են իրենց ընտանեկան յարկը, Շամ տանճան իսան մերժեց ներկայութիւնը խաղի թուղթերուն անգամ որունց դէմ ճշմարիտ աստիւթիւն մը կ'զգար, չկրնարով առել, ինչ որ աւելի արգարացի պիտի ըլլար, նոյն խիզանոնք որ այդ անարգ թուղթերուն գերին ըլլալու Տիւանդապին ու ազեղ մարութիւնը ունին այսօր : Ինքը, իր տան մէջ, կը բազմար վայելել միայն ինչ որ մարդու է, ինչ որ գեղեցիկ է եւ ազնիւ : Օրագրիններուն ստուար գէգը քովը առած, բազկաթոսին մէկ անկիւնը, կը կարգար ու կը կարգար ամէն գիշեր, գլուխը կաթնցուցած ետին : Ճակատը լուսավառ եւ անուշ աչքերը քթթեղու վայ սոկեծիր կապոյտ ակնոցին տակ որուն թեթեւ հարուածներ կուտար երբեմն, զայն չի ձգելու մտահոգութեան : Հակառակ իր օրուան խնջներին, ձանձրոյթ չէր զգար կարգալով ապակու հանդարտ ու լրջագէմ, մինչև որ սակայն անդամադրելի քունին արդեցութեան, տակ լրագրիը շինար ձեռքէն եւ ինք, սթափելով յանկարծ սոքի չ'ելէր սենեակին մէջ պահ մը երթեւեկելու համար : — Այս ժամուս, ուրիշ տուններու մէջ, ո՛վ գիտէ ինչպէս ձեռքէ ձեռք անցնելու վրայ են սոկիները, կըսէր յաճախ ինծի, դառն ժպիտ մը ուրուագծելով դէմքին վրայ : Գրիգոր խան չէր յղնեցուցած իր մարմինը այս կարգի միջավայրերու մէջ : Տոգրին չափ, մարմինն ալ առոյգ էր, վե՛՛՛՛՛՛՛՛ ու փարթամ : Գարոցականի տարիներուս, իրիկունները, հանդիսատես կ'ըլլային յաճախ իր ձիով վերադարձին, իր շնորհալի Տիկնոջ ընկերակցութեամբ կատարած պայտէն : Այն տանները, դէմքով ու երեւոյթով աւելի փայլուն, տակաւին սեթեւիշ ընչացքով ու աչքերը ակնոցին տակ աւելի վառ, Գրիգոր խան, այսպէս ձիուն վրայ կանգուն ու անժպիտ, կ'երեւակոյցէի մէկը այն ազնուական ու խրոխտ հարուստներէն որ իր խիստ եւ անհազորդ ընտանութեամբ պիտի վանէր ամէն ինչ որ կարելի ըլլար նիթարկել իր արգահաստանքին ու խղճամտութեան : Բայց իր ամբողջութեանը մէջ, անկիւն ունէր միշտ, այն աչքի ու միտքի խոտոջ թոփութիւնը որ կը գրաւէր ըստը ետեւիւնդ, այնքան որ շատ անգամներ, կը փորձուէի փողոցին անկիւն, սպասել իր փառաւոր անցքը տեսնելու հաճոյքէն չի զրկուելու տեսնելով : Պատանեկան երանելի օրեր : Երբոր տարիներ վերջ, բախար ունեցայ իր քով պաշտօնավարելու, այդ յիշատակները մէկիկ մէկիկ կ'անցնէին միտքէս եւ զարմանումով կը հարցնէի ես ինծի թէ մեծապէս բարի, ազնուամիտ, բարձր նկարագրի եւ անսլոյս կա՛մբի տէր այս մա՛րդն է այն զոր կը բազմայի տեսնել ամէն օր, նկատելով զայն ընտանութեամբ խիստ եւ անբարեմոյն :

Օ՛, ինչ յուսախաբութիւն եւ բրբան մեծ ցաւ մը ինծի որ, միամիտ պատանի, խաբուէր էի անոր արտաքին երեւոյթէն : Գրիգոր խան, ո՛չ միայն գերագոյն մարմնաւորումն եղաւ բարեարտութեան, ազնուամիտութեան, սլլ իր նայուածքին թեթեւ մը խոճոտութեան ու ամբողջ դիմազօծերուն հանդարտ արտայայտութեան, ակնածանք մը, պատկառանք մը դուրս կուգար, գիմաղինը իսկոյն գրաւող եւ միանգամայն զայն վստահեցնող իր ներքին բարի արամագրութիւններուն վրայ : Կեղծիք չի կար իր մէջ, իր գործի կեանքին բառարանին մէջն ալ գոյութիւն չ'ունէր այս բառը . ընդհակառակը, խղճմտանքի տէր, դիմաւոր մարդ էր . կանոնաւորութիւնը կը յարգէր ամէն բանի մէջ եւ այս ըմբռնումով է թերեւս որ մինչև վերջը մնաց իրրե ուղիղ, ողջմիտ անձ, իրրե bon sensի տէր եւ noble մարդ : Տունէն դուրս կամ տունէն ներս, գործին մէջ

կամ թէ՛չի սեզանին քով, միշտ նոյն մարդն էր, մեծ-հոգի ու correct մարդը, քաջարի իր պարզութեանը մէջ, ամէն խոչընդոտի, դժուարութեան գէ՛մ կրու-
ուող, ուրիշը վերաւորելէ կամ ուրիշի վրայ գէշ մտածելէ խրտուչ և մանաւանդ
աշխատող, գպրոցականի մը յամառութեամբ ու յուզումով, որքան administra-
teurի վայելչութեամբ ու հմտութեամբ աշխատող մարդ: Գործի մարդու հաս-
տատակամ, ինքնամիտի, մարբրատենչ ու պատկառելի այն եղական տիպան էր
արդարեւ որուն նման դժուարատարը չ'ունինք շատ մեր մէջ: Զարգացած, լաւա-
տես ու բարեկենցաղ անձի մը ազդեցութիւնը բնաւ իր շուրջիններուն, ինչպէս
իր ծանօթներուն վրայ. աւելի մեծ ցուցուց ինքզինքը հոգիով քան միտքով,
աւելի պարծանք մը նկատեց իր հօր նկարագիրը քան իր հմտութիւնը և հարբս-
տութիւնը, և ասանկով անվճար պահեց այն գեղեցիկ համբաւը որուն տիրացած
էր արժանաւորապէս և զոր ժառանգեցին իր դուստրները, անթաւամ՝ պսակ
իրենց կեանքի երազներուն և ապագայի յոյսերուն:

* * *

Այս համբաւը Իրիգոր Խանի փառքն ու պատիւը եղաւ մինչև իր վերջին
վայրկեանին, իբրև անհատ ու մանաւանդ իբրև վաճառական: Սր մը չէ եղած
որ շփոթի կամ սոյժաքի այն դժուարին ու բնկճող դերին մէջ զոր ստանձնած
էր իրեններուն երջանկութեան համար այնքան, որքան իր գործունէութեան, իր
ապառնի կեանքին անդորր ու անամպ վիճակին համար: Մնաց որ ճակատագրո-
րէն, ինքը իսկապէս կոչուած ըլլալ կը թուէր առեւտուրի ասպարէզին, այն
յուզեցուցիչ, դժուարատար կեանքին որուն զիմացելու համար ենթական
պարտի ունենալ հաստատամտութեան ուժը, հեռատեսութեան բնածին տուր-
քը, ուղղամտութեան անխախտ համոզումը, նկարագրի մեծութիւն մը և վեր-
ջապէս այն հօրը կամըր որ ամէն ինչ է մարդուն համար, Շամտանձեան Խան
ունէր բոլոր այս յատկութիւնները և մինչև վերջը ծառայեց անոնց, բարոքեց
և անոյց գանձք: Այս խառնուածքով ու կազմուածքով մարդը, չէր կրք-
նար, օրինակի համար, բժիշկ եղած ըլլալ, զի իր գործը ու խղճմտանքը հան-
դէպ ստաւագողներուն պիտի չ'ըղյուտարէին որ հանգիստտես ըլլայ հիւանդի մը
ցուերուն, փաստարան պիտի չ'կրնար ըլլալ, չ'ունենալու, չ'զգալու համար
գուցէ մեղաւոր մէկը արդարութեան ձեռքէն խլած ըլլալու յուսահատութիւնը:
Դեռ ուրիշ և ո՛չ մէկ մասնագիտական ասպարէզի մէջ թերեւս, ինքը պիտի
չ'ունենար իր հոգիին ու սիրտին բարձրութեան հաւասար դեր մը, փան զի տա-
րօրինակ տրամադրութեամբ մը, կ'ատէր նաև Շահու և Նիւթի համար ապրող
մարդիկը և չի հանդուրժեց սա դաղափարին թէ՛ ակամայ ստրուկ մը եղած կ'ըլլայ
գրամին որով շատեր կը պարծենան այսօր և կը բարձրացնեն իրենց անպատկառ-
եսը, անձնամոլութիւնը:

Ուրեմն, Իրիգոր Խան վաճառականութեան սէրովը ու փափաքովը տողոր-
ուած, մտաւ առեւտուրի ասպարէզին մէջ և եթէ վաճառականութիւնը իր
ձեռքին մէջ հասաւ այն կատարելութեան որուն շատեր կը բաղձան այսօր,
ատոր պատճառը պէտք է վստահաբար փնտռել սա ճշմարտութեան մէջ թէ
ինքը, իբրև առեւտուրի մարդ, չի գոհացաւ միայն աշխատելով, նիւթականը
արդասաւորելու անապարձ դիտումէն, այլ այդ վաճառականութեան բերաւ
խառնեց իր վրայ կանուխէն կեդրոնացուցած սիրտի ու հոգիի այն գեղեցիկ բա-

ընձանուծիւնները բոլոր՝ զորս յատկանշեցի նախորդ էջերուն մէջ: Ասանկով, հայ վաճառականի դէմքը որ խնուծպաւութենէ գուրս ելած չէ՛ տակաւին այսօր մտամբ, Գրիգոր Խանի շնորհիւ նոր երեւոյթ մը ստացաւ և սկսաւ շատերուն ծառայել իրեն օրինակ և իբրև պանծալի ներկայացուցիչ: Մնաց որ, իր պատուով, առեւտուրի ասպարէզը պէտք էր նկատուիլ մարդոց ուղիղ ու պարկեշտ սահմանի մը մէջ զարգանալու և մեծնալու միակ ազդակը: Այս գեղեցիկ գաղափարները հիմնուած, հաստատուած էին իր մէջ այն տարիներուն երբ տակաւին դեռ արդիս պատանի Բարիգի վաճառականական Բարձրագոյն վարժարանին մէջ կ'աշակերտէր իր հարպատ եղբօր Միհրանի հետ, աշխատելով ու պատրաստուելով իր մտադրած ասպարէզին: Իր պատուական հայրը, որ այն ատենի Օսմանցի Մեծամեծներուն յարգելի մուշտակավաճառն էր, ջանք ու միջոց չէր խնայած իր զաւակաց կրթութեան: Գրիգորիկը սպերախա զաւակ մը չ'էր սակայն. կ'աշխատի, կը սովորի, և երբ 1870ին, մեծ պատերազմին, փառաւոր վկայականը գրպանը, կը վերադառնար Պոլիս, Շամուանճեաններու ծանօթները կը վկայեն բոլոր թէ Աւետիս աղայի ուրախութիւնը չափ չ'ունէր ի տես իր ուշիմ՝ զարգացեալ, գեղադէմ զաւակին: Եւ սակայն Աւետիս աղա պատրաստած չ'էր աղուն գործը. ուստի, օրին մէկը, անոր ձեռքէն բանած, կը տանի Կարաքօքլարի դուռը և հոն բարեկամ խնուծպանի մը քով կը դնէ:

— Այս Բարիգէն եկած զաւակս, կը գոչէ, թո՛ղ քիչ մը տան քովդ կենայ որ վարժուի, այս բարեկամութիւնը բրէ ինձի:

Խնուծպանը որ կ'անցնէր արդէն Աւետիս աղան, կը հաւանի և վար կը դնէ Գրիգորիկը: Բայց օրեր կ'անցնին և խեղճ պատանին տխուր է. յուսահատութիւնը մեծ է անոր: Բարիգէն դալ և շուրջն խնուծպանի քով ծառայել, չ'է, բլլալիք բան չէ այս: Ոչ թէ մեծամեղութեան գաղափարէ մը չարչարուելուն համար է այս տխրութիւնը, այլ իր ունեցած վիշտէն, յուսահատութեանէն. զի Գրիգորիկ պարզ, հեղ ու պարկեշտ աղայ մըն է: Վերջապէս, ամբողջ տասնէւհինգ օր, խնուծիւն ծրարներուն գէղին ետեւօքը պահուրտած, ամօթխած վիճակի մը մէջ, առանց կարենալ աշխատելու, Գրիգորիկ կը դիտէ եկող գացող յաճախորդները, կը լսէ անոնց աղմկալի ճիչերը, կը հանդուրժէ մերձակայ վաճառողներու հայհոյանքներուն, և օրին մէկն ալ, տեղ մը երթալու պատրուակաւ խնուծիւն կը հեռանայ, կ'երթայ:

— Հայրիկ, կ'աղբաւ՝ ողբալին, ես այդ չարչիւններուն մէջ չ'եմ կրնար սպրիլ: Զայնին շեշտը այն աստիճան խորագրեցիկ էր ու պատճառարանութիւնը այնքան արդարացի որ, Աւետիս աղա չի յանդիմաներ իր զաւակը, տունը կը պահէ զայն մինչև այն օրը որ, վերջապէս, Գրիգորիկ կ'անցնի իր գործին դուռը իրեններուն հետ, Այս միջոցէպը որ Գրիգոր Խանի երիտասարդական տարիներուն միակ տխուր եղելութիւնը եղած է իր հոգիին վրայ ազդող եւ զօր պատիւը բրած է ինձի պատմելու, ինչպէս կ'ընէր երբեմն իր բնակարանին մէջ մեր տանձնակի գիշերուլին զրազումներուն ատեն, կը բաւէ ինքնին ապացուցանելու գոյութիւնը այն մեծ զգացումին, զգացումը պարկեշտ յուսաջգիմութեան, որ անդիմադրելի ուժի մը նման, կը մղէր զինքը դէպ ի լուսադոյնը, դէպ ի կատարելագոյնը: Այս զգացումը չ'ունէր իր մէջ սակայն խել մը ուրիշներու մտացածին բաղձանքներու իրականացման սին գաղափարը, այլ մշակուած միտքի մը ունոյնքան կրթուած հօգիի մը մէկ թելադրութիւնն էր նախապիտուած, մտադրը-

ւած գործը ընձեռեալու եւ զայն ուղիղ ու հարթ ճամբէն քայլեցնելու տնչանքէն զոյսացած :

Տարիներ վերջ, իր աշխատութեան պաղաւոր արգասաւորման, իր գաղափարներուն փայլուն պատկուտին ու իր գիրքին, պատիւին փառաւորման արժանացած կրնայ նկատուիլ Իրիգոր Խան: Արդարեւ առեւտուրի վրայ իր ունեցած բարձր հայկեացեանքով և ունեւայով յարասեւութեան, ձեռներեցութեան և աշխատութեան ոգին, իրեն համար անընդունելի ու անարդարանալի պիտի ըլլար, ընդունուած սովորական հիմերու վրայ վաճառականութիւն ընելը: Հետեւաւար ինք տարբեր ուղղութիւն մը, լուսադոյն կազմակերպութիւն մը տուաւ իր գործին, փոխանակ Մանչէսթրի հրապարակին վրայ սահմանափակելու իր ուղղամտութիւնը, իր համբաւը, ուրիշ ընդարձակ միջավայրերու մէջ տարածեց զանոնք, արժէք տալ տուաւ անոնց, իր պատիւովը, իր խօսքովը, իր ներշնչած անասճման վառահոլութեամբը իր վարկը կրկնապատկեց, Շամտանճեան անունը օր օրի հիւրընկալել տուաւ Եւրոպայի բոլոր վաճառաւոր քաղաքներուն մէջ և ասանկով իր հոշակարարձագանգ գտաւ բոլոր կարեւոր հրապարակներու վրայ: Տակաւին ձեռքի տակ կ'զգամ հսկայ դէզը այն նամակներուն և հեռագիրներուն որոնք պաշարեցին զմեզ իր մահուան գուժին վրայ, և որոնցմով Շամտանճեան վաճառասան բարեկամ բոլոր գործարանատէրերը, բոլոր առեւտրական տուներու պետերը, բոլոր ծանօթները միահաղոյն իրենց անասճման վշտակցութեան, իրենց խորունկ ակնածանքին ու վատահոլութեան փայլուն և անկեղծ հաւատարմութեան և ապացոյցները կուտային, եղած դառն ու խռովայն կորուստին առթիւ: Իմ նկատումովս, այս հեռուոր արտայայտանքները վիշտի ու համակրանքի, աւելի խորագրեցիկ ու պերճախօս էին հանդէպ տրացեալին և կրցան անմահացնել անոր մեծ յիշատակը:

Աւսող, գործին յաջողութեան հետ, Իրիգոր Խանի կենցաղը նախանձելի յաջորդութիւն մը եղած էր, տարիներու երկար ընթացքի մը մէջ, անամպ երկինքի մը տակ ճաշակուած երանութեան ու հանգիստի: Ո՛չ որ կը զլանար իրեն սակայն իր արեւին այսքան լուսածաճանչ փայլիլը, և անիկա, իր ունեցածէն արդար բաժին մը հանեց տուաւ միշտ աղքատներուն, տնակներուն, որդեկեց զբարոցականներ, անոնց մասնագիտական արհեստի մը պէտք եղած աջակցութիւնը չի զլանալով: Հարիւր ոսկիի փոխարէն եկեղեցիի մը ծակաւոր ոսկեառ գիրերով իր անունին արձանագրութիւնը պահանջող հայերէն չէր: Ազատախօս ու վեհանձն մարդու սկզբունքներ ունէր և օր մը չէր փոխած զանոնք: Հաստատ կը կապուէր գաղափարի մը եթէ իր հոգին ու միտքը հաստատելին թէ կրնայ վատահիլ այդ գաղափարին — «Այս որքան դրամ է որ կուտան հիւանդանոցին, կ'ըսէր օր մը, հոն պատապարտօշները ինչի՞ պիտի ծառայեն չ'գիտեմ: Հիւանդ, փճացած սերունդէ մը ինչ խեր կրնանք սպասել, աւելի լուս պիտի չ'ըլլա՞ր որ հարուստները վաճառականական կամ ճարտարագործական մեծ դպրոց մը կանդնէին. ես կը հաւատամ թէ ապագային այդ վարժարանէն եթէ մէկ հոգի մ'ըն ալ կ'լլէ և հարուստանայ, կրնայ երկու հիւանդանոց մէկէն կանդնել:» Խօսելու ձե մը ունէր, որ երբէք չ'էր փոխեր իր նշարածքին հուրը և դէմքին լրջութիւնը: Այս պատճառաւ էր թերեւս որ զինքը մտիկ ընողը կը համոզուէր իսկոյն անոր պարզած գաղափարին ճշտութենէն և այդ գաղափարին ներշնչած վատահոլութենէն: Յետոյ, ամէն անգամ որ խօսէր, կը խօսէր գործէ գուրս նկութեան, խնդիրներու վրայ միայն և կը ծիծաղէր այն մարդոց վրայ որոնք թիւնէլին մէջն ալ գործի ու դրամի վրայ կը

ԿԻՐԱԿԻ. ք. թ. 24 Օգոստոս—Աղոսթոս Կ. Տ. 6 Սեպտեմբերի ՀձԲ. 10 Շապանի
 ✕ ՀԵ. և Կ. ՀԵ. վերափոխումին Ը. օրը. ԵՆ. Ս. Եւտրիբիոս վկայ. ԼՏ. Ս.
 Աղրիանոս վկայ:

ԵՐԵՈՒՇԲ. ք. թ. 25 Օգոստոս—Աղոսթոս Կ. Տ. 7 Սեպտեմբերի ՀձԲ. 11 Շապանի
 ՀԵ. և Կ. ՀԵ. վերափոխումին Թ. օրը. Հարսնիք. ԵՆ. Ս. Բարձրոցիմէոս և
 Տիտոս առաքեալներ. ԼՏ. Ս. Հռեզինա (Սագուհի) կոյս վկայուհի:

ԵՐԵՎՆԻ. ք. թ. 26 Օգոստոս—Աղոսթոս Կ. Տ. 8 Սեպտեմբերի ՀձԲ. 12 Շապանի
 ՀԵ. և Կ. ՀԵ.* Ս. Ս. Յովակիմ և Աննա՝ Ս. Աստուածածնի ծնողքը. և Իւզա-
 բեր կիները. ԵՆ. Ս. Ս. Աղրիանոս ու իր Անատոլա կիներ. ԼՏ.* Ս. Աստուա-
 ծածնի ծնունդը:

ԶՈՐԻՇԻ. -չ. թ. 27 Օգոստոս—Աղոսթոս Կ. Տ. 9 Սեպտեմբերի ՀձԲ. 13 Շապանի
 ՀԵ. և Կ. ՀԵ. Պահր. ԵՆ. Ս. Պիմէն հովիւ. ԼՏ. Ս. Գորդոնիոս վկայ:

ՀԻՆԳՇԻ. -չ. թ. 28 Օգոստոս—Աղոսթոս Կ. Տ. 10 Սեպտեմբերի ՀձԲ. 14 Շապանի
 ՀԵ. Ս. Երեմիա մարգարէ. Կ. ՀԵ. Ս. Ս. Բարեկաս հայրապետ՝ իր երեք աշա-
 կերտներով, Պիոն բահանայ, Ստեփանոս Ուլնեցի և Արզլահեհ վկայ. ԵՆ. Ս.
 Մովսէս Եմովպացի. ԼՏ. Ս. Պուզբերիա կայսրուհի:

ՈՒՐԱՍԹ. ք. թ. 29 Օգոստոս—Աղոսթոս Կ. Տ. 11 Սեպտեմբերի ՀձԲ. 15 Շապանի
 ՀԵ. և Կ. ՀԵ. Պահր. ԵՆ.* Ս. Յովհաննէս Մկրտիչի զլիսատուը. ԼՏ. Ս.
 Աստուածածնի անունին տօնը:

ՇԱՐԱԹ. ք. թ. 30 Օգոստոս—Աղոսթոս Կ. Տ. 12 Սեպտեմբերի ՀձԲ. 16 Շապանի
 ՀԵ. Ս. Ս. Թովմաս, Յակոբ և Շմառն առաքեալներ. Կ. ՀԵ. Ս. Թովմաս ա-
 ռաքեալ. ԵՆ. Ս. Աղեքսանդրոս Կ. Պօլիսի հայրապետ. ԼՏ. Ս. Սիդուանոս
 եպիսկոպոս:

Օգոստափառ Ղազի Սուլբան ԱՊՏԻԻԼ ՀԱՄԻՏ Բ. ԽԱՆԻ, ԹՈՒՐԲԻՈՅ Կայսեր
 ԾՆՆՈՒԵԱՆ Տարեդարը :

ՅՈՒՇԱՏԵՏՐ

24 ժգրատ. ԿԻՐ. [237—129] կէս օր. 5. 30

25 ժգրատ. ԲՂ. [238—128] կէս օր. 5. 32

26 ժգրատ. ԳՂ. [239—127] կէս օր. 5. 34

27 ժգրատ. ԴՂ. [240—126] կէս օր. 5. 35

28 ժգրատ. ԵՂ. [241—125] կէս օր. 5. 37

29 ժգրատ. ՈւՐ. [242—124] կէս օր. 5. 39

30 ժգրատ. ՇՐ. [243—123] կէս օր. 5. 40

վիճին, ճաշատեղանին վրայ ալ, իրենց ընտանիքի անդամներուն ներկայութեանը Կրիզոր Խանի համար գործը, առեւտուրի զբաղումը կը դադարէին երբ երեկոները, բանտի վերջին հարուածը կուտար ամբողջ օրը զրահի մը պէս զինքը կունակէն պաշարող հօկայ դրամարկիցին: Ի՞նչ այս մտածումներով, տարակուսելի չէր ուրեմն որ իրբե ճշմարիտ եւ օրինակելի վաճառական սպրելէ զատ, սպրել նաեւ իրբե աշխարհիկ ու ճաշակի տէր, նրբացած ու զարգացած անհատ, ընկերութիւնը, գեղարուեստը սիրող, յարգող ու ճաշակող անձ, իր բնակարանը համեստ թանգարան մըն էր հազուադեպ գեղորներու, ծանօթ նկարներու, և հոն կը փայլէր մանաւանդ այն ճոխ ու գեղեցիկ մատենադարանը որ տարիներով իր գուրգուրանքին ու խնամքին միակ առարկան եղաւ: Եւ Կրիզոր Խան կ'աշխատէր, անընդհատ կ'աշխատէր. բայց եղաւ որ պահ մը կտսի, յոգնութիւն զգայ, Թիշկներու խորհուրդով գնաց Մարտիկպատ, մէկ երկու տարի շարունակ, Վիեննայի մերձակայք համալուստը ջրաբաղարը քիմիական լուցանքներ ընելու: Հոն էր որ պատահամբ ներկայացուեցաւ հանգուցեալ Շահին, որովհետեւ այն տարիներուն, Կրիզոր Խան կը վարէր արդէն Պոլսոյ Կեսպանաստան երկրորդ թարգմանի պատուակալ պաշտօնը և կը կրէր իր գլխուն վրայ պարսկական գգակը: Բազմութեան մէջ, Նասրէտտին Շահ կը նշմարէ անծանօթ դէմքը, Շամտանճետը և կ'ըսէ քովինին համակրալիբ ժպիտով մը. — Voilà un bonnet bien porté.

Եւ կը փափաքի որ ներկայացուեն զայն իրեն: Կրիզոր Շամտանճետան, այդ օրէն, կ'արժանանայ Շահին գնահատումին ու յարգանքին, պատուըւելով Խանութեան տիրադատ, ընտանեկան ժառանգութեան հանգամանքով:

Երբ Կրիզոր Խան Պոլսու վերադարձաւ, կատարեալ յուզումով ու վերապահութեամբ կը յիշատակէր մեզ ամէնուս ուրախութիւն պատճառող այս պարագան, մինչդեռ ուրիշներ իր անզը սպասովարար պարծանքով ու յաւակնութեամբ պիտի խօսէին այս պատահումին ու եղելութեանը վրայ:

Եւ շարունակեց աշխատիլ, կեանքին միակ հաճոյքը սյդ եղաւ. աշխատութիւնը, առանց զեղծուածի, առանց խուսափանքի: Թերեւս այս էր որ կանուխէն ընկճեց զի՞քը, երբ սյիքան կորովի էր և առողջ տակաւին իր արտաքին երեւոյթով: Բայց թերեւս ալ աւելի շուտով ընկճուէր եթէ պատահէր որ դադարէր աշխատելէ: Իրականապէս, Կրիզոր Խան կը շարունակէր գործել նոյն այն ժրաջանութեամբ, յարատեւութեամբ որով սկսած էր, գուցէ զգալով թէ այս աշխատութեան շնորհիւն է որ հասած է կեանքի մեծաշուք ու երջանկաբեր հանգրուանին: Ա՛լ անգամ մը ճանչցուած էր, իր ամէն բարեմասնութեանը մէջ, զանազան պատուարեր պաշտօններու տիրացած էր: Առողջպահական Բարձր Ժողովը և դեսպանական նիստերու մէջ, իրբե արժէքաւոր պաշտօնակից և բարեհամբաւ անհատ գնահատուելով ամէնէն, հետեւարար կարելի չէր որ հեռանար ու խոյս տար այս ամէն բաներէն, յարաբերական բոլոր այս ամուր կապերէն, առանց ետին նայելու: Երբ մը, Պատրիարքարանի վարդեմի դիւանապետ Բարթող էֆթիլէանի հետ ունեցած մէկ տեսակցութեանը մէջ, երբ այս վերջինը չ'մեկնած, երկար տարիներու բազմապատկութիւն մը կը մտղթէր Կրիզոր Խանի, շնորհաւորելով իր գործին բազմապատկուած յաջողութիւնները, սղբացեալը, դառն ժպիտով մը կը պատասխանէ. — Ձեր պիտի փափաքէի շատ երկար սպրիլ, բայց կ'ուզեմ սպրիլ սյիքան որքան պէտք է զուակներս մարդելու և զանոնք գործիս վարժեցնելու համար: Կարելի՞ է ենթագրել թէ այս խօսքերը նախագացուած մը

«հրուած կ'արտայայտուէին իր բերնով, կամ թէ իրօք գեղեցիկ ծրագիրներ կային իր ներսիդին ծնունդ առած զորս չի գործադրած չէր ուզեր բաժնուիլ աշխարհէնս յիժին ու խորհրդաւոր հարցումի Իրականութիւնը սա է որ, շատ չանցած, Գրիգոր Խան, իր վերջին շունչը կ'արձակէր գիշեր մը յանկարծապէս, իր կրտսեր զաւկին թեւերուն մէջ հանգչեցնելով իր անկենդան գլուխը, օրհասի դժնեայ զօղանջին տակ, իր սիրելիներուն վերջին բառ մը արտասանելու երջանկութենէն զրկուած, իր կեանքին պէս հանդարտ, իր բնաւորութեան պէս համակերպօղ ու մտքուր մահով մը, գրգռեցնելով բոլոր հոգիները ու սարսափեցնելով բոլոր անոնք որ կը հաւատային իր մեծութեան, իր անզուգահանութեան և կը պարծենային իրմով և

Ստուգիւ, Գրիգոր Խանի անհետացումը ոչ միայն անդարմանելի է, Պօլիսի հոյերուն համար, իրբե պարկեշտ ու հոչակաւոր վաճառականի օրինակելի տեղաբար, այլ նաև իրբե անբասնի, կենցաղի, մեծ բարբոյ սկանի և դուժի, խղճմտանքի հաւատարմը անած հոգեկան զօրաւոր յատկութիւններու տէր փայլուն և առաքինի անհատ: Հիւզօի բաժին պէս.

— « Իր գերեզմանը մուտք է ու խաւար, թո՛ղ մեր մտածումները երթան գիշերանց լուսաւորել զայն, սպասելով մինչև առաւօտ »:

Թեբեւս այս ըլլար Գրիգոր Խանը ճշմարտապէս սիրողներուն միակ միիժարութիւնը:

Երես, 1 Մայիս 1907

ՆՈՐ ՄՐՅԱՆԱԿՆԵՐ. — (Այս դրուագը շարունակութիւնն է 184 եւ 200 էջերուն մէջ խօսուած Նօպելեան մրցանակներուն): Բնագիր-սուրբան՝ Եիֆակօցի Մր. Միֆէլարնի, Տարրաբանութեան՝ Պեռլինցի բօժ. Պիւլսների, Բժշկութեան՝ Բարիզցի Տֆ. Լավուանի, (կարգալ կենսագրեականը՝ Տէրգրահուլի Բէրլիներս ցանկին մէջ), եւ Գրականութեան՝ անգլ. վիպասան եւ բանաստեղծ Մր. Ռոքիարս Քիբլինկի:

ԱՌԱՅ. — Խեբէ՛ և Գրե՛ Դեբէ:

ՄՈՒԿՆ ԱՆԿԵԱԼ Ի ԴԱՐԱՆԻ

[Կ Ո Մ]

Ո՛հ, ո՞ւր իցեմ, զիս՞րդ յանկարծ ոսիցս զքնացք կապեցան,
Կամ արգիլեալ յանձուկ բանսի ոյր չէր սահման ընթացից.
Ես նեմէի ի լայնարձակ նոխ ապարանս մեծասան,
Տախտակամած կամ որմ խարխուլ չէր ինձ այո՛ յեսին զիծ :
Ըսեսմարանք պընդեալ աղխի ոչ վասըն իմ կարգեցան.
Ինձ նոյնգունակ էր օրեւան յարկ վարքամին բարեկից,
Որպէս ազգաս չբաւորին դոյզն պաշարոյն պահարան:
Աւա՛ղ բաղդիս, ո՛հ դըժպատեն ժամ չարաւուր արկածից

Մարդիկ ազան որկորածէս միտ կերակրոց կան ի պան,
Ահիս դողմամբ զի մի՛ լիցի իմիք անձանց պակասել.
Երբ անգոսնեալ զամուր դբրունս՝ զերկաթի նիզս մեք անան
Ի բուն մտան եւ յրսուման թափ անցանեմք անարգել,
Ի խորափիսս իսկ իցանեմք: Չլ՞նչ էան զայդ մեր գործ ի նան :
Մերոյին նե՛ս եղաւ յերկիր ընտիր խորսկօք սընանել ,
Չոր խափանել կարծեն մարդիկ ըզկամս էին զերագան ,
Գանձեալ ի խորսս մեր ըզսընունդ : Նաեւ նըզինն յառաւել :

Գիտեն փորձիս թէ մեք նարսարսս զիւրեանց ննարիւք ծիծաղիմք .
Հրակեմք արբուն, մինչդեռ նո՛ւս խորդան ի բուն կիսամեռ .
Թափեմք աւար յարդեանց նոցին եւ պարարին իսկ մեր հիմք :
Եղեալ ուրեմն յուսակորոյս ժրուրեմէս աներեր .
Ձի բընաւ իսկ յայննի կրուուով մըկանցս չոլիք ոչ ընկնիմք .
Գիմեն ի նենգ ամօթալիցք, ի վաս ծուղակ չարաբեր .
Գործեն դարան, եւ զի՞նչ զարմանք եթէ ի նոյն զայթակղիմք .
Ձի նարսարաց իսկ յանըզասս ո՛սն յորոգայթս թակարդէր :

Անա՛ իմ բաղդ չարագուեակ, զոր պատմեցին ինձ նախնիք ,
Եւ որք մըրցեալ դիւցազնաբար կացին մնացին անվընաս :
Ես մինչեւ ցարդ յաջողութեամբ տայի գործոցս միտ կընիք .
Եւ բընաւին ընդ վըսանիդ չէի արկած խելահաս :
Պարանեցայ արգ ի ժամուս, քողին ցաւոց իմ ողիք .
Բիւրիցս անէծս տամ խորհրդոյս գալ ի ներուսս դէպ ի յայս
Չընդան անել, յորում այժմիկ իբր գառագեղ ամբանից ,
Չերբ ծիրաժիր մտասակ առ իւծ զիս իսկ փակեաց դառն օրհաս :

Ո՞ր ձեռն անգուրք արկ աստուօր զապուխտ համեղ ի նաեակ ,
Յոր փութացեալ ես յանխորհուրդս զընտիրս ընդ միտ կորուսի :
Միքէ կըրկին յաւելուցո՞ւմ ուտել խորխիս քաղցրուակ ,
Կամ պարարիլ ի նարպ եւ միս յորոգայթից մեկուսի .

Յիւղեփեցաց հարսարարուես ընդմբսանել յրկահակ ,
Եւ ուր խորհիկ եւ համադամ կազմեն առաջ մեծարգի .
Քաղցրանաւակ կարն եւ պանիր, միրգ եւ պրսուղի եւ կարաց
Զիցե՞ն այլ եւս ինձ սեփական ախորժանամ ուսելի :

Սակայն ընդէ՞ր ըզկորբսեան ի զուր ըզվէպ յեղեղեմ :

Ազէ , սեսից եթէ ի դուրս զերժանելոյ զո՞յ հրնար :

Այլ այս ուսել՞ . ոչինչ նրեան աւեսալից ինձ ընդդէմ :

Զի՞ ծակամուտ ինձ բաւական սողոսկելոյ բրնաբար .

Պիղծ վանդակիս ներձուամբն անձուկ , ուր ըզբարս հազիլ քէ ղընեմ ,

Գուռնրն յանկարձ փակեալ ընդդէմ , նաեւ նորին չի՞ նրբար :

Այ՛ս զփայտեալ զորմ կամ զեփն սուր աւամամբ հասանեմ .

Այլ համառոտ ծամս վերանաս , եւ զորս ինքնին է երկար :

Գուցէ չեւ իմ հասեալ ի կէս անզուր նենգիչն զայ ասէն :

Այլ եւ ասի էր իմ արդեօք հարսարար ազատեալ ,

Թէ ի ներուտս չէի յուզեալ յանկարժանաս սազնապէն .

Մինչեւ բիրից սանել մահուանց է ինձ բսոյց հետքնկալ ,

Քան քէ հանդարտ կալ վայրիկ մի : Արդ եւ ընկերս ո՞ւր իցեն :

Թէ նըչնըչեմ ոչ նիչ ոչ հուչ ոչ նիկ նըմիչ նընուողեալ .

Ճընեհն ըզնիղմ մուկն նըղնասիրտ , հորտ նըղմնըմող յիւրն իսկ նես :

Զի նիչ եւ նուինչ չեն ինձ օնան , փախչին նեպ նեպ խուճապեալ :

Եթէ նո՛ս որ հուպ առ իս զուցէ կային յարեաւանս ,

Իսկոյն ընդ կռինչ անկման ղրբանցս , որ ինձ եղեն բօբաբեր ,

Յիրեանց դադար հասին հապնեպ : Միքէ՞ առ իմ նընուողանս

Ելցեն ի լոյս . լըցեալք անիւ բբուտաութեանցս զոլ ընկեր :

Այո՛ առոյց է մրկանց նէս . չունի զսիրոյն լոկ կապանս :

Զիա՞րդ ուրեմն կացեալ անգարձ ի յայս ծամուս մահաբեր ,

Եւ ըզմարմինս մրսօս հանդերձ սաց վայրապար յաւիասանս :

Ահա օրնասս հասեալ սակաւ զոր միսս բընա ոչ խորհեր :

Ելցէ արեւ մանահրաւեր , ինձ ցանց ոտիս յիերիմ ,

Եւ նենգաւորն այն ամարի այն ինչ իչեալ ի մաննէն ,

Գէպ յայս սեղի ուղղեսցէ զոսս , ուր եսս ցաւօք սազնապիմ .

Եկեսցէ յայց ելից ննարից՝ զոր մեզ լարեաց յերեկէն :

Նա ի նեռուտս զականջս սրէ , որպէս յրեսս ո՞ք նըղնիմ

Զի յոսնաձայն եւ ի շըռիճչ զիս ծանիցէ զոլ ասէն :

Այլ ես իսկոյն յիմ ընդոսից յանկեան ուրեք դադարիմ ,

Գուցէ ի յեսս դարձցի անյոյս , եւ ես զերժայց ձեռանէն :

Այլ քէ բընաւ դոյզն բընուութեամբ այն խուժադուժն շասացի՞ ,

Որ զօրն ցերեկ յայս որոգայք վաստակեցաւ բրնայան :

Ո՞հ արդարեւ հասցէ ասէն եւ խընդասցէ յիւր ոզի ,

Եթէ զբիւնալից զաչս յիմ վերայ շողացուցէ անխափան :

Առցէ յիւր ձեռուն եւ քարով զողջոյն ըզամբ շրջեսցէ,
Իւր մեղսակցաց ուրախ բանիւ անեսցէ բերկրածայն .
Յիս կուսեսցեն գազանամիսն առ ի յազուրդ սալ սրբի,
Շոյն եւ աչաց, իմս աղետիւք տօն կասարեն ցրնուրեան :

Արկցեն ի մէջ ասպարիզին այս յարդարեալ գազանաց .
Եւ երանի քէ մոկ միակ կասու լիցի ինն դանին :
Արիւնախանն եւ ընծակեայ վայրենասուն դաս կասուաց
Յիս խուժեսցեն ամենաբար բացման դրանցս ընդ շրոյնը .
Եղէց եւ ես հզօրագունին մասնեալ ի ձեռս ասամանց,
Եւ խաղալիք նորին ժանեաց, պիղծ բաղձանացն լըցուցիչ :
Ո՛հ անձկայի եքէ իսկոյն մէն մի մարմնոյս բոս յօղուած
Չիս յօռեսեալ, լինէր ըզնոյն քրեուառութեանցս գրաւիչ :

Այլ ոչ այսպէս : Շա խրժագոյն քան զամենեացն ողջ ջոյիր,
Մերք զիս ի վեր համբարնցէ յօղս, մերք ձրգեսցէ գիւնաբարե,
Ասամանցի յիս խոցս դիցէ, քաւալեսցէ ընդ երկիր,
Բիւր հարուածով հանիցէ զոգիս հեղձամրդանուկ աղեխաւրե :
Յայս տեսլարան վարանակալն շուրջ պար առեալ խընդալիր,
Եւ ո՛ր զիսէ, քէ նոքա եւս անձամբ ցուցեն ինն ըզարս,
Մինչչէ մասնեալ գազանակուր ժանեաց կասուին դիւակիր,
Կամ քէ ինքեանք լիցին դանինք ըզկեանս բառնալ դարձուդարն :

Բրօք արդեօք տացեն հարուածս, կամ արացեն զիս քարկոծ,
Պարան ի յոսս պրնդեալ ուժգին ձրգձրգեսցեն անդ եւ ասս,
Լուցցեն խարոյկ եւ սանջեսցեն ի կիրճանոս յայն ի բոց .
Կամ քէ ի ջուրս տառապեցայց սուգեալ յանդունդս չարաբաս :
Ահա բիւրով սրխաւտեակ ընկնին ողիւս ի ցաւոց .
Սակայն սրբիս չէ իսկ շիջեալ առոյց աշխոյժն բարեբաս .
Գուցէ պրծայց, քաջ մարտուցեալ ընդ չար բաղդին հարուածոց .
Այլ արդ եհաս ժամ հանդիսին, ահա նենգիչն իմ գայ աս :

[Գրեց **Նորայր Մաղաթիս Օրմանեան**, 1863 հունվար 8ին (Ն. Տ.), Վանքին մտահին-
վնասներ հասցուցող մուկի մը՝ երկար հետաձուրեցէ Եսֆ, մասակարարին ձեռքով ընճուէլուն
առփու] :

ԱՆՏԻՊ

ՋՈՒԹԱԿԻ ՄԸ ՇՈՒԲՋ. — Տարեցոյցիս 178 էջը կը պարունակէր
հետաքրքրական լուր մը՝ Բականիցիէն յիշատակ մնացած գեղարուես-
տական բանկագին առարկայի մը վրայօք : Հիմայ, աշխարհիս բոլոր
ողորմելի ջուրակահարները (racleur) փափաք կ'զգան քրքրատունե-
լու այդ պատմական ջուրակին քելերը : Մանաւանդ Ամերիկացիք
լր ցանկան կ'որ անել գայն՝ պահող պաշտօնեային խոստանալով
կարելու գումարներ : — Հրատուրի՛չ առաջարկներ, իրաւ, բայց կը
վախցուի որ պատմական այդ ջուրակը նդակոտոր ելլայ անհարակ-
ներու ձեռքին մէջ :

ԱՌԱՄ. — ՀՆԴՊՐԴ ԻՆՎԷՆ ԿՈՒՆԻՆ ԲՐԻՆ ԷՆ Ե՛

** Լրագրողին պարտքն է գոհացու՛մ տալ ամէն օր ընթերցողներու մտաւոր պէտքերուն, խօսիլ անոնց՝ ժամանակակից քաղաքակրթութեան բոլոր երեւոյթներուն վրայ, ուսումնասիրել անոնց բարքերը, կեանքը, մատնանիչ ընկելով անոնց թերի կողմերը և նախապաշարումները: Լրագրողը վեր պէտք է նկատուի ամէն անձնական հաշիւէ, ամէն կիրքէ, ամէն շահադէտ նկատումէ: ** Խելքը շատ անգամ չար կ'ընէ մարդը, թէև մի՛ թաւաքինութիւնը մտաւոր զարգացումն կը կարօտի: Տկարը, երբ բարի է, կը նմանի անվնաս միջատի մը որուն համար արժանիք մը չէ թոյն չունենալը: ** Պոլսեցի հայը վարժուած է կեղեւէն տարբեր բան մը փնտռել ինչպէս պտուղին՝ նոյնպէս կնոջ մէջ, — անոր հոգիին խանդավառութիւնը և մտքին աշխոյժը: ** Այն բանաստիղծները միայն որոնք սէրը երգած են, առանց դիմելու արուեստին գերանուրբ ճարտարութեանց, կրցած են ճշմարտապէս յուզել: Խորաթափանց վերլուծումները կազաւալին զգացումն պարզութիւնը: ** Գրականութեան սէրն ու ճաշակը կանանց մէջ՝ միշտ նուրբ և աշխուհական միտքի մը ապացոյցը նկատած եմ, մանաւանդ այն կնոջ քով՝ որ ճշմարիտ մայր մըն է, նախախնամութիւնը իր զաւակներուն, ճշմարիտ կին մը՝ իր ամուսինին, և ճշարիտ տանտիկին մը՝ օրհնութիւնը իր տան: ** Հեղինակութիւն ունեցող ձայն մը միշտ հզօր ազաւորութիւն կը թողու վրայ՝ նոյն իսկ երբ համազու՛մներուդ հակառակ խօսի, մանաւանդ երբ դեռ միտքդ վիճաշարի մը վրայ հաստատապէս տեղաւորուած չէ: ** Գրողները և ընթերցողները պէտք է գիտնան որ ժողովրդի մը գրականութեան զարգացման համար այնչափ կարեւոր է նորավէպը, քերթուածը, քրոնիկը, որչափ բանասիրական ուսումնասիրութիւնները, որոնք մանաւանդ փոխանցման մէջ զրտնրուող նորարողը՞ գրականութեան մը համար էական են: ** Հոգիի, վարդի, սոխակի բորբոսած նանրաբանութիւններ, դպրոցականի յաւակնոտ և ուռուցիկ ձառեր, պատուելիական քնարեր գրած ուածներ, բացազանչութեանց հաւաքածոներ բոլոր, որոնք վերացական սերունդի մը հոգեկան գլխաւոր սնունդը կազմած են ինչ հայ լրագրութեան մէջ:

ԿԻՐԱԿԻ. ԳՅ. **31** Սգոստոս—ԱղօսՅոս Կ. Տ. 13 Սեպտեմբերի ՀձՐ. 17 Շապան:
 ❖ **ՀԹ.** և **ԵՆ.** Ս. Աստուածածնի գօտիին զանուխլը **Կ.** **ՀԹ.** Գ. կիրակի վե-
 րափոխումէն յետոյ **ԼՏ.** Ս. Յովհանն Ոսկերբան հայրապետ:

ԵՐԼՈՒՇԻ. ԳՅ. **1** Սեպտեմբեր—Իլուլ. Կ. Տ. 14 Սեպտեմբերի ՀձՐ. 18 Շապան:
ՀԹ. Ս. Ս. Ստեփանոս Ուլնցի, Գոհարիտոս, Եամիդոս, Տուբիկոս և Ռատիկոս
 վկաների Հարսնիք: **Կ.** **ՀԹ.** Ս. Ս. Անդրէաս զօրավար ու իր բանակը, Կալինիկոս
 վկայ, և Աղբրանոս ու իր Անատոլա կիներ, և Թէոդորոս ստրատելատ Արակլացի
 և Թիւրոս վկայ: **ԵՆ.** Ս. Սիմէոն սիւնակեաց: Եկեղեցական տարեմուտ: **ԼՏ.***
 Խաչվերաց:

ԵՐԵՒՇԻ. ԳՅ. **2** Սեպտեմբեր—Իլուլ. Կ. Տ. 15 Սեպտեմբերի ՀձՐ. 19 Շապան:
ՀԹ. Ս. Ս. Եզեկիէլ և Եզր մարգարէներ, և Զաքարիա՝ Յովհաննէս Մկրտիչի
 հայրը: **Կ.** **ՀԹ.** Ս. Ս. Թարգմանիչներ, Մեսրոպ վարդապետ, Եղիշէ, Մովսէս
 բերթող, Դաւիթ անյաղժ փրկիսօփայ, Գրիգոր Նարեկացի, Ներսէս Կլայեցի և
 Ներսէս Լամբրոնացի: **ԵՆ.** Ս. Ս. Մանաս վկայ: **ԼՏ.** Ս. Նիկոմիդէս վկայ:

ԶՈՐԻՇԻ. ԳՅ. **3** Սեպտեմբեր—Իլուլ. Կ. Տ. 16 Սեպտեմբերի ՀձՐ. 20 Շապան:
ՀԹ. և **Կ.** **ՀԹ.** Պահք: **ԵՆ.** Ս. Անթիմոս Նիկոմիդիոյ եպիսկոպոս **ԼՏ.** Ս.
 Եպիմէ կոյս վկայուհի:

ՀԻՆԳՇԻ. ԳՅ. **4** Սեպտեմբեր—Իլուլ. Կ. Տ. 17 Սեպտեմբերի ՀձՐ. 21 Շապան:
ՀԹ. Ս. Ս. Յովհաննէս Կարապետ և Յօր արզար: **Կ.** **ՀԹ.** Ս. Ս. Երեմիա, Եզե-
 կիէլ, Եզր և Զաքարիա մարգարէներ, և Յովհաննէս Կարապետ և Յօր արզար:
ԵՆ. Ս. Բարեկաս՝ Անտիոքի հայրապետ **ԼՏ.** Ս. Փրանկիակոս Ասիզացիի խո-
 ջերուն յիշատակը:

ՈՒՐԱՍԹ. ԳՅ. **5** Սեպտեմբեր—Իլուլ. Կ. Տ. 18 Սեպտեմբերի ՀձՐ. 22 Շապան:
ՀԹ. և **Կ.** **ՀԹ.** Պահք: **ԵՆ.** Ս. Զաքարիա մարգարէ: **ԼՏ.** Ս. Յովսէփ Գօթեր.
 Թինո կրօնաւոր ՇՈՒԷՏԻ Թագաւորին զահակալումիւներ:

ՇԱՐԱԹ. ԳՅ. **6** Սեպտեմբեր—Իլուլ. Կ. Տ. 19 Սեպտեմբերի ՀձՐ. 23 Շապան:
ՀԹ. և **Կ.** **ՀԹ.** Նիկիոյ Ս. Ժողովն՝ երեք հարիւր տասնը ուժը հայրապետներով:
ԵՆ.* Ս. Միքայէլ հրեշտակապետ: Արտերու տօն: **ԼՏ.** Ս. Գենարիոս եպիսկոպ.

ՅՈՒՇԱՏԵՏՐ

31 Օգոստ. կիր. [244—122] կէս օր. 5. 42

1 Սեպտ. Բշ. [245—121] կէս օր. 5. 44

2 Սեպտ. Գշ. [246—120] կէս օր. 5. 45

3 Սեպտ. Դշ. [247—119] կէս օր. 5. 47

4 Սեպտ. Եշ. [248—118] կէս օր. 5. 49

5 Սեպտ. Ուր. [249—117] կէս օր. 5. 50

6 Սեպտ. Շր. [250—116] կէս օր. 5. 52



Յ. Գ. ՄՐՄԱՐԵԱՆ

ծն. 1860: Միտաբեան պատուելիի ամսն Բանասէր-Փիլիսոփոս. հեղինակ՝ իմաստասիրական եւ կենսագրա-պատմական լուրջ հաստուններու, ևւայլն:

անհուններն, որոցմէ կրնանք մտնել տիեզերական մեծ դարպասին խորհրդարանը՝ սեւեռած Աստուծոյ մեծ անուններն, անկեղծ ու մաքուր սիրտով միտնին * Անկեղծ անձայն բաղանջայնը՝ ձայնաւոր համակրութենէն խոր կը թուի. Տե՛ս աստեղց, արեւին, լուսնին, արշալոյսին, վերջալոյսին և կոյս նայուածքին խոր ու անձայն համակրութիւնը: * Մի՛ տք, մարմին, ինձ և աւանդութիւն, հերիք է որ խաթարած չըլլան փիլիսոփայութեանց կամեութիւններով, կը վկայեն միշտ՝ թէ բընամերձ երանելի բարձրութենէ մը ինկած է մարդ, այսպէս կրեն նաև բուն կրօնը: * Տեսիլներն երազներն ու նախազգացումները՝ մեծ մասով՝ գիշեր ատեն սենեակի մէջ փակուած լոյսերն են, որ կը ցոլացունեն՝ հոգեաւետութեան պատուհաններէն՝ դուրսի խաւարին մէջ անցած դարձած անցեալի ներկայի ու ապագայի իրողութիւնները, կցորդ տիեզերքի անհուն իրողութեանց մեծ բովանդակին: * Իրաւապէս կրնանք բսել մե՛ծ յամառներուն—բնութեան վարիչը դրած է անհատ ու անյեղի գնացք մը իրերու և գաղափարներու կարգին մէջ. Դո՛ւն, ո՛վ մարդ մահկանացու, երբ կը պնդես անմահութեամբ չափ քու կամքիդ ու գաղափարներուդ անփոփոխելիութեան վրայ՝ կրնաս պնդել ևս տրամաբանութեամբ՝ որ քու մահկանացու բնութիւնդ ու խելքդ լարած ես այդ անհատ ու անյեղի գնացքին մշտնջեան համեմատութեամբ, և՛ ըստ այդմ՝ իրաւունք ու-

* * Առաքինի իմաստութեան դո՛րձն է պաշտել ու պաշտպանել ո՛չ միայն յաղթական տիրող ճշմարտութիւնը կամ օրակարգը, այլ մանաւանդ նաև զա՛յն՝ որ անփառ ինկած ու վտարուած է. այս է ու պէտք է ըլլայ կրօնքներու գործը: * * Դիտելու արժանի է՝ որ Վոյդէր ու Պըքլ (առաջինն՝ իր Ազգաց եզույն եւ բարուց Ձեռնարկին, ու երկրորդը՝ Անգղիոյ Բաղմակեր. պատմութեան մէջ), երկու աջող այլ յեղմանց Զատագով գրողներ, հաւասար արհամարհութեամբ եւ ատելութեամբ խօսած են հին ու նոր հրէից՝ այն ահաւորապէս լուրջ և հաշուող ազգին վրայ, որ տուած է իբր աշխարհի կէտին՝ իր կրօնքին ու նախնական պատմութեան հիմ մասը. այս պարագան շնչանակե՞ր այդ հեղինակներուն և իրենց հետեւողներուն վրայ՝ հանդէպ ճշմարտութեան և պատմութեան թեթեւութիւն մը ակներև, որ թուի մայրազիրն է իրենց գրեթէ բոլոր մեծ կարծուած գործերուն: * Իմացական և աշխարհագրական հորիզոններն՝ անփակ դուռներն են

ներս պնդելու յամառելու. քեզի՛ կը թողում՝ բովանդակ յամառութեամբիդ մտա-
 ծել ասո՛ր վրայ : ** Լ'նչ կայ գիշերուան լուսթեան պէս երկունք մը լուրջ,
 տունընջան պէս գործունէութիւն մը տիեզերական, արեգակի լոյսին նման մա-
 քուր, սիրոյ և անհունին պէս լայն ու հզօր և մեղքի պէս մն'ւթ ու ամբայլի՛ :
 ** Վիշտ'րը, ա'հ, վիշտ'րը, որոնց դէմ կը բողոքենք 'ի զուր և անզօր, որոնց հա-
 մար թշուառ կըլլանք առանց անգրագառնալու անոնց պորը պատճառներուն
 'ի մեղ. Լ'նչ գասեր մը կուտան միւտ մեզի այդ վիշտերը, Լ'նչ սպազայ օգուա-
 ներու ագամանդներ կըրնայինք որսալ անոնց հրեղէն ցանցերուն մէջէն՝ եթէ միայն
 ճանչնայինք մեր սխայները, որոնց արգիւնքն են անոնք, և անոնցմով իմատնանա-
 լու 'ի գործ գնելով մեր ներքին բարոյացուցիչ յոժը, որ շնորհն է կրօնքին, Արարի-
 չին, մե՛ծ տիեզերակա՛ն կրթիչին : ** Բարի՛ է ամէն բան՝ որ կայ ու կը ներկայա-
 նայ իր ճշմարտ կերպարանքովն և կը սպասուտրէ տիեզերական մեծ բարիին
 լրման : ** Եթէ Պղատն չըլլար բանաստեղծ ու տարփող ներգաշնակութեանց
 (այսինքն՝ իր հսկայ և մաքուր միտքին հետ չունենար նաև հսկայ՝ սէր մը սիր-
 տին մէջ)՝ իր փիլիսոփայութիւնը չպիտի տուէր գա՛ր մը անգամ, ու իր գաղա-
 փաները պիտի մնային թաղուէին՝ ինչպէս մարգարիտներ աղբււաց մէջ : Արեստ-
 տէ՛լ միայն կըրցաւ՝ լոկ այնբան գիտութեամբն՝ յաւերժանալ առանց երեւելի
 բանաստեղծութեան մը, և ո՞վ գիտէ թէ ինք չունէր՝ իր այն տիեզերական հըմ-
 առութեանց քարտին յատակը տրոփեցունող բանաստե՛ղծ ալ մեծ հագի մը, ինչ-
 պէս ունէին Լայպնից ու Նեւտոն : Քաղաքագիտութեան վրայ իր հըրակապ գիբքն
 ու Տիեզերքի վրայ իր փոքրիկ այլ անհունով լեցուն ընծառուածը, որ անվաւեր
 կը համարուի թերեւս անվաւերաբար, իմատնական և քնարական լուրջ ու բարձր
 բանաստեղծութիւններ մը չեն արգէն : ** Չգտումն առ խորհուրդն նախնական
 վիճակի մը՝ ցոյց և նշան մըն է գոյութեանն այդպիսի վիճակի մը. թէ ինչպիսի՛
 էր այդ վիճակն իմանալու համար գէթ մտատեսութեամբ, պէտք է խորապէս
 երեւակայել անմեղ սրբակիր մարդութիւն մը, մարդութիւն մը մտաւորագոյն
 մանկականին կամ հուպ վերջին վախճանականին, (այսինքն՝ մահամերձին) :

31 Mars 1907
 Իւսիխար

Յ. Գ. Մրտչեան



ՊԱՏԿԱՌՆԵԼԻ՛ ԳՈՒՄԱՐ. — Շուներու 32րդ ցուցահանգէսը բացուեցաւ այս
 օրերուս Լոնտոն, Վիպթիլ Բէլէսթի մէջ, Բոլորին մէջէն հասա մը կար, — պահա-
 պան շուն մը, 1 էտի շուկայի կողմէ խրկուած, — որուն արժէքն էր 225,000 ֆր. :

ԱՌԱՄ. — Տէր քնն հէրու, որ քեթարսի . . . քննու :

ԿԻՐԱՆԻ. ԲԷ. 7 Սեպտեմբեր—Իլուլ, Կ. Տ. 20 Սեպտեմբեր, ՀձԲ. 24 Շապան
 ✱ **ՀՅ.** և **Կ. ՀՅ.** Գ. կիրակի վերափոխումէն յետոյ Ս. Խաչի պահրին բար-
 կենդանը **ՅՆ.** Ս. Սոգոն վկայ: **ԼՏ.** Ս. Եւտարէոս վկայ:

ՆՐԿՈՒՇՐ. ԳԿ. 8 Սեպտեմբեր—Իլուլ, Կ. Տ. 21 Սեպտեմբեր, ՀձԲ. 25 Շապան
 ✱ **ՀՅ.** և **Կ. ՀՅ.** և **ՅՆ.** Ս. Ասուածամնի ծնունդը Աննայէն Խաչի պահրին
 Ա. օրը **ԼՏ.** Ս. Մատթէոս աւետարանիչ:

ՆՐԵՒՇՐ. ԳԶ. 9 Սեպտեմբեր—Իլուլ, Կ. Տ. 22 Սեպտեմբեր, ՀձԲ. 26 Շապան
ՀՅ. և **Կ. ՀՅ.** Խաչի պահրին Բ. օրը **ՅՆ.** Ս.Ս. Յովակիմ և Աննա **ԼՏ.** Ս.
 Թովմաս եպիսկոպոս վելլանովոցի:

ՉՈՐԵՇՐ. ԴԿ. 10 Սեպտեմբեր—Իլուլ, Կ. Տ. 23 Սեպտեմբեր, ՀձԲ. 27 Շապան
ՀՅ. և **Կ. ՀՅ.** Խաչի պահրին Գ. օրը **ՅՆ.** Ս. Ս. Մինտորոս, Մխարատորա
 և Կիմիատորա վկայո՛հիներ **ԼՏ.** Ս. Թեկղի կոյս **ՏՃ.** Պիւրծի Միգան (կշիռ):
 Իմխալը հարիֆի—Աշնտնամուտ և հասարակած, ցրեկ զիշեր հուասար Կե-
 ղարի ջուրերուն նուագելուն սկիզբը

ՀԻՆԳՇՐ. ԴԶ. 11 Սեպտեմբեր—Իլուլ, Կ. Տ. 24 Սեպտեմբեր, ՀձԲ. 28 Շապան
ՀՅ. և **Կ. ՀՅ.** Խաչի պահրին Դ. օրը **ՅՆ.** Ս. Թէոդորոս կուսան **ԼՏ.** Ս.
 Լինոս Հռոմի հայրապետ

ՈՒՐԱԹ. ԵԿ. 12 Սեպտեմբեր—Իլուլ, Կ. Տ. 25 Սեպտեմբեր, ՀձԲ. 29 Շապան
ՀՅ. և **Կ. ՀՅ.** Խաչի պահրին Ե. օրը **ՅՆ.** Ս. Աւստնոնս վկայ: **ԼՏ.** Ս.
 Փիրմինոս եպիսկոպոս վկայ:

ՇԱՐԱԹ. ԵԶ. 13 Սեպտեմբեր—Իլուլ, Կ. Տ. 26 Սեպտեմբեր, ՀձԲ. 1 Բամազան
ՀՅ. և **Կ. ՀՅ.** Եկեղեցւոյ սուն Ս. Խաչին նուակատիրը **ՅՆ.** Ս. Կուռնելիոս
 վկայ: **ԼՏ.** Ս. Ս. Կիպրիանոս եպիսկոպոս և Յուստինէ վկայուհի **ՀՐ.** Թշրի
 ամիս, և 5669 Թուականին Տարեմուտի սունին առաջին օրը

ՅՈՒՇԱՏԵՏՐ

7 Սեպտ. Կիր. [251—115] Կէս օր. 5. 53

8 Սեպտ. Բշ. [252—114] Կէս օր. 5. 55

9 Սեպտ. Գշ. [253—113] Կէս օր. 5. 57

10 Սեպտ. Դշ. [254—112] Կէս օր. 5. 59

11 Սեպտ. Եշ. [255—111] Կէս օր. 6. 01

12 Սեպտ. Ուր. [256—110] Կէս օր. 6. 02

13 Սեպտ. Շր. [257—109] Կէս օր. 6. 04

ՏԲԹ. ՅՈՎՀ. ԳՐԲԳՃԵԱՆ. ՄԵՐ. օգոստ. 22, Հուլիս՝ սոր լը պուլսեմուրեբ
էբր զն. Բժէլլ: Գնդարդեր. Ունի գտրիլ իրա լը ասղի՞ն խմանն ու գրդրոյն:

ՏԲԹ. ՆՇԱՆ ԲՅՎԱԶՆԱՆ. ՄԵՐ. օգոստ. 24, Բեբա. Ծն. 1844: Թուլա
պերտիւն Պ. լըլաննի Բժէլլ, նախիկ Բժէլլպեր Ազգ. հիւանդանոցն և Պարտի Գեւ
պանդան: Ա իջայսոսի Իրալիս հմաւարանն: 6 արտի արաւ իրանոյս իսլաիցը: —
գեղարտերգեր և ասլ արունսհար, — Ելանն Գեթ լը՝ Ժեր էիւնն ու իրանն ան
հերոյոյն:

ԷՄՄՈՆՈՒԷԼ ԵԱՍՅԵԱՆ. ՄԵՐ. օգոստ. 25: Սան Վեներդիլի Մ. Ռոպուլա
էան իրքնն. 1850-57: Հայ հմաւ. Բանաստեղծ և Բարբերէբ: Ձերտ գրքերուն լը
Ունի Բարբերանն էրիբը՝ անդաւ:

ԱՒԱԳ ՀԱՄԲԱՐԵԱՆ. ՄԵՐ. օգոստ. 26, Իւզդը. Ծն. Տըպուլան: Արաւիկ
նասարդեր իջայսոսի՝ Ծուլայն պուլսեմուրանն և արաննն՝ զանազան լոգ. ընկերոս
Քիւննիբը արաւարտոսի պարսաբեր պուլսեմուր:

ՏԿ. ԼՈՒՍԻՅԱՆ ԳԱԶԱՐԵԱՆ. ՄԵՐ. օգոստ. 30, Անթուր. Ծն. 1844: 1000
չիբ նախնն ըլլաւ ասղի՞ն գրդրոյնն, Բաւաւնն՝ խմանն Բուլ:

ՍԱՐԳԻՍ ԳԱՍԱՊԵԱՆ. ՄԵՐ. սեպտ. Պարտիլաւ. Ծն. 1842: Հայ Բաւաւնն
Ռոսոյնը պեղան Ատրիիէն իրքնն. և իրաւ իրտեան: Հրարարուն՝ Բանաստեղծ
յարաւանն և Տաւաւնն Բեբան Բեբ լը՝ 1887:

† ԱՅԵՓԱՆ Ա. ՔՀՆՅ. ԱԹԱՆԱՍԵԱՆ. ՎԱԻՃ. սեպտ. 21, Արաւաւ. Ծն.
1836, անդ: Քահանայ նեւարդ. 1866: Երբ արքիեպոսոսն ըրաւ ասղի՞ն
գրդրը, լըրաւ՝ «Վանանը լըրանն, արեւապերտն՝ էրքե՞ն «Քահանայան խաւնն
և անարաւոյն՝ գոսարուն իրանն խաւնն:

ՄՈՒՂՈՒՆԵԱՆ. ՄԵՐ. հոկտ. Բարիլ: Ծն. 1883: Արաւիկ իրքնն «Բեբա»
հայ արտերգեր, արան նախնն ու իրաւնն Բեբան զեք իրաւաւ իրանն
Քիւն. Մոսաւ:

ՎԵՐ. ՃԻՆԱՆԵԱՆ. ՄԵՐ. հոկտ. Նիւ Երտ: Ծն. Մարալ: Հիճարդը Տըպ
անի Ս. Պաւա և Գեթայն Ճիւննն Արաւանն: Կարաւ ասղի՞ն Բաւաւ. ոչ պայ
ասղ լը Բեբան Բեբան Գեթ:

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԳԱՍՊԱՐԵԱՆ. ՄԵՐ. հոկտ. 10. Արանաստեղծ: Նախարդ Բ.
գործարար Ազգ. Պարտիլաւնն՝ սոր ին արդ պուլսեմուր, 1855ն իսլաւ:
Վերջեր հանգրեան իսլաւ:

ԳԱՍՊԱՐ ՄՈՐԿՈՍԵԱՆ. ՄԵՐ. հոկտ. 10, Պարանպա (Իւզդը): Իր խման
նախնն արանննն, Բանաստեղծ՝ ասղի՞ն Բեբան. անցը լըրաւն, նայն արեւն
Քիւնննն զը հրարարուն լըլը զանազան արանաստեղծ:

✳ Ն. Ս. ՕՐՈՒԹԻՒՆ Տ. Տ. ՄԿՐՏԻՉ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ
ՀԱՅՈՅ. ՎԱԻՃ. հոկտ. 29, Մար Արա (Իւզդը): Ծն. 1820, սոր. 5, Վան:
Քիւնն. նեւարդ. 1868 հոկտ. 18, Կ. Պաւլոս Պարտիլաւ ընար. 1869: Կաթաւ ընար.
1892 հոկտ. 5: Օրոսն 1893 հոկտ. 26: Թաւան իրաւ իրարոսն 1907 նայ. 6: Քաւ
հայգեր. Բեբիլ լըրաւնն լը: Նախարդն արանննն և զանոս լըրաննն, ու ինն
Բեբան լըրաւ իրաննն ինն իսլաւն ընարանն:

ԱԼԻԲԱՆ ՍՈՒԳԱՅԵԱՆ. ՄԵՐ. նայ. 9. Իսլաւար: Ծն. 1810, Կեթիլ
Բաւա: Սան Բեբանննն Գր. Պարտիլիլ և Հիճա Պաւալ: Արանաստեղծ
պարտիլիլ լըրաւ զորտարարանննն արանննն՝ Ճիւնննն Միլ. Բարիլ, յերայ
գորտնն՝ Ազգ. Պարտիլաւնն Ա. գորտննն, Պաւա և Միլ. Պարտիլաւննն
գրաւ, իրաւնն հրաւարաւ լըլը արաննննն: Վերջին պուլսեմուր իսլաւն՝ Արաւաւաւ
Բեբան Արաւաւ լըրաւննն զըլ:

ՊԵՐՏՈՒՆ ՊՈՕՇԵԱՆՅ. ՄԵՐ. նայ. Ռոսոսայ նախնն լըրաւնն:

ՄԻՀՐԱՆ ՄԱՐՏԻԿԵԱՆ. ՄԵՐ. նայ. 27, Բեբա: Նախնն և պարտիլաւն:

ՏԻԵԶԵՐԱՆՌԶԱԿ ԲԺԻՇԿՆԵՐ

Քուարկուած անուցները փնտել լուսանկարներու զոյգ
ԲԱՆՆՇԻՆ վրայ նոյն քիւերով :

Ա.—ՆԵՐՔԻՆ ԱՅՏԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍՆԱԳԷՏՆԵՐ

ԱՇԱՌ (Շառլ). Ուսուցիչ Բարիդի բժշկանոցի, բժիշկ Թէնօն Հիւանդանոցի
 34. ԱՌԼՈՒԱՆ. Ուս. Լիօնի բժշկանոցի ներկայ գտնուած է Բարիդի Մեծ Պայտար
 1905 Հոկտ. 2—7ին գումարուած թորախաի համաժողովին: 47. ԱՌՆՈԶԱՆ. Ուս.
 ախտաբուժութեան Պոստօի բժշկանոցի: 48. ԲԱՆՎԻԶ. Կերմ. ուս. Պէռլինի
 բժշկանոցի: ներկայ գտնուած է 1905ի թորախաի համաժողովին: 5. ԲԱՍ-
 ԹԷՆՈՒ (Լուի). Ֆրնս. հասակաւոր քիմիարան, ծն. Տօլ (Ժիւռա) 1822,
 մեռ. 1895: Մարդկութեան մեծ բարերարը կոչուած՝ բժշկութեան մատու-
 ցած իր թանկագին ծանուցութիւններով, (միքրոպներու խուզարկութիւն,
 կատաղարուժութիւն, հլն.): իր անունով հաստատութիւններ կան: 48.
 ԲԻՒՅՈ. Ուս. մահճարուժարանի՝ Պոստօի բժշկանոցի: 3. ԲՈՒՄԷ (Բիէռ Շառլ
 Էտուառ). ծն. Բարիդ 1825, մեռ. 1901: Անուանի ուս. մահճարուժարանի. կա-
 ճառորդ: 53. ԳԱԼԷՆԱ. (Ժիւլիէն). Բժշկագետ Մատրիաի բժշկանոցի, նախագահ
 Արքուսի բժշ. Ակադէմիայի: 33. ԳԱԼՄԷՐ (Ա.). Տնօրէն Լիլի Բապթէտեան հաս-
 տատութեան, թղթ. անգամ կաճառին և Բարիդի բժշ. Ակադէմիայի: 39. ԳԱ-
 ՌԻԼԵ. Ուս. մահճարուժարանի՝ Մօնթէլիէի բժշկանոցի: 7. ԳՈՍ (Ռօպէրթ). ծն.
 1843, Կլաուսթալ, Կերմ. ուս. Պէռլինի բժշկանոցի: 1900ին Լոնտոն գումարուած
 համաժողովին ներկայցի հիւճախաի միքրոպը, յայտարարելով թէ արջաուսյին և
 մարդկային հիւճախաները բոլորովին տարբեր են իրարէ, բայց անիբաւ ելուս: 31.
 ԳՈՒՆԻՆ. Ուս. ախտաբանական հերձազնութեան՝ Բարիդի բժշկանոցի: 35. ԻԼԻՅ-
 ՍԻԼ. Ուս. ներքին ախտաբանութեան Լիօնի բժշկանոցի: 31. ԻՍԻՍԻ (Սիժիանօն). ծն.
 1830, Ժրնէվ: Հանգուցեալ ուս. Բարիդի բժշկանոցի: 42. ԻՍԻՊԷՆ. Ուս.
 ախտաբուժութեան՝ Բարիդի բժշկանոցի և անգամ Ակադէմիայի:

ԲԱՌԱԿԻՏՈՒԹԻՒՆ. - Ախտաբան, pathologiste. Ականջաբոյժ, oricliste. Ակնաբոյժ, oculiste.
 Ակնաբան, ophthalmologue. Անգամահերձ, prosecteur. Ռուչախոյաբան, laryngologue. Կնիսա-
 բան, gynécologue. Հիւսնածաբան, histologiste. Մանկաբան բժիշկ, méd. accoucheur. Բիմարաբոյժ,
 aliéniste. Զգաբան, neurologue. Ունգաբան, rhinologue. Վիրաբոյժ, chirurgien. - Ականջաբուժիչ և
 auscultation. Ախտաբանական ներանցնութիւն, anatomie pathologique. Անգամազնութիւն, ana-
 tomie. Ախտաբուժութիւն, thérapie. Միլանցի, voix unaires. Մորթաքանութիւն, dermatolo-
 gie. Մորթախ, maladie cutanée. Վենեայի, mal. syphilitique. Վիրահասական բժշկութիւն, Mé-
 decine opératoire: - Ապաստանաբան (ծեր հիւանդներու սածման վայր) asile. Բժշկանոց, Faculté de
 Médecine. Մանաբուժարան (գործանցաւուց ուր աւակիրներ գործնական բժշկութիւն կը սոր-
 վին, հիւանդներու մահիցներուց օտրջ), clinique. Անկիւանոց յիմար-գասուկներու ի Բարիդ.
 Salpêtrière: - Բժշկագիտ. doyen (երէց անգամ). Բուց անգամ, membre titulaire. Կեր-ուսուցիչ,
 agrégé (մրցամար ընդունուած ուս.). Կանառոյ, membre de l'Institut. Պատերազմ, délégué:

Ժամանակակից տիեզերահաշուակ հեղինակաւոր բժիշկներու ոչ բնական
 կարգով խմբուած այս անուանացանկէն տակաւին դուրս կը մնան՝ ամանք իրենց
 պատկերներով, ուրիշներ՝ բոլորովին: Սակայն ստիպուեցանք զանց ընել զանոնք:
 Ամէնուն Տարեցոյցին սուղ էջերը նկատի առնելով: Ի. Յ.



ՏԻՐ. ՍԱՄՈՒԷԼ ԽԱՆ

Կայս. Բժշկական Վարժարանէն վկայուած 1881ին. Բժիշկ Կ. Պօլիսի Պարսից Դեսպանատան, եւ նորընտիր Պարսկական պատուիրակ (délégué) Առողջապահական Բարձրագոյն Ժողովի եղ այր «Տարեցոյ»իս հեղինակին»

2. Աւելնելի (Ռքնէ Թէօֆիլ Իստէնթ). Ին. Գէմբէա, 1781, մեռ. 1826-
 ֆրնս. նշանաւոր բժիշկ, հեղինակ և տարածիչ՝ ականջարդութեան եղանակի,
 նաև շնչառական գործարաններու մեծ խուզարկուս ։ ԱՍնՏՈՒԶԻ (Լուի). Ուս.
 Բարիդի բժշկանոցի, բժիշկ Լաէնէք հիւանդանոցի, անդամ բժշ. Ակադէմիայի
 ։ ԱՎՎՌԱՆ (Ա.). Ուս. Վալ տը Կասս բժշկանոցի, անդամ բժշ. Ակադէմիայի,
 Թղթ. անդամ Կաճառին ։ 36. Լէիին. Ուս. մահճարուժարանի՝ Լիօնի բժշկա-
 նոցի ։ 50. ԼԲՏԻԻՔ. Ուս. բնագիտութեան՝ Նանթի բժշ. վարժարանի ։ 18-
 ԿՈՒՆՏԷՒ (Ժագ Ժօզէֆ). Ին. 1843. Մասնագէտ ուս. հիւանդ մանուկներու մահ-
 ճարուժարանի՝ Բարիդի բժշկանոցի ։ ՀԱՆԷՄ (Ժօնժ). Ուս. Բարիդի բժշկանոցի,
 անդամ բժշ. Ակադէմիայի ։ 28. ՀիիՇԱՌ (Հ.). Սիրտի հիւանդութեանց մաս-
 նագէտ. Ուս. Բարիդի բժշկանոցի, անդամ բժշ. Ակադէմիայի, բժիշկ Նէքէա հի-
 ւանդանոցի ։ 43. ՀիիՇԻՆԷՒ. Ուս. Նէքքին ախտաբանութեան՝ Բարիդի բժշկա-
 նոցի ։ ՄԱՌԱԿՎԻՍՏ. ձէնօպացի անուանի բժիշկի Ուս. իր ճննդավայրին բժշկա-
 նոցին Ներկայ գտնուած է 1905ի Թղթախտի համաժողովին ։ ՄԱՌՅԱՆ (Ա. Պ.)
 Ուս. Բարիդի բժշկանոցի, բժիշկ մանուկներու հիւանդանոցի ։ 37. ՄԷԶՆԻՔՅ
 (Էլի). Մանրէարան Ուս. և Բ. Տնօրէն Բաթթէօնեան հաստատութեան, Օտա-
 րանդամ Լոնտոնի Աքքայական ընկ.եան ։ 32. ՄՕԶՆԻ (Է.). Բժշկապետ Ա. Ան-
 թուան հիւանդանոցի, քննիչ առողջապահական յանձնաժողովի ։ ՆՕԹՆԱԿԷՒ.
 Նորոգ հանդուցեալ մեծահամբաւ ուս. վեհնայի բժշկանոցի ։ ՆՕՈՏԷՆ. Վեհ-
 նացի անուանի բժիշկ, յաջորդ Նօթնակէլի ։ 17. ՆԱՆԹՄԷՄ (Ա.). Ուս. փորձառա-
 կան և համա. ախտաբանութեան՝ Բարիդի բժշկանոցի և բժշ. Ակադէմիայի, ան-
 դամ և առողջաբանութեան ուսուցիչ՝ բժշ. Ակադէմիայի ։ 1. ՆԱՌՔՕ (Ա.). Ին.
 Բարիդ, 1825, մեռ. 1893. Աշխարհահռչակ բրօքս., մասնագէտ զգոյնի դրութեան
 հիւանդութեանց ։ 8. ՆՈՒԹԹԷՒՒ (Ֆօն). Ուս. վեհնայի բժշկանոցի Ներկայ գրա-
 նուած է 1905ի Թղթախտի համաժողովին [Տե՛ս այս անունը՝ Կրուխ Լ.ին մէջ] ։
 ՆՕՎՕ. Ուս. Բարիդի բժշկանոցի, Ներկայ գտնուած է 1905ի Թղթախտի համա-
 ժողովին ։ ՊԱՌԱԶԱՌ. Օրէնսդէտ բժիշկ, Ուս. Բարիդի բժշկանոցի ։ ՊԱԷԼԻԻ.
 Ին. 1832. Ուս. Հռոմի բժշկանոցի Ներկայ գտնուած է 1905ի համաժողովին ։
 ՊԷԼԻՆԿ (Էմիլ Ֆօն). Ին. Մարպուկ, 1854. Բրօք. Պէալինի բժշկանոցի և
 հնարիչ կեղծմանիչ շիճադեցին Կերմ. Կառավարութեան լայնական մասնաւոր
 խորհրդականի տնտես ստացած Թղթախտի և անոր մանրէներուն քննութեան
 մասին ունի ուսումնասիրութիւններ, Այդ նիւթին վրայօք Բարիդ և Պէալին իր
 բրած բանախօսութիւններով բովանդակ աշխարհի ուշադրութիւնն իր վրայ հրա-
 ւիրեց Թղթախտի համար մասնաւոր շիճուկ մը ունի որուն կատարելագործու-
 թեանը կ'աշխատի դեռ. Ներկայ գտնուած է 1905ի Թղթախտի համաժողովին ։
 ՊԻԻՍՏՐՈՏ (Թ.) Անգլ. ուս. Լոնտոնի բժշկանոցի Ներկայ գտնուած է 1905ի
 Թղթախտի համաժողովին ։ ՊՈՒՇԱՌ (Շառլ). Ուս. ընդհ. ախտաբանութեան՝
 Բարիդի բժշկանոցի. կաճառորդ ։ ՊՈՒՆԻՔԱ (Ա.). Ուս. Բարիդի բժշկանոցի
 Հիւսուածարան ։ 45. ՊՈՒՍՕ. Ուս. Նէքքին ախտաբանութեան Բարիդի բժշկա-
 նոցի ։ 9. ՊՈՒՍԱՌՏԷՒ (Բօլ). Մեծամուն ըրօք. առողջապահութեան, և օրէնս-
 գէտ-բժիշկ Ուս. բժշ. օրէնսգիտութեան՝ Բարիդի բժշկանոցի. կաճառորդ. (Մե-
 աած) ։ 46. ՊՕՄԷՒ. Ուս. հիւանդ մանուկներու մահճարուժարանի՝ Մօնրէլիէի
 բժշկանոցի ։ 52. ՌԸՆՕ. Ուս. հիւսուածարանական ընդհ. անդամաղնութեան՝
 Լիօնի բժշկանոցի ։ 16. ՌՈՒ. Մեծահամբաւ ուս. և միքրոպարան Ա. Տնօրէն

ԿԻՐԱԿԻ. ԲՅ. 14 Սեպտեմբեր—Իլուլի ն.Տ. 27 Սեպտեմբեր, ՀձՐ. 2 Բամազանս
 ✕ ՀՅ. և Կ. ՀՅ. և ՅՆ. Խաչվերաց, ՅՆ. Պահր, ԼՏ. Ս.Ս. Կողմա և Դա-
 միանոս անարժաններ, ՀՐ. Տարեմուտին Բ. օրը:

ՍՐԿՈՒՇՐ. ԲԻ. 15 Սեպտեմբեր—Իլուլի ն.Տ. 28 Սեպտեմբեր, ՀձՐ. 3 Բամազանս.
 ✕ ՀՅ. և Կ. ՀՅ. Խաչին տօներ, Մեռելոց, ՅՆ. Ս. Նիկիղաս վկայ, ԼՏ. Ս.
 Վենչեպառու Սագաւոր Լեհաց, ՀՐ. Աքիլամի զաւակին՝ Գոթողայի սպանե-
 նուելուն համար ծոն ֓ՈՐԹ՝ՈՒԿՈՒԻ Թագաւորին ծնունդը:

ՆՐԵՔՇՐ. ԲՅ. 16 Սեպտեմբեր—Իլուլի ն.Տ. 29 Սեպտեմբեր, ՀձՐ. 4 Բամազանս
 ՀՅ. և Կ. ՀՅ. Եկեղեցւոյ տօն, ՅՆ. Ս. Եւփիմէ մեծ վկայուհի, ԼՏ. Ս. Մի-
 րայէլ հրեշտակապետ:

ՉՈՐՔՇՐ. ԲԻ. 17 Սեպտեմբեր—Իլուլի ն.Տ. 30 Սեպտեմբեր, ՀձՐ. 5 Բամազանս
 ՀՅ. և Կ. ՀՅ. Եկեղեցւոյ տօն, Պահր, ՅՆ. Ս.Ս. Սոփիա վկայուհի և իր աղ-
 ջիկներն՝ Ելպիս, Պատիս և Ագապի, ԼՏ. Ս. Ս. Կրիզոր Լուսաւորիչ Հայոց, և
 Հերոնիմոս վարդապետ:

ՀԻՆԳՇՐ. ԲՅ. 18 Սեպտեմբեր—Իլուլի ն.Տ. 1 Հոկտեմբեր, ՀձՐ. 6 Բամազանս
 ՀՅ. և Կ. ՀՅ. Եկեղեցւոյ տօն, ՅՆ. Ս. Եւմենիոս՝ Կրէտէի եպիսկոպոս, ԼՏ.
 Ս. Հոսմիկոս եպիսկոպոս:

ՈՒՐԱՍԹ. ԲԻ. 19 Սեպտեմբեր—Իլուլի ն.Տ. 2 Հոկտեմբեր, ՀձՐ. 7 Բամազանս
 ՀՅ. և Կ. ՀՅ. Խաչի տօն, Պահր, ՅՆ. Ս.Ս. Տրոփիմոս վկայ, ԼՏ. Ս. Ս.
 Պահապան հրեշտակներ:

ՇԱԲԱԹ. ԲՅ. 20 Սեպտեմբեր—Իլուլի ն.Տ. 3 Հոկտեմբեր, ՀձՐ. 8 Բամազանս
 ՀՅ. և Կ. ՀՅ. Խաչի տօն, ՅՆ. Ս. Եւստաքէոս վկայ, ԼՏ. Ս. Թէոփիլոս վկայ:

ՅՈՒՇԱՏԵՏՐ

14 Սեպտ. Կիր. [258—108] Կէս օր. 6. 06

15 Սեպտ. Բշ. [259—107] Կէս օր. 6. 08

16 Սեպտ. Գշ. [260—106] Կէս օր. 6. 09

17 Սեպտ. Դշ. [261—105] Կէս օր. 6. 11

18 Սեպտ. Եշ. [262—104] Կէս օր. 6. 12

19 Սեպտ. Ըր. [263—103] Կէս օր. 6. 14

20 Սեպտ. Շր. [264—102] Կէս օր. 6. 16





21



30



31



32



33



34



35



36



37



38



39



43



44



45



46



47



48



49



50



51



52



53



54

Բարիզի Բաթէօսեան հաստատութեան Հնարիչ կեղծմաշիկի (գուշպօղան) շիճա-
 դեղին: Թ ԲԻՊԷՆ (Այպէս թ). Ուս. Բարիզի բժշկանոցի, անդամ բժշ. Ակադե-
 միայի և բժշկապետ Պոթօն հիւանդանոցի: Թ 51. ՎԱԼԷՆ. Տետուչ-բժիշկ պահես-
 տի բանակին և անդամ Բարիզի բժշ. Ակադեմիայի: Թ 41. ՎԱԲԷՉ. Ուս. Բարիզի
 բժշկանոցի, բժշկագետ՝ Սենթ Ալթուան հիւանդանոցի: Թ 15. ՏԲՊՈՎ. Ուս. և
 բժշկապետ մասճարութարանի՝ Բարիզի բժշկանոցի, անդամ բժշ. Ակադեմիայի,
 բժիշկ՝ հիւանդանոցներու: Թ ՏԻԼՕՂԱՅՈՒՍ (Ժօս.Ժ). Ուս. մասճարութարանի
 Բարիզի բժշկանոցի, բժիշկ Օթէլ Տիէօ հիւանդանոցի, անդամ բժշ. Ակադեմիայի:
 Թ 44. ՏԻԿԵՍՏԷՆ ՊՕՄԷՉ. Ին. 1833, մեռ. 1895: Անդամ տաղաւապահական
 ժողովի և Բարիզի բժշ. Ակադեմիայի, բժիշկ Գօշէն հիւանդանոցի: Թ 23. ՏԻԿՎԱԼ
 (Մաթիսա). Ուս. հիւսուածարանութեան՝ Բարիզի բժշկանոցի, անդամ բժշ-
 Ակադեմիայի:

Բ. — ՎԻՐԱԲՈՅԺՆԵՐ

13. ԱԼՊԱԻԱՆ. մասնագետ ուսուցիչ միգրանդի հիւանդութեանց՝ Բարիզի
 բժշկանոցի: 1890էն ի վեր բուն անդամ՝ վերաբուժական աղբյուրի ընկերութեան:
 Թ 4. ԲՆԱՆ (Ժիւլ). Ին. նաթօսեանի մաս՝ 1830, մեռած 1893: Ուս. Սեն Լուի հիւան-
 դանոցի, անդամ՝ բժշկական Այտադեմիայի, վերաբուժ հիւանդանոցներու: Թ ԲԷՅՈՒ
 (Ժ.). Կերպուցիչ Բարիզի բժշկանոցի, վերաբուժ հիւանդանոցներու, պատուակալ
 անդամ Բարիզի վերաբուժական ընկերութեան, 1905էն ի վեր: Թ 29. ԲՈՒՍՍԻՆԻ (Բօլ).
 Ուսուցիչ անգամազն՝ ութեան՝ Բարիզի բժշկանոցի, վերաբուժ հիւանդանոցներու,
 անդամ բժշկական Ակադեմիայի և բուն անդամ վերաբուժ. ընկերութեան 1895էն
 ի վեր: Մեռած: Թ ԲՈՒՍՅՈՒՍ (Ուոյէս). նախկին անգամահերձ և արգի գեր-ուսուցիչ
 Բարիզի բժշկանոցի, վաղեմի ներքին բժիշկ միգրանդի հիւանդութեանց՝ նէքե-
 հիւանդանոցի: Թ ԲՆՍՆԻ (Նիմօն). վերաբուժ. ութեան ուսուցիչ Լիօնի համալսարա-
 նի, նախկին վերաբուժապետ Օթէլ Տիէօ հիւանդանոցի, թղթակից անդամ Բարիզի
 բժշկական Ակադեմիայի և վերաբուժական ընկերութեան: Թ ԹԷՆԻՆԻ. Պատուակալ
 անդամ Բարիզի վեր. ընկ.եան: Թ ԹԻՆԻՆԻ (Ժէօտօս). Դեր.ուս. Բարիզի բժշկա-
 նոցի, վերաբուժ Բիթիէ և Թէնօն հիւանդանոցներու, բուն անդամ Բարիզի վեր.
 ընկ.եան 1892էն ի վեր: Թ ԺԱԼԱԿԻՆԻ. Բուն անդամ Բարիզի վեր. ընկ.եան 1888էն
 ի վեր: Թ 38. ԼԱՆԵԼՈՆԿ (Մաթիէլ). Ուս. վեր. մասճարութարանի Պօստօի բժշ-
 կանոցի, թղթ. անդամ Բարիզի բժշ. ընկ.եան: Թ 25. ԼԱՆԵԼՈՆԿ (Օտիօն). Ուս.
 արտաքին ախտաբանութեան՝ Բարիզի բժշկանոցի. կաճառորդ, անդամ բժշ. Ակադե-
 միայի, պատուակալ անդամ Բարիզի բժշ. ընկ.եան 1904էն ի վեր: Թ ԼԱՊԷ. (Լէօն).
 Դեր.ուս. Բարիզի բժշկանոցի, վերաբուժ Բիթիէ հիւանդանոցի, պատուակալ ան-
 դամ Բարիզի վեր. ընկ.եան: Նաև հիւսուածարան: Թ ԼԷՍՄԻ (Ֆէլիքս). Դեր.ուս.
 Բարիզի բժշկանոցի, վերաբուժ Թէնօն և սլլ հիւանդանոցներու, բուն անդամ
 Բարիզի վեր. ընկ.եան 1896էն ի վեր: Թ ԼԷՂԵՍ (Ֆէլիքս). Դեր.ուս. Բարիզի բժշ-
 կանոցի, բուն անդամ Բարիզի վեր. ընկ.եան: Թ 24. ԼԲ ՏԱՆԹԻՆ. Ուս. վեր.
 մասճարութարանի՝ Բարիզի բժշկանոցի, վերաբուժ Օթէլ-Տիէօ հիւանդանոցի: Թ Ե-
 ԼԻՍԹԷՆ (Լօսա ժօզէֆ). Ին. 1827 իւլիօն Լաքս, օտարանդամ Բարիզի վեր.
 ընկ.եան, 1880էն ի վեր: 1860ին՝ Կլասկօի համալսարանին վեր. ուսուցիչ: Հեղի-
 նակ հակաբնիական դրութեան Աշխարհահռչակ անդ. վերաբուժապետ՝ որուն
 80րդ տարեգարձը տօնուեցաւ անցած տարի իրեն կը պարտինք՝ երբ փայլուն

արդիւնքներ կը տեսնուին այսօր հիւանդանոցներու մէջ, որոնք առկէ առաջ ներման և ակադամութեան որջերէն: Իր սկզբունքները դիւրացուցին նաև և անվտանգ գործեցին պատերազմական վէրքերու (գնդակի) դարմանմամբ: 26. ԼիօփԱ ՇԱՄԻՍՕՆԻԼԻ: Դեր-ուսուցիչ և վերաբարձ հիւանդանոցներու, անդամ բժշկական Ակադէմիայի, պատուակալ անդամ Բարիզի վերաբարձական ընկերութեան, 1897էն ի վեր: 41. Կիլիէն (Ալժոնա), Ին. Բլոէն-ձէլ (Մոսպիտան), վեր-Բարիզի, Մեռած: 42. Կիլիէն (Ֆէլքս-ժան-Բապտիստ), Մասնագէտ միզանցքի հիւանդութեանց, Ին. 1831, Ռէլիւսիոն կղզին: Ուս. Բարիզի բժշկանոցի, պատուակալ անդամ Բարիզի վեր. ընկ.եան 1882: Մեռած: 43. ՀԱՌԻՄԱՆ (Հանրի), Ոսկային հիւանդութեանց և միզանցքի մասնագէտ վեր-Դեր-ուս. Բարիզի բժշկանոցի, բուն անդամ Բարիզի վեր. ընկ.եան, 1897էն ի վեր: 44. Մոս (Շառլ), Դեր-ուս. Բարիզի բժշկանոցի, վեր. Ս. Անթուան հիւանդանոցի, անդամ բժշկական Ակադէմիայի, պատուակալ անդամ վեր. ընկ.եան, 1898էն ի վեր: 45. ՇԱՌԻԼ, վեր. Բարիզի հիւանդանոցներու: 46. ՇԱՌ (Վ.), Ուս. վեր. մասճարութարանի՝ Թուրք բժշկանոցի, նախկին ուս. արտաքին ախտաբանութեան և բժշ. գործողութեան Մոնթլիէի բժշկանոցի, Թղթ. անդամ Բարիզի վեր. ընկ.եան: 47. ՇՎԱՌԶ (Է.), Դեր-ուս. և անդամահերձ Բարիզի բժշկանոցի, վեր. Կոչնի հիւանդանոցի, բուն անդամ վեր. ընկ.եան 1886էն ի վեր: 48. ՊԱՉԻ, Մասնագէտ միզանցքի հիւանդութեանց, վեր. հիւանդանոցներու, անդամ վեր. ընկ.եան, 1899էն ի վեր: 49. ՊԷՌԻՇԷ (Բօլ), վերաբարձապետ Թէնոն հիւանդանոցի, պատուակալ անդամ Բարիզի վեր. ընկ.եան 1899էն ի վեր: 50. ՊԷՌԻՄԱՆ (Լուէսթ), Ին. Ռոյլէ (Լիվոնիա) 1836, մեռ. 1907 մարտ 29ին, Վիպպատէնի մէջ, կցադեռապէ («արանտիսիթ»), Դերմ. դեր-ուս. Պէռլինի բժշկանոցի, և ուս. 1871ին Վերիօփի մասճարմամբ: Իր վեր. մասճարութարանը մեծ անուն հանած էր 1887ին կանչուեցաւ բժշխորհրդակազմութեան՝ գերմ. Կահաթառանգին մօտ (յետոյ Ֆուէտեռիք Բ. Կոյսը): Բազմաթիւ հեղինակութիւններ ունի: 51. ՊԻՌԱ (Անտուէ), Դեր-ուս. Բարիզի բժշկանոցի: 52. ՊԻՌԱ (Սիլեսթ), Դեր-ուս. Բարիզի բժշկանոցի, վերաբարձ Թէնոն հիւանդանոցի, անդամ վեր. ընկ.եան: 53. ՌԻՒՄԱՆ (Ս.), Դեր-ուս. Բարիզի բժշկանոցի, վեր. Ս. Լուէ և այլ հիւանդանոցներու, 1903էն ի վեր: 54. ՌԷՒԼԻ (Բօլ), Ին. 1847: Դեր-ուս. Բարիզի բժշկանոցի, պատուակալ անդամ վեր. ընկ.եան 1902էն ի վեր, անդամ բժշկական Ակադէմիայի, վեր. Բիթիէ և Լաէնէք հիւանդանոցներու: 1903էն ի վեր: 55. ՍԱՆՏՅԱՆՍՏԻՆՍԻ, Նախկին նախագահ Արքունի բժշկական Ակադէմիայի, վեր. և անորէն Սակոստո Կոստալո հիւանդանոցի (Պասչէլոնա): 56. ՍԷՊԻՍ, Դեր-ուս., վեր. հիւանդանոցներու, բուն անդամ Բարիզի վեր. ընկ.եան, 1902էն ի վեր: 57. ՍԷՒՐ (Բօլ), Ուս. վերահաստիական բժշկութեան Բարիզի բժշկանոցի, նախագահ վեր. ընկ.եան (1906): 58. ՎԷՆԻՆՅՈՅԼ, Կաճառորդ, ուս. վեր. մասճարութարանի Բարիզի բժշկանոցի 18 տարի (1877—1895), Մեռած: 59. ՏԻՒՐԷՆ (Սիմօն), Ուս. վեր. մասճարութարանի՝ Բարիզի բժշկանոցի, անդամ բժշկական Ակադէմիայի և վեր. Օթէլ-Տիէօ հիւանդանոցի: 60. ՔԷՆԻՆ, Դեր-նախագահ Բարիզի վեր. ընկ.եան (1906): 61. ՔԻՄԻՄԱՆ (Է.), Մասնագէտ վեր. ոսկային հիւանդութեանց, դեր-ուս. Բարիզի բժշկանոցի, վեր. հիւանդանոցներու, անդամ բժշկական Ակադէմիայի, պատուակալ անդամ Բարիզի վեր. ընկ.եան, 1904էն ի վեր: 62. ՕՂԻՆ (Լ.), Ուս. վեր. մասճարութարանի՝ Լիօնի բժշկանոցի, վերաբարձապետ Լիօնի Օթէլ-Տիէօ հիւանդանոցի: 63. ՖՈՒՐ (Ժ. Լ.), Դեր-ուս. Բարիզի բժշկանոցի, վերաբարձ Թէնոն և այլ հիւանդանոցներու:

Գ.—ՄԱՆԿԱԲԱՐՁ - ԿՆԱԽՏԱԲԱՆՆԵՐ

ԲԱԺԹ (Շառւ.) Ին. 1816, Բարիզ, մեռ. 1896: Անուանի մանկարարն է Ռէ-
 ՆԱՄԻ (ԼիփՍիէն). Նախկին ուս. մանկարարն է թեան՝ Ռօշֆօռի բժշ. վարժարանի,
 վերաբուժապետ՝ հանգստեան կոչուած նաւազորքերու: ՊիՆԱՄԻ (Ասօֆ). Դեր-
 ուս. մանկարարն է թեան՝ Բարիզի բժշկանոցի ՊիՆԻԷՖ (Բ.) Դեր-ուս. Մօնթե-
 լիէի բժշկանոցի, պսակաւոր՝ բժշ. Ակադէմիայէն: Մանկարարն է 11. ԲՕՁՁԻ
 (Սամուէլ). Ին. 1846, Պէտքուար և Կնախտարանն է թեան՝ Բարիզի բժշկա-
 նոցի, անդամ բժշ. Ակադէմիայի, վեր. Պաօքա հիւանդանոցի ՊիՆՍԻՍԻՍԻՎ,
 Գերմ. նշանաւոր մանկարարն է Կնախտարան՝ Պէռլինի Շառլիթէ հիւանդանոցի,
 և համալսարանի ուս. ՄԷՅԿԻՍԻՎ. (Շ.). Ուս. մանկարարն է թեան՝ Բարիզի
 բժշկանոցի ՇՈՒԼՁ. Ուս. Կնախտարանն է թեան՝ Եէնայի (Գերմ.) բժշկանոցի
 ՊԻՆՏԷՆ (Բիէռ-Գօնսթամբէն). Կնախտարան: Ուս. մանկարարն է թեան և
 տղայոց հիւանդութեանց՝ Բարիզի բժշկանոցի, անդամ բժշ. Ակադէմիայի, ման-
 կարարն է թեան՝ Մաթէոնիթէի ՌԻՆՊԷՐՄԵՆ (Ալպան). Դեր-ուս. մանկարարն է
 թեան՝ Բարիզի բժշկանոցի, մանկարարն է Պօթօն հիւանդանոցի, անդամ բժշ.
 Ակադէմիայի ՎԱՆՈՒԱ (Լէօն). Դեր-ուս. մանկարարն է թեան՝ Մօնթելիէի բժշ-
 կանոցի ՏԻՆԿԱՆ. Մանկարարն է ՕԼՍՂԱՈՒՂԷՆ. Գերմ. համալսարան ուս.,
 մանկարարն է Կնախտարան, պետ՝ Պէռլինի Կնախտարութեան քլինիքի, ման-
 կարարն է Կայրուհիին:

Դ.—ՎԵՆԵՐԱԽՏԻ ԵՒ ՄՈՐԹԱԽՏԻ ՄԱՍՆԱԳԷՏՆԵՐ

ԳԱՐՕՁԻ (Մօռիձ-Գօհէն). Ին. 1837, Գարօզիա (Հունգարիա). Մորթային
 հիւ. ուս. Վեննայի բժշկանոցի ժԱՆՍԷԼՄ (Է.). Մորթային հիւ. դեր-ուս.
 Բարիզի բժշկանոցի, բժիշկ Թէնօն հիւանդանոցի ԼԷԻՏԻՏ. Տնօրէն Բարիզի մոր-
 թարանական հաստատութեան ԼԸՆՈՒԱՄ. Մորթային հիւ. ուս. Լիլի բժշկա-
 նոցի ՎՕՇԷ (Է.). Վեներ. և մորթ. ուս. մահճարութարանի՝ Բարիզի բժշկանո-
 ցի, բժիշկ Ս. Լուի և Ս. Անթուան հիւանդանոցներու ՂԱՍԹՕ. Մասնագէտ
 վէներ. և մորթ. ճԱԳՊԻ. Արտատղր ուս. և տնօրէն մահճարութարանի՝ Պու-
 պուս-ան-Պուիսի (Գերմանիա)ի բժշկանոցի ՄՈՒԱՍԷՖ. Մասնագէտ վէներ. և
 մորթ. ՍԱՊՈՒՍԻ. Մասնագէտ վէներ. և մորթ. ՕԿԱՆԵԼՈՒ. Ուսուցչապետ
 վէներախտի և մորթախտի՝ Լիօնի բժշկանոցի 10. ՖՈՒՆԻԼԷ (Ալֆրէտ). Մաս-
 նագէտ վէներախտի, ուս. Բարիզի բժշկանոցի, անդամ բժշ. Ակադէմիայի, բժիշկ
 Ս. Լուի հիւանդանոցի:

Ե.—ՋՂԱԲԱՆ ԲԺԻՇԿՆԵՐ

ԿՈՒԱՍԷ (Ժ.). Ուս. մահճարութարանի՝ Մօնթելիէի բժշկանոցի ՊԻՍՍՕ (Է.).
 Դեր-ուս. Բարիզի բժշկանոցի 30. ՌԷՅՄՕՆ (Ֆ.). Ուս. մահճարութարանի՝ Բա-
 րիզի բժշկանոցի, բժիշկ Բարիզի յիմար ջատուկներու անկլանոցի:

Զ.—ՅԻՄԱՐԱԲՈՅԺՆԵՐ

ԳՈՒԱՅԻՒ ԷՊԻՆԿ. Աւսարիացի ուս. մահճարութարանի՝ Վեննայի բժշկանոցի
 ՇՈՒՍԻՍԻՍԻՍԻՍ (Է.). Բժշկապետ Վիլհելմի յիմարանոցի ՄԱԿԵԱՆ (Վ.). նշանա-
 ւոր բժշկապետ՝ Սէնթ-Անն ապաստանարանի ՊԱԼԷ (Ժիլպէտ.). Դեր-ուս. Բա-

բիզի բժշկանոցի, բժիշկ Օթէլ-Տիէօ և Ս. Անժուան հիւանդանոցներու: Թիւթօն (Ա.). Ին. Մէց: Ուս. խելագարային մահճարուժարանի՝ Թուլուզի բժշկանոցի: Թիւթօն (Ժ.). բժշկապետ խելագարային մահճարուժարանի՝ Բարիզի բժշկանոցի: Թուլուզի (Լ.). Ռուպինօվիչի օգնականը:

Է.—ԱԿՆԱԲՈՅԺՆԵՐ

ԱՊԱՏ (Ե.). Ազատ ուսուցիչ ակնարուժութեան, նախկին ներքին բժիշկ հիւանդանոցներու: Թուլուզի (Ֆ.). Ուս. ակնարանական քլինիքի՝ Բարիզի բժշկանոցի, վերարդժ Օթէլ-Տիէօ հիւանդանոցի, անդամ բժշ. Ակադէմիայի, պատուակալ անդամ և նախկին նախագահ՝ Բարիզի վեր. ընկ.եան: Յոյն Մեռ. քանի մը տարիէ ի վեր: Թիւթօն (Լ.ժիլ). Պատուակալ անօրէն ակնարուժանոցի և ևւաղ ուսմանց վարժարանի, անդամ բժշ. Ակադէմիայի: Թուլուզի (Ֆ.). Դեր-ուս. Պուստի բժշկանոցի նաև վերարդժ հիւանդանոցներու: Թուլուզի (Ֆ.). Բոլոնիացի հռչակաւոր ուս. Մեռած: Թարլոն (Ժ.). Ուս. և ընկերակից՝ ար Վէրէն ակնարուժ՝. Գլինիքի: Տիւթօն (Լ.ժիլ). Զանդուցեալ Բանասի յաջորդ: Թուլուզի (Լ.). Սի. Վիլիամ (Լուի). Ազատ ուս. ակնարուժ՝. Աւստրացի, Տրիթ, Լյուքսեանի վարպետը, Մեռ. 1906, 73 տարեկան:

Ը.—ՄԱՍՆԱԳԷՏ ԲԺԻՇԿՆԵՐ ԱԿԱՆՁԻ, ՔԻՅԻ ԵՒ ԽՈՉԱՓՈՂԻ ՇԻՒԱՆԴՈՒԹԵԱՆՑ

20. ԲՈՒԺԳԻՆ (Ատամ). Ին. 1835, Ալպէն-ժի (Հունգարիա), Դեր-ուս. Վեննայի բժշկանոցի, 1861: Արատսովոր ուս. նոյն բժշկանոցի, 1870: Տնօրէն ականչի հիւանդութեանց քլինիքին Պաշտօնական պատուիրակ կոչուած՝ Չիքսիլի արուեստահանդէսին կրթ. նախարարէն, 1893: Ֆրնս. Պատուալ Լէգէոնի սպայութեան աստիճանաւոր, 1894: Տրիթ. Տատուրի վարպետը, 21. ԿԱՌԻՎ (Ժան). Ին. 1852, Լիօն, Մասնագէտ ուս. խոչափողի հիւ.՝. Ժննդավայրին բժշկանոցին, հիմնադիր անդամ և նախագահ՝ խոչափողարանութեան Ֆրնս. ընկ.եան: 22. ՇՄԻԹ (Մօրիձ). Ին. 1838, Թուան-Ֆոնտ-սիւ-ը-Մայն: Կերպի բժիշկ Թուան-Ֆոնտ-ժի հիւանդանոցի, 1862 և ուս. նոյն բժշկանոցի, 1892: Թուան-Ֆոնտ-ժի Գահատուանց իշխանին մօտ կանչուեցաւ 1887ին՝ զայն դարմանելու համար, 1903ին Վիլհէլմ Բ. Կայսեր խոչափողին զրոյ գործողութիւն կատարելով՝ պատիւի և աստիճանի բարձրացաւ: Մասնագէտ կոկորդի և քիմի հիւ.՝. 8. ՇԻՍԹԻՆ (Լէօրլա Ռիթիէն). Ին. 1837, Կոսցի, Հռչակաւոր մասնագէտ բժշ. խոչափողի հիւ.՝. Արատսովոր ուս. կոկորդի և կուրճի հիւ.՝. 1875: Բժիշկ Ռոսովի հիւանդանոցի, 1877: Կերպի արատարանութեան ընդհ. ուսուցիչ, 1893: Թուան-Ֆոնտ-ժի Բ. Կայսրը դարմանելով՝ պատիւի և աստիճանի բարձրացաւ:

Սրկնիա, 27 Ապրիլ 1907

ՄՅՈՒ = ԱՄՈՒԷԼ ԽԱՍԷ

ԱՌԱՅ. — ԲՈՒՇ ԷՆՈՐ ԷՆՊՈՒՅԻ, ԳՆԸ՝ ԱՐ:

ԿԻՐԱՆԻ. ք. **21** Սեպտեմբեր—Իլուլ, Ն.Տ. 4 Հոկտեմբեր, ՀՃԲ. 9 Բամազան:
 ✽ **ՀԹ.** և **Կ.** **ՀԹ.** Բ. կիրակի Խաչէն յետոյ Վարազայ Ս. Խաչի բարկենդանը.
ՅՆ. Ս. Կողբատոս առաքեալ և Ս. Յովնան մարգարէ: **ԼՏ.** Ս. Աստուածածնի
 Վարդարանին տօնը, և Ս. Փրանկիսկոս Ասիզացի:

ԵՐԿՈՒՇԲ. ք. **22** Սեպտեմբեր—Իլուլ, Ն.Տ. 5 Հոկտեմբեր, ՀՃԲ. 10 Բամազան:
ՀԹ. և **Կ.** **ՀԹ.** Պահր, Ս.Ս. Մամա, Փիլիկտիմոն և Սիմէոն սիւնակեաց: **ՅՆ.**
 Ս. Փոկաս՝ Սինոպի եպիսկոպոս և վկայ: **ԼՏ.** Ս. Պլակիդոս վկայ: **ՀԲ.** Քիփուռ—
 Բաւուժեան տօնը. Չորսպ պայրամը: Մեծ ծով.

ԵՐԵՒՇԲ. ք. **23** Սեպտեմբեր—Իլուլ, Ն.Տ. 6 Հոկտեմբեր, ՀՃԲ. 11 Բամազան:
ՀԹ. Պահր, Ս. Ս. Փեբրոնէ, Մարիանէ կոյսեր և Շուշան վկայուհի՝ Մեծն վար-
 դանի դուստրը: **Կ.** **ՀԹ.** Պահր, Ս.Ս. Փեբրոնէ և Մարիանէ կոյսեր: **ՅՆ.** Ս.
 Յովհաննէս Կարապետի՝ Եղիսաբեթէ յղուժեան տօնը: **ԼՏ.** Ս. Բրունոն արքայ:

ՉՈՐԻՇԲ. ք. **24** Սեպտեմբեր—Իլուլ, Ն.Տ. 7 Հոկտեմբեր, ՀՃԲ. 12 Բամազան:
ՀԹ. և **Կ.** **ՀԹ.** Պահր, **ՅՆ.** Ս. Թեկղի կոյս և նախավկայուհի: **ԼՏ.** Ս. Մար-
 կոս հայրապետ:

ՀԻՆԳՇԲ. ք. **25** Սեպտեմբեր—Իլուլ, Ն.Տ. 8 Հոկտեմբեր, ՀՃԲ. 13 Բամազան:
ՀԹ. Պահր, Ս.Ս. Բարաղամ, Անժիմոս և Երանոս հայրապետներ: **Կ.** **ՀԹ.** Պահր:
 Ս.Ս. Անժիմոս և Երանոս հայրապետներ: **ՅՆ.** Ս. Եւփրոսինէ վկայուհի: **ԼՏ.**
 Ս. Պրիճիժա կուսան:

ՈՒՐԲԱԹ. ք. **26** Սեպտեմբեր—Իլուլ, Ն.Տ. 9 Հոկտեմբեր, ՀՃԲ. 14 Բամազան:
ՀԹ. և **Կ.** **ՀԹ.** Պահր, **ՅՆ.** Ս. Յովհաննէս աւետարանիչին հանգիտը: **ԼՏ.**
 Ս. Դիոնեսիոս Լուտետիոյ եպիսկոպոս և վկայ:

ՇԱԲԱԹ. ք. **27** Սեպտեմբեր—Իլուլ, Ն.Տ. 10 Հոկտեմբեր, ՀՃԲ. 15 Բամազան:
ՀԹ. և **Կ.** **ՀԹ.** Ս. Ս. Դէորդ զօրավար, Աղոկտոս վկայ և Ռոմանոս երզնցոյ
ՅՆ. Ս. Ս. Կալիստրատոս իր ընկեր վկաներով: **ԼՏ.** Ս. Փրանկիսկոս Պօրճիա
 կրօնաւոր: **ՀԲ.** Սուբբօթ—Մամըշ պայրամը. Տաղաւարաճարքի տօնին Ա. օրը:

ՅՈՒՇԱՏԵՏՐ

21 Սեպտ. Կիր. [265—101] Կէս օր. 6. 17.....

22 Սեպտ. Բշ. [266—100] Կէս օր. 6. 19.....

23 Սեպտ. Գշ. [267—99] Կէս օր. 6. 21.....

24 Սեպտ. Դշ. [268—98] Կէս օր. 6. 23.....

25 Սեպտ. Եշ. [269—97] Կէս օր. 6. 25.....

26 Սեպտ. Ուր. [270—96] Կէս օր. 6. 26.....

27 Սեպտ. Շր. [271—95] Կէս օր. 6. 27.....



ՅՈՎ. Հ Ա. Ն Ն Է Ս Պ Ա Ռ Ա Ի Շ Ա Ն

Ծն. 1860. Նախկին Դաստիարակ - Ուսուցիչ, 1890 ի փայլուն շրջանաւարտ՝ Կայս. Իրաւագիտական Վարժարանի, Փաստարան առեւեք. դատերու եւ Կ. Պօլիսի Պարսից Հիւպատոսարանի:



լալու՛ն՝ իրեն կը պատկանի իսկ եթէ ընդունողին ունեցած պարտքովը կամ բացած վարկովն է որ պիտի վճարուի, կը նշանակէ թէ քաշողն ո՛չ թէ փ.գիրին արժեքն, այլ ընդունողին վրայ իր ունեցած պահանջքին զանձման իրաւունքը փ.գիրին տիրոջ փոխանցած է. հետեւաբար փ.գիրին պայմանաժամը չի հասած՝ երբ ընդունողը սնանկանայ, փոխարժեքը կը պատկանի հաւան, այսինքն ընդհանուր պահանջատեսարց, և բոլիշային տէրն ալ իր պահանջած գումարով պարտաւոր է «մասսան մանելու»:

Փոխ՝գիրի ընդունագրութեան վրայ

Փոխ՝գիրն որո՛ւն որ ուզուած է՝ անոր կողմէն ընդունուիլն օրին վճարուելուն հաւաստիք մըն է: Եթէ ընդունողը զայն նոյն իսկ բռնութեամբ ընդունագրած ըլլայ, պարտական է օրին վճարելու: Որ՛. Եթէ փոխ՝գիրին տէրը զաշողին ի ձեռին սպառնալով ընդունագրել տայ զայն և «ճիրօ» ընելով ծախէ ուրիշին, ընդունողն օրին պարտի վճարել անոր վերջին տիրոջը՝ հօֆլին, միայն թէ ևտքէն իրաւունք ունի փոխ՝գիրը սպառնալիքով ընդունագրել տուողին զիմելով հատուցում՝ պահանջելու: Նոյնպէս մէկը՝ փոխարէնն առանց ստանալու փոխ՝գիր մը երբ ընդունի, և հաստատել թէ՛ անկէ առաջ քաշողը սնանկացած էր, ընդունողը՝ «պայմանաժամը լրանալէն առաջ փոխարէնը քաշողէն ստանալու ակնկալութեամբ թէ և փոխ՝գիրն ընդունեցի, սակայն զայն ընդունելէս առաջ՝ արդէն քաշողին սնանկացած ըլլալը պաշտօնապէս հաստատուած ըլլալուն, փոխարէնը չեմ՝ վճարեք» չի կրնար բռնել: Փոխ՝գիր մը երբ թուականէն պաշտօն օր կամ ամիս վերջ և կամ այն ինչ օրը վճարուելու պայմանաւ արուած է, հօֆլը՝ զայն վճարողին ընդունագրել տալու և կամ իր վրայ պաշտօն գումարի փոխ՝գիր մը քաշուած ըլլալը տեղեկացունելու պարտաւոր չէ թէ և օրէնքով, սակայն առեւտրագործաւնութեանց մէջ սովորաբար կը տեղեկացունեն, պարզապէս օրին վճարուիլը կամ չի վճարուիլը հասկընալու համար: Իսկ երբ ան ընդունագրուելէն սաշտօն օր վերջ վճարուելու պայմանաւ քաշուած է, հօֆլին պարտքն է բոլիշան ընդունագրել տալ: Փոխ՝գիրի մը ընդունագրութիւնն օրինական կարգ մը խճճածանքներու ենթակայ ըլլալուն համար, պէտք է վրան շեղակի գրել տալ ընդունակ և (մագպուլում տրը) խօսքը, զնեւ տալով միանգամայն թուականն և ընդունողին ստորագրութիւնը: Փոխ՝գիրներու վրայ գրուած ՏԵՆՈՒՅԻՆԻՆԻ (կէօրիւմիշ տիր) խօսքն՝ անոնց ընդունուած ըլլալը չապահովիր, չետեւաբար այս ձև գրուած փոխ՝գիրի մը վճարողն եթէ աւարկէ որ՝ քաշողը փոխարէնն իրեն հանած չըլլալուն համար չը պիտի վճարէ, օրէնքը չի՝ բռնադատեր զինքը՝ վճարելու: Թուականը զնեւ կարեւոր է, զի պայմանաժամն անկէ կ'սկսի, Երբ ընդունագրուած պահուն թուական չի գրուի, փոխ՝գիրին պայմանաժամը քաշուած թուականէն կ'սկսի Որ՛. Ընդունագրուելէն ամիս մը վերջ վճարուելու պայմանաւ Ապրիլ 1ին քաշուած փոխ՝գիր մը երբ Ապրիլ 10ին ընդունագրուի, պայմանաժամը կը լրանայ Մայիս 10ին, իսկ երբ ընդունագրուած պահուն թուական չի գրուի, պայմանաժամը կը լրանայ Մայիս 1ին: Եթէ մէկը չուղէ ընդունագրել, հօֆլը պարտաւոր է արժէ գաւալի բողբոջները քաշելու և վաւերացնել օրինակները նօսաբի (մուգապէլլաթ մուհարրիբի) միջոցաւ խրկելու քաշողին և իրմէ առաջ գտնուող ֆերմաներուն (որոնց մասին պիտի խօսինք ֆերօի բաժինին մէջ): Չընդունագրուած փոխ՝գիրի մը պայմանաժամն ալ գրթթէսթօթի թուականէն կ'սկսի:

ԿԻՐԱԿԻ. -չ. 28 Սեպտեմբեր—Իլուլ, Ն.Տ. 11 Հոկտեմբեր, ՀՃԲ. 16 Բամազան,
 ✱ ՀՅ. և Կ. ՀՅ. Գ. կիրակի Խաչէն յետոյ, Վարազայ Ս. Խաչի տօնը, Եօթը
 շաբաթներուն Ա. կիրակին, ՅՆ. Ս. ՍարիՍա խոստովանող և Բարուք
 մարգարէ, ԼՏ. Ս. Գերմանոս եպիսկոպոս և վկայ, ՀԲ. Գամըշ պայրամի Բ. օրը:

ԵՐԵՎԱՆ. -վ. 29 Սեպտեմբեր—Իլուլ, Ն.Տ. 12 Հոկտեմբեր, ՀՃԲ. 17 Բամազան,
 ՀՅ. և Կ. ՀՅ. Ս Ս. Դաւիթ Դիմեցի, և Ղամբէոս ու Ղամբէուհի վկաներ, Հարս-
 նիք, ՅՆ. Ս. Կիրակոս անապատական, ԼՏ. Ս. Դոնատիանոս վկայ, ՀԲ. Գա-
 մըշ պայրամի Գ. օրը:

ԵՐԵՎԱՆ. Բչ. 30 Սեպտեմբեր—Իլուլ, Ն.Տ. 13 Հոկտեմբեր, ՀՃԲ. 18 Բամազան,
 ՀՅ. և Կ. ՀՅ. Ս. Ս. Եւստաբէոս, իր կինը՝ Թէոփիստէ և երկու զուակները
 (Թէոփիստոս և Ազապիոս), և Երմոնէ ու Նեկեարինէ կոյսեր, ՅՆ. Ս. Գրիգոր
 Լուսաւորիչ Հայոց, ԼՏ. Ս. Եղուարդ Սազաւոր, ՏՃ. Գուշ կէշիմի ֆուրթունասը,
 ՀԲ. Գամըշ պայրամի Գ. օրը:

ՉՈՐԿՇՐ. Բվ. 1 Հոկտ.—Թշրինի էվվէլ, Ն.Տ. 14 Հոկտեմբեր, ՀՃԲ. 19 Բամազան,
 ՀՅ. և Կ. ՀՅ. Պահք, ՅՆ. Ս. Ս. Անանիա աւուրեալ և Ռոմանոս երեցող,
 ԼՏ. Ս. Կալիքատոս Հոռմի հայրապետ, ՀԲ. Գամըշ պայրամի Ե. օրը:

ՀԻՆԳՇՐ. Բչ. 2 Հոկտ.—Թշրինի էվվէլ, Ն.Տ. 15 Հոկտեմբեր, ՀՃԲ. 20 Բամազան,
 ՀՅ. և Կ. ՀՅ. Ս. Ս. Սահակ և Համազասպ իշխաններ, ՅՆ. Ս.Ս. Կիպրիանոս
 վկայ և Յուստիանէ կոյս, ԼՏ. Ս. Թերեզա կուսան, ՀԲ. Գամըշ պայրամի Զ. օրը:

ՈՒՐԱՍԹ. Բվ. 3 Հոկտ.—Թշրինի էվվէլ, Ն.Տ. 16 Հոկտեմբեր, ՀՃԲ. 21 Բամազան,
 ՀՅ. և Կ. ՀՅ. Պահք, ՅՆ. Ս. Թիոնեսիոս Արիսպագացի, ԼՏ. Ս. Փլորեն.
 տինոս եպիսկոպոս, ՀԲ. Գամըշ պայրամի Է. օրը:

ՇԱԲԱԹ. Բչ. 4 Հոկտ.—Թշրինի էվվէլ, Ն.Տ. 17 Հոկտեմբեր, ՀՃԲ. 22 Բամազան,
 ՀՅ. և Կ. ՀՅ. Ս. Ս. Եօթանասուն երկու աշակերտներ Բրիտտոսի, ՅՆ. Ս.
 Ռեթէոս Աթէնքի եպիսկոպոս, ԼՏ. Ս. Հետվիկ կուսան, ՀԲ. Գամըշ պայրա-
 մի Ը. օրը:

ՅՈՒՇԱՏԵՏՐ

28 Սեպտ. Կիր. [272—94] Կէս օր. 6. 29

29 Սեպտ. Բշ. [273—93] Կէս օր. 6. 31

30 Սեպտ. Գշ. [274—92] Կէս օր. 6. 32

1 Հոկտ. Դշ. [275—91] Կէս օր. 6. 34

2 Հոկտ. Եշ. [276—90] Կէս օր. 6. 35

3 Հոկտ. Ուր. [277—89] Կէս օր. 6. 37

4 Հոկտ. Շր. [278—88] Կէս օր. 6. 39

Փոխգիրի փոխանցման վրայ (ձիւրօ, endossement)

Պարզ մուրհակի մը գումարին՝ մէկէ մը ուրիշին փոխանցման գործողութեան հետեւէ, իսկ փոխ՝ գիրի և հրամանի մուրհակներու փոխանցման գործողութեան ալ ճիշտ կ'ըսուի «Տէվալէ» գործողութիւն մը օրինական ըլլալու համար՝ զայն ընդունել, ընդունողին և «Տէվալէ» ընողին հանդէպ պարտական եղող անձին հաւանաւթութիւններ կարեւոր են: Այդ գործողութիւնը կատարուելէ վերջ «Տէվալէ ընող» իր պարտքէն կ'զատի Ուստի, այն որուն վրայ Տէվալէ եղած է՝ եթէ սնանկանայ, Տէվալէն ընդունողն իր պահանջը զայն ընողէն չի կրնար պահանջել: Փ.գիրներու ճեթն ալ թէև Տէվալէի գործողութիւն մըն է, սակայն վերի օրինական պայմաններէն բոլորովին կը տարբերի: Հոս Տէվալէի գործողութիւնը միայն Տէվալէն ընողին և ընդունողին մէջ տեղի կ'ունենայ. պարտականը (փ.գիրն ընդունողն) առանց տեղեակ ըլլալու թէ որո՞ն պարտքն որո՞ւ պիտի վճարէ, նաև Տէվալէն ընողը (ձէրանթա) պատասխանատու են գումարին վճարման, եթէ—ինչպէս ստորև պիտի ըսենք,—գործադրուած ըլլան հոգիին կողմէ կարգ մը օրինական տրամադրութիւններ: Ահա «ձիւրօ»ի օրինակ մը.

Հ-ճեյեօ 14-բել Յ-1-բ եֆ. Գ-ապարե-նէ հրամանն, որուն փութեանը որո՞ւ ըն-
դուն-ն է
Կ, Պօլե, 1907 Մ-բ 15
ԳՐԻԳՈՐ ՇԱՀԱՊԵԱՆ

Ինչպէս այս օրինակէն կը տեսնուի, ձիւրօն օրինական և անթերի ըլլալու համար պէտք է նշանակուի 1. որո՞ւ որ ձիւրօ կ'ըլլուի՞ անոր անունը. 2. փոխարէնին (valeur) ինչ՞ և ի՞նչ ձեւով առնուած ըլլալը. 3. թուականը. 4. ձիւրօ ընողին ստորագրութիւնը: Օրինական և անթերի ձիւրօով փոխանցուած փ.գիրի մը արժէքը հոգիին իրաւունք ունի պահանջելու որմէ՛ որ ուզէ. այսինքն թէ՛ քաջողէն, թէ՛ ընդունողէն և թէ՛ ձէրանթաներէն, և ասոնք առանց ո՛ր եւ է առարկութեան պարտին վճարել հոգիին փ.գիրին փոխարէնը: Սակայն երբ ձիւրօն մէջ յիշեալ չորս կէտերէն մին նշանակուած չըլլայ, փ.գիրին համիլը ձէրանթային պարզապէս փոխանորդը (վերբիլ զանունի) կը նկատուի, և այն առաւելութիւններն զորս տուած է օրէնքը փ.գիրի և հրամանի մուրհակներուն՝ կորսնցունելով, հետեւեալ օրինական առարկութեանց տեղի կուտայ: 1. ձէրանթան երբ անանկանայ, մասան իրաւունք ունի փ.գիրը գրաւելու և «հաճող քրնելով՝ արգիլելու վճարումը. միայն թէ՛ համիլն երբ փ.գիրին փոխարէնը վճարած ըլլալը հաստատէ, «հաճող քր վերցունելով՝ կ'արտունէ զմուխաթապը» փ.գիրին փոխարէնը համիլին վճարել: 2. Մուխաթապն երբ ձէրանթայէն պահանջ մը ունենայ, կարող է հաշուակցել փ.գիրին գումարով. թէև համիլն իրաւունք ունի հաշուակցուած գումարը վերջէն պահանջելու ձէրանթայէն: Եթէ երբեք նոյն պահուն ալ ձէրանթան սնանկացած է, անշուշտ համիլը պիտի տուծէ՛ իրեն ձիւրօ եղած պահուն անշուշտիբ գտնուած ըլլալուն համար: Սբ՛. Մ. էֆ.ն Գ. էֆ.ին ընդունագրել տուած փ.գիրն երբ պակաս ձիւրօով և փոխարէնն առնելով ձիւրօ ընէ, Գ. էֆ.ն և օրին Գ.բ Գ.էն պահանջէ փոխարէնը, Գ. իրաւունք ունի Մ.էն ունեցած պահանջը վար դնելու. թէև Գ.ն իրաւունք ունի հաշուակցուած գումարը Մ.էն պահանջելու: Երբ անպէս, Ա.ն առանց փոխարէնը ստանալու Գ.ի հրամանին վճարելի մուրհակ մը երբ ստորագրէ և Գ. ալ պակաս ձիւրօով և սակայն փոխարէնն առնելով ձիւրօ ընէ Գ.ին, Ա.ն օրին փոխարէնն առած չըլլալը մէջտեղ բերելով իրաւունք ունի չի վճարելու Գ.ին:

Սակայն Գ.ը գիմելով Դին՝ կրնայ առած դրամն ետ պահանջել եթէ ան ալ մնանկացած չէ — Պակաս ճիւղէ յառաջ եկած դատեր և փոս. գիրի ու հրամանի մուրհակներու տէրերուն (համիլ) կրած նիւթական փաստներն այնքան շատ են, որ աւելորդ չեմ համարիր Պատ. Հասարակութեան ուշագրութիւնը հրաւիրել վերի օրինական կետերուն վրայ:

Փոխադիր եւ հրահանքի մտրհակ usnrագրող սկանսնց՝ իրարու փոխադարձ երաշխաւորութեանը վրայ

Պարզ մուրհակի մը մէջ ստորագրող անձեր — ըլլան երաշխաւոր կամ նոյն իսկ պարտական —, եթէ մուրհակին մէջ գրուած չըլլայ էրբեք — էրբեք էրբեք — պարբերութիւնն, ամէն մէկը հաւասար բաժինով պատասխանատու կ'ըլլայ. այսպէս երեք անձանց կողմէ ստորագրուած 30 ոսկինոց մուրհակէն ամէն մէկը պատասխանատու է 10ական ոսկիի փ. գիրի և չ. մուրհակներու մէջ առանց վերի պարբերութեան պէտք ըլլալու, ստորագրութեան տէրերը զատ զատ պատասխանատու են ամբողջ գումարին վճարման: Պարզ մուրհակով պարտական եղողն օրին եթէ ուղէ մաս մը վճարել, պահանջքին տէրն ազատ է չընդունելու և ամբողջը պահանջելու երաշխաւորէն. սակայն փ. գիրով առնելէք ունեցող հովիւ պարտաւոր է տեղի ունեցած մասնակի վճարումն առնելու և մնացեալին համար գիմելու ճերմակներուն. հակառակ պարագային ճերմակները մերժուած գումարին համար պատասխանատու չեն նկատուիր: Պարզ մուրհակով պարտական եղող մէկն օրին երբ չի կրնայ պարտքը վճարել, պահանջքին տէրը մինչև օրինական ժամանցը (միւրուրի գէման) ե'րբ և ո'ր ատեն ուղէ կրնայ պահանջել երաշխաւորէն. մինչդեռ փ. գիրով կամ չ. մուրհակ մը եթէ օրին չի վճարուի և տէրը վարը յիշուած օրինական գործողութիւններն առանց կատարելու՝ անփոյթ գտնուի պահանջքին դանձման, այլեւ ճերմակներուն գիմելու իրաւունքը կը կորսնցունէ: Յիշեալ երաշխաւորութիւնները հրապարակի վրայ սովորաբար գործածուած և Մէճէլէի մէջ +հիւսիսէր Դիւսիսէր անուամբ յորձրջուած երաշխաւորութիւններու համար են (Օր''). երբ մէկը պարտամուրհակին մէկ կողմն «այս գումարին վճարմանը կ'երաշխաւորեմ» ըսէ, այս ձև գրուած երաշխաւորութիւնն անպայման կամ քացարձակ երաշխաւորութիւն (բէֆալէթը մութլագա) ըլլալուն, պահանջատէրն իր պահանջքն ո'ր ատեն և որմէ՛ ուղէ, կրնայ պահանջել այսօրինքն թէ՛ ազատ է պարտականին գիմելէ վերջ երաշխաւորին գիմելու, կամ միւսնոյն ատեն երկուքին գէմ՝ ալ դատավարելու և կամ մէկ մասը պարտականէն դանձելու, և մնացեալ մասն ալ երաշխաւորէն Սակայն երբ մէկը մուրհակին ներքեւ «այս ինչը՝ պարտական եղած սոյն գումարն եթէ չի վճարէ, իմ կողմէս վճարուելուն կ'երաշխաւորեմ» ըսէ, այս ձև երաշխաւորութեան պայմանաւորեալ երաշխաւորութիւն (բէֆալէթը մէշրութա կամ մուսլագա) կ'ըսուի. հետեւաբար պահանջքին տէրը պարտականին գիմելէ առաջ չէ կարող երաշխաւորին գիմել: — Վարկագիր (իթիպար մէքթուպը, lettre de crédit) անուամբ ուրիշ տեսակ երաշխաւորագրութիւն մ'ալ կայ, որուն խմբագրութեան ձևերու զանազանութենէն յառաջ գուրբ օրինական հետեւութեանց վարկատուն անգիտակ ըլլալով, շատ անգամներ փաստուած է երաշխաւորին գէմ՝ բացած դատը կորսնցունելով: Օր''. Մէկն երբ գրէ ուրիշ մէկու մը, ըսելով, «այս ինչին հետ ձեր ունեցած (կամ ունենալիք) գործաւնութեանց մինչև 50 Օսմ. ոսկի գումարին թուա-

կանէս մէկ տարուան համար կ'երաշխաւորեմ», այս ձեւ երաշխաւորութեան Մէ-
 ճէլլէն Գեֆօլթը Էս-Լաֆֆօն-անուէր կուտայ. ուստի տարին լրանալուն՝ պահանջ-
 քին տէրը պարտաւոր է երաշխաւորէն 50 ոսկին պահանջելու կամ նորոգելու վար-
 կազիրը՝ ժամանակի մը համար եւս. հակառակ պարագային, այսինքն առանց
 երաշխաւորին հաւանութիւնը ստանալու՝ եթէ շարունակէ իր գործառնութիւնը
 պարտականին հետ, երաշխաւորը 50 ոսկիի համար ունեցած երաշխաւորութենէն
 կ'ազատի, երաշխաւորութեան պայմանաժամին մէջ նոյնքան գումար պարտակա-
 նին պարտքն ըլլալը հաստատուած եթէ նոյն իսկ ըլլայ: Սակայն երբ երաշխաւ-
 օրող անձը զրէ վերկատուին, «այս ինչին հետ ձեր ունեցած (կամ ունենալիք)
 առեւտր. (կամ սեղանաւորական) գործառնութեանց մինչև 50 Օսմ. ոսկիի գու-
 մարին համար կ'երաշխաւորեմ. հետեւաբար կը խնդրեմ որ իմ կողմէս տեղի ու-
 նենալիք մինչև վերջին զեկուցում (էլաբը Իիէր Գեֆօլթ, jusqu'à dernier avis) հա-
 ճիք յիշեալ պայմանին համաձայն իրեն հետ ձեր գործառնութիւնը շարունակել».
 այս պարագային երաշխաւորն ուզած պահուն երաշխաւորած գումարը վճարելով
 հանդերձ՝ պարտի զեկուցանով վարկատուին այնուհետեւ երաշխաւորութենէ դադ-
 րած ըլլալը Պարզ մներհակով պարտական եղողն եթէ իր պարտքն օրէն առաջ
 վճարէ, պատասխանատուութենէ կ'ազատի. ֆ.գիրնէրու է. 2. մներհակը մէջ՝
 օրէն առաջ վճարողը կրկին վճարելու կը պարտաւորի, երբ մներհակը կորսուած
 ըլլայ, կամ, պահանջքին տէրը սնանկանայ, ֆ.գիր մը կամ 2. մներհակ մը եթէ
 կորսուի, տէրը պարտաւոր է դատարան դիմելու և 3 տարուան համար երաշխա-
 ւորութիւն մ'առաւ վերջ ստանալու գանձման որոշումը: Նոյն միջոցին եթէ մներ-
 հակն ուրիշ մը կողմէ երեւան ելլելով՝ պարտականը կրկին վճարելու ստիպուի,
 երաշխաւորը պարտի առեժեղ վճարուած գումարը՝ ծախքերով միասին:

Փոխգիրին յիշողը (համիլ) պարսիք

Փ. գիրով կամ 2. մներհակով պահանջք ունեցող անձին (համիլ) առաջին
 պարտականութիւնն է օրին վճարողին դիմել և փոխարէնը պահանջել. եթէ չի
 վճարէ՝ 24 ժամուան միջոցին պարտի դիմել պարտականին գանուած տեղւոյն նօ-
 տարին, Դօբօի և Բըօլեօբօի գործողութիւնը կատարելու համար: Նօտարն իր
 կողմէ կարգուած պաշտօնէի մը յանձնելով մներհակը՝ կը խրկէ պարտականին և
 կը պահանջէ դրամը. պարտականը կամ վճարելով կ'ազատէ մներհակը և կամ
 պաշտօնէին կողմէ ներկայացուած նօթաի թուղթին վրայ չի վճարելուն պատճառը
 կը նշանակէ: Ահա ասոր վրայ է որ բրթէսթօի գործողութիւնը կը կատարուի,
 վաւերացեալ օրինակները խրկուելով ֆ.գիրը քաշողին, ինչպէս և ճերանթանե-
 րուն ամբողջին, կամ, ո՛րու որ ուզուի՝ անոր Այս կանոնէն կը հետեւի թէ հօ-
 ժըն օրին փոխարէնը ստանալու համար առանց պարտականին դիմելու և չի վճար-
 ուած ըլլալն առանց բրթէսթօով ապացուցանելու՝ չի կրնար ճերանթաներէն
 պահանջել, ոչ ալ անոնց դէմ դատավարել, Այս տեսակ դատեր յաճախակի
 պատահած և շարունակ մերժուած ըլլալուն, խնդրոյն կարեւորութիւնը կը հար-
 կազրէ զմեզ որոշ օրինակով բացատրելու — Որ'': Իզմիրէն Ատաբազարի վրայ
 քաշուած ֆ.գիր մը ընդունազրուելէ վերջ՝ Պօլիս եթէ մէկու մը անուան հէրօ ըլ-
 լող, և ան ալ ուրիշ մը յաջօրդաբար, ֆ.գիրին վերջին տէրն օրին ընդունազրու-
 ղին ներկայացուենելու համար՝ զայն օրէն առաջ պէտք է խրկէ Ատաբազար, և
 չի վճարուած պահուն այն տեղի նօտարին կողմէ բրթէսթօի գործողութիւնը

կատարուելէ վերջ, վաւերացեալ օրինակները պէտք է սւղարկել տայ թէ ճէ-
րանթաներուն ի Պոլիս և թէ — եթէ ուզուի —, փ.գիրը քաջողին՝ Իզմիր, Նոյն-
պէս, Մեծ կղզի բնակող մէկու մը կողմէ ստորագրուած չ. մուրճակ մը Պոլիս
քանի մը ձեռք — Ճիրօի դրութեամբ — շրջաբերելէն վերջ, հոգիք պարտաւոր է
զայն օրին ներկայացունելու զճարողին՝ Մեծ կղզի Նիթէ չի զճարէ, պարտի դիմել
Պարթալի նօտարութեան և բրօթէսթօի գործողութիւնը կատարել տալ։ Ուստի
հոգիքն առանց առանց՝ եթէ ճէրանթաներէն մէկուն կամ մարողին դէմ Պոլիսի
նօտարութեան դիմելով բրօթէսթօ ընել ուզէ, նօտարը կը մերժէ՝ զճարողին դէմ
բրօթէսթօ եղած չբլլալուն համար, և զճարողին դէմ ալ բրօթէսթօ չընէր, քա-
նի որ զճարողին գործատեղին իր-իրաւատութեան շրջանակէն դուրս է։ Նոյնպէս
հոգիքն, առանց նօտարին դիմելու, ճիշդ զճարողին աղերսագիրով եթէ բողբո-
ճէրանթաներուն դէմ, գատարանին տալիք միակ որոշումը «բու պարտք էր
նախ դիմել զճարողին, և չի զճարած պահուն միայն բրօթէսթօն ընելով ներ-
կայանալ գատարան։ Քանի որ չէս բրած, անյսելի է ճէրանթաներուն դէմ բա-
ցած գատար» ըսելով կը ջնջէ աղերսագիրը։ Սոյն օրինականցութեանէն յառաջ գա-
լիք փաստը՝ գանձման յապաղումէն առթուած տոկոսի անշան կրուստ մըն է։
Սակայն երբ զճարողն անկարող բլլայ կամ ն.յն պահուն սնանկացած՝ հոգիքն կը
մնայ ողբալ օրէնքի սոյն և յետագայ արամադրութեանց անգիտակ բլլալուն հա-
մար և բաւականանալ միմիայն սնանկացողին բաւ մանելով, ստանալու հա-
մար իրեն ինկած բաժինը. զի բրօթէսթօի համար որոշեալ օրինակն պայմանա-
ժամը լրացած բլլալուն, Ֆերմաներուն ամբողջին դէմ ունեցած իրաւունքէն կը
զրկուի ինք, ինչպէս և (եթէ մուրճակը փոխգիր մըն է) քաջողին դիմելու իրա-
ւունքէն, եթէ այս վերջինը փոխարէնը զճարողին հասած բլլալը հաստատէ։ Աճ-
բանթաներուն պատասխանատուութիւնը՝ լոկ նօթախ և բրօթէսթօի գործողու-
թեանց կատարմամբ չապահօվուի. հոգիքն պարտաւոր է նաև նօթախ թուակա-
նէն 15 օրուան միջոցին աղերսագիրով դիմելու գատարան. հակառակ պարագա-
յին, անոնց դէմ բողբոջու իրաւունքը կը կորսնցունէ։ Այս օրինակն ձեւակեր-
պութիւնները Ֆերմաներուն դիմելու հարկին առջև միայն կատարել անհրա-
ժեշտ է։ Սակայն հոգիքն երբ ուզէ դիմել միայն փ.գիրն ընդունողին, ոչ բրօթէս-
թօի հարկ կոյ և ոչ ալ նոյնչափ օրուան միջոցին աղերսագիր տալու. մինչև 5
տարի (որ է «միբուրը դէման») կ'ըր որ՝ ուզէ կրնայ բողբոջել։ Գալով՝ քաջողին,
չազատիր պատասխանատուութիւնէ, 1. եթէ հոգիքն՝ Ֆերմաներուն նկատմամբ
բրածին պէս, նօթախ և բրօթէսթօի գործողութիւնները կատարած և 15 օրուան
միջոցին ալ գատարան դիմած է. 2. եթէ փ.գիրին փոխարէնն ընդունողին խրկած
բլլալը չի կարենայ հաստատել և չետեւարար առջի պարագային, փոխարէնը հա-
նած բլլան եթէ նոյն իսկ հաստատէ, քանի որ իրեն նկատմամբ կատարուած են
բողբոջագիրի և չն. գործողութիւնները՝ միշտ պատասխանատու կը ճանչցուի իսկ
Բ. պարագային, սոյնինքն եթէ Քրօթեմօ չբլլայ իրեն մասին, միայն փոխարէնն ըն-
դունողին հանած բլլալը հաստատելով է որ կ'ազատի պատասխանատուութիւնէ։
— Մուրճակի մը պայմանաժամն երբ տօնական օրի հանդիպի՝ փոխարէնն օր մ'ա-
ռաջ պէտք է գանձել, իսկ նօթախ գործողութիւնը տօնական օրին հետեւեալ
օրը կը կատարուի Սբ'։ Երբ մուրճակի մը պայմանաժամը կիրակի լրանայ, պար-
տականը շարժած օրուրնէ պարտի զճարել և իսկ երբ Նչ. օր լրացած մուրճակի մը
փոխարէնը չի զճարուի, հոգիքն իրաւունք ունի շարժած օր նօթախ գնելու. նմանա-

ԿԻՐԱՍԿԻ. Դ. 5 Հոկտ. — Թշրինի էվվէլ, Ն.Տ. 18 Հոկտեմբեր, ՀձԲ. 23 Բամազան
 ✽ **ՀՅ.** և **Կ. ՀՅ.** Դ. կիրակի Խաչէն յետոյ Եօթը շաբաթներուն Բ. կիրակին
ՅՆ. Ս. Խարիթինէ վկայուհի: **ԼՏ.** Ս. Դուկաս աւետարանիչ: **ՀԲ.** Գամբը
 պայրամի Թ. և վերջին օրը:

ԵՐԿՈՒՇՐ. -Յ. 6 Հոկտ. — Թշրինի էվվէլ, Ն.Տ. 19 Հոկտեմբեր, ՀձԲ. 24 Բամազան
ՀՅ. և **Կ. ՀՅ.** Ս.Ս. Փոկաս հայրապետ և Երանոս՝ առաքեալներուն հետեւող:
 Հարսնիք: **ՅՆ.** Ս. Թովմաս առաքեալ: **ԼՏ.** Ս. Պետրոս Ալկանդարացի կրօնա-
 ւոր: ՓՈՐՔՈՒԿԱԼԻ Թագաւորին զանակալութիւնը:

ԵՐԵՒՇՐ. -Է. 7 Հոկտ. — Թշրինի էվվէլ, Ն.Տ. 20 Հոկտեմբեր, ՀձԲ. 25 Բամազան
ՀՅ. Ս.Ս. Թեկղի, Վառվառէ և Պեղագիս կոյսեր: **Կ. ՀՅ.** Ս.Ս. Թեկղի և Վառ-
 վառէ կոյսեր: **ՅՆ.** Ս.Ս. Սեբղիոս և Բագոս: **ԼՏ.** Ս. Կապրասիոս եպիսկոպոս:

ԶՈՐԵՇՐ. ԲՅ. 8 Հոկտ. — Թշրինի էվվէլ, Ն.Տ. 21 Հոկտեմբեր, ՀձԲ. 26 Բամազան
ՀՅ. և **Կ. ՀՅ.** Պահք: **ՅՆ.** Ս. Պեղագիս ապաշխարող: **ԼՏ.** Ս. Ուրսուլա և
 Ընկերուհի կոյսեր:

ՀԻՆԳՇՐ. ԲԷ. 9 Հոկտ. — Թշրինի էվվէլ, Ն.Տ. 22 Հոկտեմբեր, ՀձԲ. 27 Բամազան
ՀՅ. և **Կ. ՀՅ.** Ս.Ս. Պանդալէոն բժիշկ, Երմոզէս քահանայ և Եւպրասէ կոյս:
ՅՆ. Ս. Յակոբ Արիեան առաքեալ: **ԼՏ.** Ս. Փիլիպպոս եպիսկոպոս վկայ: **ՏՃ.**
 Գատըր կիճէսի:

ՈՒՐԱՍԹ. ԷՅ. 10 Հոկտ. — Թշրինի էվվէլ, Ն.Տ. 23 Հոկտեմբեր, ՀձԲ. 28 Բամազան
ՀՅ. և **Կ. ՀՅ.** Պահք: **ՅՆ.** Ս. Ս. Եղամբէոս և Եղամբէոսի վկաներ: **ԼՏ.**
 Ս. Սեւերիանոս արքայ:

ՇԱՐԱՍԹ. ԷԷ. 11 Հոկտ. — Թշրինի էվվէլ, Ն.Տ. 24 Հոկտեմբեր, ՀձԲ. 29 Բամազան
ՀՅ. Ս.Ս. Մեսրոպ, Եղիշէ, Մովսէս քերթող, Դաւիթ անյաղձ, Գրիգոր Նարեկացի
 և Ներսէս Կլայեցի՝ Պարզամանիչ վարդապետներ: **Կ. ՀՅ.** Ս.Ս. Կալիստրատոս և
 49 վկաներ, և Դուռնկիանոս քահանայ: **ՅՆ.** Ս. Թէոփանէս միանձն: **ԼՏ.** Ս.
 Ռափայէլ հրեշտակապետ: **ՏՃ.** Պիւրծի Ազրէպ (կարծի):

ՅՈՒՇԱՏԵՏՐ

5 Հոկտ. Կիր. [279—87] կէս օր. 6. 40

6 Հոկտ. Բշ. [280—86] կէս օր. 6. 41

7 Հոկտ. Գշ. [281—85] կէս օր. 6. 42

8 Հոկտ. Դշ. [282—84] կէս օր. 6. 44

9 Հոկտ. Եշ. [283—83] կէս օր. 6. 46

10 Հոկտ. Ուր. [284—82] կէս օր. 6. 47

11 Հոկտ. Շր. [285—81] կէս օր. 6. 49

պէս Արիֆէի օրին լրացող մուրհակի մը Կոֆ֊ի գործողութիւնը Պայրամի վերջ կը կատարուի Օրէնքը՝ պօսօի մը վճարօրին Կոֆ֊ի գործողութիւնը բացարձակապէս արգիլած է։ Այս գործողութիւնն ըստ երեւոյթի թէ և աննշան՝ սակայն իրապէս ենթակային առեւտր. գործառնութիւնը վեր ի վայր շրջելու և նոյն իսկ զինքը սնանկութեան առաջնորդելու շարժառիթ մըն է։ Որպէս զի պարտապանը զո՛հ չերթայ մրցակիցներու կողմէ զինքը վարկաբեկ ընելու բնոյթն ունեցող չարամիտ յերիւրանքներու, օրէնքն այս արգիլքը դրած է ասո՛ւ, որով պարտապանը ստիպուած է իր ստորագրած մուրհակին գումարը՝ վճարօրին յաջորդ օրն իսկ անձամբ յանձնելու նօտարին, ստացագիր մը ընդունելով անկէ։ և ասիկա՛ ա՛յն պարագային, երբ օրին պահանջատէրը չէ ներկայացած իրեն՝ անակնկար գանձելու համար — Հ֊Ֆէն, ինչպէս վերև ըսինք, ճերանթաներէն մէկուն կամ ամբողջին դէմ՝ կրնայ 15 օրուան միջոցին բողոքել։ երբ անոնցմէ մէկուն դէմ բողոքել ուզէ՛ պարտի աղբրագիրը անոր գործատեղւոյն գատարանը տալ, իսկ երբ ամբողջին դէմ՝ ազատ է անոնց գտնուած տեղին գատարաններէն մին ընտրելու և ամբողջը հրաւիրելու նոյն գատարանը։ Օր՛, իզմիբէն Պօլիսի վրայ քաշուած փ.գիր մը Պրուսա և Ատանա ճիբօի գրութեամբ շրջաբերելէն վերջ երբ գայ Պօլիս և ընդունագրուի, և նոյն իսկ հոս ալ եթէ մէկ երկու անձերու հէջ ըլլայ, օրին հ֊Ֆէն ընդունողին դէմ Պօլիսի նօտարութեան միջոցաւ նօթա և բրօթէսթօ կատարել տալէն և վաւերացեալ օրինակները ճերանթաներուն Բեպլէր ընել տալէն վերջ, ազատ է Պրուսա և Ատանա գտնուող ճերանթաներն, ինչպէս և իզմիր գտնուող փ.գիր քաշող հրաւիրելու Պօլիսի գատարանն, որպէս զի Պօլիս գտնուող պարտականներուն կամ ճերանթաներուն հետ մէկտեղ դատուին. սակայն եթէ հ֊Ֆէլը միայն Պրուսա գտնուող ճերանթանն դէմ՝ բողոքել ուզէ, պարտի գիմել Պրուսայի գատարանը։ Սոյն կանոնը պահանջքին գանձման վճիռ ստանալու պահուն գործադրելի է միայն. եթէ համիլը Պրուսա գտնուող ճերանթանն սնանկութիւնը պահանջէ, պարտի գիմել Պրուսայի գատարանը, զի օրէնքը բացորոշ կերպով կը արտադրէ թէ՛ վաճառականի մը սնանկութիւնը մի միայն իր (վաճառատեղիին շրջանակին մէջ գտնուած գատարանէն կրնայ պահանջել, Զակերտեցի այս բառը՝ «ընկատեղի» բառէն զանազանելու համար, միանգամայն աւելցունելու համար սա օրէնքն ալ թէ, վաճառականի մը՝ իր առեւտր. գործառնութեանէն յառաջ եկած պարտքին գանձման և կամ սնանկութեան պահանջումին դատը կը տեսնուի վաճառատեղիին շրջանակի («Թիճարթ»)ի գատարանն, իսկ տնական պարտքին գանձման վճիռ ստանալու դատը՝ ընկատեղիին («Զուգուգ»)ի գատարանը։ Օր՛. վաճառատունը Պօլիս եղող մէկու մը՝ իրա ընկած տանը համար դնած նպարեղէնէն զոյսացած պարտքին գանձման դատը իրայի դատարանը կը տեսնուի. նոյնպէս Պօլիս ընկող և սակայն Կանլըճաի մէջ առեւտուրով զրաղող մէկու մը առեւտր. գործէն ծագում առած պարտքին պահանջման դատը՝ Պէյթօզի գատարանը, զի Կանլըճա՛ Պէյթօզի իրաւասութեան սահմանին մէջ է։

Միւրուրը զեմանի վրայ (prescription)

Պարզ մուրհակի մը «միւրուրը գէման»ը՝ 15, իսկ փ.գիրինը 5 տարի է։ Կալով Հ. մուրհակներուն, եթէ պարտականը վաճառական կամ սեղանաւոր չէ և կամ գումարը, առեւտր. գործառնութեան ծնունդ առած պարտք մը չէ՛, 15,

հակառակ պարագային՝ 5 տարի է. թէև չ. մուրհակներն ալ փ. դիրին պէս 5 տարուան ենթակայ են ըսողներ ալ կան, սակայն «Թիճարէթ քանունամէտի»ին 146րդ. յօդուածը շատ բացայայտ է, և վճարեկ Ատեանէն ալ վերի բացատրութեան համեմատ շատ մը որոշումներ տրուած, և դատարանք ալ սովորաբար նոյն ձևով վճռած են և կը վճռեն «միրուրը զէման»ի խնդիրները: «Միրուրը զէման»ը վճարութեան կ'սկսի, չէ՛ թէ մուրհակի թուականէն, և կը վերանորոգուի՝ եթէ պարտականն իր պարտքը հաստատող նամակ մը գրէ պահանջատիրոջ, կամ պահանջատէրը պարտականին դէմ՝ բողոքէ: Սր' և թէ 5 տարին լրանալուն 1 օր մնացած պարտականն իր պարտքը հաստատող նամակ մը գրէ պահանջատիրոջ և կամ վերջինը բողոքէ պարտականին դէմ, ժամանցքը՝ նամակին կամ ազերսագիրին վրայ տեղի ունեցած վերջին դատավարութեան թուականէն կը վերսկսի: Ոմանք կը կարծեն թէ լոկ աղերսագիր տալը բաւական է ժամանցքին առաջին առնելու, մինչ երբ նկատի առնուի օրէնքին այն տրամադրութիւնը թէ՛ «դատարանին ազերսագիր տուողն երբ 6 ամիս չը հետամտի իր դատին՝ ազերսագիրը կը քնջուի (իպթաւ)», աւելորդ կ'ըլլայ կարծեմ՝ այն կարծիքին սխալ ըլլալը հաստատելու համար՝ ուրիշ բացատրութիւն տալը: «Միրուրը զէման»ին առաջին առնելու համար՝ գոնէ մէկ անգամ դատավարութեան մտնելու է. դատարանին որոշում չի տալը կամ դատին ելքին անորոշ մնալը խնդիր չէ՛: Պարզ մուրհակի, փոխ՝ գիրի և չ. մուրհակներու միջև «միրուրը զէման»ի մասին օրինական ուրիշ տարբերութիւն մըն ալ կայ, Պարզ մուրհակով պարտական եղողին — դատավարութեան կոչուած պահուն — առաջին և վերջին ըսելիքը պէտք է ըլլայ. «Տէ՛ր նախագահ, ինձ դէմ բացուած դատին անյսելի ըլլալը հաշակեղնիդ կը խնդրեմ, օրովհետև մուրհակը փրուրը զէմանի ենթակայ եղած է.» մինչդեռ միւս մուրհակներուն մասին բաւական չէ՛ այդ բանաձեւն, այլ պահանջատիրոջ առաջարկութեան վրայ՝ որ և է պարտք չունենալուն համար պարտաւոր է՝ երգում ընելու:

Փոխանակագիրի և Հրամանի Մուրհակներու մասին մեր այն ուսումնասիրութիւնն եթէ ընդլայնել պէտք ըլլար, անշուշտ չը պիտի բաւէին մեր պատուական բարեկամին՝ Թեոփիկ Էֆէնտիի Տարեցոյցին ամբողջ սիւնակները: Մեր նպատակը՝ մասամբ մեր բարեկամին փափագին յագուրդ տալ և մասամբ ալ առեւտրական և սեղանաւորական գործերով զբաղող համայնքին ըստ կարի ծառայութիւն մը մատուցանել ըլլալով, կը բաւականանամ այսքանով:

Կ. Պոլիս, 28 Ապրիլ 1907

Յ. Արամյան



Ա Ղ Ջ Ա Մ ՈՒ Ղ Ջ Ք

Աղէ լրտեա, ո՛ սիւրս իմ. հոգի իմ կաց մընա լուռ.
 Մի՛ ընդ Բախտին ի վրսե այլ ես եկեալ ոգորիմ.
 Մտռացութիւն կոչէ զձեզ, եւ Ոչընչին էք ապուռ :

Դադարեա՛ սիւրս, զի մեռար. որչափ կեցեղ՝ է հերիմ.
 Ըզբերս քո, ո՛վ հոգի, այդէն ի կեզ ամբոփեա.
 Ջի բզլեսին հիզն ի գործ արկէք ո՛չափ զօրէիք :

Կազմ են պօսանք վասրն ձեր, եւ երկուրեակ փոսդ անա
 Բանան ետփս սեալ ի կոյս ամաց ընդ որս ես անցի,
 Ռեպէս ի կող զիմուորի բացեալ կրկին վերք զրժնեայ :

Խաղաղեսչի՛ք յա իտեան այդ ի գրքոյդ ցուրս ճոցի.
 Եցի՛ւ ընդ ձեր զերեզմանս, յորս բուսցի խոս դալար՝
 Նաեւ անուն ձեր ինքնին անյիշատակ եղիցի :

Ոչ սնկեցի խաչ ի ձեզ, եւ ո՛չ իսկ կին մեծափառ,
 Եւ ոչ արձան ոսկեգիր, զորով ուռիք լալականք
 Տառութեալ ծրփեսցին մասամբ օդոց սրտմաբար :

Նրեանադրումք շրմականք, ծաղիկք մբրմունջք եւ կականք
 Պակասեցեն վասրն ձեր. ո՛չ իսկ վրնիս արեսաւոք
 Ջանեունչ մարմնոյդ ցուոց բացցեն ծածկոյք սրխերանգ :

Անասուածի առն հանգոյն՝ գաղտ եւ լրոին քսպասուք
Յուդարկեցիք զիւրեւաւ ընդ նանապարհ մեռելոց.
Անիննդ ի հողմս հոսեսցին շիջելափառ եւ անուր :

Վէմ յընկզմեն աղմրիւ զանդընդական ալեաց ծոց,
Այլ դուք առանց յուզելոյ ցուրցն իսկ անկշիք խորասոյց
Ի վին՝ ուր զնես մեր պընդին քսգիւսք չաբեացքս մերոց :

Հեսս եւ ո՛չ մի դրոճմիցէք յերեսս ալեաց կենցաղոյս,
Ոչ իսկ ումեք յայտ լիցի զի դուք ի մահ գրնացէք,
Ո՛չ ոք ասէն ընդ երբ ձեր մնասցէ քախձեալ եւ անյոյս :

Եւ նուիրական գաղտնութիւնք երազայոյս կենացդ հէք
Յանուր շիրմին խորխորատ անհետ լիցին մինչ ի սպառ,
Ուր ոչ մի ինչ զանցորդաց ոչ յանկուսցէ զպսս երբեք :

Ի՞մ ակն ունիք դուք, աւա՛ղ. Բնութեանն որ մեզ եղել մայր,
Որպէս այլոց մարց՝ ե՛ն ծնունդ գորս յակն առնու առանձին,
Ե՛ն եւ քրեւառ իւր ծընունդ՝ գորքս խրէ նա յամբայր :

Կիսոց սրւան քաղցրութիւնք եւ ամենայն դիւր անձին.
Գէպք ի բարի յաչողեն նոցա՝ յօծար եւ հրլոյ,
Եւ յանապա՛սս իսկ՝ նոցա պերճ սպարանք հանդերձին :

Գիենն ազատ անարգել զառատ քսեանց միտք զառու,
Պատիւր ցընորք իսկ ի կոչ նոցա փութան մքսաղիւր,
Եւ բնաւ զսկին Պակտայ յիւրեանց ազուսըն հեղու :

Իսկ այլք նըրազ սիրեցեալք նըմեցեն, ո՛հ, միտք ի զուր
Ըզգամաբեալ զայն քսին՝ վըսիտ մասամբն ապիկար,
Զի կամեաց ա՛յլ ոք եղբայր բզընընդեանն յորդ աղբիւր :

Թէ ծագեցէ ինչ նոցա բարւոյ իրիք խուն նըբար,
Որպէս ծաղիկ դոյզն արուզ բուսեալ յիւրեանց դաւտ սրմոյն,
Անդէն եւ զայն կոխեցէ սրւարածին գարեապար :

Յայքս նոցա ի նեռուտ շողայ նանանչ մի փայլուն.
Տիւր գեղեցիկ է յոգիս նոցա, բօնուտ սակայն ամբ
Անուտես եւ զայն շիջուցէ ի սեղ սաստիկ սարափոյն :

Յայք հաստատուք, զգօն խարհուրդ են ի կամացն ապրտամբ.
Ոչ դիւրանայ նոցա ինչ, խաբին նենգին առ նախանձ,
Եւ չեւ եղեալ ծովամուխ՝ կորընչին անդ առ ափամբ :

Ի խորտակումըն գլխոց նոցա՝ արծուին ի բարձանց
Ի լերկ նակաս նոցա զկրայն պարտաբարեալ արձակէ,
Զի տոյժդ հա՛րկ իմն է նոցա, գորով չիցէ առնել զանց :

Երէ ոչ կրայն, սակայն բուրզն յիւրմէ խրլեալ յասակէ,
Միճնդեռ չիցէ սասանումն երկրի, վասն է՛ր, ոչ գիտեմ,
Ի գլուխ նոցա կործանեալ՝ քսպառքսպուռ սասակէ :

ԿԻՐՍԱԿԻ. ԳՅ. 12 Հոկտ.—Թշրինի էվվելլ, Ն.Տ. 25 Հոկտեմբեր, ՀձԲ. 30 Բամազան
 ✽ **ՀԹ.** և **Կ. ՀԹ.** Ե. կիրակի Խաչէն յետոյ, Եօձը շարաններուն Գ. Կիրակին:
ԳՆ. Ս.Ս. Պրորոս, Տարագոս և Անդրոնիկոս վկաներ, **ԼՏ.** Ս.Ս. Կրիսպինոս և
 Կրիսպինիանոս վկայ եղբայրներ, **ՏՃ.** Արիֆէ:

ՆՐԱՈՒՇԲ. ԳԼ. 13 Հոկտ.—Թշրինի էվվելլ, Ն.Տ. 26 Հոկտեմբեր, ՀձԲ. 1 Շէվվալ
ՀԹ. և **Կ. ՀԹ.** Ս. Գրիգորիս՝ Աղուանից կաթողիկոսին նշխարներուն զանուկը,
 և Ս.Ս. Թաժուլ, Վարոս, Թովմաս, Անտոն, Կրօնիդէս ճգնաւորներ, և Իննակնեան
 վանքը վկայուող Եօձը Խոտանարակներ, Հարսնիք, **ԳՆ.** Ս.Ս. Կարպոս վկայ և
 Ակլամոնիկէ վկայուհի, **ԼՏ.** Ս. Իգնատիոս Կ. Պօլխի հայրապետ, **ՏՃ.** Բամա-
 զան պայրամի Ա. օրը:

ՆՐԵՔՇԲ. ԳՅ. 14 Հոկտ.—Թշրինի էվվելլ, Ն.Տ. 27 Հոկտեմբեր, ՀձԲ. 2 Շէվվալ
ՀԹ. և **Կ. ՀԹ.** Ս. Ս. Անանիոս, Մատամիա, Բառնարաս, Փիլիպպոս, Յովհան-
 նէս, Շիդա և Սիղուանոս առաքեալներ **ԳՆ.*** Ս. Ս. Նազարիոս և Երվասիոս
 վկաներ, **ԼՏ.** Ս. Պրոկղ Կ. Պօլխի հայրապետ, **ՏՃ.** Բամազան պայրամի Բ. օրը:

ՉՈՐՔՇԲ. ԳԼ. 15 Հոկտ.—Թշրինի էվվելլ, Ն.Տ. 28 Հոկտեմբեր, ՀձԲ. 3 Շէվվալ
ՀԹ. և **Կ. ՀԹ.** Պահր, **ԳՆ.** Ս. Դուկիանոս վկայ, **ԼՏ.** Ս. Ս. Շմաւոն Կանա-
 նացի և Յուդաս Յակորեան առաքեալներ, **ՏՃ.** Բամազան պայրամի Գ. օրը:

ՀԻՆԳՇԲ. ԳՅ. 16 Հոկտ.—Թշրինի էվվելլ, Ն.Տ. 29 Հոկտեմբեր, ՀձԲ. 4 Շէվվալ
ՀԹ. և **Կ. ՀԹ.** Ս.Ս. Դիոնեսիոս Արխապագացի, և Տիմոթէոս ու Տիտոս առա-
 քեալներ, **ԳՆ.** Ս. Դոնգինոս հարիւրապետ, **ԼՏ.** Ս. Զենոր եպիսկոպոս:

ՈՒՐԲԱԹ. ԳԼ. 17 Հոկտ.—Թշրինի էվվելլ, Ն.Տ. 30 Հոկտեմբեր, ՀձԲ. 5 Շէվվալ
ՀԹ. և **Կ. ՀԹ.** Պահր, **ԳՆ.** Ս. Ովսէէ մարգարէ, **ԼՏ.** Ս. Գերարտոս եպիսկոպոս:

ՇԱՐԱԹ. ԳՅ. 18 Հոկտ.—Թշրինի էվվելլ, Ն.Տ. 31 Հոկտեմբեր, ՀձԲ. 6 Շէվվալ
ՀԹ. Ս.Ս. Մատթէոս, Մարկոս, Դուկաս և Յովհաննէս աւետարանիչներ, **Կ. ՀԹ.**
 Ս.Ս. Մատթէոս, Մարկոս, Դուկաս և Յովհաննէս աւետարանիչներ, Դուկիանոս
 քանանայ, և Տարագոս, Պրորոս, Անդրոնիկոս վկաներ և Պեղազիա կոյս, **ԳՆ.**
 Ս. Դուկաս աւետարանիչ, **ԼՏ.** Ս. Եւստարէոս Բիւզանդիոյ եպիսկոպոս, **ՏՃ.**
 Դօջ զամբը (խառնուէք ոչխարաց):

ՅՈՒՇԱՏԵՏՐ

12 Հոկտ. Կիր. [286—80] Կէս օր. 6. 50

13 Հոկտ. Բշ. [287—79] Կէս օր. 6. 51

14 Հոկտ. Գշ. [288—78] Կէս օր. 6. 52

15 Հոկտ. Դշ. [289—77] Կէս օր. 6. 54

16 Հոկտ. Եշ. [290—76] Կէս օր. 6. 55

17 Հոկտ. Ուր. [291—75] Կէս օր. 6.56

18 Հոկտ. Շր. [292—74] Կէս օր. 6. 57

Որդիքն արիանց Գանուբայ մինչ անդր ի Տագ արարդէմ,
Եւ այլ ծագաց մինչ ի ծագս Երկրի գրնան ի կորուս.
Մարք էր նոցա գէթ խնայել անձանց ըզչուն զայն դրժխեմ:

Ի հարկէ իմն բոսիպեալ՝ լըցցեն զկրնեալն ի վերուս,
Թէպէտեւ խիս այն իցէ, չի՛ լինել այնմ հակառակ .
Եւ յայն գուպար ո՛չ բաւէ եւ հերակլեանն ոյժ հարուս:

Յես անըբան կենցաղոյ՝ մահու յինին նըբաւակ
Յես կարճր եւ խիս խրճեկաց՝ դագաղգ՝ անարգ անհանգիս
Ի կիցս ուղեաց՝ ուր զեռայ խուռն ամբոխին հրապարակ:

Անկեալ զլորին անծանօթ ազնւական մահուն խիս,
Եւ փառամու ո՛ք ժրպիրն, առ կօթողել զիր հասակ,
Յոսկեց նոցա կազմէ իւր պատուանդան յաղթ լայնանիս :

Բազմեալ յաթոռ պղնձակուռ՝ Բախսն որ առնէ զայնս ծանակ
Լեղեաւ բացեալ բաթաւէ վասըն նոցա զիրն քապունգ,
Ուսման հարկին ըզնոսա գելու կեռեօքն իւր անհակ :

Փայտ ամենայն՝ ի խոցել զնոսա յինին գեղարդունք.
Առ ոս նոցա դիր ուղիք բաճուցանեն ծանց դարան,
Եւ ցանկի՛ ծաղկանց՝ ըզնոք յինին Երկա՛ք բարամբունք:

Ի մէջ բիրուց ըզբըուտուն հարկանէ շանք ի նայման.
Չարոյ նոցա՛ աչս համակ քրի յինել կոյր գիշեր .
Յիր սիրս քրչին անվրէպ մահուն զընդակ ամենայն:

Շիրիմք ի դուրս ժայթեցեն ըզնոցա նէք նողկ բսուռ.
Առ կենդանեօքն եղիցին նոքա նոխազք քաւութեան.
Երկինք Երկիր վանեցեն զայնս ի մահուն՝ վայր ի վեր:

Բախսն իմ պատեալ մինչ ցայս վայր ձերուս բախսին է նրման,
Ո՛վ հոգի իմ, ո՛վ սիրս իմ. նա՛ եւ զուցէ, ինձ եղո՛ւկ,
Չերդ առաւել դրժընդակ եւ առաւել է դաժան :

Բանքս անպահոյնք չարկանեն ո՛չ զուրս եւ ոչ Երկեղուկ,
Ոգորմ տեսիլս ի հանգէս ածեալ կամ մեծ ինչ դիպուած,
Եւ կամ աղէսս ինչ երգեալս ի մեծ շրտինդն եւ շրտուկ:

Ոչ անսովոր ինչ յօղիւք նիւթեալ բանիցս է անկուած,
Այլ սակայն յոյժ առաւել է մրթագգած եւ սրխուր
Քան զորս ուրեք ի քատերս լուծանէ սոյ ինչ հարուած:

Թէ բնաբ ասեան մերժեն զձեզ, զի՞ դուք բնախն տենչայք զուր-
Հի՞մ կըղկըղաք ըզկենաց յինի՛ք՝ թէ մահ բուռն է հարկ,
Ո՛վ որ չունիքդ ինչ հաւաստ, եւ ի յուսոյ էք թափուր:

Ով դուք զորս ո՛չ մեղկէ սեր, նա՛ եւ ոչ իսկ զինի բարկ,
Ո՛ դառնացեալ եղբարդդ իմ, յիջանել կազմ եղերուք
Յանկութեանն՝ ուր եւ ես ընդ հուպ իցից՝ ի միքն յարկ:

Հե՛տ անկողի՛նք են նորա եւ հովասուն քաղցր շուք.

Ման քան գեղբայր իւր Մորի՛ն լա՛ւ եւս անէ՛ զմեզ ի հունք,
Եւ բուխ նոնի՛ մեկունի՛ց իսկ արկանեն նախանձուկ:

Ո՛վ բոց շիջեալ, բնդ մահաբովոյ այդու նրնջեա՛ մինչեւ ցբուն.
Հրպարսութի՛ւն, զնակաս քա խոնարհեցո՛ առ ծրնգոք,
Հսկիւքայտոյ գեղեղոյ նրեանակի առն հանգոյն:

Մի՛ նրեկաներ ինչ բզեալսըն նախանձոս զանողոք.
Ի խաւարչուսըն Լեթեայ քաղեա՛ց յալիս կամակար,
Թոյլ տուր վերջնոյ բեւեռին վարսել ըզն դազադոք:

Փոռի՛ ուղեաց անկորուս զնեսսրդ պահել չեն յծար.
Չերգրս քա ոչ արձագանգ կրեկնէ, եւ որմ՛ դրժկամակ՝
Չունի յանձին զի անկցի գիւրեալ բսուէր քա օսար:

Պրդի՛նձ քա կա՛րձր է կարի, ո՛ր Կորնթոս, զի քանդակ
Անուան ի նմա դրուեցցի. եւ բազում ա՛յն է զի գրոց
Ոչ զրժէ ինչ ի ցուրս կին քա, Կարբարա՛յդ ըսպիսակ:

Առ ամբառնալ զհամբառոյն արձան ի մէջ բարձր ամպոց՝
Պէտք են մօծի հաննարոյ եւ դոյզնագիւս ինչ բախի.
Եւ Հրամանք են ժըլաս վասն երկոցունց այսք սրոց:

Աւա՛ղ, եւ այր քերթոյ կայ որպէս սարսիղ ոք յախի,
Չի երկոցո՛ւն իսկ մտաւոր զսն սիրելի՛ յոր կան դէտ.
Երազ՛ յորում նա ամբիժ սիրով հարեալ զըւայտի:

Ելողորդով բացական, Քարն իմաստնոց գորոյ զնէ
Ի կիրք անկեալ ընթանան, եւ հասանեն ոչընչի.
Կամ վաս ախարք են նոցա շարաւերուկ շարաղէտ:

Յանգ սիրելոյն զնէ պրնդին, նա յառաջոյ ցանգ փախչի.
Չգիշերն ի բուն ընթանան ըզնէ լուսոյ, եւ այգուն,
Մինչ յմբրոնել կան ըզնոյն, խափնու ի խորս նա հաննի:

Չի՛ գեղեցիկ է գտանել ըզմիջոցաւ անդ ուզոյն
Չայն ինչ յոր մեք բզակեւրսն յինձաք առանձին,
Եւ տեսանել յանդիման զմերոց կենաց քաղցրութիւն:

Չի՛ քաղցր իցէ տեսանել զհամբոյր լուսոյն այգածին
Ի վաղորդայն անդր անկեալ փարեալ ըզտեմբք դիւրամակ
Պերն շինուածոյն՝ զոր մասունք քուխ գիշերոյ կերեցին:

Ի քր է հանոյ իջանել յաղտաղտին ջուրց ի յասակ
Ի գիւս ոսկի նըւագին, որպէս ի հին տաղս երգի,
Եւ նախար առնուլ յաղտական ընդ յարկըս ջուրց սառնորակ:

Քաղցր է բըռչել յոր միտէն ոք բս սրբին հե՛տ հարկի,
Ըզգեղեցիկն իւր գտանել, յիւրսըն ձրգիլ մօտազոյն,
Եւ ի բրբելն՝ հանել զանձս յընդերց հողոյն անարգի:

Յանհրճարին ծածկութեանց անցի իւրոյ իւր հոգւոյն
Ճառագայթել ըզնրժոյս մրսացն իւրոց եւ ըզկրից,
Թըռչուն լինել Բաղբերգակ, նա՛ եւ նրացան բարկութիւն:

Առնել ըզգործ ընդ խորհուրդս յաջողապէս լրծակից,
Սիրել եւ գոլ սիրելի, մարթել զօգոս ի խաղու,
Եւ հայրայթել փառասենչ ըղծիցն արոռ շքալից:

Չանիւ բախսին ընկրկել ի շահուէտս դէպ ժամու,
Եւ զիւրիւ ըզգալ շուրջ զգեղածաղիկ այսիւք քով
Ազնւական սիրային ղողղոջ համբոյր մի աղու :

Չայս բարութիւնս ո՛չ յանախ ընձեռէ դարս ապագով-
Պողիկրաս զիւր մասանին չիւիւր մասնել այժմ ի վճանգ.
Արդ յղիւստեալն իսկ բարեօք չէ՛ ի չարէն յապահով :

Տակաւ տակաւ ուռնուն զմեօք ծովապատիժ ջուրց սահանք,
Թեւակոխեալ ըզսանդղով՝ աշարակացս անառիկ-
Եւ ի խօշին նոցա խուժ խոռովեալ լինին մեր խրախնամք :

Ի ծանակիր պորսս իւրեանց սողացեալ փոկք անարիք
Մինչ ի սեղանքս կոչնոց մեքոց մասչին համարձակ-
Եւ փեռեկեալ ծաւելեացքն լրսին գոռ սպառնալիք:

Սեղանք սրբոց սահարաց մընան թափուր տեւակ .
Սուրբ յուսակուր, ուրացեալ զանուն իւրեանց Ասուծոյն,
Մէն մի խրլեն ի զըլխոց իւրեանց զոսկի լոյս պըսակ:

Արեւ լրբեալ ամայի, ակն ի խոնարհ, շառագոյն,
Չհամագոյիւք արկանէ յաչացն արսուր արիւնոս,
Եւ Հրեւտակն առ երկիր ըզհոսկ յեփն Տայ ողջոյն:

Եւ ոչ մի ինչ չապրեսցի՛, ո՛չ մարդ, ո՛չ ծառ եւ ո՛չ խոս.
Չուրք զզբնաւ ծածկեսցեն, ըզսարաւոյթ եւ ըզսար-
Չի վրէժ քիմուն ի գալ է, քէպէտեւ կաղ, դանդաղկոս:

Ըզթերսս իւր ցըմաւե՛լ բախեսցէ անգղ անդալար,
Եւ շուրջ յածեալ ոչ զքսչէ ուր շինեսցէ ինքեան բոյն,
Եւ քըսանիքքս զերկրաւ հիռ եկեսցէ թեւապար:

Յանմարդաձայն ջուրցն անդունդ յեփոյ անկցի յանկարծոյն,
Եւ ի հողփիւնն յայն վէտք վէտք մանեկածեւք սրփոտեսցեն,
Եւ վընարեա՛լ է անա վասըն երկրի եւ մարդոյն:

Եւ ոչ մի ինչ չապրեսցի՛, նա՛ եւ արդարն իսկ ինքնին.
Լից՛ առանց Տապանի ջուրցըն հեղեղ զայս նըւազ-
Չուր՝ արտասուլն եւ արիւն ազգի մարդկան եղիցին:

Չերեւեսցի լեառն ուրեք. յորում Տապանն համբարակ
Հանդերձեղոց՝ առցէ զկայ, բարձեալ բերեալ յարգանդին
Ըզվեժ ըզհին նահապետն եւ զնոր Աղամարն զերբեակ :

ԿԻՐԱՆԻ. Է՛. 19 Հոկտ. — Թշրինի էվվէլլ Ն. Տ. 1 նոյեմբեր, ՀձՐ. 7 Շէվվալլ.
 ✽ **ՀՅ.** և **Կ. ՀՅ.** Զ. կիրակի Խաչէն յետոյ, Եօժը շարաճնեբուն Դ. կիրակին
ՅՆ. Ս. Յովէլլ Մարգարէ, **ԼՏ.*** Ամենայն Սրբոց տօնը:

ԵՐԿՈՒՇՐ. ԴՅ. 20 Հոկտ. — Թշրինի էվվէլլ Ն. Տ. 2 նոյեմբեր, ՀձՐ. 8 Շէվվալլ
ՀՅ. և **Կ. ՀՅ.** Ս. Ս. Դուկիանոս հարիւրապետ, Յովսէփ աստուածահայր, Յով-
 սէփ Արեմամացի, Դազարոս՝ Քրիստոսի բարեկամը, և Մարթա ու Մարիամ՝ աստ-
 քոյրերը: Հարսնիք: **ՅՆ.** Ս. Ս. Մատրոնա կոյս և Արտեմիոս վկայ: Քիոսցիներու
 տօն: **ԼՏ.*** Մեռելոց:

ԵՐԵՎՇՐ. Դ՛. 21 Հոկտ. — Թշրինի էվվէլլ Ն. Տ. 3 նոյեմբեր, ՀձՐ. 9 Շէվվալլ
ՀՅ. և **Կ. ՀՅ.** Ս. Ս. Թէոդոտոն քահանայ, Զենոն զինաւոր, Մակար, Եւզոր-
 սիոս ու Ռամելոս վկաներ: **ՅՆ.** Ս. Հիլարիոն մեծն: **ԼՏ.** Ս. Հոսրեբրտոս եպիս-
 կոպոս, որսորդներու տօնը: ՌՈՒՍՒՈՅ Կայսեր զահակալուծիւնը:

ԶՈՐԵՎՇՐ. ւՅ. 22 Հոկտ. — Թշրինի էվվէլլ Ն. Տ. 4 նոյեմբեր, ՀձՐ. 10 Շէվվալլ
ՀՅ. և **Կ. ՀՅ.** Պահը: **ՅՆ.** Ս. Ս. Եօժը մանուկներ Եփեսոսի: **ԼՏ.** Ս. Կարոլոս
 Բորրոմէոս կարդինալ արքեպիսկոպոս Մեղիսլանու:

ՀԻՆԳՇՐ. ւ՛. 23. Հոկտ. — Թշրինի էվվէլլ Ն. Տ. 5 նոյեմբեր, ՀձՐ. 11 Շէվվալլ
ՀՅ. Ս. Ս. Խարիժաս և տաւը հազար վկաներ, Արտեմիոս ու Քրիստափոր վկա-
 ներ, և Կալինէ ու Ակիլիոնէ՝ վկայուհիներ: **Կ. ՀՅ.** Ս. Ս. Խարիժեանօք Արտե-
 միոս վկաներ: **ՅՆ.** Ս. Յակոբ տեառնեղոյայր. **ԼՏ.** Ս. Զաքարիա մարգարէ:

ՈՒՐԱԹ. ԷՅ. 24 Հոկտ. — Թշրինի էվվէլլ Ն. Տ. 6 նոյեմբեր, ՀձՐ. 12 Շէվվալլ
ՀՅ. և **Կ. ՀՅ.** Պահը: **ՅՆ.** Ս. Ս. Արեժաս՝ իր ընկեր վկաներով: **ԼՏ.** Ս. Լէ-
 ոնարդոս խոստովանող:

ՇԱՐԱԹ. Է՛. 25 Հոկտ. — Թշրինի էվվէլլ Ն. Տ. 7 նոյեմբեր, ՀձՐ. 13 Շէվվալլ
ՀՅ. Ս. Ս. Ռեթէոս, Դիոնեսիոս, Սեդրեստրոս, Աժանաս. Կիւրեղ Երուսաղէմցի,
 Եփրեմ Խուրի Ասորի, Բարսեղ Կեսարացի, Նրիզոր Նիւսացի, Գրիգոր աստուա-
 ծաբան, Եպիփան Կիպրացի, Յովհան Ոսկեբերան և Կիւրեղ Աղեքսանդրացի՝ 12
 վարդապետներ: **Կ. ՀՅ.** Ս. Ս. Դեմետր վկայ և Բասիլիսկոս քահանայ: **ՅՆ.** Ս. Ս.
 Մարկիանոս և Մարտիրոս նօտարներ: **ԼՏ.** Ս. Եռնեստոս վկայ:

ՅՈՒՇԱՏԵՏՐ

19 Հոկտ. Կիր. [293—73] կէս օր. 6. 59.....

20 Հոկտ. Բշ. [294—72] կէս օր. 7. 00.....

21 Հոկտ. Գշ. [295—71] կէս օր. 7. 01.....

22 Հոկտ. Դշ. [296—70] կէս օր. 7. 02.....

23 Հոկտ. Եշ. [297—69] կէս օր. 7. 03.....

24 Հոկտ. Ուր. [298—68] կէս օր. 7. 05.....

25 Հոկտ. Շր. [299—67] կէս օր. 7. 06.....

ՎԻՍՒՄՈՒԺԱԿԱՆ ՅԱՌԱՋԴԻՄՈՒԹԻՒՆՆԵՐ

Բժշկութեան ամէն ճիւղերուն մէջ մեծ յառաջգիմութիւններ եղան վերջերս. թէ և ներքին հիւանդութեանց ուսումնասիրութիւններ նուազ կատարելագործուած՝ սակայն ներքին կազմակազմի հիւանդագին վիճակն երեւան Տանելու մասին ի գործ դրուած զննութիւններ չունին իրենց երբեմնի միգապատ անորոշութիւնը Գայով վիրաբուժութեան, ելեկարականութեան պէս, վերջին 30 տարիներու ընթացքին մէջ հիւանդի կատարելագործութիւններ և ընդլայնումներ ստացաւ այնպէս որ ի դարուն սկզբնուորութիւնը կոչել կ'արժէ («Վիրաբուժութեան սկիզբնիկ դար») Դէրբերը նեխող մանրէները քնջելու եղանակին՝ հակա-նեխական դրութեան՝ անգլ. մեծանուն Լիսթերի դիւաէն ի վեր, Վիրաբուժութիւնը հասոյական քայլեր առած է, և շատ մը գործողութիւններու մահացու վերջնութիւնը յառաջ բերող նեխում և թարախաւորում այլեւս անհետացած են և, Սյս սխրալի գրեւտով, Լիսթեր մարդկութեան բարեարքներէն եղաւ, ինչպէս իր Տայրենակիցը ձէնըր՝ իր պատուաստով և կազմախօսական և անդամահասական ուսումնասիրութիւններ և վիր. գործիքներու կատարելագործումը Վիրաբուժութեան յառաջացման մեծապէս նպաստեցին Լիւանդը քնացունելու խնդիրն՝ որուն Տանդէպ հին վարպետները շուարած էին, իր լուծումը գտած է այլեւս և վիր. այն ամէն գործողութիւններն, որոնք երբեմն քիչ շատ բիրտ ու անբաւական միջոցներով, (ինչպէս հիւանդը կապելով, կամ ալ քոլով և ափոնի զանազան գեղերով թմբեցունելով) կ'ըլլային, այժմ՝ կատարել զգայագրկութեան մը մէջ տեղի կ'ունենան, Լ'նդհ. զգայագրկութիւն մը ձեռք բերելու համար լուազոյն գեղը քլօրօֆօրմը կամ էթէրնէ. առջինին 30 կրամը կը բաւէ հիւանդները քնացունելու համար. ասիկա մասնաւոր գործիքով մը և կամ ծալլուած թաշկինակով մը քիչ քիչ և օդով խառն՝ հիւանդին շնչել կը արուի Բլօրօֆօրմէն մէկ քանի կաթիլ շնչելը բաւական չէ քնանալու համար, այլ աւելի մեծ քանակ մը պէտք է և միջին հաշիւով՝ մէկ քառորդ ժամ վերջ հիւանդը կրնայ քնանալ և Սլքոլամոններն ու ջրայիններն աւելի ուշ կը քնանան և Ուղղակի քլօրօֆօրմի պատճառաւ մահականութիւնը բացառութիւն մըն է. այսինքն 10,000 հիւանդի վրայ մէկ մահ կը հաշուեն Երչենք միայն թէ քլօրօֆօրմի ենթարկելէ առաջ՝ հիւանդն անպատճառ բժշկական քննութենէ անցունել պէտք է և Լիւանդ մը քլօրօֆօրմի ազդեցութեան տակ երեք ժամուան վիր. ծանր գործողութեան մը կրնայ տակալ. այս տեսողութիւնը վերջին սահմանը կրնայ նկատուիլ և վերջերս ուրիշ թմբեցուցիչ գեղեր ևս գտնուած են Բօքայինն ու սքօլամօնը (Scopolamin) իբրև թմբեցուցիչ ճանչցուած են հեղինակաւոր վիրաբոյժներու կողմէ. բայց ընդհ. զգայագրկութեան մասին իրենց ազդեցութիւնը տարակուսելի է և Ողնածուծին մէջ քօքային ներարկելու դրութիւնը մէկ կողմ թողուած է. սքօլամօնին զալով, չենք գիտեր թէ իր ապագան ինչ պիտի ըլլայ. սկսած են զայն գործածել և փորձել և ճարնական տունկի մը արտադրութիւնն է. 1890ին գտնուած. այբօլի և ջուրի մէջ հայող փոշի՝ որ քիչ շատ զօրաւոր լուծոյթի ձեւով և և փրավալի գրեխով մորթի տակ կը ներարկուի և, Սյս գեղին յառաջ բերած քունն անխռով է. անոր ազդեցութեան տակ հիւանդին գէճք կը կարմրի, շնչառութիւնը կը նուազի և բազկերակն արագ կը զարնէ և Սքօրօ-



ՏԻՐ. ՄԻՀՐՈՆ ԶԱՐԿԱՐԵԱՆ

Ծն. 1857, Կ. Պոլիս : 1881 ին վկայուած Բարիզի Բժշկանոցէն : Վիրաբուժապետ
(opérateur en chef) Եէսի Քուլէի Ազգ. Հիւանդանոցի , 1895 Էն ի վեր :

լամինով զգայալիբը հիւանդին աչքերը թէւ բաց են, բայց նա չի տեսներ և ինչ որ իրեն ընեն՝ չգգար. նոյն իսկ հիւանդի մը ազդրը կտրել կարելի է առանց անոր ցաւ զգացունելու: Այս առաւելութիւններով հանդերձ, դիւրաւ կը տարբադա- գրուի մարմինն վրայ երբեմն միեւնոյն ազդեցութիւնը չընէր, վէրքերու արիւ- նաստման պատճառ կ'ըլլայ, որով իր կարեւորութիւնը թերեւս նուազի: Եղած վիճակագրութիւններ 1189 գործողութեանց վրայ 12 և կամ շատ աւելի քիչ մահ կը ցուցունեն: Վիրարութեան անկէջ առաջ իբր արուեստ նկատուած էր, սակայն այս յառաջգիմութեանց շնորհիւ գիտութիւն ճանչցուած է և աշխարհի ամէն համալսարաններուն մէջ բժշկութեան իբր անբաժան մաս կ'ուսուցանեն զայն: Այսպէս բեկարոյժներ և խոյլախաղարմանողներ գրէթէ անհետացած են և անոնց յաջորդած են վիրաբոյժներ, այսինքն գիտութեան մարդեր: Ասկից առաջ, վիրաբուութեան մեր մեծ վարպետները գործողութենէ վերջ նեխման պատճառաւ յուսահատած էին և այս նկատումով հաղուագիւտ կերպով գործողու- թիւն կը կատարէին և կամ երբեք. եթէ անոնք ունենային հակաանեխուսն և քլոօֆօրմի քունն՝ անշուշտ վիրաբուական ընդարձակ գիտութիւն մը մեզ փոխանցած պիտի ըլլային: Հակաանեխուսն գրութիւնը վիրաբուութեան մէջ իռ- կական յառաջգիմութիւններ շնորհած է. դարմանումի մասին վիրաբոյժներու մեծագոյն մտատանջութիւնն անհետացած է: Վիրաբուութիւնը հիմա ճոխ է. զոր օրինակ որովայնահաստութիւնն ասկից առաջ վտանտաւոր՝ նոյն իսկ մահացու կը նկատուէր, հիմա մեծ դիւրութեամբ և անվտանգ կը կատարուի նախ մը հի-ւանդութեանց արտաճանաչութեան համար մեծ օգտակարութիւն ցոյց տուած է ան, ինչպէս որովայնահաստութեամբ և դանկահաստութեամբ զանազան հիւանդու- թիւններ կարելի է ճանչնալ՝ որոնց համար բժշկութիւնն իր՝ւր պիտի ջանար յաջողի: Վերջին ժամանակներս ալ վիր. արտաճանաչութեան մեծ զարկ տուաւ Ք. Ճառագայթներու (Ռէօնթիէնեան) գիւտն, որու շնորհիւ կարելի կ'ըլլայ ոս- կորներու հիւանդութիւնները ճանչնալ. ինչպէս բեկումները (fracture) և խախ- տումները (luxation). նաև, օտար մարմիններու ներկայութիւնն, ինչպէս երկաթ, գնտակ, կապար, ասեղ և լէյ. Այս միեւնոյն Ճառագայթները, եւ մասնաւորապէս Ռատիօմիները՝ Ճառագայթարութեան (radiothérapie) անուամբ ճանչցուած դարմանի միջոցներ եղան բժշ. զանազան հիւանդութեանց, ինչպէս վերնամաշ- կուռ (epithélioma) անունով ճանչցուած քաղցկեղները, գայլկեղը (lupus, երեսի ու- տիչ որբին), բորը (lèpre ու յուղ) և լէյ. — Համալսարաններու մէջ վիրաբուութեան և լէյ.ի համար մասնաւոր վկայագիրներ չի կան՝ ինչպէս կը կարծէ ժողովուրդն, այլ «տօքթօսա» կոչուած քննութիւններէ վերջ միայն մէկ վկայական կը տրուի: Անձնական ընդունակութեամբ է որ նոր բժշիկը պիտի ընտրէ իբր մասնագիտու- թիւն ներքին արտաբուութիւնը և կամ վիրաբուութիւնը և լէյ. Պէրկման, Բէան, Սրէնսեր, Նէյ և լէյ. իրենց յաջողութիւնը կը պարտին այս ընդունակու- թեան. միթէ նոյն բնական ընդունակութեան շնորհիւ չէ՞ որ գրութիւններ, գործիքներ կը հնարուին. դարձնալ միթէ այն ընդունակութիւնը չէ՞ որ գործու- ղութեան մը յաջողութեանը ստեպ պատճառ եղող գործելու արագութիւն, ճկու- նութիւն և յանգզնութիւն կուտայ: Նաև՝ պէտք չէ մոռնալ որ ամենավեր- ջին կատարելագործութեամբ օժտուած վիրաբուական սրահ մը անհրաժեշտ է վիրահաստութեան յաջողութիւնը դիւրացունելու համար: Այս պատճառաւ է որ ամէն հիւանդանոցներ, ըլլան պետ., ազգ. կամ անհատական՝ ահադին գումար-

ներու պէտք ունին՝ ունենալու համար մասնաւոր յարկաբաժին մը, բաղկացեալ հինգ սրահներէ: Ա. հականեխական գործողութեանց. Բ. նեխեալ գործողութեանց. Գ. ջեռոցներու և հականեխման համար. Դ. քլորօֆօրմի, և Ե. վէրքեր դարմանելու համար: Վիրաբուժական սրահի մը համար կողմնակի լուսաւորումն անբաւական ըլլալով, առաստաղէն ապակեայ բացուած քով մը պէտք է լրացունել այդ պակար: Գիշեր ատեն գործողութեան համար նախընտրելի է ելեկտրական լոյսն. անոր պակասութեանը Լիւքս լամպարները բաւական կը նկատուին: Գետինը մոզաքէ: պատերը կոր անկիւնաւոր և $1\frac{1}{2}$ մէթր բարձրութեամբ յախճապակիով պէտք է գոցուած ըլլան: Պարզ ջեռոցներն ու քալօռիֆէռները պէտք է ջնջել, զի շոգիով ջեռուցումը լաւագոյնն է: Որպէս զի վիրաբոյժը կարենայ գործել, առանց ստիպուելու ձեռքերն աղտոտելու ջուրի ծորակները բանալով գոցելով, լալալսո ա թէսալներ կը գործածուին, այսինքն ոտքով շարժող ծորակներ: Գործողութեան սեղաններուն լաւագոյններն են Ռուսլէնի սեղանը՝ 150 սովի արժողութեամբ, Թիւֆէինը՝ 100, Բէրմէինը՝ 50: Այս սեղաններուն ամէնքն ու թէսալներ ունին, որոնց շնորհիւ կարելի է դարձունել, բարձրացունել, իջեցունել զանոնք, գործողութեան անհրաժեշտ եզող դիրքին համաձայն: Մենք նախապատուութիւն կուտանք այս վերջին տեսակին, որմէ է նաև մեր Ազգ. հիւանդանոցները Սրահներու ջուրը զտուած և 135 ''ով ամլացած պարտի ըլլալ: Վիրաբուժական պիտոյքները պէտք է տարութեան այս բարձր աստիճանին ենթարկուին. այս մասին կրկնակի գործածութեամբ ջեռոցներն անհրաժեշտ են, (զին 100—200 սովի): Նոր պահանջմանց համաձայն, սրահներու մէջ կը ջանան կարելի եղածին շափ քիչ գործիք դնել: Այս մասին ուրիշ շատ բացատրութիւններ կան տալիք: Ամէն պարագայի մէջ պէտք է գիտնալ թէ հին դրութեամբ շինուած գործողութեան սրահներն կերպարանափոխել, նորոգել կարելի չէ: Վերև համառօտակի նկարագրուած վիճակին մէջ դնելու համար՝ նոր յատակադիրձներ, նոր շէնքեր անհրաժեշտ կը դառնան: Պէտք է խոստովանենք թէ Համիտիէ մանկանց Հիւանդանոցի, Հայտար-Փաշայի Կոյս, բժշ. վարժարանին, անդէ. և մեր հիւանդանոցներուն վեր. սրահները (վերջին ժամանակներս կառուցուած), գիտական ներկայ պահանջմանց կը համապատասխանեն: Արդի վիրաբոյժը՝ արամագրելի ամէն միջոցներով մարդկութեան ընծայած ծառայութեան եւ նորանոր աշխատութեանց տեսակետով աւելի հպարտ կ'զգայ ինքզինքը, քան երբեմնի վիրաբոյժը: Վիրաբոյժը բողբոզին անյայտ հիւանդի մը վրայ յարմար ժամանակին գործողութիւն մը կատարելով՝ մահուան կ'ազատէ զայն. եւ այն ասացուածքը թէ «գործողութիւնը յաջողեցան: ըսոյց հիւանդը մեռաւ»): այլեւս արդարացի չէ: Հիւանդին կեանքը փրկելով վիրաբոյժը իրաւի խիստ մեծ գոհունակութիւն մը կ'զգայ, որուն առընթեր պէտք չէ մտնալ որ նիւթական վարձատրութիւնն եւս իրեն չի պակսիր: Եւ իր արնութիւններն ու յուզումներն երբեմն իրովին կը վճարուին — յետ վիրաբոյժներու եւ բժիշկներու կեանքն աղքատներու առողջութեանը նուիրուած է: Ըսոյց անոնք հարուստներու պերճանքին համար ձրիապէս աշխատելու ստիպուած չեն: Ահա այս սկզբունքով է որ, վերջերս, ինչպէս կը յիշուի, Տրքթ. Ռուսլէն հարուստ ամերիկացիի մը հետ ունեցած դատաւարութեանը մէջ իրաւունքը շահեցաւ, երբ կատարած գործողութեանը համար 5000 լիրա կը պահանջէր: Եւ նաև որ վիրաբոյժներ ամէն անգամ որ ծանր հիւանդի մը կանչուին՝ խիստ առատօրէն կը վճարուին: Բաւելադիտապի գործողութեան մը հմբ. անդէ. վիրա-

բոյժ Թրէյփս Լոնտոնի մէջ 25,000 ֆրնս. ոսկի ստացաւ, կիւլեօն միզամանի քար մը հանած ըլլալուն համար՝ 10,000 ֆրնս. ոսկի. Պիլոսթ եւս ամէն ատեն հարուստներէն մեծ գումարներ կ'ստանար եւ 5000 ոսկիէ նուազ գինով գործողութիւն չէր կատարեր: Ակնարոյժ մը առաջատար (cataracte, աչքի սառնեկիւնի վրայ պատած բարակ մաշկ)ի գործողութեան մը համար 5000 ֆրնս. ոսկի ընդունեց եւ Բէան՝ մտաի պալար մը ճեղքելու համար 1500 ֆրնս. ոսկի: Երբ այս վերջին գինը հիւանդը շատ մեծ կը գտնէր, Բէան պատասխանեց թէ նոյն գործողութիւնն ուրիշի մը տարբեր վարձքով պիտի ընէր. սակայն հիւանդը Բի'անի կողմէ գործողութեան ենթարկուիլ ուզելուն՝ պահանջած գինը վճարեց: Ահաւասիկ թէ Բի'նչ կը նշանակէ վիրարութեան մեծ հաշակ ունենալը: Հոս ժամավաճառ ըլլալ չենք ուզեր բացատրելու համար թէ հեղինակութեան մը հասնելու համար որպիսի ջանք եւ տքնութիւն անհրաժեշտ են: Բժշկութեան մէջ ալ նոյնպէս հեղինակութիւն ունեցողներ առատօրէն կը վճարուին: Լոնտոնի մէկ խորհրդակցութեան համար 3000 ֆրն. ոսկի ստացաւ, Բոթէն՝ 2000. — Բայց եթէ այս ականաւոր վիրարոյժներն ու բժիշկները մեծահարուստներու կողմէ լա՛ւ կերպով վճարուիլ կ'ուզեն, միւս կողմէ բազում աշխատութեամբ ստացած իրենց հարստութեան մեծագոյն մասը մարդասիրական գործերու կը ծախսեն: Բէան իր անձնական ծախքով հիւանդանոց մը կ'առուցանել տուաւ. Պիլոսթ՝ աղքատաց համար («սանթօսիոս») մը եւ կիւլեօն՝ նէքերի հիւանդանոցին մէջ մասնաւոր տաղանարներ շինել տուին: Բոլոր ասոնք կը հաստատեն Հիպոկրատի անմահ մտածումը. «Յաւր մեղմացունէ՛լ սասուածային գործ մըն կ'», մտածո՛ւմ որ բնարան եւ ուղեցոյց կը մնայ Բժշկական մարմինին աչքին առջեւ յաւիտենապէս:

Բերս, 7 Մայիս 1907

Մաթ. Արեւիկա Զարչյան

Կենդանագիրներու եւ պատկերներու այն քաղաքիւ յաջող «հիշէ» ներք, զորս ցրուած եւիք Տարեցոյցիս կէտրում, պատասխանեցան՝ իր արուեստ երկար արիւնք Կեննա կատարեալորձող Տիար Մ. Իւրիւնեան ծանօթ «գիւկօկոս»-ին կողմէ:

ԱՌԱՄ. — Տանէտէն՝ Գանդերը ին Գանդեան, Գեորգեան՝ Բուլանը:

ԿԻՐՍԿԻ. քչ. 26 Հոկտ.—Թշրինի էվվէլլ Ն. Տ. 8 նոյեմբերի ՀձՐ. 14 Շէվվալ
 ✽ **ՀՅ.** և **Կ.** **ՀՅ.** Է. կիրակի Խաչէն յետոյ Գիւտ խաչ, որ է Ս. Խաչին զըտ-
 նուիլը, եօմը շարամներուն Ե. կիրակին **ՅՆ.*** Ս. Դեմետր վկայ: (Պարտիզ-
 պաններուն տօնը): **ԼՏ.** Ս. Մատունքներու տօնը: **ՏՃ.** Գաւրմի Ա. օրը: Գա-
 սըմ ֆուրմունասը:

ՆՐԿՈՒՇՐ. քչ. 27 Հոկտ.—Թշրինի էվվէլլ Ն. Տ. 9 նոյեմբերի ՀձՐ. 15 Շէվվալ
ՀՅ. և **Կ.** **ՀՅ.** Ս.Ս. Անաստաս քահանայ, Վարոս և Թէոդորիտէս իր զուակ-
 ներով և ընկեր վկաներով, Հարանիբ: **ՅՆ.** Ս. Նեստորիոս վկայ: **ԼՏ.** Ս.
 Սարեմոնիոս լուսաւորիչ Ալվերնիոյ: ԱՆԳԼԻՈՅ Թագաւորին ծնունդը:

ՆՐԵՒՇՐ. քչ. 28 Հոկտ.—Թշրինի էվվէլլ Ն. Տ. 10 նոյեմբերի ՀձՐ. 16 Շէվվալ
ՀՅ. Ս.Ս. Հիպերիբեան Սամուսատցի վկաներ, Սեւերիանոս Սերաստացի, Բա-
 բելաս վարժապետ՝ իր ուժտունը չորս աշակերտ վկաներով: **Կ.** **ՀՅ.** Ս. Հի-
 պերիբեան վկաներ: **ՅՆ.** Ս.Ս. Տերենտիոս վկայ: **ԼՏ.** Ս. Անդրէաս Ավելլինեան:

ՉՈՐԵՇՐ. քչ. 29 Հոկտ.—Թշրինի էվվէլլ Ն. Տ. 11 նոյեմբերի ՀձՐ. 17 Շէվվալ
ՀՅ. և **Կ.** **ՀՅ.** Պահր: **ՅՆ.** Ս.Ս. Անաստաս վկայ: **ԼՏ.** Ս. Մարտինոս եպիս-
 կոպոս: ԻՏԱԼԻՈՅ Թագաւորին ծնունդը:

ՀԻՆԳՇՐ. քչ. 30 Հոկտ.—Թշրինի էվվէլլ Ն. Տ. 12 նոյեմբերի ՀձՐ. 18 Շէվվալ
ՀՅ. Ս. Յովհան Ոսկերեան: **Կ.** **ՀՅ.** Ս.Ս. Սեւերիանոս Սերաստացի, Բարեկաս
 ծեր և իր ուժտունը չորս աշակերտները: **ՅՆ.** Ս. Ս. Զենոր վկայ և Զենորիա
 վկայուհի: **ԼՏ.** Ս. Հռենատոս Յագաւոր:

ՈՒՐՐԱԹ. քչ. 31 Հոկտ.—Թշրինի էվվէլլ Ն. Տ. 13 նոյեմբերի ՀձՐ. 19 Շէվվալ
ՀՅ. և **Կ.** **ՀՅ.** Պահր: **ՅՆ.** Ս.Ս. Ե. ստաբէոս և Ապղէս առաքեալներ: **ԼՏ.** Ս.
 Ստանիսլաւոս Գօմքա կրօնաւոր:

ՇԱԲԱԹ. քչ. 1 նոյեմբեր —Թշրինի սանի Ն. Տ. 14 նոյեմբերի ՀձՐ. 20 Շէվվալ
ՀՅ. Հին ու նոր, յայտնի և անյայտնի՝ բոլոր Սուրբերը: **Կ.** **ՀՅ.** Ս.Ս. Բարա-
 զամ Անտիոքցի, և Եփեսոսի եօմը մանուկները: **ՅՆ.** Ս. Ս. Կոզմաս և Դամի-
 անոս՝ անարժամներ: **ԼՏ.** Ս. Յովսափատ եպիսկոպոս:

ՅՈՒՇԱՏԵՏՐ

26 Հոկտ. Կիր. [300—66] կէս օր. 7. 07.....

27 Հոկտ. Բշ. [301—65] կէս օր. 7. 08.....

28 Հոկտ. Գշ. [302—64] կէս օր. 7. 09.....

29 Հոկտ. Դշ. [303—63] կէս օր. 7. 10.....

30 Հոկտ. Եշ. [304—62] կէս օր. 7. 11.....

31 Հոկտ. Ուր. [305—61] կէս օր. 7. 12.....

1 Նոյեմ. Շր. [306—60] կէս օր. 7. 12.....

Մանկան և պատանւոյն մարմինը և հոգին ինչ որոշ օրէնքներու համեմատ կը զարգանան: — Որո՞նք են մարմնոյն և հոգւոյն միջեւ գոյութիւն ունեցող աղերսները: — Ընկերական ինչ որոշ սկզբունքի կամ սկզբունքներու պետք է հպատակի դաստիարակութիւնը: — Ասոնք են մանկավարժութիւնը վարող երկու էական տեսակէտները: Արդ՝ ամենահին ժամանակներէն մինչև մեր օրերը, մանկավարժութեան այս երկու հիմերը փոփոխութեան ենթակայ եղած են ի հարկէ: Երկար տառն, տղուն մարմնոյն զարգացման օրէնքները նկատի չառնուեցան. նոյն իսկ եղած է ժամանակ մը՝ ուր մարմինը թշնամի նկատուած է հոգւոյն, և իբր այն՝ ամէն տեսակ խոշտանգանաց ենթարկուած: Առաջը Գրո, առաջը Բարձր Գրո սկզբունքը, որ շատ հին է — այնքան հին՝ որքան է Չենս-Ավէստան —, մինչև է մտ ժամանակներս չէ եղած մանկավարժութեան էական հիմերէն մէկը, թէեւ ամենահին դարերէ ի վեր զանազան մանկավարժներ ջատագոված ըլլան այդ սկզբունքը՝ որ, մեր օրով հետզհետէ կ'ընդարձակի, կը ծաւալի և իրական հիմերէն մէկը կը կազմէ ժամանակակից մանկավարժութեան: — Երկար տառն հոգեբանութիւնը փիլիսոփայութեան մէկ ճիւղը նկատուեցաւ: Հոգւոյն զարգացման օրէնքները բնագոյնական օրէնքներ եղան, ի յառաջագունէ հաստատուած առաւել կամ նուազ ենթադրական և քմածին օրէնքներ, յի՞ դարու սկիզբը, անդիւստի կամ ներքին ինքնադրական և քմածին օրէնքներ, յի՞ դարու սկիզբը, անդիւստի կամ ներքին ինքնադրական հոգեբանութեան կարեւորութիւնը: Գերմ: բուֆֆէստե մը, Դեյնէր, մեծ զարկ մը տուաւ այս հարցին, որ, երեսուն տարիներէ ի վեր, կը յառաջադիմէ գիտութեանց մէջ՝ յառաջադէմ՝ երկիրներ, հանճարեղ գործիներու և յուզաբնութեանց քննարկներէն ենթարկելով դասական հոգեբանութեան օրէնքները, զանոնք վաւերացնելու կամ ուղղելու համար: Ընկերական տեսակէտը, ինքն ալ, նուազ փոփոխութեանց ենթակայ չէ եղած դարերու ընթացքին մէջ. ընդհակառակը, ևս այս՝ շատ հասկանալի է: Ըստ որում տղան կրթել ուզուի եկեղեցւոյն կամ Պետութեան համար, ըստ որում ուզուի անհատականութիւնը մշակել տղուն մէջ, հարկ կ'ըլլայ որդեգրել այն դրութիւնը՝ որ կը յարմարի առաջադրեալ նպատակին: Այսքան բարդ խնդրոյ մը ուսուցման փոփոխութեան համար խիստ սակաւաթիւ այն մէկ երկու էջերուն մէջ՝ զորս ձևովու Տարեցոյցի յարգելի հեղինակը աշխիւ հրատարակ մը կը հաճի տրամադրութեանս տակ գնել, պետի ջանամ, ուղիղ դիմով ձգուած ակնարկով մը, ներկայացնել ժամանակակից մանկավարժութիւնը, վերածուած վերոյիշեալ երկու տեսակէտներուն:

Ա. — Մանկան Բարձր և Գրոն ինչ որոշ սկզբունքներու համեմատ կը զարգանան: — Որո՞նք են Բարձր և Գրոն սկզբունքներու գոյութեան ստիւգող աղերսները:

Ինչպէս ըսի, գրեթէ չի դարձի ի վեր է որ փորձառական գիտութեանց ընձեռած միջոցներով սրտել կը փորձեն մարմնոյն և հոգւոյն զարգացման օրէնքները, ևս այդ երկուքին փոխադարձ ազդեցութիւնները: Այդ միջոցները երեք դասակարգերու կրնան վերածուիլ:

1. Գիտաբանութեան. — Մանկան ծննդեան առաջին օրերէն մինչև որոշ տարիք մը, ուշի ուշով կը հետեւին անոր զարգացման եւ ի գիր կ'առնեն գիտուած երեւոյթները: Ամէն զարգացած անձ, որ նպատաւոր պայմաններու մէջ կը գտնուի եւ

օժտուած է դիտելու կարողութեամբ—կարողութիւն, որ, բռնք անցողակի, կար-
ծաւածէն շատ աւելի հազուադիւր բան մ'է, շնորհիւ մեր կրթական մեթոտնե-
րուն—կրնայ եւ պարտի այս կեր պշխողութիւններ կատարել, ինչպէս կը յանձնա-
բարբուէր, մէկ քանի տարիներ առաջ, Բէ-զա-բէ-տի մէջ, առ Հայ Տիկիւն մը ուղ-
ղուած բաց նամակով մը Դաստիարակներն, իրենք ալ, պարտին նոյն կերպ դիտու-
ողութիւններ կատարել իրենց աշակերտներուն վրայ: Իւրաքանչիւր աշակերտ պէտք
է ունենայ իրեն յատկացուած տետրակ մը, ուր դաստիարակը պարտի նշանա-
կել ընտելանական-հոգեբանական երեւոյթները զորս կը դիտէ անոր վրայ: Այս
կենդանի դիտողութիւնները, միացուած ծնողաց նոյն տեսակ դիտողութեանց,
պիտի կազմեն հոգեբանական կարեւոր յիշատակարան մը, կարեւոր՝ ոչ միայն
հոգեբանական գիտութեան համար, որ անկէ պիտի քաղէ հետեւութիւններ, այլ
նաեւ գործնական տեսակետով, իրեւ Արիագնէի թիւ մը՝ աշխարհ կոչուած այն
չարիւրիմտոյն մէջ ուր պատանեակն՝ արդէն երիտասարդ եղած՝ ինքզինքը նեղ-
ուած պիտի զգայ սպազային:

2. Գործէի Բնուէրը — Կարգաւորութիւնները. — Հոգեբանական գոր-
ծանոցներու մէջ, հանճարեղ գործիներու միջոցաւ, կը փորձեն ճշդել եւ հաս-
տատել, ընդհանրապէս մարմնոյն, մասնաւորապէս արեան շրջանի եւ շնչառու-
թեան երեւոյթներուն եւ հոգեւոյն միջեւ գոյութիւն ունեցող աղբրները, անոնց
փոխադարձ ազդեցութիւնները: Այս փորձերը դպրոցներու մէջ ալ սկսած են կա-
տարուիլ աշակերտաց մարմինը չափելով եւ կշռելով: Այն հիման վրայ թէ՛ արուած
տարիքներու մէջ աղուն մարմինը (եւ մարմնոյն այս ինչ մասերը) պէտք է միջին
որոշ չափ մը եւ կշիռ մը ունենայ, աշակերտները չափելով եւ կշռելով կարելի է
հասկնալ թէ՛ անոնց մարմինը կանոնաւոր կերպով կը զարգանայ թէ՛ ոչ, բոլոր
այնմ դիտելու համար, ի հարկին, պէտք եղած դարմանումներուն:

3. Յարգանք — Բնութիւնները. — Ասոնք կրնան ուղղուած ըլլալ դաստիարակաց
կամ աշակերտաց, Այս վերջին պարագային, աշակերտաց խուճիկը կը ճրակուրուին
գրաւոր կերպով պատասխանել՝ առաջուց մասնաւոր խնամքով պտտրասուած
հարցումներու՝ որոնք նպատակ ունին երեւան բերել տղայոց հոգեկան այս ինչ
երեւոյթը կը հաւաքուին աշակերտաց գրաւոր յայտարարութիւնները, որոց ան-
կեղծութիւնը եւ հաւատարմութիւնը սպառնող պէտք եղած միջոցները ձեռք
տանուած են, կ'ուսումնասիրուին անոնք համբերատար ոգւով եւ գիտական մե-
թոտներով, եւ յետոյ եզրակացութիւններ կը քաղուին անոնցմէ: — Փորձառա-
կան հոգեբանութիւնը մեծ կորով ցոյց կուտայ: Գերմ., Անգլ., Ամերիկացի, Ֆրնս.,
Իտալ., Եռեւտացի, Ռուս հոյակապ գիտուններ իրենց հմտութիւնը ի սպաս անոր
կը դնեն Զանազան ընկերակցութիւններ կազմուած են նոյն նպատակաւ եւ փորձառա-
կան հոգեբանութեան նուիրուած ճոխ մասենազրուութիւն մը կայ այսօր, մասնաւոր
հատորներու եւ պարբերականներու ձեւով: Ենչե՛ք հոս մէկ քանիսն այն արդիւնք-
ներէն՝ զորս արդէն ձեռք բերած է փորձառական հոգեբանութիւնը: — Դասա-
կան հոգեբանութեան մէջ աղան նկատուած է փոքր չափահաս մը: Փորձառա-
կան հոգեբանութիւնը հաստատած է թէ՛ աղուն ուղեղը տարրեր է չափահասին
ուղեղէն: Նորածինին ուղեղին մէջ կը դիտուին՝ տակաւին ջգային բջիջ չէ, որոնք
մասեր, լի անկերպարան նիւթով մը (այդ նիւթը տակաւին ջգային բջիջ չէ), որոնք
ուշ պիտի զարգանան Մինչդեռ շարժման եւ զգայականութեան ծառայող ջգային
կեդրոնները շուտով կը զարգանան, գաղափարաց կապակցութեան ծառայող կեդ-

բոնները ուշ կը զարգանան : Արդ, այս վերջինները կարեւոր ըլլալով իմացական-բարոյական կեանքին մէջ, չենք կրնար պահանջել որ տղան ո՛ր և է տարիքի մէջ ո՛ր և է ուսում սորվի ո՛ր և է չափով Ա՛հա՛ նկատելի կարեւոր կէտ մը, եթէ մտածենք թէ դպրոցական ծրագիրներու պատրաստութեան մէջ ընդհանրապէս նկատի առնուած է ցարդ ո՛չ թէ ինչ որ տղան կարող է սորվի՛ իր ուղեղին կազմութեան համեմատ, այլ ինչ որ մենք, չափահասներս կրնանք սորվիլ և կ'ուղեղք որ տղան ալ բռնի սորվի : Տղուն մարմինը կը զարգանայ յանկարծակցացութիւններով և ոտումներով : Այս ինչ տարիքին մէջ քիչ կ'աճի, այն ինչ տարիքին մէջ աճումը կայուն վիճակ մը կ'ստանայ : ուրիշ տարիքի մը մէջ զօրաւոր կերպով կ'աճի : Արդ, բնախօսական այս երեւոյթը մեծ կարեւորութիւն ունի դաստիարակին համար, սա տեսակէտով որ մարմնական աճումը իր ազդեցութիւնը ունի հոգւոյն վրայ, ստուգիւ, երբ մարմինը կ'սկսի շատ աճիլ, աճման համար պէտք եղած ոյժին մէկ մասը կ'ստիպուի առնել ուղեղէն, որ, հետեւաբար նոյն միջոցին կը տկարանայ. և հոն ինչպէս կ'ըլլայ որ շատ աշխատասէր, շատ ուշադիր, շատ էելո՛ւ աղայ մը կրնայ, ժամանակի մը համար, ծոյլ, անուշադիր և անառնալ մէկէն ի մէկ, Չափահասութիւնը շատ փափուկ տարիք մ'է իմացական-բարոյական կեանքին մէջ, և ինքզինքը կը հարկադրէ հետզհետէ օրէնսդէտներու ուսումնասիրութեան : — Ուսմանց ճիւղերէն ոմանք աւելի շատ կը յոգնեցնեն ուղեղը քան ուրիշները Տարբեր մեթոտներով կատարուած փորձեր՝ տարբեր աշակերտներու վրայ, ցոյց կուտան թէ փողական դիտութիւնները, օտար լեզուները, մարմնակրթանք ամէնէն յոգնեցուցիչներն են : Միայն թէ չէ փորձուած որ յոգնութեան աստիճանը չը՞ փոխուի տարիքի համեմատ : Բաց աստի, ուսուցչին մեթոտը մեծապէս կ'ազդէ յոգնութեան աստիճանին վրայ : Ամէն պարագայի մէջ օգտակար է դիտնալ թէ որո՞նք են ամէնէն աւելի յոգնեցուցիչ ուսմանց ճիւղերը, ժամանակացոյցին մէջ առաւօտեան ժամերը անոնց յատկացնելու համար : — Աշակերտաց անուշադրութիւնը և խղերը՝ դասի ատեն, բնախօսական արդիւնք են շատ անգամ անոնց ուղեղի յոգնութեան : Ուստի, դասի ատեն զրօսնող աշակերտները պատժելէ առաջ՝ պէտք է փնտռել անոնց անուշադրութեան պատճառները, և, եթէ բնախօսական են անոնք (անբնութիւն, անբաւական մնունք, եւլն)՝ յանիրաւի չպատժել անուշադիր աշակերտները : — Հաստատուած է նաև որ աշխատութեան մը փոփոխութիւնը հանգիստ չըբերեր, ինչպէս կը կարծուի ընդհանրապէս : Հանգչելու միակ միջոցը բան մը չընեն է, միայն թէ խնդիր էր դիտնալ թէ աշխատութեան ո՞ր պահուն և ո՞րչափ ատեն օգտակար է հանգչիլ, որովհետև անժամանակ հանգիստ մը եռանդը կը կասեցնէ և սկսուած աշխատութիւնը ապարդիւն կ'ընէ : Յոգնելու սկսած աշակերտներուն՝ օգտակար է խորունկ շնչառութեան մարզանք ընել տալ մէկ քանի վայրկեան : — Յիշողութիւնը պէս պէս է. կան աշակերտներ որ տեսնուած բաները աւելի աղէկ միտք կը պահեն, ուրիշներ՝ լուսած բաները. ոմանք թուանշանները, ոմանք՝ բառերը, ուրիշներ՝ ձեւերը, եւլն : Ահա ինչո՞ւ կան աշակերտներ որ չեն սիրեր ինչ ինչ ճիւղեր՝ զորս կը սիրեն ուրիշ աշակերտները : Այսպէս, անոնք որ լուսած բաները աւելի աղէկ միտք կը պահեն քան տեսնուած բաները՝ չեն սիրեր որ զննողական դիտութիւններէն, ջրանօթութեան մը յիշատակը կարելի է զօրացնել՝ զանազան տեսակ յիշողութեանց միջեւ կապակցութիւն մը հաստատելով : Այսպէս, բառի մ'ուղղագրութիւնը սորվելու ամէնէն ազդեցիկ և ապահով միջոցն է՝ նոյն բառը լսել, տես-

ներէլ, կարդալ և գրելլ Միեւնոյն պատճառաւ, կարեւոր է կապակցութիւն հաստատել ուսմանց այն ճիւղերուն մէջ՝ որոնք ամէնէն աւելի սերտ աղերսներ կը ներկայացնեն իրարու մէջ: Գրուածք մը գոց սորվելու լաւագոյն միջոցն է կրկնութիւնները կարելի եղածին չափ անջատել: Օրինակի համար, ենթադրենք թէ ի բերան ուսանելի գրուածք մ'ունիմ, զոր 12 անգամ միայն կարդալու ժամանակ ունիմ կրնամ 12 անգամ իրարու ետեւէ կարդալ, կամ թէ 5 վայրկեանը անգամ մը կարդալ, և կամ ժամը մէկ անգամ կարդալ. արդ՝ եթէ 12 ժամ վերջը պիտի արտասանեմ, լաւագոյն միջոցն է ժամը 1 անգամ կրկնել. եթէ 12 օրէն պիտի արտասանեմ, օրը մէկ անգամ գրուցել: Ի բերան ուսանելի գրուածքը աւելի երկար ատեն կը մնայ յիշողութեան մէջ եթէ մէկ ծայրէն միւս ծայրը կարդացուի, և ոչ թէ պատասխիկ պատասխիկ, Գործուած սխալ մը վերածնելու տրամադիր է, ուրիշ կը հետեւի թէ յուր գրութիւն է աշակերտին կատարել տալ այնպիսի համարներ որոնք չեն նախապատրաստուած և հետեւարար սխալներու աղբիւրներ են, օրինակի համար, թելագրութեամբ գրել տալ, կամ կարդացնել հատուածներ՝ զորս աշակերտները առաջուց չեն սորված: — Վերջնական են փորձառական հոգեբանութեան ստացած արդիւնքները, Բացարձակ վստահութիւն մը կը ներշնչեն անոնք: — Յանդգնութիւն պիտի ըլլար հաստատական կերպով պատասխանել: Փորձառական հոգեբանութեամբ զլազող գիտուններն, իրենք ամէնէն առաջ, կը խոստովանին թէ ձեռք բերուած արդիւնքներէն շատերը կրկին ու կրկին փորձուելու պէտք ունին տակաւին՝ օրէնքի կարգ անցնելու համար: Բայց ինչ որ ալ ըլլայ անոնց իրական արժէքը—բան մը՝ զոր պագգան միայն պիտի կրնայ հաստատել,— այն փորձառական աշխատութիւնները՝ որոնք նպատակ ունին, մէկ կողմէն, դասական հոգեբանութեան սկզբունքները հաստատել կամ ուղղել, և, միւս կողմէն, հոգւոյն նոր երեւոյթները երեւան բերել, մեր երտխտագիտութեան արժանի են՝ սա տեսակէտով որ դաստիարակութեան փափուկ և կնճռոտ գործը գիտական և ճիշդ հիմերու վրայ գնել կը ձգտին(*): Մենք, դաստիարակներս ալ, նոյն ոգւով տոգորուած, պարտինք, որչափ կը ներեն մեր միջոցները, փորձառական հոգեբանութեան փորձերուն ենթարկել մեր աշակերտները և անձնական համոզում գոյացնել արդէն ստացուած արդիւնքներու իրական արժէքին մասին: Հոգին, մասնաւոր տղուն հոգին, կարի կնճռոտ—պիտի ըսէի աւելցածական—բան մ'է. երբեք դասարանի մը աշակերտները իրարու չեն նմանիր ըլլորովին, անոնց իւրաքանչիւրի դաստիարակութիւնը մասնաւոր միջոցներու կը կարօտի, և, որքան ալ մանկավարժական մեծ հմտութիւն ունենայ դաստիարակ մը, յոսի դաստիարակ մը պիտի ըլլայ՝ եթէ իր մասնաւոր ուշադրութեան և փորձերուն առարկայ չընէ մէն մի աշակերտի բնաստութիւնը և հոգեբանութիւնը, ենթակայ այնքան բազմապիսի ազդակներու:

Բ. — Այլիբաւոյն է՛նչ որ ու յիշուած է իմ ուղբուածքերու պէտք է հոգորդիլ Գործուած բառերու յիշելու է մանկավարժութեան սահմանը Մանկավարժութիւնը լոկ ընդհանուր բան մը չէ. մասնաւոր բան մ'է նաև: Մանկավարժութեան նպատակը միայն ժողովրդ մշակել չէ. մասնական մէջ, այլ նաև մասնաւոր ժամանակի մը և նոյն իսկ մասնաւոր միջավայրի մը պահանջող մասնաւոր յատկութիւններն ալ մշակել

(*) Միայն մանկավարժութիւնը չէ որ օգտուի սկսած է փորձառական հոգեբանութեան նեսագոտութիւններէն, այլ նաև բժշկութիւնը, սնրագործական դասավարժութիւնը, դասասանական գիտութիւնը:

ԿԻՐԱԿԻ. Բ. 2 Նոյեմբերի 2-ը շրինի սանի, Ն.Տ. 15 Նոյեմբերի ՀՃԲ. 21 Շէվվալ:
 * **ՀՅ. և Կ. ՀՅ. Ը.** Կիրակի Խաչէն յետոյ, Եօձը շարաններուն 2. Կիրակին:
ՅՆ. Ս.Ս. Ակիւլինու վկայ՝ իր ընկերներով, **ԼՏ. Ս.** Եւզինէնս եպիսկոպոս վկայ:

ԵՐԿՈՒՇՐ. Է. 3 Նոյեմբերի 2-ը շրինի սանի, Ն.Տ. 16 Նոյեմբերի ՀՃԲ. 22 Շէվվալ:
ՀՅ. և Կ. ՀՅ. Ս.Ս. Ստեփանոս Հոռմի հայրապետ և իրեն հետ վկայ եղող Գա.
 հանաներ, Սարկաւազներ և ժողովուրդներ, Հարսնիք: **ՅՆ. Ս. Ս.** Ակիսիմոս
 եպիսկոպոս, Յովսէփ քահանայ և Այիժալաս սարկաւազ: **ԼՏ. Ս.** Թէոդորոս արքայ:

ԵՐԵՒՇՐ. Է. 4 Նոյեմբերի 2-ը շրինի սանի, Ն.Տ. 17 Նոյեմբերի ՀՃԲ. 23 Շէվվալ:
ՀՅ. և Կ. ՀՅ. Ս.Ս. Ակիսիմոս եպիսկոպոս, Յովսէփ քահանայ, Այիժալաս սար-
 կաւազ և Պղատոն վկայ, **ՅՆ. Ս.Ս.** Յովհաննէզիոս, Երկանորոս և Հերմէս վկա-
 ներ: **ԼՏ. Ս.** Գրիգոր Նէոկեսարացի սքանչելագործ:

ԶՈՐՅՇՐ. Է. 5 Նոյեմբերի 2-ը շրինի սանի, Ն.Տ. 18 Նոյեմբերի ՀՃԲ. 24 Շէվվալ:
ՀՅ. և Կ. ՀՅ. Պահք, ՅՆ. Ս.Ս. Գաղատիոս վկայ և Եւպիստինէ վկայուհի:
ԼՏ. Ս. ՈՅճն արքայ, ՆՈՐՎԵԿԻՈՅ Թագաւորին զահակալուծիւնը:

ՀԻՆԳՇՐ. Է. 6 Նոյեմբերի 2-ը շրինի սանի, Ն.Տ. 19 Նոյեմբերի ՀՃԲ. 25 Շէվվալ:
ՀՅ. և Կ. ՀՅ. Ս. Ս. Մետրովանոս, Աղեքսանդրոս և Պօզոս խոստովանող Կ.
 Պօլիսի հայրապետներ, և Մարկիանոս ու Մարտիրոն նօտարներ: **ՅՆ. Ս.** Պօզոս՝
 Կ. Պօլիսի հայրապետ: **ԼՏ. Ս.** Եղիսարէժ Հունգարիոյ Թագուհի:

ՈՒՐԲԱԹ. Է. 7 Նոյեմբերի 2-ը շրինի սանի, Ն.Տ. 20 Նոյեմբերի ՀՃԲ. 26 Շէվվալ:
ՀՅ. և Կ. ՀՅ. Պահք, ՅՆ. Ս.Ս. Երեսուն երեք վկաներ Մելիտիոնէի: **ԼՏ. Ս.**
 Եղմոնդոս Թագաւոր:

ՇԱՐԱԹ. Է. 8 Նոյեմբերի 2-ը շրինի սանի, Ն.Տ. 21 Նոյեմբերի ՀՃԲ. 27 Շէվվալ:
ՀՅ. և Կ. ՀՅ. և ՅՆ.* Ս.Ս. Գարբիէլ և Միքայէլ հրեշտակապետներ ու բոլոր
 հրեշտակները: **ԼՏ.* Ս.** Աստուածածնի Ընծայուհի:

ՅՈՒՇԱՏԵՏՐ

2 Նոյեմ. Կիր. [307—59] կէս օր. 7. 13

3 Նոյեմ. Բշ. [308—58] կէս օր. 7. 14

4 Նոյեմ. Գշ. [309—57] կէս օր. 7. 15

5 Նոյեմ. Դշ. [310—56] կէս օր. 7. 16

6 Նոյեմ. Եշ. [311—55] կէս օր. 7. 16

7 Նոյեմ. Ուր. [312—54] կէս օր. 7. 17

8 Նոյեմ. Շր. [313—53] կէս օր. 7. 18

տղուն մէջ և Ատի՛ դանազան սահմանները որ տրուած են մանկավարժութեան և նահատականութիւն և համերաշխութիւն միտին մշակել, այս գաղափարն է որ ծնունդ տուաւ 1889ին՝ առաջին New school ին (նոր դպրոց) յիւզղիտ Կարապրի տէր մարդիկ կազմել, «ըլլալու համարձակող», կեանքի պայքարին համար գօտեպընդուած, զա՛ս նշանարանը «նոր» դպրոցներուն, որոնք իրարու ետեւէ կը ծնին շատ երկիրներու մէջ, կ'արժէ անոնց վրայ ամփոփ գաղափար մ'ունենալ:

«Նոր» դպրոցները, ամէնքն ալ մասնաւոր հաստատութիւններ (որչափ գիտեմ), փառաւոր շէնքեր են դպրոցական առողջապահութեան ամէնէն նոր պահանջումները գոհացնող: Այդ դպրոցները, մեծ մասամբ գիշերօթիկ, հաստատուած են գիւղի մէջ, շատ անգամ անտառի մօտ, քաղաքէն առաւել կամ նուազ հեռու: Բայ քաղաքին ազմուկը, ոչ անոր ծանր բուրումները, ոչ անոր զազիր անսարանները, այլ գեղեցիկ, բարոյացուցիչ, մաքուր, առողջարար բնութիւնը: Մաքրութիւնը անտագիւտ է այդ վարժարաններուն մէջ, մաքրութիւն շէնքի և մաքրութիւն աշակերտաց, եւ աշակերտը մաքուր պէտք է ըլլայ ոչ միայն որովհետեւ առողջապահութիւնը և քաղաքավարութիւնը այնպէս կը պահանջեն, այլ նաև որովհետեւ մաքրութիւնը կամփի դաստիարակութեան շատ կը նպաստէ:

«Նոր» դպրոցներուն մէջ մարմնական մարզանք մտքի մարզանաց հաւասար—եթէ ոչ աւելի— վարկ կը վայելին: Մարմնամարզ, պարտաւարիչ և կամաւոր խաղեր, լող, տեսակ տեսակ սքհեստական աշխատութիւններ, ազարակ վարել ևն. սովորական պարագումներ են հոն: Ուսուցումը փորձառական է այդ դպրոցներուն մէջ. բնական գիտութիւնները («նոր» դպրոցները երկրորդական վարժարաններ են) շին ուսուցանք հոն գիրքը գոց ընել տալով, այլ փորձերու և գիտական շրջագոյնութեանց միջոցաւ երեւոյթները գիտել տալով և օրէնքները աշակերտաց իրենց գտնել տալով: Նոյն մեթոտը նաև ուսողական գիտութեանց համար: Օտար լեզուները կը սորվեցունեն methode directeով, և, ինչ որ լաւագոյն է, նախապէս աշակերտները բնակեցնելով, վեց ամիս կամ մէկ տարի, այն երկրին մէջ՝ ուր խօսուած լեզուն սորվիլ կ'ուզեն աշակերտները: Դիտուած ըլլալով թէ ուսողական գիտութիւնները և օտար լեզուները մասնաւոր յարմարութիւն կը պահանջեն, «նոր» դպրոցներէն ոմանք «շարժական գասարան» բուսած գրութիւնը ընդունած են, բայ որում բարձր գասարանի աշակերտ մը՝ որ տկար է այդ ճիւղերուն մէջ, կը հետեւի իրեն յարմարող գասարանին գասերուն: Այս գրութիւնը նմանութիւն ունի Տօքթ. Սիբրնկերի (Մանհայմի վարժարանաց տեսուչ) գրութեան հետ, ըստ որում իւրաքանչիւր գասարանի յարակից գասարաններ կան՝ միեւնոյն տարիքը, լայց մտքի տարբեր կարողութիւններ ունեցող աշակերտաց համար: Դպրոցը՝ չափու վրայ, ա՛հա՛ ուր կը ձգտի այս գրութիւնը, որ հաւանականաբար ապագայի դպրոցին գրութիւնը պիտի ըլլայ: «Նոր» դպրոցներուն մէջ ընդունուած է կարգապահական գրութիւն մը՝ որ պարտի նպաստել միանգամայն անհատականութեան և համերաշխութեան մշակման: «Նոր» դպրոցներու անօրէնները կը հաւատան բնածին բարութեան. այս դաւանանքին հետեւանքով, վստահութեան վրայ հիմնուած է հոն կարգապահական գրութիւնը, և ոչ անվստահութեան վրայ, որ ծնունդ տուած է գաղտնի հակողութեան: «Նոր» դպրոցներու անօրէններուն համար, տղան բարի է ի ընէ. վստահութիւն ցոյց տուր իր բարութեանը վրայ, լուսաւորելով միեւնոյն ատեն անոր իրիջք. այն ատեն տղան շատ լաւ պիտի վարէ ինքզինքը: Կը հետեւի թէ հսկող անուամբ

պաշտօնեայ չկայ «նոր» դպրոցներուն մէջ. աշակերտներն իրենք կ'ընտրեն իրենց ընկերներէն մէկը՝ որ պատասխանատու է դասարանին: Ճնշման բացակայութիւնը դպրոցին մէջ. ահա վարդապետութիւն մը որուն համակիրները սակաւաթիւ չեն ժամանակակից մանկավարժութեան մէջ, թէև ամանք, իրենց գլուխն ունենալով այդ վարդապետութեան հայրը, Եաննախա-Բօլիանի նահապետը, ծայրայեղութեան տարած ըլլան զայն: «Նոր» դպրոցի անօրէնները և ուսուցիչները — որոնք, ըսեմք անցողակի, ամէնքն ալ դպրոցին մէջ կ'ապրին իրենց ընտանիքով — Լը հաւատան թէ իրենք պիտի յաջողին կազմել դարուս պահանջած մարդը, այն է՝ գործելու վարժուած տոկուն նկարագրով մարդը: Այսպէս մեզ պիտի ըսէ թէ իրաւունք ունի՞ն: Ամէն պարագայի մէջ, շատ բան ունինք փոխ առնելիք «նոր» դպրոցներու գրութեան, Ֆիզիքական, Իմացական և բարոյական դաստիարակութեան երբեակ տեսակէտով:

Սկիւսար, 6 Մարտ 1907

Զ. Բ. Ինչյաւ

ՄԱՐԳԱՐԻՏՆԵՐ Ս. ԳՐՈՑ ՄԱՐԳԱՐԷՆԵՐԷՆ

Պռնկուծիւնը, զինին ու քաղցուն սիրքը կը խաբեն. ՈՎՍԷ: Մանգաղը երկընցուցէք, որովհետև հունձըր հասած է. ՅՈՎԷԼ, Լեռները հասասող եւ հովը սեղծող Ասուածը կը յայտնէ մարդու թէ ի՞նչ է անոր խորհուրդը: Անիկա արշալոյսը խաւար կ'ընէ. ԱՄՈՎՍ: Այն որ արծիւի պէս կը բարձրանայ, իր բոյնն եթէ նոյն իսկ լուսաւորներուն մէջ զնէ՝ զինքը հոնկէ վար պիտի իջեցունէ Ասուած. ԱԲԴԱ, Մ. Գերեզմանի ծոցէն կանչեցի, ծայնս լսեցիր դուն, Տէր. ՅՈՎՆԱՆ: Լեռները պիտի շարժին անոր (Այ.) ներքեւ, ու ծորերը պիտի հային՝ կրակին առջեւ եղող մովին պէս, կա՛մ զառիվաբէն հոսող ջուրին պէս. ՄԻՔԻԱ, Ամպերը Ասուծոյ ոտքերուն փոշին են: Գետերը կը ցամքեցունէ ան, լեռները կը դողան անկէ ու բլուրները կը սասանին. ՆԱՌԻՄ: Հպարտ մարդուն հոգին իր ներսիդին ուղիղ չէ. բայց արդարն իր հաւասքով պիտի ապրի. ԱՄԲԱԳՈՒՄ, Ո՛վ խոնարհներ, դուք որ Տիրոջը իրաւունքը կը գործարդէք՝ արդարուծիւն ու խոնարհուծիւն փնտեցէք. ՍՈՓՈՆԻԱ, Վարժքով քանողը, ծակ քակի համար կը վասրելի իր վարձըր. ԱՆԻԷ: Ամէն մարդ ընկերոջը հետ թոյնալը խօսի, արդար ու խաղաղ թող դասասան տեսնայ, թող չարուծիւն չի խորհի ընկերոջը համար եւ թող ասէ սուտ երգումը. ՉԱՔԱՐԻԱ, Իրեւին ծագած տեղէն մինչեւ մարը մտած տեղն՝ ազգերուն մէջը մեծ պիտի ըլլայ Ասուծոյ անունը, եւ ամենուրեք խունկ ու սուրբ ընծայ պիտի մասուցուի Անոր անունին. ՄԱՂԱՔԻԱ:

Ա.Ո.Ա.Մ. — Կարգան էր պարտաւ, Դուն էր Դուն էր Կարտաւ:



ՏԻՐ. Յ. ՍԻՄՈՆՅՈՅ

Բերացի Փայլուն շրջանաւոր
Բարիզի Բժշկանոցի (Faculté de Médecine):

մեկնած են աստեղնական կեանքէ: Ասոնք անվայթ էին, իրենց դժգոհ կ'սպասուէին առանց հաշուելու, ուստի 'բազում' ծայրայեղութիւններէ վերջ՝ օր մըն ալ անհետացան ծիրախաէ կամ ալքոլամիութենէ: Հսկայ մը որ շատ ծանր բեռներ կը վերցունէր, հետզհետէ աւելի ծանր, օր մըն ալ սիրտն ուժգնօրէն կը բռնադատուի, և ինք տխրաբան կը մտայ իր կեանքի մնացորդ օրերուն մէջ, ու չի կրնար նոյն իսկ ամենափոքր ջանք մը ընել՝ առանց սիրտի բարախումներու: — Այս անապարծ ու տարաբախտ զօրաւորներուն քով, տկարներն իմաստուն և զգուշաւոր կը գտնուին իրենց տխրած վիճակի դիտակցութեանը մէջ: Ու ասոնցմէ շատերը կ'ապրին, և կանոնաւոր ու առողջապահ կենցաղ մը ունին: — Դիտելի է որ շատ տարբեր անձանց մէջ՝ անանկ տխրած կազմոյթներ կան որոնք արտաքուստ՝ իրենց ասպարէզի սկզբնաւորութեանը մէջ, անկարող կը նկատուին կեանքի մէջ իրենց աւած ծամբուն կէսն իսկ ընթանալու: Երջանիկ ուրեմն անանք որ կը մեծնան տղջ վատառողջութեան դպրոցը, հոն ուր մարդ կը սորվի բանավարութեամբ առաջնորդել ինքզինք՝ երիտասարդութեան յատուկ յիմարութեան օրերու մէջ: Այսպէս է նաև նիւթական բարիքներու համար. խիստ ճիշդ և համապատասխան է երկու բարիքներուն, սոյնինքն մարմինին ու ստակին մէջ դանուած զուգահեռականը: — Գուռնէկի, ամբիկացի միլիոնատէրը, կ'ըսէ իր բոլոր գիրքերուն մէջ թէ մարդուս ամէնէն մեծ դժբաղդութիւնը հարուստ ծնին է. վասն զի Աղքատութեան Դպրոցն է միակ կրթիչն ուրկէ անհրաժեշտ

կերպով պէտք է անցնել, եթէ մարդ կ'ուզէ մեծ գործերու ձեռնարկել, — Բայց նպաստաւորեալ կամ ոչ, ամէնքն ալ կեանքի մէջ են. ապագան ամէնէն իմաստուններունն է: Վասն զի, պէտք է գիտնալ թէ, առողջութիւնն ո՛չ մկաններու սլոմն է, ո՛չ ալ թամնարամնութիւնը, ճշմարիտ բմբիշներ կան, որոնք թեւեւրին ասնկ մը երկնցունելով կրնան խոշոր հորթ մը վեր առնել ձեռամբարձ, սակայն իրենք՝ պզտիկ տղոց պէս են ինչ ինչ հիւանդութիւններու մասին, որոնցմէ կ'ըզգետնուին, կենցուղիի (սէփիւ) մէկ պզտիկ զանցառութեամբ, կամ թեթեւ ջերտառութեամբ մը: Կեղեցիկ երեւոյթով և ամէնուն սրանկայցում՝ պատճառող վառ մշինքերով առողջ ասն մը շատ անգամ ուռեցք մը կը ներկայացունէ, ճարպակոյտ մը՝ մորթին տակ, գանգաղ արեան շրջանով մը, որուն զիպուսածաւ պատահած թորատապ մը յառաջ կը բերէ անոր աղետալի վախճանն, առ ի չգոծէ հակազգեցութեան: — Կը կարծուի թէ ալբուամարջ հսկայակազմ է և պայծառագեղ զէմբը: Բայց բմբիշը կը գուշակէ անոր մէջ այն գործարաններն որոնք արգահատելի կերպով կը կատարեն իրենց պաշտօնն. իւզոտ սիրտ մը, ահագին լեարդ մը, կարծրացած երիկամունքներ, Ուրեմն մարդոց զէմբը խարէական է իրենց առողջական վիճակին մասին, — Միւս կողմէ, կինն, այլեւն աւելի սկիւր բլլայով հանգերձ, կարծաթ թէ անկէց աւելի գործարաս առողջութիւն մը կը վայելէ: Աւելի երկայն ասուն կ'ապրի, ինչպէս այս բաժնէրս կը հաստատեն եղած բոլոր վիճակագրութիւնները: Ճշմարտութիւնն այն է որ, կինը բնականէն աւելի դիմազուռն է քան թէ տղը, սակայն նուազ գործունեայ. քիչ կ'ապստէ ինքզինքը գուրտի կեանքի մէջ և հետեւարար շատ աւելի նուազ կը մտնի — Առողջութիւնն աւելի այն ընդդիմութեան մէջ է զոր մարդ կրնայ ընել երկրորդական ախտաբոլոր պատճառներու ասուն: Առողջ է այն անձն որ կրնայ ցուրտին ենթարկուիլ, առանց միշտ ունենալու փոզացաւ (angine) մը կամ ցնցատապ (bronchite) մը. տաքին՝ առանց արեան խնուսի, փակուած օդին՝ առանց գրբխացաւէ վախճալու, յաւելուածական աշխատութեան մը՝ առանց քնատութենէ նեղուելու, և շքեղ սեղանի մը ներկայ՝ առանց սասմոքսի խիթերու: Այն է առողջը վերջապէս, որ հաւասարակչիւն է իր ամենօրեայ կեանքին մէջ և որուն մեքենան յաւ և արդիւնաւալ կերպով կը բանի՝ ամենադոյն կորուստներով: Այդ անձն երկար կ'ապրի, և իր վախճանին մօտ՝ հիւանդագին անցած շատ քիչ օրեր կը հաշուէ: — Առողջութիւնն ու երկարակեցութիւնն ամէնէն զօրաւորներուն շէն պատկանի, քանի որ ամսավաճառներու հերակէտները (hercule, — զօրաւոր բայց ամօտօճկալ, — տարածամ մահուամբ ու նոյն իսկ թորախտաւոր կը մեռնին: Անոնք որ կազմով սկիւր բլլայով հանգերձ՝ իրենց ապրելակերպին մէջ ամէն բանի չափաւորութիւն, խոհեմութիւն և զգաստութիւն դրած են. առողջներէ աւելի երկարակեաց եղած են. երևոյթ որ կը հաստատուի՝ երբ նկատի առնենք շատ մը հարիւրամեաներու կեանքը:

Առողջութիւնը կարենալ պահպանելու և զայն վայելելու համար պէտք է նախապէս ինքզինքը ծանշնալ, գիտնալ թէ գործունէութեան շրջանի մէջ ո՛ւր է մարդուս տոկուսութեան սահմանն, ու կենալ՝ երբ այդ սահմանին հասած է մարդս Վասն զի ի՜նչութիւնք մայր մըն է աններող. քե՛չ կը կարեկցի անխոհեմներուն և բրտութեամբ կը կեցունէ զանոնք:

Քերտ, 7 Մայիս 1907

Սթ. Զաչար. Արևել

ԿԻՐՍԱԿԻ. ԲՅ. 9 Նոյեմբեր—Թշրինի սանիւ Կ.Տ. 22 Նոյեմբեր, ՀՃԲ. 28 Շէվվալ,
 ❁ ՀՅ. և Կ. ՀՅ. Թ. կիրակի Խաչէն յետոյ, Եօձը շարամներուն վերջին կի-
 րակին, ՅՆ. Ս.Ս. Ոնեսեփորոս և Պորֆիրիոս վկաներ, ԼՏ. Ս. Զիչիլիա կոյս
 վկայուհի: Երամիշտներու տօնը:

ԵՐԼՈՒՇՐ. ԲԷ. 10 Նոյեմբեր—Թշրինի սանիւ Կ.Տ. 23 Նոյեմբեր, ՀՃԲ. 29 Շէվվալ,
 ՀՅ. և Կ. ՀՅ. Ս Ս. Մելիտոս՝ Անտիոքի հայրապետ, Մինաս եգիպտացի Մելէս
 (կամ միւս Մելիտոս) եպիսկոպոս, Բուրա քահանայ և Շէն սարկուսաց, Հարսնիք,
 ՅՆ. Ս.Ս. Երաստոս և Ողիմպոս առաքեալներ, ԼՏ. Ս. Կղեմէս Հռոմի հայրապետ,
 ՏՃ. Պիւրծի Գովիս (աղեղնաւոր): ՀՈՒԱՆՏԱՅԻ Թագուհիին զահակալուծիւնը:

ԵՐԵՒՇԱ. ԲՅ. 11 Նոյեմբեր—Թշրինի սանիւ Կ.Տ. 24 Նոյեմբեր, ՀՃԲ. 30 Շէվվալ,
 ՀՅ. Ս. Ս. Դեմետր վկայ և Բասիլիսկոս քահանայ, Կ. ՀՅ. Ս. Յովհան Ոսկերե-
 րան, ՅՆ. Ս.Ս. Մինաս, Վիկտոր և Վիկենտիոս վկաներ, ԼՏ. Ս. Փլորա (ծա-
 դիկ) կոյս վկայուհի:

ԶՈՐՅՇՐ. ԲԷ. 12 Նոյեմբեր—Թշրինի սանիւ Կ.Տ. 25 Նոյեմբեր, ՀՃԲ. 1 Զիւլլատէ,
 ՀՅ. և Կ. ՀՅ. Պահր, ՅՆ. Ս.Ս. Յովհաննէս Ողորմած և Նիզոս արքայ, ԼՏ.
 Ս. Կատարինէ կոյս, մեծ վկայուհի:

ՀԻՆՊՇՐ. ԲՅ. 13 Նոյեմբեր—Թշրինի սանիւ Կ.Տ. 26 Նոյեմբեր, 2 ՀՃԲ. Զիւլլատէ,
 ՀՅ. և Կ. ՀՅ. Ս. Ս. Գուրիաս, Սամոնաս, Արիբաս սարկուսաց, Ռոմանոս մի-
 այնակեաց, (Բարուլա) Մանուկ խորտովանող և Հիւսիքոս Զինաւոր, ՅՆ.* Ս.
 Յովհան Ոսկերեքան, Ծնունդի մեծ պահրին բարկենդանը, ԼՏ. Ս. Լինոս Հռոմի
 հայրապետ:

ՈՒՐԲԱՍԹ. ԲՅ. 14 Նոյեմբեր—Թշրինի սանիւ Կ.Տ. 27 Նոյեմբեր, ՀՃԲ. 3 Զիւլլատէ,
 ՀՅ. և Կ. ՀՅ. Պահր, ՅՆ. Ս. Փիլիպպոս առաքեալ, ԼՏ. Ս. Ս. Վիտաղէս և
 Ագրիկոլայոս վկաներ:

ՇԱՐԱՍԹ. ԲՅ. 15 Նոյեմբեր—Թշրինի սանիւ Կ.Տ. 28 Նոյեմբեր, ՀՃԲ. 4 Զիւլլատէ,
 ՀՅ. Ս. Ս. Անդրէաս և Փիլիպպոս առաքեալներ, Կ. ՀՅ. Ս. Փիլիպպոս առաք-
 եալ, ՅՆ. Ս.Ս. Գուրիաս, Սամոնաս և Արիբաս վկաներ, Ծնունդի քառասնորե-
 կայ պահրին սկիզբը, ԼՏ. Ս. Սոսմենէս առաքեալ:

ՅՈՒՇԱՏԵՏՐ

9 նոյեմ. Կիր. [314—52] կէս օր. 7. 19.....

10 նոյեմ. Բշ. [315—51] կէս օր. 7. 19.....

11 նոյեմ. Գշ. [316—50] կէս օր. 7. 20.....

12 նոյեմ. Գշ. [317—49] կէս օր. 7. 20.....

13 նոյեմ. Եշ. [318—48] կէս օր. 7. 21.....

14 նոյեմ. Ուր. [319—47] կէս օր. 7. 21.....

15 նոյեմ. Շր. [320—46] կէս օր. 7. 22.....



ՏԲ. ՅԱԿՈՒ ՏԱՏՈՒՐ

Մասագէտ ականջի, բիթի եւ խոչափողի հիւ. : Ծն. Գետարիա 1860, վրկայուած Կ. Պոլսի Բժշ. վրժրուէն, 1886 : Յետոյ Բարիզ, Վեննա եւ Լոնսոն (1886-89) : Կիւմիւշ Սուլտի, Եէսի Քուլէի եւ Շիշլիի Պուլկր. հիւանդանոցներու մասնագէտ բժիշկը :

Նախընտրելի է, շարածն անգամ մը քանի մը կամօրի Կէ-է-Է կամ եղկ անուշ նշածէթ (huile d'amande douce) կամեցունել, արտաքին ականջին մէջ դիզուած հիւթահոսումներու (sécrétion) ելքը դիւրացունելու համար, — Կատարեալ ու անթերի բուժումի մը հասնելու համար՝ պէտք է կանուխէն խնամել—մասնագէտ բժիշկին պատուէրներուն համաձայն,—ականջի կարգ մը հիւանդութիւններ, օրինակի համար վագելը, ցախը, բորբոքումներ եւլն. : Պէտք է ուշադրութիւն դարձունել նաեւ անքնական խողովիւններու, ինչպէս բզզումի, ականջի դռնիւնի (tintement), սեւական սուլումի եւլն. որոնք ականջին մէջ պարբերական հիւանդութեան մը գոյացումեան ախտանշաններն են :

Ականջը հիւանդութենէ զերծ պահելու համար, անհրաժեշտ է հոգ սանիլ տղոց բիթին եւ կոկորդին, Ըստ երեւութի հասարակ քան կարծուած սեւական ռնզային հոսում մը (catarrhe nasal) եւ կամ յաճախակի կրկնուած կոկորդի ցաւ մը վնասարեւ են խողովութեան : Ծնչառութիւնը պէտք է բացարձակապէս ու միշտ քիթով կատարուի. քերանը գոց, բաց ի պատահական գլխու հարբուխի պարագաներէ : Եթէ սառ հակառակը պատահի, պէտք է կասկածիլ գեղձակերպ մտարոյսի մը (végétation adénoïdienne) մասին, որ շատ յաճախապէս է փորքիկ տղոց բով Ասիկա նշագեղձի (amygdale) նման սեւակ մը միւ է որ կը բուսի յետաւնզական

Ծնած ասեն՝ մանկան մը արտաքին ականջը լեցուած կ'ըլլայ մասնաւոր նիւթով մը (vernix caséosa) զոր պէտք է բառնալ, ջնջել : Եթէ անոր մաքրութեանը մասին կանուխէն հոգածու չի գտնուիր, եւ թողունք որ նիւթը մշտապէս մնայ հոն, թմրկամաղանթին (membrane du tympan) բորբոքումը յառաջ կը բերէ : նաեւ դոնդողու ունեցքներ՝ «կակղամորթակերպ» (molluscoïdes) կոչուած, կամ ճարպոտ այտուցքներ՝ «մաղձամարսու» (cholesteatome. սեւակ մը բշտային [enkysté] ունեցք) կոչուած, որոնք եթէ չի դարմանուին, ապագային կրնան նոյն իսկ ուկորներուն ալ վնասել : 4 ամառ ըլլալէն վերջն է որ կարելի է վստահ ըլլալ թէ մանկիկը կը լսէ՞ թէ ոչ, առանց սակայն բացարձակապէս ճշդելու իր ունեցած խողական կարողութիւնը : — Տղայոց ականջին պէտք է ներարկում կատարել եղկ ջուրով, 8 օրն անգամ մը. եւ կամ, անպատահութիւններու տեղի չի տալու համար—որոնք թերեւս կրնան յառաջ գալ ներարկելու մասին թերավարժ անձերէ, —

փոսիկներուն (cavité rétro-nasale) մէջ, եւ որ յաճախ կը բորբոքի. ուրկէ է որ ականջը կը վազէ եւ լսողական կարողութիւնը կը նուազի. Երբեմն նոյն իսկ, անխնամ թողուելէն, ի վերջոյ կուգայ կը հասնի անդամանելի խլութիւնն, — առանց խօսելու նաեւ այն վսանգաւոր ազդեցութեան մասին, որ կ'ունենայ մանկան զարգացումին եւ անոր ընդհանուր առողջութեան նկատմամբ: Եթէ բժիշկը հաստատէ մաքրոյսին գոյութիւնը մանկան քիթին մէջ, ծնողը, առանց վարանելու պէտք է, մանկիկը ազատելու համար, ընել սան այն անվնաս գործողութիւնն, որ հազիւ քանի մը վայրկեանի տեւողութիւն ունի:

Յանձնարարելի է նաեւ, — մանաւանդ սպասուհիներու եւ դայեակներու, — որ պէտք զի զոտը չառաջնորդեն այնպիսի վայրեր ուր սրինգ, թմբուկ կը զարնուի եւ կամ ասրճանակ կ'արձակուի. Պէտք չէ նաեւ ծափահարել անոնց մօտ, որովհետեւ ուժգին հնչիւնն կամ աղմկայից ձայներ անոնց ականջի թմբուկին հասնելով կրնայ ըլլալ որ անոր թաղանթը պատռեն, որ տակաւին շահ տալու է այդ տարիքին մէջ, երբն ք չի համբուրել նաեւ ականջէն:

Քերտ, 6 Մայիս 1907

Գ Յ Կ. Մեարքա

ԻՒՂԱՆԵՐԿԻ ԳՈՅՆԵՐ

Bistre (մուր), Bitume du Judée (կուպր), Blanc d'argent, - de plomb, - de zinc, Bleu de Chine, - de caeruleum, - de cobalt, - minéral, - de Pompeï, - de Prusse, Brun de Bruxelles, - de Florence, - d'Irlande, - de Mars, - de Prusse, - rouge, - Van Dyck, Carmin (de cochenille), - brûlé, - de garance, - violet, Cinabre (գէֆնէֆիլ), - vert, - jaune, Cristal, Indigo, Jaune d'antimoine, - brillant, - cadmium, - de citron, - d'orange, - de zinc, - indien, - vert, - de Mars, - minéral, - de Naples, - péruvien, - de Rome, - de Strontiane, Laque anglaise (լայգա), - brûlée, - carminée fine, - de fer, - fine (garance Andrinople), - de gaudé, - jaune, - noire, - verte, - violette, Laque de garance, ordinaire, rose, - antique, - dorée, - foncée, - intence, grenat, poupre concentré, jaune capucine, rouge brun, brun rouge, garance brune, brun de Madder, - jaune, - foncé, nuance bitume, brun poupre, carmin de garance, laque de garance bleue, - cramoisie, - rouge, - violette, Laque d'aniline, - géranium, poupre d'aniline, violet Magenta, - Solférino, Massicot, Momie, Noir de bougie, - d'ivoire, - de Siam, - d'os, - de pêche, - de vigne, Ocre brune, - jaune, - d'or, - transparante, - rouge, - de ru, Orangé de Mars, Outremer extra, - foncé, - claire, - jaune, - lapis, - rose, - vert, - violet, Rouge anglais, - indien, - de Mars, - de Ponzozoles, - Saturne (mine orange), - Van Dyck, - de Venise, Sel de Satarne, Stil de grain brun, - jaune, Terre de Cassel, - de Cologne, - d'Halié naturelle, - brûlée, - d'ombre nat. & brul., - de Siene nat. & brul., - vert nat., & brul., Vermillon anglais, - de Chine, - écarlate, - français, - permanent, Vert anglais (5 nuances), - de chrome, - de cobalt, - émeraude, - de gris, - malachite, - minéral, - de Scheele, - Véronèse, Violet de Mars, - mineral, - de cobalt, - Van Dyck.

ԱՌԱՄ. — ԽՈՒՆԻՆԻ ԴՈՒՄ ԻԵՂԷՆ, ԴԵՐ ԺՈՒՆ Դ՛ ԶՈՐԻ

???



ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ [Լիւա]

Ծն. 1872, Զաւեղսագիր եւ «Փանթէզիսթ», Տնօրէն խմբագրապետ երբեմնի «Լոյս»ի եւ արդի «Հանրագիտակրիս Ընդի» արժանագրիչ Հանր. Պարտուց վարչ. հաշուակցութեան Սենեակի

Յօդուած մը . . . այնքան համով որչափ . . . նշանածի մը առաջին պաշտիկը . . . et encore! ահա ինչ որ կը վայլէ տարեցոյցի մը մէջ որ ինքեմն menu մըն է համադասներու, պատրաստուած վարպետ վարպետի մը կողմէ: Եւ անշուշտ ներքի չէ պարզունակ ու պարզունակ entremets մը թխել այդ ճոխութեան մէջ: Ահա ինչը կը մտածեմ . . . թէ ի՞նչ ածեմ . . . որ հաւկիթ մը չըլլայ, bien entendu!

Կիները pour se montrer քուրջեր կը թխեն՝ իրաւ կամ սուտ. je m'en fiche! Ըսյց ես որ կին մը չեմ, ինչո՞վ կրնամ ինքզինքս ցուցագրել այս էջերուն մէջ . . . Բայց կարծեմ թէ յօդուած մը պիտի սկսէի:

* * *

Մուրացիկ մը համոզելով՝ աւելի դիւրին է ձեռքէն խել տանոց մը, քան թէ սիրաշահել . . . կին օձ մը: Pardon de l'expression! Կուտիդ վրայ կոխելէն վերջ՝ pardon ըսելու չափ քաղաքավար ու եպիսկոպոսին պնակը մէկ զրուշ ձգելու չափ galant . . . ամիլուած օ՛րը միայն գեղեցիկ, կնկանը օժտողն ալ բարեկեցիկ, վեմ . . . à . . . շուք ըսուելու աստիճան բարձրասակ, փուրկի մը դուռը նեղ գալու չափ ալ գէր կազմով բարեկամս—անունը տալ ու չտալ, ըստ իմ կամս—տեսէք թէ ի՞նչ փորձանքի մը հանդիպած է 1907 տարւոյն 365 օրերէն այն օրը երբ — կը յիշէք անշուշտ — ցորեկը լոյս եղաւ, եւ գիշերն ալ մութ:

Մարդուկը, որ ստորութիւն չունէր զըսել զըսել Բերա ելլալու, երբ ան-

միջական գնումը մը համար երթալ հարկ կ'ըլլայ . . . գետնին տակը կ'անցնի, ու հազիւ թէ միւս կողմէն դուրս կ'իլլէ, յանկարծ տեղատարափ անձրև մը կ'ըստիպէ հովանոցը բանալ . . . pour ceux de Péra c'est quelque chose banale! Կենցաղագիտութիւնը տառնը խածած օձին կը նմանի. ոչ սկիզբ ունի, և ոչ վախճան, ոչ չափ, ոչ սահման: Անուշիկ կին մը. կարգ մը այն կիներէն որոնց երբ հանգիպելու ըլլա՜ս՝ խաչ հանելդ կուգայ. այնքան սուրբ, այնքան մարուբ: Շրջագետտին ծայրէն բռնկած ըլլալու վախէն ինքզինքը ջուրը նետածի պէս՝ թաց խոտով գէմը կ'իլլէ մեր մարդուկին, մինչ փողոցը վազվզող մարդու կին՝ ժամ առաջ տուն նետուիլ կ'ուզեն թըրջած հագուստին տալու արդուկին: Նայուածքներ կան որոնք զմարդ կը կապեն, և պէտք է ըսել որ աչքին զարկած կապը ոչ եպիսկոպոսը կրնայ քակել և ոչ ալ կրօնական ժողովը: Ահա այդպիսի նայուածքէ մը կը կապուի մեր մարդուկը: Մարդուս գանկին մէջ փոթորիկներ կը ծնին որոնց հետ չեն կրնար բաղդատուիլ ովկիանոսներու թաթառներն ու մրրիկները (Տե՛ս թշուառներու լիան Վալժամը. հեղ՛. Վիքթօռ Հիւկօ): Այսպիսի փոթորիկ մը ծագեցաւ մեր մարդուկին գանկին մէջ ի տես անհովանոց շնորհալի տիկնոջ, որ իր նայուածքով սա տողերը կը գրէր գէմինին սիրտին վրայ, որ անշուշտ քարտաստուակ մը չէր կրնար ըլլալ: Արցունքներս սրելու համար թաշկինակ ունիմ, բայց չունիմ՝ այն թաշկինակը որով կարենամ սրել նախամօր արցունքներն, որոնց տակ կը քամուիմ. . . » Այս տեսակ նուրբ ու բանաստեղծական աչք-գիրէն բնականաբար բան մը չէր կրնար հասկնալ մեր մարդուկը որ սովոր էր կնոջ անուշուժիւնները վայելել մինաւորիկ: Ուստի այս պարագան անմիջապէս կռահելով, շնորհալի կինը լրախ խինդ մը և շուսայտ մտաութիւն մը ցոյց տալով՝ գէպի մարդուկին մտեցաւ Բոաղամոն էշը ըլլալու էր մարդ որ չի հասկնար թէ ի՞նչ ըսել կ'ուզէր այդ փետուրի պէս կինը: Մարդուկը չորս դին նայեցաւ, յոնքերը վեր վար շարժման մէջ գրաւ, չափեց, ձեւեց ու հազիւ որոշումը տուած՝ թէ չէ . . . կինը արդէն թեւն էր, հովանոցին տակ Անձրեւը կը շարունակէր ա՛լ աւելի ուժգին, ա՛լ աւելի յորդ, երբ երկուքը մէկ, առանց բաւ մը արտասանելու կը յառաջանային:—Ստատնային երբ սիրտը նեղանայ երկու սիրակցորդ ամուներու աչքին փոշի մը կը փչէ, որուն ազդեցութենէն երկուքն ալ իրարու գէմ՝ կը գրգռուին և արիւննին կ'եռայ. այդ փոշին կ'ըսեն poudre de diable! Հազիւ տիկնոջ տաքութիւնը սկսած էր հաղորդուիլ մեր մարդուկին, ահա ստատնան է որ իր գէմը կը հանէ բուն իսկ իր կինը որ նոր գնած գլխարկը գլխուն ու հինը ձեռքը արտորոնք թիւնէլ կը վաղէր: Poudre de diable, երկուքին աչքին մէջն էր հիմա — . . . Տասը Բահանայ, չորս Վարդապետ և երկու Եպիսկոպոսներ նոյն իսկ չպիտի կրնային համոզել Տիկինը տուն—գարձին, երբ կը պոռար ամուսնոյն երեսն ի վէրջը — Ան կնիկը ո՞վ էր . . . : Թողո՛ւնք որ այր և կին յանուն քաղաքավարութեան՝ վիճարանին, զիրար համոզեն և կամ համոզուին Գատաստնական Խորհուրդէն, մենք սկսինք յօգուածը:

* * *

Ամուրիութիւնը յորձանք մ'է, իսկ գեղեցիկ կնոջ մը հետ ամուսնութիւնը. . . փորձանք մը: Ասիկա իմ խօսքս է՝ եթէ հաւնեցաք. իսկ եթէ ոչ, որպէս զի հաւնիք՝ Ալֆրէտ տը Միւսէինն է:— Ի՞նչ է գեղեցիկը = Հարցումն տարօրինակ. . . : Գեղեցիկը սահման չունի, կ'ըսեն՝ փիլիսոփան՝ ֆիլի-սօրա չի հասկողոններ, ու երբ

ԿԻՐԱՆԻ. - Գ. **16** Նոյեմբեր—Թշրինի սանիւ ն.Տ. 29 Նոյեմբեր, ՀՃՐ. 5 Զիւլզատէ,
 ✽ **ՀՅ.** և **Կ. ՀՅ.** Ժ. կիրակի Խաչէն յետոյ Յիսնակի պահքին բարկենդանը
ՅՆ.* Ս. Մասնէոս աւետարանիչ, **ԼՏ.** Գալուստին Ա. կիրակին՝ որ է Ննուեղի
 կամուր պահքին բարկենդանը:

ԵՐԿՈՒՇՅԱ. Բ.Յ. **17** Նոյեմբեր—Թշրինի սանիւ ն.Տ. 30 Նոյեմբեր, ՀՃՐ. 6 Զիւլզատէ,
ՀՅ. և **Կ. ՀՅ.** Յիսնակի պահքին Ա. օրը **ՅՆ.* Ս.** Գրիգոր Նիւսացի եպիսկո-
 պոս **ԼՏ. Ս.** Անդրէաս առաքեալ:

ԵՐՆԵՇՅԱ. Բ.Յ. **18** Նոյեմբեր—Թշրինի սանիւ ն.Տ. 1 Դեկտ., ՀՃՐ. 7 Զիւլզատէ,
ՀՅ. և **Կ. ՀՅ.** Յիսնակի պահքին Բ. օրը **ՅՆ.* Ս. Ս.** Պղատոն և Ռոմանոս
 վկաներ **ԼՏ. Ս.** Նաղալիա վկայունի:

ԶՈՐՆԵՇՅԱ. Բ.Յ. **19** Նոյեմբեր—Թշրինի սանիւ ն.Տ. 2 Դեկտ., ՀՃՐ. 8 Զիւլզատէ,
ՀՅ. և **Կ. ՀՅ.** Յիսնակի պահքին Գ. օրը **ՅՆ.* Ս.** Աբղիաս մարգարէ: **ԼՏ. Ս.**
 Բիրիանէ վկայունի **ԱՌՍՏՐԻՈՅ** Կայսեր զահակալուծիւնը:

ՀԻՆԳՇՅԱ. Բ.Յ. **20** Նոյեմբեր—Թշրինի սանիւ ն.Տ. 3 Դեկտ., ՀՃՐ. 9 Զիւլզատէ,
ՀՅ. և **Կ. ՀՅ.** Յիսնակի պահքին Դ. օրը **ՅՆ.* Ս.** Գրիգոր Դեկապօլիսի եպիս-
 կոպոս **ԼՏ. Ս.** Փրանկիակոս Բասաերիոս կրօնաւոր:

ՈՒՐԱԹ. Դ.Յ. **21** Նոյեմբեր—Թշրինի սանիւ ն.Տ. 4 Դեկտ., ՀՃՐ. 10 Զիւլզատէ,
 ✽ **ՀՅ.** և **Կ. ՀՅ.** Յիսնակի պահքին Ե. օրը **Ս.** Աստուածածնի Էրեք տարե-
 կան Ընծայումը՝ տաճարին **ՅՆ.* Ս.** Աստուածածնի Ընծայումը **ԼՏ. Ս. Վլատ-**
վոուէ վկայունի:

ՇԱԲԱԹ. Դ.Յ. **22** Նոյեմբեր—Թշրինի սանիւ ն.Տ. 5 Դեկտ., ՀՃՐ. 11 Զիւլզատէ,
ՀՅ. Ս.Ս. Գրիգոր սբանչեղագործ, Նիկողայոս հայրապետ և Միւռոն եպիսկո-
 պոս **Կ. ՀՅ.** Ս.Ս. Գրիգոր սբանչեղագործ և Միւռոն եպիսկոպոս **ՅՆ.* Ս. Ս.**
 Փիլիմոն, Արքիպպաս և Ռենսիմոս առաքեալներ **ԼՏ. Ս.** Սարա արքայ:

ՅՈՒՇԱՏԵՏՐ

16 Նոյեմ. Կիր. [321—45] Կէս օր. 7. 22

17 Նոյեմ. Բ₂. [322—44] Կէս օր. 7. 22

18 Նոյեմ. Գ₂. [323—43] Կէս օր. 7. 23

19 Նոյեմ. Դ₂. [324—42] Կէս օր. 7. 23

20 Նոյեմ. Ե₂. [325—41] Կէս օր. 7. 23

21 Նոյեմ. Ուր. [326—40] Կէս օր. 7. 23

22 Նոյեմ. Շր. [327—39] Կէս օր. 7. 23

անոնցմէ մէկը ամուսնանալու ելլոյ՝ պրպտելով, մտղելով կ'ընտրէ Տատ մը, ու կ'ամուսնանայ, և բնական է որ անդալարար սահմանած կ'ըլլայ գեղեցիկը, այնպէս որ երբ իրեն հարցուի. — Ի՞նչ է գեղեցիկը . . . պիտի պատասխանէ անձրէպ. — Հարցո՞ւմն տարօրինակ . . . կնի՞կս . . . ։ Ամէն մարդու կինը իրեն համար գեղեցիկութեան սահմանն է։ Աստուած բարի վայելում տայ. ո՞վ ի՞նչ կրնայ ըսել. բայց ներեցե՛ք երկու խօսք. (պէտք է ըսել որ ձեռքիս մէջ դաւաթ մը մարմնալու չունիմ, ու սեղանը որուն առջև կը գտնուիմ՝ այս պահուս, Թօքթլէտնի կողմէ աստուած չէ՛ . . .) Տե՛ս Արէտ — Ելքէնճեան գրամարտ, բայց հոս ատով շատ գրադիլ մեզ չէ մարթի— Ի՞նչ պէտք է ըսել այն կարգ մը ամուսիններուն համար որոնք կնոջ գեղեցիկութիւնը անոր բերած սնտուկին մէջ կը փնտռեն, ու գեղեցիկ զաւակ մը ունենալու համար պառկած սենեակնուն պատին վրայ թոմպուլիկ պատկեր մը կը կախեն ու անով կը մխիթարուին. ու երբ այդ կարգի մէկու մը հարցնելու ըլլաս. — Ի՞նչ է գեղեցիկը . . . կը պատասխանէ. — Հարցո՞ւմն տարօրինակ . . . քսակ ու անոր երեսէն վաստկած սակաւ— Ամէն ամուսինի համար գեղեցիկին սահմանը կը փոփոխուի. ինչպէս կը տեսնակք՝ խառնուածքի, ճաշակի խնդիր։ Երեկոյն թի մէջ՝ ես գեղեցիկ կը գտնեմ՝ օրիորդ մը, և բնաւ տիտիկ ընել չի տալով կը պարեմ՝ ու կը պարեմ՝ անոր հետ, մինչդեռ նոյն օրիորդը քսակի մէջ, երբ changez les dames թուռին ուրիշ մը թեւը անցնի . . . վրան փուշ փուշ կ'ըլլայ, կնոջ մը համար որ շոգենաւին մէջ գէմն նստած է, գեղեցիկ է կ'ըսեմ ու հագու տեղաւորուած, պարզած լրագրիս կէտէն ատեն ատեն ճաթօ կ'ընեմ, դէմքը վայելելու համար. բարեկամս կուգայ ու «տիրտք ալ չը՞ խառնուիք կոր» ըսելով, կ'ստիպէ թողուլ տեղս— Ի զուր կը ջանամ համոզել մէկ բարեկամս որ ետ կենայ ամուսնանալէ օրիորդին հետ, որուն մասնաւոր ազդուութիւնները կը թուեմ՝ մի առ մի, ու յաւարտ երեմիականիս, ծուկնի վրայ դալով, արցունքներովը ձեռքերս կը թրջէ, որպէս զի ետ առնեմ խօսքերս ու փոխեմ գաղափարս։ Ճամբան պատահաբար հանդիպած մէկ կնկանը նկարագրականը կ'ընեմ մէկու մը. մագերէն մինչև սիլոէ պօթերը ու հաղիւ թէ կը վերջացունեմ՝ սքանչացուն մը, խօսակիրս զիս կ'ընդմիջէ ու կ'այլապնէ զիս անճաշակ մէկը ըլլալու համար։

Ուրեմն . . . , ո՞րն է գեղեցիկը. — Հարցո՞ւմն տարօրինակ . . . — Բայց օրինաւոր . . . Ուստի գեղեցիկին սահմանը կարելի է տալ միմիայն . . . հայելին նայելով, որովհետեւ եթէ ճաշակները ամէն անհատի մէջ կը փոխուին ու կը տարբերին, հայելին մէջի գեղեցիկը ամէնուն գեղեցիկն է։ — Զկայ մէկը որ ինքզինքին հաւանած չըլլայ, ու այս ճշմարտութիւնը իմն չէ . . . հայելիինն է։ Դեռ կ'ուզէի խօսիլ գեղեցիկին վրայ. սակայն ափսո՛ս որ յօգուած մը գրել ստիպուած եմ։

* * *

Cherchez la femme ! Ահա յանկերդ մը զոր կը գործածեն Ֆրանսայի հաշակաւոր գերասաններէն մինչև մեր բուրգ գուլպայ հագնող տիկիները։ Ամէն բանի պատճառը ունի. և ամէն պատճառի տակէն կին մը կ'ելլայ անպատճառ . . . ։ Զեմ՝ գիտեր ինչո՞ւ կիները կը դատափետուին, ու մեզը քուսածի պէս ամէն մարդ զրանին կ'էլնայ, ամէն յանցանք զրանին կը փակչի։ Ա՛հ կը այս գեղեցիկ ու բացմազուարճ աշխարհը ձգել կ'ուզէ ու ռեկօրյիկոի հարուածով մը վերջակէտը կը գնէ իր կեանքին Ահա բերանները կը բացուին, մտքերը կը լարուին և խորախորհուրդ փիլիսոփաներ կ'եզրակացնեն . . . cherchez la femme ! Այս ինչ ամուս-

տինը բամբակին՝ վրայ գնելուն հետեւանօք աննկացեր է: Անտիքան կ'որոշէ . . .
 cherchez la femme! Այն ինչ թաղականը որ եւ է կարեւոր նիստի մը ներկայ չէ
 գտնուած . . . : Ընկերները իրարու աչքերու մէջ կը նային գողցես ըսել ուզե-
 լով՝ cherchez la femme! Բարեկեցիկ ընտանիքի մը զուսկը, տունը և անունը
 ձգելով գացեր է գերասան ըլլալ և իւրիսներու կեանքը վարել . . . : գիւղին
 տուները և տուտունները կը վճռեն . . . cherchez la femme! Ասոնք մասամբ կրնան
 վերագրուիլ կանանց և անոնց քմահաճոյքին, սակայն ի՞նչ պէտք է ըսել կարգ
 cherchez la femme ճիներու, որոնք ֆրանսական սյոգ ծխած խօսքը կը կնկնելէ չեն
 քաշուիր նոյն իսկ սա տեսակ պատճառներու առթիւ: — Կիրակոս աղան պնդու-
 թիւն ունի . . . —cherchez la femme! — Մանկասար աղան ջրային է, գիշերը կը
 զառանցէ. —cherchez la femme! — 21 թիւ շրջանաւը Գուգուկունճուգ չէ հան-
 դիպեր. —cherchez la femme! — Աքրահամ Այվազեանն օրը երկու թաղկինակ կ'աղ-
 տատէ. —cherchez la femme! Ին՝ղճ կիներ, գուք որ ձիւնի պէս ճերմակ, ջու-
 րի պէս վճիտ, երկինքի պէս ջինջ, վարդի պէս հոտաւետ, շաքարի պէս անուշ,
 բամբակի պէս փափուկ, տերեւի պէս զգայուն, ու դեռ շաք մը բարեմասնու-
 թիւններով օժտուած էք, ինչո՞ւ արդեօք ձեզ կը վերագրեն բոլոր պատահարնե-
 րը և ատանցմէ ծնունդ առած շարիքները: Իմ մասին, կը խղճամ, կը ջաւիմ այս
 անտեղի ձեր շարչարանքներուն առթիւ, բայց արիւստ որ ոչ ձեռքէս բան մը կու-
 գայ, ոչ ստրէս ճար մը, ոչ ալ բերնէս ճառ մը: Եւ հաւատացէք, բոլոր այս տո-
 ղերս կարգացողներու երբ հարցուի թէ՛ ինչո՞ւ Լիլան այս նիւթը ընտրեց է . . .
 անպատճառ պատասխանող մը պիտի ըլլայ. cherchez la femme! Բայց քանի որ
 ինձմէ յօդուած մը կ'ուզուէր, կինը փնտռելու տեղ՝ նիւթ մը պրպակնք:
 Էվոկ'ես . . .

Ամուսինը —իւ մը ծերուկ —չառ կը սիրէ պաճիկը,
 Կիսն որ շուս միշտ կը կրկնէ «Շա'ք quesséré պոյիկը»:

Ահա յօդուածի վերնագիրը՝ որուն տակ 140000 էջ գրելու պատիւը պիտի
 ունենամ թէնդիկ բարեկամին ԱՄԷՆՈՒՆ ՏԱՐԵՅՈՅՅԻՆ Գ. Տարի 1909ին մէջ, եթէ,
 այո, եթէ օգը չանձրեւէ, ու հրեշտակապետ Գարբիէլ աղան զիս չի հրաւիրէ
 հօն՝ ուր չիք, ոչ վարդ, ոչ կոյս. ոչ . . . Լ. Ի. Ա.

Իւսկիւսար, 8 Ապրիլ 1907

Ջ Ո Ւ Ա Ր Յ Խ Ո Շ Ե Ր

- ** Ինքզինքը խմելու տուող մը վիշտերը խղզելու համար է որ կը խմէ: Գիտ-
 նալ պէտք է սակայն թէ վիշտեր կան որ լողալ գիտեն:
- ** Պարտը («Թուրշի») զնեյն ըստ իս ամէնէն դիրքին միջոցն է . . . պարտք վը-
 ճարելու: Եւ պարտքի «Թուրշի»ն «Թուրշի»ներուն լուսագոյնն է:
- ** Այն կիները որ աղւոր և սակայն պաղ են, կը նանսին այն ձեռագիրներուն՝
 որոնց զիրերը զեղեցիկ են, այլ նիւթն՝ անհամ: Յ. Յ. ՊԱՐՈՆԵԱՆ

ԳԵՂԵՑԻԿ ԱՐՈՒԵՍՏՔ

ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ



ՅԵՆՈՐ ԱՐԱՊԵՍՆ

Ծն. 1867: 1883 ի քննացաւարս Պէր-պէրեան վարժարանի, Վլադիւաժ 1889 ին՝ Կ. Պոլսի, եւ 1891 ին՝ Թրանսայի գեղար-ուեստական վարժարաններէն, Արձանա-գործ: Աշակերտ Ֆալկէնի եւ Շարխի:

Վարերս ընթացին մեզ՝ սոր ճարգե-տել ին բարձրանայ իր նախնական վեճա-լին՝ այսօրսան ինքն, հասան սա ազ-նասցած սերունդին: սոր, գիտութեան սա արտօնութիւն ին զնիւժընին ընկերա-յին սազընութեանն. երբ անհոգ անզգայ ե-մին ին յաջըրդե ի սրհոյ, գիտազ սա զգայան ճարգե, երբ սազատալընթեանը ին յերի անգորդ ի նեղազին սա իճացալան բարձրացան. աշխարսութեան, յսնսութեան սա ինանդի գնացին մեզ երբ ին հիտա-ղեարին՝ ինարելը՝ Պարսութեան՝ հինե-րին մինչև այսօր սերսանդի սընսացան պարճառելին, սինյոյր ին պարկերանոյ մեզ սա՛նջերեայ ճարգան եւ այսօրսա-նին մեզ անհասան անջըղերն, ինքսա հա-սա իազըսզ երեւոյն՝ իճացալան րեւոյնքսէ կը իսրհինդ ճաննալ եւ գնահարելայն սմեւ պարճառելին սրանդ հասցանցած ին զնեզ մինչև հաս, եւ ինքսանական ճարգան մեզ ինանդ սա ազըսզ ին այսօրսան բա-րոյսանսութեանը, գիտութեանը, գիշնսա գայսութեանն սա գեղեցիկ սրստօնքերը: Երբ բնութեանն ին ճիգն սանկ եւ ին նը-

ւանբանն է սընսացան օրեանն, սրեան սը նասազ անհարին յարաջրթութեան մեծա-գոյն սարսըն եզած է սն: Բնութեան զմեծած նախնական իճացանսութեամբ, բնանին յերգերսա նոյնքերսւ, ճարայն սա բնազդային իազըսութեամբ զսր հոգեկամ մեր ճարգան մեզ պարբեր շանն ին գայսութեանը՝ անսանելիտ, այդ նախնական նիւթերսւ գրսսած՝ ճարգա նեպսածն է զնեզ ին սա ընթացին մեզ, ինքն սը ին իազգին ինքնա հատար այսօրսան ճարգութեանը: Այն յարաջրթեմ րարբերսա իազըսութեան սմեկն սանին օճանդսւ ի սըն ին Գեղեցիկ՝ Վարսութեանդ եւ Գեղեցիկ՝ Արստարտ: Ո՛ր սր ինանդ ին ինքն՝ հան ինսա նասրեզսութեանը ինքնստեր: հար սը ընթացութեանը ին իազըսութեանք, հան ին լասեր բանասրեզին շանն սը յազըսութեամբ սանին մօրեան յոն մեկ եր րեղ ի երկնս, Արարելին եւ սրաընթեան ճրոյ իսրանն հեցանսւ՛ ին: Այդ սա՛նջին երգերը ճարգան սազըսն երն, ստանլոյնն իրերացսոյ այդ սա՛նջին բանասրեզսութեաններն սնար իրանն երն, իեւ անգիտան, սնսազ, բնազդային, սնսյն սրսաբստ սա ինսան: Եւ, սա՛նջին օրեան, հասարտին զգացանն անբանան ճարգարային յարաջրթութեանն. հասարտն սա ներընսմը ինան բանասրեզին, ինչքն բանասրեզսութեանը՝ գեղեցիկ՝ սրարոյսարսմը իստին սա յայնին, հիգի րբսա՛ գեղեցիկը գիտութեան սմեւ սարարայն մեզ, սմեւ իազըսա

ԿԻՐԱԿԻ. -չ. **23** Նոյեմբեր—Թշրինի սանի Կ.Տ. 6 Դեկտ. 1 ՀՃԲ. 12 Զիւլգատէ:
 ✽ **ՀԹ.** և **Կ. ՀԹ.** Յիսնակի Ա. կիրակին: Ըմրոնաղ, (ոյխարնեբուն՝ զուրակն
 ներս բաշուելուն օրը): **ՅՆ.** Ս.Ս. Գրիգոր՝ Ակրանոյայ եպիսկոպոս, և Ամիր-
 լորբոս՝ Իկնինոնի եպիսկոպոս: **ԼՏ.** Ս. Նիկողայոս հայրապետ՝ նաւաւարներու
 պաշտպան: **ՏՃ.** Եսիրաք տէօքիմի ֆուրժունասար, (Տերեւածափ):

ԵՐԵՈՒՇԲ. -չ. **24** Նոյեմբեր—Թշրինի սանի Կ.Տ. 7 Դեկտ. 1 ՀՃԲ. 13 Զիւլգատէ:
ՀԹ. և **Կ. ՀԹ.** Ս. Ս. Յուլիանէ և Վասիլունի կոյսեր: **Հարսնիք:** **ՅՆ.** Ս. Ս.
 Կղեմէս Հռոմի հայրապետ, և Պետրոս՝ Աղեքսանդրիոյ եպիսկոպոս: **ԼՏ.** Ս. Ամ-
 բրոսիոս՝ Մեղիսլանի արքեպիսկոպոս:

ԵՐԵՎՇԲ. Բչ. **25** Նոյեմբեր—Թշրինի սանի Կ.Տ. 8 Դեկտ. 1 ՀՃԲ. 14 Զիւլգատէ:
ՀԹ. Ս.Ս. Դուկիանոս քահանայ, Տարագոս, Պրորոս և Անդրոնիկոս վկաներ, ու
 Պօղոս առաքեալին Ռեստիմոս և ուրիշ աշակերտները: **Կ. ՀԹ.** Ս.Ս. Յակոբ և
 Շմաւոն առաքեալներ: **ՅՆ.** Ս.Ս. Նեկտարինէ կոյս և Մերկերիոս վկայ: **ԼՏ.** Ս.
 Աստուածամանի՝ անարատ Յղուծիւնը: ՇՈՒԼՏԻՆ՝ նոր Թագաւորին զահակաւածիւնը:

ԶՈՐԲՇԲ. Բի. **26** Նոյեմբեր—Թշրինի սանի Կ.Տ. 9 Դեկտ. 1 ՀՃԲ. 15 Զիւլգատէ:
ՀԹ. և **Կ. ՀԹ.** Պահք: **ՅՆ.** Ս.Ս. Ալիբիոս սիւնակեաց: **ԼՏ.** Ս.Ս. Յուստիանէ
 և Լեւկաղիա վկայունիներ:

ՀԻՆԳՇԲ. Գչ. **27** Նոյեմբեր—Թշրինի սանի Կ.Տ. 10 Դեկտ. 1 ՀՃԲ. 16 Զիւլգատէ:
ՀԹ. Ս.Ս. Կղեմէս հայրապետ, և Բագարատ՝ Տոռոմենիոյ եպիսկոպոս: **Կ. ՀԹ.**
 Ս.Ս. Կղեմէս հայրապետ: Բագարատ՝ Տոռոմենիոյ եպիսկոպոս և Գրիգոր Ակ-
 րագանդացի: **ՅՆ.** Ս. Յակովիկ պարսիկ՝ մեծ վկայ: **ԼՏ.** Ս. Աստուածամանի
 Լօրեթոյի տունին յիշատակը: ՊէլձեՒԱՅԻ Թագաւորին զահակաւածիւնը:

ՈՒՐԱԹ. Գի. **28** Նոյեմբեր—Թշրինի սանի Կ.Տ. 11 Դեկտ. 1 ՀՃԲ. 17 Զիւլգատէ:
ՀԹ. և **Կ. ՀԹ.** Պահք: **ՅՆ.** Ս.Ս. Ստեփանոս և Իրենարքոս վկաներ: **ԼՏ.** Ս.
 Դամասիոս Հռոմի հայրապետ:

ՇԱԲԱԹ. Դչ. **29** Նոյեմբեր—Թշրինի սանի Կ.Տ. 12 Դեկտ. 1 ՀՃԲ. 18 Զիւլգատէ:
 ✽ **ՀԹ.** Ս.Ս. Թաղէոս և Բարբողիմէոս առաքեալներ և առաջին լուսա-
 ւորիչներ: **Կ. ՀԹ.** Ս.Ս. Բարթողիմէոս և Յուդա առաքեալներ: **ՅՆ.** Ս.Ս. Պար-
 մենաս վկայ և Փիլոմենէ վկայունի: **ԼՏ.** Ս. Մարա վկայունի:

ՅՈՒՇԱՏԵՏՐ

23 նոյեմ. Կիր. [328—38] կէս օր. 7. 23.....

24 նոյեմ. Բշ. [329—37] կէս օր. 7. 23.....

25 նոյեմ. Գշ. [330—36] կէս օր. 7. 23.....

26 նոյեմ. Դշ. [331—35] կէս օր. 7. 23.....

27 նոյեմ. Եշ. [332—34] կէս օր. 7. 23.....

28 նոյեմ. Ուր. [333—33] կէս օր. 7. 23.....

29 նոյեմ. Շր. [334—32] կէս օր. 7. 23.....

զարեւ ընդանի ի սյուսիներ, որդեան՝ հոգեւոր Արտեմիոսի բարձրագոյնն: Չե՞ քի սը
 այդ յազել Բժշկութեան յծնած ի Ռիշեմբը ին Եօսին իրդին ու ի բարձրացանին հարգ-
 իսնիւնը: Այսպէս, Իրաւիցե Գերլ՝ ճրնս. Գեղարտեալը Գրեթե համալեւոհային դար-
 յա ժ.Ձ. դարեւ յետոյ, և Ինչպէս Երթեմն Աթեմ, Ասեմ, այսոր ալ Բարեւ զարեւ ի
 Իրն ին յԳե արտեալոսիւնը ստանաւ Երեմիոս հոն Երթեմն: Յրանս Երթեմն ին
 զարեւ ի Եր զարեմիւնը սրանց անանիւնը Գե Գե զարեւ ի ստեղծանին Բժշկութեան ու Գե-
 ղի: Ժիւլիանոսի 1627-1715, Պուլանոսի 1698-1763, Բաւու 1730-1809,
 Հուսոսի 1741-1828, Տալիս Տալի 1789-1856, և ստեղծ Երեմ, Ժամանակից
 Եր՝ Տալու, Մէլալի, Ան Բաւու, Գաթո, Ժիւլոս, Տիւլուս, Պո-
 սեմ, Պալիսա՝ սրանց հոյսիւնը և հոյս ինչոսն Երեմն զարեւանց ալ-
 ճին բարձրացման և ստեղծման ի ստեղծման Երեմիոս Եր Բաւու:

Քասրիոյ, 12 Մայիս 1907



ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԵՒԱՅԼՆ.

Թէօֆիլ Կոթիկ [1811—1873], նկարիչ-քանաստեղծ, քննադատ, վիպագիր, և ըն-
 Յղուած ոճի և վարձամ արուեստի մեծ ներկայացուցիչ մը ֆրնս. Գրականութեան
 մէջ: Կը կարծէր թէ իր յաջողութիւնն՝ արդիւնքն է Բաշ ճեւեղող մը ըլլալուն: Յատ-
 կանշական է իր խօսքը. «Շատեր չեն տեսներ. այս տեղ մտնող 25 մարդոց մէջ 3 հո-
 զի չի կայ որ թուղթին գոյնը նշմարէ. անա՛ այս ինչը չը պիտի տեսնէ թէ սա սեղանը
 կը՞ր է թէ քառակուսի»: Հանճարեղ և մասամբ իրաւացի խօսք մը՝ — մանաւանդ նկա-
 րագրող զրագէտներու մասին, — որուն սակայն ջարջախիչ պատասխան մը տուած է
 ֆրնս. Իմաստաւէր-մատենագիր մը՝ Մ. Կիւլո: Կոթիկ համակրող մ'էր Հիւկոյի Իր
 Emaux & Camées տաղալափուած հատորը Պառնասեաններու հիացումին առարկան
 եղած է: Տարեցոյցիս 290րդ. էջով Թարգմանարար հրամցուած քերթուածն՝ իր երկաս-
 սարդութեան ժամանակի գրուածքներէն է [1833—1838], ուր առասօրէն կ'զգացուի
 սկեպտիկ և յոռետես մարդու Թախտազին շունչը:

Ելքէնճեան էֆ.ի Թարգմանութեան մէջ սպրդած սխալները: — զագաղզր
 = զագաղջ. անտփոր = նորանշան. չունիք = չունիք. եղարբը = եղարբ: մէն
 մի խըլեն = ի քաց խըլեն. սրիոտեցեն = սրիոտեցիկ. լինեցի = լինիցի. զի՞նչ
 գորէ = յի՞նչ գորէ:

ԱՌԱՄ. — Խել և իստ Գիտել Են շուր:



ՄԻԲԱՅԷԼ ՇԱՄՏԱՆՃԵԱՆ

Ծն. 1874, 4. Պոլիս Վկայուած Լայքցիկի եւ Պէռլլինի Համալսարաններէն 1893-98, Ուսուցիչ Գերմ. լեզուի եւ Պատմութեան Թարգմանիչ պիսանի զիրքերու:

Բանաստեղծութիւնը անիրական եւ հիւանդագին մէկ արտայայտութիւնն է մտքի, ստիկա՝ անգիտանալ է մարդկային կեանքը, քանի որ բանաստեղծութիւնը բնական մէկ արտայայտութիւնն է մարդուն մտաւոր եւ հոգեկան գոյութեան, եւ ո՞ր դրապաշտ միտքն է որ առանց ազանդաւորի ծայրայեղութիւններուն դիմելու, պիտի կրնար մարդ էակը մտաւոր եւ հոգեկան կարողութիւններէ զուրկ դաւաւնել: Բանաստեղծութիւնը մարդուն հետ ծնած եւ անոր հետ մեծցած, ունի՝ ուրեմն գոյութեան իրաւունքը եւ բացարձակ արժէքը: Անհատին իբր մարդ գոյութիւնը բանաստեղծութեան կախում ունի, ինչպէս իր մտաւոր կարողութեանէն կախում ունի իր շուրջին «ինչ»ն ու «ինչու»ն բմբունելը եւ անոնց խորը թափանցելը: Որքան զուրկ է իրական ու գիտական բմբունումէ այն յուստեան գուշակութիւնը թէ բանաստեղծութիւնը իր օրհասականի թեւաբախումներուն մէջ է: Ի՞նչ է սակայն բանաստեղծութիւնը, Պարբէկն է որ գիւթանքի շղարշը կը սփռէ դաշտերուն վրայ, երկինքները դաշնակութեանց կայանի մը կը փոխարկէ ուր լուսաւորներու համերգը կը զիսաւորուի, ծաղիկ մը խամբելուն մէջ հոգւոյ մը տաւապանքը կ'ընդունարէ, որ սիրականին աչքերուն մէջ Աւետեաց երկիրը կը վայելէ, որ ամէն բանի կեանք կը պարգեւէ, եւ որ կեանքն իսկ է, կեանքը իր անուրջներով, կեանքը անկեղծ անձնատուութիւններով, կեանքը արդարին, կեանք-

Մարդկութեան ամէնէն հին ստացուածքներէն մէկն Բանաստեղծութիւնը: Աշխարհիս վրայ ամէն տեղ եւ ամէն ժամանակի մէջ ապրող, ամէնէն նուազ քաղաքակրթուած մարդկային երամ մը կամ հրոսախումբ (horde) մըն ալ ունեցած է իր բանաստեղծութիւնը: Նախամարդուն ալ օտարտի բան մը պէտք չէ թուած ըլլայ Ան: Եթէ մտածել՝ ապրիլ կը նշանակէ, ապրիլ կը նշանակէ բանաստեղծել, ա՛յնքան տիրող տարրն է բանաստեղծութիւնը կեանքի խմբումին: Ան՝ մարդկային լեզուին հետ ծնած, անոր հետ զյոգ ընթացած է, եւ մարդկութեան բանաստեղծելու հակումն ու պէտքը մեծապէս նուազատած են զայն արտայայտելու միջոցին՝ լեզուին հետոհետէ զարգանալուն եւ կատարելագործուելուն: Սխալ կերպով բմբունուած դրականութիւն մը սա անճիշդ գաղափարը ուզած է ներշնչել թէ

քը իմաստունին: Ո՞վ զգացեր է և չէ բանաստեղծեր, ո՞վ բանաստեղծեր է և չէ խորհեր. ուրեմն բանաստեղծութիւնը զգացում է և խորհուրդ-զուակը այս երկուքին, զոր մարդը ծնած է իր կարգին, մարդը՝ միտք և հոգի — Ըմբռնելու համար այս ճշմարտութիւնը, թափանցելու համար անոր, պետք է սկիզբը երթանք բանին, ուր մարդուն միտքն ու հոգին դեռ սաղմնային վիճակի մը մէջ կը գտնուին, սիրտը կը քնանայ ու դնդերները կը գործեն, հոգին կ'անրջէ ու մարմինը կը տառապի: Մարդկային ցեղին՝ իր զարգացման խանձարուրքին մէջ, գոյութեան ամէնէն մթին շրջաններուն, բանաստեղծութիւնը եղած է Լուսաւոր Սիւնը, որուն հետեւելուն համար նախամարդը արհամարհած է անապատին աւազը որ այրած է, տափաստաններուն տառապը որ արեւնոտած է ոտքերը: Ասոր համար է որ ամէն քաղաքակրթութեան սկիզբը կը տեսնելք բանաստեղծութիւնը, զուգընթաց արուեստին, կրօնքին, իմաստասիրութեան և գիտութեան հետ, ու կէօթէ կը նկատէ բանաստեղծութիւնը արուեստէն աւելի կրօնք ու գիտութիւն և կրօնքէն ու գիտութեանէն ալ աւելի բան մը: Բանաստեղծութիւնը իր մէջ կը պարփակէ ցառա կեանքը իր ամբողջութեամբ և բոլորովին ինքնուշարունակ կերպով որ կը կազմէ իր գործարանաւոր գոյութիւնը, որուն մէջ արուեստագիտական ստեղծագործիչ ոյժը և գիտական ճանաչողութեան կարողութիւնը իրար կը ձուլուին ու ներդաշնակութեամբ մը զիրար կը սոգորեն: Բանաստեղծութիւնը ստեղծագործիչ ոյժն է մարդուն, որով այս վերջինը հետզհետէ կեանք կուտայ արուեստի բոլոր ճիւղերուն, քանդակագործութեան, նկարին և երաժշտութեան. ինչ աւելի բանաստեղծական, քան կոշտ փայտի կամ քարի ձեւին ներքև կոփելի թանձրացնել խորհուրդներու ամբողջ ստեղծաշար մը, զգացումներու ամբողջ երանդապնակ մը: Այս քարի անտաշ փերթը, զոր նախնական մարդը իր կուռքը կը հռչակէ, անթափանցելիին ամբողջ խորհուրդովը յղի և բաղձանքներու բովանդակ ծախրանքովը արտփուն, չէ՞ բանաստեղծութիւնը հոգիին, չէ՞ բանաստեղծութիւնը մտքին: Գոյներու ընտելացումը, երանգներու գիրկընդխառնումը չե՞ն նուազ ցոլբերը խորհուրդին և զգացումին, չե՞ն բանաստեղծելու տենչին արտայայտութիւնը: Նուազը չէ՞ թրթուումը հոգիին որ իր եղբրէն դուրս կը ծաւալանայ, և որուն արձագանքները կը մեղմերգեն մեր ականջին, ձայնը չէ՞ բանաստեղծութիւնը հոգիին, ներդաշնակութիւնը չէ՞ գիւթանքը մարդուն: Ու յետոյ կարօք՝ գիտնալուն, պետքը ըմբռնելուն, չե՞ն ծլարձակումները մտքին և հոգւոյն, չե՞ն բանին բանաստեղծութիւնը:

Որքան տիեզերական ու որքան համասփիւռ, այնքան զժուար է ճշդել ամէնէն սկիզբը Բանաստեղծութեան, մինչդեռ երաժշտութեան, նկարչութեան և քանդակագործութեան առաջին քայլափոխներուն աւելի վստահութեամբ կրնանք հետեւիլ: Կրօնքներու սկզբնաւորութեան, դիցարանութեան ձեւին ներքև կ'երեւայ առաջին անգամ՝ Ան, և լեզուն ալ որ կ'արտայայտէ այդ ամէնը, յաճախ կը թաթաւուի Անով: Գիտութիւնն ալ կը զգենու չափեալ խօսքին տարազը և կը կոշուի վարդապետական բանաստեղծութիւն (didactique): Զգատապաշտ (tendancieux) բանաստեղծութիւն մըն ալ կայ, որուն մէջ մտածումը կը պայքարի ձեւին հետ և բանաստեղծական գործարանաւորութեան ներդաշնակութիւնը կը խաթարէ: Գրականութիւններու պատմութիւնը շատ մը առիթներու՝ արդէն ունի օրինակները այս երկու տարբերներու պայքարին: Սակայն ուր որ այս երկու տարբերները կրցած են եղբայրաբար դաշնակաւորուիլ զուտ ու բարձրաթափ ընդհանուր

ԿԻՐԱԿԻ. ԴԷ. **30** Նոյեմբեր—Թ շրինի սանի, Ն.Տ. 13 Դեկտ. 1 ՀձՐ. 19 Զիւլզատէ, * **ՀՅ.** և **Կ. ՀՅ.** Յիսնակի Բ. կիրակին **ՅՆ.** Ս. Անդրէաս առաքեալ, **ԼՏ.** Ս. Լուսիա կոյս վկայուհի:

ՆՐԱՈՒՇՐ. -Յ. **1** Դեկտ.—Քեանունի էվվէլ, Ն.Տ. 14 Դեկտ. 1 ՀձՐ. 20 Զիւլզատէ, **ՀՅ.** Ս.Ս. Գենարիոս եպիսկոպոս, Մերկերիոս զինաւոր, Յակովիկ և Իրաւախառ վկաներ: Հարսնիք: **Կ. ՀՅ.** Ս.Ս. Գենարիոս եպիսկոպոս, և Մերկերիոս զինաւոր: **ՅՆ.** Ս. Նաւու մարգարէ: **ԼՏ.** Ս. Հոնորատոս Արեւաղայ եպիսկոպոս:

ՆՐԵՔՇՐ. -Է. **2** Դեկտ.—Քեանունի էվվէլ, Ն.Տ. 15 Դեկտ. 1 ՀձՐ. 21 Զիւլզատէ, **ՀՅ.** Ս. Ս. Կուռնելիոս հարիւրապետ, Շմաւոն տեառնեղբայր, Պօղիկարպոս Զմիւռնիոյ հայրապետ՝ իրեն ընկերացող վկաներով: **Կ. ՀՅ.** Ս. Ս. Յակովիկ և Իրաւախառ վկաներ: **ՅՆ.** Ս. Ամրակում մարգարէ: **ԼՏ.** Ս. Վաղենտինոս խոստովանող:

ՉՈՐՔՇՐ. ԲՅ. **3** Դեկտ.—Քեանունի էվվէլ, Ն.Տ. 16 Դեկտ. 1 ՀձՐ. 22 Զիւլզատէ, **ՀՅ.** և **Կ. ՀՅ.** Պահր: **ՅՆ.** Ս. Սոփոնիա մարգարէ: **ԼՏ.** Ս. Եւսերիոս Վերկելիոյ եպիսկոպոս:

ՉԻՆՔՇՐ. ԲԿ. **4** Դեկտ.—Քեանունի էվվէլ, Ն.Տ. 17 Դեկտ. 1 ՀձՐ. 23 Զիւլզատէ, **ՀՅ.** և **Կ. ՀՅ.** Ս. Ս. Եգիպտացի հայրեր՝ Պօղոս, Պօղ, Մակար, Եւագր, Յովհաննէս Գրեցի, Յովհաննէս կարծահասակ, Նեղոս, Աբսէն, Սիսիանոս, Դանիէլ, Սրապիոն, Մակարիոս, Պիմէն և ուրիշ սուրբ հայրեր: **ՅՆ.** Ս. Ս. Վառվառէ կոյս վկայուհի: **ԼՏ.** Ս. Ողիմպիադա այրի:

ՈՒՐԱԹ. ԳՅ. **5** Դեկտ.—Քեանունի էվվէլ, Ն.Տ. 18 Դեկտ. 1 ՀձՐ. 24 Զիւլզատէ, **ՀՅ.** և **Կ. ՀՅ.** Պահր: **ՅՆ.*** Ս. Սարա արքայ: **ԼՏ.** Ս. Գրատիանոս կրօնաւոր:

ՇԱՐԱԹ. ԳԿ. **6** Դեկտ.—Քեանունի էվվէլ, Ն.Տ. 19 Դեկտ. 1 ՀձՐ. 25 Զիւլզատէ, **ՀՅ.** և **Կ. ՀՅ.** և **ՅՆ.*** Ս. Նիկողայոս Զմիւռնիացի (Միւռացի) սքանչելագործ հայրապետ, նաւավարներու պաշտպան: **ԼՏ.** Ս. Դամասոս Հռոմի հայրապետ **ՀՐ.** Խանուկայ—(զանտիլ պայրամը): ՌՈՒՍԻՈՅ Կայսեր անուան տօնախմբութիւնը:

30 Նոյեմ. Կիր. [335—31] կէս օր. 7. 22.....

1 Դեկտ. Բշ. [336—30] կէս օր. 7. 22.....

2 Դեկտ. Գշ. [337—29] կէս օր. 7. 22.....

3 Դեկտ. Դշ. [338—28] կէս օր. 7. 22.....

4 Դեկտ. Եշ. [339—27] կէս օր. 7. 21.....

5 Դեկտ. Ուր. [340—26] կէս օր. 7. 21.....

6 Դեկտ. Շր. [341—25] կէս օր. 7. 21.....

տեղծութեան մէջ, հոն մարդկային մտաւոր ու հոգեկան կեանքն ալ արտայայտութիւն գտած է իր ամբողջութեամբ, ամբողջութիւն որուն ոչ մէկ արուեստ կամ գիտութիւն կրնայ հասնիլ, Բանաստեղծութիւնը այն արուեստն է որ ամէն տեղի մէջ ու ամէն ատեն երեւան կը բերէ ներքին էութիւնը, և զարգացման շրջան մը իր ամբողջութեամբ: Բանաստեղծին հոգին այն վայրն է ուր կը կուտակուին երբեմն փոքր ու երբեմն մեծ գանձերը բանաստեղծութեան: Այդ գանձերը անցնելով բանաստեղծին հոգիին մէջէն, իր նորաստեղծ բան մը երեւան կուգան, ճիշդ ինչպէս բնութիւնը կը ստեղծագործէ, որովհետեւ բանաստեղծին հոգին ալ կտոր մը բնութիւն է: Արդ՝ քանի՞ ջինջ բլլայ հոգին բանաստեղծին, և քանի՞ գաշնակութիւնը այդ հոգիին մէջ նուազէ, անկէջ բղխած բանաստեղծութիւնը կ'ըլլայ այնքան ջինջ ու պնդան ներդաշնակ, և այդպէս տակաւ մարդ էակին բարեշրջման և հոգիին ազնուացման մէջ, բանաստեղծութիւնը կը կատարէ իր յեղաշրջումը ընթացքը, սկսելով նախնական կախարդական բանաձեւերէն մինչև եհնոյն վերուզընուած աղօթերգները: — Մարդկային ցեղի մասին միտիք յուեւեստութեամբ կազմուած բմբուռ մը, երբեմն կարծեցնել տուած է թէ մարդ լուսազոյն վիճակէ մը ինկած է վառվար կացութեան մը մէջ: Այսօր ամէն գիտական միտքեր համազուած են թէ ամէն բանի սկիզբը եղած է խառնակ ու միտին, և թէ մարդ էակը հասարակարարութիւններու ընթացքին տիրացած է իր մտքին ու հոգիին կարողութիւններուն, իր խմբութիւն մէջ արդէն ունենալով նախապատճառ տրամաբանութիւնը այդ յատկութիւններուն: Բանաստեղծութիւնն ալ իր սկզբնատարութեան մէջ եղած է շփոթ ու նախնական և մարդկային ազդի պատմութեան արշաղոյսին մէջ կը տեսնենք առանձին ցեղեր, որոնք կամ բնականէն աւելի օժտուած, կամ կեանքի ու միջավայրի պայմաններէն աւելի նպաստաւորուած, մասնաւոր յաջողութիւն մը ցոյց տուած են իրենց մտաւոր արամաբանութիւններն զարգացնելու, և ամենահին ժամանակներու մէջ, կը ներկայանան մեզ արդէն քաղաքակրթական թանկագին ինչքերով: Այս ինչքերու շարքին մէջ կը գտնուի նաև բանաստեղծութիւնը աւելի կամ՝ նուազ խորունկ, աւելի կամ՝ նուազ զգայուն: Գաղաքակրթական սովորական ինչքերէն՝ բանաստեղծութիւնը կը տարբերի սակայն ան՝վ, որ, մինչդեռ քաղաքակրթութիւնները կը բարձրանան ու կ'իյնան, և ուր այսօր արեւուն ոսկեայ լոյսը կը հեղուր, վաղը մութիւն ստուերը կրնայ ձգուիլ: Այս ամէնուն մէջ բանաստեղծութիւնը կը նմանի ճոխ կերպով պատկերազարդ գրքի մը, որուն մէջ միտքը ամէն բան գրած է, ինչ որ զինքը շարժած կամ՝ յուզած է, իր սէրերը, իր ստեղծութիւնները, իր հասարակարար մտածումը: Բանաստեղծութեան մէջ կը բխրեղանան նաև զգացումները իրենց ամէնէն նրբին երանգներով, բոլոր ճանաչողութիւնները իրենց բազմազան ձեւերուն ներքեւ: Ինչպէս մարդը, այնպէս և բանաստեղծութիւնը: Երբեմն պարմանի մըն է որ երիտասարդական աւիւնով մը աշխարհին հետ երես առ երես կուգայ, երբեմն մտածկոտ զոռամ մըն է, երբեմն բուռն մարտիկ մը, երբեմն բարեպաշտ քահանայ մը, երբեմն հեշտամոլ մըն է զգայութեան անձնատուր և երբեմն ալ ինքնամոռաց ձգնաւոր մը: Բանաստեղծութեան մէջ, ամէնէն բարձրին քով ամէնէն երկրաբարը, ամէնէն վեհին քով ամէնէն հասարակը իր տեղը ունի: Բանաստեղծութեան մէջ, տեղ մը կը զգանք լեբան բուռն ու վայրագ օդը և ուրիշ տեղ մը բոլոր անգամները ընդարմացնող ջերմ՝ շունչը՝ հեղիկ հասարակածէն դաշտանկարի մը: Չինացիին մեղկ զգայականութիւնն ու նեղմիտ նիւթականութիւնը,

պարսկէկն բազմահարուստ երեւակոյութեամբ նկարագիրը, ոստոսու՛ն յատկա-
նիրը ֆրանսական միտքին, եւ գերմանականին խորութիւնը, յունական յոսակու-
թիւնը եւ ամբողջայն վարպագութիւնը երբայականին, բոլոր ձայները եւ բոլոր նը-
ուագները որոնք բանաստեղծութեան ձեւին ներքեւ առջի օրէն ամէն կողմէ կը
բարձրանան, ընդհանուր ազգերու գրականութեան մէջ կը կազմեն հրաշափառ
նուագահանգէս մը, որ միայն մարդուն երկրի մակերեսէն սրբուելովը կրնայ
վերջանայ Մէկ մասը այն կարողութիւններուն, որոնցմով մարդիկ բանաստեղծու-
թեան մարմին կուտան, կենդանական աշխարհին մէջ ալ կը գտնուի: Միակ բան
մը կ'ապրի ամբողջ արարչութեան մէջ, եւ թերեւս նոյն սկզբունքը, որ մեր մըտ-
քին միջոցաւ, բանաստեղծութեան մէջ համաշարութեան եւ յանգուստութեան
կեանք կուտայ, կը յայտնուի նաև ձիւնի բաթիւներու քիւրքիւրքոյն մէջ:
Երաժշտական հաճոյքներու մէջ թռչուններն ալ մեզի բախտակից են: Տարվինա-
կան վարդապետութիւնը իր մանրամասնութիւններուն մէջ որքա՛ն ալ փոփո-
խութիւններ կրէ, իր հիմնական գաղափարներուն մէջ նոյնը պիտի մնայ, տարվի-
նական աշխարհահայեցողութիւնը պիտի տեւէ: Փոխանակ արարչագործական նո-
բանոր արարքներու, ըստ տարվինական վարդապետութեան կ'ընդունուի միակ,
երկար ու յամր գորգացում մը եւ կենդանիներու ու մարդոց միջև խրամը այլ
եւս անանցանելի վիճ մը չէ: Այնպէս որ եթէ այսօր կենդանիներու լեզուի մը
մասին խօսինք, այլ եւս առապել մը չէ ըսուածը, ոչ ալ ծիծաղելի բան մը:
Մենք կը հուստամք այսօր թէ կենդանիներն ալ իմացականութիւն ունին եւ ե-
րեւակոյութեան տէր են: «Որովհետեւ կարգ մը շուներ, կատուներ, ձիեր եւ հա-
ւանաբար կենդանական սանգուխին վերին աստիճանին վրայ գտնուող բոլոր կեն-
դանիները եւ նոյն իսկ թռչունները իրական կերպով զգացուած երազներ կը տես-
նեն, եւ այս բանը կը տեսնուի անոնց շարժումներէն ու ձայնէն, պէտք է ընդու-
նինք նաև թէ անոնք երեւակոյելու ոյժ մին ալ ունին»՝ կ'ըսէ Տարվին: Գեղեց-
կութիւնը ըմբռնելու կարողութիւնն ալ ունին անոնք: «Զայնի այն հրաշալի
թրմութեացումները զորս շատ մը արու թռչուններ իրենց սիրոյ շրջանին լսելի կ'ընեն,
անշուշտ առաջիկան կը դառնան էգին հիացման: Եթէ էգ թռչունները ի վիճակին
չըլլային իրենց արու ընկերներուն գեղեցիկ գոյները, զարդը եւ ձայնը դնահատու-
լու, աւելորդ բան մը պիտի դատնար բոլոր ջանքն ու խնամքը, որով արու թռչ-
ունները կ'աշխատին շնորհ գտնել էգին առջև. իսկ այս ենթացումութիւնը կարե-
լի չէ ընել» (Տարվին): Ինչպէս երգը մարդոց, այնպէս ալ «թռչնոց ձայնը կը ծա-
ռայէ արտայայտելու հոգւոյն զանազան վիճակները, ինչպէս գոգախտութիւնը,
վախը, բարկութիւնը, յաղթանակը կամ երջանիկութեան զգացումը:» Այս յա-
փշտակութիւնը որ բանաստեղծին հոգւոյն խորը կը ծնի, կը նշմարենք նաև կեն-
դանական աշխարհին մէջ: Թռչնոյ երգը որ սիրոյ արեցողութենէն յառաջ կու-
գայ, եւ սիրոյ հիացիկ շարժումներն ու ոստոսութեան օրինակներն են այս մասին
Բանաստեղծական կշռութեան եւ յանգի նրբութիւնները եւ արտայայտու-
թեան ձեւի բոլոր գեղեցիկութիւնները կը տեսնուին նաև ընտ-թեան մէջ, ամէն կողմ:
Կեանքի բնական պոյսմաններու ներքեւ է նմանապէս որ բանաստեղծութիւնը առջի
օրէն ծագում առած է եւ հետզհետէ զարգացած թէ՛ ձեւով եւ թէ՛ ներքնապէս:
Բանաստեղծութիւնը իր առաջին քայլերուն սերտ կերպով կապուած է նաև երա-
ժշտութեան: Երգուած կամ երգելու նմանող խօսիլ մը՝ կ'երեւայ թէ եղած է
անգրանիկ բանաստեղծութիւնը նախամարդուն եւ մինչև պատմական շրջանի ա-
մենահին փողովորդներու օրով՝ բանաստեղծութեան եւ երաժշտութեան այս
անբաժանելիութիւնը տեւած է, երաժշտական ձայները մասնաւոր ոյժ մը ունին,

մարդուն հոգւոյն մէջ անմիջական կերպով համապատասխան յուզում մը յարած բերելու . այդ ձայները մարմնաւորեալ արտայայտութիւնն են երգողին ուրախութեան և սուգին, և ունկնդրին հոգւոյն խորն ալ նման արամաղբութիւններ յարած կը բերին: Կերամն նշանակող գիտնական շէշճոյց բնագիտութեամբ ուզած է բացատրել թէ ինչու նոյնաձայնութիւնները (consonance) հասճելի կուզան մեր սականջին, մինչդեռ խառնաձայնութիւնները (dissonance) անհասճոյ. սակայն գիտութիւնը ցարգ չէ կրցած մեզ բացատրել թէ ինչու երաժշտական ձայնոյնքակ (ton) մը կրնայ զգացում յառաջ բերել կամ ջնջել: Կախնական մարդոց քով, շատ մը առիթներու գիտնած է թէ բուսն, յուզումի մը առն խօսքը երգի կը փոխարկուի: Երգուած խօսքը սակայն կը նշանակէ թէ բան մը աւելի է առանց խօսքի երգուած ձայնոյնքակէն: Ամէն երաժշտութիւն կրնայ միայն ծփուն և բնդհանր զգացումներ ներկայացունել, իրաւ է թէ զուարթ տրամադրութիւն մը կը ներշնչէ, սակայն չի կրնար որոշ ու միակ զգացում մը պայայցնել, օրինակի համար ուրախութեան զգացումը, ի տես կանացի գեղեցիկութեան կամ աստղագրի կրկնութիւն Այս արդիւնքը կարելի է ստանալ միայն լեզուին և երաժշտութեան միաւորմամբ: Ուրիմն երգուած խօսքը կը նշանակէ անսահման յառաջդիմութիւն հոգեկան կենսի գարգացման մէջ, և անխառն և ահագին յալթանակ մը մարդուն կողմէ ամբողջ կենդանական աշխարհին վրայ: Բոլոր բանաստեղծութեան այս ամենպարզ բայց հիմնական ձեւը կը տեսնուի ցարգ մէկէ աւելի նախնական ժողովուրդներու մէջ: «Մեծ ցեղապետ, մեծ ցեղապետ» կ'երգէ Խոփնացին ամբողջ ժամերով: Ու այս պարագան յատկանշական կողմն է նախնական ժողովուրդներու բանաստեղծութեան. մէկ բանի բառեր միայն որ ամբողջ ժամերով կ'երգուին անհամար կրկնութեամբ: Միայն նախնական ժողովուրդի բանաստեղծն ալ կը յանդի նոյն արդիւնքին: Ինչ արդիւնքի որ պիտի յանգէր ամէնէն զարգացեալ ժողովուրդին բանաստեղծը: (Բանաստեղծ կ'անուանեմ զայն, կ'ըտէ Նիլէր, որ կարող է իր զգացողական վիճակը նիւթի մը մէջ դնել, այնպէս որ այդ նիւթը դիւ պարտաւորէ մտնող զգացողական նոյն վիճակին մէջ, կամ թէ կենդանի կերպով վրաս աղէ է:») Խոփնացի բանաստեղծը հոգւոյն խոր կը զգայ ցեղապետական մեծութիւնը, կը նիւթականացնէ այս զգացումը, երաժշտութեամբ և խօսքով, և ունկնդրին հոգւոյն մէջ ալ անմիջապէս կը բարձրանայ նոյն զգացումը և նոյն պատկերը: Սակայն լեզուն ինքնին չունի բոլոր թէքումները, որոնք երաժշտական ձայններուն յառուկ են. այդ կըռութեամբ և յանգերով բանաստեղծը կը պայքարի լեզուին յարուցած դժուարութեանց դէմ: Ի վերջոյ խօսք ու երաժշտութիւն իրարու մէջ կը նոյնանան: Ասոր համար է որ բանաստեղծական լեզուին համապատասխանները, կըռութիւնները և ձայնականութիւնները կը տարբերին սովորական լեզուին ունեցածներէն: Սակայն այս բուսածներէն պէտք չէ ենթադրել թէ նախամարդը իր բանաստեղծ գիտակցութեամբ կատարած է իր գերը: Առաջին բանաստեղծութիւնը բնագոյական արտայայտութիւն մըն էր, ճիշդ ինչպէս որ բնագոյական է թռչունի երգելը, եւ միայն երկու գեղեւորներէ և փոքրերէ վերջն է որ մարդիկ ունեցած են բանաստեղծութեան գեղակերտ եւ կըռական լեզուն: Բոլոր նախնական ժողովուրդներու մէջ, բանաստեղծութիւնը կարելի չէ անձատ երեւակայելի երաժշտութենէ, ինչպէս եւ պարէ և երաժշտութիւն, պար եւ կըռական խօսք կը կազմեն նախնական ժողովուրդներու մտաւոր և հոգեկան կենսի բովանդակ արտայայտութիւնը: Կախնական մարդիկ պարելով ու երգելով կը բուժեն իրենց հիւանդները, դատաւարութիւն կընեն, զոհաբերութիւն կ'ընեն, կ'աղօթեն եւ երգելով ու պարելով է որ վայելի ու սիրելեալ ետեւէն կ'երթան: Իրենց ուրախութիւնը և արմատութիւնը, իրենց ատկութիւնը, կատաղութիւնը, վրէժխնդրութիւնը, անօթութիւնը և գինովութիւնը, կոխի աւերը եւ վախը պարբերու ու երգերու միջոցաւ կը յայտնեն:

Իւսկիւսար, 2 Մայիս 1907

ԱՌԱՅ. — Միւստի Գ' Կոյն, «Էրգո» Էլմէն Կոյն:

ՆԿԱՐԶՈՒԹԵԱՆ ԱՇԽԱՐՀԷՆ



ՍՏԵՓԱՆ ԱԿԱՅԵԱՆ

1890 ի շրջանաւորս Կայս. Գեղարուեստից Վարժարանէն, Նկարիչ-մանրանկարիչ, եւ վերնարամբ երգիչ:

միարաններու կեանքին որոնք իրբեւ պատերազմական լրտես Տրացանի պետի բռնուէին: Մտաւշալը գրէթէ նմանօրինակ կերպով ուրիշ պատկերներ ալ ստանալով, անոնցմէ կազմած էր հաւաքածոյ մը. ասոր համար էր որ պետութիւններէ ոմանք, գլխաւորաբար Սպանիա, աճուրդը բարձրացուցին, հաւաքածոյին սյդ մարդարիւր նկատուած պատկերը ստանալու համար: Մծէթեօ՝ սապէս կ'ըսէ սյդ աճուրդին մասին. «Առաջին գնահատումն եղաւ 150,000, որուն չափ ոչինչ եղած էր աճուրդի հրապարակին վրայ, ուստի ծափահարութեամբ ընդունուեցաւ: Յետոյ արագ արագ յաւելումներով 400,000 ի բարձրացաւ: Մուսիլլօի պատկերին մատուցուած այս մեծարանքին կ'ընկերանային նոր ծափահարութիւններ: Կրկին լուսթիւն. ու կրկին յաւելում: որով աճուրդը կը հասնէր 500,000 ի: Հոս, ակոյեան մը որուն հաւը մարած էր, կարծեւ թէ յաղթուած ետ կը քաշուէր: Խուճիկն մէջ կը տեսնուէին Լուստ Հեռութֆօթ ժպտերես, Նիւվէքէնք կոմսն իր բաթթոնակին վրայ բոլորովին անկրող: Եթէ յայտնի մըցող մը կար, ան ալ փոքրահասակ եւ սեւազգեստ օտարական մըն էր, որ մահնետիկի սուսչին սանդուխն վրայ կեցած էր: Ինչ վերջը կատաղի պոյքար մը սխաւ՝ սեւեր հաղնոց օտարականին

Ս. Արապիտունց Ս. Կուսին. — Լուսինի քառակուսի սալօնին գլխաւոր պարծանքներէն մին եղող սոյն իւղանկարը, քննադատներու կարծիքով, Մուսիլլօ նկարիչին միւս մէկ քանի գործերէն աւելի բարձր չէ. մանաւանդ Հասնուրից Իչիւ: Ս. Արապիտունց. սակայն ինչ որ աւելի հաշտուողը բրած է զինք, սոյն բարձր գինն է, որ արժած է Ֆրանսոյի 615,300 ֆր. գին մը որ խիստ չափազանց կրնայ նկատուիլ՝ եթէ արուեստի միւս գործերուն համար սակացոյց մը գտնուէր: Արդարեւ այս պատկերին սեփականութիւնը բուռն վէճի առիթ տուաւ հանրային մտնետիկի ձեռքով աճուրդի գրուած տան, 1852 Մայիս 19ին Մտաւշալ Սուլթի ստացուածքները ծախուած պահուն, եւ աճուրդին սյդքան բարձր ելլելուն պատճառն ալ պարզապէս հոն շատ արուեստագէտներ գտնուիլն էր: Այդ իւղանկարը Մտաւշալ Սուլթի հասնուեցաւ՝ վանքէ մը՝ որուն սեփականութիւնն էր, փոխարէն երկու

ԿԻՐԱԿԻ. ԴՅ. 7 Դեկտ.—Քեանունի էվվէլլ Ն. Տ. 20 Դեկտ.: 2 ձև. 26 Զիւլլատէ:
 * 2Թ. և Կ. 2Թ. Յիւնակի Գ. կիրակին Ս. Յակոբի պահքին բարկենդանքը:
ՅՆ. Ս. Ամբրոսիոս Մեթոլոնի կախկոպոս: **ԼՏ.** Ս.Ս. Թէոփոնէս վկայ իր ընկերներով:

ՄԻԿՈՒՇՐ. ԴԷ. 8 Դեկտ.—Քեանունի էվվէլլ Ն. Տ. 21 Դեկտ.: 2 ձև. 27 Զիւլլատէ:
 2Թ. և Կ. 2Թ. Պահքը Ս.Ս. Մինաս, Երնոզինէս և Գրարոս վկաներ և Յովհաննէս ու Ալեքսիանոս՝ կամաւոր աղքատներ: **ՅՆ.** Ս. Պատարիոս: **ԼՏ.** Ս. Թովմաս առաքեալ:

ՄԵՆՔՇՐ. ԴԶ. 9 Դեկտ.—Քեանունի էվվէլլ Ն. Տ. 22 Դեկտ.: 2 ձև. 28 Զիւլլատէ:
 * 2Թ. և Կ. 2Թ. և ՅՆ. Ս. Ատուածամանի՝ Աննայէն Յղուժիւնը: Պահքը **ԼՏ.** Ս. Զննոն վկայ: **ՏՃ.** Զէմճէրիք (Գարա զըշ). Զմեռուան Ա. մասին քառասուն օրերուն սկիզբը: Կիւն տէ՛օնիւմի ֆուրժունասը: Պիւրճի ձէտի (այճեղջիւր):

ԶՈՐՔՇՐ. ԴԸ. 10 Դեկտ.—Քեանունի էվվէլլ Ն. Տ. 23 Դեկտ.: 2 ձև. 29 Զիւլլատէ:
 2Թ. և Կ. 2Թ. Պահքը **ՅՆ.** Ս.Ս. Մինաս, Երնոզինէս և Գրարոս վկաներ: **ԼՏ.** Ս.Ս. Անաստասիա և Վիկտորիա վկայուհիներ:

ՀԻՆԳՇՐ. ԲՅ. 11 Դեկտ.—Քեանունի էվվէլլ Ն. Տ. 24 Դեկտ.: 2 ձև. 1 Զիւլլատէ:
 2Թ. և Կ. 2Թ. Ս. Ս. Եւստուատիոս, Օզանտիոս, Եւզինէոս, Ովրեստես և Մարգարիոս վկաներ: **ՅՆ.** Ս. Դանիէլ սիւնակեաց: **ԼՏ.** Ս. Եմիլիանէ վկայուհի:

ՈՒՐԱՍԹ. ԲԶ. 12 Դեկտ.—Քեանունի էվվէլլ Ն. Տ. 25 Դեկտ.: 2 ձև. 2 Զիւլլատէ:
 2Թ. և Կ. 2Թ. Պահքը **ՅՆ.*** Ս. Սպիրիդիոն սքանչելագործ կախկոպոս: **ԼՏ.*** Քրիստոսի Ծնունդը:

ՇԱԲԱԹ. ԲԷ. 13 Դեկտ.—Քեանունի էվվէլլ Ն. Տ. 26 Դեկտ.: 2 ձև. 3 Զիւլլատէ:
 2Թ. Ս. Յակոբ՝ Մծրինի հայրապետ, Մարուզէ ճգնաւոր և Մելիտոս կախկոպոս: **Կ. 2Թ.*** Ս. Յակոբ՝ Մծրինի հայրապետ և Մարուզէ ճգնաւոր: **ՅՆ.** Ս. Եւստուատիոս՝ իր ընկեր վկաներով: **ԼՏ.*** Ս. Ստեփանոս նախավկայ: ՅՈՒՆԱՍՏԱՆԻ Թագաւորին ծնունդը:

ՅՈՒՇԱՏԵՏՐ

7 Դեկտ. ԿԻՐ. [342—24] կէս օր. 7. 21.....

8 Դեկտ. ԲՂ. [343—23] կէս օր. 7. 20.....

9 Դեկտ. ԴՂ. [344—22] կէս օր. 7. 20.....

10 Դեկտ. ԴՂ. [345—21] կէս օր. 7. 19.....

11 Դեկտ. ԵՂ. [346—20] կէս օր. 7. 18.....

12 Դեկտ. ՈւՐ. [347—19] կէս օր. 7. 18.....

13 Դեկտ. ՇՐ. [348—18] կէս օր. 7. 17.....

և թանգարանի վարչութեան ներկայացուցիչ Պ. Նեօվիլի միջև Գիները հազարահան բարձրացան, ու հասան մինչև 586,000)։ Այն ատեն, ամէնուն նայուածքն օտարականին կողմը դարձաւ, որ թաշկինակը բերնին դրած, սոսկալի մտատանջութեան մէջ էր. երբ անոնք տրուեցաւ, գլուխը վար կախեց և մարած ձայնով խոստովանեցաւ թէ յաղթուած էր : Եւ անգամ մին ալ երբ լսուեցաւ 586,000 ֆրանք (բաց ի ծախքերէն). այն ատեն Պ. Նիուվէնքէնք ոտքի ելլելով սա խօսքերն արտասանեց. «Պարոններ, իւզանկարը Ֆրանսայինն է»։ Աս խօսքերուն ընկերացող յուզումն անկարելի է նկարագրել. ամէն կողմէ դիմեցին Պ. Նիուվէնքէնքի ձեռքը տեղմեցին և շնորհաւորեցին Ֆրանսայի վերապահելուն համար Մուսկիլլօի մեծահասակ այդ պատկերը :

* * *

Յարուկին Գլուխը. — Թէեւ Միշէլ Անժի բոլոր շինածներն ալ ինքնին և իր հեղինակին անունով անուանի են, սակայն Սորոսի Գլուխը մտնաւանդ, որ մեծ արուեստագէտին լաւագոյն գործերէն մին է, առաւելագոյն շահեկանութիւն մը ունի, իր պատմական հետաքրքրական հանգամանքին պատճառով : ԺՁ. դարու մեծ մեկենասներէն Շիկի իր սպարանքին զարդարման համար վարպետներ իր քովը հրաւիրեց, որոնց մէջ էր նաեւ Ռափայէլ, որ զարդարման աշխատութեանց մէջ մեծագոյն բաժինն ունեցաւ. ինք նկարեց սպարանքին սենեակներուն մէջ Փիլիպի պարտիսիւնը և Կլուխի յաղթանակը՝ գլուխ գործոցներ : Միշէլ Անժ՝ Ռափայէլի անհամոզ չերեւալու համար, զարդարման գործին մէջ բաժին մը ունեցած չէր, թէեւ կը փափաքէր ինք ալ մաս մը ունենալ այս գեղարուեստական նկարներու մէջ : Իր աշակերտներէն Տանիէլ տը Վոլթէնի և Աւպատիէն տէլ թիօմոցի յանձնուած էր Շիկիի սպարանքին յարակից մասերու զարդանկարութիւնը : Օր մը երբ Միշէլ Անժ գնաց իր աշակերտները տեսնելու, զանոնք հոն չի գտաւ. լաստակերտները պարապ էին. այս բացակայութենէն օգուտ քաղելով՝ ամուսինի կտոր մը առաւ և պատին վրայ պարապ մնացած տեղ մը նկարեց Կայաթէի պատկերին հանգուձակ այն գլուխն, որուն վրայ բովանդակ գերարուեստական աշխարհը կը հիանայ և որ կը ներկայացունէ սորոսի գլուխ մը՝ կամարը վեր բռնելու ճիգի մը մէջ : Անոր գիմագիծերուն մէջ ակնյայտ կը նշմարուի գերագոյն ճիգ մը՝ բնականին պատրանքը տալու աստիճան, կարծես իր վրայ զգալով ահռելի ծանրութիւնը կամարներուն : Ու մտածել թէ վայրկեանի մը բացակայութեան կը պարտի գեղարուեստի աշխարհն՝ իր այս չքնաղ զարդերէն մին որ Միշէլ Անժի հանճարը կը յատկանշէ :

Բերս, 22 Մարտ 1907

ԱՌԱՄԹ. — Գարին հոս Գարին, հոս Գարին հոս Գարին :



ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԻՆԱՆԵԱՆ

Ծն. 1872, Կ. Պոլիս, Զուծակահար, դաշնակահար, նուազապես եւ երգահան, Սան՝ իր արուեստագէտ հօր եւ «Մայէսթրօ» Տ. Զուհանեանի:

Սկիզբ կուտամ՝ նիւթիս, դասատուի մը ընտրութեան մասին խօսելով ։ Պէտք է որ ան իր գործիքին մէջ ունեցած կարողութենէն զատ, ունենայ նաև, իբր երաժիշտ, որոշ կարողութիւն մը, այսինքն մանկավարժ Բլլայ, որովհետև շատ անգամ տեսնուած է որ իր գործիքին մէջ շատ յաջող մը իբր դասախօս շատ տկար հանդիսացած է: Օրինակի համար, կան դասատուներ որոնք ունենալով հանգերձ իրենց որոշ մեթոտը, կը կիրարկեն զայն անխտիր ամէն աշակերտի: Ասիկա կարծեմ՝ սխալ ուղղութիւն մըն է, ցորչափ անձէ անձ պէտք կ'ըլլայ փոխել սորվեցունելու եղանակը. քանի որ մանուկն ու չափահասն, աշխատասէրն ու ծոյլը, բնականէն ընդունակն ու ս'ջ ընդունակը չեն կրնար հաւասարապէս օտազուիլ աւանդուած միակերպ մեթոտէն, որ կրնայ ըստ բազրի մէկին կամ միւսին յարմարիլ, և տուժողը խեղճ աշակերտը կ'ըլլայ: Դասատուին պարտքն է նախ ուշի ու-

շով քննել աշակերտին կարողութեան և ընդունակութեան աստիճանն, ըստ այնմ որոշելու համար մեթոտը: Ընտղքներ ապիկար դասատուի մը չի յանձնելու համար իրենց սինակ զաւակները, պէտք է որ ընտրելի դասատուին կարողութեան մասին նախապէս համոզում գոյացուցած ըլլան. որովհետև յաճախ տեսնուած է որ՝ 3—4 տարի ծուռ դաս առնողներուն գիտցածներն ուղղելու համար հարկ է գոնէ մէկ տարի կորսնցունել: Ուստի մէկդի դնելով այն սխալ գաղափար թէ՛ «հիմակուհիմայ սանկ մէյմը թող սկսի, յառաջիկային կարող մէկէ մը դաս կ'առնէ», պէտք է առջի օրէն կարող դասատուի մը դիմել և փոխանակ շարաթը 2 դաս առնելու, ամսուան մէջ երկու դաս առնել. որովհետև ճիշդ առաջին երկու տարիներուն է որ կարող դասատուի մը դերը պիտի ըլլայ աշակերտը դնել ուղիղ ճամբու մը մէջ: Շատեր կը սխալին կարծելով թէ՛ բուռահան է միայն դասեր առնելով՝ աշխատիլ որ և է գործիք սորվելու համար. պէտք է համոզուիլ թէ՛՝ անեակի մը մէջ միայն փակուելով՝ որ և է գործիք փորձելէ մեծ արդիւնք մը յառաջ չի դար. որովհետև, ինչպէս որ օտար լեզու մը սորվելու համար բաւական չէ միայն կարգալ ու գրել, այլ պէտք է ունկնդրել նոյն լեզուն ազէկ խօսող մը, անոր արտասանութեան, կերպին, ոճերուն և բոլոր դար-

ձուածներուն խելամուտ ըլլալու համար, Այնպէս ալ լաւ նուագող մը ըլլալու համար, պէտք է յաճախ մտիկ ընել նշանաւոր և մեծ նուագողները, վասն զի այդ ունկնդրութիւններով է որ կարելի է երաժշտական ծաշակ մը զարգացունել և որ և է գործիքի հետեւող մը երաժշտութեան վրայ գրուած գիրքեր և յօրուածներ կարդալու է, աշխատելով նաև Principe de la musiqueի, (մասնաւորապէս կը յանձնարարենք Augustin de Savardինը) Այս մասին այսչափը բաւ համարելով անցնինք Դաշնակի մասին մեր գաղափարները պարզելու:

Ա. — Առջի օրէն պէտք է վարժուիլ՝ երբե՛ք ձեռքերու վրայ չի նայելու թղլտուութիւն կայ միայն քիչ մը ա՛յն պարագային՝ երբ ձեռք ստիպուած է ստեղնաշարին (clavier) վրայ ստումներ ընելու իթէ ուղուի, կարելի է աւ ալ զանց ընել, ինչպէս յաճախակի վարժութեանց շնորհիւ ջութակահասարը կ'ընէ, իր լարաշարին (touche) վրայ առանց մասններուն տեղն որոշուած ըլլալու: Այս վարժութիւնը հետեւեալ օգուտներն ունի: 1. Աչքերը միայն «նօթան» կարգաւու զբաղած ըլլալով, ընթերցում (déchiffrement)ի մասին մեծ դիւրութիւն յառաջ կուգայ: 2. Դաշնակի վրայ նոյն իսկ ամենադժուար կտոր մը զարնուած տտեն, դաշնակահասարը բնական ու պազարիւն ձե մը կ'առնէ: Իսկ եթէ, ձեռքերուն վրայ նայելու վարժուած ըլլայ, աչքերը՝ թէ՛ նօթան և թէ՛ աջ ու ձախ ձեռքերը միեւնոյն տտեն տեսնելու ստիպողականութեան տակ, անիկա կ'ենթարկուի գլխու շատ մը անախորժ շարժումներն ընելու, նաև կ'ստիպուի կարողութեանն աւելի աշխատելու, կտոր մը սորվելու համար: Նոյնպէս, շատ աղէկ պատրաստուած կտոր մը եւր մէկ քանի օր ձուլի, բնու չաշխատուածի. պէս կը մտնցուի:

Բ. — Դիւրագարձութեան (agilité) համար պէտք է առջի օրէն՝ առանց տեղ փոխելու, պատրաստուած 5 մասի հրահանգները սկիւլ, յետոյ զանազան ձեւերով ձայնաստիճանները (gamme), ետքն ալ աղերադքները (arpège) և շն, միւս կողմէ, այլեւայլ («Թիւա»)ներ և մեթոտներ շարունակելով: Այս ամէնը կը բաւէ՝ դիւրագարձութեան գաղաթնակէտը հասնելու համար, միայն թէ շատ դանդաղ աշխատելու, և բնական յառաջխաղացութեամբ միայն արագութեան աստիճանն աւելցունելու է:

Գ. — Լաւ ուսումնասիրել չափ (mesure, ամանակ)ի և շարժում (mouvement)ի ինչդիրը, որոնք երաժշտութեան է՛ն կենսական մասերէն են և անոնց բանաւոր գործադրութիւնը՝ դաշնակի վրայ, Օգտակար է նաև առանց դաշնակի Չափի դասեր առնել, Երկու տող զատ զատ կարգալու դժուարութեան պատճառաւ, Չափի անկանոնութիւն յառաջ կուգայ, ասոր առաջքն առնելու մէկ ուրիշ միջոց ալ է՝ երաժշտ. կտորի մը հաշիւները նախապէս ուսումնասիրել. յետոյ դաշնակին վրայ երկու ձեռքերն ալ զատ զատ պատրաստելէ վերջ, նուագել կարելի եղածին չափ ծանր և միեւնոյն տտեն համբիւղով բարձր ձայնով, Բաւական յառաջանալէ ետք, կրնայ օգտակար ըլլալ նաև գործածութիւնը երգաչափ (métronome)ին, գործիք որ կը ծառայէ ցուցունելու, մաթիմատիքական ճշգրութեամբ, երաժշտ. կտորի մը շարժումի զանազանութիւնները, Ասիկա պէտք է նախ անոր համար որ, շատեր անզգալարար արագութեան աստիճանը հետցեալէ կը փոխեն, երկրորդ, որովհետև Չափի հաստատ և որոշ ուղղութիւն մը կուտայ ան: Դաշնակահարի մը համար մեծ թերութիւն մին է ոտքով Չափերը զարնելու որովհետև ոտքերուն դերը՝ սոնակ (pédale) ներով զբաղել ըլլալով, անկէ կը ծնին անսխորժ արդիւնքներ:

Գ.— Աշակերտ մը մինչև որ կատարեալ վստահութիւն չունենայ մասնորոշ կանոնաւոր գործածութեան վրայ, պարտի դուռ շնամալ մասները չի նշանակուած կտոր մը նուազելէ, իսկ եթէ 3—4 տարի՝ մասները նշանակուած կտորներու ուսումնասիրութեամբ զբաղել, ուշագիւր ըլլալով չանդերձ՝ մասները կանոնաւորապէս իրենց տեղը կրնան գտնել:

Ե.— Ինչպէս որ բանախօս մը արտասանած ձառն ազդեցիկ ընելու համար պէտք ունի ձայնի ելեւէջներու և շեշտերու, ինչպէս որ պատկերհաս մը նկար մը արտայայտել ընելու համար, ուրուազիծը պատրաստելէ ետք, պէտք ունի ստուերներ և երանգներ աալու անոր, նմանապէս նուագող մը պարտի — սկանջները հմայելու համար — ուշագիւր ըլլայ արուեստագիտական այն շատ մը բառերուն ու նշաններուն, որոնք երաժշտութեան մէջ կը կոչուին երգին (nuance) և արտաստայտութեան (expression): Ասոնց տիրանալու համար հարկ է ընտիր երաժշտութեանց ունկնդիր ըլլալ, ինչպէս և ուշագիւր՝ մասնագիտական այդ բառերուն անվերջ գործադրութեան, որոնցմով միայն կարելի է տալ պահանջուած արտայայտութիւնը՝ նուագուած կտորին:

Զ.— Կտոր մը լաւ տեղիւրէն ընելու համար, պայման է, 1. ձեռքերու վրայ չի նայել, 2. զարնուելիք կտորն ընդօրինակելով աղէկ մը ուսումնասիրել, Աւելի մանրամասնութեանց համար՝ ուսումնասիրել Դաշնակութեան (harmonie) գիտութիւնը:

Է.— Դաշնակահարի մը է՛ն կարեւոր յատկութիւններէն մէկն ալ ստանակներուն բանաւոր գործածութիւնը գիտնալն է: Ոմանք անգիտակցարար զանոնք կը գործածեն անտեղի կերպով, որուն արդիւնքը կ'ըլլայ պարզապէս խփալուր երաժշտութիւն մը: Սխալ է կարծելը թէ թէ թէ քիտայներուն դերը կը կայանայ միայն՝ կտորին զանազան մասերն ու ժողովներուն մէջ: Ստանակին կատարած դերերը մասնաբաժնորէն հոս բացատրել երկար ըլլալով, հետաքրքիրներուն կը յանձնարարենք A. Lavignacի «l'Ecole de la Pédale» անուն ընտիր գործը՝ նուագակցութեան (accompagnement) խնդիրը թէ և մասնագիտութիւն մըն է, բայց անոր կարեւորութիւնը ա՛յնքան օգտակար է որ մարդ անով ակամայ աղէկ երաժիշտ կ'ըլլայ թէ և քառաձեռնի (4 mains) նուագելն ալ կ'օգնէ, սակայն ատիկա անբաւական է: Որպէս զի նուագակցութեան պատրաստուի որ, պարտի նախ իր մասը, յետոյ մենանուագիչ (soliste)ին մասը գործիքով կամ ձայնով ուսումնասիրել՝ կարելի եղածին չափ, ուրիշ յետոյ պէտք է իր մասը գործել, մենանուագիչին մասն ալ միտանի ցած ձայնով երգելով: Ինչպէս որ լեզու մը ուսումնասիրած ըլլալու համար խիստ կարեւոր է խօսակցիլ գիտնալ, այնպէս ալ ուրիշներու հետ նուագելը գրէթէ խօսակցութիւն մըն է երաժշտութեան համար: Այս կարողութիւնը չունեցող մը կը նմանի այն մարդուն որ լաւ կը հասկնայ լեզու մը, առանց զրուցատրութիւնը գիտնալու: Աւելցունենք թէ աշակերտին սկանջները գէշի չի վարժեցունելու համար, անհրաժեշտ է դաշնակ մը տարին 4 կամ գոնէ 2 անգամ ձայնայարգարի մը (accordeur) խնամքին յանձնել:

Յարդ մեր խորհրդածութիւնները — բաց ի մասնաւորապէս Դաշնակի վերաբերեալներէն — կը պատշաճին նաև երաժշտութեան ամէն ճիւղերուն: Պարզենք քիչ մըն ալ Զութակի խնդիրներուն մէջէն կարեւորները:

Ա.— Կանուխէն կարելի եղածին չափ ծանր աշխատիլ, որով միայն կարելի է — ձախ ձեռքի ամէն տեսակ նրբութեանց ուշագիւր ըլլալով — յաղթել — դժուար

ԿՐԹԱԿՐ. 44. **14** Դեկտ.—Քեանունի էվվէլլ, Ն.Տ. 27 Դեկտ., ՀձՐ. 4 Զիւլհիճճէ:
 ✱ **26.** և **Կ. 26.** Յիսնակի Գ. կիրակին **ՅՆ.** Ս.Ս. Թիւրքոս և Գալիիկոս վը-
 կաներ **ԼՏ.*** Ս. Յովհաննէս աւետարանիչ:

ԵՐԿՈՒՇԵՐ. 73. **15** Դեկտ.—Քեանունի էվվէլլ, Ն.Տ. 28 Դեկտ., ՀձՐ. 5 Զիւլհիճճէ:
26. Ս. Ս. Իգնատիոս և Աղղէ հայրապետներ, և ՄարուԹա եպիսկոպոս: Հարս-
 նիբր **Կ. 26.** Ս.Ս. Իգնատիոս աստուածազգեաց հայրապետ, Թէոպոմոս եպիս-
 կոպոս, Թէոփլաս վկայ, և Բասոս, Եւսեբիոս, Եւտիբիոս և Բասիլիդէս վկաներ:
ՅՆ. Ս. ԵլիւԹիբոս վկայ: **ԼՏ.** Ս.Ս. Անեղ մանուկներ Բեթղեճէմի:

ԵՐԵՒՇԵՐ. 74. **16** Դեկտ.—Քեանունի էվվէլլ, Ն.Տ. 29 Դեկտ., ՀձՐ. 6 Զիւլհիճճէ:
26. Ս.Ս. Թէոպոմոս եպիսկոպոս, Թէոփլաս վկայ, և Բասոս, Եւսեբիոս, Եւ-
 տիբիոս և Բասիլիդէս՝ վկաներ: **Կ. 26.** Ս. Ս. Աղղէ հայրապետ, Աբգար Զա-
 ցաւոր, Ինդոս և Դոմնա կոյսեր, Գղերիկոս քահանայ և Նիկոմիտացի երկու բիւր
 վկաներ: Ինունդի բարկենդանը: **ՅՆ.** Ս. Անգէոս մարգարէ: **ԼՏ.** Ս. Թովմաս
 եպիսկոպոս Գանդուարիոյ:

ՉՈՐՔՇԵՐ. 75. **17** Դեկտ.—Քեանունի էվվէլլ, Ն.Տ. 30 Դեկտ., ՀձՐ. 7 Զիւլհիճճէ:
26. և **Կ. 26.** Պահր **ՅՆ.** Ս.Ս. Դանիէլ մարգարէ, և Անանիա, Ազարիա ու
 Միսայէլ՝ երեք մանուկներ **ԼՏ.** Ս. Սարինոս վկայ:

ՀԻՆԳՇԵՐ. 76. **18** Դեկտ.—Քեանունի էվվէլլ, Ն.Տ. 31 Դեկտ., ՀձՐ. 8 Զիւլհիճճէ:
26. Ս.Ս. Ինդոս և Դոմնա կուսաններ, Գղերիկոս քահանայ և Նիկոմիտացի եր-
 կու բիւր վկաներ: **Կ. 26.** Պահր **ՅՆ.** Ս. Սերաստիանոս վկայ, իր ընկերնե-
 ներով: **ԼՏ.** Ս. Սեղբետարոս՝ Հոռոմի հայրապետ:

ՈՒՐԱԹ. 77. **19** Դեկտ.—Քեանունի էվվէլլ, Ն.Տ. 1 Յնվր., ՀձՐ. 9 Զիւլհիճճէ:
26. և **Կ. 26.** Պահր **ՅՆ.** Ս. Բոնիփատիոս վկայ: **ԼՏ.*** Քրիստոսի Տնօրէնու-
 Թեան տօնը: 1909 Թուականին տարեմուտը (Նոր Տուար): **ՏՃ.** Գուրպան պա-
 րամի Արիֆէն:

ՇԱՐԱԹ. 78. **20** Դեկտ.—Քեանունի էվվէլլ, Ն.Տ. 2 Յնվր., ՀձՐ. 10 Զիւլհիճճէ:
26. Ս. Աբգար Զազաւոր անդրանիկ Քրիստոսի հաւատացող: **Կ. 26.** Պահր,
 Ս.Ս. Աբրահամ և Խորէն քահանաներ՝ Կոզմաս և Դամէանոս անարժամ բժիշկ-
 ներ, և Աստուածատուր վկայ: **ՅՆ.** Ս. Իգնատիոս վկայ: **ԼՏ.** Ս. Մակարիոս
 արքայ: **ՏՃ.** Գուրպան պայրամի Ա. օրը:

ՅՈՒՇԱՏԵՏՐ

14 Դեկտ. Կիր. [349—17] կէս օր. 7. 17.....

15 Դեկտ. Բշ. [350—16] կէս օր. 7. 16.....

16 Դեկտ. Գշ. [351—15] կէս օր. 7. 16.....

17 Դեկտ. Դշ. [352—14] կէս օր. 7. 15.....

18 Դեկտ. Եշ. [353—13] կէս օր. 7. 14.....

19 Դեկտ. Ուր. [354—12] կէս օր. 7. 14.....

20 Դեկտ. Շր. [355—11] կէս օր. 7. 13.....

բութեանց, և աջ ձեռքին տալ հարկ եղած կանոնաւոր ուղղութիւնը ճշգրիտ դորձածութեան համար: Այսպէս, ծանր և միեւնոյն տան քերքն կերպով, աւել ըողջ ճառար գործածելով, կարելի է մաքուր և գեղեցիկ ձայնը հանել ջուլթահէն, որ կը կազմէ անոր հիմնական մասերէն մին թ. — Առաջին մասնազօր (position) լաւ մը ուսուսնասիրելէ ետք, իր աջ ու ձախ ձեռքի՝ բոյր դժուարութիւններով: Գ. — Ձախ ձեռքի գործածութեան տանն կոխուած մասներն — երբ ստիպողական պէտք մը չի կայ — բնաւ չի վերցունել: Ասիկէ կը ծնին հետեւեալ տգտակար սորդիւնքները: 1. Կոխուած մասներ չի վերցունելը՝ մասներէն սկսելով ամբողջ ձեռքին և թեւին կանոնաւոր և ուղիղ դիրք մը կուտայ: 2. Ձեռքին սահելուն սորգէք բլլալով, — ինչ որ յաճախ ականջի անվարժութեան սորգինք է: «Փօս նով» չի կոխելուն ստիճան մը կրնայ նպաստել: 3. Կոխուելէք մասները պատրաստ գտնուելով, արագութեան տեսակէտով նուազողը կէս առ կէս կը շահի: 4. Կը նպաստէ անուղղակի կերպով զուգադերսիք (double-corde) ձախարարաստութեան: Գ. — Զորորդ մասը բնականէն աւելի տկար բլլալով միւս մասներէն, պէտք ունի ամէնէն աւելի գործածուելու. մինչդեռ ստոր հակառակը, մի, շահ, ռէն, սաջի՝ մէկ օրէն, առանց մասի պատրաստ գտնուելուն սովորութիւն կ'ըլլայ միշտ բաց ձայները գործածելու, որով չորրորդ մասը միւսներուն վրայ խակ կը մտայ, Այս է պատճառն որ շատեր երբ կրկուք աւելի կիսէք (bémol) պարունակող կտորներ վարնելու պէտք ունենան, մասնաւոր դժուարութեան մը կը բազդին. Ասոր պատճառը չէ՛ թէ՛ պիսժօններու շատութեան վերագրելի է, այլ չորրորդ մասի խակութեանն Ուստի, հարկ է փոխանակ լաց ձայները գործածուելու, չորրորդ մասը գործածել: Ձի մասնաձեք բուելու որ, լաց ձայները միւս բոյր ձայներէն տարբեր և պօստ (criard) բլլալով, շատ անգամ ականջի խորթ կը հնչեն, որով նախընտրելի է, կարելի եղածին չափ չորրորդ մասը գործածել: Արիկ ստիպողարար նաև մեծապէս կը նպաստէ, քոչխիսններու մէջ, ուր այլեւս բաց ձայներու գործածութիւնը անհնարին է: Զութակահարութեան կարեւոր մասերէն մին է թրթռացում (vibration)ը, զոր յաճախ աշակերտները սովորութիւն կ'ընեն գործադրելու կտորի մը մէկ ծայրէն միւսն. ինչ որ անիմաստ բլլալէ գատ, ջութակին ալնիւ և վսեմ՝ հանգամանքը կորնցունելով, անոր կուտայ սամիկ արտայայտութիւն մը: Թրթռացումը պէտք է գործադրել զիտակցութեամբ, այն պարագային, երբ աշակերտն ամէն մտնրամասնութեանց մէջ ինքզինքը կարող կ'զգայ. և այն ալ ծանր և յուզիլի եղանակներու մէջ: Վերջապէս երաժշտական այս ամէն ինչորներու մասին ո՛րչափ որ ալ գրենք, դարձեալ քիչ է. քանի որ նոյն խակ կարելի է հատորներ լեցունել ամէն բան բացատրելու համար մանրամասնօրէն, ինչ որ կը վերաբերի լեցատուին և աշակերտին մասնակի աշխատութեանց: Վերջապէս, վերջին խորհուրդ մը, զոր կ'ուզենք տալ. պէտք է առաջին երեք տարիներու մէջ ինչ լաւն շահ կրկնել, փոխանակ շահ լաւն ինչ զարնելու: Աշակերտ մը Բ. տարիէն մինչև Զ. տարի՝ իր մասնաւոր երիւսներն ընելէ գատ՝ պէտք է հետաքրքիր բլլայ քիչ շատ ստիճանարար աչքէ անցունելու մեծ հեղինակներու գործերը: Ասիկէ անդին՝ երաժշտութեան մէջ ինքզինքը վարել և յառաջդիմել: Վերջապէս կրնալ մեր խօսքը, բոլոր նուագողներուն և երաժշտական ամէն ճիւղի զբաղողներուն կը մաղթենք լայն սիրտ և երկարատև համբերութիւն, որոնք կը կազմեն երաժշտակերի մը ամէնէն մեծ դրամագլուխը:

Արտ, 5 Մայիս 1907

Հայր Սեփակ

Ս.Ս.Ս. — Կոչը Կոչի Կոչի — Կոչի:

ԿԻՐՍԱԿԻ. 43. **21** Դեկտ.—Քեանունի էվվէլլ Ն. Տ. 3 Յնվր. 1 շճԲ. 11 Զիւլնիճճէ:
 ✕ **ՀԹ.** Յիւնակի Ե. Կիրակին **Կ. ՀԹ.** Պահր, Յիւնակի Ե. Կիրակին **ԹՆ. Ս.**
 Յուլիանէ վկայունի **ԼՏ. Ս.** Գննովաիէ կոյս **ՏՃ.** Գուրպան պայրամի Բ. օրը
ՀԲ. Երուսաղէմի՝ Նարուզդոնտորէն պաշարուելուն համար ծոն

ԵՐԿՈՒՇԲ. 44. **22** Դեկտ.—Քեանունի էվվէլլ Ն. Տ. 4 Յնվր. 1 շճԲ. 12 Զիւլնիճճէ:
ՀԹ. Ս Ս. Արրահամ և Խորէն բահանաներ. Կոզմա և Դամիանոս՝ անարժամ
 բժիշկներ, և Աստուածատուր վկայ Հարսնիք **Կ. ՀԹ.** Պահր, Ս. Անաստասիա
 բժիշկ վկայունի **ԼՏ. Ս.** Տիտոս առաքեալ **ՏՃ.** Գուրպան պայրամի Գ. օրը

ԵՐԵՒՇԲ. 45. **23** Դեկտ.—Քեանունի էվվէլլ Ն. Տ. 5 Յնվր. 1 շճԲ. 13 Զիւլնիճճէ:
ՀԹ. Ս. Ս. Դուսիթ մարգարէ և Յակոբ առաքեալ **Կ. ՀԹ.** Ս. Ս. Դուսիթ մար-
 ցարէ և Յակոբ առաքեալ Պահր, **ԹՆ. Ս. Ս.** տասր նախահայրեր՝ Արրահամէն
 մինչև Յովսէփ **ԼՏ. Ս.** Թելխսիորոս հայրապետ **ՏՃ.** Գուրպան պայրամի Գ. օրը

ԶՈՐԻՇԲ. 46. **24** Դեկտ.—Քեանունի էվվէլլ Ն. Տ. 6 Յնվր. 1 շճԲ. 14 Զիւլնիճճէ:
ՀԹ. Պահր **Կ. ՀԹ.** և **ԹՆ.** Բրիստոսի Ծնունդին ճրագալոյցը **ԹՆ. Ս.** Եւզի-
 նէ վկայունի **ԼՏ.*** Բրիստոսի Յայտնութիւնը

ՀԻՆԳՇԲ. 47. **25** Դեկտ.—Քեանունի էվվէլլ Ն. Տ. 7 Յնվր. 1 շճԲ. 15 Զիւլնիճճէ:
ՀԹ. Ս. Ստեփանոս նախասարկաւազ և նախավկայ **Կ. ՀԹ.*** և **ԹՆ.*** Բրիստոսի
 Ծնունդը **ՈւՍ** օր ուտիք, իսկ յունաց՝ մինչև յունվար 4 **ԼՏ. Ս.** Դուկիոս վկայ

ՈՒՐԱՍԹ. 48. **26** Դեկտ.—Քեանունի էվվէլլ Ն. Տ. 8 Յնվր. 1 շճԲ. 16 Զիւլնիճճէ:
ՀԹ. Պահր **Կ. ՀԹ.*** Ծնունդին Բ. օրը Եւ Ս. Ստեփանոս նախավկայ **ԹՆ.***
 Ծնունդին Բ. օրը Եւ Ս. Աստուածածնի տօնը **ԼՏ. Ս.** Սևեքիանոս եպիսկոպոս

ՇԱԲԱԹ. 49. **27** Դեկտ.—Քեանունի էվվէլլ Ն. Տ. 9 Յնվր. 1 շճԲ. 17 Զիւլնիճճէ:
ՀԹ. Ս. Ս. Պետրոս և Պօղոս առաքեալներ **Կ. ՀԹ.*** Ծնունդին Գ. օրը Եւ Ս.
 Ս. Պետրոս և Պօղոս առաքեալներ **ԹՆ.*** Ծնունդին Գ. օրը և Ս. Ստեփանոս նա-
 խավկայ **ԼՏ. Ս.** Մարկիանոս խոստովանող

ՅՈՒՇԱՏԵՏՐ

21 Դեկտ. Կիր. [356—10] կէս օր. 7. 12

22 Դեկտ. Բշ. [357—9] կէս օր. 7. 11

23 Դեկտ. Գշ. [358—8] կէս օր. 7. 10

24 Դեկտ. Դշ. [359—7] կէս օր. 7. 09

25 Դեկտ. Եշ. [360—6] կէս օր. 7. 08

26 Դեկտ. Ուր. [361—5] կէս օր. 7. 07

27 Դեկտ. Շր. [362—4] կէս օր. 7. 06


վարք վզին, խարազանք ձեռքին, ոժտունակօսն մէջ ակօսին, ոժտունակորդը վեր կորդին: Խուրիկն է ամէնէն առաջ, Ոժտունին լծափէտին քիլէն շոխուած, ձախք խուրիկակորդ, աջք խուրիկակօս՝ խուրիկվարք վեր վզին, խուրիկակօսը կաթ լուծէն: Սամիխն ալ զո՛յգ զո՛յգ գրկեր են հաստ վիզերը լծկաններուն՝ սամիքերը մը պիտի ու կիքը «Հա՛մ եկ՛ւ եկ՛ւ, եկ՛ի խուրիկ եկ՛ի մարալ» զանկուն, զո՛ւն ձայնը կը բարձրանայ: խուրիկվարէն թէ ոժտը վարէն: խուրիկը ցունց կուտայ ոժտուն, ոժտունը Սարծիին, սարծիին ամօլուն, ամօլն ու քառեակ լուծք համախուսը՝ գուլթի սարուածին. ու խոփը՝ մաճկիին ոտքին տակ հողին զլո՛ւխ տալով՝ խորունկ ու մուշ կ'երթայ, կամ կը վարէ սող ի սող, թեթեւ ու սողնա՛ն Գուլթուտն ու մաճկալը, արօրն ու խոփը, եղն ու գոճէշը գուլթանին՝ կը վարեն, կը գուլթանեն, կ'ակօսեն ու կը հերկեն, առո՛ւ առո՛ւ, թուտը թուտը կը բանան ու կը շարեն արտին մէկ ծայրէն միւսը: Վարք մ'երթալով՝ Ու փաթը կը կրկնուի երեւելէ երեւել՝ ուր խոփն երեւել կ'սկսի և ընդ-բարձ կը բուրբ մէկ ակօսեն զէպ մէկալը՝ տակաւ նեղցնելով մէջտեղի կորդը: Գուլթանը կը վարէ, վարած հողը շո՛ւ շո՛ւ զէպ աջ ու ձախ կը շրջուի՝ նաւուն ճեղքած այլերներուն պէս, և հերկէն մաս մը բո՛ւխ բո՛ւխ դուրս կը հոտի աղիւրէն, — թողած միջոցն «առաւտամ»-ին ու «կարաւ»-ին, որք կ'անես թէ հիմերն են «(տո)»-ը ու «տոնախօր կամուրջ»-ին ի՛նչ ոգեւորութիւն, ի՛նչ վաստակ ու ջանք, արիւն քրտի՛ք աշխատանքը — փաթ փաթի ետեւէ կը հարստանայ: արար հերկի շարքերով. ամէն «փաթ»-ին գիւղ մը կը նեղնայ, կը նիհարնայ կորդը. ամէն «երեւել»-ին գուլթուտն ու գուլթանը կը տարնան կ'ոգեւորին: Եւ ահա կը տեսնես հացուորին բերած ակնաստը կամ՝ մաշն ընելէ, որկոր ու փոր գոհացնելէ վերջ՝ Գուլթուտը հին վիճին արօտ զրկելով, նոր փոքր կը լծէ ու կը շաշեցնէ շեպը խարազանին: Թարմ՝ մտերէ ձգուած գուլթանն այս անգամ՝ նոր ու թարմ ուժով կը պիտի հողը կրկն ու կորդ արտին: Լծվարները ձէնիկ գլուխ ձգած, եկ՛լեկ՛ը շրթներուն՝ կը զիւրեն տաժանքը մարալ եղներուն ու գառն «գատք», քիտան իրենց ճակտին: Լծվարին եկ՛լեկ՛ը լուեց, — մաճկալն է առեր բերան, թաւ ու դպան ձայնով մը ե՛րգը գուլթանին.

Առաւտամ	արդէ երեւոյ,	Գուլթան	գուլթան արտին գլուխ.
Բարեւոյս	արտերն է բոյ.	Մաշն	արտ «Ե՛մ՝ Տեր Առաւտամ»,
Բոյս	բարձ լուս ազբերան,	Խոփ	ոչաւ պէս գեղին սոլոյ:
Հանք	գուլթան, թե՛մ սարսուտ:	Խաւ	գուլթան արտ իւր արտին,
Գիւղ	վեր արտ, թե՛ր գոհացնելը,	Ձոր	գուլթան իւր իւր:
Գուլթան	երեւոյ, արտ լուրեւոյ:	Գուլթ	գուլթան, իրքէ՛ք իւրաւ.
Մաշն	բարեւ արտն Առաւտամ,	Մարք	գուլթան արտին արտին:

Ո՛ւր վերջն երգին, ո՛ւր գուլթանին ու հերկին: Ձայնը կը զրնկայ, հողը թը՛ւ թը՛ւ կը թըթուայ, հողը կը բացուի պատա՛ն պատա՛ն խոփապատաւ, մաճկալին երգը թեւ ու թիկունք է տուեր խուրիկան, Ոժտան ու Ամօլուն թէ Սարծիին քառեակ լծան:

Գուլթանին շրջած հողերն ամէնան արեւին դէմ՝ արուած, խարկած ու ակնձած՝ վիճկավար կ'ըլլայ այս անգամ, սերմամուտ տալու համար: Լծեր է, հողին մարդը՝ զոյգ մը եղ իր վիճկուն կամ՝ Հարօրին, Ամօլիին մը կազմած այսպիսով. շուրհի ան ո՛չ անիւ ոչ ակ ու սունակ, ո՛չ Բնատա ո՛չ ճամբարակ. շուրհի գոտ» որ

«ոտնախպեր» ալ ունենայ, լուծը չէ աւելի քան մէկ, չունի խուրիկ ոչ ալ ոտտուն, սարծիլ ու ամու ալ չունի, քառեակ լուծը մէկ լուծի մէջ է խտացեր,




զիծկըւորնալ չորսի տեղ մէկ, Հարօրվարի ժամանակ է. զիծկըւորը մաճը բունած՝ սոր կը կոխէ առատամին գլխուն, խոփը կը խրի հողին մէջ. րուրով կից անքն ասողներով մասանին կապ կը ձգուի գործչուրէն, ան ալ կանդրիկը լծափէտէն, ու լուծն ու սար-

ուածն ամբողջ զիծկին կը քաշուի ամուկի լծկանէն. Գուժնվար հողն այսպէս, կը զիծկուի փա՛թ փա՛թ, գուժնի խոփէն պրծած պալերը կը փշրուին զիծկու խոփէն, և արտը վարած ու վարված և մինչև խոփցնան փուխը ու սրբուն՝ գարնան մաղ-մաղ անձրեւներուն տակ կը պատրաստուի մուտ տալ սերմին՝ մէջ իր ծոցին:

Գ. — ՅԱՆ Ք, ՅԱ Ք

Հիմա ցանքի ժամանակ է. երկրագործը պատաստեր է իր սերմացուն, — ցորեն, գարի, տարեկան կը ցանէ գարնցան կամ աշնցան, հատ-բուտ կամ քոնիկ. կարակչը կամ աւետիք, սիվտկահատ կամ կարմրահատ, և կամ խաճառ՝ որ



կուտայ բերք անպատճառ, — «խաճառ» անպատճառ: կը ցանէ, բայց ի՞նչպէս — Սերմնացանը մէջքին կապեր է մեծկակ շոր մը իբր գողնոց՝ սերմացու հատիկով լեցուն ու գողուած. սերմը կ'ափէ ու կը ցրուէ աջ-ձախ գէպ առաջ՝ հետեւելով ուղեցոյց «սերմագան»ին: Հացահունար հողին աւանդեց պրծալ հողագործը. հիմա մակն կը ձգէ կը մանգուէ

գուղձերը, ապա կը լծէ Տաի կամ Տաիանը, կամ Յաք կամ Յաքանը զոյգ մ'էղի, ու կը քչէ ցանած, մանգուած արտին երեսը՝ տա՛փ տա՛փ «տափնեջով», հուն-

ԿԻՐՍԱԿԻ. ԲԻ. 28 Դեկտ.—Քեանունի էվվէլլ Ն.Տ. 10 Յնվր., 2 ձՐ. 18 Զիւլհիճճէ:
 ✻ **ՀԵ.** Յիսնակի Զ. կիրակին **Կ. ՀԵ.** Ծնունդին Դ. օրը **ՅՆ.** Ս.Ս. Նիկոմի-
 տացի երկու բիր վկաներ և Ծնունդին Դ. օրը **ԼՏ.** Յիսուսի անունին տօնը:

ՆՐԼՈՒՇՐ. ԿՅ. 29 Դեկտ.—Քեանունի էվվէլլ Ն.Տ. 11 Յնվր., 2 ձՐ. 19 Զիւլհիճճէ:
ՀԵ. Ս.Ս. Յակոբոս առաքեալ և Յովհաննէս աւետարանիչ՝ օրոտման օրդիներ:
 Ծնունդի պահրին բարկենդանը **Կ. ՀԵ.*** Ս. Ս. Յակոբոս առաքեալ և Յովհան-
 նէս աւետարանիչ՝ օրոտման օրդիներ: **ՅՆ.** Ս.Ս. տասնը չորս հազար մանուկներ
 բեռնեհէմի **ԼՏ.** Ս. Հիզիոս Հոռմի հայրապետ:

ՆՐԵՔՇՐ. ԿՅ. 30 Դեկտ.—Քեանունի էվվէլլ Ն.Տ. 12 Յնվր., 2 ձՐ. 20 Զիւլհիճճէ:
ՀԵ. Ծնունդի պահրին Ա. օրը Ամանլուայ (կաղանդի առթիւ): **Կ. ՀԵ.** Ծնուն-
 դին Զ. օրը **ՅՆ.** Ս. Աննիսիա վկայուհի **ԼՏ.** Ս. Տատիանէ վկայուհի:

ԶՈՐՔՇՐ. ԿՅ. 31 Դեկտ.—Քեանունի էվվէլլ Ն.Տ. 13 Յնվր., 2 ձՐ. 21 Զիւլհիճճէ:
ՀԵ. Ծնունդի պահրին Բ. օրը: Նիկունի օր (կաղանդի առթիւ): **Կ. ՀԵ.** Ծը-
 նունդին Է. օրը **ՅՆ.** Ս. Մեղանիա վկայուհի **ԼՏ.** Ս. Վերոնիկէ կոյս:

ՍԻԱՆԱՅՈՅՑ. — Էջ 20. այն օրեր Տ. Խորէն—այն օրեր Տ. Խորէն ⑤ 26. փափակ—փափաք ⑤ 28. եկեղեցականութեամբ—եկեղեցականութեան ⑤ զպրանոցը—զպրանոցը, ⑤ 40. Մարկիանոս—Ս. Մարկիանոս ⑤ 52. Տամիանեան—Դամիանեան ⑤ 62. ոչ այլ ինձ—ոչ այլ ինչ ⑤ 63. Թելկրապ, Թերթկրապ—Թելկտապ, Թերթկտապ ⑤ 64. Դեկատրիթ—Դեկապօլսեցի ⑤ 80. Բաղցացուած—Բաղճացուած ⑤ 82. Մակար—Ս. Մակար ⑤ Պաւլպեցի—Պաւլպեցի ⑤ 88. Նիկոն—Ս. Նիկոն ⑤ Քսեստոս—Ս. Քսեստոս ⑤ 94. Հերմենեզելտոս—Հերմենեզիտոս ⑤ Հոսիմոս—Չոսիմոս ⑤ 100. Հերովդիանոս—Ս. Հերովդիանոս ⑤ 107. հագրիճուած—հանգրիճուած ⑤ 108. Հոռերտոս—Ս. Հոռերտոս ⑤ Փիլիպպոս—Ս.Ս. Փիլիպպոս ⑤ 114. Տեսիղերիոս—Դեսիղերիոս ⑤ 120. Կիզեկոնի—Կիզիկոնի ⑤ 120. & 190. Հերեղեան—Չերեղեան ⑤ 128. Պեղաբիոս—Պեղազիոս ⑤ Իվան—Իվոն ⑤ 134. Լետինացի—Լերինացի ⑤ Նառմի—Հոռմի ⑤ Կղեքեբիա—Կղերբիա ⑤ 148. Մետրորանոս—Մետրոփանոս ⑤ 162. Կոնզակոս—Կոնզակա

ՅՈՒՇԱՏԵՏՐ

28 Դեկտ. Կիր. [363—3] կէս օր. 7. 05.....

29 Դեկտ. Բշ. [364—2] կէս օր. 7. 04.....

30 Դեկտ. Գշ. [365—1] կէս օր. 7. 03.....

31 Դեկտ. Դշ. [366—0] կէս օր. 7. 02.....

170. Ա. հետեւող—եպս. հետեւող 176. Ազրիպինոս—Ազրիպինոս 182. Բոնավենտուրոս—Բոնավենտուրա 195. անխուսարելի—անխուսաբեղի 204. Միքիմիտոսի—Ս. Աստուածածնի մեծ եկեղեցիին 210. արբայուհի—սրբատուհի 218. Տաղմատիոս—Դաղմատիոս 248. շրջեսցէ—շրջեսցի 246. վրտանբիդ—վրտանդիդ 247. կազմեն—կազմին 248. շրջեսցէ—շրջեսցի 246. կուտեսցեն—կուտեսցին 247. կատարեն—կատարել 250. Թիւրոս—Թիւրսոս 265. Կոզմա—Կոզմաս 276. Ordre à billet—Billet à ordre 280. Թիոնեսիոս—Դիոնեսիոս 292. Ակլամոնիկէ—Ազամոնիկէ 298. Հոռբերտոս—Հուրբերտոս 298. & 330. Մեդիսյանու—Մեդիսյանու 298. Կալինէ—Կալինիկէ 315. Աբդիա Ս.—Աբդիաս 318. Նիզոս—Նեզոս 324. Ուրամ—Ուրբամ 330. Ակրանդայ—Ակրականդայ

Հողագործն արար տափնեց, հուսնար հողէ վերմակին տակ ծածկեց, թխեցուց, արեւը վրան տուաւ, հերկը շարցաւ, ծարուքցաւ. հիմա ջրեւու կարգն է բաւոր «ջրարբին» ցանքերուն: Տիրն ու ուսնեամբ չուին պէտք մարդկային ջուր ու ջրուսին, երկնից ցող ու անձրեւին են մնացեր ցանքէն մինչև քաղ: Գուրի կարգն է ջրարբի ցանքին. ջրբաշ երկրագործը շալվարը մէկդի ձգած, կտաւէ վարտիքը ծուռնկն ի վեր սօթածած՝ ձկնայից մերկ սրունքն աւեր՝ առտուան զովուկ ջուր ու հողը մտեր՝ կը ջրէ արարս: Ի՞նչպէս կը ջրէ. արտն ածու չէ, ո՛չ ջրուղիներով կանոնաւոր, ո՛չ ալ հարթ ու հակ, — տեղ մը դար, տեղ մը դուր, տեղ մը փոս, տեղ մը փոր. հոս հակ, հոն պառկ, հերկ ու հողալիքներով անհարթ անհաւասար, — մակերեւան ամբողջ արտին: Ուղղաջուրը կ'իջնէ արտին մէկ գլխէն, անվար ուրգէ մը (սար-ամ [քրդ.]), զոր շատ տեղեր գլխակորի կը կոչեն) և կը վազէ ծարաւ «մրկուկ»: Հողին վրայ, հողէն ծծուելով, հողը յագեցնելով ու նորէն Հողին երեսէն վազելով դէպ հակ ու պապակ կողմն արտին: «Զրկալ»ը (արտ ջրող) բաճը ձեռքին, հետքին կը հետեւի հոսող ջրին, ու բերան մը բաճի տակ կը փշրէ ջրարգել գուղձ մը, կը բանայ ջրատար ուրդ մը՝ ցուցնելով ուղիղ ճամբան խողը մնողը ջրին: Ի՞նչը բերան մը բաճի տակ ջուրը չի քալեր խելօք. զօրեղ ջրհասնէ՛ր պէտք են, կամ դար-ամ [քրդ.] ուրիշ բառով: Զրկալն ասոնց հմուտ՝ կոտիներ կը զարնէ հոս հոն՝ կոր, խոտոր կամ կիսարողոր, որոց դէմ ջուրն ուռելով կը վարէ իր հոսանքը դէպ ուր որ ջրկալը կ'ուզէ: Այսպէս, կորիներով կ'առաջնորդուի ջուրն արտին մէկ գլխէն միւսը՝ շնորհիւ դաշտի մարդուն, — հմուտ հողագետ, վարպէ՛ս ջրաբաշի, նուիրուած արհեստաւոր: Պնդահող լեռնամասերու հողագործն արար կը ջրէ կորիներ բանալով եզան լուծով ու խօփն ուժովը, և ջրկալներ (դար-ամ) կը զարնէ կորիներուն ուղղահայեաց դիրքով. — որքան հող՝ այնքան հերկող, որքան գաւառ՝ այնքան գաւառարարբառ:

Զ. — ԲՈՒՄ, ՀԱՍ

Ոտին ցանքը խոնաւ հողով Աստծու յոյսով, ջրարբին՝ ջրի ուժով, օր աւուր բուսնելով, աճ ու ծիւ տալով՝ անուշ արեւին տակ թուխ հողին երեսը կը քսէ թարմ ու ծիծղուն կանանչ մը, — Աշտա՛ն է նորարուսիկ, ծիւ ծիւ մանրածիւ, դեղին հատիկը կանաչ արեւով թուխ հողին բանտէն կանչածիւ, ծիւր ծիւր ծիւր ծիւր կ'արձակէ, ծիւր ծիւր կը ծիւ, թա՛ւր թա՛ւր տերեւներ կը պարզէ. հող ու ջրով: Ըյս արեւով կը սնի, կ'աճի կ'ուռճանայ, ծղօձին ծռլլը «կը հասկի», հասուն հասկեր կը կախուին. «եղա՛ն ու բալասուրը Բալասուր կուտան քմաւեր մանուկներուն ու քիմքերը կը պարարեն, մինչև որ ցանքերը հասէ հաս հասունան, ու քաղն սկսի թէ ձիւնն արեւէն հալած՝ ցուրտը վրան է տուեր, ցանքը՝ Գե՛նն հոնից կ'ըսեն. թէ անձրեւն առատ ու աւելօք է խաղցեր, և խաղ մ'ալ ամպոտ արեւն է խաղցեր՝ ցանքն ու հասկը խա՛նք շարժ— կ'ըսեն. թէ աշնան երաշտի մը հետ, շողերն արեւուն՝ շողան ու այրեն սրունքը հասկերուն՝ ցանքը լու՛րտի է կ'ըսեն. թէ ջուրը սակաւ, աճը տկար հարաւ քամիէն ալ հասկը սմբած ու «քամաբաշ» ցարէն լու՛րտ— կ'ըսեն. իսկ թէ քաղը վրան անցնի՝ վականակ ցորենը Գե՛նն է կ'ըսեն. — հասնի թէ՛ կծղի՛ ցանքը քա՛ղ կ'ուզէ, երկրագործը կը քաղէ իր արար:

Դար-դաշտ՝ ուր հացահատի տեղերն էր գեղին կուտայ այժմ. — խոտք գեղին, հոգր գեղին, ծղոնները գեղին, հասկերը գեղին, գեղին են արտեր, ցանքերը բոլոր, ոտինն ու ջրարբին, կամ «խոնաւոցն» ու «ջրփոց»ը: Թէ քաղ ու հունձն ալ ըլլայ՝ «ցղուն»ներով թաւ, խուզած արտը նորէն գեղին: Երկինքն իսկ գեղինով է ջրուած աշնան օր ու արեւէն: — Դեղինփառ երկին արեւէն՝ թէ արեւը հունձքի ամբին է փոխ առեր ոսկեշող գոյնը գեղինին... Ընտրութեան երկրագործ մարդը կնիկ-տղաներով կանուխ առուէ իր արտին մէջ է: «քաղոց»ին քաղ պէտք է, ու քաղին՝ մարդ, — բազուկով, մէջքով ու մանգոլով մարդ: «Նէօնած»ը — վարպետն հնձուորաց — կ'երթայ առաջէն, «Նէօնած ախպէր»ն ետեւէն, մէջտեղն է համալի «Միջին դուռ»ը քաղուորաց, «պուշած»ը ետեւէն՝ հէօնածին չափ վարպետ: Խուճը մը հոս, խուճը մը հոն ամբողջական հնձուորներուն՝ մաս մաս կը հնձնն արտը մէկ ծայրէն միւս: Աջէն դէպ ձախ «կողմանցիկ» երթալով կը թէքեն հասկերը մանգաղին բերնով դէպ ձախ ձեռքը — բռնաչափ հասկեր շուտ շուտ կը բռնուին ձախով, խրճփ խրճփ կը մանգոլուն աջով, կը լքուին տեղն ի տեղ իրարու վրայ թաւալ: ապա շուտով մանգաղին թեւը մէկ կողմէն, ձախ ձեռքը միւս դեհէն գիրկ մը ձեւացնելով գետնաթափով քաղօններուն՝ կը վերցնեն, գետին պարզած «խրճանկապ»երու վրայ կը դնեն, կ'որսյեն: Բրաններն ապա դէպ կը զարնեն արտին մէջ:

Թէ բարիլայն է օրուան, դաշտի մշակն իր Ակուսը կ'ուտէ. քանի «բաշոն» (արեւը) բարձրանայ՝ «ճաշոց»ը կը մտնույ, և «սարակ»ներն իրենց ձաշը, — Սարականա՛շը կ'ընեն: Կէսօրը կոտրի՝ իրամեկը իրաւունքն է իրենց օրուան պահիկին, յոգնած թեւերուն, անթցած փորին: Ժամերու անցման հետ նոր ետանք, նորոգ ջանք, նոր ու առատ քրտինք՝ հնձուորի արտին, քաղուորի թեւին, մշակի ճակտին կը քաշէ ան. կը քաշէ անխնայ, ժիր ու «մէջբակոտոր», կ'աշխատի սյնպէս որ մանգաղին դէմ արտը կը դողայ, — ծղօնները խրճ խրճ կը խփուին, խուճ խրճան քամակ կուտայ, մանգաղները քրտինք կը թափեն, քրտինքը շրճ շրճ ճակատն ի վար «կը չաւայ» մշակին, և մշակն իր յօտոցով արտը կը սրբէ՝ պատառ մը հացով իր ճաշին պնակը սրբելուն պէս: «Խրճանց»էն վերջ իր մանգաղին լլիկ մը, — թեթեւ սուր մը ալով կը քաղէ նորէն, մինչև օրը մթնի, և լեբէ իր չորրորդ սնունդը, — ընրի՛նն իրիկուան թէ զիւրաքառ է արտին քաղը, օ՛հ, հնձուորները շատ ու շատուոր, տարալները պէտի՛կ պէտի՛կ, ու ժերը բազմապատիկ, ճնազարտ-զուռնա՛խ ձայնով արտեր թունդ, բազուկները պինդ, միջուկը ճարակ կուտայ իրենց մէջ, մէկը միւսէն, մէկ խուճը մէկ պալէն առաջ կ'ուզէ անցիկ, բրտինք կ'ուզէ թափել, ծղօն կ'ուզէ հնձել, և ահա չքրճած քանի մը ժամ՝ արտը լափուած է մարդամօրեխներէն, — հնձած, խրճած ու դիզած է: Ի՞նչ կը տեսնես որ բնութեան դեղնահիւս բնական գորգին խուրը խուզուած՝ կարճամաղ գորգը կը մնայ փռուկ գետնին վրայ, մինչև նորի ու կանաչի՛ այս անգամ՝ գարնան կանաչ արեւին ու կանաչ մանաչ բնութեան մեծ գործանցանին վրայ: Բազուորին օրն ու քաղը կը լրանայ իրիկուան ոսկեփառ արեւին հետ. քաղուորն արտին տէրէն կ'առնէ իր արտախլան օրինական, և բուռ մը հասկ հետն առած գիւզական իր շէնին ճամբան կը բռնէ՝ մանգաղը թեւին կախած, ձեռքովն հիւսելով խա՛շ մը բուսական, խա՛շ մը բնատիպ, — իսպառու կոչուած, զոր իր ցածիկ ու մուծիկ յարկին ծխաների սիւներէն միդն վրայ կը զարնէ իրը մշտական հովանի ու յիշատակ Դաշտի սուրը կեանքին:

Խուզուած արտին մէջտեղը, — կալատեղը, — յարգարուած է կալը հիմա-
բլբաձե շարուած են որաները հասալից հասկերուն որոց շուրջը կը տարադնէ («կալ-
ւոր»ը նո՛ր որաներ, — աշուն կ'ընէ, ու վրան կը քալեցնէ կալը (կամնասայլը)՝
քաշուան լուծ մը երկու լծկան տաւարէ, դունչերնուն վերաւնա անցուած: Անոնց
տաջեւէն կալաճիղը (կալտի) կը քալէ՝ կճղակներուն տակ ծմաթկելով, կոխըռու-
տելով, հասկաթափ ընելով աշունը, — ասարողնած կամնելի մասը որաներուն:
Կալատէրը կը խրախուսէ իր կալւորները. «Իէ՛ տղաք դէ՛, խայան ելաւ, խայան
եղաւ», և կամնողն ու աշան ընողներն ոգեւոր ու ժիր՝ ժիր ձայներով կը քշեն ու
կը դարձնեն կալտին՝ կալին շուրջը, փորէն կոյճքարի կտորներով զինուած կամ-
նասայլը խրճա խրճա կը կարէ կը կըտրտէ հասկ ու ծղօն՝ ծանծամերկ հատիկները
կալատեղին սրտին բոլորը մաղելով. կամ ապարազէն շարչաւոր կը ջարդէ կը
բրդէ հակադիր ատամներուն տակ ինկող մէն մի ծիղ ու ծանծ, հասկ կամ որա-
յին — կալադէզերը կը ցածնան, կալը կը թանծրանայ, կալին կուծը կ'առա-
տանայ, կալատէրը կը խայտայ: Անդին կալւորը թող կալ՝ քշէ, աշան ընէ, խա-
յան հանէ, ասդին՝ ուրիշ խումը մը մշակներ, խայանը կը րեղեկն ու բարեդէպ
հոփն առնելուն պէս՝ րեղը երան կուտան, փառեցսով (հեծանոց) հոփն դէմ կը
վերցրուին, կ'երնեն որ հատն ու ծանծը զատուին, — ծանծը հոփին երթայ,
հատը մնայ դետին: Կալը կը շարունակուի օրերով, շարաթով, վարող, ցանող,
ջրող ու քաղող երկրագործը չի յոգնիր բնաւ. ջեռ արեւին կծան շողերուն տակ
իր ծակատը վարժ է քրտինքի, բերանն՝ օրհնիթքի. ան չի արանջար իր բախտէն,
իր հօր ու մօրէն, — «Իր հօր մօր ի՛նչ մեղ դրած, իր ծակտի դիրն է՛ս է գրած»:
Ու կայլա՛կ կայլա՛կ առատ առուակ իր քրտինքը՝ անձրեւն է ցանքին, ցօ՛ղն է
հասկաթուռ բուսին, — կալ ու կուծը՝ հա՛լալ վատտակն իր ծակտի քրտինքին:
Կալը կը վերջանայ օր մ'առաջ, օր մը վերջ. կալատէրն ու կարււրը կը կշա-
նան, «ախլաւան», («կալի կորկոս»)ը նոր տարուան թածա բերքին համը տուած
են ամէն բերնի, ամէն քիտքի. «կալմաս» առնողներուն ալ լիք ու տիկ է տոպրակն
ու «տուրիկ»ը, փորը չկշտացած՝ աչքը լիացեր է ամէն մարդուն. « լիութիւն ի
վերայ սեղանայն անհատ ու աննուազ՝ Տէրն արացե՛լ »:


Յ. — Ս Ա Յ Լ

Ո՛վ է որ կալատեղ կը բերէ քաղը, կը զարնէ կալադէզերը, ու կամնուած
կանն ու կուծը կը վերցնէ՝ կալատիրոջ տունն ու տեղը, գեղն ու քաղաքը արա-
բարիքով լեցնելու:

Մ'որդն է անշուշտ. դաշտի մա՛րդը:

Բայց ան իր կռնակովը կրելու չէր հարկաւ դէ՛լ գէ՛լ զարկած որաները.
ինքը վարէ՛, ինքը ցանէ՛, ջրէ՛, քաղէ՛, խրձէ՛, դիզէ՛, կամնէ՛, կատէ՛, անձամը, —
ձեռքով, արօրով, լուծով, բահով, մանգաղով ու քառէշտով՝ հասկն ու հա՛տն
ալ կրէ իր մէջքով, — չէ՛, ան ունի իր սո՛յլը, սէլը սիրական, կա՛սքը շինա-
կան, անոր մէջքին ու լուծին կը յանձնէ, հողն ու բեռն սյգ փոխադրումին, ինչ-
քան ալ պարզ կազմած ինքնակերտ իր սայլին: Եռանկիւնի ճախս մը՝ առնողնե-
րով, կոպով ու միջանով հարթ ու յարդար, ախոռ կամ վաւաններով ագու-
ցիկ, մէջտեղը կոտն՝ն է տնկած՝ իբր ամբարտակ բեռնարարձ սայլին, աղուհսով
գլխակից և անպակը գլուխին վրայ մակիճկով ի ման: Ետեւը «տախտ»ին խա-

բիւիւն վրայ զոչ մը պարտ կամ քրացից՝ պարտկալսով առկեց. գագաթը եռանկիւն «տախա»ին՝ մուռածին է ակակնով ծակ ու կիւ, կրելով կապնկալ պորն առկախս երբ սայլը գագար կ'առնէ, կիկո կամ հոսապն է որ սոքը գետին մէջ մէկ սօխէ՛! զլուխը մառածքին՝ իրանովը սիւն կուտայ սայլին ու լուծին



վզնայեց, լուծ մը սայլին գլխուն կիւ, լուծ մը առջեւն՝ լծափետերը վեր լծկանին վեգերուն. ոչսիզ պսիզ ձգաած՝ զեռ, փաշ կամ կապան, կրակ կամ լիոխը կաշէհիւս, և կամ շարան շղթան երկաթէ: Սայլին մէջքն ու միջուկը սեղիքակերուն մառնուռնէն անցած՝ առնին վրայ է հեծած, որուն վրայ կը ծրճուայ ճամլակոսը՝ ճամի կամ առնդախսոր հեռ կցուած՝ ճամլառիւտով, ու թէ որ կ'ուղէք՝ համանիշ ղոնցիցերով: Սէլիթակը մառանուկ է շահ-մառանով, մառանով, ու մառնկաղով և անուրուած է ղողով. արեւները (չարուխ) կարկառան են մաշուկ դողերուն, բացգրիկ խառչեկարները պի՛րկ պի՛րկ գրկած են սէլիթակն երկու երեսէն՝ կլորեկ օղերուն տակ օշխչեկուն», և երբ լծկանը քալէ՝ խարազանին շեպին շաշին ու սէլուորին գոռ. «եէլեէլ»)ին տակ՝ սեղաններն են որ կը քաշեն տմբոջ սայլը սունակէն. թէ սէլքաշը կտարի՛ վայ սէլուորին, եղն ու անիւք քայլ միս՛լ չեն կնար առաջ տանիլ սէլը, պարտալ թէ բեռցած: Սայլը, երկրագործին համար փոխադրութեան միակ գործիքն է ան. անով իր հունձքն արտէն կը փոխադրէ կալտեղ. կալէն ելած հատը պարկեր լեցուցած («ծալար») ու («ծուկար») սայլով է որ կը տանի ջաղջ, ալիւրի փոխած տուն կը բերէ («փեթակ»)ը (քանգուկ) լեցնելու, տանը արերից հացը դնելու, որ ինքն ու բնտանիքն ապրին տարի մ'ալ: Սայլով իր խոտերն արտէն տուն կրելով գէլ կը դարնէ. անով է որ իր թխած («փթիր»)ն ու «տառթ»)ը, քաղած փունն ու գազը քաղաք կը բերէ ծախելու. կամ իր սյգիին բերքը տունը կը փոխադրէ, ցորեն, կտառտ կամ յարդ ծախու կը տանի, վերջապէս անով է որ իր գործը կը գարծնէ անխափան: Եւ ի՛նչքան սրտագրու է անանել գեղջուկը, որ («գիշերաթթախ»), զով

ու հով առտուան օգին՝ նստած վեր իր սիրական սայլին, ձեռքը խորազան բրու-
նած, գեղացու մազատ, («ցրտապինդ») ու հոյանի կուրծքէն, դաշն ու զրնկուն
ձայնով, («եէ՛լի մտրալ, եէ՛լի խուրիկ») կ'երգէ ու կը խրախուսէ իր քաջ մարալ
լծկանը: Եւ լծկանը տենչի՛կ տենչի՛կ ականջ՝ տուած սէլւորի այդ թրթուռն,
յորդ ու գոռ եկէլէլին՝ համբեր շունչով կը քայլէ իր լուծը, և լուծին տակ տքա-
ցող սա՛յլը ծանրաբեռն: Երբ ժիր ու աշխոյժ սէլւորը, շունչ առնելու համար
կտրէ պահ մ'իւր ձայնը թարմառոյզ, սէլիթակին անխոնջ օղե՛րն են որ կը յաջոր-
դեն անոր, իրր թէ ձայն առնելու, և կը դառնան ու կը շխչխկան խառջեկաթնե-
րուն վրոյ, շարունակելով ձայնասեր ամոյլն ականջներուն՝ միանուագ շխչխկոցի
չոր նուագն, որ ձայնաժամն է Դաշտի Մարդու հանգստին...:

ժ.

Սիվաակ ձիաւորը գիշերեց այն տեղն իսկ՝ ուր բարիբիււն մաղթած էր
բարի սէլւորին, — կայտաճճը սէլւորին: Դեռ գլուխը դեմին չէր դրեր, լռեց
շունչ մ', ձայն մ'անորոշ. որ կամս'ց կամաց զգալի կը դառնար, կ'որոշուէր,
կը յօգաւորուէր: Իրեն ոչնչպէս թուեցաւ թէ՛ կայտաեղին ճիշդ մէջտեղէն էր որ
կ'էլէր ձայնը, ականջ տուաւ, ան կ'ըսէր. — «Իմ՝ վրայէն անցած են երկրահերձ
խո՛փն արօրին ու կձգակները «սամա՛շ» լծկաններուն՝ որոց ես տուած եմ ակօսն
իմ՝ կուրծքին և խոսն իմ՝ մարգին: Իմ՝ մէջ թափած են անծիլ հունարը ցորենին՝
որուն ես տուած եմ ծի՛լ, ա՛ճ ու ծղօ՛ն հասկաթուռ: Իմ՝ վրայէն վազած են
բեղնաւորիչ առատ անձրեւնէ՛րը Դարնան՝ որուն ես Ամա՛ս եմ տուեր պարէնս՝ զ
առատ: Իմ՝ կուրծքը վերմակած է ճերմակ սուա՛նը ձիւնին՝ որուն իմ՝ աւանդ-
նէ՛րս եմ՝ վստահեր կանաչ գարունէն տաաջ: Ես փա՛ռք եմ ինծի, ինձմով իմ
որդիներուն: Իմ՝ վրայէն անցած են օրե՛ր ու դարեր, մանուկներ ու մարդեր, —
Դարերու սերս՛ւնդ մ'շարէշար, որոց ես տուած եմ սնունդ, աճ ու կեանք, ու-
րոնք իմ՝ ծոցիս մէջ փչած են իրեց շունչը վերջին, որոց ես կը պահեմ ցարդ-
ածիւննե՛րը կրացած. ես ազգե՛ր ու ժողովուրդնե՛ր սնուցած եմ: Ես կեանք եմ
ինծի, ինձմով իմ՝ որդիներուն: Իմ՝ կեանքս որդիներուս տուած եմ, երբ անոնք
իրենցն իմ՝ մէ՛ջս են փնտաած, ես անոնց եմ՝ փարած՝ որք փարած են ինծի, ու
սպրած ենք միասին անկարօտ ու անկորուստ: Մայրը դաւա՛կ ունի, զուակն իր
մօրմո՛վ կ'ապրի: Ես («հողմա՛յր»)ն եմ՝ մարգուն, մարդն ինձմո՛վ է որ կ'ապրի. մարդ-
կութիւնն ապրեցնելը փառքն է իմ՝ ճակտին»: Ու կարա՛ւ ձայնը հողմօր, որ
հիւսեց երա՛զը ճամբորդին: Օ՛հ, քանի՛ ճիշդ, թէ՛ մարդ ապրեցնելն է պարտքն
ու փա՛նքը հողիս:

Վան, 19/1 Յունիսար 1907



ՏԻՐԱՆ ՉՐԱՔԵԱՆ

[Ինքա]

Ծն. 1875: Շրջանաւարտ Պէրպլէրեան Վարժարանի: Նկարիչ, բանաստեղծ եւ
Ուսուցիչ Բնական Գիտութեանց,
Հեղինակ «Ներսիսարհ»ի:

Պ Ա Տ Կ Ե Ր Ի Ն Ա Ռ Ձ Ե Ի

ԴՐԷՔԻ պուրակ մըն է բարեկամս պարտէք: Անպսուղ ծառեր վայրեօրեց
անձա՛մ են չուս դին, մէջերեւուն զրկուած աննամար բէտեով, ու զազաթեքերին՝
իբար համբուրելու նկարչային դիրեով մը: Արեւն ասոնց վերեւ կը թառի միայն.
Եւ լոյսի նեղեղն որ նիզով կը ծորի, կը սուսուրի տերեւներն ի վար՝ կուսայ անոնց
այն մթուքիւններն ու բացուքիւններ կանանչի՛ զոր երանգամու վրձի՛նը կը սիբէ
նանչնալ մանաւանդ:

Վարի ծայր թառուսք կը ցանցառի երթալով: Քառակուսի բարձրաւան-
դակի մը վրայ հովանոցակ մը կտրողուած է. կլոր կլոր փայտեր համաչափ կեր-
պով հողին միտում՝ վեցանկիւնի խցիկ մը շինած են զոր եր ծածկեն մազցիկ
բոյսեր, սարքինայի մը տեսք տալով անոր: Կանանչներու մէջ խեղդուած այս բա-
զրսսնց իբրեւ միակ ճշարտութիւն՝ ունի պատահանի ձեւով նեղիքնուկ ծակուլիկ
մը, որ դէպ ի դուրս կը նայի եւ որ Պոլիսն ամբողջ իր մէջը կ'առնէ՝ անոր դի-
րական մանրանկարին նե: Պարտէքին նայուածքն է առ:

Երբեմն, ամառ օդերու մանաւանդ, կ'երթալ դեղերելու հոն միս մինակ, եւ
տուֆերուն զով անգորբ նեղեղով մտնելու հովանոցակէն ներս, ի՞նչ մը բնթերցում
բնելու համար, որ, սակայն, իր սկսուածքն մէջ կը կասի յանկարծ, վասն զի աչխն
վայելքը միտքին վայելէն սխալի՛լ է հոս:

Անգամ առտու հարէն հոն էի: Ակնարկս՝ բառուսէն, բաղնիքուտուած նիւղերէն
ու սուրեւներէն յոգնած, կը դարձունեմ դէպ ի սարքինային պատահանն որ զոց է
բոլորովին:

Լ՞նչ կրնար բլլալ, հարցուցէ՛ք, դիտարանիս դոնակը փակող: Աչքն ձայնէն
ծիլ նետոց դայար բարունակներ: Կրնայի՛ զանոնք մէկդի մը հրել, կամ, թէ որ
բնդվէլին մասներուս դէմ՝ էրթերուն կոտրել մէյմէկ ինչ, ազատ անց տալու հա-
մար օդին ու երկինքին: Գիտարանիս դոնակը յափաճող՝ ՍԱՊԻՍ ՈՍՏԱՅՆ մըն է:

Հմայուած, կը նայիմ ամբողջութեամբ: Այսպիսի անթերի գործում՝ ծանեակը
բանող էգ թափիկներու անգամ տուած չէ արտադրել: Անկիւնաւոր տրամագիծով
տրջանակ մըն է, լուսինկայի խտտութեամբ. նուրբ ու սուր շառաւիղներ կեղ-
րոնէն արձակուած են դէպ ի եզերք, ու զուգանեա թելերու բանակ մը լեցուցած
զոցած է ամբողջ միջամասն, տնվրէպ, հրաշալի՛ համաչափութեամբ մը: Դուր-
սէն, հասանողներ ինկած են վրան, ցանցառակի եւ անցաս թէլեր հասանողներուն նե
տրջանակին տրամագիծը խածնելով՝ զացած են կապուելու սարքինային սիւններուն,
իբր ամբապնդող օժանդակներ ուսայնին փցուն կազմաւորութեամբ:

Երկրաչափութեան բոլոր գլուխները կան հոս: Թէլ մը ասղիէն՝ ինչուած ցո-
ղունի մը կատարը երկնցած, թէլ մը անդիէն՝ ձոփի մը առուցիկ. ու Սարդն իր
օղակառոյց զոգեար կեփակալած է, դալարիբը՝ տրջանակ, զեղակապոյտ երկինքն
ալ յասակ բնելով իր պասկերին:

Երբեմն հով մը կ'սկսի, վախկոտ տուելն ամառ առտուան: Թառուսք կը խորայ,
բոյսի օժանդակ ծիլերը կը սարսուռն ու ուսայնն ամբողջ կ'երթայ ու կուզայ մի-
ջոցին մէջ, հովին ուղղութենէն ու պորտին սեւ ծանրութենէն փոր տալով նեղցնէտ:
Կ'սպասեմ:

Ճարտարապետն անյարի փակած է կեղրոնին: Աս դիրքին մէջ, կարծես խոն-
ջէնի խոնակ մը ունի անոր ներս խառուած գլուխը: Սուրեւները. շատ քաղած մար-
դու մը հանգիստին պէս վեր ճեկուած են, բաց ձգուած կարկիկի մը ձեւով, զրի-
խամասին ցցունները՝ նմանապէս, ամբողջութեամբ կազմելով կրկնուած սարօրի-
նակ X մը՝ որ իր այդ անծանօթ խորհրդանշանով դէպ ի անծանօ՛թ պիտի առաչ-
նորդէ ազգահովապէս իբեւ դիմող միամիտ նանքն:

Առջի իրիկուն, հոս գալուս. գոյութիւն չունէր ասիկա. բսել է առտուան դէմ,
լոյսին նեղումը սեւ իր գործին շատած էր այս տուտի բանուրն ու շէնքը
փութանակի գլուխ հանած:

Եւ յանկարծ տղու չարութիւն մը կը ծնի մէջս՝ արեօթկելու, փցունելու զայն,
նախանձէ՛ս թէ դիտարանը փակուած տեսնելէս. չեմ գիտէր: Գաւազանս կ'երկնցու-

ներ անոր, քեթի հարու մը ուսայնին, եւ անա քելեր փոթորկի բռնուող նա-
ւու մը պարաներուն պէս կ'երեթրկան, կը ծեծկարին, կ'ուռնին ու կը պրկուին:
Մամուկն այս թագնապալի պանուն պզտիլ շարժում մը կ'ընէ դէպ ի շեղ: Բայց
ցալիկս արդէն պատած փրցուցած է հիւսիքն մեծ մասը: Ծամաձուռ գեռօ մը
կը բացուի անոր զոքը, կեղտնէն խոյս տուած զիծեր կը կախուին, կը պլուռուին,
հասանողները գլխիվայր կ'իջնան, համագիծը ջախջախուած երկանիւի մը կեր-
պարանքը կ'առնէ, եւ օձանդակ քելերն ուսայնէն անջատուած՝ բուրդի նօսը ձը-
ւէններու պէս կը դողողողան ձոսներու վերէ: Ձեռքիս անգուք գործիքն իր աւերը
կը շարունակէ նորէն, մինչեւ որ մէկ պահէկէն ուսայնին բովանդակ կազմածը
բայխի ու սարդն որդայ իր փուռու մը չարայրուէ:

Քելերն իրա փալած են հիմայ, գործածումէ փոքրկուած չաւանի կտորի մը
պէս: Վերէն, լուսամուտին առիքէն փալած հասարկել քել մը կը յամառի դեռ
կայս պանելու շեքիքն աւերուսը համակ՝ որ կը ծփայ աղտոս, գործ եւ դորմելի
խուրչի մը բուլուքեամբ: Ու մամուկն այս փխրուն ոչնչութեան ստորէն կը
ուլլուլի հապցած, ընկղմելու վրայ եղող մակոյղիկ մը ինքզը նման՝ որ ջախջախ-
ուած թախսակներուն կը փարի, կեանքին հետ արկածուող մակոյղն այլ մէկ-
տե՛ղ խորհելով: Կը բալէ թաժանելով, քելերը՝ մամուկմարդէ պարտաւուն մանչու մը
նիգեղով, հեռի ի հեռ, նորքարայով, ստեւոս տներ կ'ընկելով՝ ինքզինքն վերէ՛լ մը՝ իր
բայխալուն բնակարանին մէջէն, որուն նայելով կը կսկըրայ ներսիցիս: Մագցումն
աւարտելէն յետոյ, աներեւոյք կ'ըլլայ անիկա՝ նովանցակին կողմ փայտերուն ետեւ՝
մինչ ցալիկս վերջին անգամ մըն այլ կ'երկարի կախուող աղտեղութեան, կարծես
անգորութեան հետք մը չի ձգելու գիտումով:

Շատ շանցած, երբ ընթերցումս կ'ընդհատեմ՝ սիկառիս վերջին ումպին հետ,
կը դիտեմ որ նոր քել մը երկուսի նեղմած է վերտին դիտարանիս պզտիկ բառա-
կուսին: Հիւսնին՝ պատ հիւսելը տես՞ծ էք մօտէն. առասան մը կը կախէ անիկա՝
շարուած փառերուն վերեւէն, ծայր քապար մը կայ որ ուղղութիւնը պիտի նշդէ:
Պատկերը նոյնն է նոս:

Մամուկը, — ցալիկէս արկածուող ի՛մ մամուկս ապահովաբար, — իր սեւ իրա-
նովը նոթի այդ կապարին երեւոյթն առած է: Առասանն այն մամուկիկ հիւսքն է՝
որ բերնէն շարիքի պէս կը ծորի ու կը պաղի միջոցին մէջ: Առաջին սիւնը — թուէ՛
սիւնը — նետուած է օրջանակին մէջ, յետոյ երկուրդ մը, ուրի՛ց մըն այլ՝ արբեր
ուղղութեամբ, ու մեր բանուկ տատուկ միջասն իր ժանեակի դիւրական հիւսքը
սկսած է այլ: Անթարք կը դիտեմ այս անգամ, մինչեւ հարիւր համարակն կ'արտա-
րում շարքերու տղայական թուրակութեամբ մը, երբ ուսայնը կ'աւարտի նախորդին
չափ բոլորեւ, անթերի ու շեղ:

Արեւն ելած է հիմայ ու սաղաւարքներուն պատառուածէն եկած՝ իր առա-
ջին նանանչներն արձակելու սարբինային գմբէքն ի վար: Այդ նանանչներուն մէջ,
նորգնոր հիւսուած Ոսայնն ապրումի փայլունութիւններ կ'առնէ, ցանցակերպ
բոլորեւն կը վառվռի փարփառ ու դեղինփառ ցոլերով. ու նորէն, ուսայնին
պարսք՝ սեւ միջասն իր սպասումը կ'սկսի:

Օրն իրեն հետ կ'արբեցունէ մանուկ մանուկ քեւտուներու ամբողջ երա-
մակը: Միտերաներ, օրորներ, շերտիպակ եւ յուսաթիթն կը բզգան չորս դին,
արեւէն, լոյսէն ու բոյրէնէն զինով: Ատնցմէ հաս մը, կը պսակի մանն մը, չի տե-
նելու գալով ուսայնին անտարախիս փռումովն՝ իր խել խոյ արշաւին մէջ կը
փակչի քակարդին: Մէկ ֆանի շարժում. ծիծաղելի բայցազակի մը, ցանցը կը խող-
տակայ առաջ ու ետ, մինչ սարդը մամահրաւու այց մը կը փութայ իր մինիքիկ
հիւրին, կեղտնէն դէպ ի շեղ մամորդելով: Գուլար կը պսակի մանն, ստեւոս թա-
քերը կը խաւեն, կ'ազգանեն անոր իրանը չֆաթ, եւ շատ չի ֆեթ, հաննն իր կեն-
սանիքերէն պարպումով՝ կ'անէճանայ դիակնակերայ: Հոն մնալու չի գար, մտազոս
տոտիկներով կից մը մէջքին. դիակը գետնն է հիմայ: Մամուկը կը շուլլուէ փու-
թով այն ծայրը գոր իր խորհի-հիւրին ներկայութիւնը բացած էր. ձգած կար-
կանը յայտնի չեղածի պէս կ'աւարտէ, ու կուգայ տոտգուելու կրկին իր նախկին
վայրը: Կախանաւն է աս, համառօտ սկիզբն իր նրանցիքին:

... Ձէ՛, ալ չը՛ պիտի պատահէմ քու հիւսքը, շինած տունդ ալ չը՛ պիտի փրկ-

“ԳԵՂԱՐՈՒԵՍՏ”, ԻՆ ՔԵՐԹՈՒԱԾԸ

Պօլիս, Իսկիւտար, հաստատուած բարձրերն, ամպերուն մօտիկ,
Լուսանկարչատուն՝ իր տեսակին մէջ ընտիր, մէկ հատիկ,

«Չամբըճա՛»ն է որ թ՛. Զբրաբեանի վարչութեան ներքեւ,
Նուրբ, ճաշակաւոր արուեստի կայք մ'է հաճոյսպարգեւ:

Մեծատուն, աղքատ, այր, կին, ծեր, արդոյ, քաղքին չորս կողմէն,
Աշնան թէ գարնան, ամրան, ձմրան մէջ երբ որ հոն դիմեն,

Պատկերներն իրենց-պարզ թէ դունաւոր-հանելու համար,
Նախ կը զարմանան, տեսնելով անոր ուզած գինն յարմար,

Եւ երբ որ պատկերն ըստանան, փոխան աժան գումարին
Այնքան գեղեցիկ կը գտնեն զայն որ . . . կ'իշնան, կը մարի'ն . . . :

«Չամբըճա՛»ն է որ արթուն ու բանգէտ Ս. Պատրիարքին
Արժանի եղած վտահոտութեանն ու սիրոյն բարձրագին,

Անկէ միշտ հրահանգ, յանձնարարութիւն, պաշտօն կ'ընդունի
Լուսանկարչու հայ շէնքերն հսկայ, դէմքերն անուանի:

Զբրաբեան ունի հաւարածոն ճոխ և ամբողջական՝
Սա վերջին երկու դարերու մէջ—ողջ, մեռած, ո՛ւր որ կան —

Ձօջ, բարձրաստիճան քարոզիչ, հովիւ, հովուապետ ներհուն,
Հայ Եկեղեցւոյ կրթնաւորաց լուսանկարներուն.

Նաև պատկերներն ամէն՝ էգ, արու, թուխ, խարտիչահեր
Դերասաններուն որք մեր բեմին վրայ անուն են շահեր,

Նոյնպէս և անոնց որք՝ իրրև դրագէտ, վիպասան, քերթող՝
Դպրութեանց դաշտին մէջ յաջողած են կանգնել մի կողմող:

— Ո՛վ պատանիներ, երիտասարդնէր, կիներ պչրատէր,
Զարանչ, պարոնտատ, աներ, աներձագ, փեսանէր, հարսնէր,

Կոկուած, զարգարուած ձեր հագուստներովն, գլխարկներով նոր,
Զեր լուսանրկարն հանելու համար՝ դիմեցէ՛ք անոր,

Թ. Զբրաբեանի'ն որ արուեստին նուրբ գաղտնեացն ընտանի,
Մեծ թէ փոքր, ամէն գործի հաւասար խրնամք կը տանի,

Եւ իր վայելած բարի համբաւին նախանձախրնդիր՝
Կ'ուղէ պահել զայն՝ Չամբըճայի'ն պէս՝ յաւէտ բարձրագիր,

Դո՛հ կ'ընէ ամէնքն, անգուլ աքնելով նրման միջինի,
Այնքան որ, խեղճը, զրուխ քերկու ժամանակ չունի . . . :



Ա. Լ. Փ. Ա. Ս. Լ. Ա. Ն.

ԸՆՏԱՆԻՔԻ ՄԸ
ՀԱՄԱՐ



ԱՆՀՐԱԺԵՇՏ
ԿԱՐԱՍԻ ՄԸՆ Է

Մ Ի Ն Կ Է Ր Ի

ՃՇՄԱՐԻՏ ԿԱՐԻ ՄԵՔԵՆԱՆ

THE SINGER MANUFACTURING COMPANY

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱԼԱՏԱՆ

ԵՒ ԱՅԼ ԱՐՔՈՒՆԵԱՑ

ԸՆԴՀ. ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆ

ԹՈՒՐԲԻՈՅ, ՊՈՒՂԿԱՐԻՈՅ, ՅՈՒՆԱՍԱՆԻ ԵՒ ԵԳԻՊՏՈՍԻ
ԲԵՐԱ, ՄԵԾ ՓՈՂՈՑ ԹԻՒ 343 ԵՒ 343 ԿՐԿԻՆ

ՓՈՔՐԱՔԱՆԱԿ ՎԱՃԱՌՈՒՄ

ԲԵՐԱ, ՄԵԾ փողոց թիւ 343 ԵՒ 343 ԿՐԿԻՆ.

Ղալաթիա, Սինկեր խան, թիւնէլի ԵՏԵԼԻ կողմը.

» Գարաֆէոյ, քրամլայի կայարանին մօտ.

Պոլիս, Սուլթան Համամ.

» Սուլթան Պայազիս.

Սկիւսար, Չարբը-Պոյու.

Գասըզիլ, նաւամասոյցին մօտ:

Կար եւ ձեռագործ արխար կ'ուսուցուին:

Նորոգութիւնները նոյնպէս արի!

ԶԻՏԹԷ-ԱՐԱՍ



ՄԻԱՄԻՏԻ ՄԸ

ԱՐԿԱԾՆԵՐԸ

Կ. ՊՕԼԻՍ. 1908

Տոգր. Վ. & Լ. ՏԷՐ-ՆԵՐՍԵՍԵՆ

Այս խիստ հետաքրքրաշարժ ու զուտ գրական սիրովէպն, որ այնչափ հաճոյքով կարդացուեցաւ ու գնահատուեցաւ ժամանակին, ընթերցողներու սահմանափակ շրջանակի մը մէջ, այս անգամ՝ գիրքի ձեւով հրատարակ կ'ելլայ, աւելի ժողովրդական ու աւելի գիւրամատչելի ըլլալու համար: Նորանշան ու պերճ տպագրութիւն: Գեղարուեստական կողք: 280 էջ, Կին 7 զրուշ:

Կը գտնուի ամէն գրավաճառներու քով, ինչպէս նաև Վ. և Լ. ՏԷՐ-ՆԵՐՍԵՍԵՆ ան թղթավաճառատունը, ձէլալ-պէյ Խանի տակ:

Կեդրոնատեղի՝ ՕՆՆԻԿ ԵՒ ԸՆԿ. Կ. Պօլիս, Նիբին Խան, Թիւ 7



Տ.

Պատիւ ունիմ Ձեր ազնուութեան ուշադրութիւնն հրաւիրելու հետեւեալ հրատարակութեանցս վրայ, որոնց իւրաքանչիւրը գնահատուած է իբրև կարելոր և օգտակար՝ ձեռնհաս անձնաւորութեանց կողմանէ.

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ ՀԱՅՅԵՐԷՆԷ—ԱՆԳՂԻՆԵՐԷՆ

Սոյն Բառարանը պատրաստուած է մեծ խնամքով եւ զլիաւոր հետեւողութեամբ Websterի հոյակապ Բառգիրքին. կը պարունակէ աւելի քան 40,000 բառ, ոճ, աստիւն, եւ այլն:

Անցածեւտ Անգլիերէն սովորակներու եւ զիջողներու միանգամայն:

Գին 35 դանեկան

ՉՈՐԵՔԻՆԵՉՈՒՅԱՆ ԽՕՍԱԿՅՈՒԹԻՒՆ

ՀԱՅՅԵՐԷՆ—ԳԱՂՂԻՆԵՐԷՆ—ԱՆԳՂԻՆԵՐԷՆ—ԳՆԵՐՄԱՆՆԵՐԷՆ

Սոյն կարելոր գիրքին շնորհիւ կարելի է քիչ ժամանակի մէջ սահուն կերպով խօսիլ և թղթակցիլ վերոյիշեալ լեզուները:

Չորեքեզուեան խօսակցութիւնը անհրաժեշտ է ոչ միայն ամէն դպրոցականներու, ըլլան արական, ըլլան իգական սեռէ, այլ և բոլոր չափահասներու և զործի մարդոց հումար, որովհետև իր մէջ կը պարունակէ բոլոր կարելոր խօսակցութիւնները առեւտուրի մէջ, այցելութեանց, ճամբորդութեանց ժամանակ այլ և այլ արհեստաւորաց հետ, եւ այլն, եւ այլն:

Ի մի բան Չորեքեզուեանը այնքան պէտքի գիրք մ'է որ անհրաժեշտ է որ ամէն ուսանող և չափահաս անձ, վասնտական, դասատու, գրագիր, ևն., հատ մը ունենայ զբարձրը:

Գին 22 դանեկան

ՅԱՆԳԱՐԱՆ ՆՈՏԱԶԱՅՆ ԵՒ ՆՈՏԱՅԱՆԳ ԲԱՌԵՐՈՒ

Սոյն գիրքը մեծ կարեւորութիւն ունի յանգաւոր ասանաւորներ շինելու համար. որովհետև անով՝ զործք բոլորովին կը դիւրանայ. ուստի յանձնարարելի է իբրև լատգոյն առաջնորդ:

Գին 4 դանեկան

ԺԱՄԱՆՅ ԿԱՐ ԸՆՏԱՆՆԵԱՆ ԽԱՂԵՐ

Սոյն գիրքը բնականեան ամենդ գրօսանքներու հաւաքածոյ մը ըլլալով՝ անհրաժեշտ ամէն ինչ համար. անով թէ մեծեր և թէ փոքեր կրնան գրօսել երեկոյներ: Ժամանցի ճարտիւ երեկոյի ժամեր կը սահին առանց զգալի ըլլալու:

Գին 25 դանեկան

Վերոյիշեալ գիրքերը կը ծախուին բոլոր գրավաճառաց և աշխատասիրողիս բով: Յուսալով թէ պիտի բարեհաճիք պատուել զմեզ Ձեր յանձնարարութեամբ՝ հասցէք ընդունիլ մեր խորին յարգանացը հաւատին:

Զ. Տ. Ս. ՓԱՓԱԶԵԱՆ

Մեր հասցէն

استانبولده آمریقان خاندہ پایپازیان

Z. D. S. Papazian, Bible House CONSTANTINOPLE

“ՕՍԷԿԱ” 5 սէնէ իչիւն թէանիս օլունմուս
 ալարլը սաաթլար, գասըն վէ երէք
 իչիւն էնվաի չէթս: Եէկեանէ սէփօզիթօսը՝ Տէրասաէթ
ՕՐՕԶՏԻ-ՊԱԲ

507

2004

